ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՒԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Ի Ե.

ԿԱՐՍԻ ՓՈՒԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
(ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՒԻ ՆԻՒԹԵՐԻ)

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ - 2022



ՀՐԱՄԱՆԱԻ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

NATIONAL ARCHIVE OF ARMENIA

DOCUMENTS
OF THE HISTORY OF ARMENIAN CHURCH

Book XXV

VICARIATE OF KARS
OF ARMENIAN CHURCH

Book XXV

By Gohar Avagean

Publishing House of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin - 2022

КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

НАЦИОНАЛЬНЫЙ АРХИВ АРМЕНИИ

ДОКУМЕМТЫ
ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

КАРССКИЙ
ВИКАРИАТ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

Книга XXV

Подготовила Гоар Авагян

Издательство Первопрестольного Святого Эчмиадзина
Св. Эчмиадзин - 2022

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՐԽԻՒ

ՎԱՒԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ ԻԵ.

ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Կազմեց՝ Գոհար Աւագեան

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
(Ըստ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2022

ՀՏԴ 27-9
ԳՄԴ 86.37
Վ 271

Հրատարակւում է երաշխաւորութեամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
եւ Հայաստանի ազգային արխիւի
գիտական խորհրդի որոշմամբ

Կազմեց՝
Գոհար Աւագեան
(Պատմական գիտ. թեկնածու)

Կ 271 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան. Գ. ԻԵ.: Կարսի փոխանորդութիւն / Կազմեց՝ Գ. Աւագեան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, 2022.– 504 էջ:

Ժողովածուում ներառուած փաստաթղթերը տեղեկութիւններ են պարունակում Կարսի մարզի հայկական վանքերի ու եկեղեցիների կալուածքների, դրանց տեղաբաշխման, շահագործման, ստացւող եկամուտների, վանքերի ու եկեղեցիների ընդհանուր դրութեան, շարժական գոյքի, դրանց կառավարմանն ու շէնացնելուն ուղղուած ձեռնարկների, վերանորոգումների, որոշ հինաւուրց վանքերի ու նրանց մնացորդների պահպանութեան, վանահայրերի նշանակման, քահանայական ձեռնադրութիւնների, պարգեւատրումների, նրանց գործունէութեան եւ այլ հարցերի մասին: Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում Անիի աւերակներին, դրանց պահպանութեան ուղղութեամբ ձեռնարկուած քայլերին, Անիի Մայր Տաճարի վերանորոգմանը, պեղումներին վերաբերող վաւերագրերը:

Հասցէագրուում է պատմաբաններին, աստուածաբաններին եւ ընդհանրապես հայագիտութեամբ հետաքրքրուողներին:

ՀՏԴ 27-9
ԳՄԴ 86.37

Տպագրւում է մեկենասութեամբ

«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-290-9

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2022
© Հայաստանի ազգային արխիւ, 2022

ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

1877 – 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ 1878 թ. փետրուարի 19-ին (մարտի 3-ին) Կոստանդնուպոլսի արուարձան Սան Ստեֆանոյում կնքուած նախնական հաշտութեան պայմանագրով՝ ասիական մասում Ռուսական կայսրութեանն անցան Կարսը, Բաթումը, Արդահանը, Բայազէտը[1] եւ մինչեւ Սողանլուղ ընկած տարածքը:

Արդէն 1878 թ. հոկտեմբերի 21-ին Կարսի Հայոց Առաջնորդ Գրիգորիս վարդապետ Աղուանեանը Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղուած զեկուցագրում ուրախութիւն էր յայտնում Կարսի մարզը Ռուսական կայսրութեանն անցնելու եւ Կարսի Հոգեւոր Կառավարութիւնը Մայր Աթոռի անմիջական խնամքի ու հովանաւորութեան տակ անցնելու առթիւ[2]: 1879 թ. մարտի 14-ին Ս. Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինոդը Կարսի Հայոց Առաջնորդ է վերանշանակում Գրիգորիս վարդապետ Աղուանեանին[3]: 1881 թ. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանը նշանակուեց Կարսի մարզի եւ Բաթումի նահանգի հոգեւոր գործերի ժամանակաւոր կառավարիչ:

1881 թ. դեկտեմբերի 28-ին Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմեց Կովկասի Կառավարչապետին Կարսի մարզի եւ Բաթումի նահանգի առանձին թեմ հաստատելու համար Կայսերական Բարձրագոյն հաստատութիւն ստանալու միջնորդութեան խնդրանքով: Սակայն, կաթողիկոսի վերահաս մահուան հետեւանքով այդ գործընթացը մնաց անհետեւանք: Շուտով պարզ դարձաւ, որ թեմի մէջ ընդգրկուած բնակավայրերի տարածքային հեռաւորութիւնը, ճանապարհների ստեղծած անյարմարութիւնները (յատկապէս աշնանային ու ձմեռային եղանակներին) եւ այլ գործօններ լրացուցիչ դժուարութիւններ են ստեղծում թեմի արդիւնաւէտ կառավարման համար: Այսպէս՝ երբ 1883 թ. մայիսին Կովկասի Կառավարչապետի կողմից յանձնարարութիւն ստացուեց կազմել նորանուաճ տարածքների մանրամասն վիճակագրութիւն, պարզուեց, որ, գրեթէ անհնարին է դրա կատարումը, քանի որ ստոյգ վիճակագրութիւն կազմելու համար, մի կողմից՝ անհրաժեշտ էր շրջել ոչ միայն բնակավայրերով, այլեւ՝ անմարդաբնակ դաշտերով, լեռներով, անտառներով, ուր կա-

[1] 1878 թ. յունիսի 1- յուլիսի 1-ին տեղի ունեցած Բեռլինի Վեհաժողովի աւարտին ընդունուած Բեռլինի դաշնադրութեամբ Բայազէտը յանձնուեց Թուրքիային:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թթ. 9,13: Հմմտ. աստ, էջ 20-21, փաստաթուղթ Հ^{մր}. 7:

[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թթ. 181-182 շրջ.: Հմմտ. աստ, էջ 27-30, փաստաթուղթ Հ^{մր}. 11:

յին բազմաթիւ կանգուն ու կիսաւեր վանքեր ու եկեղեցիներ, միւս կողմից՝ բնակավայրերի միջեւ ճանապարհներն այնքան դժուարանցանելի էին, որ շատ տեղերում միայն հնարաւոր էր ոտքով անցնել, բացի այդ՝ շատ վտանգաւոր էր, այնպէս որ առանց զինուած խմբի ուղեկցութեան՝ որեւէ մէկը չէր յանդգնում շրջագայել[4]: Օրակարգային դարձաւ Կարսի մարզի եւ Բաթումի նահանգի Հայոց եկեղեցիների ու հոգեւոր գործերի արդիւնաւէտ կառավարման համար առանձին – առանձին հոգեւոր կառավարութիւններ հիմնել եւ 1886 թ. յունուարի 11-ին Ս. Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինոդն այդ առաջարկով դիմեց Մակար Ա. Կաթողիկոսին[5]:

1887 թ. յունուարի 19-ին Ներքին գործերի Նախարարը ծանուցանում է Կովկասի Կառավարչապետին, որ 1886 թ. դեկտեմբերի 23-ին ստացուել է Կայսերական Բարձրագոյն հրաման, ըստ որի՝ Կարսի մարզի Հայ Առաքելական եկեղեցիների կառավարումը յանձնուում է Երեւանի թեմին, իսկ Բաթումի, Արդուինի ու Սուխումի հայոց եկեղեցիների կառավարումը՝ Վրաստանի եւ Իմերէթի Հայոց թեմին: Նախատեսւում էր Կարս քաղաքում հիմնել փոխանորդի պաշտօն եւ Հոգեւոր Կառավարութիւն (վերջինս պէտք է ենթարկուէր Երեւանի Հայոց Վիճակային Կոնսիստորիային)[6]: 1887 թ. ապրիլի 27-ին Ս. Սինոդի որոշմամբ՝ Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեանը գործուղւում է Կարս՝ տեղում կազմակերպչական հարցերով զբաղուելու համար: Կարսի Փոխանորդ է նշանակւում Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցը, իսկ Հոգեւոր Կառավարութեան անդամներ են ընտրւում Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանցը եւ Ղուկաս քահանայ Արծրունին[7]: Կարսի Հոգեւոր կառավարութեան հանդիսաւոր բացումը տեղի է ունեցել 1887 թ. մայիսի 10-ին[8]:

Տարբեր տարիների Կարսի Հայոց փոխանորդներ են եղել Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանը (1876-1887), Յուսիկ վարդապետ Տէր-Մովսիսեանը (1888 թ. փետրուար - 1890 հոկտեմբերի 29), Նահապետ վարդապետ Նահապետեանը (1891-1895),Եղիշէ վարդապետ Մուրադեանը (1895 թ. նոյեմբերի 1-ից), Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը (1901 թ. փետրուարի 23-ից), Մամբրէ վարդապետ Մելիք-Ադամեանը (906-1909), Ուխտանէս վարդապետ Տէր-Գասպարեանը (1909 թ. ապրիլի 26 – 1911 յունուարի 9), Երեմիա վարդապետ Ստեփանեանը (1913-1916), Իսահակ վարդապետ Տէր-Միքայէլեանը (1917-1918) եւ Կորիւն եպիսկոպոս Սահակեանը (1919-1920):

---

[4] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7194, թ. 41 եւ շրջ.: Հմմտ. աստ, էջ 80-82, փաստաթուղթ Հ՝. 53:

[5] ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թթ. 2-3 շրջ.: Հմմտ. աստ, էջ 100-103, փաստաթուղթ Հ՝. 70:

[6] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 248, թթ. 6-7: Հմմտ. աստ, էջ 114-116, փաստաթուղթ Հ՝. 78:

[7] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 248, թ. 18 եւ շրջ.: Հմմտ. աստ, էջ 116-117, փաստաթուղթ Հ՝. 79:

[8] ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թթ. 12-13 շրջ.: Հմմտ. աստ, էջ 118-119, փաստաթուղթ Հ՝. 81:

Կարսի մարզը Ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ անցնելուց յետոյ Կարսի հոգեւոր գործերի կառավարման համար նոր ժամանակաշրջան սկսուեց: Անշուշտ, Կարսի փոխանորդութիւն ստեղծելը եւ Երեւանի տէրունական թեմին յանձնելը որոշակի դիւրութիւններ ստեղծեց կառավարումը արդիւնաւէտ կատարելու համար, բայց դրան զուգահեռ կային հնուց եկած եւ նոր առաջացած խնդիրներ, որոնք դժուարացնում էին գործը: Այսպէս՝ Կարսի մարզը ղեկավարւում էր զինուորական նահանգապետի եւ զինուորական վարչութեան կողմից, Երեւանի նահանգ՝ քաղաքական նահանգապետի եւ քաղաքական վարչութեան, եւ շատ դէպքերում՝ Երեւանի փոխթեմակալը, որին ենթարկւում էր Կարսի փոխանորդը եւ Երեւանի Հայոց Վիճակային Կոնսիստորիան, որին ենթարկւում էր Կարսի Հոգեւոր Կառավարութիւնը, չէին կարողանում իրենց կողմից ներկայացուած խնդիրները լուծել ըստ իրենց յարմար դատածի:

Չնայած գոյութիւն ունեցած օբյեկտիւ եւ սուբյեկտիւ պատճառների, այնուամենայնիւ, պատմական կարճ ժամանակահատուածում, հնարաւոր եղաւ հասնել որոշակի առաջընթացի, յատկապէս՝ եկեղեցաշինութեան ու կրթական գործի զարգացման ասպարէզներում:

Կարսի փոխանորդ Նահապետ աբեղայ Նահապետեանի վկայութեամբ՝ 1891 թ. Կարսի մարզում կային 88 հայաբնակ բնակավայրեր՝ 66 եկեղեցիով: Ընդամենը 2 տարի անց՝ աւարտուել էին 7 կիսաշէն եկեղեցիների կառուցումը, եւս 8 եկեղեցիներ կիսակառոյց էին[9]:

1915 թ. դրութեամբ Կարսի Փոխանորդութիւնում կային 91 հայաբնակ բնակավայր՝ ներառեալ Կարս քաղաքը, 91 եկեղեցի (բոլոր բնակավայրերն ունէին եկեղեցիներ՝ բացի 2 գիւղերից՝ Ոլոր (հայ բնակչութիւնը՝ 141 հոգի) եւ Օկամ (հայ բնակչութիւնը՝ 9 հոգի), Օլթիում եւ Կարսում՝ 2-ական եկեղեցի)[10], 1 վարդապետ, 82 քահանայ, որոնցից 8-ը գործում էին Կարս քաղաքում[11]: Բացի այդ, մարզում կային 3 գործող վանքեր.

1. Ս. Հոռոմոսի վանքը, որն իբրեւ սեփականութիւն ունէր 625 դեսեատին վարելահող՝ Թայլարում եւ 1 ջրաղաց:
2. Անիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքը, որն իբրեւ սեփականութիւն ունէր 1958 դեսեատին վարելահող, տուն՝ Անիում եւ ձիանոց:
3. Խծկոնքի վանքը Կաղզուանի շրջանում, որն իբրեւ սեփականութիւն ունէր 1 պտղատու այգի եւ 2 ջրաղաց[12]:

[9] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թթ. 28-33 շրջ.: Հմմտ. աստ, էջ 118-119, փաստաթուղթ Հ՟. 81:

[10] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 795, թթ. 54 շրջ. - 58:

[11] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ.795, թթ. 77 շրջ.- 81:

[12] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 795, թթ. 110 շրջ. - 112:

Ժողովածուում ընդգրկուած փաստաթղթերի մի ստուար խումբ վերաբերում է Կարսի մարզի դպրոցների բացման, շէնքերի կառուցման, դպրոցական հոգաբարձութիւնների գործունէութեան, ուսուցիչների, նրանց կրթական ցենզի, դպրոցների ընդհանուր դրութեան: Դեռեւս 1883 թ. մարտին Գրիգորիս եպիսկոպոսը Երեւանի թեմական վերատեսուչի պաշտօնակատար Պերճ Պռոշեանին գրում էր. «Կարսի դպրոցների տխրալի լուրերի մասին պատասխանում ենք, որ նոքա ճշմարտապէս վտանգաւոր եւ հոգեվարք դրութեան մէջ են նիւթական վիճակի պակասութեան պատճառով, որովհետեւ նոքա ոչ մի եկամտի աղբիւր չունեն, նոյնպէս եւ ոչ տեղական եկեղեցի, որ կարողանայ օգնել նրանց, մինչեւ այսօր նրանք կառավարւում էին՝ ճիշտ ասելով՝ «բօշայութիւնով»: Այդօրինակ ձեւին անպատճառ մի օր վերջ կուգար, որ ահա հասել է»[13]: Դպրոցների փակման վտանգ էր առաջացել: Այնուամենայնիւ, 1887-1888 ուս. տարում Կարս քաղաքի արական եւ օրիորդաց դպրոցները գործում էին. առաջինում կրթութիւն էր ստանում 281 աշակերտ, երկրորդում՝ 120 աշակերտուհի: Նոյն տարում Կարսի մարզում դպրոցներ էին գործում նաեւ հետեւեալ բնակավայրերում. Բէնգլի-Ահմէտ – արական ծխական դպրոց, որտեղ կրթութիւն էին ստանում 20 սաներ, Բաշ-Շիրակ – արական ծխ. դպրոց՝ 41 սան, Փիրուալի – արական ծխական դպրոց՝ 19 սան, Փերնա – արական ծխական դպրոց՝ 9 սան, Արդահան – արական ծխական դպրոց՝ 30 սան, Կաղզուան – օրիորդաց դպրոց՝ 34 սանուհի, արական ծխ. դպրոց՝ 83 սան, Սարիղամիշ – արական դպրոց՝ 20 սան[14]: Այսպիսով՝ 1888 թուականի դրութեամբ Կարսի փոխանորդութիւնում գործում էին ընդամենը 10 օրինաւոր եկեղեցական-ծխական դպրոցներ 8 բնակավայրերում՝ ներառեալ Կարս քաղաքը, որոնցում կրթութիւն էին ստանում 657 սաներ (503 տղայ եւ 154 աղջիկ):

1909 – 1910 թթ. Կարսի շրջանում գործում էր 17 դպրոց (15 երկսեռ, 2 օրիորդաց), որտեղ կրթութիւն էին ստանում 1667 սաներ (1176 տղայ, 481 աղջիկ)[15], 1912-1913 թթ.՝ 26 դպրոց[16], 1845 սան[17]: Սակայն առաջին աշխարհամարտի եւ ժողովրդի համար դրա աղէտալի հետեւանքների արդիւնքում տուժեցին նաեւ Կարսի եկեղեցական-ծխական դպրոցները: Արդէն 1916-1917 ուսումնական տարում Կարսի շրջանում գործում էր 15 դպրոց (1 արական, 14 երկսեռ)[18]:

---

[13] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3082, թթ. 17 եւ շրջ.: Հմմտ. աստ, էջ 68, փաստաթուղթ Հմր. 44:

[14] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 305, թթ. 32 շրջ.-35: Հմմտ. աստ, էջ 121-126, փաստաթուղթ Հ՝՛. 84:

15 ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 320, թթ. 1-4 շրջ.:

[16] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 368, թթ. 3, 21:

[17] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 340, թթ. 1-3 շրջ.:

[18] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 882, թ. 89: Հմմտ. աստ, էջ 391, փաստաթուղթ Հ՝՛. 288:

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում Կարսի Ս. Առաքելոց Մայր Տաճարի խնդիրը: 1878 թ. ապրիլի 4-ի գրութեամբ Կարսի Նահանգապետ գեներալ-լէյտենանտ Իվան Պօպկօն Ս. Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինոդից տեղեկութիւններ է խնդրում Կարս քաղաքի քրիստոնէական եկեղեցիների մասին, դրանք իրենց տէրերին յանձնելու նպատակով[19]: Անառարկելի էր թւում Մայր Տաճարի պատկանելութեան հարցը: Սակայն, երբ 1878 թ. սեպտեմբերի 29-ին Կովկասի Փոխարքայ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաեւիչ Ռոմանովը ժամանում է Կարս՝ տեսնելով մզկիթի վերածուած Հայոց Առաքելոց եկեղեցու հոյակապ շինութիւնը, հրամայում է այն ներքուստ վերանորոգել եւ ձեւափոխել իբրեւ ռուսական ուղղափառ եկեղեցի[20]: Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին շուրջ 4 տասնամեակ գործել է իբրեւ ռուսական ուղղափառ եւ միայն 1919 թ. սեպտեմբերին Կարսի Փոխանորդ Կորիւն վարդապետի կողմից Կարսի Հայոց հինաւուրց Ս. Առաքելոց եկեղեցին, վերաօծուելով իբրեւ առաքելական եկեղեցի, վերադարձւում է իրական տէրերին[21]: 1919 թ. յուլիսին, Ս. Առաքելոցի եկեղեցու գմբէթի վրայ տեղադրուած թրքական մահիկը, ուղարկուել է Ս. Էջմիածին՝ թանգարանում պահելու[22]:

Ժողովածուում ներառուած մի խումբ փաստաթղթեր տեղեկութիւններ են պարունակում Կարսի մարզի հայկական վանքերի ու եկեղեցիների կալուածքների, դրանց տեղաբաշխման, շահագործման, ստացուող եկամուտների, վանքերի ու եկեղեցիների ընդհանուր դրութեան, շարժական գոյքի, դրանց կառավարմանն ու շէնացնելուն ուղղուած ձեռնարկների, վերանորոգումների, որոշ հինաւուրց վանքերի ու նրանց մնացորդների պահպանութեան, վանահայրերի նշանակման, քահանայական ձեռնադրութիւնների, պարգեւատրումների, նրանց գործունէութեան եւ այլ հարցերի մասին: Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում Անիի աւերակներին, դրանց պահպանութեան ուղղութեամբ ձեռնարկուած քայլերին, Անիի Մայր Տաճարի վերանորոգմանը, պեղումներին վերաբերող վաւերագրերը:

Վերոյիշեալից զատ, ժողովածուում կարեւոր տեղեկութիւններ կան Ցարական իշխանութիւնների հետ փոխյարաբերութիւնների, Եկեղեցական գոյքի բռնագրաւման 1903 թ. յունիսի 12-ի ցարական օրէնքով Կարսի Հոգեւոր Կառավարութեան տնօրինութեանը ենթակայ կալուածքների ու

19 ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2892, թ. 1 եւ շրջ.: Հմմտ. աստ, էջ 12-13, փաստաթուղթ Հ՝. 2:

20 ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թթ. 16-18 շրջ.: Հմմտ. աստ, էջ 22-25, փաստաթուղթ Հ՝. 8:

21 ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 26 եւ շրջ.: Հմմտ. աստ, էջ 425-426, փաստաթուղթ Հ՝. 319:

22 ՄՄԱ, Գարեգին Յովսէփեանի ֆոնդ, թղթպ. 95, վաւ. 728, թ. 1:

գոյքի բռնագրաւման, բնակչութեան ընդհանուր դրութեան, տեղաշարժերի, պատերազմից վնասուածների, վիրաւոր զինուորների ու գաղթականների օգտին կատարուած հանգանակութիւնների, գաղթականների տեղաւորման ու խնամատարութեան, որբանոցների եւ այլ հարցերի մասին:

Ծանօթագրութիւնների մեծ մասը կազմուել է արխիւային զանազան փաստաթղթերի հիման վրայ. տեղանուններին վերաբերող ծանօթութիւնների հիմքը Տեղանունների հինգհատորեայ բառարանն է:

Ժողովածուն բաղկացած է «Փաստաթղթեր», «Անձնանունների ցանկ», «Տեղանունների ցանկ», «Փաստաթղթերի ցանկ» բաժիններից: Ընդգրկուած 333 փաստաթղթերի ծայրային տարեթուերն են 1871–1920 թթ.: Անձնանունների ցանկում հայ հոգեւորականները ներկայացուած են եկեղեցական անուն – եկեղեցական աստիճան – ազգանուն յաջորդականութեամբ: Տեղանունների ցանկում չեն ընդգրկուած «Կարս»-ը եւ «Ս. Էջմիածին»-ը:

Փաստաթղթերը հրատարակւում են առաջին անգամ, բնագրի լեզուով՝ մասնակի ուղղագրական շտկումներով:

Գոհար Աւագեան

№ - 1
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԱՆԱՀԻՆԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՁՆԵՑՈՒՆ՝ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ (ՂՕՇԱՎԱՆՔԻ) ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐՆ ՈՒ ԱՅԼ ԿԱՐԵՒՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Թիւ 12 *25 փետրուարի 1871 թ.*

Ս. Էջմիածին

Գերապատիւ վանահօրն վանուցն Սանահնոյ Վարդան եպիսկոպոսի Օձնեցւոյ[1]

Առաջնորդն Կարուց (Ղարսայ) Գրիգորիս վարդապետն[2] խնդրեալ է ի վեհափառ Կաթողիկոսէ ամենայն Հայոց[3] տալ որոնել և գտնել ի գրադարանէ Սրբոյ Էջմիածնի զկալուածագիրս յանուն Հոռոմոսի վանիցն (Ղօշավանք) և առաքել առ ինքն, վասն ըստ պահանջման Գերապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ[4] հասուցանելոյ առ նա առ ի առաջի առնել ի պետութենէն Օսմանեան հաստատեալ յանձնաժողովոյն վասն ազատ կացուցանելոյ զվանորայս յամենատեսակ Արքունի հարկաց և տալոց նոցա զմասնաւոր կալուածս ի կառավարութիւն և ըստ որում յիշեալ Առաջնորդն ի գրութեան յիշէ թէ Սրբազնութիւն Ձեր մնալով անդ ի վանս Հոռոմոսի ամս ինչ վանահայրութեամբ պաշտամամբ ստացեալ էք յՕսմանեան պետութենէն զնոր հրովարտակ ինչ վասն կալուածոց այնր վանուց կամ վասն այլ ինչ կարևոր գործոց: Ուստի ըստ հրամանի Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց յանձն առնեմ Ձերդ Սրբազնութեան զի զգտանեցեալ ի ձեռս Ձեր զորպիսի և իցէ հրովարտակս նոր և հին և զայլ կարևոր թուղթս վերաբերեալս

---

[1] Վարդան վարդապետ Օձնեցի –յետագայում՝արքեպիսկոպոս: 1833 թ. ստացել է հոգևոր կոչում, 1835-ին՝ մասնաւոր վարդապետական աստիճաններ: 1837 թ. նշանակուել է Ելիզաւետպոլի փոխանորդ: Նա կեանքի վերջում Սանահինի վանքում էր, որտեղ էլ վախճանուեց 1897 թ. փետրուարի 28-ին և թաղուեց իր ծննդավայր Օձուն գիւղում: Նրա օրօք՝ 1853 թ., Հոռոմոսի վանքին կից կառուցուել է առաջնորդարան, 8 սենեակներ՝ միաբանների համար և մի տնտեսական շինութիւն՝ամբարով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1737, թ. 157 շրջ., «Արարատ», 1904, նոյեմբեր, էջ 989):

[2] Գրիգորիս վարդապետ (յետագայում՝ արքեպիսկոպոս) Յովհաննիսեան Փիլիպպեցի, չորս տարի եղել է Կարսի թեմի առաջնորդ, եպիսկոպոս է ձեռնադրուել 1872 թ.: 1885 թ. Մակար Ա. Կաթողիկոսի կոնդակով նշանակուել է Պարսկա-Հնդկական թեմի առաջնորդ:

[3] Խօսքը Գէորգ Դ. Կոնստանդնուպոլսեցի (Քերեստէճեան) Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասին է (1866-1882):

[4] Խօսքը Մկրտիչ Վանեցի Խրիմեանի մասին է (1869 - 1873):

այնր վանուց, փութանակի յայտարարութեամբ առաքեսջիք ուղղակի առ Նորին Վեհափառութեանն վասն հասուցանել տալոյ յիշեալ Առաջնորդին կարուց ի գործադրութիւն։

[Սինոդի անդամ՝ Մեսրոպ վարդապետ Սմբատեան[5]]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 248, թթ. 4-5, սևագիր, ձեռագիր:

№- 2
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԻՎԱՆ ՊՕՊԿՕՅԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՋԿԻԹԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ ԿԱՐՍԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՃՇՏԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2240 *4 ապրիլի 1878 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Ս. էջմիածնի

Ի ներկայումս Տէրութիւնն ունի զենթադրութիւն վերականգնելոյ հին եկեղեցիս քրիստոնէից Կարսի, զորս մահմեդականք դարձուցեալ են ի մզկիթս, յոյր սակս կարևոր են պատմական տեղեկութիւնք առ այն՝ թէ ո՞ր եկեղեցիք ի հնումն ունէին զյունական ձև շինուածոյ և ոյք ի նոցանէ հայկականաւ յօրինեալ էին ճարտարապետութեամբ։

Եւ որովհետև Տաճարն Ս. էջմիածնի ունի զընդարձակ գրադարան՝ հանդերձ ճոխ պատմական բաժանմամբ և յատկապէս գրենովք արևելեան մատենագրաց, ուստի ի նմին գրադարանի են անշուշտ և այլ գրուածք, բովանդակողք յինքեանս զմանրամասն նկարագիրս Կարսայ և թերևս նաև եկեղեցեացն քրիստոնէից։ Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմ ի Սինոդէն Ս. էջմիածնի ցուցանել ինձ զլուսաւորն գործակցութիւն ի վերականգնումն հին Ս. Տաճարացն քրիստոնէից, եղելոց ի Կարս քաղաքի, հաղորդելով զցուցակս հանդերձ մանր տեղեկութեամբք վասն պատկանելոյ նոցին այս կամ այն քրիստոնեայ դաւանութեան, վասն ժամանակի կառուցման նոցին, անուան և ազգանուան անձանց, որք կառուցեալ են զՏաճարսն զայնոսիկ այլովքն հանդերձ, որք գտանեցին անդանօր։

---

[5] Մեսրոպ վարդապետ (յետագայում՝ արքեպիսկոպոս) Սմբատեան - Ծնուել է 1833 թ. Նախիջևանի Փորադաշտ գիւղում, մահացել է 1911 թ. Երուսաղէմում: 1850 թ. աւարտել է Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը: Եղել է Տաթևի վանքի վանահայր, Նախիջևանի փոխանորդ, Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ, 1872 թ. ձեռնադրուել է եպիսկոպոս, 1870-1887 թթ. եղել է Սինոդի անդամ, 1887-1895 թթ. Շամախու թեմի առաջնորդ, 1897-1907 թթ. Երնջակի Ս. Կարապետ վանքի վանահայր: 1892 թ. ընտրուել է Ռուսական կայսրութեան հնագիտական ընկերութեան անդամ: Բազմաթիւ տպագիր գրքերի հեղինակ է: Ունի նաև անտիպ գիտական աշխատութիւններ:

Նահանգապետ՝ Գեներալ – լեյթենանթ՝ Պօպկօ[6]
Կառավարիչ Դիւանատան՝
Գործավար՝ Օսթրովսքիյ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2892, թ. 2, թարգմանութիւն ռուսերէնից[7], ձեռագիր:

№- 3
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՎԱՆԱՆԴ ԳԱՒԱՌԻ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ

5 յունիսի 1878 թ.
Ղօշավանք

Սկզբնական կանոնք բարեկարգութեան Վանանդ գաւառի Հոռոմոսի վանուց (Ղօշավանք)
ի 5 յունիսի 1878 ամի, ի Ղօշավանք

Ա. Հոռոմոսի վանուց վանահայրութիւն՝ որովհետև ի վաղ ժամանակէ միացեալ է Վանանդ գաւառի Առաջնորդական պաշտօնի հետ, վասն որոյ նոյն Առաջնորդին պարտքն է միաբանական ուխտ մի հաստատել նոյն վանուց մէջ և վարչական խորհուրդը վանքի կառավարութիւնը կանոնաւորելու համար:

Բ. Հոռոմոսի վանք՝ Վանանդ գաւառի մէջ իբրև Մայր վանք և Առաջնորդական աթոռանիստ տեղ լինելով, մնացեալ միւս վանքեր նորա ստորադրեալ պէտք է համարուին, և պիտի կառավարուին Հոռոմոսի վանահօր և միաբանութեան տեսչութեամբ, որոյ կողմանէ տեսուչներ կը հաստատուին նոցա, որպէսզի և նոքա Ազգին մէջ բարոյական զարգացումն ծաւալելու միջոց լինեն:

Գ. Հոռոմոսի վանուց վարչութիւն կը տնօրինէ ստորադրեալ վանորէից կառավարութեան կերպն և նոցա ելևմտից հաշուեկշիռն (պիւտճէն) կը շինէ:

Դ. Հոռոմոսի վարչական խորհրդոյն կը նախագահէ Վանանդ գաւառի Առաջնորդն, և ի բացակայութեան նորա իւր որոշեալ փոխանորդ վարդապետն, զոր ինքն կընտրէ վանքին միաբանութենէն:

Ե. Հոռոմոսի վանական ուխտն՝ Ազգայնոց կողմանէ իբրև տեսուչ և տէր է բոլոր վանքերու շարժական և անշարժ ստացուածոց և նորա բոլոր հասոյթներուն, զորս վանքերու կառավարութեան միջոցաւ Ազգին մէջ բարոյական զարգացում ծաւալելու պիտի գործածէ:

---

[6] Պօպկօ Իվան Դիոմիդի (1819, Կրասնոդարի մարզ – 1893, Խարկով) – ռուս ռազմական պատմաբան, ազգագրագէտ, գեներալ-լէյտենանտ, Ղրիմի և 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմների մասնակից: 01.11.1877—08.06.1878 եղել է Կարսի նահանգապետը:

[7] Ռուսերէն բնագիրը տե՛ս նոյն տեղում, թ. 1 և շրջ.:

Զ. Վանուց տեսչութիւն իւր թեմական գիւղորէից մէջ գիւղական հասարակութեան նպաստով Ազգ. վարժարաններ հաստատելու ջան ի գործ պիտի լինի, պահելով զանոնք ընդ իւր տեսչութեամբ, իսկ հոգաբարձուներ ընտրել կուտայ մէն մի գեղէն, նոցա ելևմտից հոգատարութիւն անելու համար:

Է. Վանական ուխտն՝ ըստ բարենպատակ նախնեաց վաղեմի սովորութեան, պարտի գրանոց մը և գիշերօթիկ վարժարան մը հաստատել վանքի մէջ, իւր թեմականներէն թոշակաւոր աշակերտներ ընդունելով բանիբուն քահանայացուներ և բարեկիրթ վարժապետներ պատրաստելու համար:

Ը. Վանուց վարչական կառավարութիւնը բարուոքելու համար, նորա ուխտին պարտքն է որոշեալ շրջանի մը համար պիւտճէն պատրաստել և տալ ի ձեռս վարչական խորհրդոյն գործադրել կառավարութիւնը ապահովացնելու համար:

Թ. Պիւտճէն կը պատրաստուի տիրող քաղաքական կառավարութեան ընթացիկ դրամոց հաշուով, բայց եթէ հարկ լինի մի գումար պարտք անել վանուց կառավարութեան համար, այն պարտքի վճարման միջոցն՝ նախահոգակ[8] պատրաստութեամբ յատկացեալ և ապահովեալ պիտի լինի:

Ժ. Վանուց յաւելեալ դրամներ միշտ յապահովի պահելու է անշարժ կալուածները գնելու համար յանուն վանուցն, և երբէք տոկոսով տալու չէ:

Ժա. Վանուց սուրբ սպասներ և անշարժ կալուածներ նուիրական լինելով՝ անվաճառելի են:

Ժբ. Վանուց բոլոր գոյից ցանկը գրանցի շարժական և անշարժ ստացուածոցն, սրբազան և անսրբազան անօթներու վաւերագրութեան մատեանը, խորհրդոյն գործառնութեանց արձանագրութիւնը և ելևմտից տոմարը տարին մի անգամ քննութեան կենթարկուի միաբան ուխտին կողմանէ, անոնց անթերի, պատրաստ և ըստ օրինի լինելն ստուգելու համար: Ասոնց պատասխանատու է վանուց վարչական խորհուրդ, ուստի և ըստ գործոյն իւրոյ բարոյապէս կը վարձատրուի կամ կը պատժուի նախագահէն:

Ժգ. Վանուց վարժարանի 1/5-րդ մասն անթոշակ կընդունուի թէ վկայեալ աղքատ լինին:

Ժդ. Աշակերտոց թոշակներ և յանուն վարժարանին եղած նուէրներն վարժարանին յատկացեալ են նորա յարատևութեան համար:

Ժե. Վանուց հասոյթներ պիտի արձանագրուեն ի ժապաւինեալ տոմարի ժողովող նուիրակին, և իւրաքանչիւր գիւղի քահանայն, տանուտէր և երեցփոխան պիտի վաւերացնեն զայն՝ յատկացնելով հասոյթներու որքանութիւնը:

---

[8] Նախահոգակ – կարիքները նախատեսող, ապագայի համար հոգ տանող:

Ժգ. Երկրի մէջ ընդհանրացած չափ և կշիռ գործածելու է վանքի մէջ որով և պիտի պատրաստուի պիւտճէն։

Ժէ. Վանական ուխտի որևիցէ անդամ կը պատժուի և կամ յանցանքին համեմատ կարտաքսուի վանքէն, եթէ գայթակղեցունէ զոք Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց հակառակ գործով, նենգութեամբ, իւր կոչման հակառակ վարքով և սոյն կանոնաց անհնազանդութեամբ։

Ժը. Հոռոմոսի վանուց ուխտի անդամք թուով կը սահմանեմք լինել առ այժմ երեք վարդապետ, երեք տիրացու կամ սարկաւագ, երկու գործակալ։

Ժթ. Խնդրոյ մը լուծում եթէ վանուց վարչական խորհրդոյ ձեռնհասութենէն վեր եղաւ կը ձգուի ընդհանուր ժողովոյն։ Ընդհանուր ժողով կը կազմուի վանքին միաբան ընդունուած վարդապետէն, այրի քահանայներէն և սարկաւագներէն։

Ի. Հոռոմոսի վանուց ուխտին անդամակցելու ցանկացողներ եթէ վանուց վարչական խորհրդէն ընդունուեցան, պէտք է որ սոյն կանոններ ընդունելով ստորագրեն։

Մասնաւոր կանոնք Հոռոմոսի վանուց

Յօդուած Ա.

1. Հոռոմոսի վանուց ուխտի անդամները առ այժմ կընտրէ Վանանդ գաւառի Առաջնորդն մինչև որ վանական խորհուրդ կազմելու թէ լրանայ, այնուհետև վանահայր հանդերձ խորհրդոյ անդամօք կընտրեն ձայնից առաւելութեամբ ուխտակցելու ցանկացողներ։

2. Խորհուրդ կունենայ դիւան մը բաղկացեալ առ այժմ մի ատենապետէ և մի ատենադպրէ։

3. Երբ միաբան վարդապետաց թիւ կրճատ լինի, նախագահն երկու ձայն ունի ընտրութեան կամ քուէ տալու մէջ, իսկ երբ տար լինի մի ձայն. ժողովոյ ձայներ հաւասար չլինելու համար։

4. Խորհրդոյն վարչական գործոց տնօրէնութիւնք կորոշուին մեծագոյն մասի ձայնով և կարձանագրուին զորս դիւան կը վաւերացնէ։

5. Խորհրդոյ ձեռքի տակ պիտի լինի վանաց ելևմտից արկղն, պատասխանատուութիւն իւր վրայ առնելով։

6. Փոխանորդ վարդապետն ի բացակայութեան մեծաւորին վանուց ընդհանուր տեսչութեան պաշտօն կը վարէ, երկրորդ վարդապետն ամենօրեայ ժամասացութեան, վարժարանի և գրանոցի տեսչութեան պաշտօնը. այն է՝ երկրագործական և թեմական հասոյթներու հաւաքման և այլն։ Եւ քանի որ վանուց ընդհանուր ժողով գումարուած չէ, վանահայր կորոշէ այս պաշտօնը և կը հաստատէ և ի հարկին կը փոփոխէ կամ կը հրաժարեցնէ, երբ անփոյթ և մեղապարտ գտնուին։

7. Տիրացուներէն միոյն կը յանձնուի եկեղեցւոյ լուսարարութիւնը և վարժարանի կառավարչութիւնը, երկրորդին մասնապետութիւնը և սեղանապետութիւնը, երրորդին ծառայութիւն վարդապետաց, իսկ

երկու գործակալներէն միոյն կը տրուի հիւրընկալութիւն և միւսին արտաքին դռնապանութիւն։

Խ. ծ. Գրիգորիս Վարդապետ Աղուանեան[9]
Առաջնորդ Կարուց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թթ. 10-12 շրջ., բնագիր, ձեռագիր:

№- 4
ՇԻՐԱԿԻ ԳԱՒԱՌԻ ԳԻՒՂԵՐԻ ՀԱՅԱԶԳԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ԱՆԻԻ ԱՒԵՐՈՒԱԾ ՎԱՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆԸ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

30 սեպտեմբերի 1878 թ.

Նորին Վեհափառութեան Սրբազնակատար Կաթուղիկոսի
Ամենայն Հայոց
Տեառն Տեառն Գէորգայ[10]
Ի հայազն բնակչաց գիւղորէից Շիրակայ գաւառի
Խնդիր

Հնութիւն բաղդազուրկ Հայաստանի և սքանչելի բեկորք աւերակաց նորին թիւս որոց և չքնաղակերտ տանն Բագրատունւոյ[11] *Անի*

[9] Գրիգորիս վարդապետ (յետագայում՝ եպիսկոպոս) Մկրտչեան Աղուանեան (1827 դեկտեմբերի 8, Վան – 1893 դեկտեմբերի 8, Ջուղա): 1862-ին Մարգար եպիսկոպոսի կողմից ձեռնադրուել է աբեղայ Վարագայ վանքի վրայ, իսկ 1879 թ. ապրիլի 13-ին՝ եպիսկոպոս: 1893 թ. նոյեմբերի 24-ին Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակով նրան շնորհուել է արքեպիսկոպոսի տիտղոս : 1863-65 թթ. եղել է Մշո Ս. Կարապետի առաջնորդական փոխանորդ, 1867-68 թթ.՝ Ս. Կարապետի վանահօր տեղապահ: 1860-72 թթ. եղել է Տարօն գաւառի առաջնորդ, 1872-75-ին՝ Վանի առաջնորդ, 1876-87 թթ. վարել է Կարսի և Բաթումի նահանգի առաջնորդի պաշտօնը: 1888 թ. վարել է Ալեքսանդրապոլի փոխանորդի պաշտօնը և 1890 թ. նոյն պաշտօնով փոխադրուել է Գանձակ. 1892 թ. եղել է Ս. Սինոդի անդամ և վանքի տնտեսական մասի վերատեսուչ: Ստանձնելով Ատրպատականի առաջնորդի պաշտօնը՝ մահացել է ճանապարհին՝ Հին Ջուղայում:

[10] Գէորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Քերեսթէճեան (5 յուլիս 1813, Կ. Պոլիս – 6 դեկտեմբեր 1882, Ս. Էջմիածին) – Յաճախած է Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի Ժառանգաւորաց Վարժարանը: 1835-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, 1841-ին ստացած ծայրագոյն վարդապետութեան աստիճանները: 1848-ին եպիսկոպոս օծուած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսէս Ե. Աշտարակեցիի ձեռամբ: 1844-1858-ին՝ Պուրսայի թեմի առաջնորդ, 1858-1860-ին՝ Կ. Պոլսոյ հայոց պատրիարք: 1860-ին հրաժարած է եւ 1861-էն կրկին Պուրսայի թեմի առաջնորդ դարձած: 1866-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուած է: Գլխաւոր իրագործումը եղած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հիմնադրութիւնը իր անունով կոչուած Հոգևոր Ճեմարանին, որ սկսած է գործել 1874-ին:

[11] Հայ Բագրատունիներ – հայկական նախարարական և թագաւորական տոհմ Հայաստանում, որը մեծ դեր է խաղացել հայոց պատմութեան, յատկապէս միջնադարեան ժամանակաշրջանում: Բագրատունիների թագաւորութիւնը տարբեր ժամանակամիջոցներում տարբեր մայրաքաղաքներ ունէր՝ Դուին, Շիրակաւան, Բագարան, Կարս, Անի: Անին բարգաւաճեց, յատկապէս Սմբատ Բ. արքայի գահակալութեան տարիներին (977-990): Քաղաքը պատմական աղբիւրներում յիշատակւում է «մեծ ու շէն, տիեզերական» մակդիրներով:

մայրաքաղաքին տրոփեան զսիրտ հայ այցելուի, թողլով զնա ի սուգ տրտմութեան և հառաչանաց, որք ցայսօր ժամանակի ենթարկեալ ի յագուրտ կրեց մոլեռանդ և ինքնակործան ազգին օսմանեան՝ մերձեալ են օրհասին իւրեանց, ըստ որում նոքա տաճիկք թելադրեալ ի տգիտութենէ և ի մոլեռանդութենէ իւրեանց մինչդեռ առիթ լինին ինքնին կործանման և ապաբաղդութեան, զիա՞րդ թողուն անձեռնմխելի զաւերական քրիստոնեայ ազանց (ըստ իւրեանց անհաւատից) գէթ յիւրումն դրութեան, մինչդեռ քանդումն, աւերումն և ասպատակութիւն զուարճալիք ինքեանց համարին, որպէս ակն յանդիման երևին այսոքիկ, զի ի պատուականագունից քարանց սեանց սրբազան եկեղեցեաց և պարսպացն Անւոյ դրուագեալ են զշիրիմս և զյարդանոցս իւրեանց ի դառնագին վիշտ համազգայնոցս և զգայուն սրտից այցելուաց:

Զայնոցունց նուիրական աւերակաց հետզհետէ հիմնայատակ կործանումն և սպառումն թէև ակն յանդիման նշմարէաք մեք մինչ զաւուրս մեծափառ յաղթանակութեան քաջայաղթ զօրաց Ռուսիոյ, սակայն յերկիւղէ տաճկաց անհնարին լինէր մեզ արտայայտել զցաւ մորմոքանաց մերոց առ աւերակսն հնոյն Հայաստանի և ամոքել զտառապանս նորին. իսկ յորժամ վերնականն[12] խնամով պարտեցաւ թշնամին քրիստոնէութեան և մարդկութեան և ծածանեցաւ ի նուիրական վայրս Հայ աշխարհի դրօշ Բարեխնամ գահին Ռուսիոյ, յայնժամ անյապաղ փութացաք ի բուժումն վերաց մերոց առ ընդհանուր Կառավարիչն Կարուց սահմանի, որմէ պատուեցաք գրաւոր իրաւատացութեամբ առ ի այժմէն իսկ ձեռնարկանել ի շինութիւն աւերակացն Անւոյ և կազմել յայնմ զդաս կուսակրօն միաբանութեան, պաշտպանելով յամբարիշտ ձեռանց զբազմադարեան հնութիւնսն: Ընդ այս կարգադրութեան Տեառն Ընդհանուր Կառավարիչի Կարուց բերկրանօք սրտի ցնծացեալ արժան վարկաք դիմել առ Հովուապետդ Հայոց և պաշտպանդ Հայրենեաց մատուցմամբ պատճէնի հաղորդագրութեան վերոգրեալ Կառավարչի յանուն վերակացուի Հոռոմոսեան վանից Բարեշնորհ Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ[13] ի ծայրագոյն նկատողութիւն Ձերդ Աստուածարեալ Վեհափառութեան, խնդրելով ամենախոնարհաբար զողորմածագոյն տնօրէնութիւն Ձերդ զշինութենէ

---

12 Վերնական – երկնային, աստուածային:

13 Ստեփան վարդապետ Տէր Մխիթարի Շիրակունի – ծնուել է 1841 թ.: Կրթութիւնը ստացել է Ս. Յովհաննու Մկրտչի վանքում: 1860 թ. յունիսի 20-ին ձեռնադրուել է աբեղայ: 1878 թ. նշանակուել է Հոռոմոսի վանահայր և Շիրակի շրջանի գիւղերի եկեղեցիների գործակալ, 1886-ից՝ Արցախի Գանձասարի շրջանի գործակալ: 1882 թ. պարգևատրուել է վարդապետական լանջախաչով (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1652, թթ. 1-2): Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսի 1896 թ. օգոստոսի 23-ի կոնդակով նշանակուել է Անիի վանահայր (ՄԱՍԷԱ, ց. 1, գ. 298, թ. 131 շրջ.):

վերոգրելոց, որոց նորոգութիւն մասամբ ևեթ մխիթար կարեն հանդիսանալ վշտագնեալ սրտից թշուառակենցաղ հայազանց փառաւորութեամբ յայնս անուան վերնախնամ տեսչութեան։

Աբրահամ քահանայ Գալուստեան
Միքայէլ քահանայ Նիկողոսեան
Սաղաթէլ քահանայ Տէր-Դաւթեանց[14]
Մարկոս քահանայ Մկրտիչեան[15]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թ. 6 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№- 5
ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՑ ԱՆԻԻ ԿԻՍԱԻԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ ՄԷԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հոկտեմբերի 1878 թ.

Նորին Վեհափառութեան Սրբազնակատար Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի Սրբոյ էջմիածնի Տեառն Տեառն Գէորգայ Դ.-ի
Ի վանահօրէ Հոռոմոսի վանուց Ստեփաննոս վարդապետէ Շիրակունի

Յետ նուաճելոյ քաջաբազուկ զօրացն Ռուսաց զբանակն տաճկական և յետ տիրելոյ յարձակմամբ կարուց քաղաքի և ամրոցի նորին, ոմանք յայլադաւան քրիստոնէից ձգտէին հանդիսանալ տիրապետող, աւերակացն մայրաքաղաքին Հայաստանի հնոյն Անւոյ, որ է անհերքելի սեպհականութիւն մեծին Հայոց, որպէս ապացուցանէ ազգային նկարագրութիւնն։

Տեղեկացեալ զայսմ դիտաւորութենէ ոմանց քրիստոնէից և առ ի կարճել զայսօրինակ ձգտումն նոցին և ո՛չ երկարաձգելոյ զդիպողութիւն ժամանակի ներկայացայ թախանձանօք առ Պ. Նահանգապետն

[14] Սաղաթէլ քահանայ Տէր-Դաւթեան – ծնուել է 1830 թ.: 1850 թ. կրթութիւն է ստացել Ղօշավանքում: 1858 թ. ձեռնադրուել է քահանայ և մինչև 1873 թ. եղել է Կարմիր Վանք գիւղի քահանան: 1866 ստացել է խարա փիլոն Յովհաննէս արքեպիսկոպոս Ռշտունու կողմից, իսկ 1867-ին արժանացել է Գէորգ Դ. Կաթողիկոսի գոհունակութեան ու օրհնութեան կոնդակին: 1878-ից ձրիաբար ծառայել է Կարսի արքունի հիւանդանոցում, դատարանում և այլուր իբրև երդմնեցուցիչ քահանայ 1884 թ. Բարձրագոյն հրամանաւ պարգևատրուել է Ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7626, թթ. 4, 7-8, ֆ. 56, ց. 16, գ. 295, թթ. 69-72):

[15] Փաստաթղթի տակ ստորագրել են նաև հետևեալ աշխարհիկ անձինք՝ Յարութ Զատիկով, Մարգար Պետրոսեան, Զաքօ Կարապետեան, Արութ Կիրակոսեան, Արթին Գասպարեան, Գասպար Բաղդասարեան, Խնկոյ Սարգսեան, Մոսէս Աթայեան: Բոլոր ստորագրութիւնների տակ դրուած են անձնական կնիքներ:

Կարուց նահանգի ի վերայ հիման հաճութեան տեղական բնակչաց և խնդրեցի զթոյլատուութիւն յաղագս վերանորոգելոյ զմինն գէթ յայնոցունց աւերակաց եկեղեցեաց, որ դեռ կայ ի կանգուն և պահպանի որքան և իցէ գոյութիւն նորին ընդ մէջ այլոց հնութեանց նոյն Անի քաղաքի, որպէսզի կատարեսցի ի նմին ժամերգութեանն պաշտօն և այսու ճանապարհաւ կացցէ նուիրական հնութիւնն այն ի ձեռս հայոց, առ որ Նորին Գերազանցութիւնն շրջանկար հայեցողութեամբ յայց ելանելով Անի քաղաքին՝ յայտնեաց զիւրն լիուլի հաճութիւն և շնորհեաց զգրաւոր լուծումն այժմէն ձեռնարկանելոյ յիրագործութիւն փափագանաց մերոց, որպէս կարէ վեհափառութիւն Ձեր նկատել ի մատուցեալ ընդ սմին պատճէնէ գրութեան նորա առ իս ի 16 անցեալ մայիսի համարաւ 31։

Թէև վիճակն կարուց ի յարաբերութիւնս հոգևոր գործոց տակաւին չէ մտեալ ի շրջան հոգատարութեան Սինոդի Սրբոյ էջմիածնի, սակայն հայազինք վիճակին աշխարհականք և հոգևորականք, որոց և անարժան նուաստս առ հասարակ վայելեմք զքաղցր հպատակութիւն ընդ Հայրապետական լծով Մեծի Քահանայապետիդ և հովանաւոր գլխոյդ եկեղեցւոյ մերոյ, յայր սակս հասուցեալ զայսմանէ ի գիտութիւն Վեհափառութեան Ձերոյ՝ վստահանամ ամենախոնարհաբար խնդրել զծայրագոյն բարեհաճութիւն Ձեր, յաղագս թոյլատրելոյ ինձ վերանորոգել զմինն յեկեղեցեաց Անի քաղաքի ընդ վերոգրեցելումն։

Առ որ բարեբաղդ համարիմ զիս սպասել խնամազեղ տնօրէնութեան Ձերում վասն հրատարակելոյ ի լուր հայազանց կարուց վիճակի։

Ստեփաննոս վարդապետ Շիրակունի
Վանահայր Հոռոմոսի վանից[16]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 6

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2440 *18 հոկտեմբերի 1878 թ.*
Ս. Էջմիածին

Բարեշնորհ Առաջնորդին Կարսայ Գրիգորիս վարդապետի Աղուանեանց ի տնտեսական մասնէ [Սինոդի Ս. էջմիածնի]

Նահանգապետն Ղարսայ գրութեամբ ի 4-ն ապրիլի սոյն ամի համարաւ 2240, ծանուցանելով Սինոդիս զայժմու ենթադրութենէ Տէրութեան Ռուսաց ի մասին վերականգնելոյ զհին եկեղեցիս Քրիստոնէից ի Կարս քաղաքի, զորս մահմեդականք դարձուցեալ են ի մզկիթս,

[16] Փաստաթուղթը կնքուած է Ստեփաննոս վարդապետի անձնական կնիքով:

խնդրեալ է ի Սինոդէս հաղորդել ինքեան զկարևոր պատմական տեղեկութիւնս, առ այն թէ՝ ո՞յք յեկեղեցեաց անտի են Յունական և ո՞յք Հայկական, հանդերձ մանրամասն տեղեկութեամբք վասն պատկանելութիւն նոցին այսր կամ այնր դաւանութեան և վասն ժամանակի կառուցման նոցին, անուան և ազգանուան անձանց, որք կառուցեալք են զՏաճարան զայնոսիկ: Ըստ այսմ Սինոդս Սրբոյ էջմիածնի հաճութեամբ վեհափառ Կաթուղիկոսի, յանձնէ Ձերումդ Գերապատուութեան փոյթ յանձին կալեալ առանձին իմն ուշադրութեամբ կազմել տալ ի ձեռն հմուտ անձին զհանգամանապատում և զճիշտ արձանագրութիւն համայն եկեղեցեաց գտանեցելոց ի շարս քաղաքի թէ ո՞յք ի նոցունց, յորո՞ւմ ժամանակի և յումմէ՞ իցին կառուցեալք և զարձանագրութիւնսն զայնոսիկ մի առ մի ցուցակագրեալք ըստ կարի փութով առաջարկել Սինոդիս:

Բաց յայսմանէ ցուցակագրեսջիք, թէ ի նորոգ տիրապետել ի Ռուսաց տեղիսդ, որքան առ հասարակ գտանին վանորայք և եկեղեցիք Հայոց, թէ ապատք[17] *և թէ աւերակք և զորքան և զորպիսի յականէ անուանէ գոյս և զկալուածս և որքան ժողովուրդք լիցին ի գիւղորայս կամ ունին այնոքիկ, ինչ գրութեամբ զորս նոյնպէս ուղարկեսջիք Սինոդիս:*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2892, թ. 3, թողօն, ձեռագիր:

№ - 7
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԵՈՐԳ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 101 *21 հոկտեմբերի 1878 թ.*
Կարս

Աստուածարեալ Օծութեանդ Սրբագործ Աջոյն մատչեմք ի համբոյր ոտից իական խոնարհութեամբ

Վեհափառ Տէ՛ր,

Արդէն պատերազմական խառնակ դրութիւնը վերջացած լինելով՝ Կարսի նահանգն ևս հաստատապէս ենթարկուեցաւ Ռուսաց կառավարութեան ներքև, ինչպէս ծանոյց մեզ նորին Կ. Բարձր. Մեծ իշխան Մ. Ն.[18] *իւր այս տեղ այցելած ատեն: Հետևաբար, Կարսի Հոգևոր կա-*

---

[17] Ապատ – շէն:

[18] Խօսքը Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովի (1832 - 1909) մասին է: Նիկոլայ I-ի չորրորդ որդին էր, գեներալ-ֆելդմարշալ: Կովկասի փոխարքայ և Կովկասեան բանակի հրամանատար (1862-1882 թթ.), 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ՝ Կովկասեան բանակի գլխաւոր հրամանատար: Պետական Խորհրդի նա-

ռավարութիւն ևս Ձերդ Վեհափառութեան և Ս. Սինոդի անմիջական խնամոց և հովանաւորութեան վիճակեցաւ. և ուղղակի յարաբերութիւն ունենալու բաղդ ունեցանք, որոյ աղագաւ կը յայտնեմ Ձերդ Վեհափառութեան մեր առ այն ունեցած փափագը և որդիական ծառայութեան ցանկութիւնը: Ամենախոնարհաբար խնդրեմ Ձեր Աստուածարեալ Հայրութեանդ օրհնութիւնը և քաջալերութիւնը:

Մեզ ակներև լինելով Ձերդ Վեհափառութեան շնորհիւ Ռուսաստանի Հայ եկեղեցեաց և վանորէից պայծառութիւնը և բարեկարգութիւնը, ազգալոյս ճեմարանին հիմնարկութիւն և բացումը, ուսումնարանաց յառաջադիմութիւնը և ձայնագրական երաժշտութեան ընդհանրացումը, անտարակոյս եմք որ տեղւոյս վանորէից և եկեղեցեաց բարեկարգութեան ևս մեծ ցանկութիւն պիտի ունենայք, որմէ քաջալերեալ անդրանիկ խնդրովս կը դիմեմք խոնարհաբար յոտս Ձեր Վեհափառութեան՝ խնդրելու, որ Ձեր Հայրապետական Բարձր հովանաւորութիւնը այս կողմերը ևս տարածելու շնորհ անէք:

Երկար տարիներէ ի վեր Հայոց երևելի վանքերէն մինը՝ Հոռոմոսի վանք (Ղօշավանք) աննկարագրելի կերպով անբարեկարգ դրութեան մէջ ինկած լինելով, իսպառ անօգուտ դարձեր էր Ազգիս: Ուստի ըստ մեր պաշտօնի պարտաւորութեան և ըստ ցանկութեան ժողովրդոյ փափագելով զայն յօգուտ Հայ ազգին փոքր-ինչ բարեկարգութեան բերել, խմբագրեցինք ըստ մեր կարեաց մի կանոնագրութիւն, զոր ընդունած և ստորագրած են տեղւոյն այժմու միաբան Արժ. Ստեփան, Ներսէս և Յարութիւն վարդապետներ և թեմական երևելի քահանայք և տանուտէրք, և զոր ահա գրոյս ծոցով Ձեր Վեհափառութեան խրկելով, խնդրեմ խոնարհաբար որ բարեհաճէք զայն դիտողութեան առնելով վաւերացնել և փութալ վերադարձնել մեզ, որպէսզի աշխատեմք օր յառաջ զայն ի գործ դնել[19]: Կը փութամք յայտնել նաև Ձեր Վեհափառութեան որ տեղւոյս 14 աւերեալ գեղերու համար փայտ խնդրեցինք տեղական կառավարութենէն և արտօնութիւն տուաւ, այսպէս և այժմ վանքի վարժարանի շինութեան և աւերեալ շինուածոց նորոգութեան համար 500 հատ փայտ խնդրած եմք նոյնպէս արտօնութիւն տուած է, որուն ձեռնարկելու պիտի փութամք թերևս մօտ ժամանակիս:

Ձերդ Հայրապետական օրհնութեան միշտ կարօտ

Խոնարհ Առաջնորդ Կարուց՝ Գրիգորիս Վ. Աղուանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թթ. 9, 13, ինքնագիր:

խագահ (1881-1905 թթ.):

19 Տես թիւ 3 փաստաթուղթը:

№ - 8
ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳՍԻ ՄԱՐԳԱՐԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԳԷՈՐԳ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԿԱՐՍ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ ԵՒ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ՏՐՈՒԱԾ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ ՄԱՍԻՆ

25 հոկտեմբերի 1878 թ.
Կարս

Ձերդ Բարձր Սրբազնութեան

Ամենապատիւ Տէ՛ր,

Հանգամանքների փոփոխութեան պատճառաւ ի վաղուց հետէ զրկուած լինելով Հայրութեանդ հաղորդակցութենէն, այժմ գտնուելով, վերաբնակելով Ղարս, կատարում եմ և ձայնագրութեան ուսուցչի պաշտօնը նորոգ բարեկարգելի ուսումնարանի մէջ, և պարտականութիւն եմ համարում ինձ ըստ առաջնոյն երբեմնապէս հաղորդել Հայրութեանդ և նորա խմբագրեալ պատուական «Արարատ»-ին ազգային տեղեկութիւններ, որոնք սիրելի են Ձեր սրտին և որոյ յառաջադիմութեան համար անդադար աշխատում է Ձեր անխոնջ հոգին և ազգասէր սիրտը։

Անցեալ սեպտեմբեր ամսի 29-ին ժամանեց տեղս Նորին Կայսերական Բարձրութիւն Միխայէլ Նիկօլաևիչը[20], ընդունելութեան հանդէսը խիստ շքեղ էր, կամուրջի ծայրում կառուցել էին ճարտարապետական շքեղութիւնով լեցուն մի յաղթական կամար՝ դրօշակներով և վենզելներով[21] զարդարուած ու նկարուած, կամարի աջակողմը կանգնած էր Հայոց և Հայ Կաթոլիկաց հոգևորականութիւնը և ժողովուրդն աղ ու հացով, Առաջնորդը և քահանայք զգեստաւորուած էին, կամուրջի ձախակողում կանգնեցուցած էին տաճիկները։ Փոխարքայն գալով ուղղակի կանգնեց Հայոց առաջնորդի առջև և միայն նորան բարևեց և հարցրեց նորա կեանքի որպիսութիւնը։ Առաջնորդ Հայրը գեղեցիկ պատասխանեց՝ ասելով. «Ձերդ Արքայական Բարձրութիւն, ո՛չ միայն ես, այլև ինձ հետ Ղարսի բոլոր բնակիչք, այսօր Ձեր շնորհաբեր գալստեան պատճառաւ լեցուած են անպատում ուրախութիւնով և ջերմագին օրհնում են Նորին Արքայական Մեծութեան և Ձեր կեանքը, Դուք որ քրիստոնէից ազատութեան համար բարձրացրիք յաղթութեան դրօշակ, բոլոր բնակիչք, մանաւանդ հայերը, իւրեանց սրտի խորին երախտագիտութիւնը և շնորհակալութիւնը սփռում են Ձեր ոտքերի ներքև»։ «Շատ շնորհակալ եմ և ուրախ եմ Ձեզ կրկին տեսնելուս և յոյս ունեմ կրկին տեսնելու Ձեզ», - ասաց Փոխարքայն։

Փոխարքայն մի քանի օր մնալով Ղարս՝ այց և ի տես ելաւ ամ-

---

[20] Տե՛ս թիւ 18 ծանօթագրութիւնը։

[21] Վենզել – ռուս. «Вензель» բառն է, որ նշանակում է վարդագրանուն, անուանագիր, անուան և ազգանուան սկզբնատառերի ծաղկագիր։

րոցներուն և հայոց հին Առաքելոց եկեղեցուն. ներս մտնելով նորա մէջ՝ դիտեց նորա հոյակապ շինուածիւնը և հրամայեց ճարտարապետի տեղեկացնել իւրեան թէ որքա՞ն րուպլի ծախքի հարկաւորուածիւն կայ նորան վերանորոգելուն, և նոյնպէս հրամայեց կուպերնատորին գնել ձեռք գցել, նորա շուրջը գտնուած տաճկաց տները և ի ցաւ հայ ժողովրդոց, ասաց որ այդ եկեղեցին պատրաստեն ռուսաց համար։

Այդ եկեղեցւոյ մասին դեռ անցեալ տարուանից սկսեալ Ղարսի Առաջնորդ Գրիգորիս վարդապետը, որ մի արիաջան և արժանաւոր առաջնորդ է ժողովրդեան և ամէն մեծամեծերի համակրութեանը արժանացած, այս եկեղեցւոյ մասին շատ բանակցութիւնք է արել նախկին կուպերնատորի հետ այս և այլ ազգային սեփականութիւնք Հայոց եկեղեցւոյն վերադարձնելու մասին և նոյն ինքն Փոխարքայն ևս խոստացած է եղել առաջուց վերադարձնել հայոց, բայց ինչպէս այժմ երևեցաւ այլ կերպարանք է առած խոստումը։

Հայր Առաջնորդը առաջուց պատրաստած էր մի խնդրագիր՝ ներկայացնելու Փոխարքային այդ Մայր եկեղեցւոյ և վանորէից վերադարձնելու մասին, և յիշուած է եղել խոստումը, բայց մի քանի անգամ մարդ ուղարկելով Կուպերնատորի մօտ՝ հարցրել է և խնդրել է ներկայանալ Փոխարքային, նոքա գիտենալով նպատակը զանազան պատճառներով չեն կամենում և արգելում են նորան ներկայանալու։ Տեսնելով խոչընդոտների արգելմունքը, Առաջնորդ Հայրը խորհրդակցելով ժողովրդոց հետ՝ խնդիրը վճռեցին տալ ժողովրդականք, ուստի երբ Փոխարքայն վերադարձաւ Սարիղամիշից, հասարակութիւնը նորան դիմաւորելով քաղաքից դուրս կամենում էր տալ այդ խնդրագիրը, քաղաքապետը, պօլիցմէստերը տեսնելով խնդրագիրը, արգելում է նոցա և հրամայում է չտալ, նորանք ընդդիմանում են, և մի քանիսն ևս այդ պատճառաւ ծեծ են ուտում նորանից։ Գեներալ Լազարևը[22]*, հեռուից նկատելով ժողովրդոց շարժումը, ուղարկում է բօլքովնիկ Շելքովնիկովին*[23]*, նա առնելով նոցա ձեռից խնդրագիրը՝ տալիս է Լազարևին, նա էլ տալիս է Փոխարքային։ Պօլիցմէստերը խնդրատուներին երեք օր բանտարկեց։*

Փոխարքան իւր գնալու առաւօտեան կոչելով Առաջնորդին կէս ժամու չափ խօսակցում է, որոյ մէջ յայտնում է Առաջնորդին՝ ասելով. «Ես տեսա որ Ղարսում երեք եկեղեցի կայ. մինը մեծ, 2-ը փոքր, ուստի հրամայեցի որ մէկ մեծը (Առաքելոց եկեղեցին) ռուսաց լինի, իսկ 2 փոքրը հայոց։ Խնդրեմ այս մասին համաձայնէք», Առաջնորդն այս-

---

22 Իվան Դաւթի Լազարև (1820, Շուշի – 1879, Թիֆլիս) – ռուսական բանակի հայազգի զինուորական գործիչ, գեներալ-լէյտենանտ: Աւարտել է Շուշիի գաւառական ուսումնարանը:

23 Հաւանաբար խօսքը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս, յետագայում՝ գեներալ-մայոր, Իվան Եակովի Շելկովնիկովի (Շելկովնիկեանի) մասին է:

քան պատասխանում է Փոխարքային. «Թէ առաջին և թէ այս վերջին պատերազմի ժամանակ հայերն ամենայն կերպով մեծ ծառայութիւն արին Տէրութեան և մինչև իսկ իւրեանց հոգին չխնայեցին ռուսաց բարեխնամ կառավարութեան համար, ուստի և սպասում են Նորին Կայսերական Մեծութեան շնորհացը և ողորմութեանը, եթէ Ձերդ Մեծութիւնը այդպէս է կամենում, այդ Ձեր կամքն է, մանաւանդ որ այդ մասին համաձայնելու իրաւունքը միայն Վեհափառ Կաթուղիկոսին կամքից է կախուած»:

Առաջնորդի այս խօսքերի վերայից Ն. Կ. Բ. Փոխարքայն թուչում է դէպի ուրիշ առարկայի վերայ, և յայտնում է, որ Ալաշկերտցի գաղթականները իրան խնդրագիր ներկայացնելով խնդրում են հրաման Ղարսի սահմանում բնակելու, բայց ինքը չէ հրամայում, այլ միայն նոցա խնայելով ձմեռս ընդունում է և պահպանում, իսկ գարունքը նոցա առաջարկում է վերադառնալ իրանց հայրենիքը, որոյ մասին և տաճկական կառավարութեան հետ ունենալու է գրագրութիւն, իւր ցանկութիւնն է, որ գաղթականները վերադառնան, իսկ եթէ նոքա վերադառնալու չեն, նոցա ուղարկում է այլ տեղեր, գուցէ Երևանի կուպերնիայի նահանգի մէջ: Այս խօսքերից յետոյ Նորին Կայսերական Բարձրութիւն այս խօսքերն ևս ասում է Առաջնորդին. «Ինչպէս ասել եմ այժմս ևս կասեմ և կյիշեցնեմ, Նորին Կայսերական Մեծութիւնը Հայոց ազգին իւր յատուկ շնորհացը արժանացնելու է»:

Այս խօսքերից յետոյ Փոխարքայն նստելով կառքը մեկնեցաւ Ղարս քաղաքէն:

Ղարսի Առաջնորդ Գրիգորիս վարդապետը ևս, ինչպէս վկայում են ժողովրդականք և նորա գործքերը և ինչպէս երևում է, մի գործունեայ և եկեղեցւոյ օգտին հաւատարիմ ծառայող մի արժանավայել վարդապետ է, և կարող մեծ օգուտներ տալ Սուրբ Աթոռին էջմիածնի՝ ստանալով Նորին Վեհափառութեան հովանաւորութիւնը և Ձերդ Գերապատուութեան հրահանգները համաձայն փոփոխութեան հանգամանքների:

Ես այս տեղեկութիւններին տեղեակ եմ կուպերնատորի մօտ լինելովս ծառայական գործերով:

Յոյս ունեմ որ Ղարս քաղաքում մնալովս կարողանամ և հարկաւոր լինեմ որ և իցէ կերպով ծառայել Հայրութեանդ և Ազգօգուտ «Արարատ»-ին:

Ձերդ Բարձր Սրբազնութեան անձնանուէր խոնարհ ծառայ՝
Կարապետ Տէր-Սարգսեան Մարգարեանց
(Ախալքալաքէն «Արարատ»-ին թղթակցող)

Իմ հասցէն. В г. Карс
В Областное Управления Карапету Тер Саркисяну Маркарянцу
25 հոկտեմբերի 1878 ամի

Ի ք. Ղարս
Օպլաստնօյ ուպրավլենիում

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թթ. 16-18 շրջ., ինքնագիր:

№ - 9
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԿԱՐՍ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԻ, Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԵԻ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 103 *29 հոկտեմբերի 1878 թ.*
Կարս

Աստուածարեալ Օծութեանդ Սրբագործ Աջոյն մատչեմք ի համբոյր որդիական խոնարհութեամբ

Վեհափառ Տէ՛ր.

Շատոնց ի վեր կը փափագէի Ձեր Վեհափառութեան ոտքը դիմելով մեր որդիական համբոյր մատուցանել Սուրբ Աջոյդ, մանաւանդ Ձեր տօնախմբութեան օրը, բայց զանազան պատճառներ միշտ արգելք եղան մեզ, որոց առաջինն էր Բարձր. Փոխարքայի այս կողմերը այցելութեան գալը, որուն սպասելու պատրաստուած էինք, ըստ որում անցեալ տարի նոյեմբեր 25-ին, երբ մեր Ազգ. վարժարանին և եկեղեցւոյն այցելութիւն արաւ Կարուց Աշոտեան Աբաս Թագաւորի շինած Մայր եկեղեցւոյ նկատմամբ հարցուց թէ ինչ է այն գմբեթաւոր շէնք զոր կը տեսնեմ քաղաքիս մէջ, պատասխանեցինք թէ՝ դա ի հնումն Հայոց Մայր եկեղեցի էր, զոր տաճկաց կառավարութիւն քաղաքս տիրապետելէն ի վեր համբարի դարձուցած է մինչև ցարդ, որուն պատասխանեց. «Կը հրամայեմ որ վերստին եկեղեցի լինի: Այնուհետև, նորա մեկնելէն յետոյ մեք այս մասին տեղական Նահանգապետին գրով խնդրեցինք որ ըստ հրամանի Բարձր. Փոխարքային Հայոց տրուի, ծանուցանելով նաև ուրիշ երեք եկեղեցեաց համար ալ զորս տաճիկք մզկիթի դարձուցած են: Բայց նա մեզ բերանացի պատասխանելով ասաց. «Քանի Փոխարքայն հրամայած է զայն Հայոց տալու, ոչ ոք դիմադիր լինելու կարող չէ, բայց դեռ կսպասենք թէ քաղաքս ո՞ւմ պիտի մնայ: Ուստի մեք ևս սպասեցինք մինչև Փոխարքայի երկրորդ գալստեան, և նոյն եկեղեցւոյ համար խնդիր պատրաստեցինք ներկայացնելու, բայց նա իր գալստեան երկրորդ առաւօտը քանի մը բարձրաստիճան պաշտօնակալաց հետ նոյն եկեղեցին գալով՝ հրամայեց որ իր անունով ռուսաց եկեղեցի լինի: Վասն որոյ նոյն պաշտօնակալք և մանաւանդ տեղւոյս Նահանգապետ, որ կրօնքով կաթոլիկ է, չյաջողցուցին ինձ նմա ներկայանալու, գիտելով, որ ես եկեղեցւոյ մասին խնդիր պիտի մատուցանէի: Յետոյ մինչև որ Փոխարքայն

գնաց և վերադարձաւ, ես ժողովրդեան կողմանէ խնդիր պատրաստել և ներկայացնել տուի, նա ալ իւր մեկնելու վերջին պահուն զիս կանչելով յայտնեց թէ՝ ես հրամայած եմ որ այն մեծ եկեղեցին ռուսաց լինի, իսկ միւս փոքր եկեղեցիք հայոց տրուին, և կը խնդրեմ որ համաձայնիք: Առ այս մեք պատասխանեցինք, թէ՝ հայեր անցեալ և ներկայ պատերազմին մէջ իրենց կեանք խնայած չեն ռուսաց ամենողորմած Տէրութեան. բայց եթէ Դուք այդպէս կը հրամայէք Ձեր Բարձր կամք գիտէ, որովհետև մեր ձեռնհասութենէն վեր է ..., փոքր-ինչ լռելէ զկնի խօսքը Ալաշկերտւոց գաղթականութեան վերայ դարձուց և անմիջապէս մեկնեցաւ քաղաքէս:

Երկրորդ՝ պատերազմի ժամանակ Շիրակայ հայոց 14 աւերեալ գեղերու և եկեղեցեաց շինութեան համար փայտ խնդրած էի կառավարութենէն և նորա գործադրութեամբ կը զբաղէինք մինչև ցարդ, որ Աստուծով յաջողեցաւ:

Երրորդ՝ այժմ ևս մտադիր եմք յատուկ դիտաւորութեամբ գիւղեր գնալով յորդորել գիւղացւոց որ եկեղեցեաց, հետևապէս և վարժարանաց համար հողեր նուիրեն, քանի որ ռուսաց կառավարութիւնն զանոնք չափի տակ ձգած չէ:

Ահա այս և ասոնց նման շատ մը խնդիրներու համար չկարողացանք ցարդ մեր պարտք կատարելու համար Ձերդ Սրբազնութեան գալ: Անտարակոյս եմք Ձեր Վեհափառութեան վեհ ոգւոյն վրայ, որ վերոյիշեալ պատճառներ ի նկատի առնելով անմեղադիր կը լինեք մեզ, և Ձեր Հայրական խնամք մեր վրայէն պակաս չէք աներ:

Ձերդ Հայրապետական օրհնութեան միշտ կարօտ

Խոնարհ ծառայ Առաջնորդ Կարուց՝ Գրիգորիս վարդապետ Աղուանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 30, թթ. 15 և շրջ., 19, ինքնագիր:

№ - 10

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԾՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 16 *2 փետրուարի 1879 թ.*

Կարս

Աստուածարեալ Օծելութեանդ սրբագործ Աջոյն մնամ ի համբոյր ոդիական խոնարհութեամբ

Վեհափառ Տէ՛ր.

Կարսայ Մայր եկեղեցին զոր ռուսներ գրաւեցին, և որոյ վերանորոգութիւն հրամայուած էր յետաձգել, բայց այս տարի Ս. Ծննդեան տօնէն յառաջ օծելով սկսեցին ժամերգութիւն կատարել առանց վե-

բանորոգելու։ Այս եկեղեցւոյ փոխարէն տեղւոյս կառավարութենէն մեզ առաջարկուեցաւ Ճամիի[24] դարձուցած երկու փոքրիկ եկեղեցիներէն մէկն առնել։ Բայց մեք լսած ըլլալով որ Ձերդ Վեհափառութիւն Մայր եկեղեցւոյ մասին թղթակցութիւն բացած էք Բարձր. Փոխարքային հետ, յետաձգեցինք նոյն եկեղեցին ընդունել, մնալով սպասու Ձերդ Բարձր հրամանին և պէտք եղած հրահանգին[25]։

Ամենախոնարհ ծառայ Ձերդ Վեհափառութեան
Առաջնորդ Կարուց, Գրիգորիս Վ. Աղուանեան

Մակագրութիւն. *Յանձնեմք ի Սինոդն։*
Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2892, թ. 4, ինքնագիր:

№ - 11
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՀՐԱՀԱՆԳԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻՆ

14 մարտի 1879 թ.
Ս. Էջմիածին

Հրահանգ տուեալ ի Սինոդէ Սրբոյ էջմիածնի հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Առաջնորդին Հայոց Կարուց և բոլոր նահանգաց նորին

Ա. Գրիգորիս վարդապետ Աղուանեան նշանակի Առաջնորդ Կարուց և բոլոր նահանգացն նորոգ գրաւելոց ի Ռուսաց պետութենէ, հրամանաւ Նորին Վեհափառութեան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց մինչև ցնոր տնօրէնութիւն։

Բ. Առաջնորդն պատասխանատու է առաջի Նորին Վեհափառութեան, վասն բարւոք կառավարութեան եկեղեցեացն և ուսումնարանաց և վանորէից։

Գ. Առաջնորդն հետամուտ լինի բանալ ուսումնարան ի շէն և յարդիւնաւոր վանորայս, ի քաղաքս, յաւանս և ի բազմամարդ գիւղորայս։

Դ. Հետամուտ լիցի դնել վանահարս կամ փոխանորդս ի մի մի անբնակ վանորայս որոց դիւրագոյն լինի շինութիւնն և հսկէ ինքնին անկորուստ պահպանել զկալուածս նոցին։

---

[24] Ճամի, ջամի – մզկիթ, մահմեդական աղօթատուն:

[25] 1879 թ. յունիսի 25-ին Սինոդը, լսելով Գրիգորիս եպիսկոպոսի գրութիւնը, որոշեց. «Առ ներկայ յայտարարագիր Առաջնորդին Կարուց, տալ գիտել զի Նորին Գերապատուութիւն պարտ էր ունել զփոյթ գրաւել գյիշեալ եկեղեցին ի սկզբան անդ տիրապետութեան, իսկ զարդիս համարելն բնաւ տարադէպ իմն առնել ըստ այնմ զոր և իցէ առաջարկութիւնս, չքաղաքականացնել միանգամայն զՆորին Սրբազնութեան ի սոյնպիսի կարևորագոյն խնդիրն և լինել արի և աչալուրջ, զի մի իրաւունք եկեղեցւոյն անցցեն ի կորուստ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ.2892, թ. 6 և շրջ.):

Ե. Առաջնորդն շրջեալ ի վիճակին ի վանորայս, պարտի զննել և ի կարգի դնել զհաշիւս նոցա, որչափ ինչ կարասցի ի ձեռս բերել յանցելոց ամացն։

Զ. Առաջնորդն ուրոյն ուրոյն ամենայն վանահարցն տայ հրահանգս հաշուապահութեան իւրաքանչիւր վանորէիցն, ճշտութեամբ արձանագրուցանել յիւրաքանչիւր ի ժապաւինեալ տոմարս (տուեալս ի Սինոդէ) զկահս և զկարասիս վանուցն, զզարդս և զանօթս եկեղեցեացն, և զամենատեսակ արդիւնս ամ ըստ ամէ։

Է. Առաջնորդն ի վիճակին նշանակեսցէ կեդրոնատեղիք, յորս և առանձինն կարգեսցէ գործակատար և գանձապետ, առ ի ճշտութեամբ ստանալ ի ձեռն նոցա զամենայն վիճակային արդիւնս, զհարկս պսակացն, զհոգեբաժինս, զպտղին, զիւղն, զպանիրն և զայլ հոգևոր տուրս։

Ը. Առաջնորդն պարտի յամենայն ի չորս ամիսս միանգամ առնուլ զհաշիւս իւրաքանչիւր կեդրոնատեղեացն գործակատարաց և գանձապետաց, առ անցուցանելոյ ի ժապաւինեալ տոմարս տուեալս նմա ի Սինոդէն Սրբոյ Էջմիածնի։

Թ. Առաջնորդն ըստ վաղեմի սովորութեան նշանակեսցի և իւրաքանչիւր եկեղեցեացն զթաղական խորհուրդս և հսկեսցէ գործունէութեանց նոցին, առ ի բարեզարդութիւն եկեղեցեացն և ի յառաջադիմութիւն դպրոցացն, տացի տոմարս արդեանց և ծախուց դրոշմեալ իւրով կնքով, յորս արձանագրեսցին անպակաս զկահ և զկարասիս, զզարդս և զանօթս եկեղեցեացն և զկալուածս նոցին։ Նոյնպէս և առանձին տոմարս տացէ առ ի գրելոյ նմա զարդիւնս և զծախս դպրոցաց, և զամենայն պարագայս և զկալուածս նոցին։

Ժ. Առաջնորդն տացի ամենայն եկեղեցեացն Ջափաբերական մատեանս, դրոշմեալս կնքով իւրով, առ ի կարգաւ արձանագրել ի նոսին, զնորածինս, զմկրտեալս, զպսակեալս և զննջեցեալս ըստ թուոյ աւուրցն և ամաց։

Ժա. Առաջնորդն հետամուտ լիցի կարգել ընկերութիւն մի ի հինգ կամ ի վեց անդամոց յԱղէքսանդրապօլէ և ի շրջակայիցն Անւոյ, որ ընդ վանահօրն գործեսցին ամենայն աչալրջութեամբ ի շինութիւն Մայր եկեղեցւոյն Անւոյ, առ ի հաստատել ի նմա վանական միաբանութիւն, և յայսմ գործառնութեան խորհրդակցեսցի ընկերութիւնն միշտ ընդ Առաջնորդին կարուց։

Ժբ. Առաջնորդն ստացեալ ի Սինոդէ Սրբոյ Էջմիածնի զժապաւինեալ տոմարս ընդ թուոյ վանորէից ստորագրելոց ինքեան և կեդրոնատեղեաց, նոյնպէս զտոմարս, զկանոնս նշանագրութեան և զտպեալ անդորրագիրս (կոճանս) պսակաց բաժանեսցէ ըստ պատշաճին, և հսկեսցէ վասն վարելոյ ճշտութեամբ և օրինաւոր կարգաւ ըստ տուեալ հրահանգաց։

ԺԳ. Առաջնորդն ստանայցէ ի Սինոդէ ամ յամէ զերկու ժապաւինեալ մատեան յաղագս գրելոյ ի միում զմուտս և զծախս վիճակին, իսկ ի միում զամենատեսակ նուէրս, այն է՝ զպտղին, զիւղս, զպանիրս, և ի վերջ տարւոյն առաջի արացէ ի բարեհայեցողութիւն Նորին Վեհափառութեան։

ԺԴ. Վանահարք վանորէից Հոռոմոսի, Խծկունից, Թաթևոյ և Վարոսի (Վարդեր) և այլոց պատասխանատու են Առաջնորդին կարուց, յամենայն գործառնութիւնս վանական կառավարութեան, որպէս և Առաջնորդն պատասխանատու է Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։

ԺԵ.Վանահարք և միաբանք վանորէից պարտին զարդիւնս ապրուստի իւրեանց հայթայթել երկրագործութեամբ ի կալուածս վանորէից, մատաղօք և նուիրօք ուխտաւորաց, առանց ձեռնամուխ լինելոյ ի վիճակային հասոյթս, այն է՝ ի պտղիս, յիւղս, ի պանիրս, ի հոգեբաժինս և ի պսակահարկս։

ԺԶ. Վանական միաբանութիւն առանց վանահօր և վանահարք առանց հրամանի Առաջնորդին մի իշխեսցին բացակայել ի վանուց ի քաղաքս, և ի գիւղորայս վիճակին, իսկ ի հեռանալ իւրեանց յայլ վիճակս և ի թեմս միջնորդութեամբ Առաջնորդի իւրեանց խնդրեսցին զլուծումն Սինոդի։

ԺԷ. Մի իշխեսցի ոք յեկեղեցականաց, թէ ի վանահարց, թէ ի միաբան վարդապետաց և թէ ի քահանայից և առնել զժողովարարութիւն ի վիճակին կարուց առանց հրամանի Առաջնորդին, և թէ յայլ վիճակս առանց լուծման Սինոդի։

ԺԸ. Զանսաստութիւն վանահարց և քահանայից վիճակին օրէնք են Առաջնորդին յուղղութիւն ածել, իսկ զանուղղայից և զըմբոստացեացն ծանուցանել Նորին Վեհափառութեան։

ԺԹ. Վանահարք իւրաքանչիւր վանաց պարտին արձանագրել ի ժապաւինեալ տոմարս՝ ստացեալս ի Սինոդէն ի ձեռն Առաջնորդին կարուց զամենայն եկամուտս վանուց և ծախս նոցին, զարդս և զանօթեղէնս, զկահս և զկարասիս, զանասնեղէնս, զպարագայս երկրագործութեան և զամենայն անշարժ կալուածս և յիւրաքանչիւր չորս ամիսս տարւոյն մատուցանել ի նկատողութիւն Առաջնորդին։

Ի. Ամենատեսակ կալուածագիրք ազգային հաստատութեանց պահպանեսցին Առաջնորդական կնքով յերկաթեայ արկղ ի պահարանի աւագ եկեղեցւոյն կարուց, արձանագրելով զայնոսիկ ի յատուկ տոմարի, և պատճէնի նոցա առաքեսցեն ի Սինոդ։

Առաքմամբ սոյն իսկ հրահանգի տուեցելոյ հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Առաջնորդին Հայոց կարուց և նահանգաց Նորին Բարեշնորհ Գրիգորիս վարդապետի Աղուանեանց պատուիրի վարել համաձայն այնց կանոնաց, թոյլատրելոց ի հրահանգի

աստ, որոյ վասն և Սինոդս Սրբոյ էջմիածնի ստորագրութեամբ անդամոց և դրոշմամբ արքունի կնքոյ վաւերացուցանէ ի 14 մարտի 1879 ամի ի Սուրբ էջմիածնի։

Անդամ Սինոդի՝ Գրիգոր վարդապետ (կնիք)
Համարակալ՝ Կ. Ջանիբէկեան

Ողիղ է ընդ իսկականին.
Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թթ. 181-182 շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 12

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏՕՆԱԳԻՐԸ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՐԱԿՈՒՆՈՒՑ ԵՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 56 *17 ապրիլի 1879 թ.*
Կարս

Սրբագումար Սինոդին Սրբոյ էջմիածնի

Ըստ ԺԱ.-րդ յօդուածի հրահանգի Սուրբ Սինոդիդ տուեցելոյ մեզ ի 1879 մարտ ամսոյ[26], զխնդիր վերանորոգութեան Մայր եկեղեցւոյն Անւոյ առաջի արարի Ազգ. Ժողովոյն Կարուց, որ որոշեաց ի ձեռն բերել զառաջին զԱրտօնագիր նորոգութեան նորին եկեղեցւոյ՝ տուեալ ի Պօպկօ Գեներալէ Ռուսաց, նախկին Գուպերնաթօրի Կարուց, Արժ. Ստեփան վարդապետին Շիրակունւոյ, և ըստ այնմ խորհել և գործել։ Ըստ այսմ որոշման 1879 ապրիլ 8 ամսաթիւ և 34 թուահամար նամակաւ ծանուցի Նորին Արժանապատուութեան Ստեփան վարդապետին Շիրակունւոյ փութալ առաքել զայն Արտօնագիր, այլ տեսանելով զի յապաղեցաւ պատասխան նամակին, երկրորդեցի ծանուցումն դարձեալ նոյն տարւոյ ապրիլ 23 ամսաթիւ և 52 թուահամար նամակաւ, որոյ ևս առանց պատասխանելոյ և առաքելոյ զԱրտօնագիրն, այժմ լսեմք զի մեկնեալ ի վանուցն դիմեալ է այդր ի Սուրբ էջմիածին։ Որոյ աղագաւ և գործ եկեղեցւոյն Անւոյ ցարդ մնայ անգործադրելի։ Ուստի խնդրեմք զի շնորհ արասջիք ստանալ ի նմանէ զԱրտօնագիրն և վաղ ընդ փոյթ առաքել առ մեզ, որով կարող լինիցեմք յառաջ վարել զպարտս զոր եդեալ է Սուրբ Սինոդդ ի վերայ մեր։

Խ. Առաջնորդ Կարուց՝ Գրիգորիս վ. Աղուանեան

Մակագրութիւն. *Ստեփաննոս վարդապետն ներկայանալով յԱտեան Սինոդիս ընկալեալ է զպատասխանի և այժմ վերադարձեալ,*

[26] Տես նախորդ փաստաթուղթը:

վասն որոյ զգրութիւն Գրիգորիս վարդապետի թողուլ առանց հետևանաց։

Անդամ Սինոդի՝ Մեսրովբ եպիսկոպոս[27]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2892, թ. 7, ինքնագիր:

№ - 13
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻՆ՝ ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԱՐՏՕՆԱԳԻՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1725 *7 յունիսի 1879 թ.*
Ս. Էջմիածին

Առաջնորդին Կարուց Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց

Տնտեսական մասնս Սինոդի Սրբոյ Էջմիածնի ընդ պատուարժան Տիարց Անդամոց յանձն առնէ Գերապատուութեան Ձերում, զարտօնագիրն վերանորոգութեան Մայր եկեղեցւոյն Անւոյ տուելն ի նախկին նահանգապետէ Կարուց Պօպկօ Գեներալէ Ստեփաննոս վարդապետին Շիրակունւոյ, առնել՝ ի նմանէ և փութով առաջարկել Սինոդիս վասն պատշաճականն տնօրէնութիւն։

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2892, թ. 5, թողօն, ձեռագիր:

№ - 14
ԿԱՐՍԻ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 սեպտեմբերի 1879 թ.
Կարս

Նորին Օծելութեան Ծ. Պատրիարքի և Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց յԱզգային ժողովոյ Կարուց Յայտարարութիւն

Ի 23-երորդի ներկայ ամսոյս ընդունելով զհեռագիր Աստուածապահ Վեհափառութեան Ձերում, որ յաղագս բացման երկսեռ դպրոցաց մերոց, առաքեցաք զայն ընդ փոյթ առ Սրբազան Առաջնորդն մեր, որ գտանէր ի նմին աւուր ի Խօշավանք, խնդրելով ի նմանէ փու-

[27] Տես թիւ 5 ծանօթագրութիւնը:

թալ գալ ի քաղաք ի կատարել զհրաման Վեհափառութեան Ձերոյ: Սակայն նորա ի Ս. էջմիածին ուղևորելոյն աղագաւ, ոչ կարաց գալ ի քաղաք, այլ գրեաց փոխանորդին իւրոյ անմիջապէս բանալ զուսումնարանս ըստ հրամանի Ձերում Վեհափառութեան, Փոխանորդ Սրբազան Առաջնորդին ի 25-րդի ամսոյ զուսումնարանս, և անմիջապէս ժողովեցան ամենայն ուսանող մանկունք: Բայց զկնի քառորդ ժամու Քաղաքապետն ոստիկանս առաքելով հրամայեաց փակել զնոսա վերստին, առարկելով թէ՝ մինչդեռ Նահանգապետն[28] հրամայել է ինձ փակել, ուստի մինչև ոչ լիցի հրաման նորա, ոչ թոյլատրիմ Ձեզ բանալ զուսումնարանս: Ի վերայ այսորիկ մեք արժան համարեցաք հաղորդել Փոխանորդի Նահանգապետին (զի Նահանգապետն յայնմ աւուր յԱրտահան գտանէր առ Նորին Բարձրութիւն Կովկասեան Փոխարքայն) զհեռագիր Վեհափառութեան Ձերոյ: Այլ յերեկոյն ի նոյն աւուր վերադառնալով Նահանգապետն, անմիջապէս յանդիման լինի նմա Քաղաքապետն (պօլիցիմեյստր) և ամբաստանէ զհայս ասելով թէ՝ երբէք ոչ հնազանդեն ինձ Հայք, առանց հրամանի բացին զուսումնարանս և ընդդիմութիւնս արարին ոստիկանաց իմոյ և այլն: Յորոյ վերայ զայրացեալ յոյժ Նահանգապետին, հարցանի փոխանորդին իւրոյ թէ՝ ունի՞ք ինչ տեղեկութիւն զբացման ի ուսումնարանաց հայոց, նա ևս յայտ առնի նմա զհաղորդագրութիւն մեր և հեռագիր Վեհափառութեան Ձերոյ: Ուստի Նահանգապետն կոչելով ի նմին ժամու զՓոխանորդ Առաջնորդին մերոյ, պատուիրէ և սպառնայ նմա չբանալ այլևս զուսումնարանս, ասելով թէ՝ իմ յաղագս այդորիկ խօսեալ է ընդ Նորին Բարձրութեան Կովկասեան Փոխարքային, որ հրամայեալ է ինձ չբանալ զուսումնարանս, մինչև ի ստանալ ի նմանէ հրահանգս: Փոխանորդ Առաջնորդն առաջի առնէ նմա զհեռագիր Վեհափառութեան Ձերոյ, որում Նահանգապետն պատասխանի թէ՝ ես զկառավարութիւնն մի ճանաչեմ, և պատուիրեմ Ձեզ չբանալ զուսումնարանս, ապա թէ ոչ. «ֆանա օլուր» երիցս կրկնելով: Ուստի և Փոխանորդ Առաջնորդին խնդրի ի նմանէ գրաւոր առաքել զհրաման իւր, և Նահանգապետն խոստանայ:

Ի 27-րդի ամսոյս ընկալաք զխոստացեալ գրաւոր հրաման Նահանգապետին որոյ իմաստն է.

«Ես անձամբ իմացուցած եմ Նորին Կայսերական Մեծութեան (Փոխարքային) կարսի Հայոց դպրոցաց փակման համար, և Արքայազն Մեծ իշխան հրամայած է ասել թէ այդ խնդրի վերաբերութեամբ ինծի հրահանգներ կը խրկուին: Ուստի մինչև այդ հրահանգներ չստանալը,

[28] Խօսքը գեներալ-լէյտենանտ Վիկտոր Անտոնի Ֆրանկինիի մասին է: Նա Կարսի մարզի կառավարչապետ է նշանակուել 1878 թ. յունիսի 8-ին: Նոյն թուականի հոկտեմբերի 27-ից յիշեալ պաշտօնը կոչուել է ‹‹Զինուորական Նահանգապետ››. Ֆրանկինին Կարսի զինուորական նահանգապետի պաշտօնը վարել է մինչև 1881 թ. ապրիլի 1-ը:

ինծի իրաւունք չեմ համարեր թոյլ տալ կարսի հայ ուսումնարանաց բացումը։ Գեներալ լէյտենանտ Ֆրանգին»։

Ուստի ի վերոյ այսորիկ մեք արժան համարեցաք յարգել զհրամանն նորա, և փակել վերստին զուսումնարանս՝ երկնչելով յապագայ վտանգաց, և պատրաստեցաք ապա ի նմին աւուր անմիջապէս հեռագիր մի առաքել առ Վեհափառութիւն Ձեր, զոր յուսամք թէ ցայժմ ընկալեալ էք։

Ի սմին աւուր այցելեաց յԱռաջնորդարան մեր «Նահանգական Վերատեսուչ Կովկասեան Ուսումնական Խորհրդոյն Մարզալեվսկի» անուն անձն, և մանրամասն քննութիւնս արար վասն արգելման ուսումնարանաց, մեք ևս զամենայն ինչ հանգամանօրէն պատմեցաք նմա։ Ի վերայ այսր ամենայնի յուսամք թէ ազգասէր Վեհափառութիւն Ձեր խնամս կալցի ըստ ամենայն ի բարւոք կարգադրութիւն ուսումնարանաց մերոց։

Առ որ մնամք միշտ երախտապարտ անդամք Ազգ. Քաղաքական Ժողովոյ Կարսոյ

Մահտեսի Յարութիւն Մխիթարեան
Մելքոն Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7194, թ. 24 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 15
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԱՐՕՏԱՏԵՂԻՆ ՀԱՃԻՊԱՊ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 5 *25 ապրիլի 1881 թ.*
Հոռոմոսի վանք

Ի Լուսաւորչական Սինոդն Հայոց Սրբոյ Էջմիածնի
Ի Գործակատար Շիրակայ գիւղօրէիցն Կարուց Ստեփաննոս
վարդապետէ Շիրակունւոյ և ի գործակցէ նորին յԱղէքսանդր բահանայէ
Ամատունւոյ[29]
Ամենախոնարհաբար յայտարարութիւն

Պատիւ համարեալ ամենախոնարհաբար մատուցանել զտեղեկութիւնս Լուսաւորչական Սրբազան Սինոդիդ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, թէ ի պատկանեալ հողոց վանուցն Հոռոմոսի գտանեցեալն ի վաղուց հետէ մշակմանց ցարդեան ժամանակի միայն ի պիտանաւորութիւն արօտատեղւոյ հարիւր օրավար[30] տեղին ցանկայ Աղէքսանդ-

[29] Ալեքսանդր քահանայ Աղաբաբի Ամատունի – ծնուել է 1838 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1862 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 348 շրջ.):

[30] Օրավար – հողի՝ մանաւանդ վարելահողի չափ (որքան մի գութանը կարող է վարել մի օրում):

րապօլաբնակ Պարոն Հաճիպապն Մինասեան առնել ընդ կապալաւ յատուկ պատասխանատուութեամբ իւրոյ, այսու դաշնագրութեամբ. 1. Պայմանագիրն լինիցի չորեսին ամօք, 2-րդ. կանխիկ և միանուագ վճարեսցէ զչորս հարիւր րուբլիս վանուցն Հոռոմոսի առաջին վարձս վասն չորեսին ամաց ժամանակամիջոցի.3-րդ. առաջի ոմն պարտաւոր է խնամեալ մշակել զայն հարիւր օրավար անմշակ տեղին գութանավարիւ առանց թողլոյ ի բացեայ զմասնաւոր կամ կանգունաչափ տեղւոյ իմեք. 4-րդ. յերկրորդ ամէ սկսեալ ցլրանալ նոյն չորեսին ամաց, վճարելոց է նոյնպէս վանուցն շարունակ յաղագս մէն մի տարւոյ յինքենէ մշակեցեալ 100 օրավար վանքապատկան հողոյ և ի սերմանեցեալ յիւրոյ սեփականութեան ցորենոյ կամ գարւոյ արդիւնաբերութեանց անտի զտասանորդս: Առ այս ճանաչելով մեր զպարոն Հաճիպապն Մինասեան աւելի քան զայլս ցանկացողս յուսալի հաւատարմութեամբ, կարողութեամբ և օգտաւէտութեամբ, առեալ ի նմանէ և զգրաւականս հարիւր րուբլիս ժամանակամիջոցաւ ներկայ տարւոյ մինչ ց 10-ն մայիսի, առ ի չպատճառել զբացառութիւն ինչ ի կողմանէ ցանկացողին և մեր, յարակցեմք և զայս թէ գոյ վանուցս աւելորդ խարխալեալ գոմ և նոյնպէս սենեակ բնակութեան պարտէ յիշեալ կապալառուն ի սեփականութենէ իւրմէ զամենայն պակասորդսն շինել և կարկատել առանց ծանութեան գալոյ և ծախսելոյ վանուցս, վասն բնակեցուցանելոյ զանասունս և զմշակսն իւր:

Զայսմանէ ամենախոնարհաբար յայտ առնելով Սրբազան Սինոդիդ խնդրեմք ի գիտութիւն և ի տնօրէնութիւն:

Ստեփաննոս վարդապետ Շիրակունի
Աղէքսանդր քահանայ Ամատունի

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 8, բնագիր, ձեռագիր:

№ - 16

ԿԱՐՍԻ ԵՒ ԲԱԹՈՒՄ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՔԱՀԱՆԱՅ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՆԵՐ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 66 *18 յունիսի 1880 թ.*
Կարս

Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն Գէորգ Դ. Կաթուղիկոսի և Ծայրագոյն Պատրիարքի Ամենայն Հայոց
յԱռաջնորդէ Կարուց և Պաթումայ նահանգոց Գրիգորիս եպիսկոպոսէ
Խոնարհաբար յայտարարութիւն

Ի չորից ամաց հետէ, գտանին ի վիճակիս գիւղորայք, առ աւել քան զտասն, որք չունելով սեպհական քահանայս, յաճախ ստիպեն

զմեզ քահանայ ձեռնադրել տալ նոցա: Այլ մեք վասն ինչ ինչ հանգամանաց, և առաւելապէս վասն ամենաթշուառ դրութեան քահանայից վիճակիս, յորոց ¼ մասն զատորագրութիւնս անուանց իւրեանց գրել անգամ չգիտեն. ոչ յանձնառու լեալ եմք կատարել զպահանջմանս նոցա, և ցարդ յանձնեալ եմք զայնոսիկ մերձակայ գիւղորէից քահանայից հովուել, մինչև ի գտանել զյարմարաւոր քահանայացուս: Այժմ երեքիս չափ գիւղորայք, յորս սմին անհրաժեշտ է ունենալ քահանայս, գտեալ են մէն մի ընծայացուս, ըստ բաւականին յարմարաւոր քահանայութեան, և են Մարտիրոս Կիրակոսեան Տիւզքեանդցի, Շմաւոն Տէր-Մարուքեանց Աղքիլիսեցի և Մկրտիչ Մարտիրոսեան Դահարլեցի, որք գիտեն ձայնական երաժշտութիւն, քերականութիւն Հայոց լեզուի, բաւական ուղղագրութիւն և շարադրութիւնս, որոց բարոյական ընթացք և քաղաքավարութիւնն ևս վկայեալ է յիւրաքանչիւր բնիկ ժողովրդոյ իւրեանց, սոքա յարմարաւոր են նաև յիւրաքանչիւր գիւղորայս վարժապետ ևս լինել և յոյժ օգտակար է, եթէ շնորհիւ Ձերումդ Վեհափառութեան գտանիցեմք այլ ևս սոյնպիսի յարմարաւոր անձինս, ի ձեռն որոց յոյժ դիւրին լինի մեզ վարժարանս բանալ յիւրաքանչիւր գիւղորայս, որպէս յաջողեցաք յանցելում ամի, բանալով տասնիւ չափ դպրոցս:

Ուստի այժմ հաճութեամբ կրօնական ժողովոյ տեղւոյս, մտադրեալ եմք յերեսին կարևորագոյն գիւղորայսն քահանայ ձեռնադրել, թողլով զայլսն առ այժմ, մինչև ի գտանել նոյնպէս սոյնպիսի արժանաւորս. և վասն այսոցիկ պարտ անձին համարեցաք նախապէս առաջարկել Վեհափառ Հայրապետութեան Ձերում, յաղագս ընդունելոյ զբարեհաճ հաւանութիւն Սուրբ Տեառնդ:

Գրիգորիս եպիսկոպոս Կարս և Պաթում նահանգաց

Մակագրութիւն. *Յանձնեմք Սինոդիդ պատուիրել Կառավարչի վիճակին Կարուց և Բաթումայ, որպէս զի նախ՝ պատրաստեսցէ զքահանայացուս արժանաւորս և ի տեղական բնակչաց և ապա յայտնեսցէ խնդրելով զհրաման ձեռնադրութեան՝ կցեալ ընդ նմին և զխնդրագիր ժողովրդեանն ընդ ուխտագրի քահանայացուաց:*

Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7194, թ. 26, բնագիր, ձեռագիր:

№ - 17
ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿՈՒԵԼՈՒ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՅՈՅՆԵՐԻ ԵՒ ՄՈԼՈԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԻՐԱՑՈՒԵԼՈՒ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Թիւ 72 *28 յունիսի 1880 թ.*

Կարս

Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ Դ.-ի և Ասպետի յԱռաջնորդէ վիճակին Կարուց

Յայտարարութիւն

Ի բարեխնամ կառավարութենէն Ռուսաց բացարձակ արտօնութիւն տուեալ է ի Ռուսաստանի բնակեալ Յունաց և Մալականաց գաղթել ի վիճակն Կարուց, և վերաբնակել անդանօր։ Այլ սակայն ցարդ Ռուսիաբնակ հայկական ազգիս ուրուք ոչ երբէք, որպէս ցանկան բազումք ի գիւղորէից Աղէքսանդրապօլի և Ախալքալաքայ։

Հետևեալ վանորայք և եկեղեցիք. Մրեն աւերակ քաղաքի վանք, Ալէմ գիւղի եկեղեցին, Գօզլուճա գիւղի վանք, Անին և Ալաճայի վանք։ Թէպէտ յետ ռուս-տաճկական պատերազմին, մերով խնդրանօք, շնորհիւ Նորին Գերազանցութեան լազարև Գեներալին հանեալ ի քրդաց մաքրեցան և յանձնեցան մեզ, սոսկ բանիւ հրամանաց, առանց գրաւոր արտօնութեան, սակայն նոքա ևս կան իսպառ ամայի, զի ի շրջակայ նոցին բնակեալ տաճիկք գաղթեալ լինելով, ոչ թոյլատրի գէթ յայնոսիկ գիւղորայս բնակել քանի մի գերդաստան Հայոց, առ ի պահպանել զայնոսիկ վանորայս։

Են նաև ոչ սակաւ վանորայք յանտառին Սօղանլուայ և այլուր, որպիսիք են Քիւփքիլիսէ, Քէքլիկ, Փէնէկի վանք, Իշխանաց հոյակապ եկեղեցին ի կողմանս Օլթուայ և այլն, որք նոյնպէս ամայի գոլով ցարդ, կասկած բազում է, թէ մի գուցէ և նոքա գրաւեսցին ի յունաց, մալականաց և յայլոց։ Ուստի առ այս արժանի համարեցաք դիմել յոտս Օծելիութեան Ձերոյ, խնդրելով միջնորդել ուր հարկն է, յաղագս ընդունելոյ իրաւունս քանի մի գերդաստան Հայոց, առ ի բնակել ի շրջակայ դատարկ գիւղորայս Հայկական վանորէից։ Իսկ եթէ ոչ, խնդրեմ խոնարհաբար յայտնել մեզ թէ զի՞նչ են խորհուրդքն Վեհափառութեան Ձերում առ այս, կամ զիա՞րդ գործեցից և ո՞ւր դիմեցից, Նորին Բարձր Գերազանցութեան Լօրիս Մելիքովի՞ն[31], թէ այլում, առ ի

[31] Լօրիս Մելիքով Միքայէլ (1825, Թիֆլիս – 1888, Նիս, թաղուած է Թբիլիսիի Ս. Գէորգ եկեղեցու գաւթում) – Ռուսաստանի պետական և ռազմական գործիչ, կոմս, ռուսական բանակի հեծելազօրի գեներալ, գեներալ – համիարզ: 1880 թ. փետրուարի 12-ին նշա-

կատար ածելոյ զայս օգտակար գործն[32]*։*

Խոնարհ որդի քո խ. ծ.
Գրիգորիս ե[պիսկոպոս] Կարս և Պաթում նահանգաց

Մակագրութիւն. *Յանձնեմք Սինոդիդ գրել ուր հարկն իցէ, և խնդրել զթոյլտուութիւն միանգամայն տալ տեղեկութիւն կառավարչի վիճակին Կարուց։*

Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թ. 1, բնագիր, ձեռագիր:

№ - 18
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԱԳԱՐԱԿԸ ԱԶՆՈՒԱԿԱՆ Ս. ԲԱԲԱՋԱՆԵԱՆԻՆ ԵՒ ԳԱԲՐԻԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ ՎԱՐՁՈՎ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 1880 թ.
Կարս

Պայմանագրութիւն

1880 ամի օգոստոս 27-ին, ներքոյ ստորագրողքն որդւոց յորդի ազնիւ Սամփսոն Արսէնեան Բաբաջանեանց, Գաբրիէլ Յարութիւնեան, Գրիգորիս եպիսկոպոսն Աղուանեան հանդերձ Ազգ. Քաղաքական Ժողովոյն կարուց սոյն ամի, հաստատեցինք մեր մէջ հետևեալ պայմանները։

1. Մեք՝ Գրիգորիս եպիսկոպոսն Աղուանեան և Ազգային ժողով կարուց Խօշավանքի Տայլէր անուն ագարակի բոլոր սահմանները, որ են 1. Արևմտեան կողմէն վանքի և Տայլէրի ճանապարհ դէպի ինչ Թէփէլէր։ 2. Հիւսիսային Թօփքար։ 3. Թօփքարի ճանապարհ դէպի Գույուջուղի Աղբլ, Արևելակողմ։ 4. Թօփքարի ճանապարհով մինչև Ախուրեան գետի եզերքը, հարաւակողմ։ Ինն տարի պայմանաժամաւ, այսինքն՝ 1880 ամի նոյեմբեր ամսոյ սկզբից մինչև 1889 տարւոյ նոյեմբերի սկիզբը, ի վարձու տուինք Սամփսոն Արսէնեան Բաբաջանեան-

նակուել է Գերագոյն Կարգադրիչ Յանձնաժողովի նախագահ՝ դիկտատորական լիազօրութիւններով: Լօրիս Մելիքովի նախաձեռնութեամբ այդ յանձնաժողովը լուծարուել է, և նա նշանակուել է Ներքին Գործերի Նախարար (6 օգոստոսի 1880 – 4 մայիսի 1881):

32 1880 թ. նոյեմբերի 29-ին Սինոդը, լսելով հարցը, որոշեց. «Ձվերոգրեալ միջնորդութիւն Առաջնորդին Կարուց Գրիգոր եպիսկոպոսի Աղուանեան Կառավարչի Փոխարքային Կովկասու խնդրել զտնօրէնութիւն նորա յաղագս թոյլատրելոյ ժողովրդականաց Հայոց վերաբնակել ի վերոյ նշանակեալ աւերակ տեղիս, այնու յարգանօք զի բնակուին ի տեղիս անդ, իբրև ընդունակաց առ երկրագործութիւնս կարին լինել յաւէտ օգտաբեր ոչ միայն ի հոգևորս, նորոգութեամբ և շինութեամբ հնադարեան աւերակաց վանորէից և եկեղեցեաց, այլ և ի մասին զարգացման տնտեսական շահուց կողմանն›› (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թ. 3 և շրջ.):

ցին և Գաբրիէլ Յարութիւնեանցին, տարեկան եօթհարիւր րուբլիով, իւրաքանչիւր տարեգլուխին տարեկան վարձը՝ եօթհարիւր րուբլին կանխիկ ստանալու պայմանաւ։

2. Վերոյիշեալ հողերը բոլորովին նոցա իրաւասութեան ներքև պէտք է լինեն, ուր տեղերը նոքա ազատ են իրանց ուզածի պէս մշակել, այսինքն՝ զանազան շինութիւններ անել, այգիներ տնկել, ցանքեր անել և այլն։

3. Եթէ նոյն հողերի մէջ շինութիւններ արին, որոշուած ինն տարի պայմանաժամից յետոյ իրաւունք ունեն նոյն շինութեանց նիւթերը քանդել և տանել։ Իսկ եթէ վանքը ցանկացաւ գնել զանոնք, նորան թողնելու են։ Եթէ շինութիւններ, ջրաղաց և այլ մեքենայաւոր շինութիւններ եղան, նոյնպէս պայմանաժամից զկնի, իրաւունք ունեն նոցա միջի բոլոր շարժական գոյքերը վեր առնել, իսկ անշարժ շինութիւններ վանքին մնալու են։ Եւ եթէ նոյն հողերի մէջ այգիներ ունեցան, ինն տարիից զկնի պարտաւորեալ են նոյն այգիներու արդեանց համար տասանորդ վճարել վանքին մինչև քսան տարի, և քսան տարիէն զկնի, նոյն այգիները թողնելու են վանքին, առանց ոչինչ փոխարինութիւն ստանալու։ Բայց այգիից դուրս մնացեալ միւս հողերը, ինն տարիից զկնի, վանքը կարող է ուրիշ նպաստաւոր պայման առաջարկողներուն ի վարձու տալ (եթէ հինները վերստին չվարձեցին), որոյ մէջ նոքա բնաւ մտնելու իրաւունք չունեն։

4. Եթէ հարկ լինի վերոյիշեալ Տայելէրի հողերու վերայ ջուր բերել, պէտք է որ վանքի չորս աչքէ ջրաղացի ջուրը պակասեցնելու վնասակար գործին չձեռնարկեն։ Իսկ եթէ հնար չլինի բացի վանքի ջրաղացի ջուրից, ուրիշ տեղի ջուր հանել նոյն հողերի վերայ, նոքա պարտաւորեալ են նորոգ գետից ջրաղացի չորս աչքին համար ջուր բերել և ապա ջրաղացի ջուրը տանել։

5. Վերոգրեալ պայմաններ մինչև իւր պայմանաժամին անփոփոխ մնալու են երկու կողմիս մէջն ևս, եթէ վանքը պայմանաժամից յառաջ ուզեց զանոնք այն հողերէն դուրս հանել, պարտ է տասն հազար րուբլի տուգանք վճարել նոցա։ Իսկ եթէ նոքա պայմանաժամից յառաջ ձգեցին այդ հողերը, պարտաւոր են ինն տարուայ վարձքից ի զատ, նոյնպէս տասն հազար րուբլի տուգանք վճարել վանքին։

6. Լինելիք այգիներ ցիրուցան լինելու չեն, այլ որչափ կարելի է յարմարաւոր տեղերու մէջ ի միասին պէտք է լինեն, և այդ այգիներու մէջտեղեր ևս պէտք չէ որ գութանով վարուելու բաց տեղեր մնան, որ այլևս վարուելու անհնար լինելով անմշակ մնան և վնաս բերեն վանքին և այգիներու որևիցէ արդիւնքից տասանորդ ստանալու է վանք։

Ստորագրութիւնք

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

Անդամք Ազգային քաղաքական ժողովոյն Կարուց՝

Մ. Յարութիւն Մխչեան; Յովսէփ Մկրտիչեան
Աբրահամ Շահաբասեան, Մարգար Փալանջեան

Ծանօթութիւն. *այս պայմանագրութիւնը փոխանակուած է երկու կողմից.*

Ուղիղ է ըստ իսկականին՝ Գրիգորիս եպիսկոպոս Կարուց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 38 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 19
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՏԱՅԼԱՐ ԱԻԵՐԱԿ ԳԻՒՂԻ Ս. ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

20 յունուարի 1881 թ.
Հոռոմոսի վանք

Առնանագրութիւն

Ի ներքոյ սորին ստորագրեալ Հոռոմոսի վանուց հայազգի ժողովրդականքս տամք զայս ստորագրութիւն Բարեշնորհ Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ վանահօրն Հոռոմոսի վանուցն և Գործակատարին Շիրակայ և Գործակցի նորին Աղէքսանդրապօլցի Աղէքսանդր քահանայի Ամատունւոյ առ այն թէ՝ վկայեմք ըստ մեր քրիստոնէական խղճի Տայլար գիւղն որ է այժմ աւերակ, գոյ ի նմին ի կաթուղիկէ եկեղեցի յանուն Սուրբ Երրորդութեան կառուցեալ, ունի հող յԱխուրեան գետէ սկսեալ հանդէպ Ջրփլու գեղջ մինչ ցհասանելն Բօզեօխուշ ճանապարհն որ գնայ ի գիւղն Արազ, սկսեալ անտի դէպ առ Իչքափան որ է Թոփ քար սահմանագլուխն ի Թոփ քարէ սկսեալ դէպ առ վանսն Հոռոմոսի իջանէ Ջամուշուչան ստորոտն բարձրավանդակ լերանց ի Ջամուշուչանէ յԱխուրեան գետն, ըստ մեր նկատողութեան և կշռադատութեան այսքան տարածութիւն լինի ութն հարիւր օրավար տեղ, առ պարոն Մխչեանն գտանի հաստատագիր տուեալն ի կառավարութենէ տաճկաց ի ժամանակս Առաջադրութեան Կարուց Գրիգորիս եպիսկոպոսի որ այժմ առաջնորդ է յԱսպահան, յարակցեմք և զայս թէ՝ գնեալ է նոյն հողն յանուն Ղօշավանից Հոռոմոսի վանուցն երկու հարիւր երեսուն րուբլեաւ Շապուր աղայէ որդի Ահմէտի ի 1868 ամի, ի 20-ն յունուարի 1881 ամի ի վանս Հոռոմոսի:

Յօհաննէս Խաչոյեան
Աբրահամ Յակոբեան
Յարութիւն Զատիկեան[33]

[33] Հետևում է ևս 40 անձի ստորագրութիւն և անձնական կնիքներ:

№ - 20
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

20 յունուարի 1881 թ.
Հոռոմոսի վանք

Արձանագրութիւն

Ի ներքոյ սորին ստորագրեալ հայազգի ժողովրդականքս Հոռոմոսի վանուցն տամք զայս ստորագրութիւն Բարեշնորհ Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ վանահօրն Հոռոմոսի վանուցն և գործակատարին Շիրակայ և գործակցի նորին Աղէքսանդրապօլցի Աղէքսանդր քահանայի Ամատունւոյ, առ այն թէ՝ ըստ մեր համաձայն քրիստոնէական խղճի գիտեմք և վկայեմք ճշմարտապէս, զի ընդ վարելահողս ժողովրդոց մեր ունի վանքն Հոռոմոսի խառն քառասուն և եօթն օրավար հող ի տեղիս տեղիս, ունի նոյն վանքն այլև արօտատեղի ի Թոփ քարից սկսեալ մինչ ցԱրազ գիւղ ճանապարհն, ի նոյն տեղից սկսեալ մինչ ցՍէլֆն հեղհեղատն, ի հեղհեղատէ սկսեալ ի ճանապարհն Արազ գիւղ, և անտի մինչ զհասանելն ի կողմն հիւսիսոյ առ ստորոտովն ուր հասանի միջի Իչթափայ լեռն, և անտի գայ հասանէ ի Թոփքարն անուանեալ, ըստ մեր նկատողութեան և կշռադատութեամբ լինի ութն հարիւր օրավար տեղ արօտատեղի, սոյն նշանակեալ տեղն կէս բաժինն տիրէ ժողովրդականք տեղւոյն և կէս բաժինն Հոռոմոսի վանքն ի հաստատութիւն բանիս ստորագրեմք: Ի 20-ն յունուարի 1881 ամի, ի վանս Հոռոմոսի:

Յօհաննէս Խաչոյեան
Աւագ Յօհաննեան
Յարութիւն Զատիկեան[34]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թթ. 16-17, բնագիր, ձեռագիր:

№ - 21
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՂՈՒՈՒԵՈՒՂ ԱՒԵՐԱԿ ԳԻՒՂԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 յունուարի 1881 թ.
Հոռոմոսի վանք

Արձանագրութիւն

Ի ներքոյ սորին ստորագրեալ հայազգի ժողովրդականքս Հոռոմոսի վանուցն Ղզլքիլիսու Ղըլղաճու և Զրփլու տամք զայս ստորագրութիւն Բարեշնորհ Վանահօրն Հոռոմոսի վանուց և Գործակալին Շիրակայ և գործակցի նորին Աղէքսանդրապօլցի Աղէքսանդր քահանայ Ամատունւոյ առ այն թէ՝ ըստ մեր քրիստոնէական խղճի վկայեմք

[34] Հետևում է ևս 34 անձի ստորագրութիւն և անձնական կնիքներ:

ճշմարտապէս զի Ղուսճուղ գիւղն որ է այժմ աւերակ, սկիզբն լեալ է ամարանոց Ղօշայ վանիցն, ունի այսքան հող, ի ճանապարհէ, Բօզեօխուշու սկսեալ մինչ ցԹօփ քարն, ի նոյն Թօփ քարէ սկսեալ մինչև Իւլթափէ լեռն ուր հասանի Ղաւնիեասըղն և նորա ծոցակն, և ի նոյն քարից սկսեալ մինչ ցհասանել Ջոռլու ջուրն, ի նոյն ջրոյ սկսեալ մինչև յԱխուրեան գետն հանդէպ ի Ղըլղաճ գիւղն, Ղուսճուղ անուանեալ գիւղն ունի տասնևութ օրավար, մարգագետին հող, և մի ջրաղաց երկու աչքից շինեալ արդեամբ Հոռոմոսի վանուցն 1880 ամի, ի նոյն ջրաղացէ սկսեալ մինչև ի ճանապարհն Բօզեօխուշու է Ղուսճուղու հողն և սահմանն ըստ մեր նկատողութեան և կշռադատութեան լինի ինն հարիւր օրավար տեղ, ի 1877 ամէ մինչև 1879 ամն տիրէր այս հողն վանահայրն Հոռոմոսի վանուց Ստեփան վարդապետն Շիրակունի և տուեալ էր կապալաւ Զրփլու և Ղեղայճու հասարակութեան, իսկ յարձակելն նորա ի պաշտօնէ վանահայրութեան տաճիկ ոմն քուրդ Նիֆճի որդի Համէի ապօրինաբար բռնանալով դիրքաց յանհոգատարութենէ և ի թուլութենէ առաջնորդին կարուց: Ի հաստատութիւն բանիս վկայեմք: Ի 20-ն յունուարի 1881 ամի ի վանս Հոռոմոսի:

Աբրահամ Յակոբեան
Աւագ Յօհաննեան
Բարսեղ Յօհաննէսեան[35]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թթ. 20-21, բնագիր, ձեռագիր:

№ - 22
ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԿԱՅՔԻ, ԱՆՕԹԵՂԷՆԻ ԵՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

21 յունուարի 1881 թ.
Հոռոմոսի վանք

Ցուցակ կայից և անօթեղէնաց Հոռոմոսի վանուցն որ գրին ի ներոյ, մի առ մի յականէ յանուանէ որ կազմեցաւ ի 21-ն յունուարի 1881 ներկայ ամի

Ի վանս Հոռոմոսի

5 հատ շուրջառ, երկուքն նոր և խաս, իսկ երեքն կիսամաշ
3 հատ փորուրար, երկուքն նոր և խաս, մին կիսամաշ չթեայ
9 հատ ժամաշապիկ, եօթն հատը սև չթից, երկուսն ամրիկայից
1 ջուխտ բազպան ժամարարի
10 հատ հին և նոր ծածկոց – աւետարանի և սեղանի
1 հատ թագ և վակաս
1 հատ արծաթեայ ականակուռ սկիհ՝ մաղզմայիւ հանդերձ

[35] Հետևում է ևս 41 անձի ստորագրութիւն:

7 հատ արծաթից խաչ մեծ և փոքր, երկուքն սրբոյ մասունքով
8 հատ շուշպայ – սկիհոց և մասաց վերայ ձգելիք
1 հատ նոր բուրվառ
2 հատ թճեայ[36] *հին բուրվառ*
30 հատ մեծ և փոքր մոմակալ - շամադան[37]
4 հատ աւետարան, մինն միջադիր[38] *արծաթապատ, երեք փոքր*
2 հատ ձեռացագիր աւետարան
2 հատ մաշտոց մէկն հին, մէկն ձեռագիր
1 հատ գրչագիր սաղմոս
2 հատ ժամագիրք՝ տօնացուցիւ հանդերձ
1 հատ հին տպագիր տօնացոյց, փոքր
3 հատ շարական, երկուսն ձայնքաղ, միւսն փոքր
2 հատ խորհրդատետր՝ պատարագի
1 հատ ճաշոց գիրք, երկու հատոր հին տպագրութիւն
1 հատ յայսմաւուրք, տպագիր
2 հատ քշոց
8 հատ սեղանի և խաչկալի պատկերներ – կիսամաշ
3 հատ գրակալ՝ փայտեայ, հասարակ
2 հատ խպրուջ և մի լագեան պղնձեայ
2 հատ վարագոյր սեղանի
1 հատ փոքրիկ խալիչա
1 հատ հասարակ փայտից աթոռ
Հոռոմոսի վանքի անասնեղէնքը, 1881 ամի յունուարի 21
Մէկ գոմէշ
Երկու եզ
Երկու բուղայ աչառ
Երեք կով կթու
Երկու երինջ
Երկու հորթ
Երկու ոչխար
Երկու չապիճ[39]
Զորս այծ
Մէկ աւանակ
Արմտեղէն բացի ալիւրից, երկու սօմար[40] *և վեց կօտ գարի։*

---

36 Թուջ – երկաթի տեսակ, որ պարունակում է 2-6 % ածխածին, աւելի բեկուն է և նուազ ամուր քան երկաթը. չուգուն:

37 Շամադան – աշտանակ:

38 Միջադիր – միջակադիր, միջակ գիրք:

39 Չապիճ, չափեջ – այծ, մի տարեկան ուլ:

40 Սօմար, սօմառ – ընդեղէնի չափ հարաւային Կովկասում, հաւասար մօտ երեք ցենտների:

Հաւատարմատար Առաջնորդին Կարուց վիճակի Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեան, Յակովբ վ. Մուրադեանց և Շմաւոն քահանայ Տէր-Մարուքեան

Ի վերոյ գրեալ կայք ցուցակաւ ստացայ. Ստեփաննոս վարդապետ Շիրակունի

Համաձայն ցուցակի ստացայ կահ և կարասիք Հոռոմոսի վանուցն և յանձնեցի ի պահեստ Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ. Աղէքսանդր քահանայ Ամատունի

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 23 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 23
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԳԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ

25 յունուարի 1881 թ.
Տեկոր

Առձանագրութիւն

Ի ներքոյ սորին ստորագրեալ բնակիչ Տեկոռ գեղջ հայազգի հասարակութիւնս տամք զայս ստորագրութիւն վանահօրն Հոռոմոսի վանուցն և գործակալին Շիրակայ գիւղորէից և գործակցի նմին Աղէքսանդր քահանայի Ամատունւոյ առ այն թէ՝ ըստ մեր քրիստոնէական խղճի արդարապէս վկայեմք, զի Պէշքելիսայ[41] անուանեալ եկեղեցին խցկունքն, ունի հող յայսքան տարածութեամբ ի կողմն հարաւային յագրակ ներքոյ քարաժայռից սկսեալ ի նոյն քարաժայռէ սկսեալ մինչ ցհասանելն ի ձորակն Սբ. Սարգսի առ յարևմուտն ի հիւսիս կոյս այրն Մժոլի, յայրէն Մժոյի մինչ ցհասանելն առ ճանապարհն կարուց, անտի սկսեալ ուղիղ ճանապարհաւն ի մէջ իւր պարունակելով զՁիֆտլար Թափէ բլուրն, անտի գայ հասանէ փոքր սալորի ձորակն որ հանդէպ իւր ունի սուտակեան տեղն, ըստ կշռադատութեան և նկատողութեան մերոյ լինի խցկավանուց կալուածողն թէ՝ արօտատեղի և կամ վարելահողն հազար հինգ հարիւր օրավար, նաև ունի երկու աչք ջրաղաց նորոգ շինեալ բայց է վերակատար ի հաստատութիւն բանիս ստորագրեմք ի 25-ն յունուարի 1881 ամի, ի գիւղն Տիկոր։

Ստորագրութիւնք Տիկոր գիւղի հասարակութեան

Յօհաննէս քահանայ Պետրոսեան Տէր-Ղազարեանց
Մկրտիչ Դանիէլեան
Խաչատուր Խաչօեան[42]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 22, բնագիր, ձեռագիր:

---

41 Պէշքիլիսա, Բէշքիլիսա – թուրքերն այսպէս են կոչել Խծկոնքը:

42 Հետևում է ևս 7 անձի ստորագրութիւն:

№ - 24
ԱՆԻԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ԱՄԱՏՈՒՆԵԱՆՑ ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1 *9 փետրուարի 1881 թ.*

Բարձր Արժանապատիւ Աղէքսանդր քահանայի Ամատունեանց

Հոգաբարձութիւն Անւոյ պատիւ ունի յայտնելու Ձերդ Բարձր Արժանապատուութեան, որ Անւոյ աւերակները և կալուածները պահպանելու համար ընտրած է Գերապատիւ Ներսէս վարդապետ Տիգրանեանցին, որը հաստատուած է նոյնպէս Կարուց Սրբազան Առաջնորդից: Այսու Հոգաբարձութիւնս կը խնդրէ Ձեզանից բարեհաճել հաղորդելու Ձեր գործակից Ղօշավանից վանահայր Գերապատիւ Ստեփան վարդապետին ճանաչել յիշեալ Ներսէս վարդապետին կառավարիչ եկեղեցեաց և կալուածոց Անւոյ և ներկայացուցիչ Հոգաբարձութեանս այն տեղում, օգնել նորա հարկաւոր դէպքերում, իսկ կարևոր համարած ժամանակ հաղորդել Հոգաբարձութեանս նոցա և այնտեղի գործերի վերաբերութեամբ տեղեկութիւններ: Նոյնպէս Հոգաբարձութիւնս պատիւ ունի յարակցելու, որ ամենայն պաշտօնական յարաբերութիւնք թէ՛ Ձեր և թէ՛ Ձեր գործակից Գերապատիւ Ստեփան վարդապետի կողմանէ Անւոյ վերաբերութեամբ լինելու են ուղղակի Հոգաբարձութեանս հետ:

Նախագահ Հոգաբարձութեան Անւոյ՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան[43]

Հոգաբարձու և Գործավար՝ Աբիսողոմ Յովհաննիսեան
Մահտեսի Գէորգ Բաբայեանց
Հաճիպապ Խալիբեանց
Մանուկ Խումարեանց
Աստուր Իսահակեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 44 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[43] Մինաս քահանայ (յետագայում՝ աւագ քահանայ) Տէր Պետրոսեանց – ծնուել է 1841 թ.: Կրթութիւնը ստացել է Հառիճի վանքում: Քահանայ է ձեռնադրուել 1864 թ. Ալեքսանդրապոլի գաւառի Հոռոմ գիւղի վրայ: 1880 թ. նոյեմբերի 7-ին Գէորգ Դ. Կաթողիկոսի կոնդակով նշանակուել է Անիի Հոգաբարձութեան նախագահ: Զանազան թուականներին պարգևատրուել է ծաղկեայ փիլոն, թաւշեայ գլխարկ և լանջախաչ կրելու իրաւունքով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349, ֆ. 56, ց. 16, գ. 66, թթ. 4—50, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 12 շրջ. 13):

№ - 25
ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԱՆԻի ԱՒԵՐԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 11 *3 մարտի 1881 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի գործակցէ Գործակալին գիւղորէից Շիրակայ յԱլէքսանդր բահանայէ
Ամատունեանց
Ամենախոնարհաբար յայտարարութիւն

Հոգաբարձութիւն Անւոյ հաղորդագրութեամբ յՅ-ն փետրուար ամսոյ ընդ համարաւ 1[44], ծանուցանէ ինձ թէ՝ ի պահպանութիւն աւերակաց և կալուածոց Անւոյ ընտրեալ է զբարեշնորհ Ներսէս վարդապետն Տիգրանեանց Աղէքսանդրապօլցի զհաստատեալն ի նմին պաշտաման ի Սրբազան Առաջնորդէն կարուց, ուստի խնդրէ ճանաչել զնա զՏիգրանեանց վարդապետն յայսմհետէ կառավարիչ եկեղեցեաց և կալուածոց Անւոյ և ներկայացուցիչ Հոգաբարձութիւն ի նմին տեղւոջ։

Զիսկական հաղորդագրութիւն վերտողեալ Հոգաբարձութեանն ընդ այսմ առաջի արարեալ Լուսաւորչեան Հայոց Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի՝ պատիւ ունեմ Ամենախոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն դորին թէ՝ զիարդ պարտէ վարել ըստ մասին Բարեշնորհ Ներսէս վարդապետի Տիգրանեանց ի բաւարարութիւն խնդրոյ Հոգաբարձուացն Անւոյ, ըստ որում չիք զարդիս ի ձեռին մերում հրահանգութիւն Սրբազան Ատենիդ զկարգմանէ յիշեալ Տիգրանեանցի ի կառավարիչ կալուածոցն Անւոյ, որպէս զի մի՛ յանգիտութենէ բարդեսցի յապայն պատասխանատուութիւն ինչ ի վրայ մեր։

Աղէքսանդր քահանայ Ամատունեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 43 և շրջ., ինքնագիր:

№ - 26
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՏԱՅԼԱՐ ԳԻՒՂԻ ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐԸ ՏԵՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 66 *29 յունիսի 1881 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Յայսորիկ աւուրս տեղական կառավարութիւն տեղւոյս պահան-

[44] Տես նախորդ փաստաթուղթը:

ջեաց ի Մէնջ ներկայացուցանել յատենի ինքեան՝ զկալուածագիրս Տայիլար անուն աւերակ գեղջն, որ պատկանի սեպհականութիւն Հոռոմոսին վանուց: Ջկամեցեալ մեր ինքնագլուխ վարել յայս գործ, երկնչելով յապագայ որպիսի և իցէ վտանգաց, որպէս գուշակեն բազումք, պատասխանի արարաք կառավարութեան թէ՝ կալուածագիրքն Տայելէրի գտանին ընդ անմիջական հրամանաւ Ս. Սինոդին էջմիածնի, յորմէ մեք կարգադրութիւնս խնդրեալ եմք զներկայացմանէ կալուածագրոյդ: Ջհաստատութենէ կալուածագրոց թէպէտ չիք և ոչ մի կէտ կասկածանաց, զի հաստատեալ են նոքա Թուրալի թափուով Օսմանեան կառավարութեան, և ըստ հրահանգի Ս. Սինոդիդ պահեալ ապահովապէս յարկեղ եկեղեցւոյն քաղաքիս, բայց և այնպէս ոմանք երկիւղս և վտանգս գուշակեն զայսմանէ: Ուստի նաև այդ արժանի համարեցաք տալ Սրբոյ Սինոդիդ զայս տեղեկութիւն և խնդրել միանգամայն զտնօրէնութիւն Ձեր զայսմանէ[45]*:*

Գրիգորիս եպիսկոպոս Կարս և Բաթում նահանգաց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 75, թ. 33, բնագիր, ձեռագիր:

№ - 27
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԽԾԿՈՆՔԻ ՎԱՆՔԻ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԻ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 75 *4 օգոստոսի 1881 թ.*

Կարս

Նորին Աստուածարեալ Օծութեան Տեառն Տեառն Գէորգայ Դ.-ի Ծայրագոյն Պատրիարքի և Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց

Յաղագս կալուածագրոց Խծկոնից (Պէշքիլիսէ) վանուց վիճակիս մեք արդէն յառաջ քան զռուս-տաճկական պատերազմն գրեալ էաք առ Ներսէս Սրբազան Պատրիարքին Կ. Պօլսոյ[46] *ջանալ հաստատել*

---

[45] 1881 թ. հոկտեմբերի 25-ին Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց. «Առ ներկայ յայտարարութեան Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց պատուիրել նմա՝ ընդ փոյթ օրինակել տալ զօրինակս իսկական կալուածագրոց Տայելերու և ի ձեռն Նատարիուսի օրինաւոր կարգաւ վաւերացուցանել և առաջարկել ի կառավարութիւն տեղւոյն, իսկ զիսկականսն պահ դնել ապահովապէս յարկղ եկեղեցւոյն քաղաքիդ ու զհետևանս այն կարգադրութեան կառավարութեան հաղորդել Սինոդիս» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 36 և շրջ.):

[46] Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեան (28 յունուարի 1897, Կ.Պոլսի Խասգիւղ արուարձան – 26 հոկտեմբերի 1884, Օրթագիւղ) - 1843-52 թթ. սովորել է Կ. Պոլսի Ներսէսեան Վարժարանում: 1858 թ. օգոստոսի 16-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ, և քիչ անց ստացել է վարդապետական աստիճան: 1862 թ. հոկտեմբերի 13-ին Կիրակոս Բ. Կաթողիկոս Աջապահեանի ձեռքով ձեռնադրուել է եպիսկոպոս: Նոյն տարուայ դեկտեմբերի 9-ին նա ժամանել է Կ. Պոլիս, ուր 1963 թ. սեպտեմբերի 20-ին ընտրուել է Կրօնական ժողովի անդամ ու ատենապետ: 1874 թ. փետրուարի 18-ին Ներսէս արքեպիսկո-

զհողային կալուածագիրս ի Բ[արձր] Դրանէ և առաքել առ մեզ: Սրբազան Պատրիարքն ևս ի 25-ն նոյեմբերի 1876 ամի 291 թուահամար նամակաւ իւրով ծանուցանէ ի մեզ թէ՝ ի վերայ թագրիրի[47] Պատրիարքարանին մատուցելոյ առ Բ[արձր] դուռն, նա ուղղակի հրամանագիր առաքեալ է առ կուսակալութիւն Կարնոյ հաստատել զայնս: Այլ սակայն անմիջապէս ռուս-տաճկական պատերազմն ի վերայ հասանելով, մեք չկարացաք այլևս ստանալ ի կուսակալութենէ Կարնոյ զհաստատութիւն կալուածագրոյն: Վասն որոյ և յետ պատերազմին առ այդ կրկին դիմեցաք առ Սրբազան Պատրիարքն Կ.Պոլսոյ ի 24-ն յունիսի 1880 ամի 69 թուահամար նամակաւ մերով, խնդրելով, գէթ զպատճէն հրամանագրոյն, որ առաքեալն է ի Բ[արձր] Դրանէն առ կուսակալութիւն Կարնոյ յաղագս հաստատութեան հողային կալուածոց Խծկոնից, վերստին ստանալ և առաքել առ մեզ, սակայն ցարդ ևս նամակն մեր մնայ անպատասխանի: Իսկ այժմ ևս Ռուսական կառավարութիւնն յայտարարութիւն արարեալ է զկնի միոյ ամսոյ գրաւել զամենայն կալուածսն որք չունեն և կամ ոչ մատուցանեն զվաւերական կալուածագիրս: Վասն որոյ և առ այդ դիմեմք առ Աստուածարեալ Օծելութիւն Ձեր խնդրելով առնել տնօրէնութիւն զայսմանէ, առ ի կարող լինելոյ պահպանել զայնս ի վտանգէ գրաւման:

Խ. ծ. Գրիգորիս եպիսկոպոս Կարուց

Ի 4-ն օգոստոսի 1881 ամի
յԱռաջնորդարան Հայոց
ի ք. Կարս

Մակագրութիւն. *Յանձնեմք Սինոդի կրկնել պահանջել զխնդրեալն պատճէն*[48]*:*

Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 33, բնագիր, ձեռագիր:

պոսը ընտրուել է Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ, ապա՝ պատրիարք: 1881 թ. նոյեմբերի 12-ին Մեծ եպարքոսին է ներկայացրել իր հրաժարականը, որը մերժուել է: 1884 թ. մայիսի 9-ին Ս. Էջմիածնի եկեղեցական համագումարը Ներսէս Վարժապետեանին ընտրել է Ամենայն Հայոց Կաթողիկոս, սակայն առողջական խնդիրների պատճառով նա հրաժարուել է՝ հոկտեմբերի 15-ին ներկայացնելով իր հրաժարագիրը:

47 Թագրիրը Բ. Դռանն ուղղուած Պատրիարքական պաշտօնական գրութիւն է. խնդրագիր կամ զեկուցագիր:

48 1881 թ. հոկտեմբերի 23-ին Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց. «Ծանուցանելով զվերոգրեալ յայտարարութիւնէն Առաջնորդին Կարուց Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց և զմակագրութենէ Նորին Սրբութեան Պատրիարքին Հայոց Կ.Պոլսոյ Գերապատիւ Ներսէս արքեպիսկոպոսի հրաւիրել փոյթ յանձին կալնուլ ի ձեռս բերել ուստի հարկնէ պատճէնը հրամանագրոյն Բարձրագոյն դրան տուելոյ առ կուսակալութեան Կարնոյ որ ի մասին հաստատելոյ զհողային կալուածագիրս վանուց Խծկոնից (Պէշքիլիսէ) զոր և կարի փութով հասուցնի ի Սինոդս, զի մի՛ յապաղմամբ խնդրոյն ի կորուստ մատնեցին իրաւունք վանուցն» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 34 և շրջ.):

№ - 28
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՔԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՎԱՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 26 *5 օգոստոսի 1881 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Գործակալէ Շիրակայ կողմանց և ի գործակցէ նորին Ամենախոնարհաբար յայտարարութիւն

Ի 26-ն անցեալ յուլիս ամսոյ գտանելով յԱնի՝ եկն Զինուորական Նահանգապետն[49] կարուց որ չետ առարկելոյ զոմանց հանգամանաց վարելահողոց Անւոյն՝ բանաւոր եղանակաւ պահանջեաց ի մէնջ յընթացս միոյ ամսոյ զվկայագիրս վարելահողոց պատկանելոց Հոռոմոսի վանուցն Շիրակայ, զի այնու հնարաւորեսցի որոշել զվանքապատկան արօտատեղիս յԱրքունի հողոց։

Ըստ որում այսպիսի պահանջից կատարումն Նորին Գերազանցութեան կախի զիրաւանց Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի իբրև ծայրագոյն Հոգևոր իշխանութիւն, վասն որոյ յայտարարեալ զայսմանէ Սրբազան Ատենիդ Ամենախոնարհաբար խնդրեմք զվաղընդփոյթ տնօրէնութիւն դորին զվերոգրելոցն, զի մի՛ վանքապատկան սեփականութիւնք յատկացեալք ի վաղ ժամանակաց օտարացուսցին ի զրկանս բաղդազուրկ մնացորդաց տանն Բագրատունեաց, յարակցելով թէ՝ վանքն Հոռոմոսի չունի զկալուածագիր վասն արօտատեղեաց իւրոց[50]։

Ստեփաննոս վարդապետ Շիրակունի

Աղէքսանդր քահանայ Ամատունի

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 27, բնագիր, ձեռագիր:

---

[49] Խօսքը գեներալ-մայոր Ալեքսանդր Իգնատի Գրօսմանի մասին է, որը 1881 թ. ապրիլի 1-ից 1883 թ. հոկտեմբերի 5-ին եղել է Կարսի Զինուորական Նահանգապետը:

[50] 1881 թ. օգոստոսի 20-ին Սինոդի տնտեսական մասը հետևեալ գրութիւնն է առաքել Ստեփաննոս վարդապետին և Աղէքսանդր քահանային. «Առ յայտարարութեան Ձեր ի 5 օգոստոսի տարւոյս N26 Տնտեսական մասնս Սինոդի Սրբոյ Էջմիածնի հրամանագրէ Ձեզ՝ զի եթէ անյայտացեալ իցեն կալուածագիրք հողոց վանուցդ Հոռոմոսի ի գաղթելն յայլ և այլ տեղիս ի վերջին պատերազմի ռուսաց ընդ տաճկաց, յայն ժամ պատրաստեսցին զվկայս ի գիտակ անձանց մերձակայից վանուց որպէսզի ի գալ Նահանգապետին վասն որոշելոյ զսահմանս վկայութեամբ իւրեանց ցուցցեն զսահմանս և հաստատեսցին զիրաւունս դարաւոր իրաւանց սեպհականութեան վանուցե (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 28 և շրջ.):

№ - 29
ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1881 թ.

Արձանագրութիւն

Ի ներքոյ սորին ստորագրեալ Հոռոմոսի վանուց հայազգի ժողովրդականքս տամք զայս ստորագրութիւն Բարեշնորհ Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ և գործակցի նորին Աղէքսանդր քահանայի Ամատունւոյ առ այն թէ՝ Մայր եկեղեցին Անւոյ ունի հող ի կողմն յարևելեան եզրն Ախուրեան գետոյ, սահմանագլուխն է կարմիր վանքն ի կողմն յարևմտեան դէպ առ Ղուզլիճայ գիւղն, և երկու ձորագլուխն հարաւային և յարևելեան մէջտեղն, Ղզղալասին մինչ ցհասանելն Մաղզբերդոյ սահմանագլուխն, իսկ հիւսիսային կողմն մինչև Ջինդեարասին մինչ ցհասանելն կարմիր վանքն, ունի այսքան սահման թէ՝ մարգագետին թէ՝ արօտատեղի և կամ վարելահող, ըստ մեր նկատողութեան և կշռադատութեամբ լինի ընդ ամէնն վեց հարիւր օրավար հող, ի հաստատութիւն բանիս ստորագրեմք, յարակցիք և զայս թէ՝ ի 1878 ամէ մինչ ցայժմ տիրէ Անւոյ վանքն, և երկու ամ տուեալ է ցանկացողաց կապալաւ և գոյացեալ արդիւնքն ստացեալ է զվանսն Հոռոմոսի ընդ ձեռամբ Առաջնորդին կարուց և վանահօրն ըստ ցուցման տումարին: Ի 20-ն յունուարի 1881 ամի ի վանս Հոռոմոսի: Յաւելումք եմք և զայս թէ՝ ի 1879 ամի մաքրեալ է Սբ. Լուսաւորիչ եկեղեցին Անւոյ և միանգամ եղեալ է պատարագ, ընդ ձեռն Հոգաբարձութեան շինեալ է հանդէպ յարևմտեան կողմ վեց սենեակ ի պէտս ուսումնարանի և մի գոմ, իսկ այժմ է անմարդաբնակ:

Աբրահամ Յակոբեան
Աւագ Յօհաննեան, Յօհաննէս Խաչոյեան[51]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թթ. 14-15, բնագիր, ձեռագիր:

№ - 30
ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՐԱԿՈՒՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՋԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՏԱՅԼԱՐ ԱՒԵՐԱԿ ԳԻՒՂԸ ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 3 *30 յունուարի 1882 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի վանահօրէ Հոռոմոսի վանուցն նոյն և Գործակատարէ Շիրակայ և

[51] Հետևում է ևս 37 անձի ստորագրութիւն և անձնական կնիքներ:

Գործակցէ նորին Աղէքսանդր Եահանայէ Ամատունւոյ Ամենախոնարհաբար յայտարարութիւն

Պատիւ ունեմք ամենախոնարհաբար յայտ առնել Սինոդիդ Սրբոյ էջմիածնի թէ՝ Տայլար անուանեալ աւերակ գիւղն, որ պատկանի վանուցն Հոռոմոսի, ունի զուտ հարիւր օրավար հող ըստ արձանագրութեան մերոյ, Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսն Առաջնորդն կարուց յանցեալ 1880 ամի ինն տարի ժամանակաւ տուեալ է կապալաւ Նախիջևանցի Յարութիւն Գաբրիէլեանի և Երևանցի Սմբատայ[52]*, ի նոյն ամի չէ յիշեալ զժամանակ և զթիւ ի նոյն նշանակեալ տումարի, իսկ լսելով մեր ի գիտակ հայազգի ժողովրդական անձանց տեղւոյն ծանուցանեմք, յարակցեմք և զայս թէ՝ գո՞յ ի կայսերական կանոնի և Սինոդի Սրբոյ էջմիածնի իրաւունք տուչութեան ինն տարի ժամանակաւ տալ կապալաւ զվանքապատկան հողին, առանց կանխագոյն հաճութեան Սինոդի մեզ չէ յայտ, վասն զի այժմ բազումք թախանձին մեզ կռել ընդ ինքեանց զնոր դաշն հինգ ամ ժամանակաւ գիտեմք քաջապէս անհնար է մեզ առանց կամաց Բարձրագոյն իշխանութեամբ և հրահանգութեամբ կռել ընդ միոյ ցանկացողի զկապակցողի որ է հակառակ սուրբ կամաց ծայրագոյն իշխանութեան։*

Վասն որոյ խոնարհաբար յայդ առնեմք Աստենիդ ի գիտութիւն և ի տնօրէնութիւն[53]*։*

Ստեփաննոս վարդապետ Շիրակունի
Աղէքսանդր քահանայ Ամատունի

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 1, բնագիր, ձեռագիր:

№ - 31

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍ ԳԱՂԹԵԼ ՅԱՆԿԱՑՈՂ ՀԱՅԵՐԻՆ ԹՈՒՅԼՏՈՒՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1677 *12/13 փետրուարի 1881 թ.*
Թիֆլիս

Ի Սինոդն Սրբոյ էջմիածնի

Գրութիւն Սինոդիդ ի 24 դեկտեմբերի անցելոյ ամի ընդ համարաւ

---

52 Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցը Սինոդին յղած գրութեամբ ճշտում է կատարում՝ նշելով, որ կապալառուները անուններն են Գաբրիէլ Յարութիւնեան և Սմբատ Բաբաջանեան (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 6):

53 1881 թ. մարտի 14-ին Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց. «Տնտեսական մասն Սինոդի Սրբոյ Էջմիածնի առաջադրէ Ձեզ ընդ փոյթ յայտնել Սինոդիս, թէ որքանւոյ, որպէսզի պայմանաւ տուեալ էք գյիշեալ հողս կապալաւ, կռեալ էք ընդ նոսա օրինական կարգաւ ի ձեռն նօտարիոսի զդաշն պայմանաց և քանի տարի ժամանակաւ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 3 և շրջ.):

5020, առ կառավարիչն Գլխաւոր կառավարութեան վասն թոյլատրելոյ զքանի մի ցանկացողաց Հայոց գաղթել ի նահանգն Ղարսու վասն վերականգնեցուցանելոյ և պահպանելոյ գտանեցեալ անդ եկեղեցիս և վանորայս Հայոց, ըստ հրամանի Նորին Գերազանցութեան յանձնեցաւ ընդ սմին Պ. կառավարչի Կովկասեան Ջինուորական-Ազգային կառավարութեան ի մերձակայ տեսչութեան որոյ գտանի նահանգն Ղարսու և Բաթումայ։

Զայսմանէ Դեպարտամենտն ունի պատիւ ծանուցանել Սինոդիդ։
Դեպարտամենտի Տնօրէն

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թ. 5, թարգմանութիւն ռուսերէնից[54], ձեռագիր:

№ - 32
ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՏԵՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԱՅԵԼԱՐԻ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԻ ԲՆԱԳԻՐԸ ՉՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՒ ՅԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐԻ ԲՆԱԳՐԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՅԱՆՁՆԵԼ-ՉՅԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 18 *13 փետրուարի 1882 թ.*
Կարս

<u>Կարի ստիպողական</u>

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի

Տիրող կառավարութիւն տեղւոյս պահանջեալ էր ի մէնջ ներկայացուցանել ինքեան փութանակի զիսկական կալուածագիրս Տայելար անուն կալուածոյն Խօշավանից և այլ ամենայն ազգային կալուածոց։ Մեք ըստ հրամանագրի Սրբոյ Սինոդիդ, որ ի 12-ն նոյեմբերի 1881 ամի ընդ համարաւ 2850, առաջարկեցաք մատուցանել նմա զօրինակս կալուածագրոց ևեթ, և զիսկական կալուածագիրս Տայելարի կալուածոյն Խօշավանից, զորս արդէն ի սաստիկ ստիպողականութենէ կառավարութեան մատուցեալ էաք նմա, վերադարձուցանել մեզ, յետ առնելոյ զբուն օրինակս նոցին։ Այլ կառավարութիւնն յայտարարութեամբն իւրով յ8-ն փետրուարի տարւոյս ընդ համարաւ 403 յայտնէ մեզ թէ՝ կառավարութեանս անշուշտ հարկաւոր են ի ձեռին ունել զիսկական կալուածագրոց, առ ի վերահասու լինելոյ զստուգութենէ և զճշմարտութենէ նոցին, և ապա յետ այնորիկ, եթէ վաւերական և ստոյգ գտանիցին այնոքիկ, ի տեղի նոցա տալոց է կառավարութեան այլ կալուածագիրս ըստ օրինի Ռուսական կառավարութեան։

Արդ առ այս դիմելով առ Ս. Սինոդդ, խնդրեմք հաղորդել մեզ զտնօրէնութիւն Ձեր, թէ պա՞րտ է տալ ըստ պահանջման կառավարութեան զիսկական օրինակս այլ ազգային կալուածագրոց թէ ոչ։ Եւ պարտէ

[54] Ռուսերէն բնագիրը տես նոյն տեղում, թ. 4 և շրջ.:

փութալ զայսմանէ, զի յետ սակաւուց, յայտարարեալ է, չընդունել այլ ևս զորևիցէ կալուածագիրս ի նկատողութիւն, և յետ որոշեալ ժամանակին, ամենայն կալուածք յարքունին գրաւին որոց չիցէ ներկայացուցեալ նախագոյն զկալուածագիրս[55]*։*

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 47, բնագիր, ձեռագիր:

№ - 33
ԿՈՎԿԱՍԻ ՔԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՔԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՑ ԿԱՐՍ ԳԱՂԹԵԼ ՅԱՆԿԱՑՈՂՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1250 *1 մարտի 1881 թ.*
Թիֆլիս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի

Դեպարտամենտն Գլխաւոր Կառավարութեան Փոխարքային Կովկասու յանձնեաց ըստ պատկանելոյն, ի Քինուորական Ժողովրդական Կառավարութիւն Կովկասեան զմիջնորդութիւն Սինոդիդ ի 24 Դեկտ. անցելոյ ամի N 5020, որ յաղագս թոյլատրելոյ քանի մի հայ բնակչաց Երևանայ և Տփխիսու Նահանգաց վերաբնակել ի Նահանգն Ղարսայ վասն պարապելոյ երկրագործութեամբ, նոյնպէս և վասն վերանորոգելոյ և պահպանելոյ զգտանեցեալ ի Նահանգին Ղարսայ զհնութիւնս քրիստոնէական յիշատակարանաց, եկեղեցեաց և վանորէից։

Պատիւ ունեմ հաղորդել Սինոդիդ, զի Նորին Պայծառափայլութիւն, օգնական Գլխաւոր Հրամանատարի զօրաց, եգիտ կարևոր զգաստողութիւն ըստ այսմ միջնորդութիւն, թողուլ ցորոշելն որքանութեան գետնոց ի Նահանգին Կարուց, որ կարէ կայանալ միայն զկնի վերջաւորութեան գաղթականութեան տեղական բնակչացն ի Տաճկաստան։

Գեներալ լէյտենանտ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թ. 7 և շրջ., թարգմանութիւն ռուսերէնից[56], ձեռագիր:

---

[55] 1882 թ. փետրուարի 19-ին Սինոդը հրամայել է. «Հրամանագրել Յաջորդին Կարուց Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց վասն կալուածագրոց կալուածոց վանորէիցն կազմեալ զօրինաւոր ցուցակս և յետ թողլոյ ի գործս իւր զհաւատարիմ օրինակս այնց կալուածագրոց, զիսկականսն ի ձեռն յատուկ անձին գրութեամբ ներկայացուցանել պատշաճաւոր կառավարութեան ի վաւերացումն և ստանալ զօրինաւոր ստացագիր վասն ստացման նոցին» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 48):

[56] Ռուսերէն բնագիրը տե՛ս նոյն տեղում, թ. 6 և շրջ.:

№ - 34
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀՊԱԶԵԱՆՑԻ ԵՒ ԱՐՍԷՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ԿԱՊԱԼՈՎ ԻՐԵՆՑ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

22 ապրիլի 1881 թ.
Ալեքսանդրապոլ

Ձերդ Վեհափառութիւն
Ամենաողորմած Քահանայապետ

Յանկութիւն է մեր զվարելահողը Հոռոմոսի վանուց (Ղօշավանք) Ղօշավան անուանեալ իննն ամեայ ժամանակաւ առնուլ կապալաւ ի շահեցողութեան այսու պայմանաւ, որպէս տուեալն Տայլար անուանեալ տեղիս երկու հազար օրավար տարածութեամբ ի տարիս վեց հարիւր րուբլիս արծաթոյ (600 ր.). մեք ևս ցանկամք չորս հարիւր օրավար հողն տարածութեամբ համեմատութեամբ Տայլար անուանեալ հողոյն առնուլ յորմէ պարտէ հանել զմի հարիւր օրավարն վասն ամենևին անպէտ լինելոյն, ուր մարթ է միայն արածել զանասունս: Ոյր վասն յայտնելով կանխապէս Ձերում Վեհափառ Տէրութեան խնդրեմք ըստ օրէնի զարժանապէս տնօրէնութիւն: Յարակցելով և զայս զի վարելու հող Ղույուճի[57] անուանեալ տեղւոյս որ՝ այժմ ի ներքոյ վէճի է և քիւրտ ոմն բռնացեալ տիրէ այժմ, եթէ օրէնք յօգուտ վանուցն վճռեսցէ խոստանամք զայն և առնուլ ըստ վերոյն վարելահողից, ուր հնարաւոր է տնկել զծառատունկ և մինչև անգամ զորդս խաղողոյ և խոստանամք այդպէս առնել, և այժմէն իսկ պայման դնեմք վասն յիշեալ Ղույուճուղի ի միամտութիւն յապայս. և խոստանամք պատրաստել այս անուանիս ի դատաստանի աւուրն յօգուտ վանուցն վկայել: Վեհափառ Տէ՛ր, ինն ամեայ ժամանակամիջոցաւ առաջարկելոյս գլխաւոր նպատակ այն է, զի զերիս կամ չորիս ամս հազիւ մարթանամք բոլորովին խոպանացեալ զերկիրն մշակել, իսկ արդիւնաբերութեան մնայ մեզ մնացեալ ամենքն, ուստի խնդրեմք ի Ձերմէ Վեհափառ Տէրութենէ թէ ուր հնարէ հաստատապէս այդ գործ վերջացուցանել, այդր ի Սինոդի թէ ընդ վանահայր վանուց ընդ Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ, և ընդ ո՞ւմ պայմանաւորել պարզէ, առ այս մնամք սպասու տնօրէնութեան Վեհափառութեան Ձերում խոնարհ ծառայք

Խաչատուր Շահպազեանց
Արսէն Բաղդասարեանց[58]

---

[57] Ղույուճուղ, Ղույուճուխ, Կույուջուկ – գիւղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Շորագեալի տեղամասում: Ախուրեան գետի աջ ափից 2 կմ արևմուտք:

[58] 1881 թ. ապրիլի 29-ին Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց. «Ձվերոգրեալ խնդրոյ և զմակագրութենէն Նորին Սրբութեան ծանուցեալ Հոգևոր Կառավարութեան Աղէքսանդրապոլու պատուիրել նմին դէպի իմէ խնդրեալ տեղին չիցէ տուեալ այլոց կապալաւ առնել յԱտենի իւրում ի ներկայութեան վանահօրն Ղօշայ վանուց և օգնականին օրինաւոր

Մակագրութիւն. *Յանձնեմք Սինոդի տալ աճրդախօսութեամբ ի վարձու զհողս յիշատակեալս ի սմին խնդրագրի՝ եթէ չիցէ ցարդ տուեալ այլոց ի վարձու։*

Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 4, բնագիր, ձեռագիր:

№ - 35
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1184 *23 հոկտեմբերի 1881 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնողն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Աղէքսանդրապոլու

Ի կառավարութեանս լուան զեկուցումն Հոգևոր Կառավարութիւնս ի կատարումն առաջադրութեան Տնտեսական Մասին Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի ի 10 յուլիսի ներկայ ամի N 1891, հրամանաւ ի 11 օգոստոսի համարաւ 863 յանձնեաց Անդամոց սորին Մարտիրոս քահանային Տէր-Պօղոսեան[59] փութալ անյապաղ ի վանս Հոռոմոսի և ի ներկայութեան վանահօր տեղւոյն Ստեփաննոս վարդապետի, օգնականի նորա և գիտակ անձանց ստուգել թէ՝ վանքն այն զո՞րչափ սեպհական և զանվիճելի վարելահողս ունի և զո՞րչափ խառն և վիճաւոր ընդ ժողովրդականաց, և յետ ճիշդ վերահսկողութեան կազմեալ զարձանագրութիւն զերևելոցն մատուցանել սմին, զորմէ ի նոյն թիւ ամսոյ N 864 ծանոյց յիշեալ վանահօրն և օգնականի նորա ի կանխագիտութիւն։ Ի կատարումն որոյ Մարտիրոս քահանայն Տէր-Պօղոսեան յայտարարութեամբ ի 1-ն ամսոյս ծանուցանէ կառավարութեանս այսպէս. «Ի կատարումն հրամանագրութեան Հոգևոր Ատենիդ ի 11 օգոստոսի համարաւ 863 փութացի գնալ ընդ Բարեշնորհ Փոխանորդի վիճակիս ի Սուրբ վանն Հոռոմոսի վասն ստուգելոյ առ տեղեան զորքանութիւն վիճելի և անվիճելի հողոյն պատկանելոյն այնր վանից և ահաւասիկ պատիւ համարիմ խոնարհաբար ծանուցանել դմին թէ՝ ընդ ձեռն բնակչաց Ղօշավանից և մերձակայ գիւղորէից գիտակ և ծերունի անձանց հաւաստի

աճրդախօսութեամբ յաղագս տալոյ զյիշատակեալ գետինն կապալաւ և օրինաւոր գրաւականաւ, և զհետևանացն յայտնել Սինոդիս և պահանջելով ի խնդրագործացն զերկուս 60 կոպէկանոց արքունի մարկայս ընդ փոյթ առաջի առնել Սինոդիս վասն մածուցանելոյ ի վրայ խնդրոյնսե (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 5 և շրջ.):

59 Մարտիրոս աւագ քահանայ Տէր-Պօղոսեան – ծնուել է 1838 թ.: 1864 թ. ձեռնադրուել է քահանայ: Ծառայել է Ալեքսանդրապոլի Ս. Աստուածածին եկեղեցում (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 353 շրջ.):

եղէ, զի վանքն Հոռոմոսի թէպէտ ի սկզբանէ անտի ի վաղեմնի ժամանակաց ունեցեալ է ընդ իւրով յատկական սեպհականութեամբ զմեծաքանակ հողս ոչ միայն յայնկոյս Ախուրեան գետոյն մինչ ցգագաթ լերինն Ալաճայ անուանեալ և լայնադիր ստորոտս նորին արևելահիւսիս կողմանցն, այլև յայսկոյս նոյն գետոյն, իսկ յետ ժամանակաց որոշման սահմանին ընդ մէջ տէրութեանցն Ռուսիոյ և Տաճկաստանի ընդ նոյն գետն Ախուրեան տիրելով միոյ կողման սեպհականութեանն վարեալ է զայն մեծաքանակ գետինն հոգատարութեամբ վանահօր ումեմն ի Տէր հանգուցեալ Յովհաննէս վարդապետի, որ պատճառս տնային անձեռնհասութեանն բերեալ է ի շրջակայ գիւղորէից զտասնիւ չափ գութանս և մշակեալ է զամենայն տարածութիւն սեպհականութեան գետնոյն, բայց յետ նորա համարեա՛ անտերունչ մնալով՝ այս և այն տիրեալ են, իսկ ներկայումս ունի վանքն Հոռոմոսի գեօթանասունաչափ օրավար վարելահողս խառն ընդ հողոյն գիւղականաց Ղօշավանից անվիճելի ընդ իւրով իսկական գործադրութեամբ և զհինգ հարիւրաչափ օրավարի ի ստորոտի Իչ-Թափայ անուանեալ բլրոց հարաւային կողման վիճելի հողս, որ եղեալ է սեպհականութիւն վանից, ուր երբեմն աստ և անդ, ըստ յարմարութեանն, մշակելով վանքն չէ բնաւ թոյլատրեալ ումեք մերձենալ, բայց ի վերջին ժամանակս առ ի չգոյէ բարեջան պաշտպանի՝ արօտատեղի է լեալ անասնոց տեղական ժողովրդոց, չ'հայելով յայն, զի դեռ ցայսօր չունին նոքա ըստ կանոնաց Օսմանեան Տէրութեան զհաստատուն կալուածաթերթս, այլ միայն բանիւ բերանոյ ասեն նոքա թէ՝ է արօտատեղի գեղջն իւրեանց, բայ յայսմանէ Տանուտէրն Ղօշավանից ի հարց ու փորձ լինելն իմ, ծանոյց թէ՝ յանցեալ ամս նաև քանի մի անձինք յիւրոց առաջնակարգ դրացեաց խնդրամատոյց եղեալ են Նահանգապետին Կարուց առ ի թոյլատրելոյ նոցա վերաբնակիլ ի նախնի բնակութիւնն յաւերակ գիւղն մերձ առ Բանկլիահմատ[60] գիւղն, սակայն ցայսօր մնայ անկատար և առանց պատասխանոյ, և եթէ հոգևոր իշխանութիւնն բարեհաճեսցի միջնորդ հանդիսանալ որոց հարկն է կամ հնարս հնարեալ ընդ ձեռն որոց արժան դատեսցէ յիւրոց ստորադրելոց վասն կատարման այդպիսւոյ խնդրագործութեան նոցին՝ յայն դէպս նոքա խոստանան ինքնայօժար կամօք, առանց ոևիցէ պահանջից ծախուց սեպհական «Քոչանս» անուանեալ կալուածագիրս իւրաքանչիւրոց քառասուն օրավար հողոյ յանձնեալ ի սեպհականութիւն վանից: Առ որ յարակցեալ պատշաճ դատիմ, նախ՝ թէ որպէս երևի ի բանից բնակչաց Ղօ-

60 Բեկլի-Ահմատ, Բանկլիահմատ, Բէկ-Մահմուտ, Բենկլիահմետ, Որմիզդ – գիւղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից 20-22 կմ արևմուտք: 19-րդ դարի վերջերին ունէր 858 հայ բնակիչ: Գիւղի եկեղեցին կառուցուել էր 1866 թ. և կոչուում էր Ս. Աստուածածին: Այստեղ պահուում էին 17-րդ դարի մի քանի ձեռագրեր: Բնակչութիւնը տեղահանուել է 1920 թ.:

շավանից և այլոց գիւղորէից՝ եթէ լինիցի ի վանս անդր քաղցրաբան, խոհեմ և գործունեայ հոգաւոր՝ կարէ յամենայն դէպս արդիւնաւորել ոչ միայն զքանակութիւն կալուածոց և մեծաքանակ արդեանց նորին, այլև բարեկարգել և վերանորոգել զամենայն աւերակս ի պարծանս և յօգուտ ազգի և եկեղեցւոյ։ Եւ երկրորդ՝ բաց ի վերոգրեալ վիճելի և անվիճելի հողոց՝ վանքն Հոռոմոսի ունի և զայլ կալուածս, այս է զաւերակս Տայլար և Ղուզլիճայ հանդերձ իւրեանց սահմանօք և զընդարձակ արդիւնաշատ պարտիզատեղի յեզր Ախուրեան գետոյն հանդէպ Ղէյղաճ գեղջ, որոց ամենից արդէն ստանայ վանքն այն զբաւականաչափ արդիւնս»։ Կարգաւորեցին՝ զվերոգրեալ բոլորագրութեամբ ամենախոնարհաբար յայտ առնել Լուսաւորչական Հայոց Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն։

Փոխանորդ վիճակին Աղէքսանդրապօլու՝ Յուսիկ վարդապետ Տէր-Մովսիսեան[61]

Անդամք կառավարութեան՝ Վրթանէս քահանայ Տէր-Գէորգեանց[62]
Քարտուղար՝ Ջանիբէկեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թթ. 36 և շրջ., 38, բնագիր, ձեռագիր:

---

61 Յուսիկ վարդապետ Մովսէսեան, յետագայում՝ արքեպիսկոպոս (20 մայիս 1853-1924) – 1866-1870 թթ. սովորել է Մայր Աթոռի Ժառանգաւորաց Դպրոցում, 1870 թ. ընդունել է հոգևոր կոչում և դարձել Ս. Էջմիածնի միաբանութեան անդամ: 1873 թ. ձեռնադրուել է սարկաւագ, իսկ 1876 թ.՝ կուսակրօն քահանայ: 1878 թ. մայիսի 18-ին Գէորգ Դ. Քերեսթէճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով Ս. Գայիանէի վանքում ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1870-81 թթ. վարել է Ժառանգաւորաց Դպրոցի կառավարչի և հայոց լեզուի ու կրօնագիտական առարկաների ուսուցչի պաշտօնները՝ միաժամանակ վարելով նաև այլ պաշտօններ Մայր Աթոռում: 1881 թ. նշանակուել է Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ: 1883-87 թթ. եղել է ‹‹Արարատ›› ամսագրի խմբագիր: 1888 թ. փետրուարին կարգուել է Կարսի վիճակի փոխանորդ, իսկ 1890 թ.՝ Վրաստանի եւ Իմերէթի թեմի Կոնսիստորիայի անդամ: Մայր Աթոռի Սինոդի հրամանով 1891 թ. նշանակուել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի Կոնսիստորիայի անդամ, 1895 թ.՝ նոյն թեմի ժամանակաւոր կառավարիչ: 1898 թ. յուլիսի 6-ին դարձել է Սինոդի անդամ: 1901 թ. օծուել է եպիսկոպոս: 1903 թ. ազատուել է Սինոդի անդամութիւնից և կարգուել Ս. Հռիփսիմէի վանքի վանահայր: 1905 թ. նշանակուել է Երևանի թեմի փոխթեմակալ՝ այդ պաշտօնում մնալով մինչև 1908 թուականը: Նոյն թուականի սեպտեմբերին հաստատուել է Սինոդի անդամ, իսկ 1909 թ.՝ ‹‹Արարատ›› ամսագրի խմբագիր: Մի շարք պատասխանատու պաշտօններ է վարել նաև Գէորգ Ե. Սուրէնեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրօք՝ մինչև 1920 թ., երբ տկարութեան պատճառով հրաժարուեց Սինոդի անդամութիւնից:

62 Վրթանէս քահանայ Տէր Գէորգեանց – ծնուել է 1832 թ.: 1865 թ. ապրիլի 25-ին Երևանի փոխթեմակալ Գրիգոր եպիսկոպոս Իսահակեանի կողմից ձեռնադրուել է քահանայ: Գէորգ Դ. կաթողիկոսի 1882 թ. նոյեմբերի 4-ի կոնդակով ստացել է քահանայական ոսկեզօծ լանջախաչ կրելու իրաւունք: 1885 թ. օգոստոսի 27-ին պարգևատրուել է մետաքսեայ ծաղկեայ կապտագոյն փիլոնով: Խրիմեան Հայրիկը 1896 թ. յուլիսի 6-ի կոնդակով նրան շնորհել է թաւշեայ գլխարկ կրելու իրաւունք (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 353 շրջ., ֆ. 56, ց. 14, գ. 175, թթ. 42-45,):

№ - 36
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՈՒ ԳԻՒՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՒԹԻՒՆ ՀԱՒԱՔԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1438 *11 դեկտեմբերի 1881 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Աղէքսանդրապօլու

Ի կառավարութեանս լուան նախ զհրաման Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ի 16-ն հոկտեմբերի ներկայ ամի համարաւ 2603, որով պատուիրէ ընդ փոյթ ստուգել առ տեղւոյն ընդ ձեռն միոյ յատուկ և հաւատարիմ անձին, թէ վանորայքն ի վիճակին Կարուց, այն է Հոռոմոսի և Պէշքիլիսու և այլքն զորքան սեպհական անվիճելի հող ունին, և ապա յատկացուցանելով վանորէիցն այնոցունց՝ իւրաքանչիւրոցն առանձին՝ զտասնական խալվար վարելահողս ի կառավարութիւն՝ զմնացեալսն յԱտենի Կառավարութեանս օրինաւոր աճրդախօսութեամբ տալ ցանկացողաց կապալաւ վեց ամեայ ժամանակաւ, նախապէս ստանալով յապահովութիւն կապալին զգրաւադրամս։ Եւ որպէս զի կապալադրամք լինիցին կանխավճար և զայնոսիկ դրամսն պահել յԱտենի սորին մինչ ցառանձին տնօրէնութիւն, իսկ զկռելի դաշնագիրս նախապէս առաջարկել ի նկատողութիւն Սինոդիդ ընդ աճրդախօսութեան թերթից և սպասել լուծման, իսկ վասն չունելոյ յեկեղեցիս գտեալս ընդ գործակալութեամբ Հոռոմոսի վանից որպէս զերեսփոխանս նոյնպէս և զժապաւինեալ մատեանս՝ պատուիրէ ամին, կարգել զերեսփոխանս ընտրութեամբ և յատուկ պատասխանատուութեամբ ծխականացն, շնորհելով նոցա զժապաւինեալ մատեանս վասն գրելոյ ի նոսին զմուտս և զծախս, նոյնպէս և տալ ծխական քահանայից զժապաւինեալ մատեանս առ ի արձանագրեալ ի նոսին զանուանս ծնելոց, պսակելոց և ննջեցելոց և ի վերջ ամեն ժողովեալ զայնս մատուցանել Կոնսիստորիային Երևանայ, ընդ նմին փոյթ ունել որքան կարելին է ի ձեռս բերել նաև չօտարացեալ ի ձեռս Նիֆճի որդի Համէի իննհարիւր օրավարաչափ հողս։ Եւ երկրորդ՝ զյայտարարութիւն վանահօրն Հոռոմոսի վանուց Ստեփաննոսի վարդապետի Շիրակունի ի 15 նոյեմբերի համարաւ 11, որով ծանուցանէ կառավարութեանս, թէ Նահանգապետն Կարուց պաշտօնապէս հրամայեալ է Գաւառապետին Շիրակայ պահանջել զդոկումենտս վասն հողոց Ղօշավանուց և Բէշքիլիսայի, բայց չունելով նորա ի նախորդաց զվաւերական թուղթ հաստատութեան՝ ձեռնարկեալ է պատրաստել զվկայագիրս ընդ ստորագրութեամբ բնակչաց Շիրակայ գիւղորէից, ուստի խնդրէ օգնական լինել ինքեան։ Տեղեկութիւն. Ի գործոց կառավարութեանս երևի, զի ըստ

յայտարարութեան Անդամոց սորին Մարտիրոս քահանայի Տէր-Պօղոսեան ի 1-ն հոկտեմբերի տարւոյս, որ վասն սահմանի վարելահողոյն վանիցն Հոռոմոսի, սոյնն յայտարար Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ի 23-ն հոկտեմբերի N 1184 պարտ ու պատշաճ տնօրէնութիւն, բայց տակաւին չէ ստացեալ սա զտեղեկութիւն զայսմանէ: Կարգաւորեցին, նախ՝ որովհետև Հոգևոր Կառավարութիւնս զհանգամանաց սահմանի վանիցն Հոռոմոսի յայտարարեալ Սինոդիդ սպասէ զվախճական տնօրէնութեան, զի առանց այնր սոյն սա դժուարանայ հետամուտ լինել կատարման վերոգրեալն յանձնարարութեան, վասն խնդրել ի Սինոդէդ բարեհաճիլ փութացուցանել զիւրն զարժանադատ տնօրէնութիւն: Եւ երրորդ՝ առաջարկել վանահօրն Հոռոմոսի վանուց Ստեփաննոսի վարդապետի, փութանակի կազմեալ հասուցանել կառավարութեանս զանուանական ցուցակ բոլոր ընդ տեսչութեամբ Հոռոմոսի վանուց եղեալ գիւղորէից, նշանակելով թէ ի քանի տանց բաղկանայ իւրաքանչիւր գիւղ, ո՞յք ի նոցանէ ունին զեկեղեցիս, քահանայս և զերեսփոխանս և յի՞նչ յատկապէս և ո՞յք ոչ, նոյնպէս և վանորէիցն, որպէս զի հնար լինիցի կառավարութեանս պատրաստել զհրամայեալ մատեանս և ձեռնարկանել պատշաճականն հոգացման յիւրումն բարեդէպ ժամանակի:

Փոխանորդ վիճակին Աղէքսանդրապօլու՝
Յուսիկ վարդապետ Տէր-Մովսիսեան
Անդամք կառավարութեան՝ Մարտիրոս քահանայ Տէր-Պօղոսեան
Վրթանէս քահանայ Տէր-Գէորգեանց
Քարտուղար՝ Կ. Ջանիբէկեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 37 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 37
ԿԱՐՍԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՔՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՑ ՀԱՅԵՐԻ ԿԱՐՍԻ ՄԱՐԶ ԳԱՂԹԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 118 *19 դեկտեմբերի 1881 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի

Ըստ գրութեան Սրբոյ Սինոդիդ, որ ի 24 յուլիսի տարւոյս ընդ համարաւ 1970, որ վասն թոյլատրելոյ Երևանի և Տփխեաց Նահանգաց Հայ բնակչացն գաղթել ի սահմանս Կարուց, ի պահպանութիւն ի նոսին գտանեցեալ վանորէից, եկեղեցեաց և այլ Հայկական յիշատակարանաց: Մեք քանիցս բերանացի և ապա Սրբոյ Սինոդիդ, դիմեցաք առ Բարձր Նահանգապետն տեղւոյս, հանդերձ ցուցակաւ աւերակ վանո-

րէից, եկեղեցեաց և գիւղորէից, յորս նոյնպէս գտանին աւերակ վանորայք և եկեղեցիք, խնդրելով առնել գործադրութիւն ըստ իմաստի գրութեան Սրբոյ Սինոդիդ, այլ Նորին Գերազանցութիւն Նահանգապետն տեղւոյս պատասխանի արար մեզ ըստ օրինակի ներփակեալ նամակիս, զոր արժանի համարեցանք ընդօրինակելով ուղղել առ Սինոդդ ի գիտութիւն և ի նոր տնօրէնութիւն[63]*։*

Առաջորդ Կարս և Պաթում Նահանգաց Գրիգորիս
եպիսկոպոս Աղուանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թ. 10, ինքնագիր:

№ - 38
ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲԵՂԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԵՒ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՄԵՆԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 1 *28 մայիսի 1882 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի ի վանահօրէ Հոռոմոսի վանուց, ի Գործակալէ Շիրակայ և ի Գործակցէ նորին
Յայտարարութիւն

Համաձայն հրամանագրութեան դորին ի 22 ապրիլի անցելոյ համարաւ 1070 և 1071[64]*, ստացեալ ընդ ձեռն անդամոց Հոգևոր կառավարութեանն Հայոց Աղէքսանդրապօլու ի Բարեշնորհ Ստեփաննոս Աբեղայէ Շիրակունւոյ և ի Գործակցէ նորին Աղէքսանդր քահանայէ Ամատունւոյ զամենայն ներքին և արտաքին կայս վանիցն Հոռոմոսի նոյնպէս և զմատեանս Գործակալութեան կողմանցն՝ մտաք ի վարումն հրամայեալ պաշտամանցն։*

63 1882 թ. փետրուարի 19-ին Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց. «Ծանուցանել Կառավարչի Հոգևոր գործոց Նահանգաց Ղարսայ և Բաթումայ կողմանց Գրիգորիս եպիսկոպոսն, թէ զմիջնորդութիւն Սինոդիս, որ յաղագս գալոյ ոմանց ի Հայազգի բնակչաց զգետինս, որպէս ունի տեսանել ի պատասխանագրութենէ Գլխաւոր Հրամանատարի Կովկասու յետաձգեալ է զորոշումն որքանութեամբ ազատ գետնոց ի Նահանգին Ղարսայ, որ ունեցի լինել յետ վերջաւորելոյ գաղթականութեան ի Տաճկաստան տեղական բնակչաց, ուստի և պարտի սպասել վախճանական տնօրէնութեան ի կողմանէ պատշաճական իշխանութեան ընդ այսմ առարկայի այնու, զի նա փոյթ կալցի հետ և մտել աչալրջութեամբ և որ ինչ տնօրինեսցի հետևաբար ի մասին գաղթելոյ բնակչաց տեղւոյն ի Տաճկաստան և որոշելոյ յետ այնր զորքանութեամբ ազատ գետնոց ի սահմանս Ղարսայ, յայտնեսցէ Սինոդիս ի յետագայ տնօրէնութիւնե (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թթ. 12-13):

64 Այս գրութեամբ Սինոդը Յովսէփ աւագ քահանային նշանակել է Հոռոմոսի վանահօր օգնական և Ախուրեան գետի արևմտեան կողմի գործակալ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 57):

Զորմէ ծանուցեալ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի՝ պատիւ ունեմք յայտ առնել դմին, նախ՝ մենաստանն Հոռոմոսի զուրկ է ո՛չ միայն յօրական պարենէ ի սնունդ կեցութեան վանահօրն և կարևոր մշակաց, այլև յայլոց երկրագործական և տնտեսական պիտոյից, նոյնպէս յեկեղեցական զարդուց, անօթեղէնաց և սպասուց, զի ի շարս սոցին գտանին միայն մի սկիհ և երկու արծաթեայ խաչք՝ մասամբ կենաց փայտի և Սրբոյն Յովհաննու Կարապետի, մանաւանդ թէ ցուցակագրեալքն և յանձնեալքն են հնոտիք, կիսամաշք և մեծաւ մասամբ անպիտանք, որպէս կարէ հաւաստի առնել կազմեալ և մատուցանելի դմին ցուցակն։ Երկրորդ՝ բացի քայքայմանէ հնաշէն եկեղեցեաց և այլ շինուածոց վանիցն՝ միւս սենեակք և գոմանոցք կամ յարդանոց ի պարսպի ի հարաւային և յարևմտեան կողմանս վանիցն, գտանին ի խարխուլ և յանշուք դրութեան առանց լուսամտից, յատակամածի, ծեփի և ոմանք առանց դրանց, որք և պահանջեն զշուտափոյթ հոգացողութիւն հանդերձ բաւականաչափ ծախուք։ Երրորդ՝ չի՛ք բնաւ տեղեկութիւն վասն որքանութեան և որոշման սահմանաց վանքապատկան անշարժ կալուածոց, արտօրէից, խոտատեղեաց և արօտատեղեաց։ Այս ցաւալի հանգամանք և գլխաւորապէս կարեկցութեան արժանի առարկայ պահանջէ զգօրեղ հոգատարութիւն, քանզի անցանելով արդէն ի վերայ՝ յետ վերջին պատերազմական իրողութեանց՝ սահմանեալ ժամանակակէտի, առաւել ևս պաշարեալնէ ծանրագոյն դժուարութեամբք, մինչ զի և յանկարելեաց սակի թուի ներմուծեալ, մանաւանդ զի հոգացողութիւնս այս պահանջէ յատկապէս ո՛չ միայն զանձնազոհութիւն և զընդունակութիւն, այլև զպէտս անխնայ ծախուց, ուրեմն և արդարացի կշռադատութեամբ հարկաւորք բարձրաստիճան ոք ի վարումն յարուցեալ վիճմանց, զի Ստեփաննոս Աբեղայն խստապարանոց բնաւորութեամբ իւրով շարժեալ է զանբարեմտութիւն բազմաց առ մենաստանն և բազումք դժկամակ գտանին առ արդարասիրութեանն ձեռնտուութիւն, իսկ մեզ երկոցունցս, որ ընկճեալս եմք ընդ կառավարութեամբ առանձին առանձին վանորէից, խծկունեանցն ասեմք և Հառիճայինն, ծանր է միանգամայն ընդ այսու բազմազբաղ բեռամբ ևս ընկճիլ։ Զորրորդ՝ վանից Հոռոմոսի հարկաւոր են ընդ փոյթ երկու ժապաւինեալ տումարք, մինն վասն գրելոյ ի նմին զմուտս և զծախս վանիցն և միւսն վասն արձանագրելոյ զյօժարակամ նուիրատուութիւնս ջերմեռանդ այցելուաց, ուրեմն ի խոյս ապագայ պատասխանատուութեանց թո՛ղ բարեհաճեսցի Սրբազան Ատեանդ շնորհել մեզ զայնպիսիս ի գործադրութիւն։

Վանահայր Հոռոմոսի վանուց՝ Յարութիւն Աբեղայ Մանուկեան
Գործակից Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 51 և շրջ., բնագիր, ձեռագիր։

№ - 39
ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Դ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՇԷՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԽՆԱՅԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 3 *4 յունիսի 1882 թ.*
Ս. Էջմիածին

Նորին Վեհափառութեան
Սրբազնակատար Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Ծայրագոյն
Պատրիարքի Գերագահ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Տեառն Տեառն
Գէորգայ Դ.-ի
Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց

Յայտարարութիւն

Ի լինելն իմ աստ ի Մայր Աթոռ ստացայ յԱղէքսանդրապօլ Քաղաքէ զճիշտ տեղեկութիւն, թէ արդէն տնօրէնութեամբ Նահանգապետին կարուց նշանակեալ է արքունի երկրաչափ, վասն չափելոյ զգետինս նորանուաճ երկրին և թէ նոյն իսկ երկրաչափին զարդիս սկզբնաւորելոցն է զգործողութիւնս իւր յԱլաճոյ անուանեալ լեռնէն, ընդ որոյ արևելեան և արևմտեան ստորոտքովք գտանին վանորայք Հոռոմոսի և Խծկոնեաց նոյնպէս և վանքապատկան հողային կալուածք նոցին, Անուոյ քաղաքի և այլ սրբատեղեաց։

Իսկ որովհետև ի նախընթաց յայտարարութեանց իմոց մատուցեալոց Սինոդին յայտնի է արդէն, զի մենաստանն Հոռոմոսի ի ներկայումս զուրկ է բոլորովիմբ ո՛չ միայն ի միօրեայ կենսական պարենէ առ սնունդ մշակաց, նաև յայլ միջոցաց, որք վերաբերին հատուցման առ որոշումն վանքապատկան կալուածոց և սահմանաց նոցին և այն յայսմ դառն և ամենակարևոր ճգնաժամու, ոյր սակս ամենանուաստաբար ծանուցեալ վեհափառ Տէրութեան Ձերում վստահանամ ամենահպատակօրէն խնդրել զծայրագոյն բարեհաճութիւն Ձեր զայսմանէ, զի մի՛ ընդ յառաջ եղեալ դժուարութեան ի պէտս կարևոր ծախուց և հնարից, թերի գտայց յարժանաւորն հոգացողութեան ամենավսեմ առարկայիս, որ յայսմ հետէ դարաւոր ժամանակօք պիտանի հանդիսանասցէ ազգի և եկեղեցւոյ ի մշտնջենաւոր Առաքելս ժառանգ Գահակալիդ Մայր Աթոռոյ Սուրբ Էջմիածնի։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

Մակագրութիւն. *Յանձնեմք Սինոդի առնուլ յուշադրութիւն։*
Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 40
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽԾԿՈՆՔԻ (ԲԷՇՔԻԼԻՍԱՅԻ) ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԱՐՕՏԱՏԵՂԻՆ ՎԱՐՁՈՎ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4 օգոստոսի 1882 թ.

Կապակցագիր

Ի 1882 ամի, յամսեանն օգոստոսի 4 օրն մեք ի ներքոյ սորին ստորագրեալ բնակիչք Աղէքսանդրապօլ քաղաքի Ստեփան Կուրղինեան, Յարութիւն Եղիայեան և Մկոյ Դանիէլեանց Տիկորցի բաղկացուցաք զայս կապակցագիր ընդ վանահօր Բէշքիլիսու վանից Հայոց Յարութիւն վարդապետի Մանուկեան և օգնական նորին Յովսէփ աւագ քահանայի Կոստանեանց յայսմ թէ՝ զպատկանեալ վերոյիշեալ վանուցն արօտատեղին, որ գտանի ի հիւսիս արևելեան կոյս ի վերայ բարձրավանդակի ի սահմանս յայնոսիկ, զոր վանահայրն այն ցոյց ետ մեզ ի ներկայութեան հրաւիրեալ ի շրջակայ գիւղորէից ականատեսաց, վկայից և վարձակալաց, որք ժամանակօք յառաջ վարձեալ էին զարօտատեղիս նոյն Բէշքիլիսու վանից, ըստ այսմ ի ներքոյ ստորագրեալ վարձակալքս սովին պարտաւոր եմք կատարել զհետևեալ պայմանս։ 1. Կանխիկ պարտ եմք վճարել վանուցն այժմ և եթ զմի հարիւ րուբլիս արծաթոյ։ 2. Նորոգեալ զկարկատանս գոմոց գտեալս ի մերմէ սեպհականութենէ առանց զմաանակցութիւն վանուցն պահանջելոյ։ 3. Եթէ կարևոր լիցի՝ զմի այլ սենեակ կառուցանելոց եմք ի վերայ սեպհական հողոյն վանից, որ մնալոց է ի սեպհականութիւն նոյն վանից և մեք չունեմք իրաւունս պահանջել զարարեալ ի մէնջ ծախսն ի վանուցն կամ քանդել զայն շինութիւն, այլապէս վճարելոց եմք վանից զմի հարիւր րուբլի առանց յետս ստանալոյ։ 4. Յիշեալ վանահայր Մանուկեանն ունի իրաւունս տալ արածեցուցանել ձրիաբար զանասնեղէնս վանուցն ի վերայ վարձեալ ի մէնջ արօտատեղւոյ, եթէ կարիք վանուցն պահանջեսցեն զայն։ 5. Ժամանակամիջոց սոյն պայմանագրիս անորոշ մնասցէ, ըստ որում կախեալ է զհանգամանաց ապագայ ձմրան, հետևաբար տուեալ է մեզ իրաւունք յայնժամ միայն վերջացեալ համարին՝ յորժամ առաջիկայ ձմրան ձիւնապատեսցի և անկար լիցի ճարակեալ զանասնեղէնս։ 6. Ունելով մեր վարձու զայս արօտատեղի նպատակաւ շահաստացութեան, պարտաւոր եմք մեք մշտապէս պահպանել զսեպհականութիւն վանուցն և ոչ երբէք թոյլատրել զայնպիսի գործողութիւնս և զինքնագլուխ վարմունս, որովք տեղի տացուք վնասակրութեան վանքապատկան սեպհականութեան և իրաւանց։ 7. Ի վերայ սոյն արօտատեղւոյ կարեմք թոյլ տալ ի ճարակ, բաց յանասնոց մերոց՝ և այլոց, միայն նախընթաց գիտութեամբ և համութեամբ վանահօր և մեր, ապա թէ ո՛չ, վանահայրն ունի զիրաւունս բողոքել և ընդ պատասխանատուութեամբ ենթարկել զմեզ վասն թոյլատրելոյ մեր ինքնագլուխ մուծանելն յայն արօտատեղի զորոյ և իցէ անասնե-

ղէնս: Սա որ և իսկական ստորագրութեամբ մերովք հաստատեմք[65]:
Յարութիւն վարդապետ վանահայր Հոռոմոսի
Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց
Յարութիւն Եղիայեան
Մկրտիչ Յովակիմեան Դանիէլեանց
Օհաննէս Պետրոսեանս վկայեմ
Սիմօն Պետրոսեանս վկայեմ
Աւագ Թաթայեանս վկայեմ
Եւ վասն անգրագիտութեան երկուց անձ խնդրանօք
ես ստորագրեցի Օհաննէս Գալուստեանս
Ծխատէր Տիկորու Յօհաննէս քահանայ Տէր-Ղազարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թթ. 26-27, բնագիր, ձեռագիր:

№ - 41
ՆԱԽԻՋԵՒԱՆ, ԾՊՆԻ, ՏԵԿՈՐ, ՄԱԽՐԱԿ, ԲՈՒԻԿ ԳԻՒՂԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆ-ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԽԾԿՈՆԻՔ ՎԱՆՔԸ ՀԱՅԵՐԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[1882 թ.]

Վանքի սեպհականութեան իրաւունքը

Շատ դարերէ ի վեր Խծկոնից կամ Բէշ-Քիլիսա ըսուած վանքը Օսմանեան տէրութենէն տրուած էր Հայոց, բայց քիւրտերը գալով նոյն վանքը մեծ բազմութիւնով առին իրաւունքը մեր ձեռքէն, որով այս անգամին մի խնդիրք գրեցինք Պօլիս Բարձր կառավարութեան, ուրկից մի հրամանագիր եկաւ, իբր ազատութիւն նոյն վանքին, Հայոց տրուելու մասին և թէ մինչև հիմայ ունինք մեր քով թէ՛ տէրութեան տրուած խնդիրքը և թէ՛ ազատութեան հրամանագիրը:

Այս հրամանագրի զօրութեամբ եպիսկոպոսի հրամանաւ ղրկուեցաւ վանքը Տիկորու Տէր Յովհաննէս քահանայն[66] *իբրև վանահայր, բայց ինչպէս որ յայտնի է քրդաց արիւնռուշտ ոխակալութիւնը, այս անգամին աւելի մեծ բազմութիւնով կը յարձակին վանքի վրայ, դուռը կը խորտակին, թէ՛ եկեղեցւոյն զարդերը և թէ՛ վանքի մէջ եղած ամեն գոյքը կողոպտելով, կը քաշուին և քահանային բռնելով շատ նեղութին կուտան և մինչև անգամ գլխատելու կընին, որը որ զանազան միջոցներով կարողացաւ ազատիլ, միանգամայն պատերազմը վրայ գալով չկարողացանք տէրութենէն պահանջիլ նոյն քրդաց կողոպտած գոյքը: Պատերազմէն վերջը երբ որ Ռուսաց բարեխնամ տէրութիւնը տիրեց այս վանքին, քուրդերը դարձեալ իրենց առաջուայ վայրագու-*

65 Փաստաթուղթը երկլեզուեայ է՝ հայերէն և ռուսերէն:

66 Յովհաննէս քահանայ Երիցեան – ծնուել է 1837 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1871 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. – 16):

թիւնը և զօրութիւնը յառաջ կը տանէին և շատ նեղութիւն կուտային, ասոր համար կրկին անգամ խնդրուեցաւ ազգը Պոպկով Գեներալէն, որ նոյն վանքը վերադարձնէ ազգին, որն որ անմիջապէս ղրկեց վանքը իր պամոշնիկը[67] *և Ալեշավին քննութիւն առնելու համար, և որոնք շրջակայ 8 գիւղի իշխանները, մաճլիսը*[68] *թէ՛ քուրդ և թէ՛ հայ կանչեց վանքը և քննութիւն առնելով, որ վաղուց հետէ այս վանքը Հայոց սեպհականութիւնն էր և թէ հարցուց նոյն վանքին տիրապետող քրդաց, - դուք ինչո՞վ այստեղ կը տիրէիք, նոքա ալ պատասխանեցին - թափիներով, պամոշնիկը պահանջեց թափիները, բայց նոքա չունենալով, 11 օր ժամանակաւ պայման դրաւ նոցա հետ որ բերեն թափիները, սկսաւ փողի զօրութիւնով թափիներ հաստատել։ Տէրութիւնն ալ տեղեկանալով այս եղելութեան ամենևին չընդունեց, և վանքը իր ամբողջ սահմաններով վերադարձուց ազգին սեպհականութիւն, որ ժամանակէն Վաղարշապատու Սինոդէն, սկսաւ վանահայր նստիլ վանքին մէջ և որ կը նստի մինչև ցայսօր Վեհափառ Կաթողիկոսի հրամանաւ։*

Այս եղելութեան հաստատութեանը վկայ եմք և կստորագրեմք բոլոր նահանգի հասարակութիւնքս թէ՛ տաճիկ և թէ՛ հայ։

Նախիջևան գիւղի հասարակութիւնքս - Տանուտէր Մկրտիչ Յոհաննէսով, Սուդեայ[69] *Համպօ Խաչատուրով, Օվակ Ֆէօհրատով, Բարսեղ Մխիթարով, Կլավին Պօղոս Սուազեանց Պօղոսեան*

Ծպնի գիւղի հասարակութիւնքս - Տանուտէր Դաւիթ Յոհաննէսով, Առաքել Ատոյով, Բարսեղ Քոչարով, Յոհաննէս Գաբրիէլով, Կլավին Նահապետ Արութով

Զոչուայ հասարակութիւնքս - Տանուտէր Արութ Ակոբով, Պօղոս Ղևոնդով, Գասպար Պետրոսով, Կլավին Ղևոնդ Դանիէլով

Տիկոռ գիւղի հասարակութիւնքս - Տանուտէր Խաչոյ Ակոբով, Մկրտիչ Դանիէլով, Ատոյ Խաչոյով, Իսմայէլ Ղադօ օղլի, Խալիլ Եպօ օղլի։

Մաւրակ գիւղի հասարակութիւնքս - Տանուտէր Արութ Մելքոնով, Սուդեայ Ատոյ Թորոսով, Ատոյ Դաւիթով, Պապի Սագոյով, Մովսէս Մելքոնով

Բուիկ գիւղի հասարակութիւնքս - Ակոյ Թումոյով, Սուդեայ Մրկոյ Պետրոսով, Մինաս Մարտիրոսով

Քահանայք ամբողջ նահանգի
Բարեկարգ Ծպնուայ Տէր Սարգիս Տ. Արիստակէսեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 25 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

67 Պամոշնիկ (ռուսերէն՝ помощник) – օգնական:

68 Մաճլիս, մէջլիս – ժողով, հրաւէրք:

69 Սուդեայ (ռուսերէն՝ судья) – դատաւոր:

№ - 42
ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՏԵԿՈՂ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 27 *3 մարտի 1883 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի գործակցէ վանահօր Հոռոմոսի վանուց և գործակալի Շիրակայ
Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց
Յայտարարութիւն

Ի Տիկոր գեղջ գործակալութեան Հոռոմոսի՝ գտանի զարմանաշէն հինաւուրց գմբեթազարդ եկեղեցի, որ իբրև զիւր վաղժամանակեայ սեպհականութիւն՝ տիրէր անշարժ կալուածոց դեռ ի ժամանակս Տէրութեան Օսմանեան, իսկ ի ներկայումս ծխատէր Յովհաննէս քահանայն տեղւոյն յայտնեաց ինձ թէ՝ համադրացիք իւրեանց մահմետականք ջանան յափշտակել յեկեղեցւոյն զգետինն այն և զրկել զեկեղեցին ի սեփականութենէ իւրմէ, և թէ չափ ու սահմանք գետնոյն այնորիկ հանդերձ սահմանագիծ որոշմամբ արձանագրեալք են համաձայն տնօրէնութեան հանգուցեալ Կաթուղիկոսի ընդ ձեռն Բարձրապատիւ Կիւրեղ վարդապետի Սրապեան[70], յորմէ պարզ ի պարզոյ նշմարին ծանօթութիւնք հարկաւորելիք պաշտպանութեան կալուածոյն այնորիկ։

Զայսմանէ ծանուցեալ Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի, ի լրումն յայտարարութեան իմոյ ի 13-ն յունուարի տարւոյս համարաւ 5, պատիւ ունիմ ամենախոնարհաբար խնդրել զբարեհաճութիւն Դորին, յաղագս փութացանելոյ առ իս վաւերական պատճէն վերոգրեալ արձանագրութեան, որ ամենակարևոր համարի ո՛չ միայն ի վերտողեալ՝ այլև յայլ ամենայն կարևոր հանգամանս յայնկոյս արևմտեան կողման Շիրակայ, մանաւանդ ի խնդիրս կալուածականս։ Արձանագրութիւնն այն պարտի գտանել կամ ի գործս հանգուցեալ Հայրապետի և կամ առ նոյն ինքն Կիւրեղ վարդապետն, ուստի կրկնելով զայսմանէ զթախանձանս իմ՝սպասեմ փութաշտապ տնօրէնութեան Դորին։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ.56, ց.4, գ.3038, թ.3, բնագիր, ձեռագիր:

---

70 Կիւրեղ վարդապետ (ապա՝ եպիսկոպոս) Սրապեան – ծնուել է 1844 թ. Կեյվէ գիւղաքաղաքում: Կրթութիւնը ստացել է տեղի հայկական դպրոցում, ապա՝ Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցում: 1868 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները և 1868-1872 թթ. հոգևորականի և ուսուցչի պաշտօններ է վարել Երուսաղէմում: 1875-ին Գէորգ Դ. Կաթողիկոսի հրաւէրով ընդունուել է Մայր Աթոռի միաբանութեան մէջ և վարել Գէորգեան ճեմարանում մաթեմատիկայի ուսուցչի պաշտօն: 1880—1881 թթ. Ճեմարանում դասաւանդել է նաև հայոց լեզու: Նա հոգևոր և մանկավարժական գործունէութեանն զուգընթաց զբաղուել է նաև հայագիտութեամբ: Թողել է մանկավարժական, լեզուաբանական, բարոյախօսական, ճանապարհորդական և այլ բնոյթի աշխատութիւններ: Մահացել է 1895 թ., Նոր Նախիջևանում:

№ - 43
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՍՏԱՑՈՒՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 28 *3 մարտի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Ս. Էջմիածնի
Ի գործակցէ վանահօր Հոռոմոսիմ վանուց և գործակալի
Արևմտեան Շիրակայ
Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց
Յայտարարութիւն

Այժմեան դրութիւն Հոռոմոսին վանուց պահանջէ զանհրաժեշտ հոգացողութիւնս՝ զի մի՛ իսպառ վտանգաւորեսցի յամենայն կողմանց և կամ փոքր ի շատէ յեղաշրջեսցի ի վիճակ բարեկարգութեան։ Այդոքիկ հոգացողութիւնք կարօտին ո՛չ սակաւ ծախուց և են հետևեալքն։

Նախ՝ ի տեղիս տեղիս կարկատանք և վերանորոգութիւնք սրբազան տաճարացն, որք եթէ ընդ փոյթ ո՛չ արժանասցին խնամոց հետզհետէ ծանրասցին և գուցէ վտանգ կործանման ընդ յառաջ գայցէ, նոյնպէս և շրջապատեալ շինութիւնք սենեկացն, բնակարանաց, գոմոց և այլն, որք գտանին համարեա ի կիսաւեր վիճակի։

Երկրորդ՝ վիճմունք կալուածական սեփականութեանց, որք յամենայն դէպս, ի նշանաւորս և յաննշանս, եթէ հնար է կարեն զերծ լինել ի սպառնալեաց կորստեան ընդ ձեռն կարևոր ծախուց։

Երրորդ՝ երկրագործական պիտոյք վանիցն, թէ ի կողմանէ գործեաց և պարագայից և թէ մշակաց և անասնեղէնաց, որք որքան զօրասցին՝ այնքան ընդարձակեսցի միջոց վանից տարածել և զօրացուցանել զիրաւունս հողային սեփականութեան և մասամբ արդիւնաբեր կացուսցի մենաստանն ի բարձումն թերութեանցն։

Չորրորդ՝ ներքին բարեզարդութիւն սրբազան տաճարացն, որք բոլորովիմբ զուրկ են ո՛չ միայն ի կարևոր շքեղութենէ՝ այլև յամենապիտանին զգեստաց և անօթաց և այլն։

Հինգերորդ՝ նորոգութիւն դարաւոր ջրանցի սեփականութեան վանից, որ քան զամենայն օգտաւէտագոյն դատի, զի այնու իսկ կարէ մենաստանն շահել զմեծամեծ բարիս արդեանց ի նպաստ վանիցն և ուսումնազուրկ ժողովրդոց գործակալութեանն Հոռոմոսի, իսկ նորոգութիւնն այն համաձայն բարեհաճութեան Դորին, որպէս յայտէ ի հրամանէն յ31 յունուարի տարւոյս համարաւ 282, սկզբնաւորելոցնէ ծախուք վանիցն յառաջիկայ ամռան։

Եւ վեցերորդ՝ մասնաւոր կարիք ըստ պաշտօնավարութեանցն

գործակալութեան Հոռոմոսի հարկաւորելիք առ անթերի հաւաքումն և հոգացումն զանազան Աթոռապատկան արդեանց, որք յանկանոն վարչութենէ անցելոց ամաց դեռ ենթադրեն ծանր դժուարութեանց։

Այդոքիկ ամենայն հոգացութիւնք հային միայն ի նպաստ արդեանց վանիցն Հոռոմոսի, որք են ի ջրաղացէ՝ որ ի տարին հասուցանէ վանիցն զքսան և հինգ սօմար[71] արմտիս ցորեան և գարի, ի բոստանատեղւոյ յորմէ ստանայ մենաստանն զչորս հարիւր րուբլիս, ի վարուցանից պայմանաւորեալ մարաբայից[72] ի տարին տասն և հինգ սօմար արմտիս և յուխտաւորաց կամ յայցելուաց և կամ ի մոմավաճառութենէ, եթէ իցէ ժրաջան ոք հսկող և անընդհատ հոգացող, ի տարին մինչ ցհարիւր րուբլիս։ Բաց յայդ ցանէ մնայ միմիայն Հոռոմոսին պատկանեալ կապալարեալ հողն Տայլարու, որպէս յայտ դմին ի յայտարարութենէ իմմէ ի 13 նոյն յունուարի համարաւ 8, որոյ կապալադրամք արդէն հասանելոց են ի Սինոդդ Սրբոյ էջմիածնի համաձայն հրամանագրութեան Դորին յ31 նոյն ամսոյ համարաւ 279 ի գործադրութիւն առաջիկայ փաստաբանական կարեաց կալուածոց վանից։

Ի ներկայս Սինոդդ Սրբոյ էջմիածնի հրամանաւ ի 26 փետրուարի անցելոյ համարաւ 657, բարեհաճեցաւ պատուիրել ի պէտս սննդեան և կառավարութեան վանուցն Հոռոմոսի յատկացուցանել վանահօրն Սարկաւագ Գասպարայ զայն ամենայն վերոգրեալ արդիւնս, ուրեմն յատկացուցմամբ վանահօրն այն ամենայն արդեանց, յատկանալոց են նմա և այն ամենայն մի առ մի նկարագրեալ հոգացողութիւնք, ըստ որում չմնայ այլևս միջոց գործադրելոյ յայնս և յայլ անակնկալ պիտոյս ծախուց։

Այր սակս պարտաւորութիւն ինձ համարեսցի այժմէն ծանուցանելով զվերոգրելոցն Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ամենախոնարհաբար խնդրել զիշխանականն տնօրէնութիւն Դորին ի յապագայ ձեռնարկութիւն և ի հրահանգութիւն, որպէս զի անսայթաք կարացից վարել զպարտաւորութիւն իմ առ ամենատեսակ հոգատարութիւնս վանիցն և ազատ կացից ի պատասխանատուութենէ, առ որ սպասեմ Բարձրագոյն Բարեհաճութեան Դորին առ պարզի պարզոյ որոշումն իրաւանց մատակարարութեան արդեանց այնոցունց։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թթ. 30 և շրջ., 32, բնագիր, ձեռագիր:

---

71 Սօմար – ընդեղէնների չափ, մօտ երեք ցենտներ տարողութեամբ:

72 Մարաբա, միրիպա – Թուրքիայում հողային յարաբերութեան մէջ այն ձևն է, երբ հողից կամ դրամագլխից զուրկ գիւղացին մի հարուստից վերցնում է հող մշակելու, կամ դրամ կամ սերմացու, և նախապէս արած պայմանի համեմատ իր արդիւնքի որոշ մասը տալիս է փոխատուին: Մարաբա կոչւում են թէ մշակող գիւղացին և թէ հողատէր կամ դրամատէր աղան:

№ - 44
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՉԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՆԻՒԹԱԿԱՆ ՍՂՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԿԱՐՍ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱԿՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Թիւ 98 *28 մարտի 1883 թ.*
Երևան

Ի Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի պաշտօնակատարէ թեմական վերատեսչին Երևանայ և Կարուց
Յայտարարութիւն

Առաջնորդ վիճակին Կարուց Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց առ հարցումն իմ զվիճակաց երկսեռ դպրոցաց Կարս քաղաքի գրէ առ իս զհետևեալն. «Կարսի դպրոցների տխրալի լուրերի մասին պատասխանում ենք, որ նոքա ճշմարտապէս վտանգաւոր և հոգևարք դրութեան մէջ են նիւթական վիճակի պակասութեան պատճառով, որովհետև նոքա ոչ մի եկամտի աղբիւր չունեն, նոյնպէս և ոչ տեղական եկեղեցին, որ կարողանայ օգնել նրանց, մինչև այսօր նրանք կառավարւում էին՝ճիշտ ասելով «բօշայութիւնով»: Այդօրինակ ձևին անպատճառ մի օր վերջ կուգար, որ ահա հասել է: Աշակերտք և անհրաժեշտ պէտքերը հետզհետէ աւելանում են, իսկ կառավարելու միջոցները՝ պակասում: Տեղական ժողովուրդը, գովեստիւք ասելով, անտարբեր չէ դէպի իւր ազգային դպրոցները, բայց դժբաղտաբար իւր նիւթական վիճակը չի համապատասխանում իւր զգացմունքին, որովհետև բոլորեքեան զանազան քաղաքներից գաղթած աղքատ ժողովուրդներ են: Եթէ սկզբում օտար քաղաքացիք չօգնեն և կամ ուրիշ միջոց չը լինի տեղւոյս ուսումնարանների պահպանութեան համար, կը փակուեն նոքա: Բայց և կարսում գոնէ այժմու ձևով մի ուսումնարան չունենալը խիստ անպատուութիւն և վտանգաւոր է ազգիս»:

Ջայսմանէ խոնարհաբար յայտնել ծայրագոյն Աւետիդ նուիրական պարտականութիւն ինձ վարկանեմ՝ խնդրելով զկարևոր միջոցս փրկութեան և զառաջս առնելոյ գուժաբեր լրոյն փակման:

Մեծ է արդարև վտանգն և արժանի լրջախոհ և խորին ուշադրութեան:

Պերճ Պռօշեանց[73]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3082, թթ. 17 և շրջ., ինքնագիր:

[73] Պռօշեան Պերճ (Տէր-Առաքելեան Յովհաննէս Ստեփանի) (1837 թ., Աշտարակ – 1907 թ. Բաքու, թաղուած է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը): Նախնական կրթութիւնը ստացել է Աշտարակի ծխական դպրոցում. այնուհետև սովորել է Մուղնիի վանական (1849-52 թթ.), ապա՝ Երևանի արքունական դպրոցներում: 1856-ին աւարտել է Ներսիսեան դպրոցը: 1857-ին վերադարձել է Աշտարակ և նշանակուել ծխական դպրոցի տեսուչ: 1859 թ. Պռօշեանը մեկնել է Թիֆլիս, եղել է Ներսիսեան դպրոցի նախապատրաստական դասարանի ուսուցիչ: Մասնակցութիւն է ունեցել հայ պրոֆեսիոնալ

№ - 45
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՋԱՏԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18 ապրիլի 1883 թ.
Ղօշավանք

Բարձրապատիւ Հա՛յր,
Համբոյր սուրբ աջոյդ.

Կարելի է մեր Հոռոմոսի վանայ յանբաղդ վիճակն է միշտ, որ սորա նորա կամակայութեան էր ենթակայ մինչև ցայժմ, բայց մենք յուսադրուեցանք երբ լսեցինք որ Ձեր Սրբութեան վերահսկողութեանը յանձնուաւ, սակայն ցաւ է ասել որ միևնոյն խաղն է որ խաղւում է սուրբ մենաստանի վերայ: Վարդապետը վաղուց է չէ վերադարձել Բէշքիլիսուց, վանքն անտէր է, ծերունի Գրիգորը լոկ պահապան լինելով ինչ կդառնայ, հացերից մի մասն էլ առանց կուղբի[74] Տէր Մարտիրոս հայրը հորել տուեց, մի քանի օրից յետոյ կարելի է հացը փչանայ, երկու սօմար ցորեան էլ Տէր Մարտիրոսի զապիսկայով[75] Յովնան վարդապետին տուաք, նորան էլ արդէն Ղօզլիճայից հեռացրել է նաչալնիկը[76]:

Շատ ասելիքներ ունեմք ասելու, առ այժմ ակամայից լռում ենք՝ յուսալով որ Ձեր խոստման համաձայն շուտով կգաք վանք, հա՛, օրհասը մօտեցել է մեր վանքին, արդէն Ձեր աչքով տեսել էք խարխալեալ մասերը: Արդէն օրը մի քանի քար փլչելով եթէ մի օժանդակական ձեռք չհասնի, կարելի է տաճարը խոնարհուի, այդ նուիրական վայրը, մեր Հայ Ազգութեան կոթողը, եթէ, կներէք մեզ, Դուք թողած միւս պատճառները, կամուրճի վերայ էք մտածում:

Ուրեմն խնդրում ենք սոյն վերոյ գրեալ մեր ասած տխուր հանգամանքի վերայ ուշադրութիւն դարձնէք: Կրկնում ենք շուտով շտապել և վանք գալ, եթէ ոչ, մենք կստիպուինք ուրիշ միջոցների դիմել: Ջրաղացի պատն բլչել է, օգնող չկայ, փայտ չկայ, փող տուող չկայ, որ շինուի, կարելի է կարմունճակներն էլ տանեն:

Ձեր որդի՝ Յարութիւն Ջատիկեանց

թատրոնի ստեղծմանը, իգական դպրոցների հիմնադրմանը Թիֆլիսում (1861 թ.), այնուհետև՝ Շուշիում, Ագուլիսում, Աստրախանում և այլուր, մանկավարժութեամբ զբաղուել է Հայաստանի տարբեր վայրերում, հրատարակել դպրոցական կանոնադրութիւններ: 1879 թ. նշանակուել է Երևանի թեմի և Կարսի վիճակի հոգևոր դպրոցների տեսուչ: 1887 թ. վերադարձել է Թիֆլիս: Պերճ Պռոշեանը հայ դասական գրականութեան ականաւոր դէմքերից է, հեղինակ՝ մի շարք մնայուն գրական ստեղծագործութիւնների:

74 Կուղը – դարման կամ խոտ, որ ցորենի և գարու հողերի մէջ պատերն ի վեր ածում են՝ հացահատիկը պատերից անջրպետելու և խոնաւութիւն առնելուց պաշտպանելու համար:

75 Զապիսկա (ռուսերէն՝ записка) – երկտող, կարճ նամակ:

76 Նաչալնիկ (ռուսերէն՝ начальник) – պետ, վարիչ:

Յ. Գ. Վանքը արդէն վաթսուն քթոց[77] դարման պարտք է արել, կարելի է տասն էլ աւելանայ, չգիտեմ ով պիտի լինի հաշուատեսը։

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 11 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 46
ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱԳԱԾ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 41 *24 ապրիլի 1883 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց Յայտարարութիւն

Կարևէր ցաւ զգալով ի սիրտ իմ յարաբարդութենէ դժուարատանելի ծանրութեանց և զբաղմանցն, որք կուտակեալ են բարեհաճութեամբ Դորին յիմ վերայ ըստ մասին խնամակալելոյ կալուածական գործոցն յայսկոյս և յայնկոյս Շիրակայ, պաշտպանութեան վանորէից և բարեկարգութեան ընդարձակ գործակալութեան Հոռոմոսի և արդեանց նորին, միայնակ մաշիմս տիւ և գիշեր։ Այդ ամենայն են արդարս և դժուարաքիրտն տաժանմանց դեգերմունք յայսպիսում դառն ժամանակի զանազան անպաշտպանութեանց և անկանոն դրութեան գիւղորէից գործակալութեանն այնորիկ, յորս չիք համարեա գործունեայ և գրագէտ սրբազնագործ պաշտօնեայ ոք, զի գործադրեսցի յո և իցէ պիտոյս, ի վերայ այսր ամենայնի գուցէ հնար լինիցի ինձ մասնատրել իւրաքանչիւրոցն զկարելին վերահասութիւն և զգործողութիւն եթէ շնորհից էր Դոյնն զորքան և իցէ միջոց կատարմանն, զի ժրաջան քարտուղար ոք ռուսագէտ անկարող է անգամ նպաստել միայն արտագրութեանցն պատկանաւոր թղթոց և գործավարութեանն, նոյնպէս քանի սուրհանդակք դեռ անկարանան հասուցանել այսր և անդր զպիտոյս տեղեկաբերութեանն, թղթատարութեանց ոմանց հարկաւոր անձանց և այլն, յայսմ ամենայնէ խոյս տալ ինձ անհնար է, մինչդեռ փափագիմս հոգւով չափ այնոցունց ամենից հաստատութեանց որքան հնարէ և ի չկարելն իմ մորմոք վշտաց յառնէ ի սիրտ իմ, որպէս տեղեկագրութիւնն տանուտեառն Ղօշավանք գեղջ գործակալութեանն Հոռոմոսի ի 18-ն ամսոյս, զոր ի միասին ընդ այսմիկ յիսկականքն մատուցանելով Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի ի տես, ամենախոնարհաբար խնդրեմ արժանացուցանել իւրումն պարտուպատշաճն տնօրէնութեան և կարեկցութեան։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 10 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[77] Քթոց, կթոց – բարակ ճիւղերից հիւսած աման, կողով:

№ - 47
ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԻԼԱՆԼԻ ԳԻՒՂԻ ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԳԻՒՂԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՂՈՒՅՈՒՆՉՈՒՂ ԱՒԵՐԱԿ ԳԻՒՂՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿՈՒԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 42 *24 ապրիլի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի լուսատուչական Հայոց Սիւնողն Ս. էջմիածնի Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց

Յայտարարութիւն

Ստացեալ ընդ հրամանի Տնտեսական մասի Դորին ի 11-ն ամսոյս համարաւ 1385, զպատճէն գրութեան Պ. Գաւառապետի յայնկոյս Շիրակայ համարաւ 999 և հետամուտ եղեալ հանգամանացն և քաղեալ տեղեկութեանցն, երևեցան հետևեալքն. նախ՝ զի Նորին Գերազանցութիւնն համաձայն պահանջման Սինոդիդ չէ առաքեալ ի Դոյնն զվաւերական պատճէն վճռոյն Քինուորական Նահանգապետին Կարուց, որով թոյլատրի բնակչացն Իլանլի գեղջ գաղթել յաւերակն Ղուլյուճուխ, երկրորդ՝ արդարև Նորաշէն եկեղեցին կառուցեալ է ի վերայ որմոց հնաշէն քայքայեալ եկեղեցւոյն ի հնութեանցն Հայաստանի, սակայն առ այդ շինութիւն գործադրելով չընթացաս երկուց 1876-1877 ամաց զամենայն հասարակական աշխատանս իւրեանց վասն մշակութեան, կրելոյ քարանց և այլ նիւթեղէնաց, ծախսեալ են և ո՛չ սակաւ դրամս ի վարձ արհեստաւորաց, զանազան նիւթեղէնաց, նոյնպէս պարսպապատման շրջապատի և այլ ներքին հոգացողութեան և բարեկարգութեան, մանաւանդ հանդիսի օծման սրբալոյս միւռոնաւ ձեռամբ Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց ի ներկայութեան բազմաթիւ հոգևորական և աշխարհական այցելուաց, այս ամենայն հոգացողութիւն ըստ ժամանակի սղութեանն հասանէր ի գումար չորս հազար րուբլեաց, զոր լրացուցեալ են ոչ անձնական աշխատանօք և նուիրատուութեամբ, այլև զոհաբերութեամբ այլոց քաղաքացեաց և գիւղական ջերմեռանդից, որք ցանկայինն, զի մի՛ հայազգիք կացցեն մնասցեն զուրկ քրիստոնէապարտն Աստուածպաշտութենէ, երրորդ՝ որպէս վկայէ Պ. Գաւառապետն ստիպաւոր պատճառ վերաբնակութեան հայազգեաց է ծագեալն ի մէջ նոցա և մահմեդական միաբնակչաց անդադար անբաւականութիւնն, ուրեմն եթէ հայազգիք ի սէր քրիստոնէական հաւատոյ և ո՛չ կործանման օծեալ եկեղեցւոյ, որ յետ բնակութեանն դառնալոց է բնակարան անասնոց և աղտեղութեանց, գտանիցէին զորքան և իցէ պաշտպանութիւն, անհնար էր նոցա յօժա-

րիլ ի վերաբնակութիւն, մինչդեռ յայտնի է, թէ քանի՛թշուառութեանց առիթ լինին դոյնանման գաղթականութիւնք, յաւէտ ևս վասն Իլանլեցւոց, որ ի 1876 ամի հազիւ ուրեմն թոյլտուութեամբ Տաճկական իշխանութեան մինչ ցպատերազմն հաստատեալ զնոր բնակութիւն անդէն այժմոյս ստիպեն ի հարկէ վերստին ենթարկել զինքեանս նորանոր աւերանաց, յորմէ կարէ յայտնի մակաբերել, թէ ցո՞ր աստիճան անտանելի լեալ են յաչս խաղաղասէր հայազգեաց կրեալ դառնութիւնք հարուածոց մահմեդականաց, չորրորդ՝ որպէս պատասխանեն բնակիչք Իլանլուայ, եթէ այժմոյս ևս արժանասցին արդարասէր պաշտպանութեան տեղական իշխանութեան ո՛չ ոք ի նոցանէ յօժարի գաղթել անտի ի սէր պահպանութեան Ս. Եկեղեցւոյ, որոյ քարինք, որպէս յայտնեն ինքեանք՝ պատուական են քան զոսկերս սուրբ և ըստ այնմ գերադաս համարի քան զամենայն գնահատութիւնս արժէից: Հինգերորդ՝ Իլանլի գեղջ մահմեդականք կամովին գաղթեալ են անտի ի ժամանակս Օսմանեան կառավարութեան ի Պարսկաստան, երբ վերջինն կամէր մուծանել ի նոսա զզինուորագրութիւն, ուրեմն նոքա ի միջոցի վերջին պատերազմին դարձեալ գաղտագողի վերադառնալով ի Պարսկաստանէ, չունէին զիրաւունս բռնանալ ի վերայ հայազգեաց և մինչ ցայն աստիճան, զի տիրասցին և նորակառոյց եկեղեցւոյն, հետզհետէ քայքայելով և շահաւետելով նիւթեղէնօքն, և վեցերորդ՝ աւերակն Ղույուճուխ պատկանելով վանից Հոռոմոսի իբրև նորին վաղ ժամանակեայ արօտատեղի է վիճելի և թէպէտ ըստ մասին ըստ այսմիկ չիք ի վանս գրաւոր փաստ, սակայն ժողովրդական վկայաբանութիւնք յամենայն կողմանց պատրաստ են ի հաստատութիւն, ուրեմն տեղական իշխանութիւնն այժմէն բնակեցուցանելով անդր զժողովրդականս՝ ձգտի ոտնհար առնել և զայդ իրաւունս վանից Հոռոմոսի:

Զվերոգրելոցն ծանուցեալ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի մատուցմամբ իսկական պատասխանագրութեան բնակչաց Իլանլի գեղջ ի տես և ի պարտ ու պատշաճն տնօրէնութիւն, վստահանամ ամենախոնարհաբար խնդրել զբարեհաճութիւն Դորին, յաղագս միջնորդելոյ յորոց հարկն է առ ի դադարեցուցանելոյ զվերաբնակութիւնն այն մինչ ցվերջաւորութիւն առարկային նորակառոյց եկեղեցւոյն և այլ բացատրելի հանգամանաց:

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թթ. 13-14, բնագիր, ձեռագիր:

№ - 48
ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀԱՅՈՑ ՀԻՆԱՒՈՒՐՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՔՐԴԵՐ ԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ԵՒ ԲԱԳՆԱՅՐ ՎԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 44 *24 ապրիլի 1883 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց
Յայտարարութիւն

Գաւառապետն Յայնկոյս արևմտեանն Շիրակայ պաշտպանելով զնորագաղթ եզիդի ազգէ քիւրդս և թողեալ զանչափ ամայութիւնս նորանուաճ երկրին կարուց՝ բնակեցուցանէ զնոսա մերձ առ հրաշակերտ վանորայս նախնաշէն եկեղեցեաց մերոց, որով ի հարկէ հետևելոցն է այնոցունց ոչ թէ վերանորոգութիւն և վերականգնումն, այլ վերջնական աւերումն ու անհետանալ մնացեալ նշխարացն, որպէս և ի պարապի վանորէիցն Բագնայրի, ուր թէև համաձայն հրամանի Դորին ի 31-ն յունուարի տարւոյս համար 310-ն ի սկզբան մարտ ամսոյ կարգեցան ի վանահայր և ի վերահսկող Յունան վարդապետն Սուքիասեան, սակայն նոյն Գաւառապետն և ստորադրեալք նորա հետզհետէ ջանադիր լինին կարճել զամենայն միջոցս աշխատանաց նոյն վանահօրն և զօրացուցանել զբնակութիւնս և զիրաւունս յիշատակեալ մարաց, որպէս զի հեռացուսցեն զնա անտի և եկեղեցիքն այնոքիկ ըստ առաջնումն լինիցին բնակարան անասնոց և ապականութեանց։

Զայսմանէ քանիցս ստացեալ զազդարարութիւն և անկարող լինելով անձամբ դիմելոյ անդր ի պատճառս փակման և հեռաւորութեան ճանապարհին և ծանր զբաղմանցս ի քաղաքի՝ հոգատար եղէ զկարևորացն, ընդարձակելով զմիջոց վանահօրն այնորիկ առ ի մաքրել հետզհետէ զեկեղեցիսն, շրջապատել զայնս և պատրաստել վարուցանիւ զպաշարեղէնս վասն միաբանութեան, սպասաւորաց, մշակաց և այլ աշխատաւոր արհեստաւորաց, ի վերայ այսր ամենայնի ծանրացաւ բռնութիւն տեղական իշխանութեանն և վանահայրն յերեսաց խռնեալ անդէն մարազգաց յուսահատեալ լքանի իւրոց ձեռնարկեալ աշխատանաց։

Ոյր սակս պարտաւորեցայ ի միասին ընդ այսմիկ առաքել անդր զԲարեկրօն Մարտիրոս քահանայն Տէր-Պօղոսեանց վասն կարելին օգնականութեան և պաշտպանութեան վանահօրն և զայնմանէ հաղորդագրելով Պ. Գաւառապետին յայնկոյս Շիրակայ ի 22 ամսոյս համարաւ 38-ն պատիւ ունեմ ծանուցանել զայսմանէ Սինոդիդ Ս. Էջմիածնի մատուցմամբ պատճէնի յիշատակեալ հաղորդագրութեան իմոյ ի տես և ի տեղեկութիւն ամենախոնարհաբար խնդրեմ զբարե-

հաճութիւն Սրբազան Ատենիդ վասն առնելոյ զշուտափոյթ տնօրէնութիւն, յաղագս պաշտպանութեան հնութեանց և իրաւանց կարգեալ անդէն վանահօրն հաղորդագրելով ի միջի այլոց Պ. Նահանգապետին կարուց առ ի յընդարձակել զմիջոց վերականգնման վերտողեալ վանուցն Բագնայրի (Ղուզլիճայի), որք ընդ փոյթ կարեն հասանել կենդանութեան, եթէ ոչ խափանառիթ լինիցի տեղական իշխանութիւնն։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 5 և շրջ., բնագիր, ձեռագիր

№ - 49

ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՎԱՆՔԵՐԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 46 *24 ապրիլի 1883 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Ս. Էջմիածնի
Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց
Յայտարարութիւն

Ի յարաբարդութենէ պահանջից պաշտպանութեան զանազան կալուածոց պատկանելոց եկեղեցեաց և վանորէից գործակալութեանն Հոռոմոսի վստահանամ ամենախոնարհաբար կրկնել զթախանձանս իմ գծագրեալս ի յայտարարութեան իմում, ի 13 յունուարի տարւոյս N 5-ն ի մասին կարգելոյ զումն ըստ ընտրութեան Դորին ի փաստաբանութիւն վասն սկզբնաւորութեան և պաշտպանութեան վերոգրեալ կալուածական իրաւանց սրբատեղեաց։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 19, բնագիր, ձեռագիր:

№ - 50

ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԽԾԿՈՆՔ ՎԱՆՔԻ ՎՐԱՅ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՒ ՎԱՆՔԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 58 *10 մայիսի 1883 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց
Գործակցէ վանահօրն Հոռոմոսի և գործակալի Շիրակայ
Յայտարարութիւն

Մենաստանն Խծկունեաց (Բէշքիլիսայ) գտանի ընդ մէջ երկուց

կողմանց ժայռապատեալ ձորակի և բաղկանայ ի հնգից քարաշէն և վայելչաձև առանձին առանձին տաճարաց յանուն ամենօրհնեալ Աստուածամօր և Սրբոյն Սարգսի զօրավարի, Յովհաննու Կարապետի, Ստեփաննոսի Նախավկայի և Գրիգորի Լուսաւորչի, որք բոլորեքեան ամբողջ և անվնաս դրութեամբ կան ի կանգուն և ի զարմանս ածեն զայցելուս, որք ի ժամանակս տաճկական կառավարութեան գտանելով ի շէն դրութեան՝ եղեալ են ընդ վարչութեամբ կարգեալ վանահարց և ի վերջին ամս Բարեկրօն Յովհաննէս քահանայի Տիկորցւոյ ընդ իրաւասութեամբ Առաջնորդացն Կարուց, վայելելով յամենայն ամս զարդիւնս իւրոց լայնատարած կալուածոց, և այսպիսի միջոցս պատահեալ է երբեմն, զի այլազգի մարք և ի վերջին ամս ոմն Օմար հաճի Մուսա օղլի բռնի տիրապետէին կալուածոց այնոցունց և դարձուցանէին յիւրեանց անձնական օգուտ, սակայն յամենայն դէպս հանդիպէին արգելմանց ի կողմանէ Առաջնորդաց Կարուց ընդ ձեռն տաճկական ոստիկանութեան, մանաւանդ ի ժամանակս Առաջնորդութեան Տիմոթէոս եպիսկոպոսի, որպէս վկայեն գրութիւնք նորա։ Պաշտպանութիւնք և միջամտութիւնք Առաջնորդաց երբեմն առաւել գրգիռ յարուցանէին ի սիրտս հալածեալ անտի մարաց, որք յարձակէին ի վերայ մենաստանին և յաւար ասպատակութեան մատնէին զամենայն ներքին սեփականութիւնս, մինչև անգամ վերտողեալ Յովհաննէս քահանայն, որ այժմոյս ևս հովուէ զհայազգի ժողովրդականս Տիկորա, մազապուրծ լեալ է ի սպառմանէ կենաց։ Այսպիսի վշտակիր դառնութեամբ միշտ մնացեալ է կանգուն գոյութիւն մենաստանին և շարունակ պահպանութիւն կալուածական իրաւանցն, բաց ի յամանց միջոցաց, յորս նոյն մարք ապօրինաբար բռնանալով ի վերայ մենաստանին՝ յետ կողոպտելոյ զոմանս շարժական սեփականութիւնս նորա՝ տիրեալ են և հողային կալուածոցն, որպէս յառաջնում ամի վերջին պատերազմի Քրիստոսապսակ զօրացն Ռուսաց ընդ մահմեդականաց, զի յայնժամ ի սահմանագլուխ վայրս պատերազմական դաշտի տկարանալով քրիստոնեայ Հայազգիք անկարող էին դիմադրել կամայականութեան նոցին, սակայն յետ միոյ ամի աշխարհահռչակ յաղթութեանցն, որ ի Կարս և ի Կարին, մինչ փափագ մեծ էր հայազգեաց ձեռնարկանել ի պաշտպանութիւն մենաստանին, յայնժամ դիմեցին առ Տէր Նահանգապետն Կարուց Գեներալն Պօպկօ միջոցաւ կարգեալ ի ծայրագոյն իշխանութենէ ի վանահայր Յարութիւն վարդապետի Մանուկեան և ի նմանէ գիտութեամբ և բարձր կամօք Գեներալ Լազարևի նշանակեցաւ առանձին աստիճանաւոր, որ եկեալ ի մենաստունն յայն և վանեալ ի սահմանաց սեփական կալուածոց վանիցն խծկունեաց զամենայն վրանաբնակ մարս, յանձնեաց զմենաստունն այն հանդերձ ամենայն սեփական կալուածովք վարչութեան վանահայր Յարութիւն վարդապետի, որ ի 1878 ամէ հետէ մտանելով ի

վարումն պաշտամանն այնորիկ՝ դեգերէր ի շրջապատի նորին ի շինութիւն կարևոր նոր ի նորոյ սենեակաց և բնակարանաց ի պայծառազարդութիւն եկեղեցեաց, ի բարւոքումն տնտեսական պիտոյից և դրութեան անշարժ կալուածոցն և յիւրաքանչիւր ամի ի նոյն անշարժ կալուածոցն էր՝ որ գործադրէր սեփական միջոցաւ վանիցն ի պիտոյս նորին և էր՝ որ տայր կապալաւ զոմանս արօտատեղիս նորա այլոց յանասնապահութիւն։ Սահմանք Խծկունեաց վանիցն և կալուածոցն են հետևեալքն ի հարաւոյ Ագարակ գիւղն, որ բաժանի քարաժայռիւ ձորակին և ընդ երկայնութեան բարձրադիր քարաժայռին յարևմուտն կոյս ցձորակն Սուրբ Սարգիս, անտի ի հիւսիս կոյս ցայրն Մժոյի անուանեալն, յորմէ հասանէ ցճանապարհն կարուց, անտի ուղղաձիգ ճանապարհաւ անցանելով ընդ բլուրն «Ձիֆտլար Թափէ»՝ իջանէ ի փոքր ձորակն, որ անուանուի փոքր Սալորի Ձոր, որ ի հանդէպ կայ տեղին անուանեալ Աստակեան, յորմէ յարևելն կոյս գայ խառնի ի նոյն վերոյ նշանակեալ քարաժայռն հիւսիսային ընդ գլուխ սահմանամիջի նշանացն Տիկոր գեղջ։ Յայսմիկ տարածութեան գտանին գետինք պիտանիք և անպիտանք, արտօրայք, խոտատեղիք և արօտատեղիք, որք հազիւ ուրեմն կարողանան հայթայթել զպիտոյս սննդեան, բարեկարգութեան և այլ անակնունելի պիտոյից մենաստանին։

Թէպէտ առ սեփականութիւն գծագրեալ կալուածոյն վանիցն Խծկունեաց չի՛ք բնաւ տարակոյս ինչ և ճշմարտութիւն սորին ի դարաւոր ժամանակաց հետէ դրոշմեալ լինելով ի սիրտ բնակչաց շրջապատեալ գիւղորէից, որք և ներկայումս պատրաստ են ամենայն քրիստոնէավայել արդարութեամբ ապացուցանել զիսկութիւնն որպէս և մերձակայ մահմեդական բնակիչք, սակայն քաղաքական իշխանութիւն կարուց, որպէս երևի ի հրամանագրութենէ Տեռան Նահանգապետի ի 19 յուլիսի 1882 ամի համարաւ 1985 առանց ինչ հիմնաւոր փաստից հրամանագրեալ է գաւառապետին արևմտեան Շիրակայ ընդունել զայն կալուած յարքունիս ի տիրապետութիւն պահանջելով ի վանիցն գրաւոր փաստս սեփականութեան կալուածոցն, իսկ վանահայր Յարութիւն վարդապետն հարցման նորին՝ գաւառապետին պատասխանեալ է թէ կալուածագիրք կողոպտեալ են յառաջին ժամանակս և չիք ի ձեռին, այլ թէ ո՞ւր է եղեալ շարունակութիւն գործոյս, չէ յայտ բաց յայնմանէ յառաջագոյն և ի սկզբան 1878 ամի ծագեալ է բողոք առ քաղաքական իշխանութիւնն վասն սահմանի հողոյն այնր մենաստանի և ստուգութիւն ըստ առարկային ընդ գրութեան Նահանգապետի Կարուց ի 14-ն ապրիլի 1879 ամի համարաւ 3234, մտեալէ յԱտեան յանձնաժողովոյն հողային գործոց, սակայն և յայնմանէ չի՛ք հետևեալ որպիսի և իցէ որոշումն։

Զայլոց ամենից զանցարարեալ տեղական իշխանութիւնն կարուց, մանաւանդ և ո՛չ քաղեալ զհետազօտութիւն ինչ ի գործոց Դորին, կամ

ի ձեռն Բարձրաստիճան Ատենիդ՝ իրաւունս դատէ ինքեան հրամայել ստորադրելոցն ընդունել զպատկանեալ վանիցն Խծկունեաց կալուածս յարքունիս խլելով միանգամայն զիրաւունս տիրապետութեան այնորիկ, զանց առնէ միանգամայն և զայնու արդարասէր օրինօք, թէ իւրաքանչիւր տիրապետութիւն ո՛չ բառնի ի տիրապետողէն առանց դատաստանական քննութեան և վճռոյ, զի ահա՛ վեց ամք են յայս վերջին միջոցս, յորս մենաստունն Խծկունեաց տիրապետէ կալուածոյն այնորիկ իբրև սեփականութիւն ընդ ձեռն այժմեան վանահօրն։

Զամենից զվերոգրելոցն պատիւ ունեմ յայտ առնել Սինոդիդ Սրբոյ էջմիածնի մատուցմամբ վաւերական պատճէնից գրութեանցն Տեառն Նահանգապետի Կարուց և Գաւառապետի Շիրակայ նաև իսկական դաշնագրոյն, որ կռեալն էր յանցեալ ամի ի 4-ն օգոստոսի ընդ կապալառուաց Ստեփաննոսի Կիւրեղեանց, Յարութիւնի Եղիայեան և Մկոյի Դանիէլեան, նոյնպէս և հաւաստագրոյն ամբողջ հասարակութեանց զանազան գիւղորէից կողմանցն Նախիջևանի և ամենախոնարհաբար խնդրեմ զպարտ ու պատշաճ տնօրէնութիւն ի մասին կալուածոց վանիցն Խծկունեաց, զի մի՛ մենաստունն այն զրկեսցի յանմտաբերելի ժամանակաց հետէ տիրապետեալ սեփականութենէն, առ որ յարակցեալ ո՛չ աւելորդ դատեմ։ 1. Թէ վանահայր Յարութիւն վարդապետն թէպէտ ի նախընթաց ամս ճանապարհորդեցաւ ի Կ. Պոլիս վասն ի ձեռս բերելոյ ի Բարձրագոյն Դրանէ զհաստատութիւն կալուածոյն այնորիկ, և որպէս վկայէ ինքն մերթ ընդ մերթ ստանալ այն էր զայնպիսին, սակայն վերահաս անձնական տկարութիւնն և կարօտութիւնն ծախուց չէր թոյլատրեալ նմա ընդ երկար մնալ անդէն և կատարել զնպատակեալն իւր և այնպէս թերակատար վերադարձեալն էր այսր։ 2. Ի ներկայումս ևս դեռ կալուածն այն գտանի ընդ տիրապետութեամբ և շահաւէտութեամբ վանիցն և կասկած միայն զօրանայ, թէ քաղաքական իշխանութիւնն բնակեցուցանելոյ է յայնոսիկ տեղիս զնորագաղթ եզիդիս եկեալ գերդաստանօք ի Տաճկաստանէ, և 3. Գտանին և այլ կապալառուք նախանցելոց ամաց, որք անձամբ հաւաստի առնեն զճշմարտութիւն հանգամանացս ի դիպող ժամու, և 4. Որպէս վկայեն ժողովրդականք՝ յամս 1873 և 1874 Բարձրագոյն Դուռն Օսմանեան շնորհեալ է զհրովարտակ, զի կալուածք եկեղեցեաց և վանորէից, զորոց ստացեալ են մահմեդականք զկալուածագիրս (քօչան կամ թափի) ազատ համարեսցին ի տիրապետութեանց և կալուածագիրքն անվաւեր լինիցին, զի մնասցեն այնոքիկ սեփականութիւն սրբավայրացն։ Սոյն այս հրովարտակ հրատարակեալ է յայնժամ ի պարբերական թերթս և ի ‹‹Հայրենիք››[78] լրագրի Կ. Պոլսոյ և իրաւամբ

[78] Հայրենիք — Լրագիր քաղաքական, ազգային և առևտրական, ապա՝ օրագիր ազգային, գրական և քաղաքական (օրաթերթ, ապա՝ շաբաթաթերթ կիրակնօրեայ), Կ. Պոլիս, 1870 —1896, 1909 — 1910:

պարտ է բացայայտ գոլ ի Պատրիարքարանի մայրաքաղաքին, ուրեմն եթէ բարեհաճ գտցի Սրբազան Ատեանդ՝ կարէ զհաւաստիս կարևոր հանգամանացս և զայլոց քաղել ի Պատրիարքական Դիւանատանէն վերաբերութեամբ ընդհանրապէս կալուածական իրաւանց սրբատեղեաց մերոց, որ ի Տաճկաստան և մասնաւորապէս գտանեցելոց ի կողմանս նորանուաճ Կարուց նահանգի։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ.56, ց. 4, գ. 3038, թթ. 21-22, բնագիր, ձեռագիր:

№ - 51
ԱՆԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՊԱՐՍԻԿ ԱԻԱՁԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԻԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՒ 700 ՌՈՒԲԼԻ ԱՐԺՈՂՈՒԹԵԱՆ ԻՐԵՐ ԹԱԼԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 11 *6 յունիսի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգաբարձութենէ աւերակաց և եկեղեցեաց Անւոյ Յայտարարութիւն

Յառաջներորդ աւուր ամսոյս զկնի կէսաւուր չեօթներորդ ժամու աւազակք յարձակեալ ի վրայ միաբանութեան Անւոյ, վիրաւորեալ են զվանահայրն տեղւոյն՝ զբարեշնորհ Ներսէս վարդապետն Տիգրանեանց, կապեալ զայնոսիկ, որք ընդ նմա գտանէին անտէն, և տարեալ եօթն հարիւր րուբլի արժողութեամբ իրեղէնս, թէ՛ անասնեղէն, թէ՛ եկեղեցական և թէ՛ տնտեսական։ Զայսմանէ յայտնելով քաղաքական իշխանութեան, ըստ ցուցման վանահօրն թէպէտ առ այժմ կալանաւորեցան բնակիչք Անի գեղջ՝ պարսիկ Քեալպալա Ռուստամ, Քեալպալայ Հիւսէին Բաղշօղլի և Ջապար Թաղի օղլի, զորս ճանաչեալ էր ինքն վանահայրն, բայց որովհետև նպատակ պարսիկ բնակչաց գեղջն այնորիկ է իսկապէս վնասելով և ահաբեկելով ցրել զմիաբանութիւնն, որպէս և ի սկզբնաւորութենէ միաբանութեանն քանի քանիցս փորձ փորձեալ են, առաջինն՝ կողոպտելով զեկեղեցին, երկրորդ՝ հրդեհելով զարօտատեղին վանուցն, երրորդ՝ լսելով այժմ զի քաղաքական իշխանութիւն որոշեալ է արդէն յատկացուցանել վանուցն զմի հարիւր դեսեատին վարելահողս, անդր քան զչափն անցուցեալ զչարագործութիւն իւրեանց, տքնեն ի ցրումն միաբանութեանն։ Վասն որոյ ամենախոնարհաբար յայտնելով զայսոսիկ Սրբազան Սինոդիդ խնդրեմք զարժանաւոր տնօրէնութիւն դորին առ ի ապահովել զկեանս միաբանութեանն յերկիւղէ չարագործացն այնոցիկ, պահանջելով ուստի

հարկ է հեռացուցանել յայնմ գեղջէ զայնոսիկ երիս անձինս, որք չեն բնիկ բնակիչ գեղջն՝ այլ նորեկք, ի զգուշութիւն մնացելոց[79]*։*

Անդամք Հոգաբարձութեան՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Յ. Յովհաննջանեանց, Հաջի Գէորգ Բաբոյեան
Հաճիպապ Իսպիրեանց, Աստուր Իսահակեան
Մանուկ Խումարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 132 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 52
ՅՈՎՍԷՓ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՀԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 100 *12 յունիսի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Գործակցէ վանահայրութեան Հոռոմոսի և Գործակալութեան Արևմտեան Շիրակայ Յայտարարութիւն

Յայտնի է ինձ ի հաւաստի տեղեկութեանց, զի ժողովրդական վարչութիւն Կարուց (Մէճլիս) ընդ նախագահութեամբ Տեառն Զինուորական Նահանգապետի տեղւոյն արդէն որոշեալ է վախճանաբար, զի իւրաքանչիւր վանորէիցն, որք շէն իցեան և կամ գէթ ունիցին զվանահայր՝ մասնատրուեցի մէն միոյն մի հարիւրաչափ դեսեատին վարելահող ի գործադրութիւն ի պիտոյս վանորէիցն, և թէ ի մասին մասնատրութեանն այդորիկ խնդրամատոյց լինելոց են ինքեանք վանահարք, որպէս զի ըստ այնմ ընդ փոյթ տնօրինեսցի արժանն։

Իսկ որովհետև ի նորանուաճ երկրին Կարուց գտանին քանի նշանաւոր վանորայք, յորոց ոմանք գտանին ի գործակալութեանս Հոռոմոսի և անտի անդր որքան իցեն՝ տակաւին չէ յայտ, և զոմանց այնպիսեաց արդէն դոյնն առանձին առաջարկութեամբ իւրով դիմեալ է ի Գլխաւոր Կառավարութիւնն Կովկասու հանդերձ միջնորդութեամբ սակս թոյլ տալոյ հայազգի ցանկացողացն վերաբնակիլ ի շրջապատի նոցին առ ի պաշտպանել զկիսակործան դրութիւնս նոցա, սակայն թէ ո՞ր-

79 1883 թ. հոկտեմբերի 28-ին Սինոդը լսելով խնդիրը, հրամայեց. «Առ ներկայ յայտարարութեան Հոգաբարձութեան Անւոյ ծանուցանել, թէ՝ ընդ որում գործն գողութեան յիշատակեալ անձանց ենթարկեալ է քաղաքական իշխանութեան և զարդիս կալանաւորեալք են և ի շարունակութիւն գտանի քննութիւնք նոցայ՝ ուստի մինչ ցվերջաւորութիւն քննութեան Սինոդս չկարէ միջնորդել որոց հարկն է առ ի հեռացուցանելոյ յԱնւոյ զյիշատակեալ ի վերոյ անձինս, ուստի պարտաւոր է հետամուտ լինել ընթացից քննութեան և զհետևանացն ցոյց դնել Սինոդիս, վասն յետագայ պատշաճական տնօրէնութեան (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 133 և շրջ.):

պիսի հետևանաց արժանացաւ այդ առաջարկութիւն այդ ևս չէ յայտ, այլ ի վերայ այսր ամի ի ներկայս է յոյժ բարեդէպ միջոց մինչդեռ չև է ձեռնարկեալ բաժանման ամայի մնացեալ բազմատարած գետնոց, զի յետ անցանելոյ փոքր-ինչ միջոցի առաւել ևս ծանրանալոց է հոգատարութիւնն զանշէն վանորէիցն, մանաւանդ զորոշեալի սահմանաց նոցին, յոյր սակս պարտաւորութիւն ինձ համարեցի ծանուցանել զվերոգրելոցն Սինոդիդ Սրբոյ էջմիածնի և ամենախոնարհաբար խնդրել զփութաշատապ տնօրէնութիւն, յաղագս կարգելոյ զոմանս ի միաբանից հեռաւոր և մերձաւոր վանորէիցն մերոց ընդ տեսչութեամբ դորին գտանեցելոց յառժամանակեայ վանահայրութիւն յանշէն վանորայս Գործակալութեանն Հոռոմոսի և միանգամայն Նահանգին Կարուց, որպէս զի այժմէան մարթիցէ տիրապետել կալուածոց նոցին և ածել ի շէն և բարեշուք դրութիւն, իսկ հոգացողութիւն առժամանակեայ կեցութեան և սննդեան նոցին ի հաշիւ վանորէիցն տնօրինել զիարդ և հաճոյ իցէ դմին յորպիսի և իցէ յաղբերաց, զի կալուածական սեպհականութիւնքն այնոքիկ կարեն յապայն շահել զմեծամեծ բարիս յօգուտ ազգի և եկեղեցւոյ և յաշխարհահռչակ պարծանս Սրբազան Աթենիդ: Առ որ ծանուցանեմ թէ դժուարութիւն կեցութեան և սննդեան կարգելի վանահարց կարէ մեծաւ մասամբ դիւրանալ, եթէ նոքա իցեն անձնազոհ պաշտօնեայք վառեալք սիրով վերականգման փառաց և նախնի յիշատակաց հայրենեաց մերոց, զի ժողովրդական ջերմեռանդն օժանդակութիւն պատրաստ է միշտ կարկառել առ նոսա զձեռն նպաստատուութեան ցօր ինքնին հայթայթման և բարւոքման պիտոյից իւրեանց[80]*:*

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 128 և շրջ., ինքնագիր:

№ - 53
ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ՎՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ՝ ԻՐԵՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 107 *16 յունիսի 1883 թ.*

Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի
Ի Գործակցէ վանահայրութեան Հոռոմոսի և Գործակալութեան Արևմտեան Շիրակայ

[80] 1883 թ. յունիսի 24-ին Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց. «Ընկալեալ ի յարգանս զառաջարկութիւն Յովսէփ աւագ քահանայի Կոստանեան՝ որ յաղագս կարգելոյ զվանահայրս ի վանորայս:

Յայտարարութիւն

Ստացայ զերկուս հրամանագրութիւնս դորին ի 18-ն մայիսի անցեալոյ համարօք 1813 և 1833, որոց առաջնովն դնի և ի վերայ իմ պարտաւորութիւն ըստ պահանջման Գլխաւոր Կառավարութեան Կովկասու կազմել ի ռուս լեզու զճիշտ և զմանրամասն վիճակագրութիւն ի կողմանս Նորանուաճ ընդ տիրապետութեամբ Ռուսիոյ Կարս և Բաթում նահանգաց և հաւաքել տեղեկութիւնս զայժմեան կարգաց վարչութեան հոգևոր գործոց նոցին և երկրորդաւն առաքէ առ իս զչորս օրինակս ցուցակաց վասն վերոգրեալն պիտոյից, սակայն չիք ի նկատի առեալ ի նոսին թէ զո՞ր եղանակս միջոցաց ցուցանէ դոյնն ի պիտոյս կատարման ըստ տեղւոյն և ըստ պատշաճին այդ օրինակ վսեմ յանձնարարութեանն։

Թէպէտ ըստ բանաւորեալ հպատակութեան պարտէր ինձ ի բաց դնել զամենայն խոչ և զտագնապ և ձեռնարկանել կատարման այդորիկ պատուիրանի Բարձրագոյն Ատենիդ, սակայն իրագործել զայդ յիմում բնակարանի աստ և այսմ վիճակի որպէս զայլ բազմատեսակ յանձնարարութիւնս դորին անհնարին է ինձ, ուրեմն կարօտի ճանապարհորդութեան և այն ի նորանուաճ նահանգս Կարուց և Բաթումայ, ուր բաց ի մասնաւոր տեղեաց աստի ցկարս՝ մնացեալ ճանապարհք ցայն աստիճան դժուարագնացք են, մինչ զի ուղևորք հարկադրին ի բազում տեղիս հետիոտս ընթանալ, ընդ նմին վտանգաւոր և երկիւղալի, զի ոչ ոք առանց ձիավարժ և զրահակիր ուղեկցաց կարէ հատանել զուղի յանծանօթ և յանմատչելի վայրս և ո՛չ միայն ի քաղաքս կամ ի գիւղս և կամ յատանս, այլև յանմարդաբնակ լերինս, ի հովիտս և յանտառս, ուր ուրեք գտանին հնութիւնք շէն և անշէն վանորէից և այլոց պանծալի յիշատակաց նախնեաց մերոց։ Վասն որոյ զայս ամենայն առեալ ի կշռադատութիւն և ի յուշ բերեալ ինձ զայլ ո՛չ այնքան դիւրահոգ յանձնարարութիւնս և պարտաւորութիւնս, որպիսիքն են ի ներկայումս կալուածական հոգացողութիւնք վանորէից, մանաւանդ վանիցն Հառիճոյ՝ դժուարանամ ստանձնել զներկայ վիճակագրութիւնն, և զայսմանէ ծանուցեալ Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի՝ վստահանամ ամենախոնարհաբար խնդրել ի Բարձրաստիճան Ատենակալաց դորին բարեհաճել բառնալ յինէն զայդ յանձնարարութիւն, որ վայելն է այլում առաւել քան զիս հաւատարմագունի և անձնուիրի առ ծառայութիւնս ազգի և եկեղեցւոյ, զի այն ինչ ի բազում ամաց հետէ և ցարդ ամենահաւատարմաբար և անձնազոհութեամբ մաշեալ զանձն իմ ակն ունէի մխիթարութեան ի կողմանէ Սրբազան Ատենիդ, սակայն ի վերջոյ շահեցայ զանարգանս և եթ և զանուանանկութիւն, մինչև իսկ չգտի զարդարասիրական վերականգնումն արհամարհեալ ամեղութեանս յերեսաց ոմանց անբարեմիտ և շահամոլ անձանց։

6 — *Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան։ Գիրք ԻԵ.*

Առ որ սպասեմ պարտ ու պատշաճն տնօրէնութեան դորին.
Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7194, թ. 41 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 54
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻՆ ՏՐՈՒԱԾ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՎԵՐՋԻՆԻՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

20 յուլիսի 1883 թ.
Կարս

Свидетельство

Дано настоящее свидетельство Епископу Армяно-Григорянской церкви Крикору Агванянцу в том, что показанное им на план имение, а именно: в квартале N *24* участок N *1*, пространством двести восемдесять кв. саж., находящйся в гор. Карс, границы коего с одной стороны вновь проектированная улица и с остольных сторон городские свободные участки, как оказалось по произведенному дознанию действительно принадлежит ему Епископу Крикору Агванянцу в удостоверение чего и выдано ему это свидетельство из коммисии по определению кров жителей Карской области по недвижения городския имения занадлежашим подписом с приложением казенной печати июня *20/*июля *20* дня *1883* года. Подписал Военный Губернатор Карской области Генерал Майор *[*Гросман*]*.

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3503, թ. 4, պատճէն, ձեռագիր:

№ - 55
ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 628 *18 օգոստոսի 1883 թ.*
Թիֆլիս

Начальнику Армяно-Григорианской *[*Епархии*]* Карсской и Батумской области

По поводу прошения Вашего Преосвященства от *19* июня минувшего года, по поручению Его Сиятельства Главноначальствующего гражданскою частью на Кавказе, имею честь уведомить:

1. Что по проекту, одобренному князем Александром Михайловичем, относительно поземельного устройства Карсской области, Карсской армяно-григорианской церкви назначено сто десятин зем-

ли в замен *1¼* десятины, которые значатся по документу, признанному Комиссией фальшивым*;*

2. Монастырь Кошаванк, хотя и представил документы, признанные правильными, но в них не было обозначено пространство, а потому, по приведению в известность земель, находящихся в пользовании монастыря, в распоряжение Кошаванка, по тому же проекту предоставлены оказавшиеся по измерении в пользовании оного шестьсот пятнадцать десятин*;*

3. Армянской церкви в Ани назначено проектом сто десятин.

Кроме того, Армянским монастырям Вартегер-ванк назначено сто пятьдесят десятин и Баш-Килисскому, не представившему никаких документов, назначено двести пятьдесят десятин.

Сообщая об этом для сведения Вашего Преосвященства, имею честь присовокупить, что относительно четвертого пункта прошения, Его Сиятельству угодно было приказать заявить Вам, что при устройстве поселений вблизи древних храмов, местной администрации предложено озаботиться принятием мер к сохранению и поддержанию этих христианских памятников.

Подлинный подписал*:*
Начальник канцелярии генерал-майорШепелев[81]
Начальник отделения Вейденбаум

Համեմատեալ ըստ իսկականին ուղիղ է. Առաջնորդ Կարս և Բաթում Նահանգաց՝

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան[82]

12 հոկտեմբեր 1883 թ.
Առաջնորդարան Հայոց ի Կարս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թթ. 29-30, հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 56
ՀՈՂԱՉԱՓ Ն. ԳԵԴԻՒՉԻԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ԱՆԻ ԱՒԵՐՈՒԱԾ ՔԱՂԱՔԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 1883 թ.
Կարս

Полевой журнал обхода границ участка, отведенного в пользование Армянскому монастырю разв*[*аленного*]* города Ани Шурагельского участка Карсского округа

Землемер Гедючий, на основании предписания за №- Комиссии

[81] Շեպելև Ալեքսանդր Ալեքսանդրի (1841 - 1887) – 1883 թ. նշանակուել է Կովկասի Կառավարչապետի Քաղաքացիական մասի պետ, ռազմական պատմաբան:

[82] Փաստաթուղթը կնքուած է Գրիգորիս եպիսկոպոսի անձնական կնիքով:

по выкупу в казну земель в присутствии лиц, поименованных в приложенном к этому журналу и составленном сего числа акте, производил обход границ вышеназванной дачи; обход начался от временного знака, поставленного при обходе дачи сел. Ани, у впадения с правой стороны оврага, ограничивающего сел. Ани с рекою, протекающею мимо этого селения, отсюда по смежности со свободноказенною дачею № *74*, граница идет в общем направлении по Ю*[гу]* – этою последнею речкою до временного знака у впадения ее с правой стороны в р. Арпачай, далее по смежности с Александропольским уездом граница направляется *[к]* р. Арпачай вверх по течению ее до временного знака у впадения в эту реку с правой стороны оврага, ограничивающего с Востока плоский хребет, на котором расположены монастырь и развалины города Ани, далее по смежности с через полосным участком дачи № *74*, граница указана сначала руслом упомянутого оврага вперед на С*[еверо]*- З*[апад]*, потом С*[еверо]*-В*[осток]* до временного знака у начала этого последнего, затем двумя прежними в *330* и *130* саж. сперва на С*[еверо]*-В*[осток]*, через промежуточный вр*[еменный]* знак до следующего и после на С*[еверо]*- З*[апад]* до временного знака, поставленного при обходе дачи сел. Ани у дорог от последнего временного знака и до начального пункта, по смежности с дачею сел. Ани, граница уже описана в журнале обхода этой последней. В описанном участке земли: удобной – сто, а неудобной – девяносто пять десятин.

Подлинный подписал землемер Н. Гедючий

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ[83]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 11 ևշրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

---

[83] Նահապետ եպիսկոպոս Նահապետեան (1848 թ., Ախալցխա – 1906 թ., Նոր Նախիջևան, թաղուած է Ս. Խաչ վանքի գաւթում) - Սկզբնական կրթութիւնը ստացել է Թիֆլիսի առաջին գիմնազիայում, ապա՝ Պետերբուրգի համալսարանում: Նա Գայիանեան օրիորդաց դպրոցի հիմնադիրներից մէկն էր: Եղել է Ներսիսեան դպրոցի տեսուչ: 1881 թ. Գէորգ Դ. կաթողիկոսը նրան հրաւիրել է Ս. Էջմիածին՝ իր հիմնած ճեմարանի ղեկը նրան յանձնելու: 1882 թ., Գէորգ Դ.-ի մահից յետոյ, նա հեռանում է ճեմարանից, բայց Մակար Կաթողիկոսի օրօք՝ 1886 թ. կրկին վերադառնում է: 1891 թ. նշանակւում է Կարսի փոխանորդ: 1893 թ. արժանացել է ծաղկեայ փիլոնի, իսկ 1894-ին՝ վարդապետական ականակուռ խաչի: 1896 թ. յունուարի 25-ից վարել է Ս. Էջմիածնի տպարանական յանձնաժողովի նախագահի պաշտօնը: 1897 թ. նոյեմբերի 21-ին կառավարութեան կողմից աքսորուել է Նոր Նախիջևան, որտեղից իրաւունք է ստացել վերադառնալ Ս. Էջմիածին միայն 1903-ի մայիսին: Նոյն թուականին, Էջմիածնի տօնին, արժանացել է եպիսկոպոսական աստիճանի:

№ - 57

ԱԿՏ՝ ՇՈՐԱԳԵԱԼԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԱՆԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ԵՒ ԵԶԴԻՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐ ՅԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 1883 թ.
Կարս

Начальник Карсского округа коллежский ассесор Шагубатов, в присутствии нижеподписавшихся, на основании предписания за №*1285*, Ваенного губернатора Карсской области по приведению в исполнение проекта распределения земель в оной, находясь при обходе свободного казенного участка №*74*, Шурагельского участка Карсского округа, и имея в виду, что согласно упомянутого проекта из названного участка должно быть выделено в пользовании Армянского монастыря Ани сто десятин удобной земли, остальная земля назначается для поселения езидов, полагал бы, выделить *100* десят. удобной и *95* неудобной, а всей земли сто девяносто пять десятин для сказанного монастыря, а оставшуюся затем землю, в количестве *863* десят. удобной и *205* дес. неудобной, а всей земли тысяча шестьдесят восемь десятин оставить для поселения езидов; по сему постановил: выделив вышеназванное количество десятин для монастыря Ани, землемер Гедючий обязан обойти границы как этого участка, так и участка №*74*, обставив оные временными знаками, что и исполнено сего числа.

Подлинное подписали: понятые сел. Ани *(Թուրքերէն ստորագրութիւնք)*
Начальник Шурагельского участка ротмистр Кошелев
Начальник Карсского округа Шагубатов
Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 10 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 58

ՅՈՎՍԷՓ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 116 *5 սեպտեմբերի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի լուսաւորչական Հայոց Սիւնոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց Աղէքսանդրապօլցւոյ
Յայտարարութիւն
Յետ ստանալոյ զկրկնողական հրաման դորին յ8-ն յուլիսի տար-

ւոյս համարաւ 2382, ի մասին վիճակագրութեան կողմանցն Բաթումայ և Կարուց, թէպէտ ցարդ սպասէի յետագայ տնօրէնութեան դորին թէ զո՞րպիսի միջոցս ընձեռելոցնէ առ կատարումն այդ օրինակ դժուարատանելի և վսեմ յանձնարարութեան, զի ինձ հետիոտս ընթանալ և առանց սպասաւորի կամ ճանապարհային պիտոյից անցանել ընդ հազարաւոր վերստաչափ անմատչելի և անծանօթ անցս երկուց նահանգաց և այլն և այլն անհնարին է։

Յոյր սակս ծանուցեալ զայսմանէ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ամենախոնարհաբար խնդրեմ եթէ հնար է բառնալ չինէն զայդ ծանրութիւն յանձնարարութեանն, ապա թէ ո՛չ բարեհաճեսցի Սրբազան Ատեանդ որոշել զիարդ և արժան դատիցէ զպատշաճաւոր միջոց ծախուց, որպէս զի անվնաս և առանց զգալի զրկանաց կարացից ձեռն ի գործ լինել կատարման այդորիկ պահանջից քաղաքական իշխանութեան։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7194, թ. 43, բնագիր, ձեռագիր:

№ - 59
ՅԱԿՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆՑԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՅՕԳՈՒՏ ՎԱՆՔԻ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

23 սեպտեմբերի 1883 թ.
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի
Ի վանահօրէ վանից Հոռոմոսի ի Յակովբ վարդապետէ
Նորատունկեանց
Յայտարարութիւն

Յօրէ մտանելոյ իմ ի պաշտօն վանահայրութեան վանիցն Հոռոմոսի, հետամուտ լինելով հողային կալուածոց նորին տեղեկացայ, զի թէպէտ գիւղն Ղօշավանք ամբողջ հողային սահմանաւն պատկանի վանիցն և համարիւր յատկական սեպհականութիւն նորին, սակայն յանփոյթ խնամատարութենէ նախնի կառավարչաց և ի բարբարոսութենէ տիրապետող տէրութեան, ժողովրդականք մերձակայ գեղջն այնորիկ մեծաւ մասամբ գործադրելով ի պիտոյս իւրեանց զվանքապատկան գետինն օտարացուցեալ են ի վանիցն առանց հատուցանելոյ նմին զմասն ինչ արդեանց, և միայն մնայ ընդ գործադրութեամբ վանիցս ի վաղ ժամանակաց հետէ վանքական ծախիւք և աշխատութեամբ բարւոքեալ և հերկեալ ութսուն օրավարաչափ գետին, որք սփռել տարածել տարածեն ընդ ամենայն կողմն գեղջն այնորիկ։

Որպէս զի միանգամայն որոշեսցի վանքապատկան գետինն Հոռոմոսի վարելատեղին և արօտատեղին կամ մարգագետինն, բարւոք դատի այժմէն պահանջել ի քաղաքական իշխանութենէն կարուց առ ի նշանակել զարքունի երկրաչափ վասն ընդ ձեռն նորա ի ներկայութիւն օրինաւահման պատգամաւորի և հաւատարմատարի ածելոյ ի յայտ և պատկերացուցանելոյ ի քարտէզ մակերևոյթի զսահման Հոռոմոսին պատկանեալ գետնոյն զի ըստ այնմ հաստատուն իմն ճանապարհաւ հնար լինիցի բարեկարգել զխանգարեալ դրութիւն վանիցն և կալուածոյ նորին։

Ծանուցանելով զայսմանէ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի պատիւ ունեմ ամենախոնարհաբար խնդրել զբարեհաճութիւն Դորին յաղագս վաղ ընդ փոյթ տնօրինելոյ զայսմանէ զարժանն ընդ ձեռն Նահանգապետին կարուց։

Յակովբ վարդապետ Նորատունկեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 29 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 60
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՅՈՎՍԷՓ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 126 *28 սեպտեմբերի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի Ի գործակցէ գործակալութեան Հոռոմոսի Արևմտեան Շիրակայ Յայտարարութիւն

Մենաստանն Հոռոմոսի ի դարաւոր ժամանակաց հետէ տիրապետելով լայնատարած կալուածոց՝ թէև յաւուրս Բագրատունեացն հարստութեան և յետ այնորիկ ճոխացեալն է առատաբեր բարութեամբք և արդեամբ, սակայն ի վերջին դարս կորուսեալ է զիւրն ճոխութիւն և յերեսաց դառն հալածանաց և հարուածոց մինչև անգամ հասեալ է յամայութիւն։ Յայսպիսում ողբալի դրութեան դարձեալ վայելելով պաշտպանութիւն բարեմիտ կառավարչաց և հոգաւունակ պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյ՝ պահպանեալ է ընդ տիրապետութեամբ իւրով զիրաւունս սեփականութեան առընթեր նմին գտանեցեալ հայաբնակ գեղջն հանդերձ իւրով որոշեալ սահմանաւն վարելահողոց, արօտատեղեաց և այլն և առանձին եայլատեղւոյն[84]*, այն է Ղուսու-*

[84] Եայլա – արօտատեղ հովասուն՝ լեռնային տեղերում, ուր ամառները խաշնարածները

ճուղն, այլ աւա՛ղ ապաժոյժ բնաւորութեան ազգայնոց, զի երբ ի վերջին ժամանակս կարգադրութեամբ Օսմանեան պետութեան առաջադրեցաւ ընդհանրապէս հպատակաց տէրութեանն գանձագին առնել զհողային կալուածս և յետ դրամական գնահատեալ վճարմանն ստանալ զկալուածագիր (թափի), յայն ժամ ժողովրդականք վերտողեալ Ղօշավանք գեղջ նախադասեալ զանձնական բարիս քան զսրբազան տաճարացն Հոռոմոսի, ինքեանք ևս ստացեալ են վճարմամբ զայնպիսի արտօնագիրս և յօրէ յայնմանէ բնակիչք տեղւոյն ըստ զօրութեան այդոցունց արտօնագրոցն զկապալագրեալ գետինն համարեն իւրեանց սեփականութիւն իսկ մնացեալն վանիցն Հոռոմոսի, և որպէս մենաստունն այն ի պատճառս կիսաւեր դրութեան անզօր գտանելով գործադրել զայն ամենայն մնացորդ տարածութիւնս, էր՝ որ ի վարուցանս և էր՝ որ յարօտս անասնոց և ի մարգագետինս հազիւ ուրեմն ի ներկայումս ունի զութսունիւ չափ օրավար ի վաղ ժամանակաց հետէ իւրով իսկ ծախուք և աշխատութեամբ մշակեալ և գործադրեալ յիւր պիտոյս գետինս, որք անվիճելի սեփականութիւն համարին վանիցն և ո՛չ մի օրէնք կարեն զրկել զմենաստունն յայդմանէ սեփականութենէ, նոյնպէս և յարօտատեղեացն, որոց ամենից քանակութիւն տարածութեանն բաց ի Ղույուճուղ անուանեալ եայլատեղւոյն, որպէս երևի ի կազմեալ նախկին վանահօրն Ստեփաննոս վարդապետի Շիրակունւոյ արձանագրութենէ ընդ ստորագրութեամբ զանազան բնակչաց և ի գործոց Դորին, է վանքապատկան մասն չորս հարիւրաչափ օրավար խառն ընդ կապալագրեալ գետնոյն ժողովրդոց, որք թէև յարուցեալ են զբողոք զայդմանէ առ նախկին գաւառապետն Շիրակայ և նա՝ յետ գործելոյ զպատշաճականն ստուգութիւն ի գիտակ անձանց՝ յայտարարութեամբ ի 13-ն ապրիլի անցեալ ամի համարաւ 1035, ծանուցեալ կալուածական մասնաժողովոյն կարուց խնդրեալ էր նախ՝ զլուծումն վասն օրինաւոր կարգաւ և քննութեամբ վերաստուգելոյ զիսկութիւն հանգամանացն և թէ ընդ որո՞յ տիրապետութեամբ թողուլ պարտէ զգետինն վիճելի, սակայն զայդմանէ դեռ չիք հասեալ տեղեկութիւն ո՛չ վանահօրն Հոռոմոսի և ո՛չ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի, իսկ ժողովրդականք Ղօշավանից տեսանելով թէ յամենայն ուրեք հարստահարին վանորայք Հայոց և համարեա՛ անպաշտպան մնան ի կողմանէ կալուածական իրաւանց՝ ձգտին ամենայն ջանիւք օտարացուցանել ի վանից զամենայն սեփականութիւնս նորա և անդադար հանգիստ առնեն զվանահայրն անտեղի պահանջմամբ և խռովութեամբ։

Զայս ամենայն վաղ ուրեմն ի նկատի ունելով իմ պարտաւորութիւն ինձ համարեսցի մանրամասն նկարագրութեամբ ծանուցանել Սինոդիդ Սրբոյ էջմիածնի յայտարարութեամբ ի 16 յունուարի տար-

---

բարձրանում և ապրում են իրենց հօտերով:

ւոյս համարաւ 5, խնդրելով զբարեհաճութիւն առ ի յանձնելոյ փաստաբանի Մայր Աթոռոյդ կամ այլում, ումեք սակս վաղ ընդ փոյթ սկզբնաւորելոյ զպաշտպանութիւն իրաւանց կալուածոց վանորէիցն և յանտեղեակ մնալն իմ զհետևանացն կրկնեսցի զայդ թախանձ իմ յայտարարութեամբ ի 24-ն ապրիլի տարւոյս համարաւ 46, սակայն ցարդ ևս ո՛չ նշմարի կարգադրութիւն, և ի պատճառս տարօրինակ յետաձգութեանն տապալին հիմունք իրաւանց վանորէից նորանուաճ երկրին Կարուց, զի զօրեղ հնարագործութեան ի մասին օտարացուցման վանքապատկան սեփականութեանց անքուն ջանիւք շարժի ի գործ և զօրացուցանէ զառիթս անխուսափելի վէճից և անախորժ տարաձայնութեանց։

Բաց յայդոցունց ամենից արդէն յայտնի է Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ի յայտարարութենէ իմմէ ի 13-ն յունիսի տարւոյս համարաւ 100, զի ժողովրդական վարչութիւնն Կարուց վճռադատեալ է տալ իւրաքանչիւր վանորէիցն, ուր ուրեք գտանին վանահարք՝ զի մի հարիւրական դեսեատին վարելահողս, ուրեմն հարկաւ պարտ է մատակարարել զայդպիսի քանակութիւն և վանիցն Հոռոմոսի, ուր մշտապէս եղեալ են վանահարք և այժմոյս ևս գտանի, և չէ պարտ զրկեալ զնոյն Հոռոմոսն յայդպիսւոյ որոշմանէ։

Զվերոգրելոցն յայտարարեալ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ի պարտ ու պատշաճն տնօրէնութիւն՝ վստահանամ ամենախոնարհաբար խնդրել զբարեհաճութիւն Դորին, որպէս զի այժմէն գէթ որոշեսցին անվիճելի սեփականութիւնք վարելահողոց Հոռոմոսի՝ հաղորդագրել Տեառն Նահանգապետին Կարուց առ ի կարգել զարքունի երկրաչափ, յաղագս յատկացուցանելոյ զգետինս պատկանեալս վանիցն և գտանեցեալս ի դարաւոր ժամանակաց ընդ գործադրութեամբ նորին, մինչև հետևեսցի արժանաւորն հոգացողութիւն Դորին ըստ մասին ընդհանուր կալուածոց վանորէից։ Իսկ որովհետև Տայլար անուանեալ գետինն պատկանեալն առանձինն մերձ առ Հոռոմոսին գտանեցեալ ի նմին տարածութեան հնաշէն եկեղեցւոյն Սուրբ Երրորդութեան է սահմանակից ընդ վերայ բացատրեալ վարելահողոց և արօտատեղեաց Հոռոմոսի վանից, որ և արդէն տուեալն է կապալաւ Նոտարիուսի Կարուց Պ. Սամբսոնի Բաբաջանեանց իննամեայ ժամանակաւ յոյր սակս բարեյարմար վարկանի ընդ ձեռն նոյն իսկ արքունի երկրաչափի որոշել և զսահմանանիշ նորին և արձանագրել ի յատակագիծ, զի ընդ միշտ առանց անակնկալելի վէճից և վտանգից կացցէ մնասցէ ընդ տիրապետութեամբ հոգևոր տեսչութեամբ Դորին։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թթ. 33-34, բնագիր, ձեռագիր:

№ - 61
ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՇԷՆ ԵՒ ԿԻՍԱՒԵՐ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 134 *22 հոկտեմբերի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի
Ի գործակցէ Հոռոմոսի արևմտեան Շիրակայ
Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց
Յայտարարութիւն

Գծագրեալ ի հրամանի Դորին ի 10-ն սեպտեմբերի անցելոյ համարաւ 2963, անորոշ պատասխանագրութիւն Կովկասեան Զինուորական Ագգային Կառավարութեան, թէ ամենայն ազատ հողք Կարուց նահանգի ստացեալ են զարդիս զայլ նշանակութիւն, չէ վերաբերելոց շէն և անշէն վանորէից և եկեղեցեաց նոյն նահանգի և շրջապատեալ կալուածոց նոցին, զի ի նահանգին յայնմիկ ազատ հողք, յորս գուցէ ո՛չ նշմարին բեկորք նշխարաց սրբազան հնութեանց, լայնատարած են յոյժ և զայնցանէ հարկաւ քաղաքական իշխանութիւնն կայացուցանելոյ էր զիւրն նախ ենթադատեալ նշանակութիւն, իսկ ի մասին հողոց գտանեցելոց ի շրջապատս զանազան շէն և անշէն սրբավայրից կանգուն և կիսականգուն տաճարաց, որք ի ժամանակս Օսմանեան Տէրութեան էին օթարան բուոց և աւազակաց և միանգամայն խաշնարած հովուաց, հարկաւ որոշումն լինելոց է կամ նախընթաց գիտութեամբ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի և կամ յետ նախապէս եզրակացուցանելոյ, թէ յի՞նչ վիճակ և հոգացողութիւն ապաստան առնին այն ամենայն հնութիւնք սրբութեանց նախնեաց դրոշմեալք օծմամբ քրիստոնէական սուրբ հաւատոյ յանուն ամենաբարձրելոյն Աստուծոյ արդե՞օք ըստ առաջնումն ի բնակութիւն բուոց և աւազակաց և այլն, թէ ի պաշտպանութիւն նուիրական սուրբ նշանակութեանց իւրեանց ի պարծանս և ի փառաւորութիւն սուրբ և վսեմ զգացմամբ քրիստոնէական ազատութեան, որով մեծազօր Կայսերութիւնն Ռուսաց կանգնեաց զերկնանման կոթող պանծալի յիշատակութեան յաշխարհահռչակ համբաւս տիեզերաց։

Ծանուցեալ զայսմանէ Սինոդիդ Սրբոյ էջմիածնի առ վերտողեալ հրամանի դորին, համարաւ 2963, պարտաւորութիւն ինձ համարեմ ամենախոնարհաբար խնդրել զբարեհաճութիւն դորին յաղագս տեղեկանալոյ ի վերտառեալ զինուորական կառավարութենէն, թէ յետ որոշելոյ զնշանակութիւն ազատ հողոյ Կարուց նահանգի՝ զի՞նչ որոշումն ստացեալ են կանգուն և կիսականգուն վանորայք և սրբազան տաճարք հնութեանց, պա՞րտին կալ, մնալ ըստ առաջնումն յաւէտ և

յարհամարհական դրութեան ի նախատինս քրիստոնէութեան, թէ շնորհելոցն է Բարձրագոյն Ատենիդ զակնկալեալ իրաւունս հոգալոյ հետզհետէ զայնցանէ զարժանն հեռացուցանելով ի շրջապատէ նոցին զմահմեդական բնակութիւնս ի մաքրութիւն, յապահովութիւն և մասամբ ի բարեկարգութիւն վտանգաւոր աւերմանց նոցին, որք գեղաշուք մեծագործութեամբ իւրեանց ածեն զհնախոյզ այցելուս ի զարմանս և շարժեն զհամակրութիւն նոցին։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3025, թ. 19 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 62
ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՄԵՆԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 167 *22 դեկտեմբերի 1883 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Գործակցէ վանահայրութեան Հոռոմոսի և Գործակալութեան Արևմտեան Շիրակայ
Յայտարարութիւն

Ի կատարումն հրամանի դորին յ30 յուլիսի տարւոյս համարաւ 2540, պատիւ ունեմ ամենախոնարհաբար ծանուցանել, թէ մինչդեռ մենաստանն Հոռոմոսի գտանէր ընդ իմով տեսչութեամբ հնարաւորեցայ հոգալ զոմանս ի նկարագրեալ կարկատանաց և վերանորոգութեանց նորին, այս է տախտակամածել զերկուս սենեկան շրջապատի նորին և զամբողջ որմունս ներքուստ և արտաքուստ ծեփել պատշաճաւոր սուաղիւ միջոցաւ նուիրատուութեան ոմանց ուխտաւորաց, իսկ միւս թերութիւնք գուցէ և կարևորագոյնք մնան ի վերայ հոգացողութեան կարգեալ անդէն ի մայիս ամսոյ տարւոյս վանահօրն Բարձրապատիւ Յակովբ վարդապետի Նորատունկեան, ընդ որոյ անընդմիջական վերահասութեամբ գտանի մենաստանն հանդերձ ամենայն արդեամբ և կալուածովք։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

Մակագրութիւն. Առեալ ի գիտութիւն Սինոդիս կցել ընդ գործոյն։
Անդամ Սինոդի՝ Մեսրովբ եպիսկոպոս [Սմբատեան]

Հաա, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 147, ինքնագիր:

№ - 63
ԿԱՐՍ ԵՒ ԲԱԹՈՒՄ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՋՄԱԿԵՐՊ ՎԻՃԱԿԻ ԵՒ ԴՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 56 *5 մարտի 1884 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի

Որպէս ըստ առաջին հրամանագրութեան Սրբոյ Սինոդիդ ի 22-ն նոյեմբերի 1883 ամի, առաւելապէս ըստ երկրորդին՝ ի 20-ն յունուարի տարւոյս ընդ համարաւ 52, յաղագս կազմելոյ զճիշտ վիճակագրական տեղեկութիւնս մերում Առաջնորդական վիճակի, մեք զամենայն պատշաճաւոր հնարս ի գործ ետաք, երկիցս և երիցս ստիպողաբար գրելով համայն գործակալաց վիճակիս առ ի հաղորդելը մեզ զհարկաւոր տեղեկութիւնս, այլ սակայն ամենայն ստիպողականութիւնք մեր ի դերև ելին, գլխաւորաբար ի ձեռն Գործակալոց Շիրակայ 34 գիւղորէից և վանահօրն Խօշավանից, յորոց ցարդ մինն միայն հասուցեալ է մեզ զպահանջեալ տեղեկութիւնս, իսկ միւսին ոչ իսկ պատասխանեալ բնաւ մեզ ցայսօր: Եւ այդ օրինակ հանգամանքն յառաջ գան բնաւին ի խառնակ և յանկերպարան դրութենէ վիճակիս, յորում գտանի ի չորից ամաց հետէ Առաջնորդական վիճակն մեր, գլխաւորապէս մասն Շիրակ անուանեալ, զորպիսի դրութենէ բազմիցս հրաւիրեալէ մեր զուշադրութիւն Սրբոյ Սինոդիդ և աղաչեալ բերել ի կարգի, այլ սակայն այդոքիկ ամենեքին անլսելի մնացեալ են ցարդ, ըստ անյայտ պատճառաց ի մէնջ, յորմէ և բնականաբար յառաջ գան այսօրինակ անկարգութիւնք:

Ս. Սինոդդ յաճախակի զայսպիսի առաջարկութիւնս առնէ մեզ ընդ ամս ամս այլ ո՞րպէս մարթէ մեզ կատարել զայդոսիկ պահանջմունս յայսպիսի անկերպարան վիճակի: Օրինակի աղագաւ, պատահեալ է բազմիցս, զի գրութիւն ինչ առաքեալ է մեր քահանայի միով Շիրակայ, զոր մեր նախապէս նշանակեալ էր գործակալ, և կամ յայդ պաշտօն ճանաչէաք զնա, այլ նա առանց գործադրութեան վերադարձեալ է զգրութիւն մեր, յայտնելով թէ՝ ինքն չէ այդ գործակալ, բայց այլ ոք քահանայ: Իսկ թէ ո՞ կացուցեալ զայն այլ ոք քահանայն ի գործակալութիւն, գէթ առանց տեղեկութիւն ինչ տալոյ մեզ, անյայտէ, իսկ բազմիցս ևս գրութիւնք մեր թէ ի գործակալացն Շիրակայ և թէ ի հասարակ քահանայից անարգեալ են անգործադրութիւնս յանդգնելով ասել միանգամայն թէ՝ նա չէ մեր Առաջնորդ և այլն: Եւ իրաւունս ունին, զի անդանօր ինքնակոչ Առաջնորդք հանապազ արտաքոյ պաշտամանց իւրեանց բազում կարգադրութիւնս առնին առանց մերում

գիտութեան, օրինակ՝ քահանայս փոփոխին, կարգին, պատժին, տուգանին, ամուսնական դատս վճռին և այլն և այլն։

Յետ այսր ամենայնի, առաջի առնեմք զխոնարհ եզրակացութիւն մեր Տիարցդ անդամոց Սրբոյ Սինոդիդ, թէ քանի Առաջնորդական վիճակս մեր գտանի յայսպիսի անկարգ դրութեան, որ քաջ յայտնի է Սրբոյ Սինոդիդ, ոչ միայն ոչինչ կարգադրութիւնք Հոգևոր Բարձրագոյն իշխանութեան և մեր, նոյնպէս և ի Սրբոյ Սինոդէդ մեզ տուեցեալ հրահանգին ոչ կարին ի գլուխ գալ, այլ և յայսպիսի դրութենէ ծագին զանազան անտեղութիւնք ի վնաս Ազգի, եկեղեցւոյ և վարժարանաց (քանզի ի Շիրակ գաւառի մերով ձեռամբ բացեալ տասնեակ վարժարանք առանց մերում անմիջական հսկողութեան մնալոյ, փակեալ են արդ) և յանպատուութիւն հոգևորականութեան, զորպիսիսն յաճախ նկատէ ուշադիրն։

Իսկ և մերոյս կողմանէ կրկնեմք յայտնելով, թէ ի ձախողակ դէպս պատասխանատու ոչ ճանաչեմք զմեզ։

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7194, թթ. 56-57, բնագիր, ձեռագիր:

№ - 64
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԲԱԳՆԱՅՐԻ (ՂՈՒԶԼԻՃԱՅԻ) ՆԱԽԿԻՆ ՎԱՆԱՀԱՅՐ ՅՕՆԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻՑ ՎԱՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 618 *6 մարտի 1884 թ.*
Ս. Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի. Վանահօրն Մակարավանից[85] *Բարեշնորհ Յօնան վարդապետի Սուքիասեան*

Ըստ Հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զզեկուցումն գործակից վանահայրութեան վանից Հոռոմոսի Յովսէփ աւագ քահանայն Կոստանեանց՝ ի 16 յունիսի անցելոյ 1883 ամի N 105, ի միջի այլոց ծանուցանելով զարձակմանէ Ձեր ի վանահայրութենէ Ղուզլիճու վանից և կարգմանէ վանահայր ի վանս Մակարայ առանց տալոյ Ձեր զհաշիւ վանահայրութեան Ձերոյ որ ի վանս Ղուզլիճու, խնդրեաց զտնօրէնութիւն Սինոդիս յաղագս վերադարձուցանելոյ Ձեզ անդր և յանձնելոյ զստացեալսն և զհաշիւ արարեալ ծախուց։ Ի հետևումն որոյ Սինոդս առաջադրութեամբ <u>յ30 սեպտ. N 3079</u>,

[85] Խօսքը Շիրակի մարզի Արթիկի շրջանի Պեմզաշէն աւանից 1-1,5 կմ արևելք ընկած վանքի մասին է: Կառուցուել է 11-րդ դարի սկզբներին, Գագիկ Բ.-ի օրօք: Շինուած է գորշ կարմրաւուն սրբատաշ խոշոր տուֆաքարերով: Աջակողմեան մատուռի ճակատի վրայ կա 1001 թ. արձանագրութիւն:

առաջադրեաց յիշեալ քահանային յայտնել Սինոդիս թէ որպիսի գործիս կամ պարագայս յանձնեալ է Ձեզ, առ ի տնօրինելոյ զարժանն։ Ի պատասխանի որոյ Յովսէփ աւագ քահանայն ի 22 հոկտ. անցելոյ 1883 ամի N *135, ծանուցանէ 1) թէ Յօնան վարդապետին Սուքիասեան յանձնեցաւ վասն գործադրութեան ի վերայ պիտոյից վանից Ղուզլիճու մի հատ երկաթեայ գործիք (սորանի[86]), մի հատ երկաթեայ քիւսակի լծակ, մի հատ բահ, երեք հատ խոբ, երկու բահ փայտեայ, երկու սօմար ցորեն, երկու րուբլւոյ ոտնաման մշակաց, և վարձ որոց տասն րուբլի, քսան րուբլւոյ խոտ երկրագործող մշակաց և քանիցս ճանապարհածախս և 2) եթէ պաշարեղէնն և այլ ծախք գործադրեալ են ի պիտոյս երկրագործութեան և այլն, սակայն յանձնեալ գործիք ո՞ւր արդեօք մնացին չէ՛ յայտ, և եթէ ի վարուցանից յանտէրութենէ չգոյացաւ այնքան արդիւնք, զի գէթ լցուցանիցէր զպիտոյս հնձոց և այլ հոգացողութեանց։*

Հրամայեցին զվերոգրեալ յայտարարութենէ Յովսէփ աւագ քահանայի ծանուցեալ Բարեշնորհութեամբ Ձերում պատուիրել Ձեզ թէ յիշատակեալ ի վերոյ գործիքն ո՞ւմ էք յանձնեալ, և եթէ չէք յանձնեալ ումեք, ո՞ւր է մնացեալ ընդ փոյթ յայտնեալ Սինոդիս։

Անդամ Սինոդի՝ Մեսրովբ եպիսկոպոս
Ատենադպիր՝ Մ. Մ.
Գործավար՝ Գասպարեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3038, թ. 39 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 65
ԿԱՂԶՈՒԱՆԻ ՕԿՐՈՒԳԻ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՊԵՏ ԻՇԽԱՆ ՄԱԿԱԵԻԻ ԿԱՉՄԱԾ ԱԿՏԸ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Յունիս, 1884 թ.
Կաղկուան

АКТ
ОБ ОТВОДЕ ЗЕМЕЛЬ В ПОЛЬЗОВАНИЕ БАШ-КИЛИССКОГО МОНАСТЫРЯ

Составлен сей мною, начальником Нахичеванского участка Кагызманского округа, ротмистром князем Макаевым в том, что сего числа в присутствии моем и ниже подписавшихся выборных понятых от жителей через старшего землемера Межевого отдела канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе, коллежского асессора Масалова последовал отвод с указанием

[86] Սորանի – երկբերանի մուրճ, մի բերանը ուրագի, միւսը կացնի ձևով, որով քարերի մէջ սորեր են փորում՝ սեպը դնելու և քարը ճեղքելու համար:

границ земельной дачи в пользование Баш-Килисского монастыря, причем, согласно преподанных мною указаний в отвод этот вошли земли из Баш-Килисской дачи пахотной и пастбищной *250* дес. По окончании сего отвода всем присутствовавшим понятым объявлено о пометовании указанных границ и сохранении поставленных межевых знаков.

Подлинное подписали:
Понятые выборные:
от курдов Езидинского общества:
Омар Ага Ибрагим оглы (М.П.), Усо Мго оглы (М.П.), Баро Авдо оглы (М.П.)
от жителей села Дигор:
Ато Хачоев (М.П.), Мукел Оганесов *Մուքէլ Օհանէսով*
Исмаил Чато оглы (М.П.), Халил Ибо оглы
и Начальник Нахичеванского участка ротмистр князь Макаев
Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 12 աշրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 66
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՀՈՂ ՅԱՏԿԱՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ՝ ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ ՎԱՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ՀՈՂԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՊԵՏԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 406 *6 ապրիլի 1885 թ.*
Կարս

Его Преосвященству Начальнику Карсо-Батумской Армяно-Григорианской епархии

Предписанием Командавшего Кавказскою Армиею от *30* октября *(2* ноября*) 1881*г. за №*5837* вменено Комиссии в обязанность производить в расчет Количеству земли не по границам, значащимся в документах, а по числу указанных донумов. В документах, представленных на земли монастыря Вартегер, значится всего семьсот донумов или *58* десятин, по ходатайству же предместника моего, разрешено отвести монастырю полтораста десятин, т.е. почти втрое больше того количества, на которое монастырь имел право по представленным документам. Остальная же земля, которою монастырь пользовался не по праву, принята в казну и отдается в аренду, а потому и доход, получаемый с этого последнего участка, принадлежит казне, а не монастырю.

О вышеизложенном имею честь сообщить Вашему Превосходительству, вследствие отзыва Вашего от *20* января текущего года.

Подлинный подписали:
Военный губернатор Карсской области генерал-майор Томич[87]
член комиссии полковник –

С подлинным верно: Письмоводитель духовного правления К. Агаджанян

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 6 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 67
ԿԱՂՁՈՒԱՆԻ ՕԿՐՈՒԳԻ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՊԵՏ ԻՇԽԱՆ ՄԱԿԱԵԻԻ ԿԱՁՄԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ՀԱՍԱՆՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7 յունիսի 1885 թ.
Տեկոր

Июня *1884* года указаны границы казенного участка «Гасан Джан» в Нахичеванском участке, Кагызманского округа Карсской области, заключающего в себе земли: удобной *260* дес., неудобой *26* дес., а всего *286* дес. в границах: от горы Караэт-Гюне граница С[еверо] - В[осточном] направлении, пересекая овраг, лежащий восточнее развалин деревни «Гасан-Джан», доходит до левого края этого оврага, по смежности с дачею сел Алям джамалдиновских курдов, далее по смежности с дачею сел. Машник, в Ю[го]- В[осточном] направлении идет по краю обрыва до первого, на расстоянии *500* саж. от предыдущего пункта, мыса, выдающегося в овраг, отсюда граница в Ю[го]- З[ападе] направлена, по прямой линии переходит на хребет, идущей от горы Караэт-Гюне к горе Уч-Тапа, по смежности соединенной дачею курдов, езидов и далее по этому хребту доходит до горы Караэт-Гюне в начале сего списанной. Границы в натуре указывал.

Подлинный подписал:
старший землемер коллежский ассесор Ф. Масалов

Джамалу Басо Ибо-оглы *(М.П.)*, Вали-Ало-оглы *(М.П.)*, Мусо Иса-оглы, Мго Нашо-оглы, Ибо Осман-оглы *(М.П.)*, Мсто Чагик-оглы *(М.П.)*, Гасан Махсут-оглы *(М.П.)*

Езиды Омар Ага Ибрагим оглы *(М.П.)*, Усе Мго-оглы, Мго Намо-оглы

---

87 Պետոր Իվանի Տօմիչ, գեներալ-լէյտենանտ, 05.10.1883 թ. հոկտեմբերի 5-ից 1898 թ. ապրիլի 22-ը եղել է Կարսի մարզի զինուորական նահանգապետը:

Окуз Мамед-оглы, Даверт Амо-оглы, Худета Амо-оглы
Дашник Таштамур Вало оглы *(М.П.)*, Мадат Сулейман оглы,
Али Машади-оглы, Султан Чато-оглы

Настоящие подписи совершены поименованными лицами и по просьбе которых, за неграмотностью их расписался Акоп Хаскюлев, к некотрыми же приложены именные печати, в том подписью и приложением казенной печати удостоверяется.

Подлинный подписали:

Начальник Нахичеванского уезда шт.-ротмистр князь Макаев

Письмоводитель Водопьянов

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 13 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 68
ԿԱՂՁՈՒԱՆԻ ՕԿՐՈՒԳԻ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՊԵՏ ԻՇԽԱՆ ՄԱԿԱԵՒԻ ԿԱՁՄԱԾ ԱԿՏԸ՝ԽԾԿՈՆՔ (ԲԷՇՔԻԼԻՍԱՅ) ՎԱՆՔԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7 յունիսի 1885 թ.
Տեկոր

Июня *1884* г. отведен участок земли в размере ***250*** десятин из бывшей дачи Баш-Килиса, монастырю Баш-Килиса в Нахичеванском участке Кагызманского округа, Карсской области, в границах: от соединения речек, идущих от селений Яйля и Акрака, граница в С*[*еверном*]* направлении поднимается на хребет и дойдя до каменистой вершины поворачивает в С*[*еверо*]*- В*[*осточном*]* направлении прямою линиею по соединении дорог, идущих от сел. Дигора, Хараба Дигора в Гюльгейран, здесь оканчивается смежность с соединенною дачею курдов-езидов и начианается смежность с дачею Армянским Дигором. От этого пункта граница переходит в Ю*[*го*]*- В*[*осточном*]* направлении в овраг и спускается по р. Дигор-Чай, далее граница по смежности с дачею сел. Акрак, поднимается по р. Дигор-Чаю в верх, по каковой и доходит до пункта в начале сего списанного.

Границы в натуре указывал:

Подлинное подписал:

Старший землемер коллежский асессор Ф.Масалов

Езиды: Омар Ага Ибрагим *(М.П.)*, Усо Мго-оглы, Баро Авдо оглы

Ало Амо оглы, Гоше Мго оглы, Окуз Мамад-оглы,
Гато Гамо оглы, Гасо Рамо оглы
Акрак՝ Будаг Нахапетов *Բուդաղ Սահակով*
Саак Папоев *Սահակ Բաբոյեան*
Айрапет Амбаров (М.П.), Сукиас Калустов *որոց գիր չգիտնալուն, խնդրանօք նոցա ստորագրեցի՝ Յակովբ Իսագուլով*
Дигор՝ Мыко Оваков *Մկո Յովակիմով*, Мукел Ованесов (М.П.)
Ато Хачаев *Աթօ Խաչոյեվ*, Арут Ованесов *Յարութ Յովհաննէսով*,
Исмаил Чато (М.П.), *որոց գիր չգիտնալուն, խնդրանօք նոցա ստորագրեցի՝ Հաճի Յակովբ Խասգիւլով*
Халил Ибо-оглы (М.П.) Хачо Акопов (М.П.)
Гюльгейран՝ Манук Хачоев *Մանուկ Խաչոյով*,
Пилос Атоев *Պիլոս Աթոյով*
Петрос Погосов *Պետրոս Պօղոսով*,
Сако Давидов *Սաքօ Դաւիթով*
Мосес Шакаров *Մոսէս Շաքարով*
Крикор Тепоев *Գրիգոր Տեպոյեվ, որոց գիր չգիտնալուն, խնդրանօք նոցա ստորագրեցի՝ Հաճի Յակովբ Խասգիւլով*

Что настоящие подписи совершены поименованными лицами, по просьбе которых, за неграмотностью их, расписался Акоп Хасгюлов, некоторыми же приложены именные печати, в том подписью и приложением казенной печати удостоверяется.

Подлинное подписали՝
Начальник Нахичеванского участка штабс-ротмистр
князь Макаев
Письмоводитель Водопьянов

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թթ. 14-15, պատճէն, ձեռագիր:

№ - 69
ՅՈՎՍԷՓ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ՝ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 24 *25 սեպտեմբերի 1885 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնողն Սրբոյ Էջմիածնի
Ի Յովսէփ աւագ քահանայէ Կոստանեանց

Յայտարարութիւն

Ստանալով իմ ի հոգացողութիւն վերահասութեան կայիցն և կալուածոց հռչակաւոր վանիցն Հոռոմոսի ընդ վանահայրութեամբ վանահօրն Խծկոնեաց վանիցն Յարութիւն վարդապետի Մանուկեան՝ փափագ իմ էր կանգնել փոքր ի շատէ զկենդանութիւն նորին և ածել յանվտանգ դրութիւն, սակայն ի պատճառս միայնութեան և տարաբարդ այլ և այլ զբազմանցս՝ անկարող եղէ ի կատար ածել զայդ փափագ և չընթացս քանի մի ամսեայ վարչութեանս՝ զոր ինչ արժանն էր և կարելին առնել՝ արարի, որպէս յայտ է դմին ի յայտարարութենէ իմմէ ի 22 դեկտեմբերի 1883 ամի համարաւ 163։

Ի մատուցեալ դմին ընդ յայտարարութեան իմոյ ի նոյն թիւ համարաւ 164 ժապաւինեալ մատենէ յայտնի է Սինոդիդ, զի յետ զննելոյ զհաշիւս մտից և ծախուց վանիցն Հոռոմոսի վասն 1882 ամի[88] մնայր ստանալի յապագայ արդեանց վանիցն երեսուն ինն րուբլի քսան եօթն կոպէկ, յորոց վանահայր Յարութիւն վարդապետն Մանուկեան մինչ ցմէկն մայիսի 1883 ամի ստացեալ էր զտասնութն րուբլի եօթն կոպէկ և մնայր ապառիկ քսան և մի րուբլի քսան կոպէկ, յետ որոյ ի սկզբան նոյն մայիս ամսոյ համաձայն հրամանի դորին ի 27-ն ապրիլի նոյն 1883 ամի համարաւ 1476 ի մուտ ի պաշտօն վանահայրութեան Հոռոմոսի իրաւամբ ստացման ամենատեսակ կալուածական, եկեղեցական և այլ արդեանց վանիցն Բարեշնորհ Յակովբ վարդապետն Նորատունկեան, ուրեմն և զմնացորդ պարտուցն վճարելոց էր նա յապագայ արդեանց։

Ի մտանելն Նորատունկեանի յայդ պաշտօն համաձայն թախանձանաց նորա արարան ընդ ձեռն իմ, Բարեկրօն Մարտիրոս քահանայի Տէր-Պօղոսեանց և քարտուղարի Հոգևոր կառավարութեան Պ. Կարապետի Ջանիբէգեանց զանազան ծախք սննդեան և այլ պիտոյից իւրոց և վանիցն խոստմամբ վճարման ի ստանալի կամ ի գոյանալի արդեանցն ամինն վաթսուն և հինգ րուբլի, զորս բարդելով ի վերայ վերտողեալ մնացորդացն և այլ վանքային ծախուցն եղև մի հարիւր քսան եօթն րուբլի, յորոց չետ բազմադիմի և երկար ժամանակեայ պահանջից իմոց հազիւ վճարեաց ձեռամբ Բարձրապատիւ Յաջորդի վիճակիս Սահակ վարդապետի Բաղդասարեան[89] զերեսու-

---

88 Մուտք ու ելքի մատեանը տես ՀԱԱ. ֆ. 56, ց. 6, գ. 2192:

89 Սահակ վարդապետ Բաղդասարեան – ծնուել է 1849 թ.: 1857-1864 թթ. սովորել է Էջմիածնի հոգևոր վարժարանում: 1864 թ. դեկտեմբերի 10-ին ընդունուել է Ս. Էջմիածնի միաբանութեան շարքը: 1872 թ. փետրուարի 29-ին ձեռնադրուել է աբեղայ: 1874 թ. ապրիլի 8-ին Շամախիի Ս. Աստուածածին եկեղեցում ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1878 թ. յունուարի 30-ին նշանակուել է Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր և տեղի Ժառանգաւորաց դպրոցի կրօնի և Հայոց լեզուի ուսուցիչ: Յետագայում վարել է զանազան պաշտօններ՝ ‹‹Արարատ›› ամսագրի խմբագիր, Ալեքսանդրապոլի փոխանորդ, Մակար Ա. Կաթողիկոսի գաւազանակիր: Սինոդի հրա-

նեօթն րուբլի վաթսուն կոպէկ և մնաց վճարելի ութսուն ինն րուբլի քառասուն կոպէկ, զորս գործադրեալ էի ի գտանիցեալ ի ձեռս իմ յարդեանց գործակալութեանն, իսկ զայսմ քանակութենէ թէև նա Բարեշնորհ Յակովբ վարդապետն ապահովեաց զիս երկոքումբք ստորագրութեամբք, և զպատճառաբերութիւնս նորա ընդունայն համարելով հետամուտ լինէի ստացմանն, սակայն ի զուր անցին ամենայն ջանք իմ և ո՛չ յաջողեցաւ ինձ։

Ուստի պարտաւորութիւն ինձ համարեցի ամենախոնարհաբար ծանուցանել զվերոգրելոցն Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի՝ մատուցմամբ երկուց իսկական ստորագրութեանց նորա ի տես և ի պատշաճաւորն տնօրէնութիւն։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

Մակագրութիւն. *Որովհետև յիշատակեալ ի յայտարարութիւնս յայսմի ի դրամք ծախեալ են առանց լուծման Սինոդիս, ուստի զխնդիր Յովսէփ աւագ քահանայի թողուլ առանց հետևանաց։*

Անդամ Սինոդի Մամբրէ եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 205 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 70
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 20 *11 յունուարի 1886 թ.*
Ս. Էջմիածին

Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի և Ծայրագոյն Պատրիարքի Ամենայն Հայոց Տեառն Մակարայ[90]

մանով 1892 թ. նոյեմբերի 31-ին նշանակուել է Սաղիանի Ս. Ստեփանոս վանքի միաբան, 1894 թ. մարտի 23-ին՝ Նուխիի փոխանորդ: Խրիմեան Ա. Կաթողիկոսի 1897 թ. սեպտեմբերի 17-ի կոնդակով կարգուել է Ղարաբաղի Հայոց Վիճակային Կոնսիստորիայի անդամ: Գէորգ Դ. Կաթողիկոսի կողմից 1882 թ. պարգևատրուել է վարդապետական լանջախաչով, իսկ 1886-ին Մակար Ա. Կաթողիկոսի կողմից՝ ծաղկեայ փիլոնով: 1891 թ. նոյեմբերի 10-ին Սինոդի հրամանով աքսորուել է Սևանի վանք՝ ապաշխարելու (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1640, թթ. 1-4):

90 Մակար Ա Թեղուտցի Ամենայն Հայոց Կաթողիկոս – Ծնուել է 1821 թ. ապրիլի 6-ին Բիթլիսի նահանգի Թեղուտ գիւղում – մահացել է 1891 թ. ապրիլի 16-ին: Սովորել է Էջմիածնի հոգևոր ուսումնարանում: 1838 թ. ապրիլի 12-ին ձեռնադրուել է սարկաւագ, իսկ 1842 թ. մարտի 25-ին՝ վարդապետ: Մէկ տարի անց Մակար վարդապետը նշանակուել է Ս. Էջմիածնի հոգևոր ուսումնարանի տեսուչ, իսկ 1847 թ.՝ Սինոդի անդամ: 1849 թ. կարգուել է Մայր Աթոռի մատենադարանապետ: 1852 թ. օգոստոսի 15-ին Ներսէս Աշտարակեցու կողմից ձեռնադրուել է եպիսկոպոս և նոյն թուականի նոյեմբերի 10-ին նշանակուել վանական կառավարութեան անդամ: 1859 թ. Մակար եպիսկոպոսին շնորհուել է արքութիւն: 1859 թ. յուլիսի 13-ին նշանակուել է Մայր Աթոռի լուսարարա-

Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ էջմիածնի Յայտարարութիւն

Ի Սինոդիս լուան զզեկուցումն նախ՝ կառավարիչն Գլխաւոր Կառավարութեան նախկին Փոխարքային Կովկասու[91] ի 15 օգոստոսի 1879 ամի N8221, խնդրեալ էր ի Սինոդէս զտեղեկութիւնս թէ ի վերայ որո՞պիսի հիմանց Հոգևոր իշխանութիւնն Հայոց ենթադատէ կարգադրիչ զկառավարութիւն եկեղեցական մասին իւրոյ ի նահանգս Ղարսի և Բաթումի, այսինքն՝ սահմանել անդ զառանձին թեմ, թէ զգտանեցեալ յայնոսիկ տեղիս զեկեղեցիս և զհոգևորականութիւնն հայոց ենթադրել վիճակային իշխանութեանց եղելոց ի սահմանս Կովկասու:

Առ այս Սինոդս ըստ նախընթաց հաճութեան հանգուցեալ Կաթուղիկոսի Ազգիս գրութեամբ ի 16-ն հոկտեմբերի 1879 ամի N2753, ծանուցեալ է Նորին Գերազանցութեան թէ զժամանակաւոր կառավարութիւն վիճակին Ղարս և Բաթում նահանգաց, Նորին Վեհափառութիւնն յանձնեալ է Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց և թէ Սինոդս յիւրմէ կողմանէ և յիւրումն ժամու ունի կարգադրել զարժանն վասն սահմանելոյ ի յիշատակեալ տեղիս զառանձին կառավարութիւն հոգևոր գործոց Հայոց Գրիգորեան դաւանութեան և առաջարկել Բարձրագոյն իշխանութեան ի հաստատութիւն օրէնսդրական կարգաւ: Յետ այնորիկ Տէր Կառավարչապետն Քաղաքական մասին Կովկասու ի 21 փետրուարի 1883 ամի N 98, ծանոյց Սինոդիս թէ ըստ միջնորդութեան հանգուցեալ Գէորգ Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի 28-ն դեկտեմբերի 1881 ամի N 498. Նորին Պայծառափայլութիւնն թղթակցեալ էր ընդ Նախարարութեան Ներքին Գործոց ի հայցել զբարձրագոյն հաճութիւն վասն հաստատելոյ ի կողմանս Տաճկահայաստանի անցեալս ի 1878 ամի ընդ տիրապետութեամբ Ռուսաց զվարչութիւն Հայոց Լուսաւորչեան եկեղեցեաց: Սակայն՝ Տէր Նախարարն Ներքին Գործոց[92] ի պատճառս մահուան Պատրիարք Կաթողիկոսի անյարմար համարելով առնել զոր և իցէ տնօրէնութիւն ըստ այսմ վսեմ հոգևոր առարկայի ենթադրեալ է, զտնօրէնութիւնս զայս թողուլ ցընտրութիւն Հայոց Կաթուղիկոսի որում և առաջարկել ի մերձաւոր նկատողութիւն և ի վախճանական ծրագրում հոգևոր կազմակերպութեան յայնոսիկ տեղիս, նամանաւանդ, զի պատրիարքունք էջմիածնի ի վաղուց անտի անհրաժեշտ են

պետ: 1864 թ. Մակար արքեպիսկոպոսը դարձել է Վրաց-Իմերէթեան թեմի առաջնորդ, իսկ 1876-ին՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ: 1882 թ. Գէորգ Դ. Կաթողիկոսը Մակար արքեպիսկոպոսին նշանակել է իր տեղակալ: 1885 թ. ապրիլի 2-ին Ալեքսանդր 2-րդ կայսեր կողմից նա հաստատուել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտօնում:

91 Խօսքը Իվան Դիոմիդի Պօպկօյի մասին է: Տե՛ս թիւ 6 ծանօթագրութիւնը:

92 Խօսքը Նիկոլայ Պաւելի Իգնատևի մասին է, որը 1881 թ. մայիսի 4-ից 1882 թ. մայիսի 30-ը Ներքին Գործերի Նախարարն էր:

համարեալ զփոփոխութիւն լուսաւորչական Հայոց վիճակաց, եղելոց ի պետութեան Ռուսիոյ։ Եւ երկրորդ՝ վասն գաղթական Հայոց, վերաբնակելոց ի նահանգին Սեաւ ծովու առ հարցումն Դէպարտամէնտի Գլխաւոր Կառավարութեան նախկին փոխարքային Կովկասու յայնմ թէ՝ առ ո՞ր վիճակ մարթէ համաթուել զվերոյիշեալ գաղթական հայս և այլն։ Սինոդս գրութեամբ ի 25 փետրուարի 1882 ամի N 446, ծանուցեալ էր նմին, թէ որովհետև գաղթական հայք, վերաբնակեալք են ի գիւղորայս և ի շրջակայս Սեաւ ծովու և ի գաւառին Սօխում – գալէի, որ ի նահանգին Քութայիսու և նահանգս այս ըստ հոգևոր մասին մտանէ ի զանգուած թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթիոյ վասն որոյ և մարթէ համաթուել զնոսա առ թեմն Հայոց Վրաստանի և Իմերէթիոյ։ Ի պատասխանի որոյ Կառավարիչն Գլխաւոր Կառավարութեան գրութեամբ յ31 մարտի 1883 ամի N 2709 հաղորդեալ է Սինոդիս, թէ միաւորութիւն հայոց վերաբնակելոց ի սահմանս Սեաւ ծովու և Սօխումայ ընդ վիճակին Հայոց Վրաստանի, յետաձգեալ է մինչ ցընտրութիւն նորոյ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, սահմանեցին. Զվերոգրելոցն ամենից յայտարարել Վեհափառութեան Ձերում խոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն Ձերդ Սրբութեան, յաղագս միջնորդելոյ առ Բարձրագոյն քաղաքական իշխանութիւն առ ի սահմանելոյ ի նորանուաճ կողմանս Ղարս և Բաթում նահանգաց զառանձին վարչութիւն հոգևոր գործոց Հայոց Գրիգորեան դաւանութեան և միաւորելոյ որպէս զայնոսիկ նահանգս, նոյնպէս և զգաղթական հայս, վերաբնակեալս ի շրջակայս Սեաւ ծովու և ի գիւղորայս գաւառին Սօխում – գալէի և Անապայի այնմ թէ մի, որում Սրբութիւն Ձեր ըստ Ձերումն բարեհաճ կամաց և նկատողութեան պատշաճ դատեցէք։

Անդամ Սինոդի՝ Մկրտիչ արքեպիսկոպոս[93]
Մեսրովբ եպիսկոպոս
Յովակիմ եպիսկոպոս
Երեմիա եպիսկոպոս[94]

---

[93] Մկրտիչ արք. Բաբամեանց – Ծնուել է 1818 թ.: Կրթութիւնը ստացել է Ս. Էջմիածնի հոգևոր դպրոցում: 1837 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1842 թ.՝ կուսակրօն քահանայ: 1846-1848 թթ. եղել է Էջմիածնի տպարանի վարիչը, 1848-1857 թթ.՝ Երևանի Հայոց վիճակային Կոնսիստորիայի անդամ: 1861 թ. եպիսկոպոս է ձեռնադրուել Մատթէոս Ա. Չուխաճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ: Տարբեր պաշտօններ է վարել Մայր Աթոռում, եղել է Ղզլարի, Նախիջևանի, Ախալցխայի առաջնորդական փոխանորդ, Երևանի թեմի առաջնորդ: 1873 թ. նշանակուել է Սինոդի անդամ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 133, թթ. 3-10):

[94] Երեմիա եպիսկոպոս (արքեպիսկոպոս) Գալստեան (1843 - 1897 նոյեմբերի 3) - 1855-1862 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Հոգևոր դպրոցում: 1862 թ. ընդունուել է Ս. Էջմիածնի միաբանութեան շարքը: Գայիանէի վանքում Մկրտիչ եպիսկոպոսի կողմից ձեռնադրուել է աւագ սարկաւագ 1863 թ. նոյեմբերի 2-ին: Մէկ տարի անց ստացել է վարդապետական աստիճան և կարգուել Մայր Տաճարի Կրտսեր Լուսարարապետ: 1873-1879 թթ., բացի վարած պաշտօնից, եղել է նաև վանական կառավարութեան անդամ: 1873

Ներսէս եպիսկոպոս[95]
Մամբրէ վարդապետ[96]
Ատենադպիր՝ Ս. Մուշեղեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թթ. 2-3 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 71
ԲԱԳԱՐԱՆ ԳԻՒՂԻ ԾԽԱՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳԻՒՂԻՍ ԳԷՈՐԳ ՈՒԽՏԱՏԵՂԻԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

11 մարտի 1886 թ.
Վաղարշապատ

Նորին Վեհափառութեան Մակարայ
Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Ի ծխատէր հաճախայէ Բագարան գեղջ Կարուց նահանգի Յովհաննէսէ
Տէր-Մկրտչեան
Ամենախոնարհ յայտարարութիւն

Բագարան գիւղը, որ ունի չիսուն տուն ժողովուրդ՝ չունի եկեղեցի, բայց ժամերգութիւնն կատարի ի սուրբ Գէորգ ուխտատեղւոջ՝ շինեալն ի սեպաձև լերին, կէս ժամ հեռաւորութեամբ ի գեղջէն: Ուխտատեղին գոլով փայտածածկ և մերձ ի կործանումն՝ կարօտի նորոգութեան,

թ. ապրիլի 21-ին Ե. Գալստեանը ձեռնադրուել է եպիսկոպոս և նոյն թուականի օգոստոսին Բարձրագոյն հրամանով հաստատուել է Ս. Էջմիածնի Սինոդի անդամ: 1873-1897 թթ. եղել է Մայր Տաճարի աւագ լուսարարը: Մակար Ա. Կաթողիկոսի մահից յետոյ 1891 թ. ապրիլի 16-ից մինչև 1893 թ. հոկտեմբերի 6-ը վարել է Կաթողիկոսի տեղապահի պաշտօնը: Նոյն թուին կարգուել է Հռիփսիմէի վանքի վանահայր: Մկրտիչ Խրիմեանի՝ 1896 թ. ապրիլի 1-ի կոնդակով Երեմիա եպիսկոպոսը ուղևորուել է Մոսկուա, որպէս Վեհափառին ներկայացուցիչ՝ ներկայ գտնուելու Նիկոլայ 2-րդ կայսեր թագադրութեան հանդէսին: 1896 թ. ապրիլի 4-ին ստացել է արքեպիսկոպոսի աստիճան (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 1632, թթ. 1-4):

[95] Ներսէս եպիսկոպոս (յետագայում՝ արքեպիսկոպոս) Խուդաւերդեան (1843 - 4 մարտի 1917)– կրթութիւնը ստացել է Ս. Էջմիածնի դպրանոցում: 1867 թ. ձեռնադրուել է կուսակրօն քահանայ, 1872-ին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: Նոյն թուականին նշանակուել է Սինոդի գանձապահ: 1873-ից Սինոդի անդամ էր: 1879 թ. եպիսկոպոս է օծուել Գէորգ Դ. Քէրէսթեճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով: 1891թ. ցարական իշխանութեան կողմից աքսորուել է Պոլտաւա, որտեղից վերադարձել է 1893-ին: 1896 թ. նշանակուել է Երևանի փոխթեմակալ: 1897 թ. դեկտեմբերի 27-ին արժանացել է արքութեան պատուի:

[96] Մամբրէ արքեպիսկոպոս Սանասարեան – Ծնուել է 1844 թ.: Սովորել է Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցում: 1864 թ. ձեռնադրուել է սարկաւագ, իսկ 1864 թ. ստացել է վարդապետական կոչում: 1868 թ. նշանակուել է Գորիի վիճակի փոխանորդ: 1871 թ. նշանակուել է Նոր Նախիջևանի Ս. Խաչվանքի վանահայր: 1877 թ. նշանակուել է Նախիջևանի, 1883 թ. Ախլցխայի վիճակի փոխանորդ: 1884 թ. նշանակուել է Սինոդի անդամ, 1886 թ. ձեռնադրուել է եպիսկոպոս և 1889 թ. նշանակուել Վիրահայոց թեմի առաջնորդ, որտեղ էլ 1892 թ. օգոստոսի 1-ին կնքում է մահկանացուն:

որոյ աղագաւ Առաջնորդն Կարուց վիճակի Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց ստանայ ի ժողովրդենէն Բագարանու ի տարին զհինգետասան րուբլի յօգուտ անձին, իսկ զմնացեալ եկամուտսն թողուի ի նպաստ շինութեան յիշեալ մատրանն։ Ժողովուրդն՝ յոր ձեռն կայ այդ կապալ, յընթացս չորից ամաց ի ձեռս բերեալ է յուխտատեղւոյն զհարիւր քսան րուբլիս, այսինքն՝ երեսնական րուբլի ի տարին, ուստի և սնլիքորն անգամ ի ժողովրդենէն բարձրանայ ի սեղան առ ի վառել զմոմս ի գայթակղութիւն բազմաց, չունելով զհսկող ոք ի սրբազնագործ անձանց։

Առ ի վերջ տալոյ այդպիսի տգեղ երևմանց, ես պարտ անձին վարկանեմ իբրև նախանձախնդիր տանն Աստուծոյ, յայտարարել Ձերում Վեհափառութեան զվերոգրելոցն ի տնօրէնութիւն, և եթէ բարւոք դատեսջիք յանձնել ի հսկողութիւն իմ զյիշեալ ուխտատեղին, ես խոստանամ.

1. Տալ միշտ յիւրաքանչիւրում ամի յօգուտ Սրբոյ Աթոռոյն զքսան և հինգ րուբլի և յօգուտ շինութեան եկեղեցւոյն զքառասուն և հինգ րուբլի, ընդ ամէնն եօթանասուն րուբլի, այնու նպատակաւ, զի ի Սինոդէ Սրբոյ էջմիածնի տուեալ լինիցի ինձ ժապաւինեալ տումար առ ի արձանագրելոյ զմուտս արդեանց ուխտատեղւոյն Սբ. Գէորգայ Բագարանու, զի եթէ արդիւնքն աւելի լինիցին քան զեօթանասուն րուբլի ի տարին, յայնժամ պարտ եմ զայնս դարձուցանել յօգուտ Սրբոյ Աթոռոյն, իսկ եթէ պակասեսցին, յայնժամ զպակասն լրացուցանել յիմոյ սեպհականութենէ։

2. Ջժողովեալ դրամն ամենայն հրամայել հաճեսջիք ընդունել ի ժողովրդենէն Բագարանու և յինէն ի գանձարան Սրբոյ էջմիածնի ի պահպանութիւն, զի մի՛ ի կորուստ մատնեսցին, մինչև կազմեսցի բաւականաչափ գումար դրամոց, զի նոքօք ի բարեյաջող ժամանակի ձեռն արկցի յարժանավայել նորոգութեան եկեղեցւոյն։

3. Որպէս զի հրամանաւ Սինոդի արգելեալ լինիցի հասարակ ժողովրդեան մուտ գործել ի սեղան սրբութեան ուխտատեղւոյն։

4. Որպէս զի այսուհետև զհաշիւ եկամտից ուխտատեղւոյն արձանագրեալ ի ժապաւինեալ տումարի հանդերձ դրամովք առաջի արարել ի վախճանի իւրաքանչիւր ամի ի Սինոդն Սրբոյ էջմիածնի և ոչ ումեք։

Զհետևանաց տնօրէնութեան Ձերդ Վեհափառութեան հաճեսջիք արժանի առնել զիս պատուիրանագրութեան ի ձեռն Սինոդի Սրբոյ էջմիածնի[97]։

Յովհաննէս քահանայ Տէր-Մկրտչեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 96, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր։

[97] Սինոդը 1886 թ. մարտի 27-ին լսելով խնդիրը, որոշեց Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանից ճշտել Բագարան գիւղի եկեղեցու վերաբերեալ մի շարք տեղեկութիւններ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 96, թ. 1 և շրջ.)։ Տես թիւ 102 ծանօթագրութիւնը։

№ - 72
[ՄԱԿԱՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ] ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՈՆԴՈՒԿՈՎ-ԿՈՐՍԱԿՈՎԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ, ԻՍԿ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 201 *27 մարտի 1886 թ.*

Վսեմապատիւ Տէր իշխան Ալեքսանդր Միխայէլովիչ[98]

Չէ զանխուլ ի Ձերդ Պայծառափայլութենէ, զի թեմական առաջնորդք հայոց եկեղեցւոյ և տեղական հոգևոր ատեանք պահպանին կամաւոր տրօք հայ ժողովրդեան։

Հայրապետական Աթոռն Ս. Էջմիածնի ըստ աննախանձելի դրամային դրութեան իւրոյ ո՛չ միայն չկարէ օժանդակել պահպանութեան յիշեալ պաշտօնատար անձանց և հոգևոր Ատենից. այլ և դժուարանայ ծածկել զմեծաքանակ ծախս իւր և հոգևոր ճեմարանի։ Առեալ իմ ի նկատի զաղքատիկ վիճակ ժողովրդոց բնակելոյ ի նորանուաճ նահանգս կարուց և Բաթումի անկարելի համարիմ հաստատել անդ զինքնուրոյն թեմական վիճակ, այլ կարևոր ճանաչեմ.

1. Հայ լուսաւորչական եկեղեցիք գտանեցեալք ի նահանգին Կարուց, որք են՝ ի Կարս քաղաքի և ի գաւառս Կարսի, Արդահանու, Կաղզուանու և Օլթայի ըստ եկեղեցական տեսչութեան համաթուել առ վիճակն Երևանի։

2. Ի Կարս քաղաքի հաստատել զփոխանորդութիւն և զհոգևոր կառավարութիւն։

3. Հայ լուսաւորչական եկեղեցիք գտանեցեալք ի գաւառ Բաթումի, Սուխումայ և Արդուինի համաթուել առ վիճակն Հայոց Տփխեաց։

Առաջի առնելով զներկայ ենթակայութիւն իմ Ձերումդ Պայծառափայլութեան խնդրեմ ի Ձէնջ, Վսեմապատիւ Տէ՛ր, տալ հաստատել զայն օրէնադրական կարգաւ, և զհետևանացն յարգել զիս ծանօթութեամբ վասն ապագայ տնօրէնութիւն։

Բարեհաճեցէ՛ք ընդունել զհաւաստիս խորին յարգանաց յանկեղծ մտերմութեան, որոյ պատիւ ունիմ մնալ

Ձերդ Պայծառափայլութեան ջերմեռանդ աղօթարար
[Մակար Ա. Կաթողիկոս]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թ. 4 և շրջ., թողօն[99], ձեռագիր։

---

98 Ալեքսանդր Դոնդուկով-Կորսակով (1820-1893) – ռուս պետական և ռազմական գործիչ, իշխան, գեներալ-ադիւտանտ, հեծելազօրի գեներալ։ 1882-1890 թթ. եղել է Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետը և զօրահրամանատարը։

99 Նոյն փաստաթղթի ռուսերէն տարբերակը տես նոյն տեղում, թթ. 5-6։

№ - 73
ԿԱՐՍԻ ԵՒ ԲԱԹՈՒՄԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԲԱԳԱՐԱՆԻ Ս. ԳԷՈՐԳ ՈՒԽՏԱՏԵՂԻԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 408 *1 մայիսի 1886 թ.*

Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Կառավարչէ Հոգևոր գործոց Կարս և Բաթում նահանգաց Գրիգորիս եպիսկոպոսէ Աղուանեան Յայտարարութիւն

Ընկալաք զգրութիւն Սինոդիդ որ ի 27 մարտի այսր ամի N *1264*[100]*, վերաբերութեամբ Ս. Գէորգ եկեղեցւոյն (ուխտատեղւոյն) Բագարան գեղջ վիճակիս, որում պատասխանեմք ըստ ամենայն հարցմանց: Ա. Ս. Գէորգ եկեղեցին Բագարան գեղջ, ըստ ասից ծխատէր քահանայի տեղւոյն չունի երթևէք կէս ժամաւ հեռաւորութիւն ի գեղջէն, այլ հեռաւորութիւն գորին հազիւ լինի տասն րոպէաչափ միայն: Բ. Ժողովուրդ տեղւոյն ոչ պէտս ունի և ոչ նիւթական դրութիւն նորին ներեն շինել զայլ իմն եկեղեցի ի գեղջն, այլ Ս. Գէորգ ուխտատեղի կոչեցեալն է ծխական եկեղեցի գեղջն ի բազում ժամանակաց հետէ, որպէս բազում եկեղեցիք այլոց գիւղորէից: Գ. Հինգ ամօք յառաջ գիւղական ժողովուրդ Բագարան գեղջ չվճարէր երբէք պտղի անուանեալ տուրս յիշեալ ծխական քահանայի իւրոյ Տէր Յովհաննէսի Տէր-Մկրտչեան, թողլով յապրուստ նորին զարդիւնս Ս. Գէորգ եկեղեցւոյն, վասն որոյ սկսեալ յայդմ ամէ, մեք կարգադրեցաք, զի ժողովուրդն յապրուստ քահանային պտղիս տացէ յարդեանց վաստակաց իւրոց ըստ այլոց գիւղականաց սովորութեան իսկ զարդիւնս եկեղեցւոյն յատկացուցաք ի պէտս ծախուց ուսումնարանի գեղջն, զոր ի նորոյ հիմնեցաք: Յայսմ կարգադրութեան վերայ դժգոհեցաւ քահանայն յայնմ օրէ և զամենայն ջան ի գործ արկանէր վերստին ի ձեռս բերել զարդիւնս եկեղեցւոյն Ս. Գէորգայ. այլ մեք արգելեալ եմք գործադրել ի պէտս անձնական շահուց քահանային: Յօրէ կարգադրութենէ մերմէ, ի գոյացեալ արդեանց եկեղեցւոյն շինեալ եմք ի գեղջ յատուկ ուսումնարան մի և ի քանի մի տարւոջ պահպանեալ ուսուցիչ ի տեղւոջն: Նովին արդեամբ հարթել տուեալ եմք զճանապարհ եկեղեցւոյն, իսկ այսօր ևս գտանի պատրաստի մօտ երեք հարիւր րուբլի դրամ, որ գտանի ի ձեռն Հոգաբարձուաց Ս. Գէորգ եկեղեցւոյն ընդ հսկողութեամբ և հաշուապահութեամբ գործակալ Գալուստ քահանայի*[101] *կողմանցն և գանձա-*

---

[100] Տես թիւ 97 ծանօթագրութիւնը:

[101] Գալուստ քահանայ Ղալայչեանց – ծնուել է 1831 թ.: Կրթութիւնը ստացել է մասնաւոր անձանց մօտ: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է Հոռոմոսի վանքում 1880

պահ Պ. Գէորգայ Դարբինեանց, զոր տուեալ եմք պահպանել ի պէտս նորոգութեան եկեղեցւոյն: Դ.Տէր Յովհաննէս քահանայն յայտնեալ է թէ՝ սինլքորն անգամ բարձրանայ ի սեղան առ ի վառել զմոմս: Այդ չէր ցարդ մեզ յայտնի, եթէ պատահեալ է, որպէս ինքն խոստովանի, յայդմ մեղաւոր ինքն է ամենևին, որ պաշտօնակատար էր եկեղեցւոյն, ուստի և կարէր հսկել և չտալ առիթ այդպիսի գայթակղութեան: Ե. Ս. Գէորգ եկեղեցին չունի երբէք սեպհական վարելահող, այլ ի մատուցեալ ծանօթութեանց վասն 1884 ամի, երևեալ վարելահողն զի սեպհական եկեղեցւոյն, և ցայսօր չէ մշակեալ և չէ բերեալ ոչինչ արդիւնս: Այդ վարելահողն մերով յորդորմամբ ի վերջին ժամանակս նուիրեալ են գիւղականքն ի բաժին հողոց իւրոց, նպատակաւ զի թերևս ի հողաչափութեան ժամանակի յատկացուսցի այդ եկեղեցւոյն, եթէ յաջողեսցի: Այսպէս վարեալ եմք բազում գիւղորայս վիճակիս, զորոց գտանին ծանօթութիւնք ի նոյն ցուցակի: Զ. Բագարան գիւղն բաց ի յիշեալ քահանայէն չունի զայլ ծխական քահանայ: է. Նոյն Տէրն Յովհաննէս քահանայն չէ բարեյոյս և անընդունակ է առ ի բարեկարգելոյ զուխտատեղին, որոյ վասն մեք չկարողացաք անդամակից անդամ առնել զնա Հոգաբարձութեան տեղւոյն: Ը. Ի Ս. Գէորգ եկեղեցւոյն ի տարին գոյանայ արդիւնք 100-130 րուբլի: Թ. Սուրբ Գէորգ եկեղեցին ունի զարդս և անօթեղէնս այնքան, որքան վայելէ գեղջկական եկեղեցւոյ մէջ, և գտանեցեալքն ի ձեռս բերեալ են յօրէ կարգադրութենէ մերմէ, այսինքն, յորժամ հանեալ եմք զարդիւնս եկեղեցւոյն ի ի Յովհաննէս քահանայէն: Ժ. Արդարև ճշմարիտ է, զի Ս. Գէորգ եկեղեցին մերձ է ի կործանումն, զորմէ նորոգութենէ մեր ի վաղուց անտի հոգացեալ էր, այլ դժբաղդաբար արգելաւ մտադրութիւն մեր յանկանելն դորին յանցեալ ամս ընդ այլոց տեսչութեամբ: Սակայն յանցեալ աշնան կոչելով մեր յԱռաջնորդարանս զգործակալ քահանայն նոյն կողմանց և զանդամ Հոգաբարձութեան եկեղեցւոյն, խորհեալ եմք զնորոգութենէ նորին, և յայսոսիկ աւուրս ևս մտադիր եմք անձամբ գնալ անդանօր ի քննել զհանգամանս, և եթէ ձեռնհաս լինեմք, յայսմ կամ յառաջիկայ ամի ձեռնարկեմք նորոգութեան եկեղեցւոյն[102]*:*

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

Մակագրութիւն. *Թողուլ առանց հետևանք:*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 96, թթ. 2-3, բնագիր, ձեռագիր:

օգոստոսի 15-ին: 1884-ից վարել է Տեկորի շրջանի գործակալի պաշտօնը: 1893 թ. հոկտեմբերի 12-ին պարգևատրուել է սևագոյն ծաղկեայ փիլոնով: 1903 թ. յունուարի դրութեամբ մահացած էր (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ., ֆ. 56, ց. 16, գ. 295, թթ. 66-67):

[102] Սինոդը 1886 թ. մայիսի 26-ին լսելով խնդիրը՝ որոշեց. «Ի նկատի առեալ զհաղորդել ի Գրիգորիս եպիսկոպոսէ Աղուանեանց հանգամանս և տեղեկութիւնս ըստ վերոյիշեալ առարկային, զխնդիր Յովհաննէս քահանայի Տէր Մկրտչեան թողուլ առանց հետևանաց» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 96, թ. 5):

№ - 74
ԿԱՐՍ ԵՒ ԲԱԹՈՒՄ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՔԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ԱՐՏՕՆԱԳՐԵՐԸ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 590 *28 օգոստոսի 1886 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Կառավարչէ Հոգևոր գործոց Կարս և Բաթում նահանգաց
Գրիգորիս եպիսկոպոսէ Աղուանեանց
Յայտարարութիւն

Ի հետևումն գրութեան Սինոդիդ որ ի 20-ն օգոստոսի 1886 ամի ընդ համարաւ 3260, այսու գրութեամբ առաքեմք առ Սինոդդ «զիսկական ապահովագիրս ազգային կալուածոցն». Ա. Գարագալէ ագարակի N98, Բ. կարալի ագարակի Վարդիհեր վանից N 6, Գ. արօտատեղւոյն նոյն վանից N 6, Դ. արօտատեղւոյն դարձեալ նոյն վանից N 15 (չորեքին ի միասին ի տաճիկ լեզու), Ե. Կարուց Ս. Նշան անուանեալ եկեղեցւոյ N 644 (երբեմն իսկապէս եկեղեցի Հայոց եղեալ է, իսկ ի կառավարութեան Տաճկաց գրաւեալ և անուանեալ էր «Թաս-շամի»), Զ. «Դայլար» ագարակի խոշավանից (տուեալ է յանուն Կարսաբնակ Մահտեսի Յարութիւնի Մխճեանց, զի «Թափի» (կալուածագիր) ագարակին «Դայլարու» հաստատեալ է յանուն նոյն Մահտեսի Յարութիւնի) և է. «Հաջի-Սէյիտ» Շամիի, զոր շնորհեալ է մեզ յեկեղեցի վերափոխելոյ:

Վասն որոյ խնդրեմք զստացմանէն տալ մեզ տեղեկութիւն: Խնդրեմք նոյնպէս վերադարձուցանել մեզ զարտօնագիրն Կարուց Ս. Նշան եկեղեցւոյ (Թաս-Շամի):

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 183, բնագիր, ձեռագիր:

№ - 75
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՂՁՈՒԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՇՏՕՆՈՒՄ ԹՈՂՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

4 հոկտեմբերի 1886 թ.
Կաղզուան

Նորին Օծութեան Վեհափառ Հայրապետին ազգիս Հայոց և Ս. Կաթողիկոսին Առաքելական Մայր եկեղեցւոյ Կաթողիկէ Ս. Էջմիածնի
Ի համօրէն բնակչաց Կաղզուան գաւառի Կարս նահանգի

Ամենախոնարհ խնդիր

Անցաւ ութ տարին, որ մենք համօրէն բնակիչքս կաղզուան գաւառի մեր միւս եկեղեցիների հետ, որ ի կարս և ի Բաթում նահանգս՝ վայելում ենք Ռուսաց Օգոստոսափառ կայսրների հովանաւորութեան և իշխանութեան տակ բարօրութիւն ու երջանկութիւն և չընթացս այս տարիների հանդերձ նիւթական ապահովութեամբ մշտապէս ստանում ենք հոգեկան և կրօնական մխիթարութիւն մեր Գերապատիւ Թեմական Առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանից որ իւր յաճախակի այցելութեամբ սփոփում է մեզ թէ՛ հոգեպէս և թէ՛ բարոյապէս: Սորա արած բարիքներն առ մեզ բազմաթիւ են: Սա էր որ վերջին ռուս-տաճկական արիւնահեղ պատերազմի ժամանակ ազատեց գաւառիս քրիստոնեայ հայ փոքրիկ խումբը արիւնարբու քրդաց և չէրքէզաց ճանկէն, որոնցից մի խումբ երեքհարիւր այրուձիից բաղկացած, մտադիր էր ամբողջ կաղզուանի քրիստոնեաներին, որք միայն հայեր էին, սրէ անցնել: Սա էր որ լուր առածին պէս իսկոյն դիմեց տաճկաց զօրաց գլխաւոր հրամանատար Մուխտար փաշային և սպառնացաւ հեռագրել Բ. Դրանը և Եւրոպական դեսպաններին՝ եթէ հրամանատար փաշան կարգադրութիւն չանի այդ վայրենի խմբին յետ կացնելու իւր չար մտադրութիւնից և Մուխտար փաշան իմանալով իսկոյն լուր ուղարկեց ի Կաղզուան ձերբակալել այդ խմբի առաջնորդներին և ի Կարս ուղարկել: Սա էր որ նոյն այդ պատերազմի ժամանակ ամենայն անձնուիրութեամբ շրջում էր գիւղէ գիւղ և քաղաքէ քաղաք ու ամենայն տեղ իւր անխոնջ գործունէութեամբ հսկում էր իւր փոքրիկ հօտի վերայ:

Նորին Սրբազնութիւնն ամենայն նեղութիւններ և չարչարանքներ յանձն առնելով՝ ման էր գալիս իւր վիճակի բոլոր գիւղերը և ուր եկեղեցի չկար քարոզում, համոզում և խրատում էր եկեղեցի շինել: Սորա օրով շատ գիւղերում եկեղեցիներ հիմնարկուեցան և կառուցուեցան, շատերի եկեղեցիները վերանորոգուեցան և մասնաւորապէս մեք, կաղզուանցիքս, Նորին Սրբազնութեանն ենք պարտական մեր եկեղեցւոյ հիմնարկութիւնն ու շարունակութիւնը, որ երկու տարուց յետոյ շինելու է մի այնպիսի եկեղեցի, որպիսին փոքրիկ քաղաքներում չի կարելի տեսնել:

Սորա քրտնաթոր ջանքերովն էր որ մինչև փակումն[103] *մեր դպրոցները գոյութիւն ունէին, սա էր որ յաճախակի այցելում, քարոզում և հասկացնում էր մեզ ուսման օգուտները, զանազան աղբիւրներ գտնելով և ստեղծելով յորդորում էր բանալ թէ՛ գիւղերում և թէ՛ քաղաքում*

[103] Խօսքը 1885 թ. ցարական իշխանութիւնների կողմից հայկական դպրոցների փակման մասին: Մէկ տարի անց թոյլատրուել է վերաբացել հայկական դպրոցները:

դպրոցներ[104]։ Սորա ատենաբանութիւններից ոգևորուած մեք, աղքատ ժողովուրդքս, մեր ուժից վեր գործեր ենք արել, եկեղեցիք ենք կառուցել և կառուցանում, ուսումնարաններ ենք պահել[105] և վերջապէս Նորին Սրբազանութիւնն էր, որ Ձերդ Վեհափառութեան սոյն թուականի օգոստոս ամսին եկեղեցական-ծխական դպրոցների մասին հրատարակած կանոնադրութիւնը ձեռին ամեն տեղ քարոզելով հասաւ և մերս Կաղզուան և ամենքիս այս ուրախութեան և ցնծութեան համբաւն հաղորդելուց յետոյ տասն և հինգ օր շարունակ հասարակական, պատգամաւորական և հոգաբարձական ժողովներ կազմեց, խրատեց, քարոզեց և յորդորեց միջոցներ տալու թէ՛ եկեղեցւոյ շինութիւնը շարունակելու և թէ՛ գոնէ մեծասեան երկսեռ դպրոցներ բանալու, որոնք արդէն կատարուեցան – բայց է արդէն մեր դպրոցը և շարունակւում է եկեղեցւոյ շինութիւնը և այս ամէնը կատարւում են մի բոլորովին աղքատ, անուսումնասէր ժողովուրդի մէջ, ինչպիսին մեք ենք։

Նորին Սրբազնութեան Գրիգորիս եպիսկոպոսի առ մեզ արած բոլոր բարիքները և երախտիքը Ձերումդ Վեհափառութեան առաջ ասելով համարձակւում ենք ամենաակնածաբար մերձենալ յոտս Ձերումդ Օծութեան և ամենախոնարհաբար խնդրել վարձատրել զՆորին Սրբազնութեան իւր այս քրտնաշխատ գործունէութեան համար, տարածել ի վերայ նորա զսուրբ հովանաւորութիւն Ձեր և կրկին քանի մի տարի շնորհել զՆորին Սրբազնութեան մեզ, որովհետև և այս յայտ առնեմք զի նա քաջ ուսումնասիրել է մեր թէ՛ կրօնական, թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական դրութիւնը և նա է այր ըստ սրտի և ըստ վիճակի մերում։ Ի 4-ն հոկտեմբ. 1886 ամի ի Կաղզուան։

Մնամք Ձերում Օծութեան խոնարհ որդիք

Պետրոս Տէր-Օվանէսեան
Մարտիրոս Ղազարեան
Տիգրան Գրիգորեան[106]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 16, գ. 49, թթ. 1-2 շրջ., բնագիր, ձեռագիր:

---

104 1885 թ. դրութեամբ Կարսի Վիճակում գործում էին 38 ծխական դպրոցներ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8095, թթ. 6-7):

105 Կաղզուանում գործում էր երկսեռ ծխական դպրոց, որը հիմնուել էր 1880 թ.: Նոյն թուականին դպրոց էին յաճախում 100 սաներ (50 տղա, 50 աղջիկ): Այն կոչւում էր Ս. Թարգմանչաց և Ս. Վառվառայի միացեալ երկդասեան դպրոց (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 37 շրջ. – 38. ֆ. 56, ց. 14, գ. 165, թթ. 7-8):

106 Հետևում է ևս 71 անձի ստորագրութիւն:

№ - 76
ԿԱՐՍԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱԿԱՐ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԴԷՄ ԵՂԱԾ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՐՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 հոկտեմբերի 1886 թ.

Կարս

Նորին Օծութեան Տեառն Տեառն Մակարայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի Արարատեան համազգային նախամեծար Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի

Ջերդ Վեհափառութիւն.

Յայտնի է, որ մեր ազգի՝ դարերով կրած անբաղդութիւնների և թշուառութիւնների իսկական պատճառն եղել է մեր գործողների այն եսական-նախանձ հոգին, որն անտեսել և դատել է հասարակական և ազգային շահերն իւր անձնականի տեսակէտից: Այդ մեր մշտնջենաւոր ցաւն, այդ քստմնելի յատկութիւնն, այնպիսի մի լոկ ճշմարտութիւն է, որ ամենքիս, մինչև իսկ ռամիկ ժողովրդի, հասկացողութեան մէջ մի անհերքելի դառնութիւն է դարձել: Եւ արդեօ՞ք անվերջ խռովութիւններն, սարսափելի հարուածներն, որ մեզ բաժին հասան, որպէս օրինաւոր հատուցումն մեր եսականութեան, փոքրոգութեան և անմիաբանութեան խրատեցի՞ն մեզ լինել արդարամիտ, ճշմարտասէր, անկողմնապահ, սովորեցրի՞ն մեզ արդեօք եթէ ոչ անձնականն հասարականին, գէթ հասարականն անձնականին չզոհել: Աւա՛ղ, ամօթօք պարտ ենք խոստովանել, որ մինչ օրս դեռ շատերն մեզանից ամեն ինչ դատում են իւրեանց քսակի տեսակէտից. ոչ միայն չգիտեն ճանաչել և յարգել այն բացառական անհատներին, որոնք մի կողմ թողնելով մասնաւոր ձգտումներն, խնամութիւնն և այլն, ազնիւ, անձնուէր գործում են յօգուտ ազգին, այլ մինչև անգամ կաշխատեն անմաքուր ձեռքերով ցեխոտել և քարկոծ անել այդպիսիներին, որոնց գործունէութիւնն բարձր է իւրեանց հասկացողութիւններից և անհամապատասխան իւրեանց մանր հաշիւներին: Մի և մի ե՞ն օրինակներն:

Ահա՛, այդպիսի մի անմխիթար երևոյթ տեղի ունեցաւ օրերումս մեր Կարս քաղաքում: Ցաւօք սրտի, իմացանք, որ մի քանի այս-այն կողմից հաւաքուած բաղդախնդիր անձնաւորութիւններ, որոնք դեռ համարձակութիւն չունեն ազատ խօսել «չափարի»[107] հետ, յանդգնել են, կեղծ և խաբեբայ միջոցներով, մի քանի միամիտների ստորագրութիւններն առնելով, ամբաստանել Ջերդ Օծութեան առջև տեղւոյն Առաջնորդ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանին[108], որոյ ազնիւ-ազգա-

---

[107] Չափար – ցանկապատ:

[108] 1886 թ. հոկտեմբերի 9-ին 234 անձի ստորագրութեամբ բողոքագիր է յղուել Մակար Ա. Կաթողիկոսին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 49, թթ. 3-6):

սէր հոգին, բարի սիրտն և բարձր արժանաւորութիւնները լաւ յայտնի են ամենքին, որոնք պատիւ են ունեցել ճանաչել այդ անխոնջ-բազմավաստակ ազգի մշակին: Անկարող ենք նկարագրել ամբողջ ժողովրդի զայրոյթն և արդար բարկութիւնն, երբ նա իմացաւ այն զրպարտութիւններն, որ բարձել են իւր սիրելի հովուի գլխին, որոյ երկարամեայ աշխատանքն և ճշմարիտ հայրական խնամքն նա վայելել է:

Եւ ա՛յդ այն րոպէին, երբ մեզ հարկաւոր էր համերաշխութիւն, աջակցութիւն, մոռացումն ամեն խռովութիւնների և անձնական հաշիւների, երբ ամենքիս ջանքն պէտք է ուղղուած լինէր դէպի այն սուրբ գործն, որոյ հաստատութիւնն պէտք է լինէր ամեն մէկիս առաջին պարտքն, ա՛յն րոպէին, երբ Վեհափառ Հօրդ շնորհօք վերականգնած ուսումնարաններն այդքա՜ն կարօտութիւն ունեն ամենքիս խնամոց և օգնութեան:

Մենք աւելորդ ենք համարում այստեղ մի առ մի յիշել այն ստոր և անարժան շարժառիթներն, որոնք դրդել են վերոյիշեալ անձնաւորութիւններին զրպարտել Գրիգորիս Սրբազանին – այն մարդուն, որն չկամենալով անմիաբանութեան և երկպառակութեան պատճառ դառնալ, ինքն կը քարոզէ և կաղաչէ ժողովրդին հանգիստ մնալ և չվրդովուել, երբ վերջինս կը ցանկանար մի հանգանակութիւն կազմել և դիմել Ձերդ Սրբութեան՝ պարզելով զրպարտողների մութ գործերը: Մի՞թէ, Վեհափառ Տէր, մեղադրելի է Գրիգորիս Սրբազանը, որ Օծութեանդ հրամանագրին համեմատ, չունենալով անձնական հաշիւ և աչքի առնելով միայն ազգային օգուտներն, անկարող գտնուեցաւ հաստատել ուսուցիչ – այդ բարձր կոչման անպատրաստ անձանց, թէև լինէին դոքա այս կամ այն պարոնի քրոջ կամ եղբօր որդին: Եւ մի՞թէ արժանաւոր ուսուցիչն կորցնում է այդ իւր յատկութիւնն միայն այն պատճառաւ որ նա այս փայտավաճառին կամ այն բաղնեպահին «աղա» չէ անուանել: Յաւա՛լի երևոյթ ...:

Ուշադրութեան արժանի և զարմանալի է, որ ուսուցչի արժանաւորութիւնը և պատրաստակամութիւնը համարձակւում են դատել այնպիսիներն, որոնք հազիւ կամ բոլորովին չգիտեն ստորագրել իւրեանց ազգանուններն, որոնք ուսումնարանի անունն վարագոյր շինելով իւրեանց մութ գործերին, դեռ չեն սովորել ջոկել այդ ուսումնարանն անկելանոցից, որոնք ուսումնարանում և եկեղեցիում դեռ տեսնում են մի ոսկեբեր «մատան», որից «խելոքը» կարող է և պարտ է օգտուել ... ի՜նչ, ի՜նչ անազնիւ ձգտումներ, ո՞րն չիշենք:

Անկասկած, ոչինչ արժէր մեզ ստորագրել տալ այս թերթիս հազարաւորներին, մինչև իսկ այն միամիտներին, որոնք չգիտելով պատճառն և միայն «խաթեր համար» տուել են իւրեանց անուններն զրպարտողներին, բայց մենք, բարոյական պարտք համարելով հասցնել արդարութեան ձայնն Սուրբ Հօրդ ականջին, միանգամայն անվայել ենք հա-

մարում այդպիսի խաբեբայական ձևերն և միջոցներն, պատկառելով Օծութեանդ Սուրբ անձից, յուսալով միայն մեր Վեհափառ Հօր անաչառ, անկողմնապահ և ազգասէր հոգւոյ վերայ, որոց սուրբ աղօթքն և օրհնութիւնն միշտ կհայցեն իւր սիրող և հնազանդ որդիքը։

Բժ. Մնացական Յարութիւնեան
Սարգիս Բէգտաշեան
Աստ[իճանաւոր] Յովհաննէս Ունջեան
Բժիշկ Աղէքսանդր Տէր-Յարութիւնեան
Բժիշկ Աղէքսանդր Ղազարոսեան
Աստ[իճանաւոր] Կարապետ Զլնկարեանց
Վաճառական Գէորգ Ազնաուրեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 49, թթ. 7-8 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 77
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՆԴԱՄ ՅՈՎՍԷՓ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՏԱՅԼԱՐԻ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔԻ ՎՐԱՅ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 242 *17 նոյեմբերի 1886 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնոյն Սրբոյ Էջմիածնի Ի Նախանդամոյ Հոգևոր Կառավարութեան Հայոց Աղէքսանդրապօլու Յայտարարութիւն

Թէպէտ ժողովրդականք արևելեան և արևմտեան կոյս Շիրակայ դեռևս ցանկան ի սրտէ վերանորոգութիւն հնաշէն կամուրջին ի վերայ վանքապատկան գետնոյն Տայլարի և յօժարին կազմել զհասարակական վճիռ առ մատուցումն որոց հարկն է սակայն ի պատճառս արձակման իմոյ ի պաշտամանէ գործակալութեանն Հոռոմոսի չկարելով իմ յայսմհետէ անթերի գտանել ի խախտումն իմ և ի պահանջ վերանորոգութեան ըստ մասին հասուցանելի օժանդակութեանց և ձեռնատուութեանց, որ կախի զկամաց և զհաճութենէ տեղական Հոգևոր իշխանութեան այր սակս աւելորդ վարկայ իրագործել զկազմումն հրամայեալ վճռոյն և մատուցանել Տեառն Նահանգապետին Երևանայ[109]*։*

Զայսմանէ պարտք ինձ համարեցի ամենախոնարհաբար յայտ առնել դմին ի տեղեկութիւն։

Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 72, թ. 191, բնագիր, ձեռագիր:

[109] Խօսքը գեներալ-լէյտենանտ Միխայէլ Շալիկովի մասին է, որը 1880 թ. մարտի 22-ից 1890 թ. դեկտեմբերի 22-ը եղել է Երևանի նահանգապետը:

№ - 78
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՀՐԱՄԱՆԸ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՐԱՆ ԿԱՐՍ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1339 *27 ապրիլի 1887 թ.*
Ս. Էջմիածնի

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան, Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի Գերապատիւ Մեսրովբ Սրբազան եպիսկոպոսի Սմբատեանց՝ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զգրութիւն Օգնականի կառավարչապետի քաղաքական մասին կովկասու, ի 19 յունուարի տարւոյս N538, յանուն Սրբազնագոյն Պատրիարք Կաթողիկոսի Ամենայն Հայոց, և ի Նորին Սրբութենէ մակագրութեամբ յ3 փետրուարի N68, յանձնեալ ի պատշաճական կարգադրութիւն Սինոդիս, յորում գրի այսպէս. «Նախարարն Ներքին Գործոց[110] ծանուցանէ կառավարչապետին, թէ՝ Բարձրագոյն հաստատեալ ի 23-ն դեկտեմբեր 1886 ամի դատողութեամբ կայսերական Խորհրդարանի սահմանեալ է: Ի յաւելուածոց 962 և 963 կանոնադրութեան Հոգևոր Գործոց Այլադաւան Ազանց (գիրք օրինաց XI մասն I ի լոյս ընծայեալ յամին 1857) սահմանել. 1. Հայոց Լուսաւորչական եկեղեցիք կարսայ նահանգի մտանին ի շրջան Երևանայ վիճակի, իսկ նոյնպիսի եկեղեցիք ի սահմանս Բաթումայ, Արդուինու և Սուխումայ՝ Քութայիսու նահանգի՝ համաթուին առ վիճակն Վրաստանի: 2. Ի կարս քաղաքի սահմանին պաշտօն Պատրիարքական Փոխանորդի և Հոգևոր Կառավարութիւն: Զայսմ Բարձրագոյն կամաց պատիւ ունիմ ծանուցանել Ձերում Վեհափառութեան, ի հետևումն գրութեան Ձերոյ ի 27-ն մարտի անցեալ ամի ընդ N201»: Հրամայեցին. առնել զհետևեալս, նախ՝ համաձայն Բարձրագոյն կամօք հաստատեալ դատողութեան Արքունի Խորհրդարանի զեկեղեցիս Հայոց եղեալս ի նահանգին կարուց միաւորել ընդ վիճակին Հայոց Երևանայ և ամենայն հոգևորական դասուք եկեղեցական և վանքական կայիւք և կալուածովք նոցին ենթադրել վիճակային Կոնսիստորիային Հայոց Երևանայ, ընդ Ատենապետութեամբ Վեհափառ Կաթողիկոսի ազգիս, ի վերայ հիման, 962 յօդ. Ա. մասին ժա հատ. Օրինաց Տէրութեան ի լոյս ընծայելոց ի 1857 ամի: Երկրորդ՝ զեկեղեցիս Հայոց Բաթումայ, Արդուինայ և Սուխումայ սահմանաց Քութայիսու նահանգի համաթուել ընդ վիճակին Հայոց Վրաստանի, որոյ վասն և հրամանագրել Կոնսիստորիային Հայոց Տփխիսու ընդունել զայնս ի տեսչութեան իւր: Երրորդ՝ ի Կարս քաղաքի սահմանել

[110] Խօսքը Դմիտրի Անդրէի Տոլստոյի (1823-1889) մասին է, որը 1882 թ. մայիսի 30-ից 1889 թ. ապրիլի 25-ը Ներքին Գործերի Նախարարն էր:

պաշտօն Պատրիարքական Փոխանորդի և բանալ զՀոգևոր Կառավարութիւն, նշանակելով ի պաշտօն Փոխանորդի զԳրիգոր եպիսկոպոսն Աղուանեանց, և առ այս վախճան յանձնել Ջերում Սրբազնութեան, անձամբ գնալ ի Ղարս քաղաք և յառաջնորդական աւագ եկեղեցւոջ Հայոց տեղւոյն պատշաճաւորն ատենաբանութեամբ յայտնել հոգևորական և աշխարհական դասուց զայսմ Բարձրագոյն կարգադրութենէ, կատարել զգոհացողական մաղթանք վասն բարօրութեան կենաց Թագաւոր Կայսեր և եկեղեցական դասուք խաչիւ և աւետարանաւ և երգօք շարականաց գնալով ի պատրաստեալ պատշաճաւոր սենեակն՝ բանալ զՀոգևոր Կառավարութիւն Հայոց տեղւոյն՝ ընթերցմամբ հրամանի Սինոդիս ի լուր ամենեցուն: Չորրորդ՝ յետ բացման Հոգևոր կառավարութեան խորհրդակցութեամբ ընդ փոխանորդի տեղւոյն և ընտրանօք նորին զերկուս յարժանաւոր և յընդունակ քահանայից տեղւոյն նշանակել անդամ ի նորոգ բացեալ Հոգևոր կառավարութեանն և որպէս զանդամսն, նոյնպէս և Փոխանորդ Գրիգորիս եպիսկոպոսն ածել յերդումն յԱտենի այնր կառավարութեան, վասն հաւատարիմ ծառայութեան, սահմանեալն կարգաւ և ըստ առաքեալ ի Սինոդէս ձևոյ երդմնագրոյն, և զգուշական ծառայութեանց նոցա մատուցանել Սինոդիս: Հինգերորդ՝ յանձնել Սրբազնութեան ձերում, զի ի վերայ հիման 987 յօդ. վերոյիշեալ հատորոյ օրինաց ընտրել և նշանակել զընդունակ ոք ի պաշտօն քարտուղարի Հոգևոր կառավարութեան, որ հմուտ իցէ կարգին կօլլեգիական գործառնութեանց ի հայ և ի ռուս լեզուս, և առաջարկել փոխանորդի և անդամոց կառավարութեան ըստ առաքեալ ի Սինոդէս հրահանգին, խորհրդակցութեամբ միմեանց վարել զգործս նորին կօլլեգիական կարգաւ, ըստ օրինակի միւս Հոգևոր կառավարութեանց Հայոց ի Ռուսաստան, ունելով ի նկատի և զկանոնս սահմանեալս վասն Հոգևոր կառավարութեանց Հայոց յ986-999 յօդուածան Ա. մասին ժա հատ. օրինաց տէրութեան, ի լոյս ընծայելոյ ի 1857 ամի: Իսկ զհաշիւս մտից և ծախուց վարեալս մինչ ցարդ հանդերձ առ ձեռն գտանեցեալ պատրաստի դրամօք ստանալ ի Գրիգորիս եպիսկոպոսէ Աղուանեանց օրինաւոր ցուցակօք հանդերձ գործովք և գրագրութեամբք վերաբերելովք վիճակին Ղարսայ և յանձնել Հոգևոր կառավարութեան, ստորագրութեամբք անդամոց և քարտուղարի և զօրինակ ցուցակին մատուցանել ի հաշուարարական Մասն Սինոդիս, պարտաւորելով զԳրիգորիս եպիսկոպոսն Աղուանեանց այսուհետև զվիճակային և զայլ ամենայն դրամական արդիւնս չստանալ ինքնուրոյն, այլ մշտապէս յԱտենի կառավարութեան գիտութեամբ Անդամոց և քարտուղարին կառավարութեան և զստացեալ դրամական արդիւնս յանձնել ստորագրութեամբ ի պահպանութիւն գանձապահին, յոր պաշտօն այժմէն իսկ նշանակել տալ զմին ի հաւատարիմ անդամոց կառավարութեան: Վեցերորդ՝ ի ոճիկ փոխանորդի

Ղարսայ նշանակել ի վիճակային գումարաց ի տարին 700 ր., ի ռոճիկ քարտուղարի Հոգևոր կառավարութեան ի տարին 300 ր., ի վարձ ծառայի (ստօրօժի) 70 ր. և ի պէտս դիւանական ծախուց 60 ր., ամէնն ի տարին 1130 ր., պարտաւորելով զփոխանորդն և զանդամս Հոգևոր կառավարութեան չվստահանալ աւելի քան զնշանակեալ գումարս առնել զինքնուրոյն ծախս ի վիճակային և յեկեղեցական գումարաց երկիւղիւ ի հակառակ դէպս տուժելոյ զայնս ի սեպհականութեանց իւրեանց. և յետ հանելոյ զսահմանեալ 1130 ր. ծախս ի գումարոց մտից զաւելորդ մնացեալ դրամն ի չորս ամսոյ ցչորս ամիսս մատուցանել Սինոդիս: Իսկ ի դէպս անհրաժեշտ կարևոր ծախուց մշտապէս խնդրել զլուծումն ի Սինոդէս: Եօթներորդ՝ Զվերոգրելոցն ամենից ծանուցանել առանձին հրամանաւ Վիճակային Կոնսիստորիային Հայոց Երևանայ վասն տեղեկութեան միւս Կոնսիստորիայից և Հոգևոր կառավարութեանց Հայոց հրատարակել միջոցաւ «Արարատ» ամսագրոյ[111], իսկ զքաղուած օրագրութեանս տալ ի Հաշուարարական Մասն Սինոդիս առ ի պատրաստելոյ և առաքելոյ յանուն Հոգևոր կառավարութեան զժապաւինեալ մատեան մտից և ծախուց վիճակային և այլ դրամական տարեկան արդեանց նոցին: Բաց յայսմանէ առաջադրել նորոգ բացեալ Հոգևոր կառավարութեանն Հայոց Ղարսայ ի շուտափոյթ միջոցի ծախուք վիճակային գումարաց գնել զմի պատկեր Թագաւոր Կայսեր վասն Ատենի իւրոյ, ըստ օրինակի միւս քաղաքական ատենատեղեաց: Ի 27 ապրիլի 1887 ամի, ի Ս. Էջմիածին:

Անդամ Սինոդի՝ Մամբրէ եպիսկոպոս
Ատենադպիր՝ Ս. Մուշեղեանց
Գործավար՝ Գ. Սմբատեան

Ընդ իսկականին ուղիղ է՝ Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 248, թթ. 6-7, վաւերացուած պատճէն, ձեռագիր:

№ - 79
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 10 *10 մայիսի 1887 թ.*
Կարս

Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց վիճակի

Այսօր ի 10-ն ամսոյս հանդիսաւոր կարգաւ բանալով զԱտեան Հոգևոր կառավարութեան Հայոց Կարուց վիճակի համաձայն հրամա-

[111] Տեղեկատուութիւնը հրապարակուել է ‹‹Արարատ›› ամսագրի 1887 թ. մայիսի համարում, էջ 240-241:

նագրութեան Սինոդի Սրբոյ Էջմիածնի գրելոյ յանուն իմ ի 27-ն անցելոյ ապրիլի համարաւ 1339[112], ընդ այսմ յանձնիմ Հոգևոր Կառավարութեանդ զնոյն իսկ հրամանագրութեան Սինոդի ևս և հրամանագրութեանն և առաջադրեմ ըստ ամենայնի համաձայն այնմիկ հրամանագրութեան վարել և հրահանգութեան և յօդուածոց օրինացն՝ որով ընդ հրամանագրութեանն։

Կարևոր համարիմ յաւելուլ թէ՝ այսօր խորհրդակցութեամբ նախագահի Հոգևոր Կառավարութեանդ ընտրեցան յանդամակցութիւն Աստենիդ երկոքին ընդունակ ու արժանաւոր քահանայքն՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց և Ղուկաս քահանայն Արծրունի[113]։

Իսկ ի պաշտօն քարտուղարի՝ ըստ իրաւանց տուելոյ ինձ ի Սինոդէն ընտրեալ եմ զընդունակն ի հայ և ռուս լեզուս և զօրէնսգէտն և վարժն ի պաշտօնական գրագրութիւն զաստիճանաւոր Պ. Կարապետն Յովհաննէսեանց Ալեքսանդրապոլցի որոյ ընտրութիւն միանգամայն և համաձայն է 987 յօդ. ժա. հատորոյ օրինաց Տէրութեան[114], զոր ներկայացուցանելով Հոգևոր կառավարութեան առաջադրեմ ճանաչել զնա քարտուղար և տալ վարել զգործս կօլլեգիական կարգաւ։

Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 248, թ. 18 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 80
КАРС ҚАҒАДЫ ПАСТАМАШЫЛАРЫНЫҢ ЕКІНШІ А. АМЕНАЗЫ ЖАЗҒАН ҚАРСЫ ЖАҚТАҒЫ ҚАЗАҚ ӘКІМШІЛІГІНЕ ОСЫ ЖЕРДЕГІ ҚАЗАҚ ӘКІМШІЛІГІНІҢ ЖАЗҒЫЗЫЛУЫ ТУРАЛЫ

12 мамыр 1887 ж.
Қарс

Чувствами глубочайшей признательности общество армян повергает стопам Вашего Святейшества, искреннею благодарностью за открытие Духовного правления.

Депутаты города: Аветик Сафарянц, Давид Мириманянц.

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թ. 11, հեռագրական ձևաթուղթ:

---

112 Տես նախորդ փաստաթուղթը:

113 Ղուկաս աւագ քահանայ Արծրունի – ծնուել է 1809 թ.: Կրթութիւնը ստացել է Գլակայ վանքում: քահանայ է ձեռնադրուել 1852 թ.: 1865 թ. նշանակուել է Կարսի առաջնորդական փոխանորդ, 1887 թ. մայիսի 10-ին՝ Կարսի Հոգևոր Կառավարութեան անդամ, իսկ 1889-ին՝ Կարս քաղաքի եկեղեցիների բարեկարգիչ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349, ֆ. 56, ց. 16, գ. 66, թթ. 53 շրջ.-54):

114 Խօսքը հետևեալ յօդուածի մասին է. «Անդամք Լուսաւորչական Հայոց Հոգևոր կառավարութեանց նշանակին ի Թեմակալ Առաջնորդէն, գրագիրք ընտրին և կարգին ի նոյն կառավարութեանց: Ի մտանելն ի պաշտօն ամենեքին նոքա երդնուն առ հաւատարիմ ծառայութիւն» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 248, թ. 9):

№ - 81
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ՅՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 մայիսի 1887 թ.
Կարս

Վեհափառ Տէ՛ր.

Շնորհիւ և ողորմութեամբ Աստուծոյ և օրհնութեամբ Հօրդ խնամակալի ի 5-ն ամսոյս հասեալ ի Կարս քաղաքս՝ իչևանեցաք յԱռաջնորդարանին՝ որ բաղկանայ յերկուց հեռի ի միմեանց սենեկաց, ուր և խորհրդակցութեամբ Առաջնորդի տեղւոյս Գրիգորիս եպիսկոպոսի պատրաստեցաք զկարևորն վասն բացման Հոգևոր Կառավարութեան, և ընտրեցաք զԱնդամս նորին և զՔարտուղարն, և ապա՝ ի 10-ն ամսոյս՝ յաւուր կիւրակէի՝ բացաք զԱտեան Հոգևոր Կառավարութեան այնմիկ՝ համաձայն հրահանգութեան Սինոդի՝ հետևեալ կարգաւն։

Ջբացմանէ Հոգևոր Կառավարութեան աւուրքք յառաջ յեկեղեցիս քաղաքիս ծանուցմամբ հրատարակեալ, և ի գաւառս գրութեամբ ընդ ձեռն գործակալաց, իսկ երևելեաց հայոց քաղաքիս, որպէս և Նահանգապետին ի ժամ այցելութեանս անձամբ ծանուցի և հրաւիրեցի, ապա ի 10-ն ամսոյս՝ ի 10-ն ժամու մատուցանելով զփրկարար պատարագն յԱւագ եկեղեցւոջ քաղաքիս՝ ատենաբանութեամբ յաւարտ պատարագին՝ նախ՝ մատուցի բարեպաշտ բազմաթիւ ժողովրդեանս զՀայրապետական ողջոյն և օրհնութիւն Ջերդ Վեհափառութեան, և ապա՝ յիշեցուցանելով զՓրկչական բանն «Տո՛ւք զկայսերն՝ կայսեր, և զԱստծունը՝ Աստուծոյ» յայտնեցի զկարևորութիւն բացման Հոգևոր Կառավարութեանս ի վիճակիս. և յետ ըստ կարգին բանախօսութեանս՝ կատարեցաք զգոհացողական մաղթանս վասն կենաց կայսերն Ռուսաց, և յաւարտ այնր նոյնպէս զգեստաւորեալք՝ ամենայն ուխտիւք եկեղեցւոյն՝ երգելով զշարականն «Թագաւոր փառաց Աստուած հոգիդ կենդանարար»։ Ելեալ յեկեղեցւոյն՝ գնացաք ի պատրաստեալ սենեակն՝ որ յարևելից կից է նոյն իսկ եկեղեցւոյն, ուր քարտուղարն կարդաց հրաման Սինոդի։ Եւ իմ յետ քանի բանս վասն խորհրդապահութեան և երդման խօսելոյ, ապա՝ ընթերցան զերդմնագիրն ըստ կարգին՝ նախ՝ Գրիգորիս եպիսկոպոս Նախագահն Հոգևոր Կառավարութեան, և ապա՝ անդամք՝ Մինաս քահանայն կրօնուսոյցն ի հոգևոր դպրոցս մեր և ընդունակն ի պաշտօնավարութիւնս, և ծերունի Ղուկաս քահանայն՝ զորմէ Գրիգորիս եպիսկոպոսն պնդելով վկայեաց, թէ վարժ է գործառնութեանց՝ լինելով երբեմն առաջնորդական փոխանորդ, և յետ ամենեցուն շնորհաւորելով զբացումն Հոգևոր Ատենին՝ և մաղթելով վասն նորընտիր ատենակալացն զկարողութիւն սրբութեամբ և արդարութեամբ վարելոյ զպաշտօնս ի պսակել զյոյս Վեհափառ Հօրդ

և ի մխիթարել ցայսօր համարեա անմխիթար և անխնամ թողեալ զողորմելի ժողովուրդն, և ապա՝ օրհնելով զհանդիսատես բազմութիւն «Պահպանիչ» աղօթիւքն՝ արձակեցաք ի հանգիստ։

Յետ հանդիսակատարութիւնս՝ նահանգապետն և քանի պատուաւոր իշխանք եկին ի շնորհաւորութիւն, և յայտնեցին զգոհունակութիւն Վեհափառ Հօրդ վասն այսպիսի Հայրախնամ այցելութեան՝ վիճակիս։

Այսպէս կատարեցաւ առաջին պատուէր Վեհափառ Տեառնդ, զորմէ և յայտնեալ իմ Սինոդին, իսկ վասն երկրորդի հրամանին՝ այն է՝ քննելոյ զբողոքս ոմանց ժողովրդոց, այս է խնդիրն, զի Գրիգորիս եպիսկոպոսն զբաղեալ այլ և այլ գործովք՝ դեռ չյանձնեաց կառավարութիւնն զի ձեռս իւր եղեալ առաջնորդական և վիճակային գործս, հաշիւս, տոմարս, և այլն. իսկ դրամ և ո՛չ մի կոպէկ գտանի, ըստ ասելոյ Աղուանեանցի, ուստի և ի զուր յետաձգի գործ քննութեան, թէ և բազմիցս ստիպեմ և պահանջեմ։

Ջհեռագիր Վեհափառ Հօրդ ընկալեալ ուրախութեամբ սրտի՝ հաղորդեցի նորընտիր ատենակալաց Հոգևոր Կառավարութեան, ոչք և ամենախոնարհ ակնածութեամբ խոստանան և յուսան օրհնութեամբ Ձերով մխիթարել զգորովագութ սիրտ Հօրդ հասարակաց՝ արդիւնաւոր ծառայութեամբք իւրեանց և ընդ նմին ի մխիթարութիւն պահպանել ինքեանց հաւատացեալ ժողովուրդն։

Ի տան և աւելի աւուրց հետէ անընդհատ տեղացեալ անձրևք, և երբեմն կարկուտ, ո՛չ սակաւ արգելարութ լինին շրջելոյ և գործելոյ, թէև շտապիմ կարելին փութով աւարտել զքննութիւն և վերադառնալ։

Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ որդի՝
Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թթ. 12-13 շրջ., ինքնագիր:

№ - 82
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՏԵԿՈՒ ԵՒ ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ ՎԱՆՔԵՐԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՅԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 8406 *4 նոյեմբերի 1887 թ.*
Կարս

В Карсское Армяно-Григорианское Духовное Правление

Вследствие моего ходатайства, основанного на просьбе заведующего Эриванского армяно-григорианского епархией епископа Сукиаса[115], Его Сиятельство Главноначальствующий изволил выразить

[115] Սուքիաս արք. Տէր Սարգսի Պարզեան (13 դեկտեմբեր 1837, Աստապատ գիւղ, Նախիջեւանի գաւառ-12 սեպտեմբեր 1914, Ս. Էջմիածին) – Աշխարհական անունը՝ Արտակ Տէր-Սարգսեան: Սովորել է հոգևոր դպրոցում: 1856 թ. ձեռնադրուել է սարկաւագ, իսկ

согласие на отвод в собственность Дигорскому и Вартигерскому монастырям участков земли, под названием “Гасан Джан” и “Вартигер”.

Сообщая об этом Духовному правлению, прошу назначить депутата для приема означенных земель от Начальника Кагызманского округа, которому, вместе с сим, дано подлежащее по сему делу предписание.

К сему присовокупляю, что Дигорский монастырь может вступить во владение участком “Гасан Джан” не ранее начала будущего *1888* года, так как в текущем году земля эта состоит в арендном содержании. Вартигерский же монастырь может воспользоваться участком “Вартигер” теперь же.

Подлинное подписали:
Генерального штаба генерал-майор Томич
Правитель канцелярии Шахтахтинский
Чин[овник] особых поручений Султанов.

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 7 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 83
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՔԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐՋԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԵՐՈՒՄ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՕԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՐ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 12562 *31 դեկտեմբերի 1887 թ.*
Երևան

ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ

1860 թ.՝ կուսակրօն քահանայ: 1863 թ. նշանակուել է Թիֆլիսի թեմական կոնսիստորիայի անդամ: 1865 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1869 թ. փետրուարի 28-ին Գէորգ Դ. Կաթողիկոսի կոնդակով նշանակուել է Ախալցխայի առաջնորդական փոխանորդ, իսկ 1872 թ.՝ Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ: 1875 թ. հոկտեմբերի 19-ին նոյնի ձեռամբ օծուել է եպիսկոպոս, իսկ 1893 թ. Մկրտիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսից արժանացել է արքութեան պատուին: 1870-1900-ական թթ. զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտօններ՝ Գէորգեան Հոգևոր Ճեմարանի տեսչի օգնական, Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ (երկրորդ անգամ), Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ, Մայր Աթոռի Սինոդի անդամ, Ատրպատականի թեմի առաջնորդ և այլն: Ցարական կառավարութեան կողմից երկու անգամ աքսորուել է Օրեոլ (1891-1893 թթ.) և Օրէնբուրգ (1903-1905 թթ.): Նրա նիւթական օժանդակութեամբ կառուցուել է Էջմիածնի տպարանի մի մասը: 3000 ռուբլի է տրամադրել ‹‹Հայաստանի պատմութիւն›› մատենաշարի հրատարակման համար: Նրա ծախսերով հրատարակուել են նաև Մաղաքիա արք. Օրմանեանի և Կարապետ եպս. Տէր-Մկրտչեանի աշխատութիւնները: 80.000 ռուբլի է կտակել Ս. Էջմիածնի մատենադարանին և Գէորգեան Հոգևոր Ճեմարանին:

Յայտարարութիւն

Ի Հոգևոր կառավարութենէ Հայոց կարուց հասին ի Թեմական Ատեանս երկու յայտարարութիւն ի 12-ն և ի 21-ն այսր դեկտեմբերի ընդ համարօք 854 և 892, որովք ծանուցեալ Ատենիս զաւարտմանէ շինութեան եկեղեցեաց գիւղորէից Բուլանուղայ, Ղույջուղայ, Գեօխանայի, Ներքին Գեադիքլարայ և Գարմալուայ, խնդրէ առնել զփութանակի տնօրէնութիւն յաղագս օծանելոյ զտաճարան զայնոսիկ։

Ըստ որում որպէս յայտ է Ատենիս, զի Փոխանորդն Կարուց վիճակի Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսն հրաւիրեալ հասեալ է ի Սբ. Աթոռն և չիք անդ բարձրաստիճան եկեղեցական, որ կատարեսցէ զօծումն յիշեալ եկեղեցեաց, իսկ Փոխանորդ Թեմակալին Երևանայ Սրբազան Սուքիաս եպիսկոպոս ծանրաբեռնեալ գոլով վսեմ գործովք վիճակիս, չկարէս յանձն առնուլ զճանապարհորդութիւն ի նահանգն Կարուց, ուստի զայսմանէս յայտարարեալ Սինոդի Սրբոյ Էջմիածնի, Թեմական Ատեանս յարգոյաբար խնդրէ փութացուցանել զնշանակումն փոխանորդի ի վիճակքս Կարուց առ ի օծանել զտաճարան զայնոսիկ ի մխիթարութիւն հոգևոր և բարոյական շինութեանց բանաւոր հօտին Քրիստոսի և զհետևանացն յարգել զԱտեանս հրամանաւ։

Ատենապետ՝ Սուքիաս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեանց[116]
Պօղոս քահանայ Այվազեանց
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեանց

Մակագրութիւն. *Հրամանաւ Վեհափառի սպասել մինչ ցգարուն։*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8327, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 84
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ 1887-1888 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

1887-1888
Կարս քաղաք

<u>Օրիորդաց երկդասեան ուսումնարան</u>[117]*։ Թիւ ի սմին համօրէն աշակերտուհեաց են 120. յորոց որդիք հոգևորականաց են 2, աստիճանաւորի 1, վաճառականաց 80, արհեստաւորաց 33, երկրագործաց 4։ Ի սոցանէ են թոշակատուրք 103 և ձրիավարժք 17։ Փոխադրեալք*

[116] Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեանց – ծնուել է 1834 թ.: Քահանայ է ձեռնադրուել 1860 թ.: Ծառայել է Երևանի Ս. Աստուածածին եկեղեցում (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 152 շրջ.):

[117] Կարսի Շուշանիկեան իգական ծխական դպրոցը հիմնուել է 1876 թ.: Ուսման տևողութիւնը 5 տարի էր: Կառավարւում էր արական հոգևոր դպրոցի արդիւնքներով ու վարչութեամբ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 36 շրջ. - 37):

յ Ա. բաժանմանէ յ Բ. 36, յ Բ.-է յ Գ. 20: Աւարտեալք 13: Մնացեալք ի նախկին բաժանմունս 16: Արձակեալք 5:

<u>Տղայոց երկդասեան ուսումնարան</u>[118]: Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 281, յորոց որդիք են հոգևորականաց են 9, աստիճանաւորի 1, վաճառականաց 124, արհեստաւորաց 127, երկրագործաց 20: Ի սոցանէ են թոշակատուք 250 և ձրիավարժք 31: Փոխադրեալք յ Ա. բաժանմանէ յ Բ. 52, յ Բ.-է յ Գ. 48, յ Գ.-է ի Դ. 20, յ Դ.-է ի Ե. 6: Աւարտեալք 6, մնացեալք ի նախկին բաժանմունս 135, արձակեալք 13, վախճանեալ 1:

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Զո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթնեկի	Տարեկան ռոճիկ
1. Մինաս քահանայ Տէր Պետրոսեան	ի Հոգ. դպ. Հառիճոյ ի 1869	Կրօն	18	400
2. Արամ Տէր Գրիգորեանց	ի Ներսիսեան դպ. ի 1886 ամի	Կրօն, թուաբան. և Ռ. լեզու	26	400
3. Խաչատուր Մառանկոզեանց	ի Կարապետեան դպ. Ախալցխոյ, ունի զվկայական ուսուցչ.	Ռ. լեզու	26	450
4. Երուանդ Ղազարեան	Ի Ե.-րդ դասարանի Ըէալական ուսումն. և աւարտ. ի Ներս. Հոգ. դպ. Տփխիսոյ	Ռ. լեզու, Ռ. պատմ. և աշխ. բնակ. պատմ	26	450
5. Սեդրաք Գրիգորեանց	Ի Ե.-րդ դասարանի ճեմ. Ս. Էջմ. ի 1878	Թուաբան., վայելչագր., գծագրութիւն	26	425
6. Աղէքսանդր Պետրոսեանց	Ի Ներսիսեան դպ. Տփխիսոյ	Հ. լեզու, Հ. պատմ., աշխ. և ընդհ. պատմ.	26	400
7. Սարիբէգ Տէր Մելիքիսեդեկեանց	Ի Վիճ. դպ. Աղէքս, ի 1886 ամի	Հ. լեզու և վայելչագրութիւն	26	300
8. Տիկին Փեփրոնէ Տէր Մելիքիսեդեկեանց	յԳ.-րդ դաս,է Հռիփ. ուս. Տփխիսոյ ի 1867	Ձեռագործ և վերակացութիւն	6	200
9. Օր. Եւփիմէ Սանոյեանց	Առ մասնաւոր անձինս	Թուաբան. և վայելչագրութիւն	16	150
10. Օր. Աննա Տէր Պետրոսեանց	յԱրղ. օր. դպ. Աղէք. ի 1884 ամի	Գծագրութիւն	3	ձրի
11. Ղազար Ղազարեանց	ի Վիճ. դպ. Աղէքս. ի 1881 ամի	Հ. լեզու, գծագր. և վայելչագրութիւն	26	300

[118] Կարսի արական երկդասեան հոգևոր դպրոցը հիմնուել է 1865 թ.: Ուսման տևողութիւնը 6 տարի էր: Դպրոցը կառավարում էր հանգանակութեամբ, եկեղեցական եկամուտներով և թոշակադրամով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 35 շրջ. - 36):

12. Սարգիս Քոթանճեանց[119]	ի Յոգ. դպ. Կարուց ի 1882 ամի	Երգեցող, և վերակացութիւն	20	300
		Գումար	245	3775

Բէնգլի-Ահմէտ գիւղ

Տղայոց միդասեան ուսումնարան[120]: Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 20: Ամենեքեան որդիք երկրագործաց: Ի սոցանէ են թոշակաւոր 2 և ձրիավարժք 18: Փոխադրեալք են յԱ. բաժանմանէ յԲ. 11, յԲ.-է յԳ. 7: Աւարտեալք 2:

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Չո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթնեկի	Տարեկան ռոճիկ
1.Գէորգ Սիմէօնեանց	ի Յոգ, դպ. Հառիճոյ	Կրօն և Հ. լեզու և երգ.	20	140
2.Խաչատուր Լալայեանց	ի Վիճ. դպ. Աղէք. ի 1884 ամի	Ռ. լեզու, թուաբան., վայելչագր. Հ. և Ռ.	30	160
		Գումար՝	50	300

Բաշ-Շիրակ գիւղ

Տղայոց միդասեան ուսումնարան[121]: Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 41, յորոց որդիք հոգևորականաց են 4, երկրագործաց 37: Ի սոցանէ են թոշակաւոր 2 և ձրիավարժ 39: Փոխադրեալք են յԱ. բաժանմանէ յԲ. 11, յԲ.-է յԳ. 7: Աւարտեալք 2, մնացեալք ի նախկին բաժանմունս 13: Արձակեալք 8:

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Չո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթնեկի	Տարեկան ռոճիկ
1. Սահակ քահանայ Տէր Գասպարեանց	Ի Վիճ. Յոգ. դպ. Աղէքս, ի 1884 ամի	Կրօն, երգ և գծագր.	16	50
2. Ադամ Խաչատրեանց	Ի նոյն դպրոց	Հ. և Ռ. լեզու, թուաբան., Հ. և Ռ. վայելչագրութիւն	30	120
		Գումար	46	170

[119] Յետագայում՝ Կորիւն քահանայ Քոթանջեան:

[120] Բէնկլի-Ահմէտ գիւղի եկեղեցական-ծխական արական դպրոցը հիմնուել է 1880 թ.: Նոյն թուականին դպրոց էին յաճախում 35 սաներ, որոնց ուսուցանում էր 1 ուսուցիչ՝ Մելքիսեդեկ Մելքոնեանը: Դպրոցը կառավարւում էր եկեղեցու տրամադրած նպաստով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 36 շրջ. – 37:)

[121] Բաշ-Շիրակ գիւղի դպրոցը հիմնուել է 1860 թուականին (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 388, թթ. 111-116):

Փիրուալի գիւղ

Տղայոց միդասեան ուսումնարան[122]: Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 19: Ամենեքեան են որդիք երկրագործաց և թոշակատուք: Փոխադրեալք են յԱ. բաժանմանէ յԲ. 10, յԲ.-է յԳ. 8: Մնացեալք ի նախկին բաժանմունս 21: Աւարտեալք 5: Արձակեալք 5:

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Զո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթ նեկի	Տարեկան ռոճիկ
1.Ստեփաննոս Շիրակունի	ի Հոգ. դպ. Կարուց ի 1876 ամի	Կրօն, թուաբան., ձայնագրութիւն	29	150
2.Խաչատուր Լալայեանց	ի Վիճ. Հոգ. դպ. Աղէքս. ի 1883 ամի	Ռ. լեզու,գծագր., երգ., վայելչագրութիւն	29	150
		Գումար	58	300

Փերնա գիւղ

Տղայոց միդասեան ուսումնարան: Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 9: Ամենեքեան են որդիք երկրագործաց և թոշակատուք: Փոխադրեալք են յԱ. բաժանմանէ յԲ. 2, յԲ.-է յԳ. 1: Մնացեալք ի նախկին բաժանմունս 6:

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Զո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթ նեկի	Տարեկան ռոճիկ
1. Մարտիրոս Մատինեանց	ի Հոգ. դպ. Աղէք. ի 1876 ամի	զԱմենայն առարկայս	30	130
		Գումար	30	130

Արտահան քաղաք

Տղայոց միդասեան ուսումնարան: Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 30, յորոց որդիք վաճառականաց են 16, արհեստաւորաց 14: Ի սոցանէ են թոշակատուք 20 և ձրիավարժք 10: Փոխադրեալք յԱ. բաժանմանէ յԲ. 5, յԲ.-է յԳ. 8: Մնացեալք ի նախկին բաժանմունս 9: Արձակեալք 8:

---

[122] Փիրուալի գիւղի եկեղեցական-ծխական դպրոցը բացուել է 1876 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 39 շրջ. - 40):

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Ձո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթնեկի	Տարեկան ռոճիկ
1.Մկրտիչ Դաւթեանց	ի Դ.-րդ դասարանէ Ներս. դպ. ի 1885 ամի	զԱմենայն առարկայս	30	300
		Գումար	30	300

Կաղզուան քաղաք

Օրիորդաց միդասեան ուսումնարան։ Թիւ ի սմին համօրէն աշակերտուհեաց են 34, յորոց որդիք վաճառականաց են 9, արհեստաւորաց 6, երկրագործաց 19։ Ի սոցանէ են թոշակատուք 22 և ձրիավարժք 12։ Փոխադրեալք են յԱ. բաժանմանէ յԲ. 7, յԲ.-է յԳ. 12։ Մնացեալք ի նախկին բաժանմունս 15։

Տղայոց միդասեան ուսումնարան։ Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 83, յորոց որդի հոգևորականի է 1, աստիճանաւորի 1, վաճառականաց 4, արհեստաւորաց 10, երկրագործաց 67։ Ի սոցանէ են թոշակատուք 77 և ձրիավարժք 6։ Փոխադրեալք են յԱ. բաժանմանէ յԲ. 17, յԲ.-է յԳ. 17։ Մնացեալք ի նախկին բաժանմունս 30, աւարտեալք 15, արձակեալք 4։

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՞ւր են ուսեալք	Ձո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթնեկի	Տարեկան ռոճիկ
1.Դպիր Յարութիւն Փիլոյեանց	ի Հոգ. դպ. Հառիճոյ ի 1875 ամի	Կրօն, Հ. լեզու, թուաբանութիւն	24	360
2.Մկրտիչ Չաքարեանց	ի Ե.-րդ դարնէ ճեմ. Ս. Էջմ. ի 1878 ամի	Հ. լեզու, թուաբան., գծագրութիւն	26	400
3.Տիկին Սաթենիկ Չաքարեանց	յՕր. դպ. Իգդիրու	Հ. լեզու, երգ, ձեռագ. Հ. վայելչագր.	14	200
4.Գեղամ Խաչատրեանց	յՈւսուցչական Սեմին. Երևանայ	Ռ. լեզու և Ռ. վայելչագր.	24	300
5.Սաղաթէլ Տէր Մատթէոսեանց	ի Տարր. դպ. Կաղզուանայ ի 1885 ամի	Վայելչագր. և վերակացութիւն	6	50
6.Մելքոն Ասոյեանց	ի նոյն դպ. ի 1884 ամի	Գծագր., թուաբան., վաելչագր. Ռ.	10	50
7.Բժիշկ Յովհաննէս Մամիկոնեանց	ի Կայսերական համալսարանին	Տեսուչ դպրոցաց	—	ձրի
		Գումար	104	1360

Սարիղամիշ գիւղ

Տղայոց միդասեան ուսումնարան։ Թիւ ի սմին համօրէն աշակերտաց են 20։ Ամենեքեան որդիք են երկրագործաց։ Ի սոցանէ յԲ. 11, յԲ.-է յԳ. 7։ Մնացեալք ի նախկին բաժանմունս 2։

Ուսուցիչք և ուսուցչուհիք	Ո՛ւր են ուսեալք	Չո՞ր առարկայ ուսուցանէ	Թիւ դաս. յեօթնեկի	Տարեկան ռոճիկ
1.Ստեփանոս Շիրակունի Սմբատ Աւետիսեանց	ի Վիճ. դպ. Աղէքս. ի 1883 ամի	զԱմենայն առարկայս	26	250
		Գումար	26	250

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 305, թթ. 32 շրջ.-35, տպագիր։

№ - 85

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐԱՊԵՏ ԳԵՕՋԻԲՕՅՈՒԿԵԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՍԻ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԱՐՈՒԱԾ ԿՏԱԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 16 *11 յունուարի 1888 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Մեծ. պ. Կարապետն Սիմէօնեանց Գեօզիբօյուկեանց Կարսեցի յայտարարութեամբ իւրով ի 27 մայիսի անցեալ 1887 ամի յայտ առնէ Ատենի Հոգևոր Կառավարութեանս, թէ՝ կազմելով արդէն զհոգևոր կտակ զգոյից իւրոց որոշեալ է ի նմին զերեք հարիւր րուբլի յօգուտ եկեղեցական-ծխական երկսեռ ուսումնարանացն Հայոց Կարս քաղաքի, այնու պայմանաւ, զի զկնի մահուան իւրոյ անմիջապէս վճարեսցին կտակակատարքն իւր, այն է՝ օրինաւոր ամուսինն իւր Հեղինարն Պապիկեան և խար գիւղի բնակիչ Յարութիւնն էնբակեանց, յորոց վերայ եղեալ է զպարտականութիւն ի կատարումն մտաց կտակին, ընդ ձեռն Ատենի Կառավարութեանս Հոգաբարձութեան այնր դպրոցաց։ Դրամագլուխն այն մնալոյ է անձեռնմխելի, իսկ տոկոսն դրամագլխոյն գործադրեսցի ի կրթութիւն աղքատ մանկանց, ըստ բարեհաճ տնօրէնութեան Հոգաբարձութեան յիշեալ ուսումնարանաց։

Հոգևոր կառավարութիւնս պատիւ ունի զայսմանէ ծանուցել խոնարհաբար Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի ի գիտութիւն։

Անդամք կառավարութեան՝
Մելքիսեդեկ քահանայ Մանուկեան[123]
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ կար. Յովհաննէսեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3371, թ.1, բնագիր, ձեռագիր:

№ - 86
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ ՕԾՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 62 *15 յունուարի 1888 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Յօրէ բացմանէ Ատենի Կառավարութեանս նախկին Նախագահ սորին՝ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսն Աղուանեանց էօծ զնորակառոյց եկեղեցիս քանի ինչ գիւղորէից Վիճակիս, սակայն չբարեհաճեցաւ յանձնել Ատենիս զլուսագին նուէրն ստացեալ ի ժողովրդականացն այնց գիւղորէից յանուն Մայր Աթոռոյ և չհաղորդեաց սմին, թէ յորո՞ւմ տեղւոջ էօծ զեկեղեցի և ինչ անուն վերակոչեաց, ոյր վասն ի լինել այսրէն Նորին Գերապատուութեան սոյնն գրութեամբ իւրով ի 6 դեկտեմբերի անցեալ ամի № 820, թէ և խնդրեաց կազմեալ մատուցանել Ատենիս զճիշտ ցուցակ՝ընդ ձեռն իւր օծեալ եկեղեցեաց Վիճակիս և զհաշիւ ի նոցունց գոյացեալ նուիրաբաշխութեանց յանուն Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի, սակայն Նորին Գերապատուութիւնն եթող զգրութիւնն Ատենի սորին առանց պատասխանի, ուստի ծանուցանելով զայսմանէ Սրբազան Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի ամենախոնարհաբար խնդրել, եթէ կարելի է, պահանջել ի Նորին Գերապատուութենէ զնոյն տեղեկութիւնսն, այն է՝ թէ ո՞ւր և յի՞նչ անուն եկեղեցի էօծ և հաղորդել սմին առ ի ունել ի գործս սորին[124]*:*

---

[123] Մելքիսեդեկ քահանայ Մանուկի Ղազարեանց – ծնուել է 1942 թ.: Կրթութիւնը ստացել է Հառիճի վանքում: 1862 թ. ձեռնադրուել է քահանայ Ալեքսանդրապոլի գաւառի Բայանդուր գիւղի վրայ: Զբաղուել է ուսուցչութեամբ: 1887 թ. օգոստոսի 18-ին նշանակուել է Կարսի Հոգևոր Կառավարութեան անդամ: Ծառայել է Կարսի Ս. Աստուածածին եկեղեցում (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 348 շրջ., ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 35 շրջ. – 36, ֆ. 56, ց. 16, գ. 66, թթ. 51 շրջ.-52):

[124] 1888 թ. փետրուարի 22-ին Սինոդը Գրիգոր եպիսկոպոս Աղուանեանից տեղեկութիւններ է պահանջել օծուած եկեղեցիների և Մայր Աթոռի օգտին ստացուած գումարների

Անդամք կառավարութեան՝ Մելքիսեդեկ քահանայ Մանուկեան
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ Կար. Յովհաննէսեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8327, թ. 5, բնագիր, ձեռագիր:

№ - 87
ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ ԳԻՒՂԻ ԾԽԱՏԷՐ ՍԱՂԱԹԷԼ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԻՐ ՀԻՒԱՆԴԱԳԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՐՍ ՔԱՂԱՔՈՒՄ ԲՆԱԿՈՒԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 յունուարի 1888 թ.
Կարս

Կարս քաղաքի Հայոց Հոգևոր կառավարութեան
Կարմիր վանք գիւղի ծխատէր Սաղաթել քահանայ Տէր-Դաւթեանցից
Յայտարարութիւն

Դեռ 1858 թուականին ձեռնադրուելով իմ հայրենի Կարմիր վանք գիւղի վերայ սեպհական քահանայ մինչև 1873 թիւը վարեցի ստանձնածս պաշտօնը, որ ժամանակ Կարուց Յաջորդ Յովհաննէս եպիսկոպոս Ռշտունին ընտանիքով հանդերձ փոխադրեց ինձ Կարս, յանձնելով հովուել տեղական ժողովրդականաց մի մասին։

Սակայն անցեալ 1879 թուին ներքին մի հիւանդութեան և ձեռքերիս դողալու առթիւ՝ բոլորովին անկարող ճանաչելով ինձ վարել քահանայական Հոգևոր պաշտօնները, խնդրեցի Կարսի նախկին Հոգևոր Գործոց Կառավարիչ Գեր. Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցից ազատ համարել ինձ քահանայական պաշտօնավարութիւնից, հոգեկան դատապարտութիւնից ազատ մնալու համար, որ յարգելով խնդիրս, թոյլ տուեց ինձ մնալ Կարսում իմ ընտանեաց մէջ և իբրև աղօթաւոր գնալ եկեղեցի, սակայն այժմս աչքի առաջ ունենալով Հոգևոր Բարձրագոյն Իշխանութեան այժմեան պահանջը և օրինական կարգադրութիւնները, ամենախոնարհաբար խնդրեմ կառավարութիւնից միջնորդել Բարձրագոյն Հոգևոր Վարչութեան առջև, եթէ հնարին է, նոյնը ևս բարեհաճի ինձ իրաւունք տալ իբրև ազատ աղօթաւոր բնակիլ Կարսում, ինչպէս յառաջ, կեանքիս մնացեալ տարիներն խաղաղութեամբ անցկացնելու միակ զաւակիս մօտ, Կարս քաղաքի մէջ[125]*։ Տկարու-*

մասին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8327, թթ. 6-7):

[125] 1888 թ. յուլիսի 5-ին Սինոդը կայացրել է հետևեալ որոշումը. ‹‹Պատուիրել Վիճակային Կոնսիստորիային Հայոց Երևանայ ծանուցանել թէ ցո՞րքան ժամանակս Սաղաթէլ քահանայ Տէր Դաւթեանց գտցի ի հիւանդագին դրութեան. թոյլատրել նմա մնալ ի Ղարս քաղաքի առանց քահանայագործութեան ի գիւտ առողջութեան և յետ առողջութեանն վերստին փոխադրել ի գիւղն իւր ի Կարմիր վանք››(ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8335, թ. 6 և շրջ.):

թեանս նկատմամբ սրա հետ մատուցանում եմ բժշկական վկայագիր տրուած ինձ նահանգական Պ. բժշկից յ3-ն յունուարի ներկայ թուականին N 1[126]*։*

Սաղաթէլ քահանայ Տէր-Դաւթեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8335, թ. 2 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 88
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՒԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԳՏԻՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԱՆ ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐԸ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 299 *17 փետրուարի 1888 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց Յայտարարութիւն

Ի նպաստ նորոյ կառուցանելի եկեղեցւոյն քաղաքիս, ի ներկայութեան Գերապատիւ Փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ, նախկին փոխանորդն վիճակիս Գեր. Գրիգորիս եպիսկոպոսն Աղուանեանց ինքնաձեռագիր ստորագրութեամբ իւրով ի տումարին նուիրատուաց նուիրեաց զտունն գտանեցեալ ի քաղաքիս, որ ունի 64 քառակուսի սաժէն տարածութիւն։ Բայց որովհետև տունն այն ըստ նախագծոյն, որ վասն բարեշինութեան քաղաքիս քանդելոց է և քանիցս Տէր Ջինուորական Նահանգապետն խնդրեաց ի կառավարութենէս վաճառել ի վերայ քաղաքին, ուստի սոյնն բարւոք և արդիւնաւոր իսկ համարեաց յարգել զառաջարկութիւն Նորին Գերազանցութեան, վաճառելով զայն։

Ի նկատի ունելով, զի կալուածագիր յիշատակեալ տանն տուեալ է յանուն Նորին Գերապատուութեան և այժմս գտանի առ նա և առանց որոյ սոյն դժուարանայ վճռականապէս վաճառել զայն ի մեծամեծ օգուտ եկեղեցւոյ տեղւոյս, յարգելով զմիջնորդութիւն Տէր Նահանգապետի, որ կարի բարեսրտութեամբ միշտ վերաբերի առ եկեղեցական գործս մեր և յապացոյց բարեսրտութեան իւրոյ յատկացոյց վասն շինութեան նոր եկեղեցւոյ ի կեդրոնի քաղաքիս զ845 սաժէն տարածութեամբ գետին, յորոյ վերայ թէև գոն շինեալ մի շարք կրպակք, որք պատկանին նոյն իսկ քաղաքին և ո՛չ մասնաւոր անձանց, վճռեաց տալ քանդել առանց որևէ վճարի, յօգուտ եկեղեցւոյ մերոյ։ Ուստի Հոգևոր

[126] Բժշկական վկայագիրը տես նոյն տեղում, թ. 3:

կառավարութիւնս ամենախոնարհաբար հայցէ զբարեհաճ տնօրէնութիւն Սրբազան Սինոդիդ ըստ հնարաւորութեան յոյժ փութով ստանալ ի Սրբազան Աղուանեանցէ զկալուածագիրն և հասուցանել ի սոյն, ի վերջաւորել զգործն, որ վերաբերի տանն այնորիկ և յընդ վայր[127] *չգայրացուցանել զՏէր Նահանգապետն ի վնաս եկեղեցւոյ։*

Անդամք կառավարութեան՝
Մելքիսիդեկ քահանայ Մանուկեան
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ Կ. Յովհաննէսեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3379, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 89
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՒԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԳՏԻՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԱՆ ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1584 *24 մայիսի 1888 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զառաջադրութիւն Տ. Փոխանորդի Թեմակալի Հայոց Երևանայ՝ Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի ի 16 այսր մայիսի N 397, յորում գրի. «Ի լինելն Մեր ի կարս քաղաքի յամին անցելոյ՝ հայեցեալ յանհրաժեշտ կարիս մեր ազգի ժողովրդեան, կազմեցաք զմատեան ժողովարարութեան ի 15 օգոստոսի և արձանագրելով յառաջին հերթս նորին զյորդորական թերթ թուահամարաւ 173, հրաւիրեցաք զբարեպաշտօն հայազգիս ի տուրս նուիրանաց յանուն նորակառուցանելի եկեղեցւոյ տեղւոյն։ Հանգանակութիւնն ի մերում ներկայութեան ետ զուտ հազար տասն րուբլիս արծաթոյ, յետ որոյ հասարակութիւնն համախօսականաւ ընտրեաց ի հոգաբարձու շինութեան զերկոտասան յարգելի անձնաւորութիւնս յորոց անուն ի 17 այնր ամսոյ ընդ համարաւ 175, տուաք զգիր հաստատութեան, պատուիրելով հոգալ զանհրաժեշտ կարևորութեանց ի ձեռնարկութիւն շինութեանն։ Ընդ այսմիկ առաքելով ի Վիճակային Կոնսիստորիայդ զհարազատ օրինակս համախօսական ընտրողաթղթոց հասարակութեան Հայոց քաղաքին Կարսայ կայացեալ ի 15 օգոստոսի անցեալ ամի

[127] Ընդ վայր – ի զուր, զուր տեղը:

և հաստատագրոյ մերոյ յանուն ընտրեալ հոգաբարձուաց ի 17 ամսոյն ընդ համարաւ 175, առաջադրեմք փութալ կարգադրել զյետագայս, նախ՝ հրամանագրել Հոգևոր կառավարութեան Հայոց Կարսայ գեօթն հարիւր յիսուն րուբլիս արժէս տունն Գերապատիւ Գրիգորիս Սրբազան եպիսկոպոսի Աղուանեանց՝ ընծայաբերեալ ի նպաստ շինութեան եկեղեցւոյն, համաձայն ի 6 փետրուարի տարւոյս կայացեալ գնահատութեանն, ստացեալ ի Նահանգական կառավարութեան յանձնել ի ձեռս հոգաբարձուաց՝ թողլով յանվէճ տիրապետութեան նորին զյիշատակեալ տունն, իսկ ի Սրբազան Աղուանեանցէն ստացեալ զփաստաթուղթս ընդ ձեռն փոխանորդին հասուցանել ըստ պատկանելոյն։ Երկրորդ՝ կարգելով նախագահ խորհրդոյ հոգաբարձուաց եկեղեցաշինութեան զԲարձրապատիւ Յուսիկ վարդապետն Մովսիսեանց ի տեղի Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսի՝ փութացուցանել զհաւաքումն ստորագրեալ դրամոց և սկզբնաւորութիւն գործոյն և երրորդ՝ պահանջել յատակագիծ կառուցանելի եկեղեցւոյն ի պատուելի հոգաբարձուաց և առաջարկել ի հաստատութիւն Սրբազան Սինոդի Սրբոյ Էջմիածնի, զի մի՛ այլ ևս տարապայման յետաձգեսցի ամենակարևոր գործն, ի վիշտ սրտի և ի յուսաբեկութիւն հաւատաւոր ժողովրդեան։ Օրէնք տէրութեան հրամայեն յօդ[ուած] 974, 10 հատ[որ] Ա. մ[աս] պարգևն ընկալեալ ո՛չ վերադարձուցանի պարգևողին, բայց եթէ ընդունողն պարգևի դաւաճանեսցէ զկեանս պարգևողին գան հարցէ նմա կամ սպառնայցէ, զրպարտեսցէ զնա յորևիցէ յանձնաւորութիւն կամ ընդհանրապէս ցուցանիցէ նմա յայտնապէս զանպատուութեան, յայնժամ պարգևատուն ունի զիրաւունս պահանջելոյ զպարգևեալն։ Յօդ[ուած] 976, եթէ պարգևն տուեալ է պայմանաւ և պայմանն ի կողմանէ ստացողի պարգևին չէ կատարեալ, յայնժամ պարգևն վերադարձուցանի պարգևողին, ի Հատ. Թ. յօդ. 473, ի լոյս ընծայեալ 1876 ամի գրի՝ մտանողք ի կուսակրօն հոգևորականութիւն ընդ նմին հրաժարին ի տիրելոյ սեպհական կայից իւրեանց, և յետ ընդունելութիւն չկարին ի ձեռս բերել զանշարժ զնոր սեպհականութիւն ինչ, բայց ո՛չ արգելեալ լինի նոցա գնել զայնպիսիս յօգուտ նոյն եկեղեցւոյ և վանորէից, որոց պատկանին։ Եթէ այսպիսի կալուած հասանի կուսակրօն հոգևորականի ըստ իրաւանց ժառանգութեան, յայնժամ պարտէ նա փոխանցել կամ վաճառել զայն չընթացս վեց ամսոյ։ Սահմանեցին. որովհետև որպէս երևի ի ներկայ առաջադրութեան Սրբազան Փոխանորդի Թեմակալին, ստորագրութեամբք բարեպաշտ անձանց համազգային մերոց ի տումարի ժողովարարութեան ի նպաստ շինութեան նորոգ կառուցանելի եկեղեցւոյ Հայոց Կարս քաղաքի վասն յօժարակամ նուիրատուութեանց նորին հասեալ է ց8000 րուբլիեաց, յորոց առաջին ստորագրող անձն է այժմեան Փոխանորդ Վիճակին Աղէքսանդրապօլու՝ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսն Աղուանեանց,

որ ընծայաբերեալ է նորոգ կառուցանելի եկեղեցւոյն զսեպհական տունն իւր, որ ի կարս քաղաքի, արժողութեամբ 750 րուբլեաց, ուստի առնել զհետևեալս նախ՝ ըստ ներկայ առաջադրութեան Սրբազան Սուքիաս եպիսկոպոսի հրամանագրել հոգևոր կառավարութեան Հայոց կարուց զյիշատակեալ տունն յանձնել Նահանգապետի տեղւոյն և ուստի հարկն է ստանալ զարժէս նորին վասն կարևորութեան անհրաժեշտ ծախուց։ Երկրորդ՝ զվերոգրելոյն ծանուցեալ յիշատակեալ Սրբազան Աղուանեանցի յանձն առնել նմին փութացուցանել զմատուցումն կալուածագրոյ յիշեալ տան իւրոյ ի պատշաճական տնօրէնութիւն Կոնսիստորիայիս։ Երրորդ՝ զայսմանէ հաղորդել ի գիտութիւն Սրբազան Սինոդիդ Սրբոյ էջմիածնի յաւելլով՝ զի եթէ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսն հրաժարեսցի ի վճարմանէ յիշեալ ընծայաբերութեանց, մարթէ ասել, զի բազումք ի նուիրատու անձանց հետևելոց են վնասաբեր օրինակի նորին։ Եւ չորրորդ՝ զվերոգրելոյն ծանուցանելով հոգաբարձուաց շինութեան յիշատակեալ նորակառոյց եկեղեցւոյ, պատուիրել նմին՝ փութացուցանել զժողովումն ստորագրեալ դրամոց ի սկզբնաւորութիւն գործոյն և առաջարկել սմին զյատակագիծ այնորիկ առ ի մատուցանել ի հաստատութիւն Սրբազան Սինոդիդ։

Ատենապետ՝ Սուքիաս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Պօղոս քահանայ Այվազեանց, Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեան[128]
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեան

Մակագրութիւն. *Առնել ի տեղեկութիւն. կցել ընդ գործոյն։*
Անդամ Սինոդի՝ Երեմիա եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3379, թթ. 3-4, բնագիր, ձեռագիր:

№ - 90
ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՆԱԽԿԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ԻՐ ՏՈՒՆՆ ՈՒ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՄՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 89 *18 մայիսի 1888 թ.*
Ալեքսանդրապոլ

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ էջմիածնի
Ի Նախկին Յաջորդէ Կարուց վիճակի
Յայտարարութիւն

Տնտեսական Մասն Սրբազան Սինոդիդ հրամանագրութեամբ ի

[128] Մկրտիչ քահանայ Տէր Մկրտչեան – ծնուել է 1854 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1882 թ., ծառայել է Երևանի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 152 շրջ.):

17-ն մարտի սոյն ամի համարաւ 1082[129]*, պահանջէ յինէն զկալուածագիր սեպհական տանն իմոյ գտանեցելոյ ի Կարս քաղաքի տարածութեամբ 64 քառակուսի սաժէն՝ զոր նուիրեալ է իմ ստորագրութեամբ իմով ի տումարի նուիրանաց ի նպաստ շինութեան նորոգ կառուցանելի եկեղեցւոյ տեղւոյն։*

Արդարև պարտաւորութիւն է իմ տալ կատարումն խոստման իմոյ, բայց որովհետև գտանի ի Կարս քաղաքի և այլ ինձ սեպհական տեղի շինութեան գետին 280 սաժէն տարածութեամբ՝ զորս, ի հրաժարելն իմ ի յաջորդական պաշտօնէ այնր վիճակի՝ կամ եղև ինձ վաճառել, այլ անդամ Հոգևոր Կառավարութեան բարեկրօն Մինաս քահանայն Տէր-Պետրոսեանց ընդ ձեռն քաղաքական իշխանութեան արգելս եղև վաճառման այնր գետնոյն, պատճառելով թէ՝ ըստ սահմանեալն օրինաց կուսակրօնն ոչ ունի իրաւունս վաճառելոյ զանշարժ կալուածս իւր։ Ուստի խոնարհաբար խնդրեմ եթէ արդարև գոյ իրաւունք վաճառելոյ զնուիրեալն իմ յօգուտ շինութեան նորոգ կառուցանելի եկեղեցւոյ Կարս քաղաքի զսեպհական տունն իմ, թոյլատրել ինձ վաճառել ընդ ձեռն հաւատարմատարի իմոյ բարեծնունդ բժիշկ Աղէքսանդրի Տէր-Յարութիւնեանց կամ այլոց ուրուք զվերոյիշեալ զերկոսին սեպհական կալուածսն իմ ևս և յետ վաճառմանն հասուցանել ինձ զգինս նոցին ամբողջովին։ Իսկ յօգուտ շինութեան նորոգ կառուցանելի եկեղեցւոյն Կարս քաղաքի զխոստացեալն իմ զգին տունն թողուլ ի կամս իմ, վճարել զայն գումար մաս առ մասն ի պէտս շինութեան եկեղեցւոյն ի պատճառս ինձ յայտնի եղեալ զանազան հաշուոց։

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

Մակագրութիւն: *Որովհետև ընդ այսմ տան արդէն տնօրինեալ է Կոնսիստորիայն Երևանայ, ուստի զայս յայտարարութիւն կցել ընդ գործոյն և զգրագրութիւն կարճել։*

Անդամ Սինոդի՝ Երեմիա եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3379, թ. 5 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 91
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՕԾՄԱՆ ԵՒ ԱՅԴ ԱՌԹԻՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՀԱՒԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27 յուլիսի 1888 թ.
Ս. Էջմիածին

Ի 27 յուլիսի 1888 ամի. ըստ հրամանի Նորին կայսերական Մե-

[129] Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3379, թ. 2 և շրջ.:

ծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ էջմիածնի լուան. զերկուս յայտարարութիւնս՝ առաջինն Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց ի 15 յունուարի տարւոյս № 62, յորում գրէ այսպէս ...[130] *Եւ երկրորդն Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց այժմեան Փոխանորդի Աղէքսանդրապօլու ի 25 մայիսի տարւոյս № 101, որով այս պահանջ, Սինոդիս բացատրի այսպէս. «Թէ արդարև օծեալ եմ զչորեսին եկեղեցիս. Ա. յՕլթի գաւառի զեկեղեցին Ճիւրճիւրիս գեղջ, որոյ ոմանք ի բնակչաց էին ի ժամանակս տիրապետութեան տաճկաց յայտնի մահմեդական իսկ գաղտնի քրիստոնեայ և անուն եկեղեցւոյն յորջորջեցաւ Սբ. Յակովբ. Բ. ի նոյն գաւառի Զարդանիս գեղջ եկեղեցին, որոյ չքաւոր բնակիչք են տասն և հինգ տուն, նոր գաղթականք ի կողմանց Կարնոյ*[131]*, անուն եկեղեցւոյն յորջորջեցաւ Սբ. Գրիգոր. Գ. ի Վանանդ գաւառի զեկեղեցին Բայբուրթ գեղջ, ոյր բնակիչք են նոյնպէս նոր գաղթականք, անուն եկեղեցւոյն յորջորջեցաւ Սբ. Մեսրովպ, և Դ. ի նոյն գաւառի զեկեղեցին Գեադուկսաթլմիշ գեղջ որոյ բնակիչք են նոյնպէս սակաւաթիւք և նոր գաղթականք, բայց անուն եկեղեցւոյն այսր գեղջ ոչ յիշեմ*[132]*, քանզի ոչ գտանեն առ իս պաշտօնական գործք Հոգևոր Կառավարութեան իմոյ, ոյր վասն խնդրեմ պահանջել զանուն եկեղեցւոյն այսր գեղջ ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց, մանաւանդ զի վերոգրեալ եկեղեցեաց անուանադրութիւնք որոշեալ են նախապէս յԱտենի Կառավարութեան և գտանին ի գործս նորին անուանք յիշեալ եկեղեցեաց: Եւ երկրորդ՝ թէև կարևորն յորդորանօք և սիրաշահ բանիւք ծանուցեալ եմ առ ժողովուրդս ի ժամ օծման եկեղեցեաց յիշեալ գիւղորէից, սակայն ի պատճառ չքաւորութեան ժողովրդականաց, որովհետև եկեղեցիք նոցա շինեալ են ժողովարարութեամբ ի բարեպաշտօն հայազգեաց Վիճակիս յորդորանաց թղթովք իմովք, բացի Ճորճիւրիս գեղջ եկեղեցւոյն, ուստի ոչ կարէի ստիպմամբ պահանջել զնուէրս յանուն Սրբոյ էջմիածնի, մանաւանդ վերջին երեք գիւղորէիցն ժողովրդականք զայն աստիճան գտանէին ի չքաւորութեան, մինչ զի ի ժամ օծման հարկաւորն մոմեղէնաց և խնկոց գինսն անգամ ժողովարարութեամբ են հայթայթեալ: Զվերոգրեալսն յայտարարեալ Սրբազան Սինոդիդ ամենախոնարհաբար խնդրեմ բաւականանալ այսու բացատրութեամբ և դարձուցանել զքաղցր ուշադրութիւն իւր առ հանգամանս գծագրեալս ի նոյն թիւ համարաւ 100 յայտարարութեան իւրոյ: Հրամայեցին. զվերոգրեալ բացատրութեանց Սրբազան Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց ծանուցանել*

[130] Փաստաթղթի այս մասը բաց է թողնուած, տես թիւ 86 փաստաթուղթը:

[131] Գիւղի բնակիչները գաղթել էին Կարինի նահանգի, Կարինի գաւառի Թորթոմի գաւառակի Կոթիկ գիւղից:

[132] Գեադուկսաթլմիշ գիւղի եկեղեցին կոչւում էր Ս. Նշան (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց, պատուիրելով նմին ստուգել ի քահանայից եւ յերեցփոխանաց Հայոց այնր յաջորդութեան ի փոխանորդական և կամ այլ տեղեկութեանց գործոց իւրոց[133]*։*

Ատենադպիր Սինոդի[134]

Անդամք՝ Թադէոս արքեպիսկոպոս[135]*, Երեմիա եպիսկոպոս*
Ներսէս եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս[136]
Մամբրէ եպիսկոպոս
Ատենադպիր՝ Ս. Մուշեղեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8327, թթ. 10-11, բնագիր, ձեռագիր:

№ - 92
ԱԿՏ՝ ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՅԱՆՁՆՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 յուլիսի 1888 թ.

Вследствие предписания г-на Начальника Кагызманского округа от *28* сего месяца за № *3946,* составлен сей мною словесным переводчиком Коллежским регистратором Тер-Аракеловым в присутствии понятых жителей сел. Караванк Хачо Акоева и Татос Погосова, присутствовавших при обходе в текущем году землемером Масаловым и помощником начальника округа капитаном Кугушевым участка, принадлежащего монастырю “Вартигер” в том, что означенный участок в указанных тогда же границах, сего числа сдан мною назначенному для принятия такового Карсским армяно-григорианским духовным правлением члену оного Тер-Минасу Тер-

133 1888 թ. սեպտեմբերի 2-ին Սինոդը ծանուցել է Կարսի հոգևոր Կառավարութեանը վերոգրեալ հարցի մասին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8327, թ. 24 և շրջ.):

134 Սինոդի Ատենապետը ստորագրութեան փոխարէն գրել է. «Պարտ իսկ էր Սինոդին նախ ստուգել զասացուածն Աղուանեանց եպիսկոպոսի ի քահանայից և յերեսփոխանաց յիշեալ գիւղորէիցն և ապա վճռել»:

135 Թադէոս արքեպիսկոպոս Ձիւնակեան (1823-1889)- 1836-1846 թթ. սովորել է Մայր Աթոռի Ժառանգաւորաց դպրոցում, 1846 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1856 թ.՝ վարդապետ: 1852 թ. դասաւանդել է նոյն դպրոցում, Սինոդի անդամ 1864-1870 թթ., եպիսկոպոս է ձեռնադրուել 1868 թ., 1872 թ. կարգուեց Ախալցխայի առաջնորդական փոխանորդ, 1876-1886 թթ. Շամախու թեմի առաջնորդ, 1885 թ. ստացաւ արքեպիսկոպոսութիւն, 1886-1889 թթ. կրկին Սինոդի անդամ:

136 Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան – Ծնուել է 1843 թ. Լոռիում: 1850-1860 թթ. սովորել է Կ.Պոլսի Օրթա գիւղի դպրոցում: 1860 թ. Էջմիածնում ձեռնադրուել է սարկաւագ, 1863 թ.՝ աբեղայ, 1868 թ.՝ վարդապետ: 1867-1870 թթ. եղել է Նուխիի վիճակի առաջնորդական փոխանորդ, 1870-1879 թթ. պաշտօնավարել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում: 1883-1895 թթ. վարել է Էջմիածնի տպագրական յանձնաժողովի նախագահի պաշտօնը: 1886 թ. ստացել է եպիսկոպոսի աստիճան և նշանակուել Սինոդի անդամ, այս պաշտօնում նա մնացել է մինչև 1906 թ.: 1898 թ. ստացել արքեպիսկոպոսի աստիճան: Մահացել է 1908 թ. փետրուարի 7-ին:

Петросяну, в чем и составлен настоящий акт за общим подписанием присутствовавших.

Подлинный подписали:

Акт составил Коллежский регистратор Тер-Аракелов

При этом присутствовали понятые: *Խաչոյ Ակոյեւ և Թաթոս Պօղոսով՝ գիր չգիտենալու, նրանց տեղ ստորագրեցի՝ Յովաննէս Տէր-Մատթէոսեանց*

Означенный здесь участок принял.

Ստացայ սահմաններով ցոյց տուած հողը. Անդամ Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարսայ՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 16 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 93
ԱԿՏ՝ «ՀԱՍԱՆ ՋԱՆ» ԿՈՐՈՒՈՂ ԱՐՔՈՒՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ՅԱՆՁՆՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 օգոստոսի 1888 թ.

На основании предписания Начальника Кагызманского округа, от *3*-го сего августа за №*4030,* мною, Начальником Нахичеванского участка ротмистром князем Макаевым, в присутствии понятых, баш-мухтаров, зибнинского маркяза, Ато Хачоева и и Езидского общества Омара Ибрагим оглы, сего числа отведен в собственность Дигорского монастыря казенный участок «Гасан Джан», в котором заключаются земли: пахотной и покосной *100* десятин, пастбищной *160* и неудобной *26;* всего *286* десятин и передан депутату от Карсского армяно-григорианского духовного правления, Минасу Тер-Петросянцу, под его расписку на сем же, с указанием границ этого участка, в чем составлен настоящий акт, который за подписями понятых представить Начальнику Кагызманского округа

Подлинный подписали: Отвод и передачу производил: Начальник Нахичеванского участка, ротмистр князь Макаев.

Означенный участок принял депутат от Карсского армяно-григорианского Духовного правления. *Սոյն ակտում նշանակուած «Հասան ջան» անուանեալ հողն ընդունեցի.*

Անդամ Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարսայ՝ Մինաս Տէր-Պետրոսեանց

Понятые: Ато Хачоев *(М.П.)*

Омар Ибрагим-оглы *(М.П.)*

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 17 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 94
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 5757 *27 օգոստոսի 1888 թ.*
Կարս

Препровождая при сем форму подписки, отбираемой от всех лиц и ведомств, коим с разрешения князя Главноначальствующего, впредь до Высочайшего утверждения предоставляются в постоянное пользование земельные участки. Канцелярия имеет честь просить Духовное правление не оставить прислать ей подписку о принятии участков Вартигер в *1282* десятин и Гасан-джан в *286* десят. всей земли[137].

Подлинное подписали:

И.д. правителя канцелярии Полепс
Младший чин особых поручений Султанов

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 19, հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 95
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՉԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՒ ՅԻՇԵԱԼ ՀՈՂԵՐԻՑ ՍՏԱՑՈՒՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 759 *8 հոկտեմբերի 1888 թ.*
Երևան

Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց
Առաջադրութիւն

Առ յայտարարութիւն Հոգևոր Կառավարութեանդ յ3-ն և ի 27 սեպտեմբերի տարւոյս ընդ համարօք 1106 և 1162, առաջադրեմք, փութալ տալ յատենէ դորին ուղղակի, կամ ի Հոգաբարձուաց կալուածոց վանորէից Վարդիհերի և Տկօրեաց զպահանջեալ ի Տէր Նահանգապե-

[137] 1888 թ. սեպտեմբերի 3-ին Կարսի Հայոց Հոգևոր կառավարութիւնը հետևեալ գրութիւնն է առաքել Երևանի փոխթեմակալին. ‹‹Դիւանատունն Տէր Նահանգապետին Կարուց գրութեամբ իւրով ի 27 օգոստոսի անցելու N 5757, խնդրէ առաքել զստորագրութիւն վերաբերեալ հողոցն՝ Վարդիկ հօր վանից և Տիկոռու, ըստ ձևոյն, որ կից յայտարարութեանս է: Ծանուցանելով զայսմանէ Սրբազնութեան Ձերում, Հոգևոր Կառավարութիւնս խոնարհաբար խնդրէ զիրամանագրութիւն Սրբազնութեանդ կարելին փութով›› (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18. գ. 30, թ. 20):

տէն Կարսայ ստորագրութիւն, յետ որոյ արթուն հսկողութեամբ յամի յամի զգրի հարկանել զամենայն եկամուտս այնոցիկ հողոց ցվերջնականապէս վճռահարութեամբ նոցին ի տիրողութիւն վերոյանուանեալ վանորէիցն։ Ի վերայ իսկականի ստորագրել է Փոխ-թեմակալ վիճակին Երևանի՝ Սուքիաս եպիսկոպոս

Ճիշտ է ընդ իսկականին. Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 21, հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 96
ԱԿՏ՝ ԿԱՐՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՄԱՍԻՆ

15 октября 1888 г.
15 հոկտեմբերի 1888 թ.

Я, старший землемер, Надворный советник Масаелов, в присутствии чиновника полиций Бала-бека Алибекова и понятых гор. Карса: Шарифа Кер Мавхуд-оглы, Арутюна Крикорова и Симона Манукова, на основании предписания Военного губернатора Карсской области, от *12* июля сего года за №*4574*, отвел из дачи гор. Карса, в местности “Сут-Кули-Дюз”, в пользование Карсского Армянского собора сто дес. пахотной и *6* неудобной земли, а всего сто шесть десятин, каковую землю приняли уполномоченные Армянского духовного ведомства протоиерей Мелкиседек Мануков и ктитор Собора Петрос Малавердянц, в чем и составлен настоящий акт, за общею подписью присутствующих.

Подлинный подписали: Чиновник полиции Б. Алибеков, *Մուխթար Յարութիւն Գրիգորեանց, Սիմէօն Մանուկեան. Վասն անգրագիտութեան ի տեղի ստորագրեցի՝ Գէորգ Ստեփանեանց,* протоиерей М.Мануков, *երեցփոխան Պետրոս Մալաւերեանց,* Надворный советник Ф. Масалов

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 18, հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 97
ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՈՒԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

17 հոկտեմբերի 1888 թ.
Կարս

Карсское Армяно-Григорианское Духовное Правление дает подписку в том, что если предположение местного начальства о

Высочайшем пожаловании Армянскому монастырю Вартигер-ванк участка “Вартагер” в одну тысячу двести восемьдесят две десятины и Дигорскому монастырю участка «Гасан-джан» в двести восемьдесят шесть десятин всей земли, не будет утверждено Государем Императором или же будет изменено в границах временных участков, которые теперь временно отведены означенным монастырям, то последние не только не будут иметь никакой претензии на означенные участки, но и обязаны возместить все доходы, какие казна могла бы получить с оных за все то время, какое монастыри будут пользоваться отведенными им землями, в чем подписью и приложением казенной печати удостоверяет:

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

Մակագրութիւն. *Կատարել՝ Յուսիկ վարդապետ, Մելքիսեդեկ քահանայ Մանուկեան, Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 20 շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 98
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐԱՊԵՏ ԳԵՕՋԻԲՈՅՈՒԿԵԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՍԻ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԱՐՈՒԱԾ ԿՏԱԿԸ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 94 *26 յունուարի 1889 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ի կատարումն առաջադրութեան Տնտեսական մասին Սինոդիդ, որ յ30 դեկտեմբերի անցեալ ամի N 4671, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար ծանուցանել թէ՝ կտակն կարսաբնակ Կարապետի Գեօզիբոյուկեանց, որով զկնի մահուան պատուիրէ կտակակատարաց նուիրել եկեղեցական երկսեռ դպրոցաց քաղաքիս երեք հարիւր րուբլիս, հաստատեալ է նօտարական կարգաւ և կառավարութիւնս չանայ ստանալ ի նմանէ զվաւերացուցեալ պատճէն կտակին առ ի ունել ի գործս իւր[138]:

[138] 1891 թ. փետրուարի 18-ի գրութեամբ Կարսի Հայոց Հոգևոր կառավարութիւնը Սինոդին յայտնում է. «Ի կատարումն առաջադրութեան տնտեսական մասին Սրբազան Ատենիդ ի 15 դեկտեմբերի անցեալ 1890 ամի N 4528, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար ծանուցանել թէ՝ ստացեալ է կառավարութիւնս ի Կարապետէ Գեօ-

Նախագահ Հոգևոր կառավարութեան՝ Յուսիկ վարդապետ Մովսիսեան
Անդամք՝
Մելքիսիդեկ քահանայ Մանուկեան
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ Կ. Յովհաննէսեանց

Մակագրութիւն: *Առեալ ի տեղեկութիւն կցել ընդ գործոյն:*
Անդամ Սինոդի՝ Մամբրէ եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3371, թ.3, բնագիր, ձեռագիր:

№ - 99
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՔԵԿՈՒՑԱԴԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ ՅԱՋՈՐԴԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2226 *20 մայիսի 1889 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ վիճակիս Հայոց Երևանայ

Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն Հոգևոր կառավարութեան Հայոց Կարուց յ30 Յունուարի տարւոյս N 93, յորում գրի՝ «Բարձրապատիւ Փոխանորդն վիճակիս ի 20 ամսոյս N 6 գրէ օրինակ զայս»: Յայտնի է Ատենիդ, զի Հոգևոր դպրոցք քաղաքիս պէտս ունեն օգնութեան առ ի մնալ ի յարատև շարունակութեան: Աղբիւրք դպրոցացին տոկոսիք հինգ հազար րուբլեաց, զոր Բարեգործական Ընկերութիւն Հայոց Կովկասու[139] յատկացուցեալ է դպրոցաց, թոշակք աշակերտաց, կամաւոր նուէրք ժողովրդեան, օժանդակութիւն եկեղեցեաց քաղաքիս և արդիւնք թատերական խաղուց զոր կրկնեն երկիցս կամ աւելի ի տարւոջ թատերասէրք, սակայն այս ամենայն

զիբոյուկեանց զվաւերացուցեալ պատճէն կտակի նորին նօտարական կարգաւ ի մասին կտակելոյ զերիս հարիւր րուբլիս յօգուտ երկսեռ դպրոցաց Հայոց Կարս քաղաքի» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3371, թ. 5):

139 Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հիմնուել է 1881 թ. նոյեմբերի 15-ին՝ Թիֆլիսում: Իր գործունէութեան ընթացքում նիւթապէս օգնել է բազմաթիւ հայ գրողների, արուեստագէտների, ուսուցիչների, որբերի, այրիների, բնական աղէտներից տուժածների, գաղթականների, թոշակներ տրամադրել կարիքաւոր ուսանողների և այլն: Ունեցել է տասնեակ մասնաճիւղեր Կովկասի և Ռուսական կայսրութեան այլ քաղաքներում: Իր գործունէութիւնը դադարեցրել է 1921 թ.:

հազիւ հայթայթեն եկեղեցեաց քաղաքիս այնքան դրամս, զի հնար լիցի զդպրոցսն ապահովել մանաւանդ զի եկեղեցիք դժուարանան մասնադրել օժանդակութիւն, պարտաւորեալ գոլով Սուրբ Աստուածածնին ձեռն արկանել շինութեան եկեղեցական կրպակաց, իսկ միւսն հոգալ զպէտս կարեաց իւրոց: Իսկ ժողովուրդք ի բարեկարգութիւն քաղաքիս պարտաւորեալ են փակել զհին խանութս և շինել նորս, բառնալ զտունս ընդ որս անցանելոց են բանալի փողոցք, ի հոգիս ապաստան հազիւ ընում զպէտս կարեաց ընտանեաց: Հոգալով զդպրոցաց քաղաքիս, անկաւ ի միտս զանց չառնել և զյաջորդարանաւ, որոյ կարիք առաւել քան զչափն զգալի է, զի թող զանյարմարութիւն այժմեան յաջորդական տան թէ՝ վասն երկիւղի քարանց որք կարկառեալ կախեալ կան զտանեօք և հոսիլ ունեն և թէ՛ վասն խոնաւութեան, շինութեամբ նորոյ եկեղեցւոյն փոխադրել ունի, բաց յայսմանէ, ամի ամի վարձս վճարէ Ատեանդ վասն տան ուր զետեղեալ է: Զայս ամենայն առաջի աչաց ունելով խորհեցայ յանձն առնել կառավարութեանդ յաղերս առ բարձրագոյն Հոգևոր իշխանութիւն ելանել, խնդրելով զի հաճեսցի նախ՝ վասն մետրիքականաց առնել տնօրէնութիւն այսպիսի, որովհետև վիճակ կարուց նոր է վիճակեալ թեմին Այրարատայ, որոյ եպիսկոպոսապետ է Վեհափառ Կաթողիկոսն Ամենայն Հայոց և ունի բազում պէտս կարեաց, վասն որոյ ի մետրիքականաց զմի մի րուբ. գանձել վասն Մայր Աթոռոյս, իբրև դրամագլուխ շինութեան յաջորդարանին ի կարս, զի ի ժամանակի շինութեան ի կիր արկցի, զմի մի րուբ. հանել ի նպաստ Թեմական Հոգևոր դպրանոցին Հայոց Երևանայ, որ ընդ հովանեաւ Կոնսիստորիային, որ տայ զմետրիքականս, իսկ զմնացեալսն դարձուցանել յօգուտ դպրոցաց տեղւոյս, որ միակնէ առ ի լնուլ զպէտս հոգևոր պաշտօնէից վիճակիս: Ի նպաստ շինութեան յաջորդարանի գանձելու և զմասն յուխտատեղւոյն Բագարանայ՝ զոր մինչև ցբացումն կառավարութեանդ առաջնորդք ստացել են Մուգաթա[140] անուամբ ըստ այսմ և յայլոց ուխտատեղեաց, եթէ լիցեն: Երկրորդ՝ խնդրել ի Կոնսիստորիայէ զի վաւերացուցանիցէ զիրաւունս մոմավաճառութեան կրպակի վիճակիս, պաշտօնապէս հաղորդեսցէ Նահանգական Վարչութիւն տեղւոյս զբացմանէ կրպակի մոմավաճառութեան և տացէ իրաւունս զմոմավաճառութիւն տալ կապալաւ յօգուտ դպրոցաց տեղւոյս: Ծանուցանելով զայսմանէ Վիճակային Կոնսիստորիայիդ Հայոց Երևանայ, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար խնդրել տնօրինել նախ՝ զի ի մետրիքականաց մի մի րուբ. յատկացի Թեմական դպրանոցիդ, մի մի րուբ. յաւելցի յարդիւնս Մայր Աթոռոյ իբրև աղբիւր գումարի վերաշինութեան յաջոր-

[140] Մուգաթա, Մուգադա – արքունի հողեր Օսմանեան պետութեան մէջ, որ յանձնւում էր կապալառուին շահագործման և փոխարէնը տուրք էր ստացւում:

դարանին և յետ այնորիկ՝ ճեմարանի Մայր Աթոռոյ և զմնացեալս Հոգևոր դպրոցաց քաղաքիս, որ չունի համարեա սեպհական արդիւնս։ Բ. Վաւերացուցանել զիրաւունս մոմավաճառութեան կրպակի գրելով առ Պ. Նահանգապետն ի գիտութիւն և տալ իրաւունս զկրպակն մոմավաճառութեան տալ կապալաւ յօգուտ Հոգևոր դպրոցաց տեղւոյս։ Եւ Գ. զՄուգաթայ անուանեալ արդիւնս ուխտատեղեաց զոր ստանային առաջնորդք յատկացուցանել գումարին շինութեան յաջորդարանի և յետ այնորիկ դարձուցանել ի նպաստ ճեմարանի։ Եւ զտեղեկութիւնս ի գործոց փոխանորդի թեմակալին Հայոց Երևանայ՝ Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի 1887 ամի ընդ N 18, յորմէ պարզապէս տեսանի, զի նորին Սրբազնութիւն երկոքումբք առաջադրութեամբ իւրովք ի 22 օգոստոսի և յ30 հոկտեմ. 1887 ամի ընդ NN 183 և 454, առաքմամբ վեցից օրինակաց տպագիր դաշնագրութեանց պատուիրեալ է Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց վիճակի խորհրդակցութեամբ ընդ պատուելի անդամոց հոգաբարձութեան երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Կարս քաղաքի կազմել զհրահանգս յաղագս կապալատուութեան մոմավաճառութեան յօգուտ վարժարանաց բանալով զառանձին կրպակ ի յարմարաւոր տեղւոջ, ուստի պարտաւորաբար գնեսցին ամենայն երեսփոխանք եկեղեցեաց Կարս քաղաքի և գիւղորէից նահանգին զհարկաւորեալ ինքեանց մոմս ի գործադրութիւն, իսկ զամբողջ եկամուտս պահարանին մոմավաճառութեան դարձուցանել յօգուտ դպրոցաց։ Օրէնք կայսերականք յօդ. 1029 հրամային հատ Ժա. մ. Ա. երեսփոխանի թոյլատրի ձուլել և վաճառել ո՛չ միայն իւրոց ծխականաց, այլ ընդհանրապէս ամենայն Հայոց, զմոմս որք գործադրեն յեկեղեցական արարողութիւնս և ի հոգևոր ծիսակատարութիւնս Հայոց Լուսաւորչեան դաւանութեան։ Վաճառումն մոմոց լինի յեկեղեցիս կամ արտաքոյ նոցին։ Թոյլատրեալ լինի ունել մերձ ի Հայոց եկեղեցիս զկրպակս մոմավաճառութեան և այլն։ Սահմանեցին. որովհետև տնօրէնութեամբ փոխանորդի վիճակիս արդէն թոյլատրեալ է ի 1887 ամի Հոգևոր կառավարութեան Հայոց Կարուց կարգադրել խորհրդակցութեամբ Հոգաբարձութեան երկդասեան ուսումնարանաց Հայոց Կարս քաղաքի կազմել զհրահանգ կապալատուութեան մոմավաճառութիւն յօգուտ վարժարանաց, բանալով զառանձին կրպակ ի յարմարաւոր տեղւոջ ի վերայ հիման 1029 յօդ. ժա. Հ. Ա. մասին օրինաց, ուստի հրամանագրել յիշեալ կառավարութեան փութանակի տնօրինել զկապալատուութենէ մոմավաճառութեամբ Կարուց վիճակի ըստ առաջադրութեանց և հրահանգութիւն Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի, որ ի 20 օգոստոսի և յ 30 հոկտեմ. 1887 ամի NN 183 և 454 թղթակցելով զայնմանէ ընդ Նահանգապետէն Կարուց, իսկ զգծագրեալ ի յայտարարութիւն միւս պահանջից Հոգևոր կառավարութիւն Հայոց Կարուց յայտարարեալ Լուսաւորչեան Հայոց

Սինոդիդ Սրբոյ էջմիածնի ի պարտուպատշաճ տնօրէնութիւն, սպասել լուծման Դորին։

Ատենապետ՝ Սուքիաս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Պօղոս քահանայ Այվազեանց
Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեանց
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3456, թթ. 1-2 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 100
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՐՍԻ ՅԱՋՈՐԴԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՒ ՏԵՂԻ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

26 յունիսի 1889 թ.

Ձայայտարարութիւն Վիճակային կոնսիստորիայի Հայոց Երևանայ ի 20-էն մայիսի տարւոյս N 2226, յորում գրի ի Կոնսիստորիայիս լուան ձայայտարարութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց յ30 յունուարի տարւոյս N93, յորում գրի Բարձրապատիւ Փոխանորդն վիճակիս ի 20 ամսոյս N 6 գրէ օրինակ զայս. «Յայտնի է Ատենիդ զի հոգևոր դպրոցք քաղաքիս պէտս ունեն (ցվերջ)»։

Հրամայեցին. հաւան գտեալ ընդ առաջարկութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց վասն շինութեան Յաջորդարանի տեղւոյն, և ապահովութեան կառավարութեան դպրոցաց հրամանագրել Վիճակային Կոնսիստորիայի Հայոց Երևանայ զմի մի րուբլի ի դրամոց ստանալի ի նմին նուիրանաց ի տալի զծննդական վկայականս, դարձուցանել այսուհետև ի նպաստ կառավարութեան Թեմական դպրանոցի Երևանայ, զմի մի րուբլիս Մուգաթայ անուանեալ արդեանց ուխտատեղեաց Կարուց նահանգի յատկացուցանել ի նպաստ շինութեան և յաջորդարանի Կարուց և յետ աւարտման այնորիկ ի նպաստ ճեմարանի Աթոռոյս և ի վերջ իւրաքանչիւր ամի մատուցանել ի Սինոդս ի պահպանութիւն և զմնացեալ նուէրս տալ Հոգևոր դպրոցաց Կարուց քաղաքի։

Ձայսմանէ ծանուցանել Վիճակային Կոնսիստորիայի Հայոց Երևանայ և Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց վասն տեղեկութեան և կատարման[141]։

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3456, թ. 3 և շրջ., թողօն, ձեռագիր:

[141] 1889 թ. յուլիսի 4-ին յիշեալ որոշման մասին տեղեկացուել են Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիան և Կարսի Հոգևոր կառավարութիւնը:

№ - 101
ԿԱՂՁՈՒԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՄԱԿԱՐ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ՏԵՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԱՒԱՐՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 սեպտեմբերի 1889 թ.
Կաղզուան

Նորին Վեհափառութեան
Սրբազնագոյն Պատրիարք Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ
Ի Հայ ժողովրդականաց Կաղզուան քաղաքի
Խնդիր

Քանի ամք են, Վեհափա՛ռ Տէր, զի ձեռնարկեալ եմք շինուիլ նոր եկեղեցւոյ և արդէն բաւականաչափ յառաջ տարեալ, բայց որովհետև ծանր իմն համարի մի բուռն ժողովրդոց հոգալ զդաստիարակութենէ հայ մանկտւոյն և ընդ նմին յաւարտ հասուցանել զթերակատար շինուիլն եկեղեցւոյն, ի վերայ որոյ ծախեալ եմք ցայս օր աւելի քան զերկուտասան հազար րուբլիս։ Ուստի հայցեմք զտնօրէնուիլն Ձերոյին Ս. Օծութեան, յաղագս շնորհելոյ զիրաւունս հրաւիրելոյ զմեր ազնեայ եղբայրս Ռուսաստանի յօժանդակութիւն շինութեան մերս եկեղեցւոյ, քանզի տեղական ժողովրդականքս զարդիս բնաւին անձեռնհաս գտանինք յայդ գործ և հազիւ միայն մարթանանք հայթհայթանօք պահպանել զգոյութիւն դպրոցաց տեղւոյն։

Յաղագս շնորհելոյ զիրաւունս հանգանակութեան ընտրեցաք ի միջոյ ժողովրդականացս զհետևեալ անձինս հոգաբարձուս. բժիշկ Գէորգ Կաճկաճեան[142], ուսուցիչ Յարութիւն Փիլոյեան, Հլղատ Բիշարեան, Գործակատար քահանայ Տէր Յովհաննէս Թովմասեան, Գաբրիէլ Աասլեան։

Բժիշկ Յ. Մամիկոնեան, Զաքար Հայրապետեան,
Մկրտիչ Բիշարեան[143]
Նախագահ ժողովի՝ Տէր Յովհաննէս Թովմասեան[144]

Մակագրութիւն. *Յանձնեմք ի փութանակի տնօրէնութիւն Սինոդի Սրբոյ Էջմիածնի*[145]։

---

[142] Գէորգ Կաճկաճեան, բժիշկ – կրթութիւնը ստացել է Ս. Պետերբուրգի Բժշկական ճեմարանում, գերազանց տիրապետում էր ռուսաց լեզուին: Յայտնի է, որ 1879-80 ուսումնական տարում անվճար դասաւանդում էր Կարսի արական հոգևոր դպրոցում (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, թթ. 35 շրջ. – 36):

[143] Հետևում է ևս 66 անձի ստորագրութիւն:

[144] Յովհաննէս քահանայ Թովմասեան – ծնուել է 1805 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1859 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

[145] 1889 թ. հոկտեմբերի 31-ին հետևեալ գրութիւնն է առաքել Կարսի Հոգևոր Կառավարութեանը. «Ժողովրդականք Կաղզուան քաղաքի խնդրագրութեամբ ի 26 սեպտեմբերի տարւոյս դիմեալ առ Նորին Վեհափառութեան հայցին շնորհել իրաւունս հրաւիրելոյ հայազնեացն Ռուսաստանի յօժանդակութիւն շինութեան թերակատար եկեղեցւոյ իւ-

յ 7 հոկտեմբերի 1889 ամի
Մակար Կաթուղիկոս Ամեայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8554, թթ. 1-2 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 102
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԳԵՕՐԽԱՆԱՅ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՔԻՒՐԴ ԹԱՄՈ ԱՊՐԸՇ ՕՂԼՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ԴԱՒԱՆԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 3943 *27 սեպտեմբերի 1889 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնիոդոսն Սրբոյ էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ վիճակիս Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ի Կոնսիստորիայիս լուան զզեկուցումն Հոգևոր կառավարութեանն Հայոց Կարուց ընդ յայտարարութեան ի 10 մայիսի տարւոյս Թ. 449, մատուցանելով զխնդրագիր բնակչի Գեօրխանայ գեղջ՝ քիւրդ Թամօյի Ապըշ օղլւոյ և զվկայական տուեալ նմա ի հասարակութենէ այնր գեղջ վասն ո՛չ պատկանելոյ նորա դաւանութեան ռուսաց՝ խնդրեաց զտնօրէնութիւն սորին յաղագս ընդունելոյ զնա ի Լուսաւորչեան դաւանութեան և մկրտելոյ ըստ ծէսի Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ: Այլ որովհետև ի վրայ առաջարկեալ վկայագրոյն ո՛չ էր ծանուցեալ արքունի կնքադրոշմ, ուստի Ատեանս առաջադրութեամբ ի 22-ն նոյն մայիսի Թ. 2266, պատուիրեաց Հոգևոր կառավարութեան Հայոց Կարուց առաքել զմի 80 կոպէկանոց կնքանիշ (մարկայ): Անկախ զայնմանէ պատուիրեաց նմին, զի նախ քան զտատցումն այնպիսի խնդրագրոյ՝ որ վասն ընդունելոյ զմահմետական ի ծոց Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ տալ կրթել զնոսա ի պատշաճաւորն կրօնական գիտելիս, զի ծանօթացեալ նոցա ընդ հանգանակի մերոյս դաւանութեան գէթ մասամբ առի ունեցին զհամոզումն բաղդատելոյ զճշմարտութիւնս իւրաքանչիւր կրօնից և մի՛ յետ ընդունելոյն զդաւանութիւն մերոյս եկեղեցւոյ վերստին փոխեալ զմտադրութիւն իւրեանց դարձցին ի մահմետականութիւն: Առ այս կառավարութիւնը մատուցմամբ պահանջեալ մարկայի յայտարարութիւն ի 11-ն ամսոյս Թ. 238, հաղորդէ սմին թէ խնդրատու քուրդն սնեալ գոլով ի մանկութիւնենէ ի հայ շրջանի պատշաճապէս կրեալ է ի քրիստոնէավայել գիտելիս: Սահմանեցին. Զվերոյ գրելոցն յայտարարեալ Սրբազան Սինոդիդ Սրբոյ էջմիածնի մատուց-

---

րեանց: Ուստի պատուէրի դմին փութով ծանուցանել թէ եկեղեցին Կաղզուանի որոյ թոյլտուութեամբ կառուցանի, ի նորոյ շինի այն՝ թէ ի վերայ հիման հնոյ եկեղեցւոյ, որպիսի ձևակերպութեամբ, յումմէ ստացեալ է ձևն շինութեան (պլան), մինչ ցայդ որքան գումար ծախեալ է ի վերայ շինութեան և որքան կարէ ծախել մինչ ցաւարտ այնորիկ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8554, թ. 3 և շրջ.):

մամբ առաջարկեալ ի մարազգի Թամօ Ապըշ օղլւոյ վկայագրոյն վասն ո՛չ պատկանելոյ նորա ռուսաց դաւանութեան, խոնարհաբար հայցել զբարեհաճ և շուտափոյթ տնօրէնութիւն դորին, յաղագս ընդ ունելոյ զնա ի ծոց Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ[146]*։*

Ատենապետ՝ Սուքիաս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Պօղոս քահանայ Այվազեանց
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8549, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 103
ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ԿԱՂԶՈՒԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1197 *29 հոկտեմբերի 1889 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց Յայտարարութիւն

Ի կատարումն առաջադրութեան Կառավարչական մասին Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի յ31 հոկտեմբերի տարւոյս № 3660[147]*, Հոգևոր Կառավարութիւնս ստացեալ զբացատրութիւն ի Գործակալէ Կաղզուանայ ի 20 ամսոյս ըստ այնմ պատիւ ունի ծանուցանել Ձէ եկեղեցին Կաղզուանի հիմնարկեալ է ի 1884 ամի թոյլտուութեամբ Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոսի Աղուանեանց, նախկին Կառավարչի Հոգևոր գործոց Վիճակիս, ի վերայ հիման հնոյ եկեղեցւոյ ըստ հաստատեալ ձևոյն տուեցելոյ ի քաղաքային ճարտարապետ Տիգրանեանցէ ի 1884 ամի։ Մինչ ցարդ ծախեալ է ի վերայ շինութեան 6792 րուբլի ի բաց առեալ զմատակարարութիւն նիւթոց, այն է աւազ, կիր, քար և այլն, որովք օժանդակեալ են քաղաքացիք շինութեան եկեղեցւոյ։ Իսկ մինչ ցաւարտ կարէ ծախել 30.000 րուբլի ևս։ Իսկական ուրուագիծ եկեղեցւոյն (պլան) ընդ սմին Հոգևոր Կառավարութիւնս մատուցանէ ի տես Սրբազան Սինոդիդ, խնդրելով վերադարձուցանել զայն վասն վերստին յանձնելոյ Հոգաբարձութեան շինութեան յիշատակեալ եկեղեցւոյ առ ի շարունակել ըստ այնմ զշինութիւն*[148]*։*

---

[146] 1890 թ. ապրիլի 25-ին Ս. Սինոդի կառավարչական մասը թոյլատրել է Երևանի Վիճակային Կոնսիստորիային «կատարել ի վերայ մահմեդական-քուրդ Թամօյի Ապըշ օղլւոյ զխորհուրդ ս. մկրտութեան ըստ ծեսի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8549, թ. 8):

[147] Տե՛ս թիւ ?? ծանօթագրութիւնը:

[148] 1890 թ. փետրուարի 21-ին Սինոդը քննել է հարցը և որոշել. «Որովհետև հիմնարկութիւն

Նախագահ Հոգևոր Կառավարութեան՝
Յուսիկ վարդապետ Մովսիսեան
Անդամք՝ Մելքիսեդեկ քահանայ Մանուկեան
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ Կար. Յովհաննէսեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8554, թ. 4, բնագիր, ձեռագիր:

№ - 104
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Թիւ 148 *10 մարտի 1890 թ.*
Երևան

Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդի Սրբոյ Էջմիածնի ի Փոխանորդէ Թեմակալին Երևանի Յայտարարութիւն

Փոխանորդ Վիճակին Կարուց՝ Բարեշնորհ Յուսիկ վարդապետի Մովսիսեանց հետագրաւ յ9 ամսոյս ընդ համարաւ 156, գրէ առ իս զյետագայս. «Տոկալ այլևս չկարեմ որոգայթադրութեանց անձնաւորութեանցն ի պատճառս Տայլարի հողոց և այլոց հանգամանաց, խնդրեմ զտնօրէնութիւն վասն տեղափոխութեան իմոյ և զգործն յանձնելոյ Տէր Մելքիսեդեկ քահանայի»:

Զայսմանէ հասուցեալ ի գիտութիւն Սրբազան Սինոդիդ՝ յարգոյաբար խնդրեմ զբարեհաճ տնօրէնութիւն դորին առ վերոգրեալ առաջարկութիւն Բարեշնորհ Յուսիկ վարդապետի Մովսիսեանց:

Սուքիաս եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8327, թ. 25, բնագիր, ձեռագիր:

№ - 105
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 2741 *29 յունիսի 1890 թ.*
Երևան

եկեղեցւոյ Կաղզուան քաղաքի եղեալ է առանց լուծման Սինոդիս՝ որ ո՛չ էր օրէն, ուստի թոյլ տալ ընտրեալ ի հասարակութենէ հոգաբարձուաց առնել զհանգանակութիւն մի միայն ի մէջ ժողովրդեան Կաղզուանայ և ի շրջակայ գիւղօրայս, զորմէ վերադարձուցմամբ ձևոյն շինութեան տալ գիտել նոցա ի ձեռն Հոգևոր Կառավարութեան Կարուց» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8554, թ. 5 և շրջ.):

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնիոդոսն Սրբոյ Էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ վիճակային Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ի Կոնսիստորիայիս լուան զառաջադրութիւն Տ. Փոխանորդի Թեմակալի Հայոց Երևանայ՝ Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի ի 23-ն այսր յունիսի Թ. 552, յորում գրի. «Փոխանորդ Կարուց վիճակի Արժանապատիւ Յուսիկ վարդապետի Մովսիսեան յայտարարութեամբ ի 15-ն այսր յունիսի գրէ առ մեզ զյետագայս. « յ30-րդ օրէ մայիս ամսոյ ստիպեալ ի հարկէ առ ի անդատապարտ կացուցանելոյ զիս ի խայթէ խղճի և ի դատաստանէ մարդկանց ընդ արժանապատիւ Մինաս քահանայի Տէր-Պետրոսեանց և ընդ Մահտեսի Յարութիւն աղայի Մխչեանց երիցս ի շաբաթու շրջեմ ընդ խանութս առ ի հանգանակելոյ դրամս ի նպաստ կառուցանելի եկեղեցւոյն: Հանգամանք գումարեալ դրամոց. – 816 րուբլի 6 կոպէկ. յընթացս երից ամաց յօրէ մտանելոյ իմոյ ի կարս ջանացայ անտեսել ի Հոգևոր Կառավարութեան ի մտից որ ընդ վայր կորնչելոց էին ի ձեռն երեսփոխանաց եկեղեցեաց և հոգաբարձուաց դպրոցաց, իսկ մուտքն էին. Ա. Տարեվարձ մի հարիւր դեսեատին հողոյ զոր ի ձեռս բերաք յօգուտ եկեղեցւոյ քաղաքի, ի 1888 ամի ի հոկտեմբեր ամսեան և ի մարտ ամսոյ 1887 ամի հանելով յաճուրդ՝ տուաք կապալաւ առ տարին 247 րուբլու ուրեմն վարձադրամ երկուց ամաց (1889 և 1890 ամաց) 494 րուբլի: Բ. Լուսագին նուէր հանգանակելոյ յաւուր տօնի ջրօրհնեաց ի 1-ոյն յունուարի տարւոյս ց5-ն նոյն ամսոյ 228 րուբլի 86 կոպ. և Գ. Վարձ տան զոր Գեր. Տէր Գրիգորիս եպիսկոպոսն Աղուանեան ընծայեալ է կառուցանելի եկեղեցւոյն ի սեպտեմբեր ամսոյ 1888 ամի ցմայիս ամիս տարւոյս 94 րուբլի 20 կոպէկ: Ընդ ամենայն ութ հարիւր տասն և եօթ րուբլի վեց կոպէկ (817 ր. 6 կոպ.), յորմէ ի բաց հանելով զ300 րուբլի վարձ ճարտարապետին և վեց րուբլի ծախք վասն տեղափոխելոյ զքարիս կուտեալս վասն կառուցանելի եկեղեցւոյն Պարոն Յարութիւն աղայի Մխճեանց, որով պատրաստի դրամ ընդ հանգանակեցելոյն ցայսօր է աւելի քան 2500 րուբլէ, 500 րուբլիոց չափ և քար վասն շինութեան, ուրեմն չև ևս ձեռն ի գործ շինութեան արկեալ ունեմք աւելի քան զերեք հազար րուբլի: Հանգանակութիւն շարունակի իմով մասնակցութեամբ, և դեռ չեմք դիմեալ ևս աստիճանաւորս և առ այնս, առ որս դիմել հարկէ ի տան, ստորագրութիւն հասեալ է ցչորիք տասան հազար և հասանիցի ց20.000 րուբլին: Ըստ իմում կարծեաց՝ առանց ծանրանալոյ ի վերոյ ժողովրդեան մարթ է գանձել ի նպաստ շինութեան եկեղեցւոյն ի տարե վարձէ հողոյն, ի լուսագնոյ և յօժանդակութենէ եկեղեցւոյն ց1000 րուբլի, եթէ հանգանակութեամբ գումարեսցի ի ժողովրդենէ 3400 ց4000 րուբլի յիւրաքանչիւր ամի ապա եկեղեցին լինեսցի յընթացս 7-10 ամաց: Պ. Շահ-ղուրաթեան խոստացեալ է օգնել շինու-

թեան եկեղեցւոյն՝ պարտաւորելով զհայ գիւղացիս հաղորդս գտանել շինութեանն սայլիւք քարինս ածելով ի քաղաքս կամ դրամօք։ Արհեստաւորք իւրաքանչիւր ըստ կարգի՝ խոստանան ձրիաբար աշխատել ի պահանջեալ հարկին, նոյնպէս և հասարակն, զայս ամի նոյն ի նկատի առնելով համարեմ թէ զուտ գումար դրամական ծախուց չիցէ աւելի քան զ35.000 – ց40.000 րուբլի։ Ըստ իմում սովորութեան չկամելով թագուցանել ի Ձերմէ Սրբազնութեան իբրև ի Տեառնէ թեմին ամենայն, որ ինչ լինի յայտնեմ թէ բաց ի մէնջ երից, զորոց ի վեր անդր չիշատակեցաք ի հոգաբարձուաց Պարոն Բաղդասար Ջատիկեան հոգայ վասն ստանձնեալն գործոյ, իսկ այլք է զի բացակայեալ են ի քաղաքէս, է զի անտարբեր գտանին առանց հրաժարեալ ցուցանելոյ զանձինս և է՝ զի հրաժարեալ են, որոց անուանք յայտնի գոլով Սրբազնութեան Ձերում ոչ կամիմ երկրորդել։ Եթէ զիջանել իմ աստի պարտք նախագահի Հոգաբարձութեան եկեղեցաշինութեան մնալոց է յիմ վերայ, ապաքէն խնդրեմ զպատճէն յատակագծին յետս առաքել, զի հնար լիցի մեզ հիմունս արկանել շինութեանն կրկին պատճառաւ, նախ՝ զի ոստիկանական վարչութիւն համարելով թէ՝ հայք չունին կառուցանել զեկեղեցի ի մտի ունի զտեղին զայն օտարացուցանել։ Բ) զի ժողովուրդն ի տարակուսի գոլով ի չակամայ կամս տայ զոր տայ, և եթէ չլիցի հիմնարկութիւն խստիւ դատեսցէ զմեզ որպէս պատճառաւ օտարացման գետնոյն և զշինելի զեկեղեցին»։

Զվերոգրելոցն տուեալ գիտել Վիճակային Կոնսիստորիայիդ առաջադրեմք հասուցանել ի գիտութիւն և ի փութաւոր տնօրէնութիւն Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդի Սրբոյ Էջմիածնի վասն թոյլտուութեան սկզբնաւորութեան շինութեան եկեղեցւոյն, զի մի օտարասցի յատկացեալ տեղին և ժողովուրդն պատճառաւ ձևական գրագրութեանց զրկեսցի ի պատւոյն ունելոյ զպատշաճաւոր տուն աղօթից անուանն Աստուծոյ։ Եւ զտեղեկութիւնս ի գործոյն Սահմանեցին. Զվերոգրելոցն խոնարհաբար յայտարարեալ Սրբազան Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի հայցել զպատուապատշաճ տնօրէնութիւն դորին առ այն[149]։

Ատենապետ՝ Սուքիաս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Պօղոս աւագ քահանայ Այվազեանց
Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեանց
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թթ. 19-20 շրջ., բնագիր, ձեռագիր:

---

149 1890 թ. յուլիսի 24-ին Սինոդը հետևեալ պատասխանն է ուղարկել Երևանի Վիճ. Կոնսիստորիային. «Առ յայտարարութիւն դորին ի 29 յունիսի տարւոյս Թ. 2741 ծանուցանի, թէ Սինոդ չկարէ շեղել յօրինաց թոյլ տալով զշինութիւն եկեղեցւոյ Կարս քաղաքի առանց հաստատութեան ծրագրի՝ որոյ մատուցումն Կոնսիստորիայդ յամեցուցանէ համարելով զպահանջեալ ըստ օրինաց լրացուցիչ տեղեկութիւնս ձևական գրագրութիւն» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թ. 21 և շրջ.):

№ - 106
ՆԵՐՔԻՆ ՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՄԱԿԱՐ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳՐԻԳՈՐ ՍՈՒՔԻԱՍԻ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆՑԻՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 օգոստոսի 1890 թ.
Ներքին Քեաղիկլար

Նորին Վեհափառութեան Աստուածարեալ Հայրապետի Ամենայն Հայոց Տեառն Տեառն Մակարայ Առաջնոյ Արևմտեան Շիրակայ Ներքին Քեաղիկլար գիւղի հասարակութիւնից խոնարհաբար պնդիր

Վեհափառ Տէ՛ր, երեք տարուց աւելի էր, որ տեղւոյս հանգուցեալ ծխատէր Մկրտիչ քահանայ Բարսեղեանը մօտ իննսուն ամաց զառամեալ հասակի, մարմնոյ անդամների տկարութիւնը առիթ դառնալով անկարող էր լինում եկեղեցական սրբազան պահանջները լցուցանելու, վասն որոյ հանգուցեալը իւր կենդանի ժամանակ իւր հաճութեամբ և բոլոր ժողովրդականաց, որ բաղկանայ չիսուն և հինգ տանից, անցեալ 1889 թուականում, ընտրեց Աղէքսանդրապօլու գաւառի Հոռոմ գիւղացի Գրիգոր Սուքիասի Ստամբօլցեանցին քահանայ ձեռնադրելու։

Եւ մենք ժողովրդականքս իսկոյն և եթ կազմելով համախօսական թերթ, պատշաճաւոր խնդրագրով առաջարկեցինք Հոգևոր իշխանութեանը, որ այժմ գտնւում է Սրբազան Սինոդում։ Իսկ երանելի յիշեալ քահանայն՝ ներկայ թուականիս յուլիսի 18-ին կնքեց իւր անցաւոր կեանքը անանց յաւիտենականութեան մէջ, թողնելով Քրիստոնէական սրբազան եկեղեցւոյ սաներիս անհովիւ, զրկուեցանք Հոգևոր մխիթարութիւնից։ Ուստի դիմելով ի գթութիւն Վեհափառութեանդ կհամբուրենք սուրբ գարշապարդ և խոնարհաբար կխնդրենք առնել տնօրէնութիւն, փութով ձեռնադրելու առաջարկեալ Ստամբօլցեանցին յաստիճան քահանայութեան, որով կմխիթարէք հովուազուրկ որդւոցդ։

Վարոս Առաքելեան
Յարութ Իսոյեան
Մուկուչ Երոյեան[150]

Մակագրութիւն. *Յանձնեմք ի տնօրէնութիւն Սինոդի*[151]*։ Ի 12 սեպտեմբերի 1890 ամի, ի Ս. Էջմիածին*

Մակար Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8598, թթ. 5 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[150] Հետևում է ևս 11 անձի ստորագրութիւն:

[151] 1891 թ. յունիսի 11-ին Ս. Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային Գրիգոր Ստամբօլցեանին ձեռնադրել քահանայ Ներքին Քեաղիկլար գիւղի վրայ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8598, թ. 12 և շրջ):

№ - 107
ՎԵՐԻՆ ՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԴԱՍԵԱՆ ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆՑԻՆ՝ԻՐԵՆՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1 սեպտեմբերի 1890 թ.
Վերին Քեադիկլար

Նորին Արժանապատուութեան Թեմական Տեսչի եկեղեցական-ծխական Ուսումնարանաց Հայոց Վիճակին Երևանի Բարեկրօն Մեսրոպ Քահանայի Մելեանց[152]
Վերին Քեադիկլար գիւղի Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ միդասեան տղայոց դպրոցի Հոգաբարձութիւնից
Յայտարարութիւն

Հոգաբարձութիւնս սորանով յայտնում է Ձեր Բարեկրօնութեանը որ մեր խնամոց յանձնուած դպրոցը միանգամայն զուրկ է եկամուտի աղբիւրից։ Բայց և այնպէս, ի միտ առնելով դպրոցի անհրաժեշտութիւնը, Հոգաբարձութիւնս խոստանում է եկեղեցական հողատեղերի 167 ր. եկամուտների վերայ աշխատել աւելացնել 150 ր. աշակերտներից թոշակ, որոշելով այդ գումարից 47 ր. Կոնսիստորիային ուսումնարանական գրասեղանի, և դպրոցական այլ ծախքերի, իսկ մնացած 270 ր. վարձ ուսուցչին ի տարին։ Բացի այս րոճիկից, պարտաւորւում ենք ուսուցչին տալ բնակարան, ծառայ և վառելիք։

Այս մասին յայտնելով Ձեր Բարեկրօնութեանը խնդրում ենք գործ դնեք հնարաւոր միջոցներ նշանակելու համապատասխան ուսուցիչ և դրանով միջոց տալու մեր գիւղի որդւոցը ուսում տալու։

Հոգաբարձուք՝
Նախագահ՝ Աղէքսանդր քահանայ Յովսէփեան
Սարգիս Ջաւարեան
Երեցփոխան՝ Սարգիս Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 1, բնագիր, ձեռագիր:

---

[152] Մեսրոպ քահանայ Յովսէփի Մելեան (1859-1941) – Յետագայում՝ աւագ քահանայ: Աշխարհական անունը՝ Արամ: Հոգևոր գործիչ, խմբագիր, մանկավարժ: Եղել է 1920-ական թուականների «Ազատ Եկեղեցի» շարժման նախաձեռնողներից, որի համար Գէորգ Ե. Կաթողիկոսի տնօրինութեամբ կարգալոյծ է յայտարարուել:

№ - 108
ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ԾԽԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆՑԻՆ՝ ԻՐԵՆՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 սեպտեմբերի 1890 թ.
Սարիղամիշ

Նորին Արժանապատուութեան Տեսչի եկեղեցական-ծխական ուսումնարանաց թեմին Երևանայ Մեսրոպ Քահանայի Մելեանց Հոգաբարձութիւնից Սարիղամիշի ծխական-եկեղեցական միդասեան տղայոց դպրոցի Յայտարարութիւն

Հոգաբարձութիւնս իրան խնամոց յանձնուած դպրոցի պահպանութեան համար խոստանում է և պարտաւորւում է հայթայթել առաջիկայ 1890/91 ուսումնական տարեշրջանի ընթացքում հետևեալ եկամուտներն՝ Ա. Նուիրատրամներից 300 ր., Բ. Մոմավաճառութիւնից 75 ր., Գ. Աշակերտաց թոշակադրամից 103 ր., Դ. Մատաղից 30 ր.– ընդամենը 508 ր.: Այս գումարից հանելով 66 ր. 66 կ. իբրև տանվարձ ուսումնարանի, 20 ր. ծառայի, քարտուղարի 15 ր. վառելափայտ 30 ր. կոնսիստորիային, դպրոցական գրասենեակին և զանազան մանր ծախուց 40 ր.– ընդ ամենը 171 ր. 66 կ. ծախք. մնացած գումարը Հոգաբարձութիւնս որոշեց յատկացնել տարեկան թոշակ ուսուցչի ըստ երկրորդ կոպարի: Այս մասին յայտնելով Ձերին արժանապատուութեանը Հոգաբարձութիւնս պատիւ ունի խնդրելու տնօրինէք կարգելու ուսուցիչ մեր խնամոց յանձնուած միդասեան ուսումնարանի համար[153]*:*
Նախագահ Հոգաբարձութեան՝ Վարդան քահանայ Տէր-Վարդանեանց
Անդամք Հոգաբարձութեան՝ Մանուկ Խ. Ղասապեան
Կարապետ Իսահակեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 22, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[153] 1890 թ. հոկտեմբերի 20-ին Մեսրոպ քահանան հետևեալ պատասխանն է ուղարկել. «Հաստատելով և առաքելով առ Հոգաբարձութեանդ զնախահաշիւ մտից և ծախուց դպրոցիդ ի գործադրութիւն խնդրեմ հաղորդել ինձ վարձեալ էք արդեօք զոք ուսուցիչ ի դպրոցիդ թէ սպասէք տնօրինութեան իմոյ: Եթէ վարձեալ էք վաղ ընդ փոյթ առաջի արարէք ինձ ի հաստատութիւն, իսկ եթէ ոչ՝ ծանուցէք զի տնօրինեցից զպարտ ու պատշաճն» (ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 22, թ. 2):

№ - 109
ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հոկտեմբերի 1890 թ.
Կարս

Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն Մակարայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի Կաթուղիկէ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
Ամենախոնարհ յայտարարութիւն

Ընդ այսմ խոնարհաբար մատուցանելով Ձերում Աստուածարեալ օծութեան զվկայական ընկալեալ ի քաղաքային բժշկէ տեղւոյս վասն տկարութեան իմոյ[154]՝ աղաչեմ և խնդրեմ արձակել զիս ի փոխանորդութենէ վիճակին Կարուց, զի՝ որպէս վկայական բժշկի ցուցանէ՝ օդ, կլիմայ և լեռնային տեղադրութիւն տեղւոյս վտանգաւորք են և պէտս ունեմ բարեխառն, ցամաք և ջերմին կլիմայի առ ի տոկալ ինձ տկարութիւն, և, ևս առաւել՝ խաղաղ և անդորր կենցաղավարութիւն, զի հնար լինի առանց յուզման հոգալ միայն վասն ապաքինութեան։

Յուսալով վայելել զխնամս մարդասէր բարերարութեան Մեծի Քահանայապետիդ արձակմամբ ի տեղւոջէս՝ համբուրիւ օծեալ Աջոյդ և կարօտիւ Հայրապետական օրհնութեանդ՝ վեհափառ Տէ՛ր, մնամ ամենախոնարհ ծառայ նուաստ

Յուսիկ վարդապետ Մովսիսեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թ. 16, ինքնագիր:

№ - 110
ԳԱՆՁԱԿԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՅԱՋՈՐԴ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ՆՈՒԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 108 *10 նոյեմբերի 1890 թ.*
Գանձակ

Ձերդ Վեհ Օծութիւն
Աստուածարեալ Հայրապետ և Պատրիարք Մեծ սիրելի Ազգիս Հայոց
Տէր Մակար Կաթուղիկոս Ա.

[154] Խօսքը հետևեալ տեղեկանքի մասին է. «Я, Карсский городовой врач Мелик-Парсаданов, даю это свидетельство Викарию Карсской области архимандриту Усику Мовсисианцу в том, что он страдает хроническим мышечным ревматизмом, хроническим катаром дыхательных путей и общим малокровием, и что климат Карсской области, как высокой горной местности с сухим и размеренным воздухом и суровой продолжительной зимой, безусловно, вреден для здоровья архимандрита Мовсисианца; для поправления его здоровья, необходимо поэтому пребывание в теплом крае с влажным, менее разряженным воздухом. Карсский городовой врач Мелик-Парсаданов» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 91, թ. 17):

Զի՞նչ գեղեցիկ և զի՞նչ քաղցր քան զինքնայօժար խոստովանութիւն, որ թեթևեցուցեալ զմարդ յակամայ յանցանաց արժանիս առնէ թողութեան և սիրելի յաջս Տեառն իւրոյ։

Իմ է խոստովանութիւն առաջի Մեծի Պատրիարքիդ վասն միոյ Հայրապետական հրամանի Ձերոյ առ իս անցելում ամի, որ ի մասին ընծայելոյ իմ Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի զմի կտոր ինձապատկան հողն, եղեալ ի կարս քաղաքի տարածութեամբ երկու հարիւր ութսուն քառակուսի սաժինի ըստ չափոյ Տէրութեան, զոր թէպէտ պարտ իսկ էր նոյն ժամայն լրջամիտ յարգանօք կատարել սրբութեամբ, բայց յայնժամ ունելով ի սրտի իմում զվիշտ մեծ, կրեալ ի միաբանակից եղբարց ոմանց Մայր Աթոռոյ, չյօժարեցայ, և ունելով ի մտի հոգւոյ աչօք անմոռանալի զանցառութիւն իմ զբանիւ Վեհիդ, չկամեցայ իսպառ տալ մոռացութեան, որովհետև հանապազ ճմլէր խիղճս զսիրտ իմ յաղագս անցանելոյ զպատուիրանաւ Վեհիդ Մեծի, թէև անյայտ ի Ձէնջ պատճառաւ և վշտակրութիւն սրտիւ ի կողմանէ միաբանակից եղբարց։

Իմ խորհեալ ցայսօր՝ խորագգաց եղէ, զի արդարև թանկագին էր հրաման Ձեր, և յոյժ մեծ և օգտաւէտ մեծի ընդհանրական Աթոռոյն յաւիտեան, ըստ որում արժանիս առնէ զմարդ ի թիւս յիշատակատուաց Սիովնի, և որ մեծն է երանելի, ըստ այնմ, թէ «Երանի այնոցիկ, որք ունիցին զյիշատակս ի Սիօնի»։

Ուստի չկամեցեալ իմ զրկել զիս ի շնորհաց Մեծի Հայրապետիդ և ի յիշատակատուաց երանութեան ի բաց հեռացուցի ի սրտէս զվշտակցութիւնն զայն և այսօր ի հրաշափառ աւուր հինգերորդ տարեդարձի օծման Աստուածարեալ Վեհիդ պատուեալ զնախկին հրաման Ձեր ամենախոնարհ յարգանօք նուիրեմ զայն հող ի սեպհականութիւն Մեծի Աթոռոյ Սրբոյ էջմիածնի առաքելով ընդ այսմ զկալուածագիր նորին և զմակարդակն՝ և խնդրեմ արժանիս առնել զիս օրհնութեան Մեծի Հայրապետիդ, որում եմ և մնամ։

Խոնարհ ծառայ և հեզ աղօթարար
Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան

Գրեցաւ ի 10 նոյեմբերի 1890 ամի
ի ժամանակի Յաջորդութեան մերոյ
Վիճակին Հայոց Գանձակայ. ի Գանձակ քաղաք

Մակագրութիւն. *Առաքելով ընդ սմին ի Սինոդն զվկայական և զմակարդակ ի սմին նշանակեալ հողոյն, պատուիրեմք նմին առնել փութով զպարտուպատշաճն կարգադրութիւն*[155]։

Մակար Կաթուղիկոս Ամենայն Հայոց
ի 20 նոյեմբ. 1890 ամի ի Ս. էջմիածին։

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3503, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[155] 1891 թ. փետրուարի 15-ին Սինոդը քննելով հարցը որոշեց. «Հողս այս ըստ առաջի

№ - 111
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՏԵՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒԻՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 20 *18 յունուարի 1891 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց Յայտարարութիւն

Որովհետև ահա մերձենայ գարունն, և Հոգաբարձութիւնն կառուցանելի եկեղեցւոյն ըստ ցանկութեան ժողովրդեան ցանկայ ձեռնարկել զշինութիւն եկեղեցւոյ քաղաքիս, ուստի Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար հայցել զտնօրէնութիւն դորին, եթէ հնարին է փութացուցանել զհաստատութիւն առաքեալ ի Կառավարութենէս միջոցաւ Վիճակային Կոնսիստորիային Հայոց Երևանայ ի Սրբազան Ատեանդ զուրուագիծ և զյատակագիծ (պլան և ֆասադ) յիշատակեալ կառուցանելի եկեղեցւոյն, զի մի յապաղեսցի կանգնումն Տաճարին Աստուծոյ ի վնաս հոգեկան մխիթարութեան ժողովրդեան քաղաքիս, զի կարէ զրկել ի յատկացեալ տեղւոյն։

Անդամք Կառավարութեան՝ Զօրաբաբէլ քահանայ Ղօլանճեանց[156]
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ Կար. Յովհաննէսեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թ. 36, բնագիր, ձեռագիր:

արարեալ պատճէնի յատակաձևոյն, որ ընդ համարաւ 24, ունի տարածութիւն 280 քառակուսի սաժէնի և ըստ յայտարարութեան Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց ի 24 յունուարի անցելոյ Թ. 80 իւրաքանչիւր սաժէնն արժէ մի րուբլի: Հրամայեցին. զընծայեալ ի Գերապատիւ Գրիգոր եպիսկոպոսէ Աղուանեանց 280 քառակուսի սաժէն գետինն արժողութեամբ 280 րուբլոյ, որ գտանի ի Կարս քաղաքի, ունել յայսմհետէ ընդ տիրապետութեամբ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, ուստի և առեալ զօրինակն մատուցեալ ի նոյն եպիսկոպոսէ կալուածագրոց տուելոց ի զինուորական նահանգապետէն ի 20 յունիսի/յուլիսի 1883 ամի՝ թողուլ ի գործն և զիսկականն այնորիկ հանդերձ պատճէնին յատակաձևոյն առաքել ընդ հրամանի առ գերապատիւ գանձապետն վասն պահպանելոյ ընդ այնպիսիս, իսկ զքաղուած օրագրոյս տալ ի մասն հաշուարարական» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3503, թթ. 5-6):

[156] Զօրաբաբէլ քահանայ Ղօլանճեանց – ծնուել է 1826 թ., քահանայ է ձեռնադրուել 1858 թ. Կարսի Ս. Աստուածածին եկեղեցու վրայ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349):

№ - 112
ԲԱՇՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻՆ՝ԴՊՐՈՑՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ ՉԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1 *21 յունուարի 1891 թ.*
Բաշ-Քեադիկլար

Նորին Արժանապատուութեան Բարեկրօն Թեմական Տեսչին եկեղեցական-ծխական Հայոց ուսումնարանաց թեմին Երևանայ
Կարուց Վիճակի Բաշ-Գեադիկլար գիւղի եկեղեցական-ծխական
միդասեան ուսումնարանի ուսուցչից

Ստացանք Ձեր №540 շրջաբերականը 6 դեկտեմբերի անցեալ ամի, որով պահանջում էք կարգաւորել դպրոցական գրանոցները: Բայց տեղոյս ուսումնարանը չունենալով մինչև ի այժմս ոչ մի գիրք, չունի և գրանոց: Այս պատճառով հաղորդում ենք Ձերդ Բարեկրօնութեանը. համաձայն առաջադրութեանդ ձեռք բերել միջոցներ տեղոյս ուսումնարանի գրանոցի պարտ ու պատշաճը հոգալու:

Համաձայն Ձերդ առաջադրութեան, Հոգաբարձութիւն սորին բարեհաճում է ստանալ պատկերազարդ «Աղբիւր»[157] ամսագիրը:

Ուսուցիչ Բաշ-Գեադիկլար գիւղի միդասեան ուսումնարանի՝
Գէորգ Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 5, ինքնագիր:

№ - 113
ԲԱՇՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻՆ՝ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2 *21 յունուարի 1891 թ.*
Բաշ-Քեադիկլար

Նորին Արժանապատուութեան Բարեկրօն Թեմական Տեսչին եկեղեցական-ծխական Ուսումնարանաց Հայոց թեմին Երևանայ
Կարուց Վիճակի Բաշ-Գեադիկլար գիւղի եկեղեցական-ծխական
միդասեան ուսումնարանի ուսուցչից

Համաձայն Ձերդ շրջաբերականի №638 11-ն դեկտեմբերի անցեալ ամի, ուղարկում եմ Ձերդ Բարեկրօնութեանը այն դպրոցի կի-

[157] «Աղբիւր» - առաջին մանկական պատկերազարդ ամսագիրը Արևելեան Հայաստանում: Լոյս է տեսել Թիֆլիսում 1883-1918 թուականներին, հրապարակախօս-մանկագիր Տիգրան Նազարեանի խմբագրութեամբ:

սամեայ տեղեկագիրը[158]*։ Ընդ սմին և հաղորդում եմ Ձեզ հետևեալ տեղեկութիւնները. Ա. Դպրոցում այս տարի ուսմունքը սկսուել է 12-ն նոյեմբերի։ Բ. Դպրոցը բաղկացած է երկու բաժանմունքից (առաջին և երկրորդ)։ Առաջին բաժանմունքում կան 19 աշակերտ, իսկ երկրորդում 29 աշակերտ։ Գ. Անցեալ տարի սոյն միջոցին 32-ն էին աշակերտաց ընդհանուր թիւը, իսկ այժմս 48։ Դ. Աշակերտներից ո՛չ մէկը չունի ծննդական վկայական, որովհետև մինչև ի 1888 թիւը չէ եղել չափաբերական մատեան։ Ե. Ուսման վարձը հաւասարապէս բաժանած է աշակերտաց վերայ։ Է. Դպրոցը ունի թերութիւններ. յատակը տախտակամած չէ։ Դասական պիտոյքները, աշակերտահայրերը չքաւոր լինելով, դժուարութեամբ են ձեռք բերում։*

Ուսուցիչ՝ Գէորգ Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 6, ինքնագիր։

№ - 114
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԿԱՐՍՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԱՐԺԷՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 80 *24 յունուարի 1891 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնողն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց Յայտարարութիւն

Ի կատարումն առաջադրութեան Տնտեսական մասին Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի յ3-ն ամսոյս N 13[159]*, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար ծանուցանել թէ՝ իւրաքանչիւր սաժէն գետնոյն նախկին յաջորդի տեղւոյս Գերապատիւ Գրիգորիս Սրբազան եպիսկոպոսի Աղուանեանց արժէ մի րուբլի։ Յաւելլով՝ թէ զպատճէն վկայականին*[160]*, որ յիշատակեալ է ի նոյն թղթի վասն յիշատակեալ գետնոյն, չգտաւ կառավարութիւնս ընդ նոյն առաջադրութեանն սրբազան սաեհիդ։*

Անդամք կառավարութեան՝

---

158 Տես ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թթ. 7-8։

159 Խօսքը հետևեալ յանձնարարականի մասին. «Նախկին յաջորդն տեղւոյդ Գրիգոր եպիսկոպոսն Աղուանեանց ընծայէ Աթոռոյ Ս. Էջմիածնի զսեպհական կալուածն իւր տարածութեամբ 280 քառակուսի սաժէն գետնոյ ըստ վկայականի՝ որոյ պատճէնն առաքի ընդ այսմ։ Եւ զի հարկ է Սինոդիս գիտել զգին իւրաքանչիւր սաժէնի գետնոյն այնորիկ, ուստի պատուիրի դմին յոյժ փութով հասուցանել ի սոյն զայնպիսին տեղեկութիւն» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3503, թ. 3)։

160 Տես թիւ 54 փաստաթուղթը։

Զօրաբաբէլ քահանայ Ղօլանճեանց
Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Քարտուղար՝ Կար. Յովհաննէսեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3503, թ. 3, բնագիր, ձեռագիր:

№ - 115
ԲԱՇՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻՆ՝ՄԱԿԱՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՅՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 7 *3 մայիսի 1891 թ.*
Բաշ-Քեադիկլար

Նորին Բարեկրօնութեան Արժանապատիւ Թեմական Տեսչին եկեղեցական-ծխական Ուսումնարանաց Հայոց Երևանայ թեմին

Համաձայն Ձեր յառաջադրութեան, ապրիլի 17 №574, որով տալիս էք Վեհափառ Մակար Կաթուղիկոսի Ամենայն Հայոց մահուան տխուր բօթը, ապրիլի 29-ին երեկոյեան զկնի ժամերգութեան տեղոյս Նախագահ-Հոգաբարձու քահանան մի քարոզ խօսեց ներկայ ժողովրդեան հետևեալ աւուր յանուն հանգուցեալ Վեհ. Կաթուղիկոսի պատարագ մատուցելու և հոգեհանգիստ կատարուելու վերաբերութեամբ, բացատրելով կաթուղիկոսական նշանակութիւնը և անհրաժեշտ կարևորութիւնը, հետևապէս յորդորեց ամենին ներկայ գտնուել վաղը Ս. պատարագին, նոյնպէս և հոգեհանգստեան կատարմանը:

Հետևեալ օրը, ապրիլի 30-ին դպրոցական ամբողջ կազմութեամբ, կատարուեց հոգեհանգիստ հանդիսաւորապէս: Զկնի առաւօտեան ժամերգութեան մատուցուեց սուրբ պատարագ, ուր երգում էր աշակերտաց երգեցիկ խումբը, զկնի սուրբ պատարագին, հանդիսաւոր թափօրով, եկեղեցւոյ ատեանում կատարեցինք հոգեհանգիստ: Աշակերտաց խումբը վառեալ մոմերով ըստ կարգի փառաւորացնում են հանդէսը: Շարականներ և մաղթանքներ աւարտելուց զկնի կարդացի իմ պատրաստի ճառը Հայոց Հայրապետական Աթոռի սգասքօղուելու համազգային մեծ նշանակութիւնը բացատրելով յունկն աշակերտաց և ներկայ ժողովրդեան, որից յետոյ աշակերտաց երգեցիկ խումբը երգեց «Արարիչ և մարդասէր» երգը ներդաշնակաբար: Հանդէսը վերջացաւ «Հոգոցով և Հայր մերով»: Տիրասէր հանդիսականները տխուր տրամադրութեամբ մեկնեցան եկեղեցուց:

Բաշ-Քեադիկլար գիւղի միդասեան ուսումնարանի ուսուցիչ՝
Գէորգ Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 15 և շրջ., ինքնագիր:

№ - 116
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՒԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2250 *8 յունիսի 1891 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ էջմիածնի Ի Կոնսիստորիայէ վիճակիս Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զզեկուցումն առ առաջադրութիւն կառավարչական մասին Սրբազան Սինոդիդ ի 17 յունուարի տարւոյս Թ. 101, Ատեանս պատուիրեաց Հոգևոր Կառավարութեան Հայոց կարուց փութացուցանել զմատուցումն բացատրական թերթի ճարտարապետին վասն ամրութեան շինութեանց նորոգ կառուցանելի եկեղեցւոյ տեղւոյն: Ի հետևումն որոյ Կառավարութիւնն դիմէ ի կոնսիստորիայս այս օրինակ յայտարարութեամբ. «Որովհետև անհնարին եղև նոյն իսկ միջոցաւ Զինուորական Պարոն Նահանգապետին կարուց, ստանալ ի քաղաքական ճարտարապետ Սալատկօ-Պետրիչէէ զօրինօք պահանջեալ բացատրական թերթն, ուստի Հոգևոր Կառավարութիւնս գիտութեամբ Հոգաբարձութեան կառուցանելի եկեղեցւոյն կարս քաղաքի, կարևոր վարկաւ տալ նկարել զայլ նոր յատակագիծ և ուրուագիծ հանդերձ պահանջեալ բոլոր պարագայիւք զինուորական ինժեներ կապիտան Լացինիկովին, զոր ընդ սմին առաջի առնելով թեմական Ատենիդ, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար հայցել զպատշաճաւորն տնօրէնութիւն դորին յաղագս թոյլատրելոյ, եթէ հնարին է, ընդ փոյթ հայազգի ժողովրդականաց քաղաքիս ըստ առաջի արարեալ նախագծոյն կառուցանել զՏաճարն Սուրբ ի քաղաքիս: Խնդրելով միանգամայն վերադարձուցանել զնախկին ուրուագիծն և զյատակագիծն հանդերձ հաշուեկշռօքն, ոյք մատուցեալ են ի նմանէ Վիճակային Կոնսիստորիայիդ ընդ յայտարարութեան ի 18-ն օգոստոսի 1889 ամի N838, յաղագս յանձնելոյ ճարտարապետ Սալատկօ-Պետրիչէին: Սահմանեցին. Ըստ ներկայ յայտարարութեան Հոգևոր Կառավարութեան Հայոց կարուց մատուցմամբ առաջարկեալ անտի նոր յատակագծի և ուրուագծի հանդերձ բացատրութեամբ զինուորական ինժեներ կապիտան Լացինիկովի և բոլոր պարագայիւք դիմել պարտուպատշաճ տնօրէնութիւն Սրբազան Սինոդիդ:

Ատենապետ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանց[161]

---

[161] Գրիգոր եպիսկոպոս (յետագայում՝ արքեպիսկոպոս) Գառնակերեան (1832 թ., Վաղարշապատ – 1910 թ.) – Աւարտել է Մայր Աթոռի Ժառանգաւորաց դպրոցը: 1861 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1862 թ. ՝ աբեղայ, 1868 թ. ստացել է վարդապետական մասնաւոր

Անդամք՝ Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեանց
Յակովբ քահանայ Տէր-Գրիգորեան[162]
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թ. 42 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 117
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆՑԻՆ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ «ՍԻՒՏ ԽԼԻ ԴԻՒԶ» ՀՈՂԱԿՏՈՐԻ ԵԿԱՄՈՒՏԸ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՆ ՅԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 15 *8 յունիսի 1891 թ.*
Կարս

Նորին Աւժանապատուութեան
Թեմական Տեսչի եկեղեցական-ծխական ուսումնարանաց
Հայոց Թեմին Երևանայ՝ Հ. Մեսրովբ Եաճանայի Մելեանց
Յայտարարութիւն

Ձեզ յայտնի է, որ մեզ հաւատացեալ դպրոցները նիւթական ապահովութիւնից զուրկ են. գլխաւոր եկամուտի աղբիւրը աշակերտաց թոշակադրամն է, որ ժողովրդի հետզհետէ աղքատանալու պատճառով տարէցտարի Հոգաբարձութիւնս ստիպուած է պակասեցնել թոշակադրամի քանակութիւնն և բազմացնել ձրիավարժները, որոնց թիւը երկսեռ դպրոցի մէջ այժմ մի հարիւրի է հասնում: Ուսումնարանի հաստատաուն եկամուտների թւում համարուում են տեղւոյս երկու հայ եկեղեցեաց կողմից ուսումնարանին տրուելիք 600 րուբլի նպաստադրամն, բայց այդ գումարն երբէք ամբողջապէս չէ ստացուում ինչպէս որոշուած է: Ի թիւս հաստատ եկամուտի՝ հաշուում են և դպրոցապատկան երեք կրպակաց վարձը, որ այժմեան առևտրական ճգնաժամի պատճառով բաւականին նուազած է և այսուհետև ևս անշուշտ նուազելու է: Այնուհետև դպրոցը այլևս հաստատուն եկամուտ չունի և տարեկան մօտ 5500 րուբլի ծախքի պակասորդն հոգացուում է պատահական արդիւնքներից՝ ներկայացումներից, նուիրատուութիւններից և այլն, որոնցից ստացած արդիւնքն ևս հետզհետէ նուազում է:

իշխանութիւն: 1890 թ. ձեռնադրուել է եպիսկոպոսև 1906 թ.՝ ստացել արքեպիսկոպոսութեան տիտղոս: 1868-1874 թթ. եղել է վանական կառավարութեան անդամ, 1874 թ. նշանակուել Հին Նախիջևանի առաջնորդական փոխանորդ, 1975 թ. նոյն պաշտօնով տեղափոխուել է Նուխի, 1878 թ.՝ Գորի, 1884 թ.՝ Ղզլար: 1890-1892 թթ. եղել է Երևանի փոխթեմակալ, 1900-1905 թթ.՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ:

[162] Յակոբ քահանայ Տէր Գրիգորեան – ծնուել է 1848 թ., քահանայ է ձեռնադրուել 1879 թ. Երևանի Ս. Զօրաւոր եկեղեցու վրայ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 352 շրջ.):

Ուստի Հոգաբարձութիւնս խոնարհաբար խնդրում է Ձերդ Արժանապատուութեան միջնորդութիւնը՝ ում մօտ հարկն է, տեղւոյս Սուրբ Աստուածածին եկեղեցուն յատկացրած «Սուտ Խլի Դիւզ» անուանեալ մի հարիւր և վեց դեսեատին հողի արդիւնքն յատկացնել մեզ հաւատացեալ դպրոցներին, որով մասամբ թեթևացած կլինի դպրոցի կառավարութեան գործը[163]*։*

Նախագահ Հոգաբարձութեան՝
Ջօրաբաբէլ քահանայ Ղօլանճեանց
Հոգաբարձուք՝ Յ. Բարսամեան, Ստեփան Դիլանեանց
Քարտուղար՝ Խաչատուր Մառանկոզեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թթ. 2 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 118
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆՑԻՆ՝ ՄՈՄԱՎԱՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՆ ՅԱՏԿԱՑՈՒՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ ԿԱՐԳԱՒՈՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 16 *8 յունիսի 1891 թ.*
Կարս

Նորին Արժանապատուութեան
Թեմական Տեսչի եկեղեցական-ծխական ուսումնարանաց
Հայոց Թեմին Երևանայ՝ Հ. Մեսրովբ Քահանայի Մելեանց
Յայտարարութիւն

Հոգաբարձութիւնս պատիւ ունի յայտնել Ձերդ Արժանապատուութեան, որ մինչ այժմ տեղւոյս Հոգևոր Կառավարութիւնը աճուրդ չէ նշանակած մոմավաճառութեան արդիւնքը կապալով տալու համար։ Այդ յետաձգումը առաջացել է այն պատճառաւ, որ Հոգևոր Կառավարութիւնը տեղւոյդ Կոնսիստորիայից կամ Սրբազան Առաջնորդից որոշ պատասխան չէ ստացել՝ թէ արդեօք մոմավաճառութեան կապալառուն առևտրական ի՞նչ դօկումէնտներով կարող է առևտուր անել և որ թոյլտուութիւն չէ ստացուած քաղաքի մէջ մոմավաճառութեան կրպակ բաց անելու համար[164]*։*

---

[163] 1891 թ. սեպտեմբերի 4-ին Սինոդը Երևանի Կոնսիստորիային ուղղած գրութիւնով մասնաւորապէս յայտնում է. «Ինչ վերաբերի արդեանց Սիւտ-Խլի-Դիւզ անուանեալ մի հարիւր և վեց դեսեատին եկեղեցական հողոյն, մարթէ յատկացուցանել զայնս երկսեռ դպրոցաց տեղւոյն միմիայն համախօսական վճռով ծխականաց եկեղեցւոյն այնորիկ և ո՛չ այլով իւիք եղանակաւ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թ. 4 և շրջ.)։

[164] 1891 թ. սեպտեմբերի 4-ին Սինոդը Երևանի Կոնսիստորիային ուղղած գրութիւնով մասնաւորապէս յայտնում է. «Առ յայտարարութիւն ի 14 ամսոյս Թ. 2921 Սինոդս պա-

Հաստատապէս համոզուած լինելով, որ Ձեր սրտին շատ մօտ է դպրոցի նիւթական ապահովութեան հարցը՝ Հոգաբարձութիւնս խնդրում է Ձեր տնօրինութիւնը՝ մոմավաճառութեան աճուրդ նշանակելն փութացնելու և վերոյիշեալ հարցերի բացատրութիւնն Հոգաբարձութեանս ուր հարկն է հաղորդելու շնորհ անելու վերաբերութեամբ։

Բացի այդ՝ Հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով, որ տեղւոյս հայ եկեղեցիների կողմից դպրոցին օժանդակութիւն տրուելիք դրամներից ապառիկներ կան եկեղեցեաց վրայ և Սուրբ Աստուածածին եկեղեցին միմիայն անցեալ 1890 թուից պարտ է մնում 250 րուբլի, որոյ վճարման համար տեղւոյս Հոգևոր Կառավարութեան մէջ դեռ անցեալ տարուայ աշնանը ստացուեցաւ ի Տէր հանգուցեալ հոգելոյս Հայրապետի հրամանը վճարելու մասին, և որ չնայելով պատրաստի դրամ լինելուն՝ չեն կամենում վճարել, խնդրում է Ձեր տնօրինութիւնը, որպէս զի երեսփոխները կանոնաւորապէս վճարեն եկեղեցիներից հասանելիքն և գլխաւոր տեղը տան դպրոցի պարտքի վճարմանը և ոչ թէ աւելորդ ծախսեր անելով սպառեն եկեղեցւոյ դրամը կամ անգործադրելի թողնելով դրամը՝ զրկեն առանց այն էլ մուրացիկ ուսումնարանը իր հաստատ եկամուտներից։

Նախագահ Հոգաբարձութեան՝
Ջօրաբաբէլ քահանայ Ղօլանճեանց
Հոգաբարձուք՝ Յ. Բարսամեան, Ստեփան Դիլանեանց
Քարտուղար՝ Խաչատուր Մառանկոզեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թթ. 3 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 119
ԿԱՐՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՌՆԱԿԵՐԵԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ԱՐԺԱՆԱՒՈՐ ՓՈԽԱՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1 յուլիսի 1891 թ.
Կարս

Թեմակալին Երևանու Տէր Գրիգորիս Սրբազան եպիսկոպոսի
ի բնակչաց Կարուց
Ամենախոնարհ խնդիր

Ստորագրեալներս համաձայնութեամբ ի սրտէ կը փափաքենք ունենալ՝ ժիր, գործունեայ և արդարասէր այն հովիւներից մինն, որով ժողովրդի բարոյական յառաջադիմութեան զարկ է տուում, սիրտն ու հոգին է վերանորոգում, խիղճն է արդարանում և պայծառանում է եկեղեցին ու ազգութիւնը։

տուիրէ Կոնսիստորիայիդ վասն բացման կրպակի մոմավաճառութեան ի Կարս քաղաքի վարել ըստ մտաց յայտարարութեան Դորին ի 20 Մայիսի 1889 ամի Թ. 2226» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թ. 4 և շրջ.):

Սրբազան Հայր, եթէ մեր այս գովելի բաղձանքը յաջող կատարումն պիտի ունենայ, նախադաս առաւելութեամբ ընդունելութիւն պիտի գտնէ Սրբազնութեանդ մօտ, որովհետեւ Սրբազնութեանդ հոգան է բարւոյն նախանձախնդիր լինել և էք արդէն, Կարսի նման մի նոր նուաճեալ և սահմանագլուխ քաղաքում, որտեղ շատ թերութիւններ կը լինեն առանց արժանաւոր ղեկավարի չի կարող զօրանալ Ազգութեան մերոյ կապը և բարգաւաճել ժողովրդեան բարոյականութիւնը և այդ կախումն ունի իւր հոգևորականների բարեկարգ ուղղութիւնից: Անպաշտպան հողի վերայ անպաշտպան բոյսերը խիստ անկանոն կը բուսնին և երբեմն փուշերը նրանց խեղդամահ անելու համար կաճին: Անխոնջ մշակի բարերար Ձեռն է պէտք, որ պիտանի բոյսերի կանոնաւոր աճման նպաստէ և ի բաց խլէ անպէտք փուշն ու դժնին:

1887 թուին Գերապատիւ Սուքիաս Սրբազանը այստեղ այցելեց, իւր ազդու քարոզով մեծ գործ տեսաւ և երեսի վերայ մնացած խնդիրներ գոհացուցիչ եզրակացութեամբ կարգաւորեց, ու ընդունեց ժողովրդեան գովեստից դրուատներն: Ձեր Սրբազնութիւնը պիտի ստրջանա՞յ ժողովրդիս՝ «ձայն բազմաց»-ի արժանի օրհնութիւնը ստանալու:

Կարսում եկեղեցւոյ շինութիւնը և բարեկարգութիւնները առանց իրականանալու պիտի մնայ իւր անվախճան տևողութեամբ, եթէ Սրբազնութեանդ օժանդակող ձեռին կարկառմամբ չունենանք արժանընտիր ղեկավարող յաջորդ:

Վասն որոյ խնդրում ենք խոնարհաբար Ձեր հայրական կամօք բարեհաճել ուղարկել մեզ մի յաջորդ:

Որով մնամք շնորհապարտ Ձեր Սրբազնութեան ամենանուաստ ծառայք

Մելքոն Վանեցեան, Շահէն Տէր-Պօղոսեան
Մխիթար Տէր-Սաղաթէլեան[165]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8696, թթ. 4-5 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 120
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՍԱՐԻՂԱՄԻՇ ԱՒԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2918 *14 օգոստոսի 1891 թ.*
Երևան

ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն Հոգևոր Կառավա-

165 Հետևում է ևս 172 անձի ստորագրութիւն:

րութեան Հայոց Կարուց ի 1 յունիսի տարւոյս N 601, յորում գրի՝ «Հայ ազգի ժողովրդականք Սարիղամիշ աւանի վիճակիս խնդրագրութեամբ իւրեանց տակաւին յանցեալ 1890 ամի մատուցմամբ վկայականի տուեալ ի Գնդապետ Ուշակովէ N 645, խնդրէին զթոյլտուութիւն սորին կառուցանել անդանոր զեկեղեցի: Ի նկատի ունելով զի գիւղաքաղաքն այն բաղկանայ աւելի քան ի 60 հայ ազգի տանց և առ ի չունելոյ զեկեղեցի՝ զուրկ մնան իսպառ ի հոգեկան մխիթարութիւնէ, Հոգևոր Կառավարութիւնս գրութեամբ իւրով ի 14-ն մարտի անցեալ 1890 ամի N 211, խնդրեաց զթոյլտուութիւն Զինուորական Պ. Նահանգապետի Կարուց, սակայն որպէս երևի գրութենէ Նորին Գերազանցութեան ի 10 դեկտեմբերի այնր ամի N 9015, կառուցումն հայկական եկեղեցւոյ Սարիղամիշ աւանի ի կողմանէ բարձրագոյն Հոգևոր Վարչութեան Ռուսաց համարի անթոյլատրելի: Յետ որոյ հասարակութիւն տեղւոյն երրորդ խնդրագրութեամբ իւրեանց յ30 ապրիլի տարւոյս վերստին թախանձին զմիջնորդութիւն սորին առ ի ստանալ զիրաւունս զեկեղեցաշինութիւն, ուստի մատուցմամբ իսկական գործոյն N 14, կազմեալ յ3 մարտի 1890 ամի, Հոգևոր Կառավարութիւնս խոնարհաբար խնդրէ զբարեհաճ տնօրէնութիւն Թեմական Ատենիդ, եթէ հնարին է միջնորդել ուր հարկնէ յաղագս թոյլատրելոյ յիշատակել ժողովրդականաց Սարիղամիշ գեղջ կառուցանել զխնդրեալն աղօթատուն ի հոգեկան մխիթարութիւն ինքեանց: Սահմանեցին. զվերոգրեալ յայտարարութիւն հասուցանելով ի տեղեկութիւն Սրբազան Սինոդիդ խնդրել զմիջնորդութիւն դորին առաջի Բարձրագոյն քաղաքական իշխանութեան վասն տալոյ ջերմեռանդ հայ ժողովրդոց Սարիղամիշ աւանի զբաւականաչափ տեղի և զթոյլտուութիւն կառուցանել անդ զեկեղեցի, ի հոգեկան մխիթարութիւն նոցա:

Անդամք Կոնսիստորիայի՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Յակովբ քահանայ Տէր-Գրիգորեան
Ատենադպիր՝ Զ. Տէր-Զաքարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8726, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 121
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՌՆԱԿԵՐԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՆԱՀԱՊԵՏ ԱԲԵՂԱՅ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻՆ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 248 *20 օգոստոսի 1891 թ.*
Երևան

ի Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդն Սրբոյ էջմիածնի
ի Փոխանորդէ Թեմակալին Հայոց Երևանայ

Յայտարարութիւն

Ժողովուրդք կարս քաղաքի բազմաստորագիր խնդրագրով ի 1 յուլիսի տարւոյս[166] խնդրեն զմիջնորդութիւն իմ առաջի Հոգևոր Մայրագոյն Իշխանութեան վասն նշանակելոյ զժիր գործունեայ և արդարասէր ոք ի պաշտօն փոխանորդութեան կարուց Վիճակի։

Ըստ որում Վիճակդ այդ գոլով սահմանագլուխ կայսերութեան կարօտի միոյ բանիմաց, լեզուագէտ և ուսեալ վարդապետի, զի կարասցէ կորովամտութեամբ կառավարել զհայազգի ժողովուրդս և իւրով փորձառութեամբ զուսումնարանս տեղւոյն և Վիճակին վերածել ի ցանկալի դրութեան։ Այսպիսի լաւագունից ով է Նահապետ աբեղայ Նահապետեանց, որ ըստ իմս դատողութեան շատ յարմար է կատարել զպաշտօն փոխանորդութեան կարուց Վիճակի։

Ուստի զբազմաթախանձ խնդիր ժողովրդեան կարս քաղաքի ի 1 յուլիսի տարւոյս ընդ սմին առաջի առնելով Սրբազան Սինոդիդ՝ յարգանօք խնդրեմ նշանակել ի պաշտօն Փոխանորդութեան կարուց Վիճակի զՆահապետ աբեղայն Նահապետեանց բաւականաչափ ոռճկով[167]*։*

Փոխանորդ Թեմակալին Երևանայ՝ Գրիգոր եպիսկոպոս
Գառնակերեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8696, թ. 3 , բնագիր, ձեռագիր:

№ - 122
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ «ՍԻՒՏ-ԽԼԻԴԻՋ» ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ՍՏԱՑՈՒՈՂ ԵԿԱՄՈՒՏԸ ԿԱՐՍԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2097 19 դեկտեմբերի 1891 թ.
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Ս. Էջմիածնի
Ի Թեմական Տեսչէ Վիճակիս Երևանայ

---

166 Տես թիւ 119 փաստաթղթեր:

167 1891 թ. նոյեմբերի 4-ին Սինոդը լսեց Գրիգոր եպիսկոպոսի զեկուցագիրը և որոշեց. «Ըստ միջնորդութեան Սրբազան Փոխանորդի Թեմակալի կարգել զԲարեշնորհ Նահապետ աբեղայն Նահապետեանց ի միաբանութենէ Մայր Աթոռոյ ի պաշտօն յաջորդի Կարուց Վիճակի սահմանելով նմին յառաջնորդէն այսր նոյեմբերի ռոճիկ ի տարին ութ հարիւր րուբլի և վարձ բնակարանի հարիւր յիսուն րուբլի, զորմէ տուեալ գիտել Նորին Բարեշնորհութեան և Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց պատուիրել վերջնոյն ի ժամանել նորա անդ վճարել զյիսուն րուբլիս ի ճանապարհածախս և յանձնել նմին զամենայն յաջորդական գործս և կահ կարասիս յաջորդարանի կանոնաւոր ցուցակաւ, և ապա երդմնեցուցանելով զնա ըստ սահմանեալ կարգին՝ թոյլ տալ վարել զպաշտօն իւր:

Զտնօրէնութիւնս զայս ծանուցանել Կոնսիստորիային Երևանայ վասն տեղեկութեան. և զքաղուածն օրագրոյս տալ ի հաշուարարական մասն Սինոդիս» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8696, թթ. 6-7):

Յայտարարութիւն

Ի հետեւումն յայտարարութեան իմոյ ի 18 յուլիսի անցելոյ N 1174 Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երեւանայ միջնորդեալ ստացաւ զհաճութիւն Ս. Սինոդիդ յատկացուցանելոյ զարդիւնս 106 դեսեատին «Սիւտ-Խլի-Դիւզ» անուանեալ հողոյն երկսեռ դպրոցաց մերոց Կարս քաղաքի: Առ այդ բարեհաճութիւն բարձրագոյն Ատենիդ Հոգեւոր Կառավարութիւն Կարուց յայտարարութեամբ ի 4 հոկտեմբերի անցելոյ N 1001 խնդրէ Թողուլ զվճիռ իւրեանց յանփոփոխ այն է՝ զեկամուտս յիշեալ հողոյն չտալ դպրոցաց, այլ Թողուլ ըստ առաջնոյն յօգուտ նոր կառուցանելի եկեղեցւոյ քաղաքի և զայս յայտարարութիւն առաջի արարեալ է Կոնսիստորիայն ի տնօրինութիւն Ս. Սինոդի: Յետ որոյ ի գտանելն իմ ի Կարս և ի խօսելն ընդ անդամոց կառավարութեանն, իսկապէս խոստովանեցան նոքա զկարի անձկութիւն նիւթական վիճակաց երկսեռ դպրոցացն և անհրաժեշտ պարտաւորութիւն համարեալ օգնել դպրոցացն, երկրորդ յայտարարութեամբ իւրեանց յ9 նոյեմբերի N1116 խնդրեցին ի Կոնսիստորիայէն Թողուլ զառաջին յայտարարութիւն կառավարութեանն առանց հետևանաց: Վիճակային Կոնսիստորիայն փոխանակ և զայս վերջին յայտարարութիւն Հոգեւոր Կառավարութեան առաջի առնելոյ ըստ առաջնոյն ի Ս. Սինոդ ի բաւարարութիւն դպրոցաց, շատանայ գրութեամբ ի 16 այսր դեկտեմբերի N 4382 զգուշացանելոյ զկառավարութիւնն միայն վասն հակասող յայտարարութեան:

Ձվերոգրելոցն հաղորդելով Լուսաւորչեան Ս. Սինոդիդ, ամենախոնարհաբար խնդրեմ հաճել վերատին հրամայել Հոգեւոր Կառավարութեանն Հայոց Կարուց զարդիւնս յիշեալ հողոյն տալ ի նպաստ երկսեռ դպրոցացն քաղաքին, իսկ որ ինչ զհամախօսական վճռոյն ժողովրդականաց, առ այդ շնորհ ունիմ խորին ակնածանօք յայտ առնել, թէ որովհետև Հոգեւոր Կառավարութիւնն ինքն է տուեալ կապալաւ, ինքն ստանայ զկապալադրամս և ինքն կառավարէ, ուստի և չիք ամենևին կարևորութիւն միջամտութեան ժողովրդականաց, որպէս և վկայեցին անդամք կառավարութեան:

Թեմական տեսուչ՝ Մեսրոպ քահանայ Մելեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թ. 6, ինքնագիր:

№ - 123
ԲԱՇՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻՆ՝ՕՐԹԱ-ՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆՕՐԷՆ ԲԱՑՈՒԱԾ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 16 *23 դեկտեմբերի 1891 թ.*
Բաշ-Քեադիկլար

Նորին Բարեկրօնութեան
Թեմական Տեսչին եկեղեցական-ծխական ուսումնարանաց
Հայոց թեմին Երևանայ
Կարսի նահանգի Բաշ-Քեադիկլար գիւղի
միդասեան ուսումնարանի Վարչութիւնից
Յայտարարութիւն

Արդէն Ձեզ յայտնի է, որ մեր ուսումնարանի գոյութիւնը կախումն ունի գլխաւորապէս մերձաւոր գիւղերից եկող աշակերտներից, որոնք կարեկցում են տեղացիների հետ ուսուցչական վարձ վճարելումը: Բայց ինչպէս անցեալ տարի նոյնպէս և այժմս յայտնում ենք Ձերդ Բարեկրօնութեանը մօտաւոր Օրթայ և Ներքին Քեադիկլարների վերաբերութեամբ, որոնք չեն բարեհաճում աշակերտ տալ մեր ուսումնարանին, որոց հեռաւորութիւնը կէս վերստաչափ հազիւ կլինի, այն ինչ հեռաւոր գիւղերից բարեհաճում են ուղարկել աշակերտներ մեր ուսումնարանը, իսկ Օրթա-Քեադիկլարը, հակառակ ուսումնական Յանձնաժողովի կարգադրութեան, այն է մօտաւոր գիւղերը պէտք է միանան և ընդհանուր ոյժերով մի ուսումնարան բանան, յանդգնել է մինչև անգամ, առանց երկիւղ կրելու բանալ ուսումնարան և ընդունել երեսնաչափ աշակերտներ նոյնպէս և Ներքին-Քեադիկլարից՝ կարգադրութեամբ տեղւոյն Ստեփաննոս քահանայի Տէր-Ստեփանեանէ և առաջաւոր անձանց, թէպէտև Վարչութիւնս յոյս ունի յիշեալ գիւղերի թեւակցութեամբ երկդասեան բանալու, որ հետևեալ տարում անհրաժեշտ է ներկայիս երրորդ բաժնի համար, որոյ աշակերտները թուով 29 են: Սակայն վերոյիշեալ գիւղերը, դարձեալ կրկնում ենք, հակառակ բարձրագոյն իշխանութեան կարգադրութեան, ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այժմս վարձում են մասնաւոր ուսուցիչներ ի վնաս մեր ուսումնարանի, որոյ մասին առաջի անգամ յայտնելով անցեալ տարի Ձերդ Բարեկրօնութեանը անհետևանք մնաց, այժմս յոյս ունի Վարչութիւնս, որ անմիջապէս կտաք խափանել սոյնպիսեաց յօգուտ ներկայ և ապագայ գոյութեան մեր ուսումնարանի:

Նախագահ Հոգաբարձութեան՝ Աղէքսանդր քահանայ Յակոբեան
Ուսուցիչ նոյն դպրոցի Գ. Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 25 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 124
ԲԱՇՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՐԵԻԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻՆ՝ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԲԱՑԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 4 *9 յունիսի 1892 թ.*

Բաշ-Քեադիկլար

Նորին Առժանապատուութեան Բաւեկրօն Թեմական Տեսչին
թեմին Երևանայ
Կարուց Վիճակի Բաշ-Քեադիկլար գիւղի
միդասեան ուսումնարանի Հոգաբարձութիւնից
Յայտարարութիւն

Արդէն լրանում է 1891-1892 ուսումնական տարեշրջանը և ներկայ ամսոյս 16-ից կսկսուի աշակերտաց քննութիւնները և կասկած չկայ որ սորա իւրաքանչիւր բաժնի աշակերտներից շատերը կփոխեն, բայց ցաւալի է որ երրորդից փոխուողների համար չունինք չորրորդ բաժանմունք, որոց թիւն է արդէն 28, այս օրուանից նրանք արտասուում են իւրեանց անբաղտութիւնը, որովհետև պէտք է հեռանան իւրեանց ամենասիրելի սրբավայրից արտասուալի աչքերով, սոյնպիսեաց ուսումնակարօտ սրտից բղխած արտասուաց սուրբ կաթիլները ազդում են նկատողների սրտերին: Բայց ի՛նչ արած, հարկաւոր է հոգալ ինչ որ հարկն է, միացնելը սորա հետ կէս վերստ հեռաւորութեան վերայ գտանուող «Միջին և Ներքին Քեատիկլար գիւղը» միակ յոյսն է չորրորդ և հինգերորդ բաժանմունք բանալու, այդ ցանկալի միութիւնը կատարուած կլինի, երբ Ձեր Արժանապատուութեան ազդեցող միջամտութիւնը անձամբ կբարեհաճի յիշեալ գիւղերին միացնել սրա հետ հանգուցեալ Վեհ. կաթուղիկոսի 6-երորդ կանոնագրի համաձայն, այնուհետև սա կլինի երկդասեան շնորհիւ Ձերդ Արժանապատուութեան, սոյն ցանկութեան վերաբերութեամբ յայտնել է Հոգաբարձութիւնս Ձերդ Արժանապատուութեանն բերան առ բերան, և Արժանապատուութիւնդ խոստացել է այդ անելու:

Թէպէտև չնայելով սոյն գիւղի աշակերտահայրերը իւրեանց չքաւոր դրութեանը՝ ստիպուած են չորրորդ բաժանմունք բանալու, տեսնելով որ իւրեանց որդիքը զրկւում են փափագելի ուսումից, բայց Հոգաբարձութիւնս ի նկատի ունենալով որ ծանր է սոյն ձեռնարկութիւնն մի չքաւոր ժողովրդի համար առանց միանալու յիշեալ գիւղերին սորանով դիմում ենք Ձերդ արժանապատուութեանն տնօրինել ինչ որ հարկն է յիշեալ գիւղերի միացման վերաբերութեամբ:

Նախագահ Հոգաբարձութեան՝ Աղէքսանդր քահանայ Յովսէփեան
Հոգաբարձու՝ Սարգիս Զախարեան

ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 20, թ. 32 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 125
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ «ՍԻՒՏ-ԽԼԻ-ԴԻՒԶ»-Ի ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ 200 ՌՈՒԲԼԻ ԿԱՐՍԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

26 հոկտեմբերի 1892 թ.

Ս. Էջմիածին

Լուան զեկուցումն ի տնտեսական մասին Սինոդիս գոյ անաւարտ գործ կազմեալ յամին 1891 թուահամարաւ 37 ի մասին յատկացուցանելոյ զարդիւնս «Սիւտ-Խլի-Դիւզ» անուանեալ հողոյ յօգուտ երկսեռ դպրոցաց Կարուց։ Ի գործոյն անտի երևի, զի Սինոդս ի 18 սեպտեմբերի անցելոյ N 2794[168], պատուիրէ Կոնսիստորիային Հայոց Երևանայ յարդեանց չիշեալ հողոյն զ200 րուբլիս ամ ըստ ամէ ի ձեռն երեսփոխանի կառուցանելի եկեղեցւոյն Կարուց տալ Հոգաբարձութեան յօժանդակութիւն ծախուց երկսեռ դպրոցաց տեղւոյն[169]։ Ուստի հրամայեցին. զգործս զայս կարճել ի Սինոդիս և ի ժամանակին տալ ի դիւանն ի պահեստ։

ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թ. 8, թողօն, ձեռագիր:

№ - 126
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՐՍՈՒՄ ՆՈՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻՑ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

5 մարտի 1893 թ.

Ս. Էջմիածին

Լուան զեկուցումն՝ Կոնսիստորիայն Հայոց Երևանի ի 29 յունիսի 1890 ամի Թ. 2741[170] խնդրեալ էր զտնօրէնութիւն առ ի փութանակի թոյլ տալ սկսանել զշինութիւն նոր եկեղեցւոյ Հայոց Կարս քաղաքի, յետ որոյ ըստ պահանջման Սինոդիս մատոյց զնախագիծ շինութեան այնր եկեղեցւոյ հանդերձ բացատրական թերթիւ և նախահաշուով, որք ընդ գրութեան ի 16 յուլիսի նոյն ամի Թ. 2800 առաքեցան ի դիւանատուն Նահանգապետի Կարուց վասն հաստատելոյ ըստ օրինի և վերադարձուցանելոյ։ Նորին Գերազանցութիւն ընդ գրութեամբ ի 27 յուլիսի 1892 ամի Թ. 779[171] դարձուցմամբ այնց թղթոյ ծանոյց՝ թէ միջնորդութիւն Սինոդի՝ որ վասն թոյլ տալոյ կառուցանել զնոր եկեղեցի Հայոց ի Կարս քաղաքի, առաջարկեցաւ ի բարեհայեցողութիւն

[168] Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թ. 7:

[169] «Սիւտ-Խլի-Դիւզ»-ի եկամուտը կազմում էր 247 ռուբլի: Սինոդի որոշմամբ 47 ռուբլին պէտք է տրամադրուէր Կարսում կառուցող եկեղեցուն, իսկ 200-ը՝ դպրոցների հոգաբարձութեանը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3540, թ. 7):

[170] Տես թիւ 105 փաստաթուղթը:

[171] Բնագիր փաստաթուղթը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թթ. 49-50:

Պ. Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասի թղթակցողի ի ժամուն ընդ Նախարարի Ներքին Գործոց[172]՝ որ ծանուցանէ թէ ըստ գրութեան ասագ պրօկուրորի Սրբազնագոյն Սենաթի ի կողմանէ նորին չիք արգել կառուցման այնր եկեղեցւոյ ի Կարս քաղաքի, բայց միայն տեղին վասն շինութեան այնորիկ տուեալ լինի ո՛չ մերձ տաճարացն ուղղափառաց, այլ ի միջի հայ հասարակութեան: Վասն բացատրութեան խնդրոյն՝ թէ ի ձեռս բերեալ ի Հայ հասարակութեան տեղիս շինութեան եկեղեցւոյ ո՞րքան համապատասխան է վերոգրեալ պահանջմանց, կազմեցաւ ի Նորին Գերազանցութենէ առանձին յանձնաժողով ընդ նախագահութեամբ բերդապահի Կարուց, յանդամոց, ի զինուորական ճարտարապետէ, յերկուց քահանայից ուղղափառաց և յոստիկանապետէ տեղւոյն: Յանձնաժողովս այս զննեալ առ տեղեաւն զյանձնեալ ինքեան խնդիրն եկն յայն եզրակացութեան, զի շինութիւն ի հասարակութենէ որոշեալ տեղւոջ՝ այնպիսի ընդարձակն, որպիսին գծագրեալ է վասն եկեղեցւոյ Հայոց, անպայման վտանգաւոր իցէ պահպանողական նպատակի ամրոցին ըստ մերձաւորութեանն առ պահպանողական ուղղութեան այնր ամրոցի, ուստի յանձնաժողովն առաջարկէ իբրև աւելի յարմարաւոր տեղի կառուցման տաճարին Հայոց ընտրել զմի ի դատարկ բաժնից հողոց ի վերին մասին քաղաքի ըստ ուղղութեանն առ ներքին ամրութեան՝ որ արտաքոյ գծի յօրիորդական դպրոցէ առ շինութիւն՝ յորում այժմ զետեղի պոստահեռագրատունն Կարուց: Ապա, ըստ պահանջման Սինոդիս Հոգևոր Կառավարութիւն Կարուց յայտարարութեամբ ի 15 սեպտեմբերի 1892 ամի Թ. 818 ծանոյց՝ թէ յատկացեալ ի կողմանէ Զինուորական Նահանգապետին Կարուց գետինն վասն կառուցանելոյ զնոր եկեղեցի Հայոց ի քաղաքին, է յոյժ յարմարաւոր, որպէս կեդրոն Հայ ազգաբնակութեան, մանաւանդ, զի վասն գնելոյ զշինութիւնս եղեալս ի վերայ այնր գետնոյ և վասն պարսպապատելոյ զտեղին այն Հոգաբարձութեան կառուցանելի եկեղեցւոյ ծախեալ է աւելի քան զհինգ հազար րուբլիս: Իսկ ընդ յայտարարութեան ի 16 նոյեմբերի նոյն ամի Թ. 935 և 953 մատոյց զպատճէն վկայականի տուելոյ ի Պարոն Նահանգապետէն ի 20 օգոստոսի 1887 ամի Թ. 327 վասն գետնոյն՝ ի վրայ որոյ շինելոց է եկեղեցին Հայոց, և զպատճէնս թղթոց յանձնաժողովոյն բարեշինութեան Կարս քաղաքի և Հոգևոր Կառավարութեան՝ յորոց տեսանի, զի յանձնաժողովն այն խնդրէ ծանուցանել, թէ զի՞նչ առնելոց է կառավարութիւն վասն գնեալ արդէն ի մասնաւոր անձանց կալուածոց, որք կից են տեղւոյն շինութեան եկեղեցւոյ: Առ այն վերջինն յայտնեալ է՝ թէ որ ինչ վերաբերի հրապարակին տուելոյ վասն շինութեան եկեղեցւոյ Հայոց, նոյնպէս և կից նմին կալուածոցը գնելոց ի մասնաւոր

[172] Խօսքը Իվան Նիկոլայի Դուրնովի (1834 – 1903) մասին է: 1889 թ. ապրիլի 25-ից 1895 թ. հոկտեմբերի 15-ը եղել է Ներքին Գործերի Նախարար:

անձանց, մեծ գումար ծախեալ է որպէս վասն գնելոյ զայնոսիկ կալուածս, նոյնպէս և պարսպապատ առնելոյ զհրապարակն, յայս սակս և խնդրեալ է ի յանձնաժողովոյն ճանաչել զհոգևոր տեսչութիւն Հայոց սեպհականող բոլոր մասին, որ տուեալ է ի շինութիւն եկեղեցւոյ Հայոց այնու պայմանաւ, զի եթէ խնդիրն վասն շինութեան եկեղեցւոյն յայնմիկ հրապարակի մերժեսցի իսպառ յայնժամ Հոգևոր իշխանութիւն և հասարակութիւն Հայոց Կարուց չունիցեն իրաւունս խնդրելոյ տալ ձրիաբար զայն մասն ի քաղաքային հողոց վասն այնր նպատակի։ Ի մատուցեալ պատճէնէն վկայականի Թ. 327 ի միջի այլոց տեսանի, զի Յանձնաժողովն բարեշինութեամբ քաղաքին Կարուց ի 13 յուլիսի 1887 ամի Թ. 60 տուեալ է ի պէտս շինութեան եկեղեցւոյ Հայոց ի քաղաքային հողոց ի սահմանի հրապարակին а, б. в և г, *որ երրորդում թաղի յերկուց կողմանց նոր բանալի փողոցի և ի միւս կողմանց անձուկ փողոցաց այնու պայմանաւ, զի տեղին այն՝ որևիցէ հանգամանօք ո՛չ օտարասցի և ո՛չ շինեսցին անդ գործարանք կամ առևտրական շինուածք։ Առեալ ի նկատ զի կազմեալ Նորին Գերազանցութենէ ի Պարոն Նահանգապետէն Կարուց Յանձնաժողովն գտանելով զտուեալ Հոգևոր Կառավարութեան տեղին շինութեան եկեղեցւոյ Հայոց համեմատ պահանջմանց Տ. Նախարարի Ներքին Գործոց զբաղեալ է այդով խնդրով՝ որ վասն պահպանողական նպատակի ամրոցի, ուստի* ***Հրամայեցին.*** *առաքմամբ պատճէնի վկայականի տուելոց ի Նահանգապետէն Կարուց Թ. 327 վասն գետնոյն՝ ի վրայ որոց շինելոյ է եկեղեցի Հայոց տեղւոյն, խնդրել զտնօրէնութիւն Պ. Կառավարչապետի քաղաքական մասին կովկասի յաղագս թոյլ տալոյ կառուցանել անդ զեկեղեցի Հայոց, մանաւանդ ի գին սահմանակից կալուածոց և ի շինութիւն պարսպի արդէն ծախեալ է աւելի քան զհինգ հազար րուբլիս, զորպիսի ծախս յետ առման այն տեղւոյ դժուարին իցէ ումիք վճարել։*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թթ. 60-62, թողօն, ձեռագիր:

№ - 127
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԿԱՐՍԻ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԵՒ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 4781 *29 մայիսի 1893 թ.*

Կարս

В Карсское Армяно-ГригорианскоеДуховное Правление[173]

[173] Գրութիւնը Կարսի Հոգևոր Կառավարութեան նախագահ Նահապետ Աբեղան 1893 թ. յունիսի 2-ին առաքել է Սինոդին հետևեալ կից գրութեամբ. «Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ինքեան վարկանի ընդ սմին խոնարհաբար մատուցանել զպատճէն գրութեան

В виду того, что наделение казенными землями иноверных христианских храмов и монастырей сообразно нужд каждого из них, не предусмотренно нашими законами и посему обеспечение материального благосостояния их в Карсской области путем отвода казенных земель, могло бы последовать в виде особой Монаршей милости, причем участки, пожалованные на содержание собственно армянских монастырей, должны были бы поступить в силу действующего закона, в собственность всей армяно-григорианской церкви. Главноначальствующий гражданской частью на Кавказе, не усматривая каких-либо уважительных оснований для испрошения Высочайшего соизволения на усиление материальных средств этой церкви, предложил мне оставить в пользовании иноверных монастырей Карсской области только те земельные участки, на которые они имеют право по надлежащим турецким документам, все те казенные земли, представленные в условное пользование, передать в распоряжение подлежащего управления Государственными имуществами.

В силу приведенного распоряжения генерал-адъютанта Шереметьева, изложенного в предписании Его Высокопревосходительства от *18* января сего года за №*30,* из сословно-поземельной комиссии военно-народного управления должны быть изъяты из владения Карсского армяно-григорианского собора и Армянских монастырей в Ани, Баш-Килисе и в сел. Дикор отведенные им участки во всем объеме*;* что же касается до Кошаванкского и Вартегорского монастырей, то в распоряжении первого из них должен быть оставлен весь выделенный ему участок, а в пользовании второго должно оставить из представленных ему в условное пользование двух участков – *58*½ десятин, на которые монастырь имеет право по турецким документам.

Сообщая об изложенном духовному правлению, для сведения, имею честь присовокупить, что отчуждение перечисленных земельных участков будет произведено в текущем же году.

Подлинное подписали*:*

Генерального штаба генерал-майорТомич

Правитель канцелярииШахтахтинский

Скрепил делопроизводительХуцисылов

С подлинным верно*:* письмоводитель Карсского армянского духовного правления К. Агаджанян

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թթ. 2-3, հաստատուած պատճէն, ձեռագիր:

Զինուորական Պ. Նահանգապետին Կարուց ի 29 մայիսի տարւոյս N 4781, որ ի մասին եկեղեցական և վանքապատկան հողոց վիճակիս, ի պատշաճաւորն տնօրէնութիւն Սրբազան Ատենիդ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ.1):

№ - 128
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՍ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2432 *30 յունիսի 1893 թ.*
Ս. Էջմիածին

Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց

Դիւանատան Կառավարչապետի քաղաքական մասին Կովկասի գրութեամբ ի 17 ապրիլի տարւոյս Թ. 3590[174] ծանուցանէ՝ թէ Կառավարչապետին Կովկասի ո՛չ հաճեցաւ հնարաւոր համարել տալ բաւականութիւն միջնորդութեան Սինոդիս վասն կառուցանելոյ զեկեղեցի ի տեղւոջն՝ որ գտեալ է ընդ տեսչութեամբ Հոգևոր Կառավարութեան ըստ արձանագրութեան Յանձնաժողովոյ Բարեկարգութեան Կարս քաղաքի ծանուցանելով զայս Սինոդս պատուիրէ դմին յայտնել՝ թէ տեղին այն, յորոց վասն ծախեալ է աւելի քան ը5000 ր., յի՞նչ պէտս մարթ է ի գործ դնել:

Տեղակալ Ատենապետի՝ Երեմիա եպիսկոպոս
Անդամք՝ Ներսէս վարդապետ[175]
Վահան վարդապետ[176]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թ. 85 և շրջ., թողօն, ձեռագիր:

---

174 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թ. 84:

175 Ներսէս վարդապետ Հայկազունի – կրթութիւնը ստացել է Գրիգորիս եպիսկոպոս Իսահակեանցի մօտ: Քահանայ է ձեռնադրուել Փարպի գիւղում և քահանայագործել է երկար ժամանակ: Կնոջ մահուանից յետոյ՝ 1886 թ. նոյեմբերի 19-ին մտել է Ս. Էջմիածնի միաբանութեան մէջ և 10 օր անց՝ նոյեմբերի 29-ին վեղար ընդունել: 1887 թ. յունիսի 30-ին նշանակուել է Վանական Կառավարութեան անդամ, 1892 թ. ապրիլի 2-ին հաստատուել է Ս. Սինոդի անդամ: Մահացել է 1894 թ. հոկտեմբերի 3-ին Երևանում, թաղուած է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը («Արարատ», հոկտեմբեր, 1894 թ., էջ 324):

176 Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան – Ծնուել է 1842 թ. Արցախի Խնուշինակ գիւղում, աշխարհական անունն էր Յովհաննէս Մովսէսի: Սկզբնական կրթութիւնը ստացել է թեմական դպրոցում, 1886 թ. նոյեմբերի 29-ին ձեռնադրուել է սարկաւագ և նշանակուել Գէորգեան ճեմարանի փոխտեսուչ: 1887 թ. ապրիլի 21-ին ստացել է վարդապետական մասնաւոր աստիճան և յուլիսի 9-ին նշանակուել Նուխիի վիճակի առաջնորդական փոխանորդ: Երկար ժամանակ վարում է Նուխիի փոխանորդութեան պաշտօնը: 1892 թուականին նշանակւում է Սինոդի անդամ: 1897 թ. նոյեմբերի 21-ին Նահապետ վարդապետ Նահապետեանի հետ աքսորւում է Նոր Նախիջևան Ս. Խաչվանքը և մինչև վերջ վարում է վանահօր պաշտօնը: Վախճանուել է 1915 թ. յուլիսի 16-ին և թաղուել Նահապետ եպիսկոպոս Նահապետեանի գերեզմանի մօտ, ոչ հեռու Ալամդարեանի, Միքայէլ Նալբանդեանի, Գամառ Քաթիբայի գերեզմաններից:

№ - 129
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՈՒ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՅՕԳՈՒՏ ՔԱՂԱՔԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 6274 *15 յուլիսի 1893 թ.*
Կարս

В виду последовавшего распоряжения Главноначальствующего гражданскою частью на Кавказе мною вместе с сим предложено старшему землемеру Масалову передать в ведение подлежащих учреждений отведенные в области во временное пользование армянских храмов и монастырей казенные земельные участки, на которые они не имеют права по турецким поземельным документам.

Сообщая об этом в дополнение к отзыву от *29/31* мая сего года за №*4781,* прошу Духовное правление о назначении уполномоченных для присутствования при передаче землемером Масаловым в ведение гор. Карса, а также чиновников Министерства Государственных имуществ земельных участков, состоящих в пользовании Армянского собора в гор. Карса и Армянских монастырей в Ани, Баш-Килисе, Дигоре и Вардегере.

К сему присовокупляю, что г. Масалову предложено выделить Вартегерскому монастырю *58½* дес. земли, на которые Вартегерванк имеет право по турецким поземельным документам.

Ճիշտ է ընդ իսկականին՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 23 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 130
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՈՒ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՅՕԳՈՒՏ ՔԱՂԱՔԻ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 735 *19 յուլիսի 1893 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ձինուորական Պ. Նահանգապետն Կարուց գրութեամբ իւրով ի 15 ամսոյս N *6274*[177]*, ծանուցանէ սմին թէ՝ արարեալ արդէն զտնօրէնու-*

[177] Տես նախորդ փաստաթուղթը:

թիւն յաղագս ստանալոյ զեկեղեցական և զվանական հողս՝ կարս քաղաքի, Անւոյ, Բէշքիլիսու, Տիկոռու և Վարդիկհօր, ոյր վասն և խնդրէ կարգել զհաւատարմատարս առ ի յանձնել զայնս աւագ երկրաչափի և աստիճանաւորաց նախարարութեան Արքունի կալուածոց։

Ծանուցանելով զայսմանէ սրբազան Ատենիդ և մատուցանելով զպատճէն յիշատակեալ գրութեան Զինուորական Պ. Նահանգապետին Կարուց, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար հայցել զբարեհաճ տնօրէնութիւն դորին, եթէ մարթէ, միջնորդել Պ. Կառավարչապետին Կովկասու յամեցուցանել զստացումն հողոց ցբարձրանալ Վեհափառ Կաթուղիկոսի ազգիս յԱթոռ Հայրապետութեան իւրոյ։

Նախագահ Հոգևոր Կառավարութեան՝ Նահապետ Աբեղայ
Անդամք՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Յակովբ քահանայ Կիրակոսեանց[178]
Քարտուղար՝ Կ. Յովհաննէսեանց

Մակագրութիւն. *Փութով զեկուցանել։*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 22, բնագիր, ձեռագիր:

№ - 131
ԱՒԱԳ ՀՈՂԱՉԱՓ Պ. ՄԱՍԱԼՈՎԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՈՒ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԵՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 78 *10 օգոստոսի 1893 թ.*
Կարս

Согласно предписаний Военного губернатора Карсской области от *15* июля за №№ *6268, 6269* и *6270,* предполагая на днях выехать для сдачи чиновникам управления Государственными имуществами участков земли, подлежащих по распоряжению Главноначальству-

[178] Յակոբ քահանայ Կիրակոսեան – ծնուել է 1850 թ.: Կրթութիւնը ստացել է Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցում: Վարել է դպիրի պաշտօն Ալեքսանդրապոլի Ս. Աստուածածին եկեղեցում: 1871 թ. դեկտեմբերի 28-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում ձեռնադրուել է քահանայ Սարիբաշ գիւղի եկեղեցու վրայ: 1880 թ. մայիսի 22-ին փոխադրուել է Կարս քաղաք, որտեղ վարել է զանազան պաշտօններ – Կրօնական ժողովի անդամ, Կարսի երկսեռ դպրոցի կառավարման յանձնաժողովի նախագահ, հայազգի բանտարկեալների ու հիւանդ զինուորների խոստովանահայր, Կարսի հոգևոր կառավարութեան անդամ: 1888 թ. փետրուարի 3-ին պարգևատրուել է մուգ կապոյտ կերպասեայ փիլոնով: Մկրտիչ Ա. Կաթողիկոսի 1894 թ. սեպտեմբերի 2-ի կոնդակով շնորհել է ոսկեզօծ լանջախաչ, իսկ 1896 թ. յունիսի 17-ի կոնդակով՝ թաւշեայ գլխարկ կրելու իրաւունք (ՀԱԱ, ֆ. 56, ց.16, գ. 933, թթ.28-29, ֆ. 57, ց. 2, գ. 58, թ. 150 և շրջ., ՄԱՍԷԱ, ց. 1, գ. 298, թ. 108 շրջ.):

ющего изъятию из ведения армяно-григорианских монастырей в Карсском и Кагызманском округах. Прошу Духовное правление уведомить меня кто будет назначен оным присутстрвовать в качестве уполномоченного при таковой сдаче.

Коллежский советник Масалов

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 25, բնագիր, ձեռագիր:

№ - 132
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱԼՈՒԱԾԱԳՐԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՈՒ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՅԵՏԱՁԳԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 894 *12 օգոստոսի 1893 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց Յայտարարութիւն

Ի լրումն յայտարարութեան սորին յ9-ը յունիսի տարւոյս N *584, Հոգևոր Կառավարութիւնս պատիւ ունի խոնարհաբար մատուցանել զիսկական գրութիւն աւագ երկրաչափ Պ. Մասալովի ի 10 ամսոյս* N *78*[179]*, որով խնդրէ նշանակել զպատգամաւոր յաղագս ներկայ գտանելոյ ի ժամ յանձնելոյ զվանքապատկան հողս Կարս և Կաղզուան գաւառաց:*

Հոգևոր Ատեանս համարձակի խնդրել զհաճութիւն սրբազան ատենիդ, եթէ մարթ է, թոյլ տալ սմին միջնորդել Պ. Նահանգապետին Կարուց, յաղագս յետաձգելոյ զգործ ստացման վանքապատկան հողոց ցբարձրանալ Նորին Վեհափառութեան Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի գահ Հայրապետութեան:

Նախագահ Հոգևոր Կառավարութեան՝ Նահապետ Աբեղայ
Անդամք՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Յակովբ քահանայ Կիրակոսեանց
Քարտուղար՝ Կ. Յովհաննէսեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 24, բնագիր, ձեռագիր:

[179] Տես թիւ 131 փաստաթուղթը:

№ - 133
ՆԱՀԱՊԵՏ ԱԲԵՂԱՅ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԻ, ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹՈՒԻ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 1893 թ.
Կարս

Ցուցակ քաղաքեաց, աւանից, գիւղօրէից, տանց ժողովրդականաց և քահանայից գտելոց ի Կարուց վիճակի[180]

Համար ըստ կարգի	Անուանք քաղաքաց, աւանից և գիւղօրէից	Թիւ տանց ժողովրդականց	Թիւ եկեղեցեաց և անուանք նոցին	Անունք և ազգանունք քահանայից	ամք հասակաց
1.	Կարս քաղաք	1000	Ս. Աստուածածին և Ս. Նշան	Ղուկաս աւ. քահանայ Արծրունի	71
				Զօրաբաբէլ քահանայ Ղօլանճեանց	63
				Մելքիսեդեկ քահանայ Մանուկեանց[181]	51
				Մինաս քահանայ Տէր Պետրոսեանց	50
				Յակովբ քահանայ Կիրակոսեանց[182]	43
				Խորէն քահանայ Ստամբօլցեանց[183]	41
2.	Կաղզուան աւան	400	Ս. Աստուածածին	Յովհաննէս քահանայ Թովմասեանց	77
				Պետրոս քահանայ Առաքելեանց[184]	63
				Մկրտիչ քահանայ Տէր Գրիգորեանց[185]	26

[180] Նահապետ աբեղան վիճակագրական աղիւսակը ուղարկել է Մկրտիչ Ա. կաթողիկոսին:

[181] «Մանուկեանց»-ը քահանայի հայրանունն է: Տես թիւ 123 ծանօթագրութիւնը:

[182] Յակովբ քահանայ Կիրակոսեանց – ծնուել է 1850 թ., քահանայ է ձեռնադրուել 1871 թ. Կարսի Ս. Նշան եկեղեցու վրայ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349):

[183] Խորէն քահանայ Ստամբօլցեանց – ծնուել է 1859 թ.: Կրթութիւնը ստացել է Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: Քահանայ է ձեռնադրուել 1891 թ. Կարսի Ս. Նշան եկեղեցու վրայ: 1912 թ. դրութեամբ պարգևատրուել էր ծաղկեայ փիլոն և լանջախաչ կրելու իրաւունքով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 12 շրջ. 13):

[184] Պետրոս քահանայ Առաքելեան – ծնուել է 1828 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

[185] Մկրտիչ քահանայ Տէր-Գրիգորեան – ծնուել է 1868 թ., կրթութիւնը ստացել է Թիֆլիսի Ներսիսեան Հոգևոր դպրոցում, քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1889 թ.: 1912 թ. դրութեամբ պարգևատրուել էր ծաղկեայ փիլոն և լանջախաչ կրելու իրաւունքով

3.	Արդահան աւան	85	Ս. Լուսաւորիչ	Ղևոնդ քահանայ Մարգարեանց[186]	64
4.	Ուրուտ գիւղ	25	Ս. Խաչ	Համազասպ քահանայ Նուրիջանեանց[187]	35
5.	Օլթի աւան	90	Ս. Գէորգ և Ս. Յովհաննէս	Գրիգոր քահանայ Եղիազարեանց Վարդան քահանայ Սառաֆեանց[188]	56 32
6.	Չէրդանիս գիւղ	15	Ս. Աստուածածին[189]	Կարապետ քահանայ Տէր Յովհաննիսեան[190]	53
7.	Ճուրճուրիս գ.	25	Ս. Յակովբ	Նիկողայոս քահանայ Գէորգեանց	56
8.	Բերդուս գ.	24	Ս. Յովհաննէս	Ղևոնդ քահանայ Կոստանեանց[191]	65
9.	Կալկոս գ.	10	Ս. Թադէոս	Չիք	
10.	Ագրակ գ.	25	Ս. Սարգիս	Չիք	
11.	Թամրուտ գ.	25	Ս. Աստուածածին	Չիք[192]	
12.	Եօրուկ գ.	13	Չիք	Չիք	

(ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

186 Ղևոնդ քահանայ Մարգարեանց – ծնուել է 1830 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1889 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.): 1898 թ. մայիսի դրութեամբ Ղևոնդ քահանան վախճանուած էր (տես թիւ 155 փաստաթուղթը):

187 Համազասպ քահանայ Նուրիջանեանց – ծնուել է 1853 թ.: Կրթութիւնը ստացել է ծխական դպրոցում, քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1888 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

188 Վարդան քահանայ Պետրոսի Սարաֆեան – ծնուել է 1862 թ. (ըստ մէկ այլ աղբիւրի՝ 1864 թ., ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14): Կրթութիւնը ստացել Ախալցխայի Կարապետեան դպրոցում, ապա՝ ռուսաց քաղաքային ուսումնարանում: 1892 թ. փետրուարի 23-ին ձեռնադրուել է քահանայ: 1892-ից վարել է Ուխտեաց շրջանի գործակալի պաշտօնը: Տարբեր դպրոցներում վարել է ռուսաց լեզուի ուսուցչի պաշտօն: 1894-ի մայիսի 27-ին պարգևատրուել է սև ծաղկեայ փիլոնով, 1902 թ. յունիսի 19-ին՝ խաչով, 1904 թ. յունուարի 29-ին՝ կամիլաւկայով: 1912 թ. մայիսի 18-ին ստացել է կայսերական պարգև՝ 4-րդ աստիճանի Ս. Ստանիսլաւի խաչ 1914 թ. հոկտեմբերի 23-ին Երևանի Փոխթեմակալի կողմից ստացել է կերպասեայ փիլոն կրելու իրաւունք (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 883, թթ. 123-124, գ. 819, թթ. 11-12):

189 Ըստ մէկ այլ աղբիւրի եկեղեցին կոչւում էր Ս. Լուսաւորիչ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

190 Կարապետ քահանայ Տէր Յովհաննիսեան – ծնուել է 1844 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1870 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

191 Ղևոնդ քահանայ Կոստանեանց – ծնուել է 1830 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1869 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

192 1912 թ. գիւղի հոգևոր հովիւը 53-ամեայ Նշան քահանայ Յովհաննիսեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

13.	Փոքր-Զայիմ գ.	27	Չիք[193]	Յակովբ քահանայ Տէր Աստուածատրեան[194]	47
15.	Մազրա գ.	62	Ս. Աստուածածին	Խաչատուր քահանայ Սիմէօնեանց[195]	51
16.	Աղջաղալա գ.	24	Ս. Յովհաննէս	Չիք[196]	
17.	Օրթաքիլիսէ գ.	40	Ս. Թադէոս	Յակովբ քահանայ Ռշտունեանց[197]	60
18.	Մեծ Փարքեթ	44	Չիք[198]	Յովհաննէս քահանայ Մելքիսեդեկեան[199]	55
				Աւետիս քահանայ Ղազարեանց[200]	51
19.	Քիւրակդարա գ.	28	Ս. Մեսրովբ	Մատթէոս քահանայ Տէր Սողոմոնեան[201]	71
				Արիստակէս քահանայ Սաղաթէլեանց[202]	41
20.	Փոքր-Փարքեթ գ.	38	Չիք[203]	Չիք	
21.	Փալդրուան գ.	70	Ս. Յովհաննէս[204]	Եղիա քահանայ Տէր Սարգսեանց	61

193 1912 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Եղիշէ եկեղեցին, որի հոգևոր հովիւը նոյն Յակոբ քահանան էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

194 Յակոբ քահանայ Տէր Աստուածատրեան – ծնուել է 1848 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1888-ին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

195 Խաչատուր քահանայ Սիմէօնեանց – ծնուել է 1842 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1881 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

196 1912 թ. գիւղի հոգևոր հովիւը Ալեքսանդրապոլի ծխական դպրոցը աւարտած Ներսէս քահանայ Մարտիրոսեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

197 Յակովբ քահանայ Ռշտունի (Ռշտունեանց) – ծնուել է 1832 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

198 1912 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Աստուածածին եկեղեցին, որի հոգևոր հովիւը Աղէքսանդր քահանայ Սարգսեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

199 Յովհաննէս քահանայ Մելքիսեդեկեան – ծնուել է 1935 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1862 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

200 Աւետիս քահանայ Ղազարեանց – ծնուել է 1915 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1853 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

201 Մատթէոս քահանայ Տէր Սողոմոնեան – ծնուել է 1820 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1864 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

202 Արիստակէս քահանայ Սաղաթէլեանց – ծնուել է 1850 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1881 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

203 1912 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Վարդան եկեղեցին, որի հոգևոր հովիւը Ղևոնդ քահանայ Զաքարեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

204 Ս. Յովհաննէս եկեղեցին կառուցուել է 1858 թ., նրա տեղում եղել են 4 աւերուած եկեղեցիներ և գերեզմանոց:

22.	Ղզլըչախչախ գ.	148	Ս. Սարգիս[205]	Մարկոս քահանայ Մկրտչեան[206]	51
				Կարապետ քահանայ Ասլանեանց[207]	56
23.	Ուզունքիլիսա գ.	72	Ս. Յովհաննէս	Յովհաննէս քահանայ Մահտեսի Գէորգեան[208]	71
				Յարութիւն քահանայ Տէր Կարապետեան[209]	66
24.	Հայոց Թիքնիզ գ.	40	Ս. Մինաս[210]	Չիք	
25.	Օճախղուլի գ.	68	Ս. Վարդան	Յովհաննէս քահանայ Մխիթարեանց[211]	56
26.	Բաշ-Շիրակ գ.	120	Ս. Յովհաննէս	Յակովը քահանայ Տէր Յակովբեանց[212]	67
				Սահակ քահանայ Տէր Գասպարեանց[213]	52
27.	Աղուզում գ.	35	Ս. Աստուածածին	Չիք[214]	
28.	Ղարամամադ գ.	24	Ս. Լուսաւորիչ[215]	Պետրոս քահանայ Առաքելեանց[216]	71
				Գրիգոր քահանայ Յակովբեանց[217]	57

205 Ս. Սարգիս եկեղեցին կառուցուել է 1866 թ.:

206 Մարկոս քահանայ Մկրտչեան – ծնուել է 1840 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1858 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

207 Կարապետ քահանայ Ասլանեանց – ծնուել է 1925 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1859 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

208 Յովհաննէս քահանայ Մահտեսի Գէորգեան – ծնուել է 1825 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1860 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

209 Յարութիւն քահանայ Տէր Կարապետեան – ծնուել է 1830 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1865 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

210 Ս. Մինաս եկեղեցին կառուցուել է 1870 թ.:

211 Յովհաննէս քահանայ Մխիթարեանց – ծնուել է 1942 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1873 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

212 Յակովը քահանայ Տէր Յակովբեանց – ծնուել է 1823 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1857 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

213 Սահակ քահանայ Տէր Գասպարեանց – ծնուել է 1835 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

214 1912 թ. դրութեամբ գիւղի հոգևոր հովիւը գաղթական Կարապետ քահանայ Տէր Իսրայէլեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

215 Ս. Լուսաւորիչ փայտաշէն եկեղեցին կառուցուել է 1868 թ.:

216 Պետրոս քահանայ Առաքելի Չախալեանց – ծնուել է 1923 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1864 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

217 Գրիգոր քահանայ Յակոբեան – ծնուել է 1830 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1865 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

29.	Փիրուալի գ.	73	Ս. Աստուածածին[218]	Մարկոս քահանայ Տէր Գրիգորեանց[219]	61
30.	Համզաքեարակ գ.	85	Ս. Աստուածածին[220]	Գալուստ քահանայ Ղանդիլեանց[221]	51
31.	Ուղուզլի գ.	87	Ս. Աստուածածին[222]	Գրիգոր քահանայ Տէր Ստեփանեանց[223]	46
32.	Բաշ-Քեադիկլար գ.	72	Ս. Յովհաննէս	Աղէքսանդր քահանայ Յովսէփեանց[224]	44
33.	Օրթաքեադիկլար	43	Ս. Ստեփանոս	Ստեփան քահանայ Տէր Մարտիրոսեանց[225]	48
34.	Ներքին-Քեադիկլար գ.	55	Ս. Գրիգոր	Գրիգոր քահանայ Ստամբօլցեանց[226]	30
35.	Բայրախտար գ.	29	Ս. Յակովբ[227]	Մարտիրոս քահանայ Կիրակոսեանց[228]	53
36.	Գեօռխանա գ.	41	Ս. Փրկիչ	Պետրոս քահանայ Ճառուկեանց Աբրահամ քահանայ Տէր Յովհաննիսեանց[229]	69 41
37.	Կարմիր-վանք	18	Ս. Աստուածածին	Չիք[230]	
38.	Մաւրակ գ.	35	Ս.Աստուածածին	Չիք	

218 Ս. Աստուածածին փայտածածկ եկեղեցին կառուցուել էր 1866 թ., որում պահւում էին 15-16-րդ դարերի մի քանի ձեռագրեր:

219 Մարկոս քահանայ Տէր Գրիգորեանց – ծնուել է 1835 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

220 Ս. Աստուածածին եկեղեցին կառուցուել էր 1860 թ.:

221 Գալուստ քահանայ Ղանդիլեանց – ծնուել է 1845 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1873 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

222 Ս. Աստուածածին եկեղեցին իր շքեղութեամբ համեմատւում է Անիի Կաթողիկէ եկեղեցու հետ: Դրսից եկեղեցու հարաւային պատի վրայ եղել են արձանագրութիւններ, որոնցում նշուած էր վերանորոգման թուականը միայն (1001 թ.):

223 Գրիգոր քահանայ Տէր Ստեփանեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

224 Աղէքսանդր քահանայ Յովսէփեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1880 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

225 Ստեփան քահանայ Տէր Մարտիրոսեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

226 Գրիգոր քահանայ Ստամբօլցեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1891թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

227 Ս. Յակոբ եկեղեցին կառուցուել է 1862 թ.:

228 Մարտիրոս քահանայ Կիրակոսեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1880 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

229 Աբրահամ քահանայ Տէր Յովհաննիսեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

230 1912 թ. դրութեամբ Կարմիր Վանք և Մաւրակ գիւղերի հոգևոր հովիւը Մելքիսեդեկ քահանայ Մելքոնեանցն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

39.	Բուլանուղ գ.	20	Ս. Յուսիկ	Ղազար քահանայ Սաֆարեանց[231]	46
40.	Թազաքեանդ գ.	19	Ս. Վարդան	Սարգիս քահանայ Աւագեանց	52
41.	Ղույուճուղ գ.	28	Ս. Ստեփանոս	Ղազար քահանայ Ստեփաննոսեանց[232]	46
42.	Ղօշավանք	28	Ս. Յովհաննէս	Վանահայրն	45
43.	Արազի-գիւղ	39	Ս. Լուսաւորիչ	Յովհաննէս քահանայ Բագրատունի[233]	51
44.	Ճալա գիւղ	86	Ս. Լուսաւորիչ	Աբրահամ քահանայ Խաչատրեանց[234]	51
45.	Բայղարա գ.	29	Ս. Ամենափրկիչ	Մելքոն քահանայ Տէր Մելքոնեանց[235]	42
46.	Գեարմլու գ.	27	Ս. Յարութիւն	Միքայէլ քահանայ Պօղոսեանց[236]	74
47.	Չերղան գ.	26	Կառուցանի[237]	Չիք	
48.	Աբատ-Սոգիւտլի գ.	13	Կառուցանի[238]	Չիք	
49.	Գիւդալի գիւղ	43	Կառուցանի	Չիք	
50.	Ղափանլի գ.	29	Կառուցանի[239]	Չիք	
51.	Խասու Չիֆթլիկ գ.	13	Ս. Երրորդութիւն	Չիք[240]	

[231] Ղազար քահանայ Սաֆարեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1860 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[232] Ղազար քահանայ Ստեփաննոսեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1876 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[233] Յովհաննէս քահանայ Բագրատունի - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

[234] Աբրահամ քահանայ Խաչատրեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1866 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

[235] Մելքոն քահանայ Տէր-Մելքոնեանց – ծնուել է 1853 թ.: Կրթութիւնը ստացել է Կարսում, քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1893 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

[236] Միքայէլ քահանայ Պօղոսեանց – ծնուել է 1823 թ.քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1851 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

[237] 1912 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Ամենափրկիչ եկեղեցին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

[238] 1896 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Մեսրոպ եկեղեցին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351): 1912 թ. գիւղի հոգևոր հովիւը Մեսրոպ քահանայ Պետրոսեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

[239] 1896 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Աստուածածին եկեղեցին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

[240] 1912 թ. դրութեամբ գիւղի հոգևոր հովիւը 48-ամեայ Յակոբ քահանայ Մարտիրոսեանն

52.	Չերմալի գ.	49	Ս. Յակովբ	Եղիազար քահանայ Եղիազարեանց	51
53.	Բերնա գ.	54	Ս. Լուսաւորիչ[241]	Աւետիս քահանայ Տէր Սիմէօնեանց[242]	56
54.	Դօլբանդլու գ.	60	Ս. Խաչ	Կարապետ քահանայ Տէր Սիմէօնեանց[243]	33
55.	Բէնկլիահմեդ գ.	121	Ս. Աստուածածին	Գրիգոր քահանայ Զաքարեանց[244]	43
				Վարդան քահանայ Տէր Վարդանեանց[245]	42
56.	Բայբուրդ գ.	52	Ս. Մեսրովբ	Սահակ քահանայ Մարտիրոսեանց[246]	54
57.	Ղանի-գիւղ	67	Ս. Յակովբ	Պօղոս քահանայ Տէր-Միքայէլեանց[247]	43
58.	Բօզղալա գ.	15	Կառուցանի	Չիք	
59.	Սարիղամիշ աւան	60	Չիք	Չիք	
60.	Աքսի-Ղազի գ.	28	Ս. Յարութիւն	Յարութիւն քահանայ Մինասեանց[248]	47
61.	Բրուտ-Սոգիւտլի գ.	25	Ս. Կարապետ-Մկրտիչ	Չիք	
62.	Օրթաղալա գ.	27	Ս. Գէորգ	Չիք	
63.	Զոչի գ.	82	Ս.Ստեփանոս	Գալուստ քահանայ Ղալայչեանց[249]	60
				Խաչատուր քահանայ Յովսէփեանց[250]	52

էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

241 Ս. Լուսաւորիչ եկեղեցին կառուցուած էր 759 թուականին:

242 Աւետիս քահանայ Տէր Սիմէօնեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1865 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349):

243 Կարապետ քահանայ Տէր Սիմէօնեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1892 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349):

244 Գրիգոր քահանայ Զաքարեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

245 Վարդան քահանայ Տէր Վարդանեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1872 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

246 Սահակ քահանայ Մարտիրոսեանց - քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1875 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

247 Պօղոս քահանայ Տէր-Միքայէլեան – ծնուել է 1848 թ. , քահանայ է ձեռնադրուել 1872 թ.: Մահացել է 1904-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349):

248 Յարութիւն քահանայ Մինասեանց– ծնուել է 1832 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1879-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

249 Տե՛ս թիւ 101 ծանօթագրութիւնը:

250 Խաչատուր քահանայ Յովսէփեանց – ծնուել է 1840 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1865-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

64.	Տիկոռ գ.	26	Ս. Երրորդութիւն	Յովհաննէս քահանայ Երիցեանց[251]	55
65.	Նախիջևան գ.	112	Ս. Աստուածածին	Յովհաննէս քահանայ Անտօնեանց[252]	67
				Մեսրովբ քահանայ Տէր Յովհաննիսեանց[253]	50
				Միքայէլ քահանայ Տէր Միքայէլեանց[254]	57
66.	Ծպնի գ.	140	Ս. Աստուածածին	Խաչատուր քահանայ Նիկողայոսեանց[255]	56
				Սարգիս քահանայ Արիստակէսեանց[256]	60
				Յովհաննէս քահանայ Իսրայէլեանց[257]	64
67.	Ազարակ գ.	36	Ս. Ստեփանոս	Աւետիս քահանայ Մուրադեանց[258]	51
68.	Բուիկ գ.	27	Ս. Աստուածածին	Չիք[259]	
69.	Բագարան գ.	33	Ս. Գէորգ	Յովհաննէս քահանայ Տէր Մկրտչեանց[260]	57
70.	Ջալալ գ.	28	Չիք	Չիք	
71.	Լալոյի Մաւրակ գ.	29	Մայր Եկեղեցի	Սարգիս քահանայ Ներսիսեանց[261]	54

[251] Յովհաննէս քահանայ Երիցեան – ծնուել է 1937 թ. քահանայական ձեռնադրութիւն է ստացել 1871 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[252] Յովհաննէս քահանայ Անտօնեանց – ծնուել է 1824 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1858-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[253] Մեսրովպ քահանայ Յովհաննիսեանց – ծնուել է 1842 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1865-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[254] Միքայէլ քահանայ Միքայէլեանց – ծնուել է 1835 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[255] Խաչատուր քահանայ Նիկողայոսեանց – ծնուել է 1836 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[256] Սարգիս քահանայ Արիստակէսեան – ծնուել է 1832 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[257] Յովհաննէս քահանայ Իսրայէլեանց – ծնուել է 1827 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[258] Աւետիս քահանայ Մուրադեանց – ծնուել է 1836 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1870-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[259] 1912 թ. դրութեամբ հոգևոր հովիւը գիւղի վերաբնակիչ Համազասպ քահանայ Պօղոսեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[260] Յովհաննէս քահանայ Տէր Մկրտչեանց – ծնուել է 1827 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[261] Սարգիս քահանայ Ներսիսեան – ծնուել է 1837 թ., քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1865 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

72.	Ղարաբաղ գ.	42	Ս. Յովհաննէս	Գամաղիէլ քահանայ Մարտիրոսեանց[262]	51
73.	Քերս գ.	54	Ս. Աստուածածին	Ներսէս քահանայ Ղարիբեանց	50
74.	Խար գ.	42	Ս. Յակովբ	Մելքիսեդեկ քահանայ Թորոսեանց[263]	61
75.	Ղարավանք գ.	27	Ս. Խաչ	Ռափայէլ քահանայ Պօղոսեան[264]	61
76.	Չէնկլի գ.	28	Ս. Յովհաննէս	Մարտիրոս քահանայ Պապոյեանց[265]	66
77.	Գիւլանթափ գ.	14	Ս. Աստուածածին	Յովհաննէս քահանայ Ամիրեանց	56
78.	Բաշ-գիւղ	151	Ս. Աստուածածին	Եղիա քահանայ Գրիգորեանց	55
79.	Արմուտլի գ.	72	Ս. Աստուածածին	Յակովբ քահանայ Մարկոսեանց[266] Եղիա քահանայ Տէր Յակովբեանց[267]	60 66
80.	Սըթահան գ.	24	Ս. Լուսաւորիչ	Աղէքսանդր քահանայ Մկրտչեանց[268]	58
81.	Յորերան գ.	29	Ս. Լուսաւորիչ	Պօղոս քահանայ Մարկոսեանց[269]	61
82.	Շատևան գ.	28	Կառուցանի[270]	Նիկողայոս քահանայ Տէր Կիրակոսեանց[271]	55

[262] Գամաղիէլ քահանայ Մարտիրոսեան – ծնուել է 1837 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

[263] Մելքիսեդեկ քահանայ Թորոսեան («Թորոսեան»-ը հայրանունն է) Բարիքեան– ծնուել է 1830 թ.: 1865 թ. Ստացել է քահանայական ձեռնադրութիւն (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

[264] Ռափայէլ քահանայ Պօղոսեան – ծնուել է 1829 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

[265] Մարտիրոս քահանայ Պապոյեանց – ծնուել է 1814 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1868-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351շրջ.):

[266] Յակոբ քահանայ Մարկոսեան – ծնուել է 1837 թ., քահանայ է ձեռնադրուել 1874-ին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[267] Եղիա քահանայ Տէր-Յակովբեանց – ծնուել է 1834 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1872-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350 շրջ.):

[268] Աղէքսանդր քահանայ Մկրտչեանց – ծնուել է 1827 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1879-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351շրջ.):

[269] Պօղոս քահանայ Մարկոսեան – ծնուել է 1863 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1879-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

[270] 1912 թ. դրութեամբ գիւղում գործում էր Ս. Աստուածածին եկեղեցին, հոգևոր հովիւն է Նիկողայոս քահանայի որդին՝ Թէոդորոսը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[271] Նիկողայոս քահանայ ՏէրժԿիրակոսեան – ծնուել է 1830 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1868-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

83.	Ղարափունղար գ.	14	Ս. Առաքելոց	Չիք	
84.	Չօլաղլու գ.	20	Կառուցանի	Չիք	
85.	Չուրուկ գ.	16	Ս. Գրիգոր Լուսաւորիչ	Չիք	
86.	Ղօշաքիլիսէ գ.	29	Ս. Լուսաւորիչ	Յակովբ քահանայ Պետրոսեանց[272]	38
87.	Ենգիջա գ.	8	Չիք	Չիք	
88.	Նոր Թիքնիզ	33	Կառուցանի	Մելիտոս քահանայ Արսէնեանց[273]	62
88	–	5284	75	84	–

Փոխանորդ Վիճակին կարուց՝ Նահապետ Աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ.156, թթ. 27 և շրջ., 34 և շրջ.:

№ - 134
ՆԱՀԱՊԵՏ ԱԲԵՂԱՅ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՄԿՐՏԻՉ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 1017 *2 սեպտեմբերի 1893 թ.*

Կարս

Տեղեկագիր Կարուց Վիճակի Փոխանորդութեան յընթացս 1891-1893 ամի Նորին Վեհափառութեան Ծայրագոյն Պատրիարքի և Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտչի Ա.[274]

Ս. Սինոդի օրագրութեամբ 1891-ի նոյեմբերի 8-ից նշանակուած լի-

[272] Յակոբ քահանայ Պետրոսեանց – ծնուել է 1851 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1892-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 351):

[273] Միլիտոս քահանայ Արսէնեանց – ծնուել է 1834 թ.: Քահանայական ձեռնադրութիւն ստացել է 1877-ին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 350):

[274] Մկրտիչ Ա. Վանեցի Խրիմեան Հայրիկ (4.04.1820, Վան-29.10.1907, Էջմիածին) - Ամենայն Հայոց Կաթողիկոս 1893-1907 թթ.: 1854 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները, 1868 թ.-ին ձեռնադրուել է եպիսկոպոս: Եղել Վարագայ վանքի վանահայր, հրատարակել հանրայայտ «Արծիւ Վասպուրականի» հանդէսը, 1862-1868 թթ.՝ Տարոնի Թեմի Առաջնորդ և Ս. Կարապետի վանքի վանահայր, 1869-1873 թթ.՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք: Ստեղծել է գաւառահայութեան հարստահարութիւնները քննող յանձնաժողով: Ղեկավարել է 1878 թ. Բեռլինի վեհաժողովում հայկական ոչ պաշտօնական պատուիրակութիւնը, 1879-1884 թթ. եղել Վանի Թեմի Առաջնորդ և նպաստել «Սև խաչ» (Վան) և «Պաշտպան Հայրենեաց» (Կարին) ազատագրական կազմակերպութիւնների ստեղծմանը: 1890 թ. Գում-Գափուի ցոյցից յետոյ թուրքական իշխանութիւնների կողմից աքսորուել է Երուսաղէմ: Արգելել է ենթարկուել Հայ Եկեղեցու գոյքի բռնագրաւման 1903 թ. ցարական ապօրինի որոշմանը:

նելով Փոխանորդ Վիճակին Կարուց, նոյն ամսոյ 23-ին հասայ Կարս և 25-ին սահմանեալ երդումն ընդունեցի՝ հաւատարիմ ծառայութեան համար: Այդ օրուանից մինչև ցայսօր վարում եմ պաշտօնս, բացակայելով Վիճակիցս 18 օր, երբ Սեբաստիոյ Տ. Պետրոս Սրբազան եպիսկոպոսի[275] յանձնարարութեամբ և Կ. Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Տ. Խորէն Բարձր Սրբազան արքեպիսկոպոսի[276] գրաւոր պատուէրին համաձայն բաղդ ունեցայ 1892 թուականի մայիսի 3-5-ին մասնակից լինելու Վեհափառ Տէրութեանդ ի Հայրապետութիւն Հայաստանեայցս Առաքելական Ս. Եկեղեցւոյ ընտրութեանը:

Մօտ երկու տարի կառավարելով իմ խնամոց յանձնուած Վիճակը, այս ամենախոնարհագոյն յայտարարութեամբս պատիւ անձին վարկանիմ արկանելու առ ոտս Սրբազնասուրբ Վեհափառութեանդ հետևեալ համառօտ տեղեկագիրը Վիճակիս դրութեան մասին:

Վերջին 1877-ի Տաճկական պատերազմից յետոյ Կարուց առաջնորդական վիճակը Բաթումի նահանգի հետ ի միասին կազմեց մի առանձին թեմ մինչև 1887 թուականը, երբ լուսահոգի Տ. Մակար Կաթողիկոսի օրով Բաթումի նահանգը միացաւ Թիֆլիզի թեմին, իսկ Կարսի նահանգը իբրև Տէրունի՝ Երևանի թեմի փոխանորդական վիճակ ճանաչուեցաւ՝ Պատրիարքական փոխանորդով և հոգևոր կառավարութեամբ: Առաջին Փոխանորդը եղաւ նախկին թեմակալ Տ. Գրիգորիս Սրբազան եպիսկոպոսը, ապա նշանակուեցաւ Յուսիկ վարդապետը և ի վերջոյ նուաստիս յանձնուեցաւ այս Վիճակի կառավարութիւնը:

Որքան էլ որ դրամական տեսակէտից օգտաւէտ է ճանաչել Կարսի նահանգը Երևանի կոնսիստորիային ենթարկելը, իմ համեստ կարծիքով, այնքան էլ ժողովրդեան հոգևոր պէտքերին բաւարարութիւն տալու տեսակէտից մեծ անյարմարութիւններ են առաջ եկել այս թեմի նշանակութիւնը նսեմացնելուց: Կարսի նահանգը ունի զինուորական վարչութիւն զինուորական նահանգապետով, որոնց իշխանութիւնը տարբերւում է քաղաքական վարչութեան և քաղաքական նահանգապետի իշխանութիւնից, որպիսին է Երևանինը, հետևաբար Երևանի թեմակալի փոխանորդը, որին ստորադրւում է Կարուց Փոխանորդը և Երևանի Կոնսիստորիան, որին ստորադրւում է Կարուց Հոգևոր կառավարութիւնը, շատ անգամ չեն կարողանայ իւրեանց վճռադատութեան յանձնուած խնդիրները լուծել ըստ յարմարութեան և ըստ հան-

[275] Պետրոս արքեպիսկոպոս Թահմիզեան – ծնուել է 1816 թ. Սեբաստիայում: 1851 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճաններ, 1879-ին ձեռնադրուել է եպիսկոպոս: «Անբասիր, աղքատասէր եկեղեցական մ՛եղած է, քաջահմուտ հայ եկեղեցական երաժշտութեան»: Վախճանուել է 1907 թ. ապրիլի 12-ին (ՀԱԱ, ֆ. 425, ց. 1, գ. 1, թ. 28):

[276] Խորէն արքեպիսկոպոս Աշըղեան (4.11.1842, Քերեմետ (Նիկոմիդիա)-26.10.1899) – հոգևոր գործիչ: 1863 թ ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները, 1872-ին ձեռնադրուել է եպիսկոպոս: 1871-1888 թթ. եղել է Արմաշի վանքի վանահայրը, 1888-1894 թթ.՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը:

գամանաց: Միւս կողմից՝ կան խնդիրներ, որոց լուծումը Կոնսիստորիայից սպասելով ի զուր ժամանակի կորուստ է լինում և երբեմն էլ յարմար առիթներ են կորչում ի վնաս շահուց հոգևոր իշխանութեան: Իմ երկամեայ փորձը ցոյց է տուել ինձ, որ զինուորական նահանգապետի նստած տեղում կվայելէ ունենալ մի թեմակալ առաջնորդ իւր կոնսիստորիայով: Այն ժամանակ առաջնորդական իշխանութիւն ունեցողի դիրքը բարի կլինի և նորա գործունէութիւնը աւելի բեղմնաւոր:

Կարուց ընդարձակ Վիճակում կան մի քաղաք՝ Կարս, չորս աւան՝ Կաղզուան, Սարաղամիշ, Արդահան և Օլթի և ութսուն երեք գիւղորայք. ընդամենը 88 բնակավայր:

Պաշտօնավարութիւնս սկսածս օրը այդ 88 տեղից 66-ի մէջ կային օծած եկեղեցիներ: Այս երկու տարուայ ընթացքում աւարտել են եօթը կիսաշէն եկեղեցիներ և ես նոցա օծման կարգը կատարել եմ, ութ տեղում սկսել են շինել և աւարտելու վերայ են, իսկ եօթը տեղում դեռ չեն ձեռնարկած:

Կարսում թէև երկու եկեղեցի կայ, բայց ոչ մէկը քաղաքի համար վայելուչ վիճակի մէջ չէ: Մի քանի տարի սորանից առաջ նոր եկեղեցի շինելու համար զինուորական նահանգապետը քաղաքի մէջ մի տեղ է յատկացրել այն պայմանով, որ այդ տեղի վերայ ոչ մի արդիւնաբերող շինութիւն չկառուցուի: Ս. Սինոդը հաստատել է նոր եկեղեցւոյ յատակագիծը, նոյնը կատարուել է նաև ռուսաց բարձրագոյն կառավարութեան կողմից: Տեղւոյս հասարակութիւնը մի քանի հազար ռուբլի ծախսել է յատկացրած տեղի վերայ եղած խարխուլ շինութիւնները գնելու համար, որից մօտ 2500 ռուբլի իմ օրով է ծախսած: Եւ երբ ամեն ինչ պատրաստ էր եկեղեցւոյ հիմնարկութեանը ձեռնարկելու, արգելք եղաւ տեղւոյս բերդապետը, առարկելով թէ՝ ռազմագիտական տեսակէտից այդ տեղում չի կարելի գմբեթաւոր մեծ շինութիւն կառուցանել: Մի ամբողջ տարի գործը՝ գրագրութեան և բանակցութեան նիւթ դառնալուց յետոյ, վերջանալու էր Կովկասի Քաղաքական մասի Տ.Կառավարչապետ Շերեմետեւի[277] Կարս ժամանելով: Ես առանձին ունկնդրութեան ժամ խնդրեցի և յայտնեցի Տ. Կառավարչապետին գործի հանգամանքները, խնդրելով հրամայել ում հարկն է, որ թոյլ տան մեզ յատկացրած տեղի վերայ նոր եկեղեցի կառուցանել: Տ. Կառավարչապետը այնքան բարի եղաւ, որ ոչ միայն սիրով ընդունեց խնդիրն, այլ և ունկնդրութիւնից յետոյ անմիջապէս եկաւ անձամբ տեղը տեսնելու և առ տեղեաւն ընդունեց Նահանգապետի և Բերդապետի զեկուցումները: Ապա ժամ նշանակեց Բերդապետի տանը խորհրդակցելու համար, որի հետևանքը այն եղաւ, որ կարգադրեց մի յանձնաժողով նշանակել իմ մասնակցութեամբ, որպէս զի փոխադարձ

[277] Խօսքը գեներալ Սերգէյ Ալ. Շերեմետևի մասին է, որ Կովկասի Քաղաքացիական մասի Կառավարչապետն էր 1890 յուլիսի 3-ից 1896 դեկտեմբերի 6-ը:

իրաւախոհութեամբ եկեղեցւոյ յատակագծի մէջ հարկաւոր փոփոխութիւնները անենք։ Անցեալ յուլիսի 19-ին Նահանգապետը ինձ գրաւոր յայտնեց, որ մասնաժողովը կազմուած է և հրաւիրեց անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել յանձնաժողովի պարապմանց։ Այստեղ էլ Բերդապետը խանգարեց գործը, առարկելով թէ՝ իւր մասնակցելը յանձնաժողովի նիստերին աւելորդ է համարում, քանի որ իւր կարծիքը արդէն յայտնի է և առաջարկեց իւրեանց աւելի բարձր թէ՛ դիրքով և թէ՛ ռազմագիտական պատրաստութեամբ մի անձն հրաւիրել, որի հեղինակաւոր ձայնը պարտաւորեցուցիչ լինի իւր համար։ Այս անակնկալ հանգամանքը դարձեալ յետաձգեց գործը մինչև որ Տ. Կառավարչապետից նոր կարգադրութիւն կլինի։

Հոգևորականութիւնը Կարսի Վիճակում շատ ընկած վիճակի մէջ է. մեծ մասամբ քահանայք տգէտ են և ժողովրդեան կարեաց՝ անհամապատասխան։

Կարս քաղաքում կային հինգ ծխատէր քահանայ և վեցերորդը անցեալ տարի ձեռնադրուեցաւ։ Բացի սոցանից, քաղաքի մէջ ապրում են երեք հրաժարեալ քահանաներ և մի թափառական քահանայ էլ մեծ տօներին երևում է քաղաքում և ապա դարձեալ թափառում։

87 աւանից և գիւղից 26-ը քահանայ չունի և կառավարւում են մօտակայ գիւղերի քահանաներով։ Մնացած տեղերում կային 84 քահանայ, վախճանեցան 9, նոր ձեռնադրուեցան 3, այժմ կան 78։ Մեծ մասամբ գիւղերում տիրացուներ էլ չկան, այնպէս որ մի տեղ Ս. Պատարագ մատուցանելու ժամանակ հարկաւոր է լինում միւս գիւղերից տիրացուներ հրաւիրել, ուստի և շատ տեղ տարին հազիւ մի քանի անգամ Ս. Պատարագ է մատուցւում, թէև առաւօտ և երեկոյ ժամերգութիւնը շատ քիչ բացառութեամբ անպակաս է լինում քահանայ եղած տեղում։

Քանի որ պատրաստի տիրացուներ չկան գիւղերի մէջ, դրսից էլ քահանայ բերելը ձեռնտու չէ ո՛չ գիւղացւոց և ո՛չ էլ քահանայի համար, հարկաւոր է վիճակիս վանքերից մինի մէջ մի ընծայարան բանալ և ժողովելով այնտեղ ամբողջ վիճակից ուշիմ երիտասարդներ՝ ըստ հաւանութեան ժողովրդեան և պատրաստել նոցա քահանայութեան համար։

Քահանայից մասին խօսելով ի նկատի պէտք է ունենալ, որ կառավարութեան կարգադրութեամբ այլ գաւառից Կարսի նահանգը ոչ ոք փոխադրուելու և այստեղ ժողովրդահամարի մէջ գրուելու իրաւունք չունին սոցա թուում են նաև քահանաները։ Այս մասին ես քանիցս խօսել եմ նահանգապետի հետ և ստացել այս պատասխանը, թէ՝ նա արգելք չի լինի ոչ մի քահանայի համար իւր պաշտօնը վարելու ըստ կարգադրութեան հոգևոր իշխանութեան, բայց ցուցակների մէջ ո՛չ քահանայք և ո՛չ նոցա ընտանիքը չեն կարող մտնել, եթէ նոքա Կարսի նահանգից չեն։ Սորա հետևանքը այն է լինում, որ քանի քահանան կենդանի է, նորա ընտանիքն էլ հետը բնակւում է, բայց քահանայք

վախճանելուց յետոյ նորա ընտանիքը պարտաւոր է վերադառնալ իւր նախկին բնակավայրը: Շատ բնական է, որ Կարսից դուրս եղած նահանգների բնակիչներից և ոչ մէկի համար ձեռնտու չէ Վիճակիս մէջ քահանայական պաշտօն վարել, քանի որ ապագայում նորա ընտանիքը պէտք է զրկուած մնայ: Այս էլ կայ, որ ո՛չ միայն այդպիսի քահանայից ընտանեաց ապագան անորոշ է, այլ նոյն իսկ ժողովրդականք շատ անգամ օգուտ են քաղում այս հանգամանքից և մի համախօսականով մերժում են իւրեանց միջից քահանային և՝ եթէ այդ չի յաջողում, զրկում են նորան հողից և այդպիսով շատ անբաւականութեանց պատճառ են լինում ի մեծ գայթակղութիւն ամենայն ժողովրդեան:

Ժողովրդից քահանան իրաւունք ունի որոշեալ քանակութեամբ հող ստանալու առանց տուրքի, բայց շատ տեղ այդ զլանում են և պատահել են դէպքեր, որ նոյն իսկ անձնական՝ բեգեար[278] կոչուած աշխատանքի են տարել քահանային: Ի հարկէ իւրեանք քահանաներն են պատճառ ժողովրդի այսպիսի վարմանց, բայց թողնել որ ժողովուրդը զրկէ քահանային իւր արդար իրաւունքից չի կարելի: Այս մասին մի ընդհանուր կարգադրութիւն պէտք է լինի:

Կարսի Վիճակում հետևեալ վանքերը կան՝ Հոռոմոսի վանք, որ Ղօշավանք էլ է կոչւում, Խծկոնից վանք՝ Բէշքիլիսա, Անի, Տիկոռու վանք, Վարդիկհօր վանք:

Հոռոմոսի վանքում վանահայր է Բաղդասար վարդապետը, որ և ծխատէր քահանայ է նոյն անուն գիւղի: Այս վանքը ունի 615 դեսեատին հող, որի արդիւնքը յատկացրած է Ս. Էջմիածնին: Վանքում կայ մի աննկանոն դպրոց: Այստեղ կարելի է մի ընծայարան բանալ ամենայն յարմարութեամբ:

Խծկոնից վանքում վանահայր է Յարութիւն վարդապետը և միաբան Յակովբ վարդապետը: Այս երկու աշխատաւոր վարդապետների շնորհիւ հինգ եկեղեցիներից երկուսը արդէն բարեզարդ վիճակի մէջ են: Վանքի գաւթում և գաւթից դուրս կառուցուած են յարմարաւոր սենեակներ ուխտաւորների համար: Այս վանքն էլ պակաս յարմարութիւն չունի ընծայարանի համար:

Անին շատ անխնամ և անբարեկարգ վիճակի մէջ է, ոչ մի շինութիւն չի եղած և ոչ մի աւերակ ոչ միայն չի նորոգուած, այլ և եղածներն էլ հետզհետէ աւերակ են դարձել և դառնում են: Վանահայրն է Ներսէս վարդապետը:

Տիկոռու վանքին մօտ է և համանուն գիւղը, որի ծխական եկեղեցին է. վանահայր չունի և աւելորդ էլ է, որովհետև այնքան քայքայուել է, որ կառավարութեան կողմից հրամայուած է գոցել եկեղեցին, բայց

[278] Բեգեար, բեգար – ձրի աշխատանք, որ վարչութեան կարգադրութեամբ գիւղացիները կատարում էին, օր. ճանապարհներ շինելու, բեռներ փոխադրելու և այլն :

քանի որ գիւղը իւր եկեղեցին չունի, դեռևս շարունակում են ժամասացութիւնը։

Վարդիկհօր վանքը հիմն ի վեր նորոգութեան կարօտ է, մի ամայի տեղումն է կառուցած, վանահայր չունի։

Բէշքիլիսան, Անին, Տիկոռը և Վարդիկհօր վանքը, ի թիւս նոցա և Կարսի Ս. Աստուածածնին եկեղեցին, ունին կառավարութիւնից յատկացրած հողեր, որոնց արդիւնքով կառավարւում են Բէշքիլիսան և Անին, իսկ Տիկոռի և Վարդիկհօր արդիւնքը ժողովւում են ապագայի համար և Կարսի եկեղեցունը գործ է դրւում նոր կառուցանելի եկեղեցւոյ և դպրոցի վերայ։ Այս հողերը ժամանակաւորապէս յանձնուած էին Հոգևոր Կառավարութեանը, որ յետոյ Բարձրագոյն հաստատութեանը դիմէին։ Տարիներ անցնելուց յետոյ ներկայ տարւոյս յունուարին Տ. Կառավարչապետը վերադարձրեց Նահանգապետի առաջարկութիւնը՝ Բարձրագոյն հաստատութեան դիմելու մասին, առարկելով թէ՝ նա ոչ մի արդարացուցիչ պատճառ չի գտնում ոչ յունադաւան վանքերի և եկեղեցիների համար հողեր յատկացնելու մասին Բարձրագոյն հաճութեանը դիմելու և կարգադրում է վերոյիշեալ վանքերի և եկեղեցւոյ համար յատկացրած հողերը յետ առնել։ Այս կարգադրութեան մասին տեղւոյս Հոգևոր Կառավարութիւնը տեղեկացաւ թէ չէ, յայտարարեց Ս. Սինոդին։ Այժմ պահանջում են մեզանից, որ ներկայացուցիչ նշանակենք հողերը յանձնելու համար կառավարութեանը։

Անշէն և աւերակ վանքեր շատ կան Կարսի Վիճակում, բայց նոցա մէջ կանգունը և վսեմը Մրէնի վանքն է, որ մի ամայի և անմարդաբնակ տեղումն է, Բագարանի Ս. Գէորգ ուխտատեղից մի ժամու հեռաւորութեամբ։ Այս վանքի շուրջը մեծ քանակութեամբ դատարկ հողեր կան, որոնց մասին ժամանակին Հոգևոր իշխանութիւնը դիմած է կառավարութեանը, խնդրելով նոցա մի մասը վանքին յատկացնել, բայց բացասական պատասխան է ստացել։ Սպասելով որ մի օր այդ հողերը յոյներին կարող են տալ և յունաց գիւղ կազմել, որով և մեր վանքը կարող են դարձնել յունաց եկեղեցի Կարսի Աբասաշէն Ս. Առաքելոց Մայր եկեղեցւոյ նման, ես փորձ փորձեցի վանքը մաքրելու, որի համար շրջակայ հայ ժողովուրդը ձրիաբար մշակներ տուեց, բայց առանց կարևոր նորոգութեան թոյլ չեն տալու եկեղեցին օծել և նորա մէջ ժամասացութիւն անել, իսկ այդ նորոգութիւնը մի քանի հազար ռուբլու կարօտ է, որ ձեռք բերել մեր միջոցներով անհնարին է։

Ոչ պակաս նորոգութեան կարօտ են և այն վանքերը, որոնք հայ գիւղական եկեղեցիներ են՝ Բաշ Շիրակի, Ջանկլուայ, Ուղուզլուայ, Ագարակի և այլն։ Սոցա բոլորի համար մի ընկերութիւն է հարկաւոր կազմել՝ Հայոց հին վանքերը նորոգելու նպատակով և այդ ընկերութեան խնամակալութիւնը յանձնել ոչ միայն Կարսի, այլ և ամեն տեղի վանքերը. ապա թէ ոչ, անհատական ջանքերով հնարաւորութիւն չկայ

մեր բազմաթիւ վանքերից և ոչ մինը պահպանելու։ Գիւղական ժողովուրդը իւր չքաւոր դրութեամբ անգամ նշանաւոր նպաստներ կտայ իւրեանց գիւղերի վանքերը նորոգելու համար։

Կարսի Վիճակում Հոգևոր իշխանութիւնից ճանաչուած, իբրև թէ կանոնաւոր դպրոցների թիւը միայն տասն է։ Բացի սոցանից գիւղական օդաների[279] մէջ մասնաւոր դասատուութեամբ պարապում են թափառական ուսուցիչներ, մեծ մասամբ տաճկահպատակ հայ երիտասարդներից, որոնք ամենաչնչին վարձատրութեամբ գրավարժութիւն են տարածում ժողովրդեան մէջ։ Այս տեսակ դպրոցները հոգևոր իշխանութեան իրաւասութիւնից դուրս լինելով, ազատ են մնացել ցայսօր մարմնաւոր իշխանութեան հսկողութիւնից։

Երևանի թեմի համար, որի մէջն է նաև Կարսի Վիճակը, նշանակուած է մի թեմական տեսուչ, որին ենթարկւում են բոլոր կանոնաւոր ճանաչուած դպրոցները։ Սոցա կառավարութեան գործում ոչ միայն Երևանի թեմի վիճակների փոխանորդները, այլև Երևանի թեմականի փոխանորդը մինչև վերջին ամիսներս չէին խառնւում։ Այս տեսակ կառավարութեան եղանակը շատ անյարմարութիւններ ունի, որովհետև Երևանի թեմը շատ ընդարձակ է և թեմական տեսուչը անձամբ ամեն անգամ այցելել իւր դպրոցները չի կարող, այցելած ժամանակն էլ երկար ժամանակ մնալ չի կարող, ուստի և բոլոր գործը մեծ մասամբ գրագրութեամբ է կատարւում, որ մեր մէջ գրեթէ ապարդիւն մի բան է։ Միւս վիճակները մի կողմը թողած, Կարսի Վիճակի համար կասեմ, որ՝ եթէ այստեղ մի առանձին կառավարիչ լինէր, որ յաճախ կարողանար գիւղերը այցելել և խրախուսել ժողովրդեան, փոխանակ տասը դպրոցի մենք կունենայինք մի քանի տասնեակ, գոնեայ մասնաւոր դպրոցները կկառավարուէին, եթէ այդ էլ չէ՝ եղածները բարեկարգ դրութեան մէջ կլինէին, որոնցից շատ և շատ զուրկ են մեր վիճակի դպրոցները։ Առանձին ուշադրութեան արժանի երևոյթ է, որ մեր ուսուցչաց և ուսուցչուհեաց մեծ մասը անպատրաստ են իւրեանց կոչման և պաշտօնի համար, ուստի և մեծ հսկողութեան պէտք ունին։

Կարսի Վիճակի ժողովրդեան մեծագոյն մասը գաղթականներ են, որոնք գաղթել են վերջին տաճկական պատերազմից յետոյ։ Կարս քաղաքի մէջ բնիկները մի քանի տասնեակ տուն են միայն, մինչդեռ քաղաքումս հաշւում են մօտ հազար տուն բնակիչ։ Իսկ գիւղերի մէջ շատ քչերը կան, որոնց բնակիչները մի գիւղից գաղթած լինին, այլ իւրաքանչիւր գիւղի մէջ զանազան գիւղերի, նոյն իսկ գաւառների բնակիչներ կան։ Խառնուրդը չէր կարող նպաստել բնականաբար ընկերավարական մի մարմին կազմելու գիւղական հասարակութիւնից, այլ

[279] Օդա – հին տների մէջ այն բաժանմունքը, որ յատկացրած է ճաշելու, հիւրեր ընդունելու, քնելու համար :

ընդհակառակը, մի գիւղի մէջ ժողովուել է բազմաբարբառ և տարբեր սովորութիւններով մի ժողովուրդ, որ հեռու է հասարակական շահեր ճանաչելու գաղափարից։

Բոլոր գիւղերը մի ընդհանուր յատկանիշ ունեն, այն էլ ոչ ի նպաստ նոցա հոգևոր զարգացման, այն է՝ բոլորն էլ, շատ սակաւ բացառութեամբ, եկեղեցասէր չեն։ Ապացոյց այս ցաւալի դրութեան կարող էն ծառայել մեր վիճակի անշուք եկեղեցիները և այն մեծ դժուարութիւնը, որ ես կրել եմ եկեղեցի չեղած տեղերում եկեղեցի շինել տալու համար։ Իւրեանք բացատրում են այս հանգամանքը նորանով, որ Տաճկահայաստանի մէջ, որտեղից որ գաղթել են, մեծաւ մասամբ եկեղեցիներ չեն ունեցել կամ, եթէ ունեցել էլ են, բռնութեանց պատճառով ստիպուած են եղել միշտ անշուք պահելու։ Գիւղերում սովորաբար ժամերգութեանց մի երկու մարդ հազիւ ժամ են գալիս, նոյն իսկ Ս. Պատարագի ժամանակ եկեղեցի մտնող չկայ, այնքան որ խորթացել և սառել է ժողովուրդը եկեղեցուց։

Այս կորստաբեր երևոյթի պատճառները անշուշտ շատ են և գլխաւորապէս մեր հոգևորականութեան անկեալ վիճակն է հասցրել մեր բարեպաշտ ժողովուրդը այս դատապարտելի անտարբերութեան։ Կարծես անդառնալի կերպով անցել է այն ժամանակը, երբ հոգևորականներն էին առաջնորդում ժողովրդեան. այսօր հովիւն է հետևում իւր հօտին։

Այս անտարբերութեան առաջին հետևանքը այն է, որ բողոքականութիւնը բաւական որսեր է անում միամիտ ժողովրդեան մէջ։ Բաւական է, որ մի տգէտ բողոքական մտնի գիւղական հասարակութեան մէջ և մի քանի խօսք ասէ, թէ՝ պասը աւելորդ է, սրբերի պատկերները Քրիստոսի օրինաց հակառակ են, քահանայից տուրք տալ հարկաւոր չէ և մի քանի այսպիսի առարկութիւններ, և ահա՛ մի քանիսը խմորւում են և իւրեանք էլ այնուհետև քարոզիչ են դառնում։ Դժբախտաբար մեր վիճակում Ղարաղալա[280] անունով մի գիւղ կայ, որ յատկացրել է կառավարութիւնը Ալեքսանդրապոլից հալածուած հայ-բողոքականներին։ Այս գիւղացիք ամեն տեղ մտնում են և կարողանում են իւրեանց թակարդի մէջ ձգել միամիտներին, իսկ մեր քահանաները անզօր են նոցա դիմադրելու։

Հայ-կաթոլիկները աւելի շատ են այստեղ, ունին եկեղեցիներ, քահանաներ։ Նոքա չեն պարապում մարդորսութեամբ։

Յունադաւանութիւն ընդունող Կարսի վիճակում չկայ։ Բայց ցաւելով պէտք է ասել, որ այդ դեռ ապացոյց չէ մեր ժողովրդեան դէպի իւր կրօնը ունեցած ջերմեռանդութեանը, որովհետև շատ անգամ պատահում է լսել մի գռեհիկ գիւղացուց, թէ նա յունադաւանութիւն

[280] Ղարաղալա, Կարակալա – Կարսի մարզում կային շուրջ 10 հատ համանուն գիւղեր։

կընդունէ, երբ նորա որևէ խնդիրը՝ լինի այդ իրաւացի թէ անիրաւացի, մերժում է Հոգևոր իշխանութիւնը: Խօսքից գործի դեռ չի անցնում հայ գիւղացին, բայց շատ ցաւալի է, որ այդ խօսքը շատ յաճախ է կրկնւում: Նոյնը լսւում է իբրև խօսք նոր գաղթականներից, որոնք վերջին ժամանակները բազմաթիւ ընտանիքներով գալիս են Ալաշկերտից: Սոքա տեղ են խնդրում կառավարութիւնից և չեն ծածկում ոչ ոքից իւրեանց միտքը, ասելով թէ՝ յետ դառնալ չեն կարող, Ռուսաստանի խորքերը գնալ չեն կամենում, այլ պէտք է ամեն կերպ աշխատեն մնալու Կարսի կամ Կովկասի այլ յարմարաւոր նահանգներում և թէ իւրեանց նպատակին հասնելու համար նոքա պատրաստեն յունադաւանութիւն ընդունել, որովհետև, արդարանում են նոքա, լաւ է քրիստոնեայ մնալ և յունադաւան լինել, քան Տաճկաստանում մահմեդականութիւն ընդունելու պարտաւորուել:

Այսպիսի հոգևոր անտարբերութեան հասած ժողովրդից դժուար է պահանջել, որ սերտ կապ ունենայ Մայր Աթոռոյ հետ և նորա համար սահմանեալ տուրքերը սիրով և յօժարութեամբ հատուցանէ: Այդ պատճառով էլ արդիւնքի կողմից Կարսի վիճակը ամենայետին տեղերից մինն է բռնում մեր վիճակների մէջ: Անցեալ՝ 1892 թուականին հազիւ կարողացայ ուղարկել Ս. Սինոդին մի հազար ռուբլի վիճակային արդիւնքից: Բայց այս ժամանակաւոր է, եթէ հսկողութիւնը կանոնաւոր լինի և եթէ մանաւանդ մի քանի աչալուրջ գործակալ քահանաներ ունենանք վիճակի մէջ՝ արդիւնքը սպասածից շատ աւելի կանցնի: Արդարև, ժողովուրդը խեղճ է, մանաւանդ այս երկու վերջին տարիները երաշտութիւն, մահտարաժամ և կառավարութեան կողմից մեծամեծ տուգանքներ միմեանց վերայ կուտակուելով վերին աստիճանի աղքատութեան հասցրին ժողովուրդը: Բայց այդ ամենը անցաւոր երևոյթներ են և այդ դրութիւնը հետզհետէ կբարւոքուի անշուշտ և աթոռապատկան հասոյթներն էլ կաճին, եթէ միայն հաւատարիմ և սրտացաւ մարդոց ձեռքով ժողովելու լինենք, մեզ պակասում են այդպիսիները:

Ժողովրդական բարոյական վիճակը շատ աննախանձելի դրութեան մէջ է: Ընտանեկան սրբութիւնը, որով պարծենում է հայը, չէ պահպանուել Կարսի վիճակում: Ապօրինի կենակցութիւն, առ կենդանութեամբ կնոջ մի այլ կին տուն բերել, աղջիկ փախցնել, հաս ու չհասի չնայել և այլ այսպիսի չարութեանց օրինակներ գրեթէ ընդհանուր ցաւեր են ամեն տեղ:

Շատ անգամ անպսակ են մնում ոչ թէ մի օրինաւոր արգելքի պատճառով, այլ առանց պատճառի, կպսակուենք, պատասխանում են այդպիսիները, այժմ ժամանակ չունենք:

Երկրորդ կին են բերում տուն և երբեմն էլ օրինաւոր կնոջ ներկայութեամբ մի յարկի տակ ապրում են մեծ մասամբ իւրեանց հարազատ

կանանց չբերութեան պատճառով, յաճախ էլ նոցա հիւանդութեան կամ տգեղութեան պատճառով։ Պատահում է և այնպէս, որ կինն է թողնում մարդուն և հեռանում տանից մի ուրիշի հետ կենակցելու համար, մարդն էլ մի այլ կին է բերում տուն։

Աղջիկ փախցնելը, մանաւանդ նշանադրուած աղջիկներից, սովորական երևոյթ է։ Այս տգեղ սովորութիւնը առաջ է գալիս այս հանգամանքից, որ առանց բաշլըղ[281] անուանեալ տուրքի աղջիկ չեն տալիս, իսկ այդ տուրքը երբեմն հասնում է մի քանի հարիւր ռուբլու։

Բաշըղի մասին շատ անգամ արգելքներ են դրուած և նոյն իսկ ժողովուրդը պատրաստակամութիւն է ցոյց տուել վերջացնելու, բայց դարձեալ շարունակւում է և պատճառ է լինում՝ մի կողմից ժողովրդեան վարքի և բարքի ապականութեան, միւս կողմից աղքատութեան։

Յընթացս երկուամեայ պաշտօնավարութեանս բազմաթիւ տգեղ երևոյթների եմ հանդիպել և թէև մի քանի տասնեակ ապօրինի կենակցութեան վերջ եմ դրել, բայց դեռ շարունակւում է և օր աւուր նորերս են առաջ գալիս։

Ս. Սինոդի կարգադրութեամբ ապօրինի կենակիցները զրկուած են եկեղեցւոյ Ս. խորհուրդներից, միայն նոցա երեխայքն են մկրտւում եկեղեցւոյ մէջ, քահանայք չեն գնում նոցա տները և վերջին թոշակին են արժանի լինում, առանց եկեղեցական հանդիսի թաղուելով։ Այս բոլորը քահանայից անհոգութիւնից և շահասիրութիւնից ամեն տեղ չի կատարւում, ապա թէ ոչ, շատ զօրաւոր միջոց է այդպիսիների դէմ։ Յանցանքը միայն մեր վիճակի քահանաների մէջ չպէտք է որոնել, բուն պատճառը ինքը ժողովուրդն է, որ թեթև աչքով է նայում ապօրինի կեանքի և կենակիցների վերայ և այդպիսիների հետ պահպանում է իւր յարաբերութիւնը, իբրև թէ խրախուսելով միւսներին էլ նոյնը անելու։ Այս էլ կայ, որ երբ ապօրինի կենակիցները հարուստ են կամ հասարակութեան մէջ դիրք ունեցող անձնաւորութիւններ՝ հոգևորականներն էլ, աշխարհականներն էլ առ ոչինչ են համարում նոցա յանցանքը և տուժողներն են միայն աղքատները, բնականաբար այս վերջիններն էլ երես են առնում և շարունակելով իւրեանց արարմունքը, միւսների համար գայթակղութեան պատճառ են լինում։

Մի տգեղ սովորութիւն էլ կայ, որի դէմ շատերն են մաքառել և դեռ չի յաջողուել իսպառ վերջացնելու, չնայելով որ այս խնդրում մարմնաւոր իշխանութիւնը ամեն կերպ օժանդակում է մեզ։ Խօսքս այլ և այլ սրբութիւններ, մեծ մասամբ աւետարաններ և նարեկներ, երբեմն էլ անյայտ մասունքներով խաչեր տների մէջ պահելու մասին է, որոնցով սեփականատէրերը շահում են՝ յօգուտ իւրեանց նուէր-

[281] Բաշլըղ, խալան – գին (դրամով կամ իրերով), որ փեսացուն վճարում էր աղջիկը գնելու համար. վարձանք, գլխագին:

ներ ընդունելով։ Շատ տեղերում ուղղակի բռնութեամբ հանել եմ այդ սրբութիւնները և եկեղեցի տարել, որովհետև համոզել անկարելի է լինում, քանի որ շահի խնդիր է։ Այս էլ երբեմն չի օգնում, ժողովուրդը շարունակում է այնուհետև օթևանին ուխտ գնալ և շատ քչերը միայն եկեղեցի կմտնեն՝ սրբութեանց առաջ իւրեանց ուխտը կատարելու։

Վերջացնելով այս համառօտ տեղեկագիրը Կարուց վիճակի ներկայ դրութեան մասին, սեպուհ պարտաւորութիւն համարիմ ամենախոնարհաբար հայցելու Սրբազնասուրբ Վեհափառութեանդ բարեհաճութիւնը տեղեկագրիս մէջ շօշափած հետևեալ կէտերի մասին.

Ա. Կարուց փոխանորդութիւնը բաժանել Երևանի թեմից և առանձին թեմ կազմել առաջնորդով և կոնսիստորիայով։

Բ. Կարս քաղաքի կառուցանելիք եկեղեցւոյ տեղի մասին միջնորդել առաջի Բարձրագոյն իշխանութեան։

Գ. Վիճակիս վանքերից մինի մէջ մի ընծայարան բանալ՝ վիճակիս գիւղերի համար քահանայացուներ պատրաստելու նպատակով։

Դ. Քահանայից համար միջնորդել, որ ընդունենք ուրիշ գաւառներից կարսի նահանգը փոխադրելու թոյլտուութիւն լինի։

Ե. Քահանայից հողի խնդիրը կառավարութեան միջոցով յօգուտ նոցա վճռել տալ՝ համաձայն տէրութեան օրինաց։

Զ. Բէշքիլիսային, Անւոյ, Տեկոռին, Վարդիկհօր և Կարսի Ս. Աստուածածին եկեղեցւոյն յատկացրած հողերի մասին միջնորդել, որ դիմեն Բարձրագոյն հաստատութեան համար։

Է. Մրէնի վանքի նորոգութեան համար թոյլտուութիւն ստանալ ժողովարարութիւն անելու։

Ը. Հայոց հին վանքերը պահպանելու համար մի ընկերութիւն կազմել։

Ժ. Տաճկահայաստանից աւերիչ գաղթականութեան առաջն առնել։

Ժա. Բաշլղ անուանեալ տուրքը արգելել, և

Ժբ. Տներում պահած սրբութիւնները հրամայել եկեղեցիների մէջ բազմեցնել։

Թէև այս չեն միայն Կարուց վիճակի ցաւերը, սակայն ըստ իս սոքա են աչքի ընկնող և էական խնդիրները, որոնք կարօտ են Վեհափառ Տէրութեանդ Հայրապետական խնամոց և բարեհաճ տնօրէնութեանը։

Փոխանորդ Վիճակին Կարուց՝ Նահապետ աբեղայ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թթ. 28-33 շրջ.։

№ - 135
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՌԱԶՄԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱՁՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ՎԱՆՔԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՈՒՈՂ ՀՈՂԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 214 *20 սեպտեմբերի 1893 թ.*
Թիֆլիս

Председатель Комиссии для окончания сословно-поземельного вопроса в частях Кавказского края военно-народного управления
В Эчмиадзинский Армяно-Григорианский Синод

Член Синода епископ Еремия, письмом от *3* августа сего года за №*169,* просил г. Главноначальствующего гражданскою частью на Кавказе об исходатайствовании Высочайшего соизволения на обеспечение некоторых армяно-григорианских монастырей и церквей Карсской области земельными угодьями из тех казенных участков, кои были отведены в их временное пользование.

По докладе сего письма генерал-адъютанту Шереметеву, Его Превосходительство изволил приказать уведомить Синод, что состоящие во временном пользовании армяно-григорианских монастырей и церквей казенные земельные участки Карсской области, в силу общего правительственного распоряжения, подлежат передаче, наравне со всеми остальными казенными землями названной области, в ведение учреждений Министерства государственных имуществ. Посему, если некоторые из монастырей и церквей, находящихся в Карсской области, нуждаются в материальном обеспечении, то от армяно-григорианского духовного начальства зависит возбудить в установленном порядке, по предварительном, сношение с Эриванско-Карсским управлением Государственных имуществ[282] ходатайство о наделении их казенными землями, с представлением подробных сведений отдельно по каждому монастырю, как относительно его нужд, так и средств имеющихся и недостающих для их удовлетворения.

Сообщая о вышеизложенном Синоду, имею честь присовокупить, что генерал-адъютант Шереметев не изволил признать возможным

[282] Երևանի նահանգի և Կարսի մարզի հողագործութեան և պետական գոյքերի վարչութիւն – 1828-ին հիմնուեց Հայկական Մարզի Վարչութիւնը, որը, ի թիւս այլ հարցերի, զբաղւում էր նաև արքունի գիւղացիութեան և պետական գոյքի հարցերով: 1833 թ. ստեղծուեց յատուկ վարչութիւն, որը զբաղւում էր Հայկական մարզի պետական գոյքով և եկամուտներով: 1866 թ. կազմաւորուեց Երևանի նահանգի հողագործութեան և պետական գոյքերի վարչութիւնը, որը 1889 թ. հոկտեմբերին վերանուանուեց Երևանի նահանգի և Կարսի մարզի հողագործութեան և պետական գոյքերի վարչութիւն: Լուծարուել է 1918 թ. յուլիսի 1-ին:

останавливать начатую передачу в ведение подлежащих учреждений Министерства Государственных имуществ казенных земель Карсской области, как свободных, так и состоящих в пользовании, временном или постоянном, лиц, учреждений и обществ.

Посему Военному губернатору предложено уведомить Карсское армяно-григорианское духовное правление о предстоящей сдаче земель, временно отведенных монастырям и церквам, с предварением, что в случае неявки к назначенному сроку уполномоченного от Правления для присутствования при передаче участков, таковая будет произведена без него, в установленном порядке.

Председатель комиссии
Статский советник Вейденбаум
Делопроизводитель Г. К.

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թթ. 26-27, բնագիր, ձեռագիր:

№ -136
ԱՆԻԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՆԱՀԱՅՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՄԿՐՏԻՉ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՆԻԻ ՎԱՆՔԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԻ ԵԿԱՄՈՒՏԸ ԻՐԵՆՑ ՄՕՏ ԹՈՂՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 8 *28 հոկտեմբերի 1893 թ.*
Անի

Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Տեառն Տեառն Մկրտչի
Ի վանահօրէ Ս. Լուսաւորչի վանից Անւոյ
Յայտարարութիւն

Համաձայն պատուիրանի Ձերդ Վեհափառութեան՝ որ յամին 1873, մեկնեալ եմ ի Ս. Երուսաղիմայ եկի ի Շիրակ գաւառ և մտի ի վարումն պաշտաման վանահայրութեան վանից Հոռոմոսի: Ի 1885 ամի Սինոդն Ս. Էջմիածնի հրամանաւ յ7 սեպտեմբերի ընդ համարաւ 2747, կարգեաց զիս ի պաշտօն վանահայրութեան Ս. Լուսաւորիչ մենաստանին Անւոյ՝ պարաւանդելով «արդիւնաւորել զկայս և զկալուածս վանից և պահպանել զմնացորդս հանրահռչակ մեծագործութեանց նախնեաց մերոց»: Յետ որոյ ըստ տնօրէնութեան Քաղաքական իշխանութեան յամի 1886 յատկացուցաւ վանից 100 դեսեատին վարելահող արտաքոյ պարսպին, ընդ որ և զարօտատեղին պարսպամիջի: Այսոցունց աննշան հողացն տարեկան արդեամբք հնար լինէր ինձ տակաւ առ տակաւ[283] կարկատել և պահպանել զմնացորդս աւերակացն Անւոյ և

283 Տակաւ առ տակաւ – քիչ առ քիչ, կամաց-կամաց, հետզհետէ :

հետևաբար հոգալ զկարիս իմ և զծառայից իմոց: Իսկ այժմ ցաւօք սրտի ծանուցանեմ Վեհափառութեանդ, զի կարգադրութեամբ Քաղաքական իշխանութեան վանորայք Շիրակայ, ի թիւս որոց և վանքն Անւոյ, զրկելոց են յամենայն արօտից և հողոց:

Արդ՝ ծանուցեալ զայսմանէ Ձերդ Վեհափառութեան ընդ սմին մատուցանեմ զպատճէն հրամանաթղթոյ կառավարութեան՝ ըստ որոց յանձնեալ է մենաստանին Անւոյ 100 դեսեատին հողն, և խոնարհաբար հայցեմ զարժանին տնօրէնութիւն Ձեր, զի եթէ հնարաւոր է, յիշեալ աննշան քանակ հողն թողացուի սեփականութիւն մենաստանին Անւոյ, առանց որոյ չէ երբէք հնարաւոր պահպանել զբեկորս յիշատակաց նախնեաց կամ ազատել զայնս յամենակործան ձեռաց շրջակայ մահմեդականաց, որք ջանան իսպառ ջնջել զհետս փշրանաց նախնեաց մերոց:

Վանահայր Անւոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ՝
Ներսէս վարդապետ Տիգրանեանց

Մակագրութիւն. *Յանձնեմք Սինոդին:*

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց. Հոկտեմբերի 9, 1893 ամի

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 28 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 137
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱՁՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՒԵԼԻՔ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ ԻՐԵՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1046 *11 նոյեմբերի 1893 թ.*
Կարս

В Эчмиадзинский Армяно-Григорианский Синод

По встретившейся надобности, имею честь просить Эчмиадзинский армяно-Григорианский Синод не оставить выслать ко мне в самом непродолжительном времени препровожденный названному Синоду при отзыве Военного Губернатора Карсской области от *27* июля *1892*г. за №*779* проект, с пояснительною к нему запискою, на сооружение Армяно-григорианской во имя Св. Христа Спасителя церкви в Карсе, каковой проект, по миновании в нем надобности, будет мною возвращен обратно в Синод[284].

[284] 1893 թ. նոյեմբերի 25-ին Սինոդը հետևեալ գրութիւնն է առաքել Կարսի մարզի զինուորական նահանգապետին. «Вследствие отношения от 11 сего ноября за №1046, Эчмиадзинский Синод имеет честь при сем препроводить к Вашему Превосходительству проект на сооружение Армяно-григорианской во имя Св. Христа Спасителя церкви в гор. Карсе с пояснительною к нему запискою» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թթ. 87շրջ.-88):

За отсутствием Военного губернатора, помощник его генерал-майор Петандер

За делопроизводителя, князь[285]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8584, թ. 86, բնագիր, ձեռագիր:

№ - 138
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԸ ՎԱՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 4136 *10 դեկտեմբերի 1893 թ.*
Ս. Էջմիածին

Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տեառն Տեառն Մկրտչի Առաջնոյ
ի Սինոդէ Ս. Էջմիածնի
Յայտարարութիւն

Ըստ տնօրէնութեան Քաղաքական իշխանութեան բարձեալ են ի շահեկանութենէ վանորէից և եկեղեցեաց Հայոց կարուց հողք՝ յատկացեալք յարքունական հողոց, թողլով միայն զայնոսիկ հողս, որոց ունի իրաւունս տիրելոյ ըստ կալուածագրոց կառավարութեանն Տաճկաց: Ի թիւ բարձեալ հողոց գտանի և բանջարանոցն Հոռոմոսի վանից տարածութեամբ, իբրև հինգ դեսեատին, որով շահիւր վանքն այն որպէս սեպհականութիւն իւր մինչ ց 1885 ամն, բայց այժմ տիրեն այնմիկ բնակիչք Ղույուճուխ գիւղը:

Բանջարանոցդ այդ գտանելով առընթեր ջրաղացից վանացն՝ վնաս մեծ հասանէ վանոցն, եթէ իսպառ տիրեսցեն նմին օտարք, քանզի միակ աղբիւր ապրուստի վանացն է կալուածը այդ, թէև գոյ այլևս կալուած Տայլար անուամբ, բայց մուտք նորին յատկացեալ են յօգուտ ճեմարանի Մայր Աթոռոյ, ուստի Սինոդս ըստ օրագրոյ իւրում ի 14-ն նոյեմբերի անցելոյ ամենախոնարհաբար խնդրէ զբարեհաճութիւն Ձերդ Վեհափառութեան վասն միջնորդելու առ ով անկէ յաղագս թողլոյ զբանջարանոցն զայն ի շահեկանութիւն Հոռոմոսի (Ղօշավանք) վանից:

Անդամք Սինոդի՝ Երեմիա եպիսկոպոս
Արիստակէս եպիսկոպոս
Սարգիս եպիսկոպոս[286]

---

[285] Ստորագրութիւնն անընթեռնելի է:

[286] Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեան – յետագայում՝ արքեպիսկոպոս: Ծնուել է 1834 թ. Ապարանի Ղարաբուլաղ գիւղում – մահացել է 1899 թ. սեպտեմբերի 3-ին հայրենի գիւղում: Սովորել է Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցում: 1851 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1856 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1857-

Արիստակէս եպիսկոպոս[287]
Ներսէս վարդապետ
Վահան վարդապետ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թ. 35 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 139
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս.ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ԵՒ ՎԱՆՔԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1234 *11 դեկտեմբերի 1893 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի ի Փոխանորդէ Վիճակիս Հայոց Կարուց Յայտարարութիւն

Ի կատարումն առաջադրութեան Տնտեսական մասին Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի ի 18 նոյեմբերի անցելոյ N 3807[288], պատիւ անձին վարկանեմ խոնարհաբար ծանուցանել, թէ՝ 1. Վանքն Անւոյ ունի զմի վանահայր, տնտես, ծառայ և դպիր և հայթայթէր զսնունդ միաբանութեանն և այցելուաց միմիայն արդեամբք հողոյն, բայց ըստ տնօրէնութեան քաղաքական իշխանութեան յայսմիկ ամի զրկեալ է յիրաւանց օգտաւէտութեան նորին. ծախք լինի առ մի ամս 5-600 րուբլիս,

---

1864 թթ. եղել է Սինոդի անդամ: 1865 թ. նշանակուել է Տաթևի վանքի վանահայր, 1868 թ.՝ Ղրիմի Ս. Խաչվանքի կառավարիչ: 1869 թ. նշանակուել է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի Կոնսիստորիայի անդամ, 1872 թ.՝ թեմի կառավարիչ: 1877 թ. նշանակուել է Նուխիի առաջնորդական փոխանորդ և այդ պաշտօնը վարել մինչև 1883 թ., ապա կանչուել Էջմիածին և նշանակուել վանական կառավարութեան անդամ մինչև 1888 թ.: 1886 թ. յունուարին ստացել է եպիսկոպոսի աստիճան և նոյեմբերին հաստատուել Սինոդի անդամ: 1891 թ. նշանակուել է Գէորգեան ճեմարանի տեսուչ: 1897 թ. արժանացել է արքեպիսկոպոսի պատուի:

287 Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան (1844, Խալֆալու-1906, Աստրախան) – 1861 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1865 թ.՝ կուսակրօն քահանայ: 1866 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները և ուղարկուել Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմ: 1882 թ. մայիսի 9-ին ձեռնադրուել է եպիսկոպոս Գէորգ Դ. Քերեսթէճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ, 1895 թ. օգոստոսի 29-ին Մկրտիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն արժանացել արքութեան պատուին: Վարել է զանազան պաշտօններ՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ, Տաթևի վիճակի փոխանորդ, Նախիջևանի գաւառի Ս. Կարապետ, Վաղարշապատի Ս. Գայիանէ և Ս. Շողակաթ վանքերի վանահայր, Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ, Մայր Աթոռի Սինոդի անդամ, Գէորգեան Հոգևոր Ճեմարանի և Ներսիսեան Հոգևոր Դպրոցի ուսուցիչ և այլն: Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսի՝ 1895 թ. յունիսի 8-ի կոնդակով նշանակուել է Աստրախանի թեմի առաջնորդ և այդ պաշտօնում մնացել մինչև վախճանումը:

288 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 31:

իսկ մուտք հազիւ երկու հարիւր րուբլի յայցելուաց և յուխտաւորաց, հետևաբար և յայսմհետէ ո՛չ կարէ միաբանութիւնն լցուցանել զկարիս իւր պատահական տրօքն. 2. Մենաստանն Խծկոնից (Բէշքիլիսա) ունի զերկու վարդապետս և զչորս ստորին միաբանս կամ ստորին պաշտօնեայս, մատակարարէր զպիտոյս գոյութեան իւրոյ արդեամբք 250 օրավար հողոյն, յորմէ օգտաւէտութենէ զրկեալ է արդէն ծախք առ մի ամս լինի մերձաւորապէս եօթն հարիւր րուբլիս, իսկ պատահական մուտքն՝ հաշուի առ առաւելն մի հարիւր յիսուն րուբլի. 3. Վանքն Տիկոռա՝ թէև չունի միաբանութիւն, սակայն արդեամբ 283 օրավար «Հասան-ջան» անուանեալ հողոյն վերանորոգելոց էր հնաշէն սրբավայրն տեղւոյն, առ այդ նպատակ և լեալ էր միջնորդութիւն Գերապատիւ Սուքիաս Սրբազանի Պարզեանց ի յատկացումն յիշատակեալ հողոյն. 4. Վանքն Բագնայրի (Ղօզլիճա) մնայ ցարդ առանց միաբանութեան կամ գէթ միոյ վանականի, որպէս պահապանի սրբավայրիցն յապականութենէ և ի կործանմանէ մարազգեաց, որովհետև չունի բնաւ հող կամ կալուած ինչ, որով կարողանայր հայթայթել զպիտոյս կարօտութեան միաբանութեան. 5. Հռչակաւոր և պանծալի կաթողիկէն Մրէնու՝ չունի զկալուած ինչ, թէև քանիցս նշանակեալ են ի կողմանէ Հոգևոր Վարչութեան վանահայր վանուցն, սակայն ի պատճառս չքաւորութեան մենաստանին անկարացեալ են կեալ անդէն և վարել զպաշտօնս իւրեանց և 6. Վանքն Ալէմու կամ Ալամանու, որ ի շրջանին Նախիջևանու գաւառին կաղզուանու, նոյնպէս ի պատճառս զուրկ լինելոյ յաղբիւրէ արդեանց ցայսօր ժամանակի մնայ ի ձեռս պարսիկ ազգաբնակութեան գեղջն, և հետզհետէ մատնի կործանման և քայքայման: Այնպիսի հանգամանաց ենթակայ գտանին և ոչ սակաւ քանակութեամբ, վանորայք ի կողմանս Բասենու, Երասխաձորոյ և Շիրակայ:

Ի դէպ կարևոր վարկանեմ յայտ առնել սրբազան ատենիդ թէ՝ որպէս երևի ի գրութենէ դիւանատան Պ. Կառավարչապետին Կովկասու ի 18-ն օգոստոսի 1883 ամի N *628*[289]*, (պատճէն որոյ գտանի ի գործս դորին) յանուն Գերապատիւ Առաջնորդին Կարս և Բաթում վիճակաց, ըստ որոշման իշխան Դօնդուկով-Կորսակովի՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կարս քաղաքի յատկացեալ մի հարիւր դեսեատին վարելահողն տուեալ էր ի տեղի Ղարաղալէ հողոյն, փաստաթուղթ որոյ Մասնաժողովն ճանաչեալ էր կեղծեալ:*

Փոխանորդ վիճակին՝ Նահապետ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 163, թ. 33 և շրջ., բնագիր, ձեռագիր:

289 Տես թիւ 55 փաստաթուղթը:

№- 140
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ԿԱՌՈՒՅՈՒԵԼԻՔ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԴՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԻՖԼԻՍ ՄԵԿՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 1282 *16 դեկտեմբերի 1893 թ.*
Կարս

Նորին Վեհափառութեան Սրբազնակատար Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Ս. էջմիածնի
Տ.Տ. Մկրտիչ Ա.
ի Փոխանորդէ Վիճակին Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ձինուորական Պ. Նահանգապետն Կարսայ յայտնեաց ինձ թէ՝ ի պետս կառուցանելի եկեղեցւոյ Հայոց ի Կարս քաղաքի հրաւիրեալ է ի Տփխիս, վասն մասնակցելոյ առ այդ կազմեալ Մասնաժողովոյ, ուստի խնդրեաց յինէն ի հարկաւոր դէպս ուղևորիլ ի Տփխիս առ ի տալ զինչ ինչ բացատրութիւն գտեղւոյն յիշատակեալ եկեղեցւոյ։

Խոնարհաբար ծանուցանելով զվերոգրելոցն Վեհափառութեան Ձերում, պատիւ անձին վարկանեմ հայցել զթոյլտուութիւն Ձեր յաղագս ի պահանջեալ հարկին գնալոյ ի Տփխիս։

Փոխանորդ Վիճակին՝ Նահապետ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թ. 36, բնագիր, ձեռագիր:

№ - 141
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍԱՐԻՂԱՄԻՇ ԱՒԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 մարտի 1894 թ.
Ս. Էջմիածին

Ի 21 մարտի 1894 ամի. ըստ հրամանի Նորին կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ էջմիածնի լուան զգրութիւն դիւանատան Կառավարչապետի Քաղաքական մասին Կովկասի ի 28 մարտի 1892 ամի Թ. 3032[290] *որոյ թարգմանութիւնն է այսպէս. «Առ առաջարկութիւն յ7 հոկտեմբերի 1891 ամի Թ. 3839*[291] *դիւանատունս ըստ յանձնարարութեան Կառա-*

[290] Բնագիրը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8726, թ. 3:

[291] Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8726, թ. 2:

վարչապետի պատիւ ունի ծանուցանել Սինոդիդ՝ թէ միջնորդութիւն դորին՝ որ վասն կառուցանելոյ ի Սարիղամիշ գեղջ զեկեղեցի Հայոց, թողեալ է առանց բաւականութեան»: Տեղեկութիւն. ի գործոյն Թ. 105/91 տեսանի, զի Սինոդս միջնորդութիւնն այն հիմնեալ էր ի վերայ յայտարարութեան Կոնսիստորիայի Հայոց Երևանի որ ի 14 օգոստոսի 1891 ամի Թ. 2918[292]: Հրամայեցին վասն կառուցանելոյ զեկեղեցի Հայոց ի Սարիղամիշ գեղջ ամենախոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Հայրապետի Ամենայն Հայոց:

Նախագահ Սինոդի՝ Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց
Անդամք՝ Երեմիա եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս
Սարգիս եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս
Ներսէս վարդապետ, Վահան վարդապետ
Ատենադպիր՝ Ս. Փիլիպպոսեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8726, թ. 6, բնագիր, ձեռագիր:

№ - 142
ԷՆՐՈՒԿ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա.ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԻՐԵՆՑ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 ապրիլի 1894 թ.
Էնրուկ

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մկրտիչ Ա.
Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Կարսու գաւառի Օլթի շրջանի էնրուկ գիւղի բնակիչներից
խոնարհ խնդիր

Պաշտելի Հայրի՛կ,

Մեր էնրուկ գիւղը բաղկացած է տասն և հինգ տուն բնակիչներից, որովհետև նոր բնակիչներ ենք, չունենք եկեղեցի, տեսնելով մեր դառն վիճակը որ զուրկ ենք այս քանի տարի հոգևոր մխիթարութիւնից, դիմեցինք Կարսի Հոգևոր Կառավարութեան որպէս զի տնօրինէ մեզ համար եկեղեցի շինելու, Կարսի Հոգևոր Կառավարութիւնն ընդունելով մեր աղերսագիրը տնօրինեց, և մեր բնակիչներից երկու մարդ կարգեց հոգաբարձու, այն է՝ Յարութիւնի Միքայէլեանց և Գրիգորի Աբրահամեանց, տալով նոցա ժապաւինեալ տումար, ստորագրով արժանապատիւ Նահապետ վարդապետի և կնքով Հոգևոր Կառավարութեան, որպէս զի շրջագայելով հանգանակութիւն առնենք բարեպաշտ ժողովրդոց մէջ մեր հոգևոր մխիթարութեան գործի համար որ կարողանանք գլուխ հանել այս սուրբ և նուիրական գործը, Հոգաբարձուները առնելով այդ ժապաւինեալ տումարը ուր ուրեք

[292] Տես թիւ 120 փաստաթուղթը:

որ դիմում են սառնասրտութեամբ են նայում, ինչպէս եկանք Ալեքսանդրապոլ տեղւոյն յաջորդին ներկայացրինք ժապաւինեալ տումարն բայց ոչինչ օգնութիւն չստացանք, վասն որոյ պաշտելի Հայրիկ, դիմում ենք պաղատախառն սրտիւ Հայրութեանդ ոտքը, և աղաչում, Ձերդ Հայրութիւնն տնօրինէք, մեր այս հոգևոր մխիթարութեան համար Ձերդ Բարձր տնօրէնութեամբ, քանի որ վաղուց է որ զուրկ ենք հոգևոր մխիթարութիւնից, թող ճանաչած լինենք մեր սուրբ եկեղեցին և մեր ազգութիւնը, եթէ մի քանի տարի այսպէս մնալու լինենք կարող ենք ասել որ մեր ինչ լինելը չենք կարող հասկանալ, վասն որոյ երախտապարտ սրտիւ աղօթենք առ Աստուած, երկարացնէ Ձեր կեանքի օրերը, և մենք ակնապիշ սպասենք Ձերոյին Բարձր տնօրէնութեան։

Ամենախոնարհ ծառայք՝ Յարութիւն Միքայէլեանց
Գրիգոր Աբրահամեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թ. 71 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 143
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆՐԱ ՄՕՏ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 7 *31 մայիսի 1894 թ.*
Կարս

Նորին Աստուածընտիր Վեհափառութեան Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ.Տ. Մկրտչի Ա. ի Փոխանորդէ Վիճակիս Հայոց Կարուց Յայտարարութիւն

Տեսանելով զի տաճկահայ գաղթականք օր ըստ օրէ բազմանան ընդ որում և սաստկանայ դառնութիւն վիճակի սոցա, հարկ համարեցի հրաւիրել ի ժողով զայն ամենայն անձինս, որք շրջին ի մէջ գաղթականաց և տքնին ըստ հնարաւորութեան մեղմելով զցաւս այնոցիկ սփոփել զնոսա։ Ի ժողով այսր էին առ իս անդամք Վարչութեան Բարեգործական Ընկերութեան[293], անդամք Մասնաժողովոյ մատակարարողքն կերակրոյ գաղթականաց քաղաքիս յընթացս բազմաց ամսոց և ոմանք ի ծխատէր քահանայից։

Յետ երկար խօսակցութեան ժողովն այս յանգեաւ ի հետևեալն եզրակացութեան՝ ընտրել զմի պատգամաւոր քաջ տեղեակս դրութեան և անխուսափելի հետևանաց գաղթականաց այնոցիկ և առաքել զնա առ Վեհափառութիւն Ձեր, առ ի անձամբ բերան ի բերան ամենախո-

[293] Խօսքը Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Կարսի մասնաճիւղի մասին է, որը բացուել է 1882 թ. (ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 28, թ. 1):

նարհ վստահութեամբ բացատրելոյ Աստուածընտիր Վեհ Օծութեան Ձերում զտխուր հանգամանս գաղթականութեանն այնորիկ, որք հաւաստի առնեն, որոց աչք ի գլուխ և ուշ ի խելապատակն զանմխիթար ապագայ դրութիւն նոցին, և լսել զհայրական և Հայրապետական բուռն ցանկութիւն Հօրդ լրութեան ազգիս զվիճակէ և զկենաց նոցին:

Արդ՝ զկնի խորհրդակցական եղրակացութեան ժողովն ընտրեաց ի միջոյ իւրմէ զմեծապատիւ Գէորգն էհրամճեան, որ և առաքի այսու առ Աստուածընտիր Վեհափառութիւն Ձեր:

Փոխանորդ Վիճակին Հայոց Կարուց՝ Նահապետ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թ. 52 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 144
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԲԱԳԱՐԱՆԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 576 *23 յունիսի 1894 թ.*

Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն Սրբոյ Էջմիածնի
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ի լրումն յայտարարութեան Հոգևոր Կառավարութեանս ի 11 Նոյեմբերի 1892 ամի N 933, և ի կատարումն հրամանագրութեան Տնտեսական մասին Ս. Սինոդիդ յ30-ն Նոյեմբերի նոյն ամի ընդ N 3916, Հոգևոր Կառավարութիւնս ետ իրաւունս Հոգաբարձութեանն վերաշինութեան Ս. Գէորգ եկեղեցւոյն Բագարանու: Հոգաբարձութիւնն այն կռեալ զպայմանագիր ընդ կապալառուի Դաւթի Սարգսեան, սկսեաց զշինութիւն եկեղեցւոյն ի հետևեալ 1893 ամի: Որպէս սովորութիւն էր ի վիճակիս՝ ի ժամ շինութեան կամ վերաշինութեան միոյ յեկեղեցեաց չհարցանել զտնօրէնութիւն կամ չխնդրել զթոյլտուութիւն քաղաքական իշխանութեան, նոյնպիսի սովորութեամբ Հոգևոր Կառավարութիւնս վարեցաւ և յայս դէպս ուստի և շինութիւն եկեղեցւոյն յառաջ ընթանայր և չորեքին որմունք նորին արդէն բարձրացեալ էին մերձ ի ձեղունակէտն, երբ Զինուորական Տ. Նահանգապետն Կարուց՝ հիմնեալ ի վերայ շրջաբերական կարգադրութեան Պ. Կառավարչապետին Կովկասու ի 23 յուլիսի N 17, գրութեամբ իւրով առ Հոգևոր Կառավարութիւնս ի 17 սեպտեմբերի նոյն ամի ընդ N 925, հաղորդեաց, զի ինքն դադարեցուցեալ է զշինութիւն եկեղեցւոյն Բագարանու և ըստ մտաց յիշեալ N 17 շրջաբերականի, Հոգևոր Կառավարութիւնս պարտ է ներկայացուցանել Նահանգական իշխանութեան զմակարդակ և զնախագիծ շինութեանն եկեղեցւոյն և յետ ստանալոյ զօրինական թոյլտուութիւն, ապա միայն կարէ շարունակել զշինութիւնն այն:

Ուստի Հոգևոր Կառավարութիւնս ընդ ձեռն նոյն Հոգաբարձութեան ետ նկարել զմակարդակ և զնախագիծ եկեղեցւոյն Բագարանու ըստ չափու և ըստ ձևոյ սկսեալ և մերձ ի կատար ածեալ շինութեանն, որ արդէն իսկ սկսեալ էր և ընդ գրութեան իւրոյ ի 27-ն մայիսի տարւոյս ընդ N 478, առաջի արար Տ. Զինուորական Նահանգապետին, որ գրութեամբ իւրով ի 14 ամսոյս N 436 առաքեալ է ի Ս. Սինոդդ ի պատշաճաւորն տնօրէնութիւն։

Համառօտակի և պատմաբանական ծանուցմամբ զհանգամանաց վերաշինութեան Ս. Գէորգ եկեղեցւոյն Բագարանու՝ Հոգևոր Կառավարութիւնս այսու պարտ ինքեան վարկանի ամենախոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն Ս. Ատենիդ առ ի շուտափոյթ հաստատել զառաջի արարեալն ի Տ. Նահանգապետէն կարուց զնախագիծ և զմակարդակ շինութեան նոյն եկեղեցւոյն, ըստ սահմանեալ օրինաց։

Նախագահ Հոգևոր Կառավարութեան՝ Նահապետ վարդապետ
Անդամ՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեան
Պաշտօնակատար քարտուղարի՝ Ս. Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8981, թ. 10 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 145
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՂԱՐԱՂԱԼ ԳԻՒՂԻ ՈՐՈՇ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԻՐՔԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՒ ԳԻՒՂՈՒՄ ԱՂՕԹԱՏՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 630 *8 յուլիսի 1894 թ.*
Կարս

Նորին Ս. Օծութեան
Վեհափառ Կաթուղիկոսին Ամենայն Հայոց Տ.Տ. Մկրտչի Առաջնոյ
Ի Փոխանորդէ Վիճակիս Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Բնակիչն Ղարաղալա գեղջ հայ-բողոքականաց Միքայէլն Աւետիսեան եկեալ առ իս յայտարար, զի ի սկզբանէ անտի ինքն լեալ է որդի Հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ և ապա ստիպեալ յայլ և այլ հանգամանաց և ի նկատի առեալ, զերկրաւոր բարեկեցութիւն իւր՝ ելեալ է ի ծոցոյն նոյն եկեղեցւոյ և ընկեալ ի փարախ բողոքականաց։ Այժմ վերահասու գոլով ամենայն խարդաւանաց նենգամիտ մարդորսաց և քաջ ի միտ առեալ զուղղափառութիւն Հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ, զզղջացեալ է զնախկին յանցանս իւր և կամի մտանել ի ծոց այն եկեղեցւոյ, յորմէ խորթացեալն էր, ուստի և խնդրեաց զիս ելանել ի Ղարաղալա և մկրտել զերիս որդիս իւր, որք չև ևս էին մկրտել ըստ ծիսի բողոքականաց։

Առեալ ընդ իս զբարեշնորհ Բագրատ վարդապետն[294] և զՇնորհուն ակ սարկաւագն Ղևոնդ[295] և զկնքահայրս ի քաղաքացւոց վասն երեխայիցն՝ ելի ի Ղարաղալա, ուր և ի կատար ածի զսուրբ խորհուրդն՝ մկրտելով զերկուս ուստերս և զմի դուստրն Միքայէլի։

Յետ կատարման սրբոյ խորհրդոյն եկն առ իս համագիւղացին Միքայէլի՝ Նիկողայոսն Գալստեան և խնդրէր կատարել զսուրբ խորհուրդ պսակի ընդ հարազատ ամուսնոյ իւրոյ՝ Ազնիւ Կարապետեան, ընդ որում կենակցեալ ամս յոլով[296] ըստ սովորութեան բողոքականաց ծնեալ էին մի ուստր և երկու դուստր, զորս խնդրէր նա մկրտել ըստ ծիսի Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ յայտնելով թէ՝ չև ևս էին մկրտեալ նոքա ըստ սովորութեան բողոքականաց, և ես ի կատար ածի զխնդիր Գալստեանի։

Ի Ղարաղալա գեղջն անձամբ տեսի և վերահասու եղէ զի սերմունք բողոքականութեան ի գեղջն, որ կենդրոնավայր համարի վասն խորթացելոց վիճակիս ի Ս. Եկեղեցւոյս մերմէ, ոչ են գցեալ հաստատուն արմատս ի սիրտս ժողովրդականացն, քանզի բողոքականութիւն պատրուակ է եղեալ տեղափոխութեան բնակչաց Աղէքսանդրապօլու և գիւղորէից սորին ի պատճառս սակաւութեան հողոյ իւրեանց ի ծննդավայրէն ի նահանգն Կարուց և որպէս այժմ, նոյնպէս և յառաջնումն, լուսաւորչական Հայք չունին իրաւունս մտանելոյ ի ցուցակ հաստատուն բնակչաց նահանգիս, այլ բացառութիւն լեալ է, վասն կրօնափոխաց միայն՝ տալով նոցա զգիւղն Ղարաղալա ի բնակութիւն։

Ի բաց առեալ զերկոսին ընտանիս Աւետիսեանի և Գալստեանի՝ բաղկացեալս ի միտասեան անձանց, դարձելոց ի ծոց Մայրենի եկեղեցւոյ իւրեանց, ի գեղջն գտանէին արդէն և լուսաւորչական հայք ընտանիք վեց, որք լուսաւորչական գոլով առ երեսս ընկալեալ էին զբողոքականութիւն և յետ հաստատման ի Ղարաղալա, ի նորոյ դար-

294 Բագրատ վարդապետ Թաւաքալեան – Ծնուել է 1860 թ.: Սովորել է Բաքուի ռեալական դպրոցում: 1890 թ. սեպտեմբերի 5-ին ընդունել է կուսակրօնութիւն և նոյն թուականի նոյեմբերի 20-ին՝ ձեռնադրուել աբեղայ: 1891թ. նշանակուել է Պարսկաստանի Ս. Աստուածածին վանքի վանահայր: 1894 թ. մարտի 5-ին նա ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները և մէկ տարի անց նշանակուել Ալեքսանդրապոլի փոխանորդ: 1894 թ. ապրիլի 27-ի կոնդակով գործուղուել է Կարս՝ գաղթականների վերաբերեալ տեղեկագիր կազմելու համար (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 211, թ. 32): 1896 թ. փետրուարի 13-ին Վեհափառի կոնդակով Բագրատ վարդապետը կարգուել է Ելիզաւետպոլի փոխանորդ՝ վարելով այդ պաշտօնը մինչև 1900 թուականը: 1901 թ. Բարձրագոյն հրամանով նշանակուել է Սինոդի անդամ: Մահացել է 1902 թ.:

295 Ղևոնդ սարկաւագ – յետագայում՝ Եզնիկ վարդապետ Գեանջեցեան Ծնուել է 1864 թ., աւազանի անունը՝ Ղևոնդ: Կրթութիւնը ստացել է Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: 1890 թ. ստացել է հոգևոր կոչում: 1894 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1895-ին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: Մկրտիչ Ա. Կաթողիկոսի 1896 թ. յունիսի 3-ի կոնդակով գործուղուել է արտասահման՝ կրթութիւնը շարունակելու: 1906 թ. յունիսին կարգաթող է եղել:

296 Յոլով – շատ:

ձեալ էին ի ծոց մերս Ս. եկեղեցւոյ ամօք առաջ, և են նաև այնպիսիք ի բողոքականաց, որք կամին մտանել ի գիրկ մերս եկեղեցւոյ, բայց երկնչին յերկուց բռնաւոր ընտանեաց, քանզի ունին կախումն տնտեսական ի սոցանէ և համարեա ստրկացեալ են նիւթապէս։

Գիւղն այս բաղկացեալ է ի 50 տանց, յորոց 8 լուսաւորչականք են, երկուսն երովական անուանեալք, 10՝ պրիգուն կոչեցեալ աղանդաւորք[297] և 30 պատկանեալք միոյն բազմաթիւ հերձուածոց ամերիկանաց։ Եթէ հնար լինիցի մեզ կանգնել ի գեղջն զաղօթատուն մի, քանզի առ այժմ ո՛չ է մարթ մեզ տալ շինել զեկեղեցի ի պատճառս դժուարութեանց ի ստանալ թոյլտուութեան այսր ի կողմանէ քաղաքական իշխանութեան, եթէ նշանակեսցի առանձին իմն վարձատրութիւն վասն առաքելոյ զմիննի ի բանիմաց քահանայից ի լնուլ զհոգեկան պէտս ժողովրդականաց տեղւոյն, եթէ նիւթական միջոցք մեր ներեսցեն յամենայն դէպս նպաստել լուսաւորչականաց տեղւոյն և ազատել զնոսա ի ճիրանաց վաշխառուաց, յայնժամ, յոյս մեծ տածեմ, զի բազումք ի բողոքականացն դարձցին ի ծոց մերս Ս. եկեղեցւոյ։

Զայսոսիկ զամենեսեան պատիւ անձին վարկանեմ ամենախոնարհաբար ծանուցանել Ձերդ Վեհափառութեան ի տեղեկութիւն և հայցել զպարտ ու պատշաճ տնօրէնութիւն Հօրդ հասարակաց վասն ժողովրդականաց Ղարաղալա գեղջ։

Փոխանորդ վիճակին՝ Նահապետ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 156, թթ. 53-54, բնագիր, ձեռագիր:

№ - 146
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԲԱԳԱՐԱՆ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

18 յուլիսի 1894 թ.
Ս. Էջմիածին

Լուան նախ զգրութիւն Պարոն Զինուորական Նահանգապետի Կարուց ի 14 յունիսի անցելոյ Թ. 436[298], որոյ թարգմանութիւնն է այսպէս. «Փոխանորդ Հայոց Կարուց Նահապետ վարդապետն Նահապետեանց գրութեամբ ի 28 մայիսի տարւոյս Թ. 478 առաջարկելով զնախագիծ եկեղեցական շինութեան խնդրէ զթոյլտուութիւն Զինուորական Նահանգապետի վասն շինելոյ ըստ վերոգրեալ նախագծի ի Բագարան գեղջ Կաղզուանի գաւառի Նախիջևանայ մասին զեկեղեցի Հայոց։ Ծանուցեալ զայն և ի վերայ հիման 4 հատուածոյ 938 յօդ. I մ. XI ըստ Կանոնադրութեան Օտար Դաւանութեանց ըստ շարունակութեան 1890

[297] Պրիգուններ – 19-րդ դարի 50-ականների սկզբին Ռուսական կայսրութիւնում Անդրկովկասի տարածքում տարածուած աղանդ, որն անջատուել է մոլոկանների հոսանքից՝ որպէս բողոք աւագների գերիշխանութեան դէմ:

[298] Փաստաթղթի ռուսերէն բնագիրը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8981, թ. 9:

ամի, խնդրեմ ի Սինոդէդ ծանուցանել ինձ ի կողմանէ դորին չի՞ք արգել ինչ թոյլ տալոյ առնել զվերոգրեալ շինութիւնն»։ Եւ երկրորդ՝ զյայտարարութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց ի 23 յունիսի Թ. 576[299], որով խնդրէ զշուտափոյթ տնօրէնութիւն Սինոդիս վասն շինութեան եկեղեցւոյ Բագարան գեղջ։

Հրամայեցին. *Ծանուցանել Նորին Գերապատուութիւն Զինուորական Նահանգապետին Կարուց՝ թէ ի կողմանէ Սինոդիս չիք արգել շինութեան եկեղեցւոյ Հայոց Բագարան գեղջ Կաղզուանի գաւառի, զորմէ և գիտել տալ Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց։*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8981, թթ. 13-14, թողօն, ձեռագիր:

№ - 147
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆԻՆ ՂԱՓԱՆԼԻ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 945 *19 ապրիլի 1896 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ վիճակին Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ըստ գրութեան դիւանի Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի 18 այսր ապրիլի Թ. 590, Թեմական Ատեանս շնորհ ունի ընդ այսմ յղել ի բարեհաճ տնօրէնութիւն Ս. Սինոդիդ զգործ ձեռնադրութեան Յովհաննիսի Տէր-Մարգարեանց ընծայացուին Ղափանլի գեղջ գաւառին Կարուց, որ բաղկանայ ի 17 գրեալ թերթից, կցորդելով նախ՝ թէ ոչ եդաւ ի նմին թերթ քննութեան, զի ըստ այնր գրութեան Դիւանի Նորին Սրբութեան արդէն քննեալ է ընծայացուին այնորիկ և երկրորդ թէ՝ գիւղն Ղափանլի բաղկանայ յ31 տանց ծխականաց և չունի քահանայ[300]։

Ատենապետ՝ Անանիա եպիսկոպոս Համազասպեան
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեան
Յակովբ քահանայ Տէր-Գրիգորեան
Ատենադպիր՝ Մ. Պանճուլազեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9159, թ. 1, բնագիր, ձեռագիր:

---

299 Տես թիւ 144 փաստաթուղթը:

300 Ս. Էջմիածնի Լուսաւորչական Հայոց Սինոդը 1896 թ. յուլիսի 1-ին, լսելով խնդիրը, որոշեց թոյլատրել Յովհաննէս Տէր-Մարգարեանին ձեռնադրել Ղափանլի գիւղի քահանայ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9159, թ. 6 և շրջ.):

№ - 148
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴՈՒՐԳԱՐԵԱՆՑԻՆ ՉՂՐՂԱՆ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 946 *19 ապրիլի 1896 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնիոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ըստ գրութեան Դիւանի Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց ի 16 այսր ապրիլի Թ. 543, Թեմական Ատեանս շնորհ ունի ընդ այսմ առաջի առնել ի տնօրէնութիւն Ս. Սինոդիդ զգործ ձեռնադրութեան Յարութիւնի Ադամեան Դուրգարեանց ընծայացուին Չղրղան գեղջ, որ բաղկանայ ի 14 գրեալ թերթից, կցորդելով, թէ գիւղն ըստ վերջին մարդահաշուական մատենի բաղկանայ յ34 տանց ծխականաց և չունի սեպհական քահանայ և եկեղեցի[301]*։*

Ատենապետ՝ Անանիա եպիսկոպոս Համազասպեան
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեան
Յակովբ քահանայ Տէր-Գրիգորեան
Ատենադպիր՝ Մ. Պանճուլազեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9158, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 149
ԿԱՐՍ ՔԱՂԱՔԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԼՈՒՍԱՐԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՄԿՐՏԻՉ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿՈՒՍԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 օգոստոսի 1896 թ.
Կարս

Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն Մկրտչի Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Կարս քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Լուսարար Գարեգին Գ. Սուաճանտեանից Ամենախոնարհ խնդիր

Պատանեկութեանս հինգ տարիների ընթացքում ուսանելով Սեբաստիոյ Սուրբ Նշանի վանուց Արծրունեան Գիշերօթիկ Վարժարանում նախակրթական ուսումս ստացայ այնտեղ վանական յարկի տակ, որը բացուած էր 1877 թուականին շնորհիւ ջանից Վիճակային

[301] 1896 թ. յուլիսի 1-ին Ս. Էջմիածնի Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց թոյլատրել Յարութիւն Դուրգարեանցի ձեռնադրութիւնը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9158, թ. 6 և շրջ.): Նոյն թուականին նա ձեռնադրուել է քահանայ՝ ստանալով Գարեգին հոգևոր անունը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

Առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Թահմիզճեանցի որոյ անմիջական հսկողութեան ներքոյ դաստիարակւում էին քսանևհինգի չափ գաւառացի պատանիներ ապագայ վարժապետներ և քահանաներ լինելու համար գաւառներում, ուսումնասէր հօր նախաձեռնութեան համաձայն։

Սրբազնասուրբ Հայրիկ, գրեթէ այն օրերից ի վեր վանական առանձնացած կեանքը խոր տպաւորութիւն թողեց կրօնասէր աշակերտիս վերայ, այն ժամանակուանից սիրեցի կուսակրօնութիւնը և Հայաստանեայցս եկեղեցւոյ խնկելի կարգ ու կանոնները և ցանկացայ հագնել միաբանական զգեստը ծառայելու փոքր հայոց պանծալի անցելոյն վկայ այդ հրաշակերտ մենաստանում, ինչպէս կը բաղձար վանքի արիաջան Հովիւ Պետրոս Սրբազանը։

Բայց բաղդի բերմունքով 1882 թուի վերջերին՝ ծնողներիս հետ գաղթեցի հայրենի Բաթնոս գիւղից և տեղափոխուեցայ Ռուսաց նորանուաճ Կարս քաղաքը։ Աստ հայրենասէր Առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանցը օրինակելի կարեկցութիւն ցոյց տալով համազգոյս՝ յորդորեց քաղաքից չը հեռանալ, քաղաքական կեանքին լաւ ծանօթանալու համար, մինչդեռ ուսումնածարաւ պանդխտիս դիտաւորութիւնն էր Սուրբ էջմիածին երթալ՝ ուսմանս քաղցը յագեցնելու պատճառով։ Սակայն լսելով անձնուէր հօր խորհրդին տեղական հայ դպրոցները յաճախեցի և շարունակելով ուսումս ընդ կարելոյն յառաջադիմեցի աւանդուած գիտութեանց մէջ։ Դպրոց ուղարկելու հետ զուգընթաց՝ յանձնից խնամակալ Սրբազանը՝ եկեղեցւոյ լուսաբարութիւնն ևս ծերունի ծնողներս նիւթական ապրուստի կողմից անմխիթար չթողնելու նպատակով, այնուհետև խոստացաւ քահանայ ձեռնադրել քաղաքիս վերայ, բայց տարաբաղտաբար իմ գաղթելուց մի քանի տարի յետոյ՝ տեղափոխուելով ուրիշ վիճակ, անիրագործելի մնաց իւր խոստումը այս մասին։ Ահա այս վերոյիշեալ հանգամանքներից ստիպուած մնացի քաղաքում, մի փոքր ժամանակ յետոյ ամուսնացայ ծնողներիս դրդմամբ և շարունակեցի մինչ ցարդ ծառայութիւնս անընդհատաբար տեղւոյս Մայր եկեղեցում։

Ներկայս՝ վեհափառ Տէ՛ր, ամուսնոյս վաղահաս մահը՝ մի առանձին ներքին բնազդմամբ յիշեցրեց ինձ սրտագէտ Արարչի այն խորհրդաւոր գաղտնիքը՝ իւր արդարացի տնօրէնութեան մասին՝ որը կանխաւ սահմանել էր իմ ապագայ վիճակի բարեկարգութեան վերաբերմամբ։ Այո՛, փա՛ռք, բիւր անգամ փա՛ռք նորա ամենասուրբ անուանը և իմաստուն կարգադրութեանը՝ որով ինձ յորդոր է կարդում մանկութիւնիցս ի վեր սրտումս անուցած ջերմեռանդ իղձը՝ այժմ ի կատար ածելու համար։ Ուստի անարժան սպասաւորս յօժար կամօք հնազանդելով նախասահմանութեան վեհ հրամանին և յանձնելով զիս նորա սուրբ խնամոց՝ դիմում եմ խոնարհաբար Յիսուսեան Խաչի լուծը սիրով վերցնելու ազգիս և հայրենեաց իմ կարեաց չափ ծառայելու նպատակով, ապաւինած ամենակարողի օժանդակութեան վերայ։

Յայտնելով այս մասին, պատիւ ունեմ ամենախոնարհաբար հայցել Ձերդ Վեհ Օծութեան բարեհաճ տնօրէնութիւնը արժանացնելու ինձ այդ կոչմանը։ Լիայոյս եմ Ձեր անզուգական Հայրութեան վերայ որ խնդրատուիս կը մխիթարէք անշուշտ խնդրածս աստիճանաց շնորհումով[302]*։*

Մնամ Ձերդ Վեհ Օծութեան ամենախոնարհ որդի
Գարեգին Գրիգորեան Սրուանձտեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 180, թթ. 50-51, ինքնագիր:

№ - 150
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս.ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԳԷՈՐԳ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑԻՆ ՅՈԲԵՐԱՆ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 3882 *20 դեկտեմբերի 1896 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորիայէ Վիճակիս Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զեկուցումն հոգևոր կառավարութիւն Հայոց Կարուց ընդ յայտարարութեան ի 19 յուլիսի 1894 ամի Թ. 685, մատուցանելով զխնդիր ժողովրդեան Յոբերան գեղջ վասն ձեռնադրութեան Գէորգայ Աբրահամեանց[303] *և զգիր ապահովութեան նորա ըստ կենսական պիտոյից յայտնեալ էր, թէ քահանայ տեղւոյն զառամեալէ պատճառաւ որոյ ժողովուրդն մնան գրեալ թէ զուրկ ի հոգեկան մխիթարութենէ և թէ ընծայացուն է տէր գովելի վարուց և բարուց և խնդրեալ էր զտնօրինութիւն կոնսիստորիայիս։ Յետ այնորիկ ըստ պահանջման սորին կառավարութիւնն Կարուց ընդ յայտարարութեան ի 29 նոյեմբերի 1895 ամի Թ. 1193 մատոյց զվկայական ծննդեան վերոգրեալ Գէորգայ և ի 18 հոկտեմբերի այսր ամի Թ. 1076 զթուղթ*

---

302 1896 թ. օգոստոսի 15-ին Հայրապետական դիւանը հետևեալ գրութիւնն է ուղղել Կարսի Հայոց Փոխանորդ Եղիշէ վարդապետին. «Լուսարարն Ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքիդ Գարեգինն Սրուանձտեան խնդրագրով իւրով յանուն Վեհ. Հայրապետի ազգիս խնդրէ ընդունել զինքն ի շարս կուսակրօն հոգևորականութեան:

Նորին Ս. Օծութիւնն առ այն բարեհաճեցաւ հրամայել Դիւանիս հարցանել զկարծիս Ձեր զարժանաւորութենէ խնդրատուին: Բայց յայսմանէ կարևոր է գիտել նաև՝ 1. Ունի՞ զաւակունս, թէ ոչ և եթէ ունի՝ որքա՞ն են և քանի՞ ամաց: 2. Ունի՞ միջոց ապահովելոյ նոսա, եթէ յուսայ պահել զորդիս իւր վարդապետական արդեամբք իւրով: 3. Որ՞ վանս ընտրէ վասն իւր, թէ կամի լինիլ միաբան Ս. Էջմիածնի:

Ձհարցմանց պատասխանիս յարգանօք խնդրէ Դիւանս յարժանապատուութենէ Ձերմէ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 180, թ. 52):

303 Գէորգ քահանայ Աբրահամեան – ծնուել է 1863 թ., կրթութիւնը ստացել է Հառիճի վանքում, քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1897 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

արձակման նորա ի հարկաց: Ի հարցաքննելն յԱտենի Կոնսիստորիայիս ընծայացուն այն ի քահանայական գիտելեաց գտաւ յընթերցանութեան և ի վայելչագրութեան բաւարար, ի կրօնագիտութեան միջակ, ի թարգմանութեան լաւ, ի գործածութեան տօնացուցի գիտակ և յերգեցողութեան ձայնագրագէտ[304]*: **Սահմանեցին.** առաքմամբ վկայականի ծննդեան Գէորգեայ Աբրահամեան ի Յոբերան գեղջէ Կարուց վիճակի հանդերձ արձակման թղթով, համախօսական վճռով*[305] *և հարցաքննական գրով նորա խնդրել զտնօրէնութիւն Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս ձեռնադրելոյ զվերոգրեալ Գէորգն ի քահանայ ժողովրդեան այնր գեղջ ի տեղի զառամեալ քահանայի նոցա:*

Ատենապետ՝ Ներսէս եպիսկոպոս[306]
Անդամք՝ Յակովբ քահանայ Տէր-Գրիգորեան
Գարեգին քահանայ Խաչատրեան[307]
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9236, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 151
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՏՐԴԱՏ ՏԷՐ ՍԱՐԳՍԻ ԱԻԱԳԵԱՆՑԻՆ ԹԱԶԱՔԵԱՆԴ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1833 *9 յունիսի 1897 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զեկուցումն՝ ըստ առաջադրութեան Կոնսիստորիայիս Հոգևոր Կառավարութիւն Հայոց Կարուց ընդ յայտարարութեան յ3 մայիսի անցելոյ Թ. 403 մատուցանելով զխնդիր ժողովրդեան Թազաքեանդ գեղջ, Կարուց վիճակի վասն ձեռնադրութեան Տրդատայ Տէր-Սարգսեան[308] *՝ ի քահանայ հանդերձ համախօսական թերթիւ վասն ապահովութեան նորա և զվկայականօք ծննդական և*

304 Հարցաքննութեան թերթիկը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9236, թ. 2:

305 Համախօսական թերթիկը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9236, թթ. 4-5:

306 Տես թիւ 95 ծանօթագրութիւնը:

307 Գարեգին քահանայ Խաչատրեան – ծնուել է 1853 թ.: Կրթութիւնը ստացել է Երևանի Թեմական դպրոցում: 1879 թ. մայիսի 31-ին ընդունել հոգևոր կոչում՝ ստանալով սարկաւագի աստիճան: 1882 թ. յունիսի 27-ին ձեռնադրուել է քահանայ: 1883 թ. մայիսի 15-ին պարգևատրուել է ծաղկեայ փիլոնով, 1897 թ. փետրուարի 18-ին՝ քահանայական լանջախաչով, 1900 թ. հոկտեմբերի 1-ին՝ թաւշեայ գլխարկ (կամելաւկա) կրելու իրաւունքով (ՀԱԱ,ֆ. 57, ց. 2, գ. 1718, թթ. 38-39):

308 «Տէր Սարգսեան»-ը հայրանունն է:

ուսման նորա յայտնեալ էր՝ թէ ի սկզբնական քննութեան ի կառավարութեան երևեալ է նա տգէտ խնդրելով դադարեցուցանել զգործ ձեռնադրութեան նորա, զի այնպիսիք՝ ասէ բազումք են ի վիճակին։ Ի մատուցեալ խնդրոյն տեսանի, զի ժողովուրդ Թազաքեանդ գեղջ զկնի մահուան, հօրն ընծայացուի, Սարգիս քահանայի մնան անմխիթար ի կողմանէ հոգևորին, թէ Տրդատն է տէր առաքինի վարուց և բարուց և թէ ընտրելով զնա հայցեն ձեռնադրել ի քահանայ ինքեանց։ Ցետ այնր ընծայացու Տրդատն ներկայացեալ յԱտեան Կոնսիստորիայիս և հարցաքննեալ գտաւ յընթերցանութեան լաւ, ի կրօնագիտութեան բաւարար, ի թարգմանութեան բաւարար, ի գործածութեան տօնացուցի տեղեակ և յերգեցողութեան լաւ[309]։ Սահմանեցին. որովհետև գիւղն Թազաքեանդ չունի սեպհական քահանայ, վասն որոյ մատուցմամբ վկայականաց Տրդատայ Տէր-Սարգսեանց խնդրել զտնօրէնութիւն Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս ձեռնադրելոյ զնա ի քահանայ ժողովրդեան այնր գեղջ, յարակցելով՝ թէ ի գեղջ անդ են տունք 29 առանց քահանայի[310]։

Ատենապետ՝ Ներսէս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Գարեգին քահանայ Խաչատրեան
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9331, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 152
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԱՆՏՕՆ ՅԱԿՈԲԻ ՏԷՐ-ԱՒԵՏԻՍԵԱՆՑԻՆ ՂԶԼՉԱԽՉԱԽ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 3732 *30 հոկտեմբերի 1897 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի Կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց ի 18 յունիսի տարւոյս Թ. 625 այսու բովանդակութեամբ։ «Մատուցանելով ընդ այսմ զխնդիր Հայազգի ժողովրդականաց Ղզլչախչախ գեղջ Վիճակիս ի 17 նոյեմբերի 1896 ամի ի մասին ձեռնադրելոյ ի քահանայ զնախկին ուսուցիչ՝ զհամաբնակիչս իւրեանց զԱնտօնն Յակովբեան Տէր-Աւետիսեանց. հանդերձ արձակ-

309 Հարցաքննութեան արդիւնքները տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9331, թ. 2:

310 Ս. Էջմիածնի Սինոդը 1897 թ. օգոստոսի 5-ին, լսելով խնդիրը, որոշեց թոյլատրել ձեռնադրութիւնը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9331, թթ. 3-4):

ման ի հարկաց վերջնոյս և համախօսական թերթովք, ի նոյն թիւ, և զգրաւոր համաձայնութիւն Տէր- Աւետիսեանի ի 18-ն այնր նոյեմբերի հանդերձ վկայականօք ուսման արհեստի ձայնագրութեան յՅ-ն նոյեմբերի 1891 ամի և ծննդեան և մկրտութեան նորա ի 14 մայիսի 1891 ամի ընդ № 1806, Հոգևոր Կառավարութիւնս այսու պարտ ինքեան վարկանի խնդրել զմիջնորդութիւն Թեմական Ատենիդ առաջի Հոգևոր Բարձրագոյն իշխանութեան առ ի շտապեցուցանել զայս գործ ձեռնադրութեան, քանզի նախ՝ գիւղն Ղզլչախչախ բաղկացեալ ըստ ժողովրդագրութեան 1886 ամի ի 170 տանց և ըստ մատաղաբաժնի[311] յ205 տանց, թէպէտև ունի զերկուս քահանայս՝ մինն Տէր Կարապետ Ասլանեանց 73 ամաց և միւսն Տէր Մարկոս քահանայ Մկրտչեան 58 ամաց, սակայն առաջինն արդէն հրաժարեալ է ի քահանայագործութենէ ի պատճառս զառամելութեան, իսկ երկրորդն սակս անգրագիտութեան և տգիտութեան ոչ միայն չկարէ լինուլ զպէտս հոգևորս ժողովրդեան, այլև ոչ է վարեալ մինչ անգամ զարձանագրական մատեանս գեղջն։ Երկրորդ՝ գիւղորայք գործակալութեան Արևմտեան Շիրակայ, ի շարս որոց և գիւղն Ղզլչախչախ զուրկ են ի գրագէտ քահանայից, ուստի Ատեանս յետ բազմաց փոփոխութեանց ոչ գտեալ քահանայ մի յարմարաւոր գործակալական պաշտօնի, յանձնեալ է զայն պաշտօն ի ժամանակաւոր կատարումն ծխատեառն Թիքնիզ գեղջ, իսկ ընծայացուն այս Տէր-Աւետիսեան, զորմէ գիտէ Ատեանս ի ժամանակաց ուսուցչական պաշտօնավարութեան ի դպրոցս բազմից գիւղորէից Վիճակիս, կարէ լինել գիւղական քահանայ օրինաւոր և առ ապայն գործակալ ճշտապահ։ Բաց յայսմանէ Ատեանս պարտ ինքեան վարկանի յաւելուլ նաև, զի վկայագիր ուսման Անտօնի Տէր-Աւետիսեան ստացեալ ի վարչութենէ չորս դասարանեան վիճակային նախկին դպրոցի Աղէքսանդրապօլու գտանի ի դիւանի ուսումնարանական յանձնաժողովոյ Ս. Էջմիածնի ի 1891 ամի անտի»։

Հրամայեցին. *զվկայականս Անտօնի Յակոբեան Տէր-Աւետիսեանց մատուցանելով Սրբազան Սինոդիդ խնդրել զտնօրէնութիւն դորին յաղագս արձակել տալոյ զնա ի թուոյ հարկատուաց և ձեռնադրելոյ ի քահանայ ժողովրդեան Ղզլչախչախ գեղջ*[312]։

Ատենապետ՝ Ներսէս եպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Յակովբ քահանայ Տէր-Գրիգորեան
Գարեգին քահանայ Խաչատրեանց
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9382, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

311 Մատաղաբաժին – մատաղի բաժնի իրաւունք ունեցող (գիւղի ամեն մի տուն, որ մտած է աշխարհագրի մէջ, որին և բաժին է ուղարկւում զատկուայ մատաղից):

312 Տե՛ս թիւ 153 փաստաթուղթը:

№ - 153
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՏՈՆ ՅԱԿՈԲԻ ՏԷՐ-ԱՒԵՏԻՍԵԱՆՑԻՆ ՂԶԼՉԱԽՉԱԽ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 3026 *12 դեկտեմբերի 1897 թ.*
Ս. Էջմիածին

Լուան զյայտարարութիւն Կոնսիստորիայի Հայոց Երևանայ յ30 Հոկտ. տարւոյս Թ. 3732, ըստ այմ. «Ի Կոնսիստորիայիս ...[313]»:

Ի մատուցեալ թղթոցն տեսանի, զի ընծայացու Անտոն է 32 ամաց, ապահովեալ է ըստ նիւթականին վճռով ժողովրդեան Ղզլչախչախ գեղջ ի 17 նոյեմբերի 1896 ամի, արձակեալ է ի հարկաց վճռով նոյն ժողովրդեան ի 17 նոյեմբերի 1896 ամի և ունի վկայական ձայնագրութեան տուեալ ի Խորէն քահանայէ Աբգարեան[314] յ3 նոյեմբերի 1891 ամի:

Հրամայեցին. *Առաքմամբ թղթոյն արձակման Անտոնի Յակովբեան Տէր-Աւետիսեանց ի Ղզլչախչախ գեղջէ Կարուց շրջանի ի հարկաց առ Պ. Ջինուորական Նահանգապետն Կարուց՝ խնդրել ի Նորին Գերազանցութենէ ծանուցանել Սինոդիս՝ թէ չիք արդեօք արգելք մտանելոյ նորա ի հոգևոր կոչումն յաղագս ձեռնադրելոյ զնա ի քահանայ եկեղեցւոյ հայոց տեղւոյն[315]:*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9382, թթ. 2-3, թողօն, ձեռագիր:

№ - 154
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԵՂԻԱ ԹՈՒՄԱՍԵԱՆՑԻՆ ԲԱՀՐԿԵԱՆ ԳԻՒՂԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 760 *28 փետրուարի 1898 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երեւանայ

[313] Տե՛ս թիւ 152 փաստաթուղթը:

[314] Խորէն քահանայէ Աբգարեան – ծնուել 1844 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1882 թ.: 1914 թ. Դրութեամբ պարգևատրուել էր քահանայական լանջախաչով ու ծաղկեայ փիլոնով: Ալեքսանդրապոլի Ս. Աստուածածին եկեղեցու միաբան էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1718, թթ. 51 շրջ.-52):

[315] Յիշեալ հարցով 1897 թ. դեկտեմբերի 23-ին Սինոդը դիմել է Կարսի Զինուորական Նահանգապետին: 1898 թ. յունուարի 22-ին Նահանգապետը պատասխանել է, որ իր կողմից որևէ արգելք չկայ Անտոն Տէր-Աւետիսեանին քահանայ ձեռնադրելու հարցում: 1898 թ. մարտի 11-ին Սինոդը որոշում է. «Ընդունել զընծայացու Անտոնն Յակովբեան Տէր Աւետիսեանց ի Ղզլչախչախ գեղջէ ի հոգևոր կոչումն և կարգել սպասաւոր եկեղեցւոյ հայոց տեղւոյն, զորմէ և տալ գիտել Կոնսիստորիային Հայոց Երևանայ դարձուցմամբ առ նա առաջի արարեալ անտի վկայականացն» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9382, թթ. 4 և շրջ., 5 և շրջ., 6 և շրջ.): 1898 թ. Անտոն Տէր Աւետիսեանցը ձեռնադրուել է քահանայ՝ ստանալով Եղիշէ հոգևոր անունը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զեկուցումն Հոգևոր կառավարութեան Հայոց Կարուց ընդ յայտարարութեան ի 20 նոյեմբերի անցեալ ամի Թ. 1245 մատուցանելով զխնդիր[316] ժողովրդեան Բազրկեան գեղջ վասն ձեռնադրութեան Եղիայի Յովհաննեսեան Թումասեանց Ջալապ-կեչուտցւոյ, Աղէքսանդրապօլի գաւառի, հանդերձ արձակման ի հարկաց թղթով նորա յայտնեալ էր՝ թէ գիւղն Բազրկեան գտանի մեկուսացեալ յԱղբաբայ գաւառակի[317] ի բնակեցեալն մահմետական ազգաբնակութեամբ հեռի ի հայաբնակ գիւղորէից և սկսեալ յօրէ անտի հիմնարկութեան իւրոյ ի 1880 թուականէ չունի սեպհական քահանայ և խնդրեալ էր առ այն զտնօրէնութիւն սորին։ Յետ այնր ընծայացու Եղիայն մատոյց զհամախօսական վճիռ ժողովրդեան ի 20 դեկտեմբերի անցեալ ամի վասն ապահովութեան իւրոյ ըստ կենսականին, տուաւ ստորագրութիւն վասն մնալոյ և քահանայագործելոյ ընդ միշտ ի Բազրկեան գեղջ և ենթարկեցաւ յԱտենի սորին հարցաքննութեան ի քահանայական գիտելեաց[318] և ապա ի 28 փետրուարի տարւոյս մատոյց զվկայական ծննդեան իւրոյ։ Սահմանեցին. մատուցմամբ վկայականի ծննդեան և մկրտութեան Եղիայի Յովհաննեսեան Թումասեանց հանդերձ արձակման ի հարկաց թղթով[319] նորա, համախօսական վճռով, ստորագրութեամբ և հարցաքննական թերթիւ խնդրեալ զտնօրէնութիւն Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս ձեռնադրելոյ զնա ի քահանայ ժողովրդեան Բազրկեան գեղջ Կարուց վիճակի, որ բաղկանայ 56 տանց և չունի քահանայ[320]։

Ատենապետ՝ Ներսէս արքեպիսկոպոս
Անդամք Կոնսիստորիայի՝ Գարեգին քահանայ Խաչատրեանց
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9445, թթ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

316 Բազրկեան գիւղի 1898 թ. մարտի 10-ի խնդրագիրը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9445, թ. 10 և շրջ.:

317 Աղբաբայ – գաւառակ Ալեքսանդրապոլի գաւառում: Այն համապատասխանում էր Խորհրդային Հայաստանի Ամասիայի և Ղուկասեանի վարչական շրջանների տարածքին:

318 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9445, թ. 2:

319 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9445, թթ. 7-8 շրջ.:

320 1898 թ. յուլիսի 27-ին Ս. Էջմիածնի Սինոդը, լսելով խնդիրը, որոշեց թույլատրել Եղիա Թումասեանի ձեռնադրութիւնը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9445, թթ. 12-13):

№ - 155
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս.ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՎԱՀԱՆԳՆ ԴԷՄԻՐՃՕՂԼԵԱՆՑԻՆ ԱՐԴԱՀԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1619 *4 մայիսի 1898 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնեոդոսն Սրբոյ էջմիածնի ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երեւանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց ի 16 ապրիլի անցելոյ Թ. 451 այսու բովանդակութեամբ։ «Ի պատճառ մահուան ծխատեառն Արդահան աւանի[321]՝ ժողովրդականք տեղւոյն, մնացեալք զուրկ ի հոգեկան մխիթարութենէ, ի հասարակական ժողովի ընտրեալ ճեմարանական Վահագն Տէր-Ստեփանեան Դէմիրճօղլեանց խնդրեն տալ ձեռնադրել զնա ի քահանայ ի վերայ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ աւանին։ Ուստի մատուցանելով ընդ այսմ զխնդիր ժողովրդականաց Արդահան աւանի հանդերձ վկայագրովք ուսման, ձայնագրութեան արուեստի, ծննդեան և մկրտութեան և Զինուորակոչ Ատենի ընդ №№ 59/94, 68/94, 1657/82 և 332/96, հոգևոր կառավարութիւնս պարտ ինքեան վարկանի խնդրել զշուտափոյթ տնօրէնութիւն Թեմական Ատենիդ առ ի ձեռնադրել ի քահանայ զյիշատակեալ Վահագն Դէմիրճօղլեանց ի վերայ ժողովրդեան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Արդահան աւանի, յաւելլով՝ նախ՝ թէ ընծայացուն, որպէս քահանայորդի, է ազատ ի հարկատուութենէ և երկրորդ՝ զժողովրդականս Արդահանի հովուէ ժամանակաւորապէս ծխատէր միակ հայաբնակ Ուրուտ գեղջ[322], որ հեռի է յԱրդահանէ առաւել քան զ6 ժամ ճանապարհաւ ձիոյ։ Սահմանեցին. զվերոգրեալ վկայականն հանդերձ ստորագրութեամբ ընծայացու Վահագնի Տէր-Ստեփանեան Դամիրճօղլեանց մատուցանելով խնդրել զտնօրէնութիւն Սինոդի Ս. Էջմիածնի յաղագս ձեռնադրելոյ զնա ի քահանայ ժողովրդեան Արդահան աւանի, յարակցելով՝ թէ աւանն այն ունի երդս 118 առանց քահանայի[323]։

Աթենապետ՝ Ներսէս արքեպիսկոպոս
Անդամք Կոնսիստորիայի՝ Գարեգին քահանայ Խաչատրեանց
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9467, թթ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

321 Խօսքը Ղևոնդ քահանայ Մարգարեանցի մասին է:

322 Խօսքը Համազասպ քահանայ Նուրիջանեանի մասին է (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

323 Ս. Էջմիածնի Լուսաւորչական Սինոդը, մայիսի 19-ին լսելով խնդիրը, որոշեց. «Թոյլ տալ Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ ձեռնադրել զՎահագն Տէր-Ստեփանեան Դէմիրճօղլեանց յԱխալքալաք քաղաքէ ի քահանայ ժողովրդեան Արդահան աւանի, Կա-

№ - 156
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԹԱԴԷՈՍ ԳԷՈՐԳԵԱՆԻ ՆՇԱՆԱ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 4035 *8 հոկտեմբերի 1898 թ.*
Երևան

ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զզեկուցումն՝ Հոգևոր Կառավարութիւն Հայոց Կարուց ի 14 յուլիսի տարւոյս Թ. 767, ի յայտարարութեան գրէ զայս. «Ուսումնասիրելով ընդ այսմ զխնդիր բնակչաց Ճալա գեղջ Վիճակիս ի մասին ձեռնադրելոյ վասն ինքեանց ի քահանայ զԹադէոս Գէորգեան հանդերձ համախօսական թերթիւ[324], մետրիքական վկայագրով ընդ N 1445/91թ. և արձակման ի հարկաց թերթիւ Գէորգեանի և ստորագրութեամբ վերջնոյս վասն կալոյ և մնալոյ յետ ձեռնադրութեանն ի Ճալայ գեղջ: Հոգևոր Կառավարութիւնս այսու պարտ ինքեան վարկանի խնդրել զպարտ և պատշաճ տնօրէնութիւն թեմական Ատենիդ»: Յետ այնր բնակիչ Դահարլի գեղջ ընծայացու Թադէոս Գէորգեան յ3-ն այսր ամսոյ մատոյց զվկայականն ուսման իւրոյ, յորոց և այլ մատուցեալ թղթոցն, տեսանի, զի գիւղն Ճալայ բաղկանայ 96 տանց և չունի քահանայ, թէ ժողովուրդ տեղւոյն ապահովեալ են զԹադէոսն Գէորգեան ըստ կենսականին, իսկ ժողովուրդ Դահարլի գեղջ արձակեալ է զնա ի հարկաց, թէ նա պարտաւորեալ է մինչ ցմահն մնալ ի Ճալայ գեղջ[325], թէ նա ըստ վկայականի ծննդեան է յ30 ամաց, ուսեալ է երկդասեան դպրոցին Դահարլի գեղջ և ունի արտօնագիր (ցենզ) ուսուցչութեան ի գիւղական դպրոցս: Սահմանեցին. մատուցմամբ վերոգրեալ վկայականաց և թղթոց խնդրել զտնօրէնութիւն Ս. Սինոդիդ յաղագս ձեռնադրելոյ զԹադէոսն Գէորգեան ի քահանայ ժողովրդեան Ճալայ գեղջ[326]:

րուց շրջանի, զորմէ և տալ գիտել Կոնսիստորիային Հայոց Երևանայ դարձուցմամբ առաջի արարեալ անտի վկայականացն» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9467, թթ. 2-3): Նոյն թուականին Վահագն Դէմիրճօղլեանը ձեռնադրուել է քահանայ՝ ստանալով Էմմանուէլ հոգևոր անունը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

324 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9521, թթ. 11-12 շրջ.:

325 1898 թ. յունիսի 25-ին Թադէոս Գէորգեանը տուել է հետևեալ ստորագրութիւնը. «25-ն յունիսի 1898 ամի. Ես ի ներքոյ ստորագրեալ բնակիչ Դահարլի գեղջ Աղէքսանդրապօլու գաւառի Թադէոս Գէորգեան տամ զայս ստորագրութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց առ այն թէ պարտաւոր եմ կալ և մնալ յետ ձեռնադրութեան իմոյ ի Ճալայ գեղջ Շիրակայ մասի մինչ ցմահն իմ և առնել անդ զքահանայագործութիւն առանց փոխադրութեան այլուր առ որ և ստորագրեմ. Թադէոս Գէորգեան» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9521, թ. 10):

326 1899 թ. փետրուարի 8-ին Սինոդը, քննելով խնդիրը, որոշեց. «Առաքմամբ թղթոյն ար-

Ատենապետ Կոնսիստորիայի՝ Ներսէս արքեպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեանց
Գարեգին քահանայ Խաչատրեանց
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

Մակագրութիւն. *Արձակել։*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9521, թ. 1, բնագիր, ձեռագիր:

№ - 157
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՓԻՐՈՒԱԼԻ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՇԻՐԱԿՈՒՆՈՒՆ ՄԱՒՐԱԿ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 4036 *8 հոկտեմբերի 1898 թ.*
Երևան

ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
ի Կոնսիստորիայէ Վիճակիճ Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զզեկուցումն՝ Հոգևոր Կառավարութիւն Հայոց Կարուց ի յայտարարութեան ի 20 նոյեմբերի անցեալ ամի Թ. 1246 գրէ զայս. «Մատուցանելով ընդ այսմ զխնդիր ժողովրդականաց Մաւրակ գեղջ Շիրակայ ի մասին ձեռնադրելոյ ի քահանայ զբնակիչն Փիրուալի գեղջ զՍտեփաննոսն Կարապետեան Շիրակունի հանդերձ համախօսական թերթի և արձակման ի հարկաց նորին վկայականաւ Հոգևոր Կառավարութիւնն այսու պարտ ինքեան վարկանի խնդրել զպարտ և պատշաճ տնօրինութիւն թեմական Ատենիդ, յաւելլով՝ թէ Շիրակունին այն չըննթացս հնգետասան ամաց վարեալ է զպաշտօն ուսուցչական ի զանազան եկեղեցական դպրոցս. անուն սորա մտեալ էր չե.-րդ կարգ ուսուցչական նախնի ցանկի, իսկ վկայագիր ուսման գտանի ի գործս ուսումնարանական մասնաժողովոյ Ս. Էջմիածնի և գեղջն Մաւրակ ի ժամանակաց տիրապետութեան Ռուսիոյ չունի զիսկական ծխատէր քահանայ և կառավարի երթևեկ և պատահական քահանայիւք»։ Յետ այնորիկ կառավարութիւնն այն մատոյց ընդ յայտարարութեան յ30 յունիսի տարւոյս Թ. 729 ստորագրութիւն Ստեփաննոսի Շիրակունւոյ, զթուղթ արձակման նորա ի հարկաց իսկ զվկայագիր ուսման իւրոյ և ծննդեան մատոյց նա Ստեփաննոս Շիրակունի և ենթարկեալ հարցաքննութեան յԱտենի սորին գտաւ լաւ.Սահմանեցին.

ձակման Թադէոսի Գէորգեան ի Դահարլի գեղջէ վիճակին Աղէքսանդրապոլու ի հարկաց առ Պ. Նահանգապետն Երևանայ խնդրել ի Նորին Գերազանցութենէ ծանուցանել Սինոդիս, թէ չիք արդեօք արգելք մտանելոյ նորա ի հոգևոր կոչումն առ ի ձեռնադրել զնա ի քահանայ ժողովրդեան Հայոց Ճալայ գեղջ Կարուց վիճակի» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9521, թ. 2 և շրջ.):

մատուցմամբ վկայականաց ծննդեան և ուսման Շիրակունւոյ հանդերձ արձակման թղթով, համախօսական վճռով ժողովրդեան և հարցաքննական թերթիւ[327] խնդրել զտնօրէնութիւն Սրբազան Սինոդիդ յաղագս ձեռնադրելոյ զնա զՍտեփաննոս Կարապետեան Շիրակունի ի քահանայ ժողովրդեան Մաւրակ գեղջ, որ ի ժամանակաց տիրապետութեան Ռուսիոյ մնայ առանց քահանայի[328]։

Ատենապետ Կոնսիստորիայի՝ Ներսէս արքեպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Գարեգին քահանայ Խաչատրեանց
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9520, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 158
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ՋԱԼԱԼ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

30 հոկտեմբերի 1898 թ.
Ս. Էջմիածին

Ի 30/31 հոկտեմբերի 1898 ամի. ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուան ցյայտարարութիւն Կոնսիստորիային Հայոց Երևանայ ի 28 յուլիսի Թ. 2798 ըստ այսմ. «Ի կատարումն հրամանի Ս. Սինոդիդ ի 11-ն նոյեմբերի անցելոյ ամի Թ. 1585, Ատեանս ծանոյց հասարակութեան Ջալալ գեղջ Կարուց Վիճակի, թէ մինչ չեն մատուցեալ այսր զյատակագիծ և մակարդակ շինութեան եկեղեցւոյ իւրեանց, Կոնսիստորիայս չկարէ տնօրինել զինչ զայնմանէ, առ որ Հոգ. Կառ. Հայոց Կարուց յայտարարութեամբ յ30 յունիսի անցելոյ Թ. 726, որով յայտ առնէ սմին թէ՝ եկեղեցի այնր գեղջ ոչ է ի նորոյ կառուցեալ, այլ կանգնեալ և վերանորոգեալ է ի վրայ հնոյ հիման, ծածք նորա է փայտեայ և այժմ աւարտեալ։ Ջայսմանէ յայտարարեալ այսու Ս. Սինոդիդ, խոնարհաբար խնդրէ Ատեանս զօրինաւոր տնօրէնութիւն դորին առ այն»[329]։ Տեղեկութիւն. Սինոդս հիմնեալ ի վերայ մակագրութեան Նորին Սրբութեան ի խնդրոյն հասարակութեան Ջալալ գեղջ, ըստ օրագրոյ կազմելոյ յ31 հոկտեմբերի անցելոյ ամի հրամայեալ էր. «Գործ հիմնարկութեան եկեղեցւոյ, ուրեմն և եկեղեցւոյն Ջալալ գեղջ, որ նոր կամի ունել և զաղօթատուն և զքահանայ, ըստ 12 կետի 1188-րդ յօդ. ժա. հատ. Օրինաց հրատ. 1896 ամի պարտի ի թեմական իշխանութեան անդ սկզբնաւորել և անտի օրինաւոր պատրաստութեամբ ըստ

327 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9520, թ. 2:

328 Տես թիւ 160 փաստաթուղթը:

329 Փաստաթղթի բնագիրը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9324, թ. 2:

246.247 և յաջորդող պատշաճաւոր յօդուածոց շինուածական կանոնադրութեան (Ժ. օր. 1857 թ., հատ. Ժբ. մասն I*). ի Սինոդ այսր առաջի լինել, ուստի զխնդիր Ջալալ գիւղացեաց առաքել ի Կոնսիստորիայն Հայոց Երևանի առ անկաւորն կարգադրութիւն։ Օրէնք՝ 209.250 և 251 յօդուած կերտուածական օրինաց* XII *հատոր, Առաջին մասն հրատարակութիւն 1857 ամի։*

Յիշատակեն. Քանզի, ըստ 209.250 և 251 յօդուած կերտ. օրինաց XII *հատ. հրատարակութիւն 1857 ամի, վերաշինութիւն եկեղեցւոյն ի վերայ հնոյ հիման, կախի զիրաւանց Կոնսիստորիային, ուստի կարճել զայս գործ վասն տալոյ ի Դիւանն ի պահեստ, զորմէ և տալ գիտել Կոնսիստորիային Հայոց Երևանայ*[330]*։*

Նախագահ Սինոդի Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց
Անդամք՝ Սարգիս արքեպիսկոպոս
Արիստակէս արքեպիսկոպոս
Եսայի արքեպիսկոպոս[331]
Յուսիկ եպիսկոպոս
Աշոտ վարդապետ[332]
Կ. պ. Ատենադպրի՝ Ռ. Մադաթեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9324, թ. 3 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

330 Երևանի Հայոց Կոնսիստորիային ուղարկուած գրութիւնը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9324, թ. 4:

331 Եսայի եպիսկոպոս Աստուածատրեան – Յետագայում՝ արքեպիսկոպոս: Ծնուել է Թիֆլիսում, որտեղ էլ , 1850-1853 թթ., ստացել է նախնական կրթութիւնը, ապա՝ Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում: 1863 թ. մայիսի 20-ին ստացել է հոգևոր կոչում: 1864 թ. յուլիսի 2-ին ձեռնադրուել է սարկաւագ, իսկ 1867-ի մարտի 22-ին՝ աբեղայ: Մէկ տարի անց՝ 1868-ի ապրիլի 3-ին ստացել է վարդապետական աստիճան և նշանակուել Ս. Էջմիածնի գանձապահ: Նոյն թուականին Գէորգ Դ. Կաթողիկոսի կողմից արժանացել է վարդապետական ականակուռ խաչի: 1868-1878 թթ. վարել է զանազան պաշտօններ – տպարանական ժողովի անդամ, վանական կառավարութեան անդամ, Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ և գանձապահ: 1878 թ. հոկտեմբերի 18-ին նշանակուել է Մանչեստրի Հայոց հովիւ, 1884-ն՝ Լոնդոնի հոգևոր հովիւ: 1888 թ. նշանակուել է Ախալցխայի յաջորդ և ստացել ծայրագոյն վարդապետութեան աստիճան: 1890 թ. հոկտեմբերի 2-ին ձեռնադրուել է եպիսկոպոս և նշանակուել Պարսկա-Հնդկաստանի թեմի կառավարիչ: 1894 թ. յուլիսի 26-ին ստացել է արքութեան պատիւ: 1896 թ. հրաժարուել է առաջնորդական պաշտօնից և նշանակուել Սինոդի անդամ: 1898 թ. դեկտեմբերի 17-ին կարգուել է Շամախու թեմի առաջնորդ: Մահացել է 1901 թ. յունուարի 8-ին Թիֆլիսում:

332 Աշոտ եպիսկոպոս Շախեան – Ծնուել է 1864 թ.: Աւարտել է Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել Ս. Էջմիածնի Գէորգեան հոգևոր ճեմարանում: 1886 թ. նոյեմբերի 29-ին ձեռնադրուել է սարկաւագ, 1893 թ. ստացել է վարդապետական կոչում և նշանակուել Ալեքսանդրապոլի փոխանորդ: Մ. Աթոռում վարել է զանազան պաշտօններ, եղել Սինոդի անդամ: 1905 թ. փետրուարի 25-ին նշանակուել է Ղարաբաղի թեմի առաջնորդ: Նոյն թուականի ապրիլի 5-ին օծուել է եպիսկոպոս: Հարել է «Ազատ եկեղեցական» շարժման: Գէորգ Ե. Կաթողիկոսի կողմից կարգալոյծ է արուել և հեռացել եկեղեցուց: Մահացել է 1926 թ.:

№ - 159
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՋԱԼԱԼ ԳԻՒՂՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1418 *9 ապրիլի 1899 թ.*
Երևան

ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ Վիճակին Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Առ պահանջ Ատենիս Հոգևոր Կառավարութիւն Հայոց Կարուց յայտարարութեամբ ի 23 մարտի տարւոյս Թ. 458, հաղորդէ սմին թէ՝ Ջալալ գիւղն կազմեալ է ի ժողովրդականաց շրջակայ հայ գիւղորէից Գործակալութեան Տիկոռի յաւերակս նախնի հայ գեղջ և թէ ժողովուրդք տեղւոյն արդիս կանգնեալ են զնոր եկեղեցի ի վրայ հիման աւերակ եկեղեցւոյ տեղւոյն, ուստի շնորհ ունի Ատեանս զայսմանէ խոնարհաբար յայտ առնել ի գիտութիւն Ս. Սինոդիդ առ առաջադրութեամբ դորին 9 նոյեմբերի 1898 ամի № 1910[333]*:*

Ատենապետ՝ Ներսէս արքեպիսկոպոս
Անդամք՝ Գէորգ աւագ քահանայ Թաղիանոսեան
Գարեգին քահանայ Խաչատրեանց
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

Մակագրութիւն. *Առեալ ի տեղեկութիւն. կցել ընդ գործոյն:*
Անդամ Սինոդի՝ Աշոտ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9324, թ. 7, բնագիր, ձեռագիր:

№ - 160
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՇԻՐԱԿՈՒՆՈՒՆ ՄԱՒՐԱԿ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

3/11 մայիսի 1899 թ.
Ս. Էջմիածին

Ի 3/11 մայիսի 1899 ամի. ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուսն զյայտարարութիւն Կոնսիստորիայի Հայոց Երևանայ յ8-ն հոկտեմբերի անցելոյ ամի Թ. 4036, ընդ որում մատուցանելով զվկայականս, խնդրէ ի Սինոդէս ընդունել ի Հոգևոր կոչումն զբնակիչն Փիրուալի գեղջ զՍտեփաննոսն Կարապետեան Շի-

[333] 1912 թ. դրութեամբ Ջալալ գիւղում գործում էր Ս. Ստեփաննոս եկեղեցի, որի հոգևոր հովիւը վերաբնակիչ Յովհաննէս քահանայ Տէր Մինասեանն էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

րակունի, յաղագս ձեռնադրելոյ զնա ի քահանայ ժողովրդեան հայոց Մաւրակ գեղջ Կարուց շրջանի: Յառաջի արարելոցն տեսանի, զի ընծայացուն է 41 ամաց, ունի վկայական ուսման և եկեղեցական ձայնագրութեան, հարցաքննեալ յԱտենի Կոնսիստորիայի Հայոց Երևանայ գտեալ է կրօնագիտութեան գերազանց, յընթերցանութեան և ի թարգմանութեան շատ լաւ, ի գործադրութեան տօնացոյցի գովելի և յերգեցողութեան լաւ: Ժողովրդականք հայոց Մաւրակ գեղջ համախօսական թերթիւ ի 12-ն հոկտեմբերի 1897 ամի[334] *խոստանան ապահովել զընծայացուն ըստ նիւթականին տալով նմա զհասոյթս քահանայականս և զորոշեալ քանակութիւն հողոյ, առնլով ի վերայ ինքեանց զարքունի տուրս և հողահարկս, իսկ ժողովրդականք Փիրուալի գեղջ համախօսական վկայականիւ յ8-ն հոկտեմբերի 1897 ամի ազատ համարին զնա ի հարկատու կարգէ*[335]*: Օրէնք. - 481 յօդ.* IX *հատ հրատ. 1896 ամի: Յրամայեցին. Առաքմամբ արձակման թերթի ի հարկաց բնակչի Փիրուալի գեղջ Ստեփաննոսի Կարապետեան Շիրակունի առ որ Նահանգապետն*[336] *կարուց խնդրել ի Նորին Գերազանցութենէ ծանուցանել սմին, թէ չիք արդեօ՞ք արգել ինչ ի կողմանէ քաղաքական իշխանութեան վասն մտանելոյ նորա ի հոգևոր կոչումն առ ի ձեռնադրել զնա ի քահանայ ժողովրդեան հայոց Մաւրակ գեղջ Կարուց շրջանի*[337]*:*

Նախագահ Սինոդի՝ Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց
Անդամք՝ Արիստակէս արքեպիսկոպոս
Եսայի արքեպիսկոպոս
Յուսիկ վարդապետ
Աշոտ վարդապետ
Կ. պ. Ատենադպրի՝ Մ. Վարդազարեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9520, թ. 5, բնագիր, ձեռագիր:

---

334 Մաւրակ գիւղի հասարակութեան 54 անձի ստորագրութեամբ, Եկեղեցու երեսփոխան Մկրտիչ Մելքոնեանի, գիւղական դատաւոր Յովհաննէս Աւտալեանի, գիւղի տանուտէրի օգնական Սաֆար Յարոյեանի և Տանուտէր Վարդան Աբրահամեանի կնիքներով համախօսականը տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9520, թ. 3 և շրջ.:

335 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9520, թթ. 10-11:

336 Խօսքը գեներալ-մայեոր Դմիտրի Ալեքսանդրի Օդենցովի մասին է, որը 1898 թ. մայիսի 17-ից 1899 թ. յուլիսի 20-ը Կարսի Զինուորական Նահանգապետն էր:

337 Ի պատասխան Սինոդի մայիսի 13-ի հարցման 1899 թ. յուլիսի 17-ի գրութեամբ Կարսի մարզի նահանգապետը յայտնում է, որ Շիրակունուն քահանայ ձեռնադրելու խնդրով իշխանութեան կողմից արգելք չկայ: Յուլիսի 28-ին Սինոդը որոշում է կայացրել Ստեփաննոս Շիրակունուն հոգևոր կոչում տալու մասին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9520, թ. 7, 8):

№ - 161
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻՆ՝ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐ ԻՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԱՌՆԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ ԲՈՂՈՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 յուլիսի 1899 թ.
Ս. Պետերբուրգ

Կառավարիչ Սենատի Առաջին Դէպարտամէնտին

Երևանայ Թեմական Կարուց վիճակի փոխանորդ Եղիշէ վարդապետ Մուրադեանից[338]
Բողոք

1898 թուի սեպտեմբերի 5-ին Կարսի շրջանի ժողովրդական դպրոցների տեսուչը՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի առաջադրութեան համաձայն ի կատարումն 1898 թուի մարտի 26-ին տեղի ունեցած Բարձրագոյն հրամանի, որը վերաբերում էր եկեղեցական և վանական ուսումնարաններին պատկանեալ կալուածները դպրոցական վարչութեան տակ առնելուն, ուսումնարանների, որոնք 1897 թուի յունիսի 2-ի օրէնքով ենթարկուած էին յիշեալ վարչութեան, ցուցակագրեց Կարս քաղաքում N 3 և E տան և կրպակների հողաբաժինն իւր վրայ գտնուած շինութիւնների և կրպակների հետ, որոնցից առաջինը դեռ աւարտած չէր, մինչդեռ նրանք կազմում էին Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ և Հոգևոր Կառավարութեան սեփականութիւն և նրանց մէջ ապրում էր փոխանորդն ու գտնւում էր Հոգևոր Կառավարութիւնը: Դպրոցական Վարչութեան այդ տեսակ գործողութիւնները գտնելով օրինաց հակառակ և ի նկատի ունենալով, որ բոլոր դիմումներն ու բացատրութիւններս առանց հետևանքի մնացին պ. հոգաբարձուի կողմից, ես համարձակուեցայ ամենահպատակօրէն

[338] Եղիշէ վարդապետ Մուրադեան – ծնուել է 1859 թ.: Կրթութիւնը ստացել է Թիֆլիսի Ներսիսեան Հոգևոր դպրոցում: 1893 թ. յունուարի 24-ին ձեռնադրուել է սարկաւագ, 1893 թ. ապրիլի 25-ին՝ աբեղայ, իսկ նոյեմբերի 20-ին ստացել է մասնաւոր վարդապետական աստիճանները: Նոյն թուականի դեկտեմբերի 4-ին նշանակուել է Գորիի Հայոց փոխանորդ: 1894 թ. յուլիսի 28-ին պարգևատրուել է ծաղկեայ փիլոնով: Մկրտիչ Ա. Կաթողիկոսի 1895 թ. նոյեմբերի 1-ի N 876 կոնդակով ստացել է վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք և նոյն օրուայ N 877 կոնդակով նշանակուել է Կարսի Վիճակի փոխանորդ: 1901 թ. փետրուարի 23-ի կոնդակով նշանակուել է Ախալցխայի Հայոց փոխանորդ: Նոյն թուականի հոկտեմբերի 10-ին ստացել է ծայրագոյն վարդապետի աստիճան և նշանակուել Ատրպատականի Հայոց առաջնորդ: Մկրտիչ Ա.-ի 1904 թ. մարտի 10-ի կոնդակով նշանակուել է «Արարատ»-ի խմբագիր: 1906 թ. յունիսի 9-ին կարգուել է Ղրիմի Ս. Խաչ վանքի վանահայր: 1910 թ. մայիսին Եղիշէ ծ. վարդապետը կարգալոյծ է արուել (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1649, թթ. 1-2, ՄԱՍԷԱ, ց. 1, գ. 297, թթ. 109, 109 շրջ., «Արարատ» 1910, յուլիս, էջ 497):

տարածել Նորին Կայսերական Մեծութեան գարշապարի տակ Բարձրագոյն անունով ուղղած հեռագրական բողոքս՝ հետևեալ բովանդակութեամբ.

«Մեծ Թագաւոր և Ամենաողորմած Հայր հարիւրաւոր ազգերի, որոնք Ձերդ Կայսերական Մեծութեան հպատակներ կոչուելու երջանկութիւն ունին. Բարձրագոյն Ամենաողորմած հրամանի համաձայն, 1895 թուին փակուած հայոց դպրոցներն, որոնք Կովկասեան Ուսումնարանական Վարչութեան կողմից համարուել էին ոչ եկեղեցական, պէտք է յանձնուէին նոյն Վարչութեան, որ և իրագործեցի սրբութեամբ՝ յանձնելով փակուած դպրոցը առանձին ցուցակաւ: Այն ինչ այժմս կարուց նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչը ցուցակագրում է քաղաքիս ամենաաղքատիկ եկեղեցու կրպակներն, որոնց շինութիւնը սկսուել և աւարտուել է անցած տարի, մի շաբաթ առաջ միայն աւարտած բնակարանս, Հոգևոր Կառավարութեան ատեանի համար դեռ ևս չաւարտած չորս սենեակներն ու դեռ անպատրաստ աղօթատունս, որտեղ Արարչին պաշտօն մատուցանելով՝ խորին երջանկութիւն պէտք է զգամ ջերմագին աղօթքներ վերառաքելով ամբողջ աշխարհից սիրուած Թագաւորիս համար: Շինութիւններ, որոնց վերայ ծանրանում է դեռ 8522 ռուբլի պարտքը, մինչդեռ նոքա ոչ մի առնչութիւն չունին փակուած դպրոցի հետ:

Ընկնելով Ձերդ Կայսերական Մեծութեան գարշապարի տակ, արտասուաթոր աչօք պաշտպանութիւն եմ հայցում տեղւոյս Դպրոցական Վարչութեան կամայականութեան դէմ, որը չգիտեմ ինչո՞ւ, մոռանում է Մեծ Ինքնակալի և դէպի իւր ազգերը սիրով լցուած Մեծ Հօր և Թագաւորի հրամաններն ու կամքը:

Թագաւոր Կայսեր բարձրագոյն հրամանով՝ կարուց պ. նահանգապետի միջոցաւ յայտնուեց ինձ արքայական կամքը, որով ամենահպատակօրէն մատուցած խնդիրս յանձնուել էր Լուսաւորութեան Նախարարին՝ քննելու համար, որն ի կատարումն բարձրագոյն որոշման՝ 1898 թուի հոկտեմբերի 7-ին՝ իմ ամենահպատակօրէն մատուցածս խնդրի մտաց համաձայն՝ բացատրութիւն պահանջեց Կովկասեան Ուսումնարանական Շրջանի պարոն հոգաբարձուից, որպիսին և ստացուեց մի միայն սոյն տարուայ փետրուարի 18-ին: Սորանից յետոյ ես պատիւ ունեցայ Լուսաւորութեան պ. Նախարարին՝ գործի հանգամանքները պարզելու համար՝ ներկայացնել բոլոր փաստաթղթերս հետևեալ բովանդակութիւն ունեցող խնդրագրիս հետ.

1887 թուին Կարս քաղաքի Բարեշինութեան Մասնաժողովի յուլիսի 12/26-ին N 30 պ. Զինուորական Նահանգապետի կողմից հաստատուած վճռի համաձայն՝ տրուեց հոգևոր կառավարութեան քաղաքային գետնի մի կտոր մայր եկեղեցու շինութեան համար ի միջի այլոց այն պայմանաւ, որ Հոգևոր Կառավարութիւնն իւր կողմից պարտա-

դիր կերպով գնէր մասնաւոր անձանց պատկանող այն բոլոր կրպակներն, որոնք գտնւում էին յիշեալ քաղաքամասում: Հոգևոր Կառավարութիւնն հազիւ միայն 1891 թուի սկզբին իրագործելով Մասնաժողովի պահանջը, ս. էջմիածնայ Սինոդի միջոցով ուղարկեց ծրագրուած մայր եկեղեցու յատակագիծը օրինական հաստատութեան համար, որպիսին և ստացուեց 1892 թուի մայիսին: Այդքան ժամանակում Հոգևոր Կառավարութիւնն անընդհատ ծախսեր էր անում՝ ինչպէս եղած շինութիւնները քանդելու և մաքրելու, այնպէս և ամբողջ քաղաքամասը շրջապատելու և մայր եկեղեցւոյ շինութեան նիւթեղէնը պատրաստելու վերայ:

Բայց բոլոր վերոգրեալներից յետոյ՝ ծագեց մի այլ հարց. ի նկատի ունենալով յիշեալ քաղաքամասի մերձակայութիւնը միջնաբերդին և շինութեան բարձրութիւնը՝ կարե՞լի է արդեօք թոյլատրել ծրագրած եկեղեցաշինութիւնը N 3 քաղաքամասում և ահա 1894 թուին Նորին Բարձր Գերազանցութիւն Կովկասի Քաղաքացիական մասի Կառավարչապետը՝ համաձայնելով յատկապէս այդ գործի համար հրաւիրած Մասնաժողովի անդամոց մեծամասնութեան կարծիքի հետ, անյարմար դատեց թոյլատրել N3 քաղաքամասում եկեղեցու շինութիւնը, որպիսի որոշման մասին տեղեկագրուեց Հոգևոր Կառավարութեան 1894 թուի յուլիսի 2-ին N 77 գրութեամբ, իսկ նոյն տարւայ օգոստոսի 23-ին հոգևոր կառավարութեան արած բոլոր ծախսերից յետոյ, Զինուորական Նահանգապետի որոշման համաձայն՝ քաղաքային գետինը նորից յետ խլուեց:

1895 թուին և 1896 թ. սկզբներին ի միջի այլոց փակուեցան և կարսի եկեղեցական դպրոցներն, որպէս անհամապատասխան 1884 թուի կանոնների առաջին յօդուածի, որովհետև ունևոր աշակերտներից ստացւում էր ուսումնավարձ: Ծխական Հոգաբարձութիւնն ի նկատի ունենալով եկամտից մշտական աղբիւրների բացակայութիւնն ու կուտուած 3600 ռուբլի պարտքը, որի վճարման համար հոգաբարձական գանձարանում գտնուեց մի միայն մի հարիւր վաթսուն և չորս ռուբլի կոպէկներով անմիջապէս թողեց փետրուարին փակուած դպրոցն ու հրաժարեցաւ:

Այն ինչ եկեղեցւոյ շինութեան հարցը մնում էր բաց, իսկ քաղաքային հողի յետ առնելու պատճառաւ՝ մասնաւոր անձերից գնուած հողաբաժինները կարգի բերելու համար Հոգևոր Կառավարութիւնից պահանջւում էին նորանոր ծախսեր: Ի նկատի ունենալով եկեղեցու շինութեան համար եկամտի մշտական աղբիւրների կարևորութիւնն ու կախուած ժայռերի տակ գտնուող Ս. Աստուածածնայ եկեղեցու, Յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան ամբողջ վտանգաւորութիւնը, որտեղ յաճախակի ընկնող ժայռերից պատահում էին շատ դժբաղտ դէպքեր՝ մարդկային բազմաթիւ զոհերով, ես 1896 թուին՝

դիմելով Զինուորական պ. Նահանգապետին, խնդրեցի կարգադրել, որ կա՛մ որոշուին քաղաքային հողի սահմաններն և վաճառուի այն Հոգևոր Կառավարութեան կա՛մ գնել վերջինիս սեփականութիւնը քաղաքի օգտին, որովհետև Հոգևոր Կառավարութեան արած ծախսերը մնում էին մեռած դրամագլուխ, իսկ հազարաւոր ժամաւորներ գտնւում էին միշտ մահուան վտանգում, մանաւանդ անձրևային եղանակներին։

Խնդրանացս համաձայն թոյլատրուեց վաճառել քաղաքային գետինը Հոգևոր Կառավարութեան, որովհետև կարսի բարեշինութեան մասնաժողովը ազատ միջոցներ չունենալու պատճառաւ՝ Հոգևոր Կառավարութեան սեփականութեան քաղաքի օգտին առնելը հնարաւոր չգտաւ։

Այսպէս ահա՛, մի միայն 1896 թուի յունիսին, դպրոցների փակումից չորս ամիս յետոյ, Հոգևոր Կառավարութիւնը՝ գնելով քաղաքապատկան հողաբաժինը՝ տէր դարձաւ ծախսած դրամագլխի և նոյն ամսի վերջերին հաստատուեց Ս. Աստուածածնայ եկեղեցու կրպակների յատակագիծը և սկսուեց շինութիւնը, որ և աւարտուեց հետևեալ 1897 թուի փետրուարին։ 1896 թուի յունիսի 14-ին N 70 խնդրագրովս պատիւ ունեցայ դիմելու Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին և խնդրելու թոյլտուութիւն Յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան համար առանձին շինութիւն կառուցանելու, որպիսին և թոյլատրուեց ինձ նոյն տարուայ յունիսի 17-ին N 879, որով և հրամայուեց ստանալ շինութեան համար կարևոր գումարը Կարսի վիճակի բոլոր եկեղեցիներից։ 1897 թուի յունիսին սկսուեց յիշեալ շինութեան կառուցումը, իսկ հետևեալ 1898 թուին՝ նախընթաց 1897 թուի դեկտեմբերի վերջերին առանձին հաստատուած յատակագծով սկսուեց երկրորդ յարկը։

Սոյն գործը Նախարարութեան իրաւաբանին իրեն եզրակացութիւն ներկայացնելու համար յանձնելուց յետոյ, որը ի նկատի առնելով կալուածոց գրաւման ապօրինութիւնը, գտել էր օրինական վերադարձնել Հոգևոր Կառավարութեան բոլոր վերոյիշեալ կալուածներն իրենցից ստացած եկամտի հետ միասին, իսկ հոգևոր դպրոց բանալու համար գալ առանձին համաձայնութեան, Նորին Բարձր Գերազանցութիւն պ. Նախարարը բարեհաճեցաւ մակագրել իրեն համաձայնութիւնը տուած եզրակացութեան վերայ։ Իսկ այժմս, ինձ անյայտ պատճառով, Ժողովրդական Լուսաւորութեան պ. Նախարարի հրամանաւ, ինչպէս այդ երևում է սորա հետ ներկայացրածս գրութիւնից, առաջարկուած է Կովկասեան Ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուին յայտնել ինձ, որ 1) Կարսի Հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցի սեփականութեան Դպրոցական Վարչութեան յանձնելուց ծագած վէճերի լուծումը պէտք է տեղի ունենայ այն եղանակով, որպիսին

ցոյց է տրուած 1898 թուի մարտի 26-ին Նախարարական Մասնաժողովի Բարձրագոյն հաստատուած որոշման մէջ և 2) ազատ կացուցանել փոխանորդին յիշեալ տան մէջ իրեն և Հոգևոր Կառավարութեան սենեակների վարձի վճարումից ցառանձին տնօրինութիւն։

Ժողովրդական լուսաւորութեան պ. Նախարարի վերոգրեալ վճիռը, որով առաջարկւում է Հոգևոր իշխանութեան բողոքելու դատաստանական կարգով, պատճառաբանւում է նրանով, իբր յիշեալ կալուածները պատկանում լինէին Կարսի եկեղեցական ուսումնարանին, որը փակուեց շինութեանց տակի գետինը գնելուց չորս ամիս առաջ և այդպիսի մի կարգադրութիւն, որով հաստատւում են Կովկասեան Ուսումնարանական Վարչութեան գործողութիւնները վերոյիշեալ կալուածներն իրեն տեսչութեան տակ առնելու վերաբերութեամբ, ես գտնում եմ օրինաց հակառակ և էականապէս միանգամայն անկանոն հետևեալ հիմունքներով.

*1898 թուի մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած Նախարարաց Մասնաժողովի որոշմամբ, որ Պետական Խորհրդի 1897 թուի յունիսի 2-ին Բարձրագոյն հաստատուած կարծեաց լրացուցիչ մասն է հանդիսանում և որը վերաբերում էր Հայոց եկեղեցական-ծխական դպրոցներն Ուսումնարանական Վարչութեան տեսչութեան յանձնելուն, յանձնարարուած էր վերջինիս Կովկասի ներկայացուցիչներին անել բոլոր կարգադրութիւնները իրենց տեսչութեան տակ առնելու այն բոլոր կալուածներն, որոնք պատկանում էին իրեն ենթարկուած եկեղեցական և վանքական դպրոցներին՝ որպէս իրաւաբանական միութեանց (անձանց)։ 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանի էական մտքի համաձայն՝ այդպիսով Դպրոցական Վարչութեան տեսչութեան պէտք է յանձնուէին մի միայն այն կալուածներն, որոնք 1897 թուի յունիսի 2-ի օրէնքով Լուսաւորութեան Նախարարութեան ենթարկուած մի և երկդասեան դպրոցների անվիճելի սեփականութիւն էին կազմում և միայն այն դէպքերում, երբ Դպրոցական Վարչութիւնն հարկաւոր հիմունքներով հաստատում է կալուածոց դպրոցներին պատկանելու ենթադրութիւնը (*презумция*) Հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներին իրաւունք է տրուած սեփականութեան մասին ծագած վէճերը պարզելու համար դատարանի դիմելու։*

*Վերոյիշեալ գոյքի դպրոցին պատկանելու այդ տեսակ ենթադրութիւնը (*презумция*) ոչ մի բանով պարզուած և ցոյց տրուած չէ և բացի դորանից ի նկատի առնելով եկեղեցու՝ նրանց վրայ ունեցած անվիճելի իրաւունքը, 1898 թուի մարտի 26-ի կարգադրութեան երկրորդ պարբերութեան գործադրութիւնը տեղի ունենալ չի կարող։ Եթէ անգամ Նախարարաց Մասնաժողովի որոշման մէջ թոյլ տանք մեզ ընդունել Կովկասեան Դպրոցական Վարչութեան հայեցակէտը, որով նա՝ հակառակ այդ որոշման էական մտքի, ընդարձակում է վերջինիս*

*գործադրութեան (*приминения*) շրջանակը և այն դէպքերի վերաբերութեամբ, երբ դպրոցները կալուածոց սեփականատէր չլինելով՝ Հոգևոր Բարձրագոյն իշխանութեան կարգադրութեան համաձայն օժանդակում էին նրանց եկամուտներով, ապա և այդ դէպքում վերոյիշեալ կալուածներն չէին կարող վիճելի լինել, որովհետև փակուած դպրոցներից ոչ մինը չէր կարող օգտուել այն հողաբաժնով, որը ձեռք է բերուած վերջիններիս փակումից յետոյ և որի վրայ եղած շինութիւններն, ինչպէս այդ երևում է պ. տեսչի 1898 թուի սեպտեմբերի 5-ին կազմած ցուցակից՝ եկեղեցական ուսումնարանի փակումից 2 ½ տարի յետոյ՝ դեռ չունէին միջնապատեր, յատակ, առաստաղ, դռներ, սուաղ, ապակիներ և այլն: Լուսաւորութեան Նախարարին ներկայացրածս վերոգրեալ խնդրի մէջ առաջ բերած հանգամանքներից և սորա հետ ներկայացրած վաւերագրերից, որոնք ներկայացուած էին նաև Նախարարութեան քննութեան, կառավարիչ Սենատը կը հաճի նկատել, որ*

1. 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանի երկրորդ կէտը չի կարող ներկայ դէպքում որևէ առնչութիւն և գործադրութիւն ունենալ: Ինքը՝ Կովկասեան Դպրոցական Վարչութիւնը, ինչպէս այդ երևում է նոյն շրջանի պ. հոգաբարձուի շրջաբերականի 7-դ կէտից, թոյլ տալով իրեն 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանի անկանոն ընդարձակող մեկնութիւնը, հրամանագրեց Տեսչութեան պաշտօնեաներին եկեղեցական ծխական դպրոցների գոյքի ցուցակների մէջ արձանագրել մի միայն այն կալուածները, որոնցից նոքա օգտուել էին: Այն ինչ կարսի ուսումնարանի փակման ժամանակ Հոգևոր Կառավարութիւնը դեռ շինութեանց տակի հողի սեփականատէր անգամ չէր:

2. Որ 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանը, որպէս սահմանափակող օրէնք չի կարող մեկնուած լինել ընդարձակօրէն և այդ պատճառով նա չի զրկում Հոգևոր իշխանութիւնը իւր օրինական արտօնութիւնից՝ քաղաքացիական իրաւունքներով իրեն պատկանող կալուածների տէր և կարգադրիչ լինելուց: Ցոյց տուած պայմանների գոյութեան միջոցին, եկեղեցական անվիճելի սեփականութիւն կազմող Е *քաղաքամասի յափշտակութիւնը Դպրոցական Վարչութեան կողմից ոչ այլ ինչ է, քան եկեղեցական կալուածոց յարքունիս գրաւումն և սոյն գործում Կառավարիչ Սենատի քննութեան ենթակայ հարցը կայանում է նրանում արդեօք 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանաւ վերապահուա՞ծ է Դպրոցական Վարչութեան անկօնտրօլ բարեհայեցողութեան այս կամ այն եկեղեցական սեփականութիւններ գրաւելու իրաւունքը առանց որևէ ապացոյցի և հիման մի միայն յիշեալ Բարձրագոյն հրամանի վերայ մատնանիշ լինելով, թէ՞ դոյն այդ վարչութիւնը պարտաւոր է 1897 թուի յունիսի 2-ի օրէնքի մէջ ցոյց տուած դպրոցների կալուածները գրաւելիս ղեկավարուել 1898*

թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանի իսկական մտքով, որով Դպրոցական Վարչութեան տեսչութեան տակ պէտք է անցնեն մի միայն այն կալուածներն, որոնք պատկանում են դպրոցներին, ինչպէս իրաւաբանական անձանց։

Կարծում եմ, որ սոյն հարցը կարող է մեկնուած լինել մի միայն այն մտքով, որ Դպրոցական Վարչութիւնն իրեն կարծիքով դպրոցներին պատկանող կալուածների վերայ իւր պահանջներն անելիս պէտք է (առաջնորդուի), ղեկավարուի նրանց պատկանելիութեան գէթ որպիսիևիցէ արտաքին նշաններով և նրա գործողութիւնները սոյն հանգամանքում ենթակայ են Կայսրութեան Վարչական-դատաստանական բարձր հիմնարկութեան Կառավարիչ Սենատի I Դէպարտամէնտի ստուգութեան և հսկողութեան։

Սոյն հարցի ուրիշ կերպ լուծումը կզրկէր Հայ-լուսաւորչական եկեղեցու հաստատութիւններն իրենց օրինական համաքաղաքացիական իրաւունքից՝ սեփականատէր լինելու արտօնութիւնից և միանգամայն անել վիճակի մէջ կդնէր նորանց Դպրոցական Վարչութեան առաջ, որն իւր ձգտումները (домогательства[339]) տարածում է եկեղեցական ամեն տեսակ սեփականութեանց վերայ։

Վերոյիշեալ շինութիւնները կառուցանելիս Հոգևոր Վարչութիւնը ղեկավարում էր Հոգևոր Կառավարութեան, փոխանորդի բնակարանի և աղօթատան պակասը լրացնելու ցանկութեամբ, իսկ ինչ կը վերաբերի անձնական ենթադրութեանս՝ նոյն շինութեան մէջ տեղ տալու հոգևոր և ոչ թէ եկեղեցական-ծխական դպրոցի, որի համար դիտաւորութիւն ունէի բանակցութիւն սկսելու Հոգևոր ծայրագոյն իշխանութեան և կառավարութեան հետ, դիտաւորութիւն, որը չի արտայայտուած ոչ մի պաշտօնական գրութեան մէջ և հետևապէս չի իրագործուած, ոչ թէ միայն կառուցուող շինութիւններն 1897 թուի յունիսի 2-ին դպրոցական վարչութեան յանձնուած ուսումնարանի սեփականութիւն չէր դարձնում, այլև ոչ մի պարտաւորութիւն չէր դնում Հոգևոր իշխանութեան վերայ անպատճառ հիմնելու հոգևոր դպրոցը։

Պարտք եմ համարում բացատրել, որ ես չեմ մերժում ապագայում պատշաճաւոր թոյլտուութիւնից յետոյ՝ հիմնել այն՝ հոգևոր դպրոցների կանոնների համաձայն առանձին կանոնադրութեամբ։ Դպրոցական Վարչութիւնը թափանցելով ներկայ դէպքում ցանկութեանցս մէջ, մոռանում է, որ ցանկութիւնը ցանկացողի ազատ կամքի մի գործողութիւն է և ցանկութիւնն իրագործելուց յետ կենալը օրէնքով չի դատապարտւում։

Վերոգրեալների համաձայն դարձնում եմ պ. պ. սենատօրների բարեհաճ ուշադրութիւնը.

---

339 Домогательства – նշանակում է ոտնձգութիւն:

1. որ 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամանով յանձնարարուած էր տեղական Դպրոցական Վարչութեան իրեն տեսչութեան տակ առնել մի միայն այն կալուածներն, որոնք պատկանում էին 1897 թուի յունիսի երկուսի օրէնքի հրատարակութեան ժամանակ եկեղեցիներին կից գոյութիւն ունեցող դպրոցներին.

2. որ Դպրոցական Վարչութեան գործողութիւնները վերոյիշեալ կալուածներն իրեն տեսչութեան տակ առնելու վերաբերութեամբ, կալուածների, որոնք ինչպէս ձեռք բերելու սկզբնական՝ (նպատակով), այնպէս և յետագայում յատկացուած նպատակներով ոչ մի առնչութիւն չունին 1897 թուի յունիսի 2-ին Դպրոցական Վարչութեան իրաւասութեան ենթարկած ուսումնարանների հետ և այդ պատճառով էլ հանդիսանում են ապօրինի, ոչնչով չը պատճառաբանուած, հետևապէս և կամայական, պատիւ ունիմ սորանով ամենախոնարհաբար խնդրելու կառավարիչ Սենատի առաջին դէպարտամէնտից ոչնչացնել Լուսաւորութեան Նախարարի վերջին վճիռը, որի դէմ խնդրագրովս բողոքում եմ և յիշեալ կալուածոց ցուցակագրութեան և գրաւման վերաբերեալ Դպրոցական Վարչութեան բոլոր գործողութիւնները առ ոչինչ համարել։

Սորա հետ պատիւ ունիմ ներկայացնելու Կարս քաղաքի Բարեշինութեան Մասնաժողովի չորս արձանագրութեանց պատճէնները 1889 թուի յուլիսի 21-ից N62, 1894 թուի յուլիսի 2-ից՝ N 77, 1894 թուի օգոստոսի 23-ից N 66, 1896 թուի փետրուարի 10-ից N 35 նոյն տարուայ մայիսի 22-ին հաստատուած Հոգևոր Կառավարութեան գնած գետնի հիմնական մակարդակը, Ս. Աստուածածնայ եկեղեցու կրպակների յատակագիծը՝ հաստատուած 1896 թ. յունիսի 18-ին, Հոգևոր Կառավարութեան դեռ չաւարտած շինութեան յատակագիծը պ. տեսչի գրագրութեան հետ Հոգևոր Կառավարութեան և փոխանորդի բնակարանի վարձուց հատուցման և եկեղեցական կրպակների յափշտակութեան վերաբերեալ կազմած ցուցակի և Լուսաւորութեան Նախարարութիւնից ստացուած գրութեան պատճէնները, որոնցից կառավարիչ Սենատը կը հաճի քաղել այն բոլոր կարևոր փաստերը, որոնք պէտք են վերոգրեալների ճշմարտութիւնն ապացուցանելու և սոյն դէպքում Կովկասի Ուսումնարանական Վարչութեան գործողութեանց անկանոնութիւնը պարզելու համար։

Կարուց Վիճակի Փոխանորդ՝
Եղիշէ վարդապետ Մուրադեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 263, թթ. 6-14 շրջ., թարգմանութիւն[340], ձեռագիր:

340 Փաստաթուղթը երկլեզուեայ է:

№ - 162
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՄԿՐՏԻՉ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ, Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԵԱՆ, ԿԱՐՍԻ ՅԱՋՈՐԴԱՐԱՆԻ ԵՒ ՅՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

27 հոկտեմբերի 1899 թ.
Ս. էջմիածին

Նորին Վեհափառութեան Տեառն Տեառն Մկրտչի Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց կարուց Վիճակի Փոխանորդ եղիշէ վարդապետ Մուրադեանից Ամենախոնարհ խնդիր

Վեհափառ Հայրի՛կ, սորա հետ ներկայացնելով կառավարիչ Սենատի առաջին դէպարտամէնտին մատուցածս բողոքի պատճէնը[341] *հայերէն թարգմանութեան հետ կարուց եկեղեցական շինութեանց անկանոն գրաւման վերաբերութեամբ, որից Ձերդ Վեհափառութիւնը կը հաճի մանրամասնօրէն տեղեկանալ այդ գործի ամբողջ ընթացքին, նրա մասին եղած վճռի փոփոխութեան և ներկայ վիճակին, պատիւ ունեմ ամենախոնարհաբար յայտնել հետևեալը։*

1898 թուի մարտի 26-ին Նախարարաց Մասնաժողովի Բարձրագոյն հաստատուած որոշման համաձայն դպրոցական վարչութեան տեսչութեան տակ պէտք է անցնէին մի միայն այն կալուածներն, որոնք կազմում էին փակուած դպրոցների անվիճելի սեփականութիւն՝ որպէս իրաւաբանական անձանց և ոչ մի առնչութիւն չունէին եկեղեցիների կամ վանքերի հետ։ Կովկասեան Ուսումնարանական Վարչութիւնն օգուտ քաղելով մեզ համար ժամանակի ձախորդ հանգամանքներից ստեղծուած ծանր պայմաններից, տարածեց իւր իրաւունքներն ոչ թէ միայն եկեղեցական կալուածների, այլև նոյն իսկ աղօթատների, (Դիլիջան, Կարս և այլն) եկեղեցական սրբութեանց և նրանց անվիճելի՝ բոլոր պետութեանց մէջ և ամեն տեսակ տիրապետութեան ժամանակ դարերի ընթացքում օրէնքով սրբագործուած գոյից վերայ, (ինչպէս Աղէքսանդրապօլի հրաշագործ Ս. Աստուածածնայ պատկերի գանձանակների և մոմավաճառութեան եկամուտների վերայ)։ Որքան էլ խիստ շրջան ունենայ պետական մարմինը, այնու ամենայնիւ օրէնքն անողոք և անխնայ կերպիւ պատժել է ամեն մի սրբապղծութիւն և կրօնի, եկեղեցու և վերջինիս սեփականութեանց դէմ եղած զեղծումներն պետական շահերի և կազմի դէմ գործած յանցանքներից շատ դէպքերում վեր դասելով՝ յանցաւորներին ենթարկել է ամենախիստ պատժին և թէպէտ մեր ձեռին է տէրութեան

[341] Տես թիւ 161 փաստաթուղթը։

օրէնքներով սրբագործուած – որպէս կրօնական համաքաղաքացիական մի հիմնարկութեան՝ մեզ վերապահուած զէնքը, այնուամենայնիւ յանցանքը ցայսօր մնում է որևէ պատասխանատուութիւնից ազատ: Այժմս էլ երբ կանգնում ենք դատարանի առաջ՝ պաշտպանելու մեր իրաւունքը եկեղեցական վիճելի սեփականութեանց վրայ՝ նոյն իսկ 1898 թուի մարտի 26-ի օրէնքի՝ իրեն էական մտքի հակառակ գործադրութիւնից յետոյ, դպրոցական նոյն վարչութեան մեքենայութեանց շնորհիւ՝ նրա ներկայացուցիչների կողմից՝ մեզ մի տեղ պատասխան է տրւում, որ մեր վէճերը վարչական կարգով պէտք է քննուին, (Երևան, Շամախի). մի ուրիշ տեղ դատարաններն են ցոյց տալիս. այն ինչ, եթէ առաջին օրէնքը գործադրուէր, Դպրոցական Վարչութիւնը՝ համաձայն XVI հատորի առաջին մասի 1282-1298-րդ յօդուածների, ինքը՝ նախ քան կալուածների յափշտակութիւնը՝ զատ պէտք է վարէր նրանց պատկանելութեան մասին (ինչպէս այդ տեղի ունի այժմս Գեղարդայ վանուց մեր ձեռքին եղած կալուածոց վերաբերութեամբ): Մինչդեռ 1897 թուի յունիսի 2-ի և 1898 թուի մարտի 26-ի օրէնքներն երբէք չեն զրկել մեզ եկեղեցական-ծխական դպրոցներ ունենալու իրաւունքից, այլ միայն ենթարկել են այդ դպրոցները Լուսաւորութեան Նախարարութեան տեսչութեան՝ ազատ կացուցանելով մեզ ուսուցչաց և աշակերտների ցուցակները պահելուց, իսկ Դպրոցական Վարչութեան իրաւունք են տուել իւր տեսչութեան տակ առնելու ուսումնարաններին սեփականութեան իրաւունքով պատկանող և ոչ թէ եկեղեցական-վանքական կալուածներն: Մինչդեռ վերոյիշեալ 1897 թուի յունիսի 2-ի և 1898 թուի մարտի 26-ի օրէնքներն հանդիսանում են դեռ օրէնսդրական կարգով իրենց ոյժը պահպանած 1884-1889 թուի մեր եկեղեցական-ծխական դպրոցներին վերաբերեալ կանոնների լրացուցիչ մասը, Կովկասեան դպրոցական վարչութիւնն՝ անտես առնելով պետութեան մէջ բարձրագոյն միակ օրէնսդիր մարմնի՝ Սինոդի և Պետական Խորհրդի գոյութիւնը, որոնց միայն վերապահուած է Բարձրագոյն հաւանութիւնից յետոյ նոր խմբագրած օրէնքների հրատարակութիւնը կամ հների գործադրութիւնից հանելը, ոչնչացնում է կայսերահաստատ օրէնքներն և մեզ թոյլ չի տալիս՝ իրեն իրաւասութեան ենթակայ՝ օրինական՝ եկեղեցական –ծխական դպրոցների բացումը: (Բաթում, Բաքու և Կարս):

Զարմանալին այն է, որ պետութեան մէջ պաշտօնակից ծառայողներն՝ դպրոցներին վերաբերեալ օրէնքներն այլապէս են հասկանում և գործադրում Բեսարաբիայի և Հաշտարխանի թեմերում և այլապէս Կովկասում: Մինչդեռ Դպրոցական Վարչութիւնն յիշեալ երկու թեմերում երբէք չի խառնւում նիւթականին և թողել է հոգաբարձական կազմը, Կովկասում մեզ պատասխանում են, որ եկեղեցական-ծխական անունով դպրոցներն այլևս գոյութիւն ունենալ չեն կարող և խու-

սափելով այդ պատասխանը մեզ գրաւոր տալուց, նոյն մտքով գաղտնի շրջաբերականներ են ուղարկում ստորադրեալ պաշտօնեաներին։ Բայց մի՞թէ տեսնուած բան է, որ օրէնսդրական կարգով տեղի ունեցած կարգադրութիւնների մասին այդ ճանապարհով առաջնորդուին։ Այո՛, տեղի ունի այս ամենը, որովհետև բարձրագոյն շրջաններում տեղեկութիւն չունին ոչ թէ միայն դորա, այլև այն տարօրինակ կացութեան մասին, որպիսին գոյութիւն ունի ընդարձակ Ռուսիայի հեռաւոր ծայրերում և չնայած մեր դարաւոր սիրոյ և անսահման հպատակութեան, մեր մասին կայացրել են հազար ու մի բաղդախնդիրների շահամոլութեան շնորհիւ ստեղծուած թիւր կարծիքը և մեզ պետական կազմի ու հպատակութեան հակառակ միտումներ ունեցող մի ազգ են համարում։

Մեր գործերի այս տեսակ կացութեան միջոցին թէ ո՞րպիսի մեծ նշանակութիւն պէտք է ունենայ Կառավարիչ Սենատի առաջին դէպարտամէնտի կարծիքը, որն առանց օրէնքը մեկնելու չի կարող հաստատել կամ բեկանել հանգամանքների բերմամբ իրեն ներկայացրած բողոքիս վերաբերեալ վճիռը, այդ գիտէ իրաւաբանութեան և պետական օրինաց մասին ամենատարրական հասկացողութիւն ունեցողն անգամ։

Կային ժամանակներ, երբ Ս. էջմիածինը՝ մի միայն մի քանի վարդապետ ունենալով, գնահատում և մեծ նշանակութիւն էր տալիս Պետերբուրգի պէս մի վայրում իրեն ներկայացուցիչ ունենալուն և, նոյն իսկ, առանց գործի, մի միայն անուանական կերպով և ժամօրհնողի պարտաւորութեամբ, իսկ Զերդ Վեհափառութեան օրօք՝ նոյն իսկ ազատ ունկնդրութեան համար փոխանորդ էր պահւում այնտեղ։ Բայց այժմս, Հայաստանեայց եկեղեցու այս տագնապալից կացութեան միջոցին, այդպիսի կարևոր վայրը մնացած է առանց փոխանորդի և մեզ բարձրագոյն շնորհուած այդ իրաւունքը մնում է անգործադրելի։ Մի իրաւունք, որով եթէ օգտուէինք հեռատես, խելացի և օրինական կերպով, անշուշտ ազդեցութիւն պէտք է ունենար մեր գործերի փոքր ի շատէ բարւոքման վերայ։

Թոյլ է անձրևի կաթիլը, բայց ծանր և տոկուն գործողութեամբ՝ կակղացնում է և ծակում լերկ ժայռը։ Այդպիսի մի կարևոր տեղը մնացել է առանց մարդու իսկ Գօրի, Նուխի, Հին Նախիջևան և աւերակ-կիսակործան վանքերում վարդապետներ ունինք։ Անշուշտ հիւսիսի կլիման ու բնութիւնը՝ հարաւային պայծառ արևի, փարթամ բնութեան, վանական կամ Կովկասեան կիսաասիական քաղաքների կեանքին սովոր մի մարդու համար առանձին գրաւիչ բան ներկայացնել չի կարող, սակայն գործին փոքր ի շատէ նուիրուած անձը ամեն տեղ մխիթարութիւն կգտնի, տեսնելով՝ որ ինքն էլ աշխատում է օգտակար լինել այն ժողովրդին, որը սիրել է, որին նուիրուել և որի ծնունդն է ինքը։

Քաջայայտ է Ձերդ Վեհափառութեան, որ ցայսօր երբէք փախուստ չեմ տուել ինձ վրայ դրուած պարտքից և թոյլ ոյժերիս ներածին չափով աշխատել եմ օգտակար լինել օրէնքի սահմանում ազգին և եկեղեցուն այնպիսի մի տեղ, որը նախորդներից աքսորավայր է հռչակուել և նրանց անգործութեան պատճառ եղել: Երբէք չեմ ըմբոստացել և զինուորի անպայման հնազանդութիւնն իշխանութեան առաջ կեանքիս հիմքն ընդունելով, միշտ պատրաստակամ եմ եղել ամեն տեսակ պաշտօններ վարելու, սակայն այժմս համարձակւում եմ ամենախոնարհաբար խնդրել Ձերդ Վեհափառութիւնից՝ սոյն տարուայ յունուարից, երբ յուսալի է, որ կը հասնի գործիս քննութեան հերթը, փոխադրել ինձ Պետերբուրգ ժամանակաւոր կերպով՝ իմ տեղս պաշտօնակատար ուղարկելով՝ մինչև գործիս վախճանը՝ Սենատում XVI հատորի առաջին մասի 1324 յօդուածի հիման վերայ հարկաւոր բացատրութիւններ տալու, մի առ ժամանակ այնպէս ընդունելով, որ ես էլ կամ սովորելու կամ բժշկուելու եմ գնացել եղբայրակիցներիս պէս, որովհետև այլապէս՝ հոգեկան տանջանքը մաշելու է ինձ:

Պարտք եմ համարում ամենախոնարհաբար աւելացնել, որ հակառակ Ձերդ Վեհափառութեան հաղորդած լուրերի՝ ես ոչ մի տեղից չեմ ստացել Ձեր յանձնարարականով և հրամանագրով որոշուած ոչ թէ միայն 800 ռուբլի գումարը, այլև գնալուս ճանապարհածախքն անգամ ոչ ուզել և ոչ էլ ցանկութիւն ունեմ ստանալու՝ աւելի գործիս համար մտածելով և տանջուելով, որը կապուած է պատուիս և անուանս հետ, քան հազարների և նիւթական ապահովութեան մասին: Բացի վերոյ գրեալներից՝ - տրտունջ եմ լսում, որ ցայսօր Յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան շինութեան մասին մանրամասն հաշիւ չեմ ներկայացնում Սինոդ: Պատիւ ունեմ յայտնելու, որ այդպէս մնալու պատճառը նախ շինութեան մի քանի մասերի թերի լինելն է և երկրորդ՝ մինչև գործի վճիռը՝ այդ միանգամայն անհնար եմ գտնում եկեղեցու և Հոգևոր իշխանութեան շահերի տեսակէտից: Հակառակ դէպքում երբէք չէի ուշացնիլ այդ մեծ պարտականութեանս կատարումը, որովհետև այդ գործը պարծանքս է, պատիւս և մի միայն աշխատութեանս պտուղը, որպիսին հասցրել եմ առանց էջմիածնապատկան վիճակային կամ օտարային արդեանց գէթ մի կոպէկի ձեռնամուխ լինելու՝ ինչպէս այդ եղել է ուրիշ տեղերում, իսկ վիճակի եկեղեցիներից ստացել եմ հազիւ միայն 3600 ռուբլի Ձերդ Վեհափառութեան 1896 թուի յունիսի 19-ի N 879 հրամանի համաձայն և 750 ռուբլին էլ փոխարինաբար կառուցածս շինութիւնների եկամուտներից վճարելու պայմանաւ: Եւ եթէ այսօր ունեմ մի մեծ դժբաղդութիւն, այդ կայանում է նրանում, որ հանգամանքների շնորհիւ արժանի չեղայ Ձերդ Ս. Օծութեան այցելութեանը, որպէս զի անձամբ տեսնել կարողանայիք մեր բոլոր եկեղեցական շինութեանց մէջ առաջնակարգ տեղ բռնող և

անհաւատալի միջոցներով ստեղծած մարգարիտը, որի արժէքը այսօր հասնում է մի հարիւր քսան հազարից շատ աւելի մեծ գումարի։
Փոխանորդ կարուց՝ եղիշէ վարդապետ Մուրադեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 263, թթ.3-5 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 163
ԽԾԿՈՆՔ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՏԵԿՈՐԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԿԱՄ ՆՈՐ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

30 յունուարի 1901 թ.
Խծկոնք

Հոգևոր Կառավարութիւնն Հայոց Կարուց Վանահայրէ Խծկոնից վանուց Յարութիւն վարդապետ Մանուկեանէ Յայտարարութիւն

Ի կատարումն առաջադրութեան Հոգևոր Կառավարութեանդ յ3-ն նոյեմբերի անցելոյ 1900 ամի ընդ N 1439 առ ելանել իմոյ ի գիւղն Տիկոռ, կազմելոյ ժողով ի շինականաց գեղջն, առաջարկելով նորոգել զտեղացին եկեղեցին, որ ի պատճառ խարխուլ դրութեան փակեալ կայ ի մարմնաւոր կառավարութենէ, պատիւ ունիմ յայտնել կառավարութեանդ հետևեալն.

Տէրունական ընտանեկան ցուցակաւ գիւղս բաղկացեալ է յ39 տանց, յորոց 25-ն Հայ Լուսաւորչական են, իսկ 14-ն՝ մահմեդականք, ազգութեամբ քուրդ և տաճիկ, խառն բնակեալք ի բազում ժամանակաց հետէ։ Որպէս յայտ է բնակիչք գեղջս զբաղին երկրագործութեամբ, յորմէ ստանան դուզնաքեայ արդիւնք, որ հազիւ բաւէ ի կերակրել զգերդաստանն և ի գարնան ցանել զարտս իւրեանց ի 25 տանց հայոց, երկուսն ունին ոչխարք 50-100, միով բանիւ աղքատ են, ունին պարտս բազումս և հազիւ կառավարին և այժմ զի՞արդ կարին նորոգել զմեծ հնակառոյց եկեղեցին, որոյ նորոգութեանն առնուազն պարտ է 5000 րուբլի։

Վասն որոյ ի կազմել իմոյ ժողովն վասն գործոյս այսորիկ, շինականք գեղջս ներկայացուցեալ ինձ խնդիր յանուն Հոգևոր Կառավարութեանդ խնդրեցին և ինձ գրել ուր անկ է և խնդրել զի տայցեն նոցա զհասանելիք գումարն գոյացելոյ ի Հասան Ճան կոչեցեալ, այժմ արքունական հողոյ, որ գտանի առընթեր սահմանի գեղջս և պատկանէր երբեմն տեղւոյս Ս. Երրորդութեան եկեղեցւոյ և կառավարութիւնդ ետ կապալաւ բնակչաց Ճալա գեղջ, Շուրագեալու մասի ժամանակաւ երեք ամաց, արդիւնք որոյ գտանի այժմ ի կառավարութիւնդ։

Յանկութիւն նոցա այս է, զի ստացեալ նոցա զսոյն գումարն յաւելեալ ի նա մի քանի հարիւր րուբլի և յարդեանց իւրեանց կառուսցեն մի փոքր եկեղեցի: Այլ վասն հնակառոյց եկեղեցւոյ, ժողովն յայտ արար զի ոչ կարեն վերանորոգել զնա վասն չքաւորութեան և աղքատութեան իւրեանց և խնդրեցին ինձ գրել ուր անկ է, զի ազգն վերանորոգեսցէ զնա ի հաշիւ իւր, ի պահպանութիւն հնաւանդ կառուցման և տասնդարեան յիշատակի իսկ զներքին զարդն եկեղեցւոյ հոգասցին ինքեանք շինականք յարդեանց իւրեանց:

Յայտ արարեալ զեզրակացութիւնն կազմեալ ժողովոյ իմոյ յաղագս երկուց առաջարկութեանց շինականացն գեղջն Տիկոռոյ, խնդրեմ Հոգևոր Կառավարութեանդ առնել տնօրէնութիւն ի կատարումն միոյ յառաջարկութեանցս, որ է ընտրել ի նոցունց բարեպաշտ և Աստուածավախ անձինս յանձնել նոցա եկամուտն Հասան Ճան հողւոյ, զի յաւելեալ ի նա և զպակասորդն կառուսցեն ինքեանց փոքր եկեղեցի մի կամ ազգն վերանորոգեսցէ զհնակերտ եկեղեցին Ս. Երրորդութեան ի հաշիւ իւր առաջարկեալ շինականաց գեղջն Տիկոռոյ զներքին զարդն սորա լնուլ յարդեանց իւրեանց: Ոչ է մարթ զգիւղն Տիկոռ թողուլ առանց եկեղեցւոյ, նախ զի բնակեալ շինականացս խառն ընդ մահմեդականսն, պարտ է զի բարբառն Աստուածային ոչ երբէք շիջեսցի ի սրտէ իւրեանց և Բ. աստ գտանի միդասեան տէրունական ուսումնարանն սոյն Նախիջևանայ մասի, ուր ուսանին մեծաւ մասամբ մանկունք ազգայինք և բնակի տեղային գաւառապետն հանդերձ իւր պաշտօնակցօք:

Ըստ կարծեաց իմոց բարւոք է վերանորոգել զտեղային Ս. Երրորդութեան եկեղեցին ի հաշիւ մերազնեայս, զի պահեսցի յաւիտեան յիշատակն ազգային, որ կանգնի առաւել քան հազար ամ և հնչեսցի յաւէտ ի նա բարբառն Աստուածային, որպէս լեալ է մինչև ցայժմ:

Վանահայր Խծկոնք վանուց՝ Յարութիւն վարդապետ

ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ.407, թ. 5 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 164
ՏԵԿՈՐ ԳԻՒՂԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ՝ ԳԻՒՂՈՒՄ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻԻՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 փետրուարի 1901 թ.
Տեկոր

Հասարակական վճիռ

1901 ամի փետրուարի 16 օրն ի Տիկոռ.

Մեք ի ներքոյ սորին ստորագրեալքս Հայ Լուսաւորչականք, բնակիչք Տիկոռ գիւղի Նախիջևանայ մասի կաղզուանոյ գաւառի կարուց նահանգի ի հետևումն առաջադրութեան Հոգևոր Կառավարութեան Հայոց կարուց ի 1-ն փետրուարի սոյն ամի ընդ N 237, առ ի տալ ընտ-

րել ի մէնջ զերիս արժանաւոր անձինս հոգաբարձու, վասն շինութեան նորոյ եկեղեցւոյ գեղջս, այս թուին նախագահութեամբ վանահօր Խծկոնից վանուց Յարութիւն վարդապետ Մանուկեանի գումարեալ ժողովով ընտրեցաք ի միջոյ մերմէ վասն վերոյիշեալ գործոյն երեք հոգաբարձուք, որք են Ատոյ Խաչատուրեան, Մկրտիչ Դանիէլեան և Գէորգ Յակովբեան և Ալեքսանդրապոլցի Յակովբ Մոսոյեան, որոյ համար և ստորագրեմք.

Աւետիս Յարութեանց, Սաքոյ Յովհաննէսեանց
Խաչոյ Յակոբեանց[342]

Որովհետև սոյն Հասարակական վճիռը ստորագրուած է բնակչօք Տիկոռ գեղջ իմոյ ներկայութեամբս, որով ստորագրութեամբս և դրօշմամբ եկեղեցական կնքոյ վաւերացուցանեմ փետրուարի 16 օրն 1901 ամի, ի Տիկոռ.

Վանահայր Խծկոնից վանուց՝ Յարութիւն վարդապետ
Մանուկեան

ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 407, թ. 7 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 165
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ՝ «ՀԱՍԱՆ ՋԱՆ» ԿԱԼՈՒԱԾՔԻՑ ՍՏԱՑՈՒԱԾ ԵԿԱՄՏԻՑ ՏԵԿՈՐ ԳԻՒՂՈՒՄ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 341 *22 փետրուարի 1901 թ.*
Կարս

Ի Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ի կատարումն առաջադրութեան Թեմական Ատենիդ յ31-ն մարտի 1900 ամի ընդ N 1399[343]*, Հոգևոր Կառավարութիւնս պարտ ինքեան վարկանի ընդ այսմ խոնարհաբար մատուցանեալ զհասարակական վճիռ ժողովրդականաց Տիկոռ գեղջ վիճակիս, ի մասին ընտրութեան երից հոգաբարձուաց վասն նորոգութեան եկեղեցւոյ տեղւոյն, հանդերձ յայտարարութեամբ վանահօրն Խծկոնից վանուց՝ Բարեշնորհ Յարութիւն վարդապետի Մանուկեանց յ30-ն յունուարի տարւոյս, զնիւթական դրութենէ ժողովրդեան և եկեղեցւոյ տեղւոյն և խնդրագրով ժողովրդոցն ի 22-ն այնր ամսոյ, վասն յատկացուցանելոյ զկապալադրամս «Հասան Ջան» անուանեալ հողոյն վասն շինութեան:*

Ոչ աւելորդ վարկանի Ատեանս յաւելուլ, զի Ս. Երրորդութիւն եկե-

342 Հետևում է ևս 28 անձի ստորագրութիւն:

343 Տես ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 407, թ. 9:

ղեցին Տիկոռի վերանորոգելն յանհնարիլեացն սակի համարի ի պէտս կարի վտանգաւոր խախտուածոցն, իսկ փոքրաթիւ ժողովուրդ տեղւոյն բնակեալն խառն ընդ տաճիկ դրացեան ի տասնևհինգ ամաց հետէ բոլորովին զրկեալ գտանի ի հոգեկան կրօնական մխիթարութենէ վասն չունելոյ զեկեղեցի: Հոգևոր Կառավարութիւնս սեպուհ պարտականութիւն համարի այսու յարգոյաբար խնդրել զտնօրէնութիւն դորին առ ի տալ զիրաւունս զգանձեալ վասն վերանորոգութեան յիշատակեալ Ս.Երրորդութեան եկեղեցւոյն գումարն՝ գոյացեալն ի «Հասան Ջան» անուանեալ երբեմն եկեղեցապատկան հողոյն, որ կազմէ այժմ ինն հարիւր վաթսուն և երեք րուբլի և 69 կ., ծախսեալ վասն շինութեան նոր եկեղեցւոյ ի յարգանս խեղճ ժողովրդեան տեղւոյս:

Նախագահ Կառավարութեան՝ Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեանց[344]
Քարտուղար՝ Ս. Գրիգորեանց

ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 407, թ. 8 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 166
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՄԿՐՏԻՉ Ա.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՆՈՒԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 ապրիլի 1901 թ.
Կարս

Նորին Սուրբ Օծութեան Վեհափառ Կաթուղիկոսին Ամենայն Հայոց
Տ.Տ. Մկրտչի Առաջնոյ

Աստուածարեալ Հայրապետ,

Մեք, եղբարք Յարութիւն, Գէորգ և Սարգիս Բաղդասարեանքս, ի յիշատակ շնորհաբեր այցելութեանն Հօրդ հասարակաց ի Կարս քաղաք, նուիրաբերեմք զսեպհական տեղին մեր՝ տարածութեամբ իբր երկհարիւր քառասուն և երեք սաժէն, զգտեալն յառաջին մասին քաղաքիս, յանկեանն փողոցաց Ինժեներնայա և Ալեքսանդրովսկայա, ի կառուցումն անդր աստուածեան տաճարի, յորմէ զուրկ գտանի ցարդ քաղաքս:

Ուստի, Վեհափառ Տէ՛ր, որդիական ակնածութեամբ խնդրեմք ընկալնուլ զդուզնաքեայ նուէրս զայս և տնօրինել զարժանն ընդ ձեռն Հոգևոր Կառավարութեան տեղւոյս[345]*:*

[344] Կորիւն քահանայ Քոթանջեան – ծնուել է 1864 թ.: Կրթութիւնը ստացել է Կարսի ծխական դպրոցում: Քահանայ է ձեռնադրուել 1900 թ.: 1912 թ. դրութեամբ պարգևատրուել էր ծաղկեայ փիլոն և լանջախաչ կրելու իրաւունքով (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 12 շրջ. - 13):

[345] 1901 թ. սեպտեմբերի 28-ին Սինոդի Կառավարչական մասը հետևեալ գրութիւնն է յղել

Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ ծառայք՝ եղբարք Բաղդասարեանք

Ի դիմաց նոցին Ս. Բաղդասարեան

Մակագրութիւն. *Յանձնեմք ի Սինոդն առնել զպատշաճաւորն տնօրէնութիւն ըստ այսմ խնդրոյ։ Ի 2 յուլիսի 1901 ամի Թ. 792*

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10197, թ. 3, բնագիր, ձեռագիր:

№ - 167

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՉԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ԿԱՂՁՈՒԱՆԻ ԿԻՍԱՇԷՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԱՒԱՐՏԵԼՈՒ ԵՒ ԿԱՐՍՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՆՈՒԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ Պ. ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆԻ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԿՈՆԴԱԿՆԵՐ ՅՂԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

29 յուլիսի 1901 թ.
Կարս

Բարձրապատիւ Հա՛յր Կորիւն վարդապետ[346]*,*

Նորին Սրբազնասուրբ Օծութիւնն ամսոյս 23-ին Աղէքսանդրապօլ քաղաքում բարեհաճեց ինձ պատուիրել, եթէ պարոն Ջանփոլադեանցն չէ՛ ստացած կոնդակ կաղզուանի թերաշէն եկեղեցւոյ շինութիւնն շարունակելու, զեկուցանեմ իրեն, որպէս զի բարեհաճի այդ հրամանն արձակել։

Ինչպէս տեղեկացայ, անհրաժեշտ պէտք է պարոն Զաքարիա Ջանփոլադեանցի անուամբ կոնդակ տալ[347]*, որպէս զի նա ձեռնարկէ շինութեանն, ըստ որում անցեալ տարի պարոն բժիշկ Կաճկաճեանի և ընկերաց բողոքանաց համաձայն Նորին Սրբութիւնն պատուիրած*

Երևանի Հայոց Կոնսիստորիային. «Պատուիրի Կոնսիստորիայիդ փութով ընկալեալ յեղբարց Յարութիւնէ, Գէորգայ և Սարգսէ Բաղդասարեանց կարսեցւոց զթուղթ ընծայաբերութեան երկերիւր քառասուն և երեք սաժէն գետնոյ ի կառուցումն եկեղեցւոյ ի քաղաքին Կարսայ, առաջի առնել Սինոդիս» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10197, թ. 4):

346 Կորիւն վարդապետ Սահակեան – յետագայում՝ եպիսկոպոս: Ծնուել է 1867 թ. : Սովորել է Վարագայ վանքի վարժարանում: 1884 թ. դեկտեմբերի 29-ին Մկրտիչ Խրիմեան արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրուել է կուսակրօն քահանայ: 1894 թ. ստացել է աւագ սարկաւագի կոչում: 1895 թ. մայիսի 18-ին Մկրտիչ Ա. Կաթողիկոսի շքախմբի կազմում ներկայացել է կայսերը: 1897 թ. փետրուարին ձեռնադրուել է աբեղայ, իսկ նոյն թուի դեկտեմբերին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1897 թ. Վեհափառի կոնդակով կարգուել է Էջմիածնի գաւառի եկեղեցիների քարոզիչ: 1897 թ. նոյեմբերին նշանակուել է Վեհափառի անձնական քարտուղար և դիւանապետ: 1905-1909 թթ. եղել է Գանձակի առաջնորդական փոխանորդ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործով 1909 թ. ձերբակալւում է և դատապարտւում տաժանակիր աշխատանքի Սիբիրում և այնտեղ մնում մինչև 1917 թ.: 1919-1920 թթ.Կարսի առաջնորդական փոխանորդ, 1920-1921 թթ. Ս. Էջմիածնի դիւանապետ:

347 Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կողմից կոնդակը տրուել է 1902 թ. մարտի 28-ին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 30, թ. 39 և շրջ.):

էր ցնոր տնօրէնութիւն ձեռ չտալ շինութեան գործին։ Թէպէտև նոր տնօրէնութիւնն Վեհափառ Հայրապետի զժողովուրդն ընդ Ջանփոլադեանցի հաշտեցնելն է համարւում, սակայն թոյլտուութեան պաշտօնական հրաման չէ հետևած, ուրեմն պէտք է շնորհուի կոնդակ։

Հարկաւոր են և երկու օրհնութեան կոնդակներ, մինն՝ պարոնայք Բաղդասարեանց եղբարց անուամբ[348], որոնք գրաւորաբար յանուն Վեհաստիճան Քահայանապետի նուիրեցին իւրեանց սեփական գետինն կարուց եկեղեցւոյ շինութեան համար, և միւսն՝ յանուն քաղաքիս հասարակութեան և ընտրեալ հոգաբարձուաց, որպէս զի շուտով ձեռնարկեն դրամահաւաքութեան և շինութեան։ Իմ կողմանէ հարկաւոր համարուած պատուէրներն տրուեցան որոց հարկ էր, որպէս զի ընծայուած գետինն ձևականօրէն ստացուի Հոգևոր կառավարութեան կողմանէ պօլիցիայի ձեռքովն պարոն Բաղդասարեաններից։ Բացի խնդրածս կոնդակներից՝ պէտք է յղուի և Նորին Սրբութեան կենդանագիրն յանուն գաւառապետի տեղւոյս և այլոց՝ որոց անուանական ցուցակն արդէն Ձեզ յանձնուած է ի կիւրեղ վարդապետէ[349]։ Վերոգրեալոց մասին թէպէտև բերանացի խնդրեցի Տէր Իսահակ եպիսկոպոսէն Այվատեանց[350] հաղորդել Վեհափառին, սակայն կասկածելով նորա վերադարձի ի Մայր Աթոռդ անագանելուն՝ փութացայ գրովս Ձեզ զեկուցանել։

Ծանուցանելով, որ այսօր ընդ երեկոյ մտադիր եմ ելանել ի Ղարաքիլիսայ՝ ուստի ի Սևան և ի Նոր-Բայազէտ քաղաք, մնամ բարձրապատուութեանդ խոնարհ աղօթակից։

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 288, թ. 61, ինքնագիր:

---

348 1901 թ. օգոստոսի 23-ին Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնութեան կոնդակ է յղել Բաղդասարեան եղբայրներին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 288, թ. 63):

349 Կիւրեղ վարդապետ Կիւրեղեան – Ծնուել է 1859 թ.: Աւարտել է Գէորգեան Հոգևոր Ճեմարանը: 1885 թ. ձեռնադրուել է կուսակրօն քահանայ: 1892 թ. նշանակուել է Նոր Բայազէտի եկեղեցիների գործակալ: 1894 թ. ապրիլի 6-ին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1896-1899 թթ. եղել է Նախիջևանի, ապա՝ Ախալցխայի առաջնորդական փոխանորդը: 1901 թ. փետրուարի 23-ին Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակով նշանակուել է Կարսի առաջնորդական փոխանորդ: 1908 թ. նոյեմբերի 9-ին կրկին նշանակուել է Նախիջևանի փոխանորդ : Վախճանուել է 1909 թ. հոկտեմբերի 9-ին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1685, թթ. 8-11):

350 Սահակ եպիսկոպոս (ապա՝ արքեպիսկոպոս) Այվատեան (1853, Կ.Պոլիս – 1923, Երուսաղէմ) – Եղել Վարագայ վանքի միաբան, որտեղ Մկրտիչ եպս. Խրիմեանի ձեռքով կուսակրօն քահանայ է ձեռնադրուել: Առաջնորդական պաշտօններ է վարել Եւդոկիայում (1887-1888), Բելգիայում (1889-1890), Մարսէլում (1890-1894): 1895 թ. նշանակուել է Ատրպատականի թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 1898 թ. ընտրուել Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ և այդ պաշտօնում, կարճատև ընդհատումներով, մնացել մինչև 1922 թ.:

№ - 168
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՏԷՐ ԳԱԼՈՒՍՏԻ ՂԱԼԱՅՉԵԱՆՑԻՆ ՉՈՉԻ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 170 *30 յունուարի 1903 թ.*
Կարս

Ի վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ի Հոգևոր Կառավարութեանս լուան զխնդիր ժողովրդականաց Չոչի գեղջ վիճակիս, յՀ-ն ամսոյս[351], ընդ որում մատուցանելով սմին զհամախօսական վճիռ իւրեանց՝ կազմեալն ի 1-ն ամսոյս, վասն ապահովելոյ զկենսական դրութիւն քահանայորդի Խաչատրոյ Տէր-Գալստեան Ղալայչեանց, և զպարտաւորական ստորագրութիւն[352] վերջնոյս վասն չետ ձեռնադրութեան նորա ի քահանայ կալոյ և մնալոյ ցմահ ի գեղջն, խնդրեն զմիջնորդութիւն սորին առաջի պատշաճաւոր Հոգևոր իշխանութեան, յաղագս ձեռնադրելոյ ի քահանայ ի վերայ ինքեանց զյիշեալ Խաչատուրն, յայտնելով թէ՝ ի պատճառս մահուան ծխատէր Գալուստ քահանայի Ղալայչեանց և զառամելութեան և տկարութեան Խաչատուր քահանայի Յովսէփեան գեղջն, որ բաղկանայ ըստ ժողովրդագրութեան 1886 ամի ի 108 և ըստ մատաղաբաժնի ներկայ ամի ի 150 տանց, են զարդիս զուրկ ի հոգևոր մխիթարութենէ։

Սահմանեցին. *զվերոյիշեալ խնդիրն, զհամախօսական վճիռն և զստորագրութիւնն մատուցանելով Վիճակային Ատենիդ, խնդրել զպարտուպատշաճ տնօրէնութիւն դորին, յարակցելով նախ՝ թէ ժամանակ զինուորակոչութեան ընծայացուին անցեալ է արդէն, իսկ վասն ի ձեռս բերելոյ զծննդական վկայագիր ըստ սահութեան նորին՝ խնդրամատոյց է լեալ Վիճակային Ատենիդ։ Եւ երկրորդ՝ ընծայացուս է ըստ ամենայնի անձն բարեբարոյ և վստահելի, որոյ ձեռնադրութիւնն անհրաժեշտ է փութացուցանել, զի չետ մահուան հօրն Գալուստ քահանայի Ղալայչեան, Գործակալի շրջանակին Տիկոռի, ի պատճառս չլինելոյ չարմարաւոր քահանայից ժամանակաւորապէս վարէ զպաշտօն Գործակալի ինքն՝ ընծայացուն[353]։*

Նախագահ կառավարութեան՝ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեան

---

[351] Չոչի գիւղի հասարակութեան 105 ստորագրութեամբ համախօսականը տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 760, թթ. 8-10:

[352] Տես նոյն տեղում, թ.7:

[353] Ս. Սինոդը Խաչատուր Ղալայչեանին քահանայ ձեռնադրելու թոյլտուութիւն տուել է միայն 1907 թ. մայիսի 16-ին (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 760, թ. 51):

Անդամք՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան
Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կ.պ. Քարտուղարի՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 760, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 169

ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՅՔԻ ԲՌՆԱԳՐԱՒՄԱՆ ՅԱՐԱԿԱՆ ՕՐԷՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԵՂԱԾ ԳՈՅՔԻ ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 7190 *28 օգոստոսի 1903 թ.*
Կարս

Его Высокопреподобию Армяно-Григорианскому
Патриаршему Выкарию в Карсской Области

Согласно Высочайше утвержденному ***12*** июня ***1903*** года положению Комитета Министров, все находящиеся в Карсской области принадлежащие армяно-григорианским церквам, монастырям, духовным установлениям и духовно-учебным заведениям имущества и капиталы подлежат передаче в ведение и управление подлежащих Министерств[354].

В виду сего, имею честь просить Ваше Высокопреподобие сообщить мне в самом непродолжительном времени имеющиеся в председательствуемом Вами Духовном правлении сведения об имуществах и капиталах названных выше учреждений, препроводив мне вместе с тем и документы на упомянутые имущества.

Генерал-майор Самойлов[355]
За правителя канцелярии Хуцистов
За делопроизводителя Рамфопуло

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 597, թ. 14, պատճէն, ձեռագիր:

---

[354] Ըստ եկեղեցական գոյքի բռնագրաւման մասին 1903 թ. յունիսի 12-ի ցարական օրէնքի Հայ Եկեղեցու և հոգևոր հաստատութիւնների ողջ անշարժ գոյքն ու կապիտալն անցել է ռուսական պետութեան տնօրինմանը: Իր հերթին՝ պետութիւնը գոյքից և դրամից գոյացած եկամուտներից բաժին էր հանելու եկեղեցուն, իսկ զգալի մասը՝ պէտք է յատկացնէր բացուելիք պետական դպրոցներին: Այս օրէնքի նպատակն էր հայկական մշակութային-լուսաւորչական հիմնարկները զրկել գործունէութեան նիւթական միջոցներից, իսկ հոգևորականներին՝ դարձնել պետութիւնից նպաստ ստացող հնազանդ պաշտօնեաներ: Նման անարդարացի որոշման դէմ ամենուրէք տեղի ունեցան բողոքի ցոյցեր, զինուած ընդհարումներ ոստիկանութեան հետ, ահաբեկուեցին մի շարք ցարական պաշտօնեաներ: Պայքարը ղեկավարում էր հայ հոգևորականութիւնը Մկրտիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ: 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ 2-րդը ճարահատեալ հրամայեց վերադարձնել գոյքը և վերաբացել հայկական դպրոցները: Հայ Եկեղեցու գոյքի բռնագրաւման և դպրոցների փակման վերաբերեալ ցարական օրէնսդրական ակտերը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 58, թթ. 1-4:

[355] Ալեքսէյ Ալեքսանդրի Սամոյլով, գեներալ-մայոր, 1900 թ. յունուարի 26-ից 1906 թ. դեկտեմբերի 1-ը եղել է Կարսի Զինուորական Նահանգապետ:

№ - 170
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿԻՐԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԻՐԵՂԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱԼԵՔՍԷՅ ՍԱՄՈՅԼՈՎԻՆ՝ ԱՌԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԳՈՅՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՉՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 205 *29 օգոստոսի 1903 թ.*
Կարս

Его Превосходительству Господину
Военному Губернатору Карсской Области

Вследствие отношения Вашего Превосходительства, от *28* сего августа за №*7190*[356], имею честь сообщить, что Эриванская армяно-григорианская консистория от *11*-го сего августа за №*4965*, предписала мне, впредь до особого распоряжения высшего армяно-григорианского духовного начальства, не принимать участие в передаче церковных имуществ и капиталов в ведение Правительства, в виду чего не считаю себя в праве сообщить требуемые сведения и препроводить документы.

Патриарший Викарий Карсской области архимандрит Кюрег

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 597, թ. 15, պատճէն, ձեռագիր:

№ - 171
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՈՒՈՂ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԳՈՅՔԸ ՊԵՏՈՒԹԵԱՆԸ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 434 *29 օգոստոսի 1903 թ.*
Կարս

Его Высокопреподобию Армяно-Григорианскому
Патриаршему Выкарию в Карсской Области

В дополнение к отзыву от *28* сего августа за №*7190*[357], имею честь просить Ваше Высокопреподобие упомянутые в означенном отзыве сведения и документы доставить мне не позже *31*-го сего же августа.

При этом имею честь известить Вас для зависящих распоряжений, что для приемки капиталов и имуществ назначены в гор. Карсе и Карсском округе от администрации старший помощник Начальника Карсского округа полковник Киселев и от Управления Земледелия и Государственных имуществ Эриванской губернии и Карсской

[356] Տես թիւ 169 փաստաթուղթը:
[357] Տես թիւ 169 փաստաթուղթը:

области[358] старший надзиратель за казенными землями Чебурин и в округах Кагызманском, Ардаганском и Ольтинском от администрации и.д. штабс-офицера для особых поручений при мне ротмистр Баранов и от Управления Земледелия и Государственных имуществ Сарыкамышский лесничий Загорский.

Генерал-майор Самойлов
За правителя канцелярии Хуцистов

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 597, թ. 16 ևշրջ., պատճէն, ձեռագիր:

№ - 172
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՅ ԲՌՆԱԳՐԱՒՈՒԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՅՔԻ ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑԱԿ

1903 թ.

Краткий список
недвижимых имуществ Армяно-Григорианской церкви, принятых в заведывание казны по закону ***12*** июня ***1903*** года
По Карсской области

№№ по порядку	Местонахождение и название имуществ	Каким именно церквям или монастырям принадлежат имущества	Особые отметки
	Карсская область **I район** **Шурагельский участок**		
	Водяная мельница о двух поставах в с. Куюджух Участок земли под названием Дайляр	Кошеванкскому монастырю Св. Оромоса	
	II район **Кагызманский оруг** **уроч. Вартагер**		
	Земельное угодие в *77* дес.		
	Старый полуразрушенный каменный сарай для баранты Каменная постройка Два жилых помещения Каменная постройка Нежилое помещение	монастырю Св.Татоса и Вароса	
	Каменный дом Водяная мельница о *2*-х поставах Водяная мельница об *1*-ом поставе Маслобойка	Башкилисинскому монастырю	

[358] Տե՛ս թիւ 282 ծանօթագրութիւնը:

III район
Ардаганский округ

Половина каменного двухэтажного дома в м. Ардаган	Церкви Св. Григория

Заведывающий делопроизводством сих имуществ Денисов

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 597, թթ. 138, 150 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 173
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՄԱՐԶԻ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ, ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ, ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐԻ ԵՒ ՄԻՒՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Թիւ 692 *23 յունուարի 1904 թ.*
Կարս

В Карсское Армянское Духовное Правление

Главноначальствующий гражданскою частью на Кавказе циркулярным предложением от ***13*** ноября прошлого ***1903*** года за № ***15526,*** сообщил мне, что Государь Император, по всеподданнейшему докладу Министра внутренних дел в ***18*** день октября того же года Высочайше соизволил на установление правилам, чтобы впредь до пересмотра действующих узаконений об управлении духовных дел христиан армяно-григорианского исповедания, духовные власти сего исповедания, при назначении епархиальных викариев, членов консисторий, ректора и преподавателей духовных академий и семинарий, настоятелей монастырей, а также к приходским должностям настоятелей и причетников, испрашивали на то согласие: для викариев Главноначальствующего гражданскою частью на Кавказе, а для остальных подлежащего по месту назначения губернатора или соответствующего должностного лица.

В виду этого, прошу Карсское Армянское духовное правление о доставлении мне, в возможно непродолжительном времени и, списка всех армяно-григорианских настоятелей монастырей, а также приходских настоятелей, священников, дьяконов и причетников в Карсской области[359].

Подписали:

Генерал-майор Самойлов
За Правителя Канцелярии Хуцистов
За Делопроизводителя Яхонтов

[359] Խնդրի վերաբերեալ Սինոդի որոշումը տես թիւ 175 փաստաթուղթը:

Ուղիղ է ընդ իսկականին կ. պ. քարտուղարի
Հոգևոր կառավարութեան Հայոց՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 597, թ. 78 և շրջ., հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 174
ՕՐԹԱՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆ ՎՃԻՌԸ՝ ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 մայիսի 1904 թ.
Կարս

Համախօսական վճիռ
ի 31մայիսի 1904 ամի, ի f. Կարս

Մեք, ի ներքոյ սորին ստորագրեալ ժողովրդականքս Օրթաքեադիկլար գեղջ Շիրակայ մասի Կարուց նահանգի թուով 45 ձայնք, որք ունին իրաւունս մասնակցելոյ գիւղական ժողովոյն, որ կազմէ առաւել, քան $^{2}/_{3}$, որ և բաղկանայ ի ծխոց, այսօր ի մի գումարեալ ընդ նախագահութեամբ մեր տանուտէրի օգնականի, կազմեցաք սոյն համախօսական թերթն, որով ընտրեմք խղճի մտօք զարժանաւորն և զվկայեալն առաքինի վարուք ի հոգևոր կոչումն համագիւղացին մեր քահանայորդի Կարապետն Տէր-Ստեփաննոսեան Տէր-Մարտիրոսեան և խոստանամք յետ ձեռնադրութեան նորա ի քահանայ, տալ զօրինաւսահման հասոյթս նորին, ուստի զայս համախօսական թերթ առաջի առնեմք ի տնօրէնութիւն Հոգևոր իշխանութեան, առ ի ձեռնադրել զնա յաստիճան քահանայութեան, ի վերայ Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ գիւղս, առ որ և ստորագրեմք[360]*:*

1. Դաւիթ Յարութեան
2. Ստեփանոս Սարոյեանց
3. Մահտեսի Յարութ Սահակեան[361]
Պամօշնիկ ստարոստիոյ՝ Թորոսեան[362]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 779, թ. 8 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

360 Կարապետ Տէր Ստեփաննոսի Տէր-Մարտիրոսեանը ձեռնադրուել է հոկտեմբերի 16-ին Սարգիս եպիսկոպոսի կողմից, Սևանայ վանքում՝ ստանալով Արիստակէս հոգևոր անունը (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 779, թ. 13 և շրջ.):

361 Հետևում է ևս 42 անձի ստորագրութիւն:

362 Փաստաթուղթը կնքուած է տանուտիրոջ օգնականի կնիքով:

№ - 175
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՀԱՅԵՐԻ, ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ, ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐԻ ԵՒ ՄԻՒՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԿԱՐՍԻ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 711 *3 յուլիսի 1904 թ.*
Ս. Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի. Կոնսիստորիային Հայոց Երևանի.

Ըստ Հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զեկուցումն յաղագս առաքելոյ առ Տ. Զինուորական Նահանգապետն Կարուց զցուցակ վանահարց, գործակալաց, քահանայից, սարկաւագաց և սպասաւորաց եկեղեցեաց Կարուց շրջանի: Հրամայեցին. պատուիրել Կոնսիստորիայիդ տալ զպատշաճ տեղեկութիւն վասն հոգևոր պաշտօնէից Զինուորական Նահանգապետին Կարուց, որք գծագրեալ են ի յայտարարութեան նորին ի 11 փետր. տարւոյս Թ. 448: Ի 3 յուլիսի 1904 ամի ի Ս. Էջմիածին:

Անդամ Սինոդի՝ Մխիթար վարդապետ[363]
Կ.պ. Ատենադպրի՝ Մ. Վարդազարեան
Կ.պ. Գործավարի՝ Գ. Թումանեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 597, թ. 91, բնագիր, ձեռագիր:

[363] Մխիթար վարդապետ Տէր Մկրտչի Տէր-Սարգսեան (աշխարհիկ անունը՝ Յարութիւն) –Յետագայում՝ եպիսկոպոս: Ծնուել է 1864 թ.: Աւարտել է Ներսիսեան հոգևոր դպրոցը 1885 թ.: 1893 թ. յունուարին ընդունուել է Ս. Էջմիածնի միաբանութեան շարքը և նոյն թուականին ձեռնադրուել է աւագ սարկաւագ, ապա՝ աբեղայ: Նշանակուել է Երևանի թեմի եկեղեցիների գործակալ: 1893 թ. նոյեմբերի 20-ին ստացել է վարդապետի աստիճան և նոյն տարի կարգուել Նախիջևանի փոխանորդ: 1894 թ. հոկտեմբերի 13-ին Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիայի կողմից նշանակուել է թեմի եկեղեցական-ծխական դպրոցների տեսուչ: 1897 թ. Մխիթար վարդապետը նշանակուել է նոյն թեմի Հայոց հոգևոր դպրոցի տեսուչ: 1899 թ. հոկտեմբերի 28-ին նշանակուել է Վրաստանի և Իմերէթի Հայոց Վիճակային կոնսիստորիայի անդամ և Ս. Էջմիածնի կալուածքների վարիչ: 1901 թ. մայիսի 4-ին Մխիթար վարդապետը Բարձրագոյն հրամանով նշանակուել է Սինոդի անդամ և այդ պաշտօնը վարել է մինչև 1904 թ.: 1905 թ. նոյեմբերի 9-ի կոնդակով նշանակուել է Ս. Էջմիածնի տպագրատան տեսուչ: 1908 թ. նշանակուել է Աստրախանի թեմի ժամանակաւոր կառավարիչ: 1909-ին ձեռնադրուել է եպիսկոպոս և յաջորդ տարի՝ կարգուել Աստրախանի թեմական առաջնորդ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1672, թթ. 16-20):

№ - 176
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ՝ ԸՆԾԱՅԱՑՈՒ ՎԱՐԴԱՆ ՍԱՅԱԴԻ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑԻՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1046 *6 յուլիսի 1904 թ.*
Կարս

Ի Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ի Հոգևոր Կառավարութեանս լուան զխնդիր ժողովրդականաց Խաս-Ջիֆթլիկ գեղջ վիճակիս, ի 1-ն անցելոյ յունիսի, ընդ որում մատուցանելով սմին զթերթ արձակման ի հարկաց[364] և զհամախօսական վճիռ[365] վասն ապահովելոյ զկենսական դրութիւն ընծայացուի գեղջն՝ Վարդանայ Սայադեան Տէր-Ղազարեանց, կազմեալսն ի 1-ն և ի 6-ն այնր յունիսի, հանդերձ վկայագրով՝ տուեալն նմա ի գաւառապետէ Կարուց շրջանի, ի 23-ն յունիսի 1903 ամի N 1124, ի մասին ընդունելոյ նորա զհպատակութիւն Ռուսիոյ, խնդրեն զմիջնորդութիւն սորին առաջի պատշաճաւոր Հոգևոր իշխանութեան, առ ի ձեռնադրել զնա ի քահանայ ի վերայ գեղջն։

Սահմանեցին. Զխնդիրն, հանդերձ ի նմին եդեալ համախօսական վճռովքն և վկայագրովն, մատուցանել ի պարտուպատշաճ տնօրէնութիւն Վիճակային Ատենիդ։

Նախագահ Կառավարութեան՝ (տկար[366])
Անդամք՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան
Կորիւն քահանայ Քոթանճեան
Կ. պ. Քարտուղարի՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 782, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 177
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ [ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻՆ]՝ ԱՆԻԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՆԹԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

14 հոկտեմբերի 1904 թ.
Ս. Էջմիածին

Սրբազան Հայր.

Այս ամառ գնացել էի հայրենիք՝ հանգստանալու և տնային մի քանի տարաձայնութիւնների վերջ տալու։ Այդ ճանապարհորդութեան

364 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 782, թթ.10-11 շրջ.:

365 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 782, թթ. 12-13:

366 Հիւանդութեան պատճառով ներկայ չի եղել:

հետ միասին տևեց 2 ½ ամիս: Վերադարձին մտայ Թիֆլիս և Պ. Լէօյից իմացայ Ձեր ցանկութիւնը՝ փող հանգանակել Անիի Մայր Տաճարը նորոգելու: Ես յանձն առի գնալ Անի, տեղեկանալ լինելիք ծախքերի չափը և յարաբերութեան մէջ մտնել Պետերբուրգի Հնագիտական Ընկերութեան հետ վերանորոգութիւնների իրաւունք ստանալու: Իմ այս խոստման առաջին մասը արդէն կատարել եմ ամսիս սկզբին, Թիֆլիսից էջմիածին վերադառնալիս: Թէև առաջուց գրել և հեռագրել էի, որ մի երկու վարպետ գան ինձ դիմաւորեն Անի կայարանում, այնտեղից Անի գնալու դիտաւորութեամբ, բայց նոքա չէին եկել, և ես անձամբ գնացի Ալեքսանդրապոլ: Այնտեղից հետս վերցրի երկու վարպետ և մի հնագէտ-ճարտարապետի, որը ահա երկու տարի է՝ աշխատում է ամենայն մանրակրկտութեամբ նկարել Անիի բոլոր աւերակները: Ջորս հոգով մի կառք վարձելով հասանք քաղաք և քննեցինք մանրամասնութեամբ Մայր Տաճարը և, աւելի ընդհանուր գծերով, միւս աւերակները: Ահա հաշիւները.

1.Մայր Տաճարի[367] մեծութիւնն է 21, 87 մետր լայն, 34, 29 երկար դրսից հաշուած, առանց աստիճանների: Պատերի հաստութիւնն է 0.95 մետր: Այս շինութեան մէջ վնասուած են հիմնովին և խիստ վտանգաւոր չափերով հիւսիս-արևմտեան և արևմտահարաւային պատերի անկիւնները, հետևապէս վտանգուած է արևմտեան պատը, եթէ վնասուած տեղերը շուտափոյթ չուղղուին:

Ա) Հիւսիսային պատից պիտի քանդուի և նորից շինուի 10 սաժէն կամ 9x8 մետր:

Բ) Արևմտա-հարաւային պատի անկիւնը պիտի քանդուի և նորից շինուի 2 սաժէն կամ 3x2 մետր պատ:

Գ) Հիւսիսային և արևմտեան պատերի անկեան գումարը 11 սաժէն կամ 10x5 մետր:

Դ) Գմբէթը ամբողջովին ընկած է, մնում է միայն թմբուկից կտորներ:

Ե) Արևելեան պատը անվնաս է և հեշտութեամբ կարելի է նորոգել:

Զ) Բոլոր պատերից, թէ ներսից և թէ դրսից ու սիւներից խոշոր քարեր են հանուած, բռնի կերպով չարամիտ անձանց ձեռքով: Այդպիսի փլուածքներ այնքան էլ վնասակար չեն, բայց պէտք է նորոգել: Այդպիսի քարերի տարածութիւնը, մօտաւորական հաշուով հասնում է 40 սաժէնի:

Է) Կտրուած հանուած են 8 սիւների քարեր:

Ը) Վնասուած է ամբողջ կտուրը 450 սաժէն կամ 21x34 մետր: Սա-

[367] Անիի Մայր Տաճար – շինարարութիւնը սկսուել է Սմբատ 2-րդի օրօք՝ 989 թ. և աւարտուել է Գագիկ 1-ինի օրօք՝ նրա կնոջ Կատրամիդէ թագուհու հոգացողութեամբ 1001 թ.: Ճարտարապետը յայտնի Տրդատն էր: Շատ մասնագէտների ու ճանապարհորդների կողմից համարուել է Կովկասի ճարտարապետական լաւագոյն կոթողը:

լերի մի մասը ընկել, եղածներն էլ տեղահան են, տակը խոտ է բուսած։ Աղէքսանդրապօլի վարպետները շինելիք պատերի քառակուսի սաժէնը, տեղական գներն ի նկատի ունենալով, հաշւում էին ոչ պակաս քան 50 ռուբլի։ Կտուրը խորհուրդ էին տալիս ծածկել ոչ թէ քարէ սալերով, այլ տոմէտ աղիւսով, որի գործարանները կան այժմ Աղէքսանդրապօլ և Կարս քաղաքներում։ Կիրը պէտք է վառել հէնց աւերակներում, որովհետև հարկաւոր կրաքարը կայ արդէն, աւազը բերել գետի հունից։ Գմբէթը կարիք չկայ վերականգնելու, այդ խիստ թանգ կլինի, կտուրը կնորոգենք և հնութեան կերպարանքը կը փոխի։ Պիտի վերականգնել և ամրացնել այն ինչ որ տաճարինն է։ Նոր աւելացնելիք կամ լրացնելիք մասեր չկան։ Գմբէթն ու կոտրած կամարի մասը կարելի է ծածկել ծակ աղիւսներով, մէջերը երկաթ անցրած, որ թէ թեթև կլինի և թէ հեշտ շինելի։

Այդ բոլորն ի նկատ ունեցած ստանում ենք ծախքերի հաշիւն.

1) Պատեր 63 սաժէն, 50-ական ռուբլիով – 3150 ռ.

2) Ութ կոտրած սիւները, 100-ական ռուբլիով – 800 ռ.

3) Գմբէթը ծածկել ծակ աղիւսով մօտ – 1000 ռ.

4) Կտուրի ծածկը տոմէտով 450 սաժէն, մօտ 4500 ռ.

5) Փայտ իսկալաների համար – մօտ 500 ռ.

6) Ճարտարապետի վերահսկողութիւն – մօտ 1000 ռ. ___ 11,450 ռ.

2. Փրկչի եկեղեցի[368]*.*

Պատերից փլած են, բռնի աշխատանքով, 20 սաժ. 50 = 1000 ռ.։

Վնասուած են դարձեալ 8 սիւն – 800 ռ.

Ընկած են ծածկի մի մասի սալերը – մօտ 1000 ռ. = 2800 ռ.

3. Ապուղամրենց Ս. Գրիգոր[369] *և 4. Առաքելոց եկեղեցու*[370] *հրաշալէն գաւթի վնասները կարող են նորոգուել մօտ 1000-1500 ռ.։*

Անիի այս չորս նշանաւոր սրբութիւնները կարող են դեռ մի քանի դար էլ կեանք և յարատևութիւն ունենալ, եթէ նոցա վրայ այժմ ծախսենք 16.000 կամ 15.000 ռուբլի։

---

368 Ս. Փրկիչ եկեղեցի – կառուցել է Պահլաւունի Աբլղարիբ իշխանը 1036 թ.: Իր կառուցուածքով այն նման էր 7-րդ դարի կենտրոնագմբէթ եկեղեցիներին: Պատերին կան արձանագրութիւններ, իսկ իր զարդաքանդակներով նա նման է Մայր Եկեղեցուն:

369 Ապուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցի – ենթադրւում է, որ տաճարը կառուցուել է 10-րդ դարի 2-րդ կէսին, 994 թուականից ոչ ուշ. այն որպէս յատուկ մատուռ Պահլաւունիների ընտանիքի համար կառուցել է տուել Գրիգոր Պահլաւունին: 1040 թ. Աբուղամրի թոռ, Գրիգոր Պահլաւունու որդի Աբլղարիբ մարզպանը եկեղեցու հիւսիսային կողմում կառուցել է Աբուղամրենց տոհմական դամբարանը՝ Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր մատուռներով:

370 Առաքելոց եկեղեցի – հիմնադրուել է հաւանաբար 1004 թ.: Անիի ամենայայտնի կոթողներից է: Այժմ պահպանուած են միայն եկեղեցու արևմտեան ճակատը և արևելեան հատուածի կամարները: Երեք գմբէթներից կանգուն է միայն մէկը: Կառուցուած է սև կարմրագոյն քարերով: Պատերին կան արձանագրութիւններ: Դռան շրջանակները պատած են բարձրարուեստ փորագրութիւններով:

Իրաւունք ստանալու խնդիրը կարելի է կարգադրել կամ նամակով կայսերական Հնագիտական Ժողովին դիմելով կամ գուցէ ինքս գնամ Պետերբուրգ և անձամբ իրաւունք ստանամ, որովհետև ինձ ցանկանում են Պետերբուրգ ուղարկել, պաշտօնով, կամ աւելի ուղիղ հեռացնելու դիտաւորութեամբ: Լաւ գիտէք, որ անյարմար կլինի առանց փող ունենալու միջնորդութեամբ դիմել: Սրբազան Հայր, չնեղանաք, որ թէև դժուարութեամբ, ստիպուած եմ գրել, որ Աղէքսանդրապօլից Անի և դարձ, ուտելիք ծախսուեց 20 ռուբլի, իմ ներկայ վիճակում զգալի գումար, որ կցանկայի հետ ստանալ լինելիք հանգանակութիւնից:

Նամակ չեմ գրում, գիտեմ՝ որքան դժգոհ էք: Այդ եղել է միշտ իմ պակասութիւնը և վերջապէս ի՞նչ գրեմ: Գրի առնեմ ինչ որ շուրջ բոլոր կատարւում է, ի՞նչ օգուտ, ինչպէս հրէից, այնպէս էլ հայոց ազգին նշան հարկաւոր չէ, այդ ազգը քայքայւում է, կազմալուծւում: Նա կորցրել է իւր մտածելու ընդունակութիւնը: Բախտախնդիրներ և անսիրտ խաբեբաներ են նրա վիճակը տնօրինում, և այդ երևոյթը համաճարակ բնաւորութիւն ունի, նրա առաջն առնել անհնար է: Նոյն իսկ Քրիստոս չկարողացաւ հրէաներին փրկել: Այնպիսի գործողութիւններ են տեղի ունենում, որ հստակ կարող է լինել միայն կորստի մատնուած, բարոյապէս քայքայուած ժողովրդի մէջ: Սաթունեան[371] Թիֆլիզ է նշանակւում, ժողովուրդը ընդառաջում է խուռն բազմութեամբ և ծափահարութեամբ, յանուն ինչ որ քաղաքականութեան պաշտւում և պաշտպանւում է անառակութիւնը, տգիտութիւնը, աւազակութիւնը: Եկեղեցին միջոց չունի, աղքատ է, ողորմութեամբ է ապրում, սակայն վատնումը շարունակւում է անարգել: Ժողովուրդը կոտորւում է Սասունում, Մուշում, Վանում, Բայազէտում, Բուլանուխում, սոսկալի են ստացուած տեղեկագիրների նկարագրութիւնները. մի կողմից խմբեր են ուղարկւում կռուելու, միւս կողմից պատուիրակներ ուղարկւում, որ իրենց հանգիստ թողնեն և չկոտորեն[372]:

Կաթողիկոսը միայն հասակի տկարութիւն ունի, պատրաստւում է գնալ Թիֆլիզ կամ Գանձակ՝ ձմերելու:

Յարգանօք՝ Մեսրոպ վարդապետ[373]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 253, թթ. 17-18 շրջ., ինքնագիր:

---

371 Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան (1852, Աշտարակ-3 նոյեմբեր 1910, Թիֆլիս) – 1867 թ. ընդունուել է և 1872 թ. աւարտել Մայր Աթոռի Ժառանգաւորաց դպրոցը և դպիրի աստիճան ստանալով՝ դասուել է Մայր Աթոռի միաբանութեան կարգը: 1873 թ. մայիսի 15-ին ձեռնադրուել է սարկաւագ, 1876 թ. նոյեմբերի 21-ին՝ կուսակրօն քահանայ: 1878 թ. մայիսի 18-ին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: 1901 թ. մայիսի 13-ին ձեռնադրուել է եպիսկոպոս Մկրտիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ և նոյնից 1907 թ. արժանացել արքութեան պատուին: Մայր Աթոռում և թեմերում վարել է բազմաթիւ պաշտօններ: 1904 թ. մինչև վախճանումը եղել է Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդը:

372 Խօսքը 1904 թ. Սասունի ապստամբութեան մասին է:

373 Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեան (7 մայիս 1865, գ. Շիկահող, Գորիսի շրջան – 3 յունիս 1939, Երևան, վերաթաղուած է Վաղարշապատի Ս. Գայիանէ վանքի միաբանա-

№ - 178
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ՆՈՐ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 5958 *31 դեկտեմբերի 1904 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորայէ վիճակին Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն Հոգևոր Կառավարութեան Հայոց կարուց ի 24 անցելոյ նոյեմբերի N *1786 յորում գրի. «Ի հետևումն առաջադրութեան վիճակային Ատենիդ ի 25 սեպտեմբերի տարւոյս* N *3902, հիմնեալն ի վերայ հրամանի Ս. Սինոդի Ս. Էջմիածնի ի 25 օգոստոսի տարւոյս* N *971*[374]*, յաղագս ստանալոյ յեղբարց Բաղդասարեանց և մատուցանելոյ զթուղթ ընծայաբերութեան երկերիւր քառասուն և երեք սաժէն հողոյն ի պէտս ուրանօր շինելոյ զՄայր եկեղեցին, Հոգևոր Կառավարութիւնս ծանուցանէ, թէ յօրէ պահանջման թղթոյն այնորիկ, թէպէտ քանիցս դիմեալ է սոյնն առ մեծապատիւ Պ. Սարգիսն Բաղդասարեանց առ ընծայաբերեալն հողոյն այնորիկ, գրութեամբ իւրով, զոր մատոյց անձամբ Վեհաստիճան Հայրապետի ազգիս յայցելելն Նորին Ս. Օծութեան քաղաքիս, ի 15-ն ապրիլի 1901*

կան գերեզմանատանը)– յետագայում՝ արքեպիսկոպոս: Աւարտել է Շուշիի թեմական և Թիֆլիսի Ներսիսեան դպրոցներն ու Ռևելի գիմնազիան: 1887-1891-ին ուսանել է Դորպատի համալսարանում: Գէորգեան Հոգևոր Ճեմարանում աշխատել է իբրև Հայագիտութեան դասախօս: 1893 թ.ապրիլի 24-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ և անդամակցել Մայր Աթոռի միաբանութեանը: 1893 թ. յուլիսի 21-ին ստացել է վարդապետական աստիճանները: 1899-ի վերջից 1903-ի սկիզբը գտնուել է Ս.Պետերբուրգում, որտեղ պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն: 1900-ականներին եղել է Մկրտիչ Ա. և Մատթէոս Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսների յատուկ գործերի յանձնակատար-բանակցորդը Ռուսական իշխանութեան հետ: 1908 թ. սեպտեմբերի 18-ին նշանակուել է Մայր Աթոռի Սինոդի անդամ: Եպիսկոպոս է օծուել 1909-ի հոկտեմբերին՝ Մատթէոս Բ. Իզմիրլեանի կողմից: Եղել է Գէորգեան Հոգևոր Ճեմարանի տեսուչ, Մայր Աթոռի մատենադարանապետ: 1913-ի յունուարից 1916-ի կէսը՝ Վրաստանի և Իմերէթի, այնուհետեւ՝ մինչեւ 1917-ի վերջը եղել է Աստրախանի թեմերի առաջնորդ: 1919-1920-ին եղել է Հայաստանի նորաբաց համալսարանի դասախօս և նրա պատմալեզուաբանական բաժանմունքի տնօրէն: 1922-ի հոկտեմբերին նշանակուել է Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ, սակայն պաշտօնավայր է հասել միայն 1926-ի ապրիլին և պաշտօնավարել է մինչև 1931 թ. հոկտեմբերի 9-ը, երբ յանիրաւի մեղադրուել է իբրև համայնավարութեան քարոզիչ ու արտաքսուել Պարսկաստանից: Վերադառնալով Խորհրդային Հայաստան, ենթարկուել է հակակղերական բռնութիւնների, նաև Խորէն Ա. Մուրադբէկեանի ու Գէորգ արք. Չէօրեքճեանի հետ տարակարծութիւնների պատճառով 1938-ի օգոստոսի 17-ին հրաժարուել է հոգևոր կարգիցև Ս. Էջմիածնից տեղափոխուել է Երևան: Շուրջ 130 գիտական աշխատութիւնների հեղինակ է: Ծանօթ է «Մագիստրոս» գրչանունով. այդ գիտական աստիճանին արժանացել է 15 Դեկտեմբեր 1902-ին՝ իր պաշտպանած ատենախօսութեան համար:

374 Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10197, թթ. 13-14 շրջ.:

ամի, սակայն՝ նա խնդրէ շատանալ նովաւ։ Քանզի յօրէ գրաւման նահանգին կարուց ի կողմանէ բարեխնամ կառավարութեանն Ռուսիոյ ցայսօր՝ ամենատեսակ կալուածք չհամարին սեփականութիւն տեարց իւրեանց, ըստ օրինակի այլոց տեղեաց կայսերութեանն և չիք աստանօր օրէնք ի դէպս հաստատուն սեպհականութիւն տալ Купчая крепость *անուանեալ օրինական թուղթս, կամ կազմել թուղթ ընծայաբերութիւն վասն որևիցէ կալուածոյ նօտարական կարգաւ, հետևապէս ի գնելն և ի վաճառելն երկոքին կողմանք ըստ ընկալեալ ի նահանգին կարուց կարգի շատանան թղթովք վաճառման ընդ ձեռն նօտարի (*запродажная запись*), իսկ Պ. Սարգիսն Բաղդասարեանց ծանր համարելով վասն ինքեան չյօժարի տալ ցայդօրինակ նոր թուղթ վաճառման, ուր նշանակելոց է գին հողոյն, զոր իբր նա ստացեալ է, այլ խնդրէ բաւականանալ տուեալ Նորին Ս. Օծութեան ի վեր անդր յիշատակեալ ընծայագրովն և աւարտ տալ գործոյն, յաւելլով թէ՝ նախ ի յատակագծի քաղաքիս և ի տումարի կալուածոյ նորին փոխարկեալ է նա զհողն այն յանուն Ս. Աստուածածնին եկեղեցւոյ Հայոց քաղաքիս և արդարև յօրէ յայնմանէ տարեկան հարկ հողոյն այնորիկ վճարէ երեսփոխան այնր եկեղեցւոյ, երկրորդ՝ յանձնաժողով շինութեան կառուցանելի եկեղեցւոյ քաղաքիս արդէն գնեալ է կից յիշեալ ընծայեալ հողոյն գտեալ զհողաբաժինս 70 սաժէն ի տաճիկ Ալի Սէլիմ-օղլւոյ 1500 րուբլեաւ և 117 սաժէն ի Տիկին Հեղինարէ Աւան-Իւզբաշեան 1999 րուբ. 10 կոպէկաւ, և ի բաց բառնալով զի վերայ նոցին գտեալ շինութիւնն պարապապատեալ է, իսկ մակարդակ եկեղեցւոյն յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի հաստատեալ է արդէն ի կողմանէ պատշաճաւոր իշխանութեանց ի 1-ն յուլիսի և ի 4-ն օգոստոսի անցեալ 1903 ամի։ Եւ երրորդ՝ պատրաստեալ կան ըստ բաւականին նիւթեղէնք, վասն հիմնարկութեան շինութեանն, զոր յուսայ սկսանել ի բանիլ առաջիկայ գարնանային աւուրց։ Զվերոգրելոցն ամենից յայտարարելով, Հոգևոր կառավարութիւնս խոնարհաբար խնդրէ ի նկատի ունելով զվերոգրեալ բացատրութիւնս ընծայաբերողի 243ն սաժէն հողոյն՝ Պ. Սարգսի Բաղդասարեանց, շատանալ ընծայագրով նորա, զոր մատուցեալ է նորա Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս Տ.Տ. Մկրտչի Առաջնոյ յապրիլ ամսեան 1901 ամի և աւարտ տալ գործոյն»։*

Սահմանեցին. *զվերոգրելոյն խոնարհաբար յայտ առնել ի գիտութիւն և ի տնօրէնութիւն Ս. Սինոդիդ, առ հրաման դորին ի 25 օգոստոսի տարւոյս* N *971*[375]։

Ատենապետ՝ կարապետ վարդապետ[376]

---

[375] 1905 թ. յունուարի 26-ին Սինոդը որոշեց կարճել այս գործը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10197, թ. 16):

[376] Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեան – Յետագայում՝ եպիսկոպոս: Ծնուել է 1866 թ. մարտի 17-ին Գողթան գաւառի Ցղնագիւղում, մահացել է 1915 թ. և թաղուել Բաքուի

Անդամ՝ վահան քահանայ Մամիկոնեան[377]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10197, թ. 15 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 179
Ա. ՎՐԱՑԵԱՆԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ՄՇԱԿԻ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ՝ ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23 յունիսի 1906 թ.
Անի

Անիի պեղումները

Պ. Մառ[378] *Անի հասնելով անմիջապէս ձեռնարկեց Գագկաշէն Ս. Գրիգորի*[379] *պեղման, որ գործի մեծութեան և դժուարութեան պատճառով անցեալ տարի կիսատ էր մնացած: Նոյն անխոնջ աշխատասիրութիւնը, նոյն անդրդուելի տոկունութիւնը և ոչ մի նշոյլ յուսահատութեան հանդէպ օրն ի բուն փորուող ու թափուող բլրանման հողակոյտերի՝ խառնքարերի և բազմատեսակ փլուզումների, գերեզմանների կմախքների և այլ բազմատեսակ շինութեանց անվերջանալի մնացորդների: Բայց նոյն անտրտունջ աշխատաւորը, նոյն զուարթ դէմքը: Պեղւում է Գագիկեան տաճարի կենտրոնը և յանկարծ յայտնւում է տաճարի պղնձեայ ջահը ջարդուփշուր եղած, պղինձն ու նրան գմբէթից կախող երկաթեայ շղթան միմեանց զանգուած, ապակեայ կանթեղները փշրուած և ջահը շրջապատող աղաւնիները, որոնց բերնից պղնձէ թելերով կախուած էին ապակեայ կանթեղները, ծռմռուած ու այլանդակուած:*

Եւ այսպէս բրիչի ամէն մի հարուած, բահի ամէն մի շարժում մաս առ մաս վերցնում են այն ծանր ծածկոցը, որ 7-8 դար շարունակ

Հայոց եկեղեցու բակում: Սովորել է Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, աւարտել է Լայպցիգի և Մայբուրգի համալսարանները՝ փիլիսոփայութեան դոկտորի և աստուածաբանութեան լիցենզիստի աստիճաններով: 1889 թ. ձեռնադրուել է սարկաւագ, 1894 թ.՝ աբեղայ, յաջորդ տարի՝ վարդապետ: 1894-1907 թթ. վարել է Գէորգեան ճեմարանի տեսչի օգնականի, ապա տեսչի, «Արարատ» ամսագրի խմբագրի, Երևանի թեմի փոխանորդի պաշտօնները, 1907-1915 թթ. եղել է Ատրպատականի և Շամախու թեմերի առաջնորդ, զբաղուել գիտական աշխատանքով և թողել մնայուն աշխատութիւններ::

377 Վահան քահանայ Մամիկոնեան – ծնուել է 1859 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1889 թ. գործը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 352 շրջ.):

378 Մառ Նիկողայոս Յակովլևիչ (1864-1934), ռուսական և խորհրդային լեզուաբան, պատմաբան, ազգագրագէտ, հնագէտ, Գիտութիւնների կայսերական ակադեմիայի անդամ, այսպէս կոչուած «լեզուի մասին նոր տեսութեան» հեղինակ:

379 Գագկաշէն Ս. Գրիգոր եկեղեցի – կառուցուել է Գագիկ 1-ի կողմից: Շինարարութիւնը սկսուել է 1001 թ., աւարտուել է 1010-ին: Եկեղեցին եռայարկ էր, ճարտարապետական կառուցուածքով նման Զուարթնոցին: Ճարտարապետը Տրդատն էր: Տաճարը արտաքին կողմից շրջապատուած էր 36 ամարներով, ունէր 3 պատուհան, 3 դուռ, որոնց շրջանակները ծածկուած էին քանդակազարդերով: Եկեղեցու պատի վրայ տեղադրուած էր Գագիկ 1-ի արձանը:

իրանց խորհրդաւոր բլուրի տակ ծածկել են հետաքրքիր ուղևորի և Շիրակի ու Կարսի շատ շէնքերը կառուցանելու համար Անիից քարեր կրող կողոպտիչների խուզարկու աչքերից: Եւ իսկապէս, որքան հրապուրիչ են Գագկաշէն կոփածոյ խոշոր քարերը, սիւները և խոյակները: Պարթևահասակ արքային արժանի հսկայ կոթողի բեկորներ՝ իրանց մեծամեծ չափերով դիտողը, զարմացնող և մարդկային որպիսի ոյժեր է գործ դրուել այդ գրկաչափից աւելի հաստ և 3-4 կանգուն մեծութեամբ որձաքարեայ սիւները և նրանց վիթխարի խոյակներն ու պատուանդանները իրանց տեղը դնելու համար: Իմ ներկայութեամբ գոնէ նրանց իւրաքանչիւրը իւր պատշաճ տեղը դնելու համար 15-20 գործաւոր աշխատում էին մի ամբողջ օր...:

Ինչպէս երեք տարի առաջ գրած էի «Մշակ»[380]*-ում Անւոյ աւերակների այդ ամենաբարձր բլուրը պիտի լինէր պատմագիրների յիշած Գագկաշէն Ս. Գրիգորը «ի կուսէ Ծաղկաձորոյ» յար և նման Վաղարշապատի Ներսէս Շինողի կառուցած Զուարթայ տաճարի*[381]*: Այդ տաճարից շատ քիչ մաս էր կանգուն մնացած. գլխաւոր մասերից մնում էին չորս մեծ սիւները, սեղանը, պարզ երևում էր յատակագիծը և ապասիւների, խարիսխների, խոյակների, քանդակների ու խառնիխուռն փլուածքների անվերջանալի շեղջակոյտեր...: Ահա՛ այդ քաոսից ճարտարապետ Պ. Թորամանեան*[382] *պիտի վերակազմէր այդ տաճարը. մի ամբողջ ձմեռ կարծեմ այդ անապատի մէջ ամէն նեղութիւն ու տանջանք կրելով աշխատեցաւ ճարտարապետը և աւարտեց իւր վերակազմութիւնը: Եւ մեր առաջ փռուած այդ աւերակների կոյտերից կազմուեց Զուարթայ տաճարի աննման պատկերը, որի մանրամասն նկարագրութիւնը ինքը ճարտարապետը տուեց «Մուրճ»*[383] *ամսագրում: Այժմ բացուելով Գագկա շէն տաճարը, որ Զուարթնոցի յարևնմանն է շինուած, ըստ միաձայն վկայութեան պատմագիրների, և նրանից շատ լաւ պահպանուած, շօշափելի կերպով երևաց, թէ որքա՜ն ճիշտ էր Պ. Թորամանեանի 2 տարի առաջ կատարած վերակազմութիւնը, թէև ժամանակին մի քանի մասնագէտներ վիճելի կէտեր*

---

380 «Մշակ» - գրական և քաղաքական շաբաթաթերթ: Թիֆլիս, 1872-1921: Խմբագիր-հրատարակիչ՝ Գրիգոր Արծրունի: 1892-իցն խմբագիրներ՝ Ալ, Քալանթար, Համբարձում Առաքելեան և Լևոն Քալանթար:

381 Խօսքը Ներսէս Շինարար Կաթողիկոսի մասին է (641-661), որի պատուէրով է կառուցուել Զուարթնոցի Տաճարը:՝

382 Թորոս Յարութիւնի Թորամանեան (1864. Շապին Գարահիսար – 1934, Երևան) – նշանաւոր գիտնական, ճարտարապետ, ճարտարապետութեան տեսաբան, հնագէտ և լուսանկարիչ: Հայ ճարտարապետութեան պատմութեան գիտական ուսումնասիրութեան հիմնադիրը:

383 «Մուրճ» – «Քաղաքական, հասարակական, գրական ամսագիր», Թիֆլիս, 1889-1907: Խմբագիր և հրատարակիչ՝ Աւետիք Արասխանեան, ապա Կ. Կրասիլնիկեան և Է. Սարգսեան:

էին գտնում և շատ մասերում նրան համաձայն չէին։ Թէ՛ Զուարթնոցի և թէ՛ Գագկա շէն տաճարի ճիշտ վերակազմութիւնը ունենալը անչափ կարևոր էր ընդհանրապէս ճարտարապետութեան և մասնաւորապէս հայ արուեստի նկատմամբ։ Ահա՛ այդ խնդիրն էր դրուած հայ ճարտարապետի առաջ լուծելու, որից նա պատուով դուրս եկաւ. ապացոյց՝ Գագկա շէն տաճարը։

Բայց մեզ՝ Անեցիներիս, պահուած էր մի գեղեցիկ անակընկալ. մի ուրախ առիթ օր, այդ յունիսի 21-ն էր։ Իմիջիայլոց, պեղումի է եռանդով տաճարի հիւսիսային կողմը, ուր ջարդուփշուր, բայց մաս առ մաս դուրս է գալիս մի արձանագրութիւն, որ հաւանական է, թէ լինի շինութիւնը յիշատակողը, երբ Պ. Մառի ամբողջ ուշադրութիւնը դարձած է դէպի այդ հազարամեայ յիշատակարանի բեկորները, յանկարծ հողի ու քարակոյտերի միջից երևում է մի առնական արձանի դէմքի մասը։ Բահն ու բրիչ գործում են եռանդով և հետզհետէ դուրս է գալիս արձանի մարմնի մասերը և Գագկա շէն տաճարի մանրանկարի ջախջախուած բեկորները։ Այլևս տարակոյս չկայ, գտնուածը Գագիկ Ա. Բագրատունի արքայի արձանն է։ Արձանը ամրացած է եղել տաճարի հիւսիսային պատի վրայ, երևի շինութեան արձանագրութեան մօտ, մեծութիւնը մարդու հասակից քիչ փոքր է, փառահեղ սպիտակ միրուքով, ոլորած բեխերով, դէմքը դարձած է անշուշտ դէպ արևելք, ձախ ձեռքը մեկնած է և բռնած իւր շինած տաճարի մանրանկար գաղափարը (մօդէլ), որ գտնուեց թէև կոտրտուած, բայց բոլոր մասերը ամբողջ։ Արքան հագած է երկար վերարկու, իսկ գլխին դրած շատ շքեղ սպիտակապարօշ (չալմա) երևի այն, որ Բագրատունի թագաւորները ստանում էին Բաղդադի Ամիրայից։ Ժ.-ԺԱ. դարերում Հայաստանի զանազան վանքերի վրայ շինուած արձաններից կամ պատկերներից ամենայայտնին է սա անշուշտ։ Մեր մէջ այդ ժամանակաշրջանում որքան զարգացած էր առհասարակ քանդակագործ զարդերի շինութիւն, այնքան յետամնաց էր արձանագործութիւնը։ Ամենաբարդ մանուածապատ մի հիւսուածք քարի վերայ ճարտարօրէն քանդակող վարպետը մոլորուել մնացել է միշտ, երբ առիթ է եղել, որ նա մի մարդու պատկեր կամ արձան քանդակէ, օրինակ՝ Հաղբատը, Սանահինը կամ Հառիճը։ Բայց Գագիկ Ա.-ը քանդակող վարպետը անշուշտ բարձր է եղել կանգնած իւր արհեստակիցներից և յօրինել է զգեստի այնպիսի գեղեցիկ ծալքեր, որպիսին մինչև այդ ժամանակ ոչ մի տեղ չէ երևում, երևի արհեստաւորը բաւական դժուարացել է դէմքը քանդակելիս, բայց եղածը շատ բաւական է մեր առաջ կատարելապէս ներկայացնելու Բագրատունի թագաւորներից ամենաբազդաւորիև ամենաերկարատև իշխանութիւն վարողի շքեղ հասակն ու պատկառելի արտայայտիչ դէմքը։ Արձանը ներկուած է. ապարօշն ու միրուքը սպիտակ, ապարօշի վերայ կայ կարմիր ներկուած մի փունջ,

որ անշուշտ բանուած էր ոսկով. դէմքը մարմնագոյն է ներկուած, իսկ վերարկուն՝ մուգ կարմրագոյն. արձանը տաշուած է մուգ դեղնագոյն մաքուր, միակտոր քարից: Վերևը յիշեցի, որ Գագիկ ձախ ձեռքին բռնած ունէ իւր շինած եկեղեցու մանրանկար գաղափարը: Եւ այդ գաղափարը յարևնման է Պ. Թորամանեանի վերակազմած Զուարթնոց եկեղեցուն, որով ճարտարապետը իւր վերակազմութեան ճիշտ լինելուն մի անհերքելի վկայութիւն ևս ձեռք բերեց: Գագկի արձանը ջարդուած մի քանի կտոր է եղած և յոյս կայ, որ միացնելով ամբողջանայ, միայն առայժմ չէ գտնուած մի աչքը, որ գլխի մի կտորի հետ կորած է: Բայց եղածն էլ մի շատ նշանաւոր գիւտ է հայ պատմութեան և արուեստի համար:

Գագկա շէն տաճարի պեղման հետ միաժամանակ Պ. Թորամանեանի հսկողութեամբ մաքրուեց միջնաբերդում մի եկեղեցի բաւական հետաքրքիր ճարտարապետութեամբ, և Առաքելոց նշանաւոր եկեղեցու շուրջն ու մէջը կատարւում են պեղումներ, որոնք բացի ճարտարապետական և քանդակագործական գեղեցիկ կտորներից մինչև այժմ յայտնագործած է վերոյիշեալ տաճարի վերայ երկու նոր արձանագրութիւն: Պեղումներն ամենայն եռանդով առաջ են տարւում, և մեծ յոյսեր կան, որ Անիի պատմութեան նկատմամբ երևան գան շատ ուրիշ նորութիւններ:

Ա. Վրացեան

ՀԱԱ, ֆ.227, ց. 1, գ. 180, թ. 13-21, ինքնագիր:

№ - 180
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈՂԱՅՈՍՆ ՄԱՌԻ ԼԻԱԶՕՐԱԳԻՐԸ ԱՆԻԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԵՒ ԲՈԼՈՐ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 օգոստոսի 1906 թ.
Անի

Архимандриту о. Михаилу, настоятелю анийских церквей, доверяю общий надзор, как за городищем Ани и находящимся в нем анийским музеем, так за[384] землями, входящими в черту названного городища, с тем условием, чтобы ни один клочок анийской земли, ни один камень анийских построек, ни один предмет анийского музея не становился предметом эксплуатации, сколько-нибудь нарушающей интересы археологического изучения Ани, и сохранения на месте в целостности возможной древностей Ани[385].

[384] Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանը 1899 թ. թիւ 1429 կոնդակով նշանակուել է Անիի վանահայր («Արարատ», 1900, յունուար, էջ 4):

[385] 1913 թ. հոկտեմբերի 2-ին Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանը հետևեալ գրութիւնն

Орд. профессор Императорского С. Петербургского
университета, командированного для раскопков
Ани Императорскою археологическою комиссиею
при Министерстве Двора Н. Марр

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 537, թ. 2, ինքնագիր:

№ - 181
ՆՈՐ ԹԻՔՆԻՉ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՃԻՌԸ՝ ՀԱՄԱԳԻՒՂԱՑԻ ՊԵՏՐՈՍ ՈՒՄՐՈՅԻ ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ, ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՀԱՐԿԱՏՈՒՒԹԻՒՆԻՑ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 ապրիլի 1907 թ.
Նոր Թիքնիզ

Առնակման թերթ

Ի 1907 ամի յ3-ն ապրիլի հասարակութիւնքս Նոր-Թիքնիզ գիւղի Բայրաղտարու գիւղական հասարակութեան շրջանի Շիրակայ մասի, կարսի նահանգի, որը բաղկացած է 55 տանից, այսօր հրաւիրմամբ շրջանի Տանուտէրի հասարակական ժողով կայացնելու համար, որից 50 անձնաւորութիւնք, հասարակական ժողովում ձայն տալու իրաւունք ունենալով՝ և վճռելով Տանուտէրի հարցը՝ մեր հասարակութեան շարքից արձակելու համար, մեր համադրացի հարկատու Պետրոս Ումրոյեան Պետրոսեանցին, որը օգտւում է իւր գերդաստանին հասանելիք բաժին հողով և որը գրուած է 1886 թ. ընտանեկան ցուցակագրում քահանայական աստիճան ընդունելու համար և առնելով մտքի տակ հետևեալները որք են.

1. Պետրոսեանցը թողնում է ընդ միշտ իւր գերդաստանին հասանելիք բաժին հողերը հասարակութեան իրաւունքի և տրամադրութեան տակ:

2. Պետրոսը արձակելու մասին զինուորագրական հարկում ոչինչ արգելք չկայ:

3. Պետրոսի գերդաստանի վերայ արքունական և հողային հարկ և ապառիկ չկան և վճարուած են մինչև 1-ն յունուարի 1907 թիւը:

4. Պետրոսի վրայ ոչ մի ժամանակ թէ պահանջի մասի և թէ այլ գանգատներ եղած չեն քաղաքական դիւանատներում:

5. Նա՝ Պետրոսը, քննութեան և քրէական յանցանաց տակ նոյնպէս ընկած չի:

6. Պետրոսը մայր միայն ունի, իսկ հայրը վաղուց մեռել է արդէն:

7. Պետրոսը հարկատուութիւնից դուրս գալով՝ արձակւում է մեր

է ուղղել Կաթողիկոսական դիւանին. «Ներկայացնելով Պրոֆեսոր Մառի իմ անունով 28 օգոստոսի 1906 թ. տուած հաւատարմագիրը, խնդրում եմ, ապագայի կարևորութեան համար, պահել այն Դիւանիդ գործերում, տալով ինձ վաւերացրած պատճէն, ինձ մօտ պահելու համար» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 537, թ. 1):

հասարակութեան միջից հոգևոր կոչումն ստանալու, որի համար միաձայն կայացրինք արձակելով հարկատուութիւնից Պետրոս Պետրոսեանցին հասակաւ 37 ամաց, իւր գերդաստանով՝ ամուսինը՝ Հերիքնազ 35 ամաց, որդին՝ Խաչատուր 13 ամաց և դուստրները՝ Սոնա 13 ամաց, Նատալիա 9 ամաց և Շողակաթ 2 ամաց հոգևոր կոչման մէջ մտնելու համար: Իսկ նորա արքունական և հասարակական հարկերն ընդունում ենք մեր հասարակութեան վերայ, որի համար և ստորագրում ենք.

Արշակ Տէր-Միլիտոսեան
Պօղոս Մարութեան
Գրիգոր Մուկուչեան[386]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 807, թ. 5 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 182
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՂԱՆԻ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՄԻՔԱՅԷԼ ՔԱՀԱՆԱՅ ՊՕՂՈՍԻ ՏԷՐ-ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

30 յունիսի 1908 թ.
Ղանի

Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիային
Կարուց Վիճակի Ղանի գիւղի հասարակութիւնից
խոնարհ խնդիր

Յայտնի է արդէն Սրբազան Սինոդիդ որ գիւղիս ծխատէր Պօղոս քահանայ Տէր Միքայէլեանցը, վախճանուելու չորրորդ տարին է, որ մենք բոլոր հասարակութիւնս մնացել ենք հոգևոր մխիթարութիւնից բոլորովին զուրկ և թէ երբեմնապէս երթևեկ թափառաշրջիկ գաղթական քահանաներով օգտւում էինք, այդ էլ ևս մի բաղդ էր մեզ համար և ոչ սեփական. և միանգամայն շրջապատուած լինելով յոյն, քիւրտ, մօլական, տաճիկ և հայ բողոքական գիւղացի դրացիներով, որպէս մենք մեր վաղեմի դրութեան ծանօթ և գիտակ հասարակութիւնս ընտրել ենք հանգուցեալի որդի Միքայէլ Տէր-Միքայէլեանցը որպէս արժանաւորի մեզ համար քահանայացու ձեռնադրել, որի վարուց բարուց և եկեղեցական ընթերցանութեան մէջ բաւական վարժ և համապատասխան լինելը գիտնալով քանի քանիցս խնդրամատոյց եղանք թէ Սրբազան Սինոդիդ և թէ Հայոց Երևանայ Կոնսիստորիային[387]*, բայց մինչ ցարդ որոշ տնօրէնութեան չարժանացանք, պատճառաբանելով թէ ծրագրի համաձայն ընծայացուն պէտք է ունենայ Թեմական դպրանոցի երկրորդ դասարանի վկայական, բայց չնայելով որ*

386 Հետևում է ևս 20 անձի ստորագրութիւն:

387 Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 800, թթ. 3-4, 6-7, 9-10, 14-15, 16, 17-18, 19-20:

այդ պահանջն էլ կատարեց խեղճ ընծայացուն, չորս տարի չարչարուելով, կրկին մի երկու առարկայի պատճառաւ վկայական չստացաւ։ Իսկ ի՞նչ կմնայ որ տնտեսապէս և նիւթականապէս քայքայելը չափ ու սահմանից անց կացաւ, իսկ այսօր նա տասն և հինգ անձ կազմող մի գերդաստան մնացել է բոլորովին թշուառ և յուսահատ դրութեան մէջ նոյնպէս էլ համայն ժողովուրդքս։ Արդեօք մեր վիճակը ի՞նչ պէտք է լինի, գիւղը արդէն վարակուել է, մանկամարդի և երեխայի հիւանդութիւնով օրական երկու երեքը հողին ենք յանձնում առանց հաղորդութեան և առանց քահանայի և եթէ կայ այդպիսի մի օրէնք, վնաս չունի, սիրայօժար ընդունենք և տանենք, չէ՞ որ մենք էլ որպէս լուսաւորչական, որպէս ազգ և ձեր զաւակները խղճացէք բուռն և աղքատ ժողովրդիս թախինձը և արտասուքը սրբելու ի սէր մարդկութեան և ի սէր Աստուծոյ փութացնել մեր ընծայացուի ձեռնադրութիւնը և ծով կարիքներս փարատելու։ Սպասում ենք Սրբազան Սինոդիդ բարեհաճ տնօրէնութեանը[388]*, որ և ստորագրում ենք համայն հասարակութիւնս Ղանի գիւղի*

Աբրահամ Մարտիրոսեան
Յարութիւն Ասլանեանց, Թորոս Աւետիսեան[389]

Կստորագրեմ երեսփոխ Ս. Յակովբ եկեղեցւոյ նոյն գեղջ՝ Յարութիւն Ասլանեանց

Ի ստուգութիւն ամենայն կվաւերացնեմ արքունական կնքաւ (իննսուն տուն) հայ հասարակութեան Ղանի գիւղի տանուտէր Թովմաս Մանկոյեանց[390]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 800, թթ. 12-13, բնագիր, ձեռագիր:

№ - 183
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԻՐԱԾ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽՓԵՄԱԿԱԼԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԺՈՂՈՎԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18 յունուարի 1909 թ.
Կարս

Առնանագրութիւն

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան հրաւէրով մենք ներքևում ստորագրող շրջանային պատուիրակներս այսօր ներկայ գտնուե-

---

388 1912 թ. յունիսի 23-ին Ս. Սինոդը կայացրեց հետևեալ որոշումը. «Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային Միքայէլ Տէր-Պօղոսեանին [Տէր-Միքայէլեանցին] ընդունել հոգևոր կոչման մէջ և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Ղանի գիւղի համար» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 800, թ. 33):

389 Հետևում է ևս 87 անձի ստորագրութիւն:

390 Փաստաթուղթը կնքուած է արքունական կնիքով:

ցինք նոյն կառավարութեան նշանակած տեղը՝ Կարսի Հայոց ծխական դպրոցի դահլիճում, ընտրելու վիճակային պատգամաւորներ, որոնք ամսիս 30-ին ներկայ էին լինելու Երևան քաղաքում փետրուար ամսի 1-ին փոխ-թեմակալի ընտրութեան մասնակցելու համար[391]*: Սակայն ժողովականների օրինական թիւը պակաս լինելու պատճառով ընտրութիւնը չկայացաւ, իսկ ի նկատի ունենալով նշանակուած կարճ ժամանակամիջոցը և ժողովրդի անտարբեր վերաբերմունքը դէպի ընտրութեան գործը, որոշուեց. երկրորդ ժողով չնշանակել և խնդրել Հոգևոր կառավարութեան ներկայացուցիչ Հայր Կորիւն քահանայ Քոթանջեանցին ներկայ արձանագրութիւնը ներկայացնել պատշաճաւոր Հոգևոր իշխանութեան:*

Շիրակայ գործակալութեան պատուիրակներ՝
Մկրտիչ Տէր-Կարապետեանց
Գրիգոր Մուքայէլեանցի խնդրանօք ստորագրեցի Արսէն Հայրապետեանց
Տիկոռի գործակալութեան պատուիրակ՝ Ի. Միրաքեան
Հոգևոր կառավարութեան ներկայացուցիչ՝ Կորիւն քահանայ Քոթանջեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 809, թ. 39, բնագիր, ձեռագիր:

№ - 184
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՍՏԱՑՈՒԱԾ ՊՍԱԿԱԴՐԱՄՆԵՐԻ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 40 *29 յունուարի 1909 թ.*
Կարս

Ի Սրբազան Սինոդն Ս. Էջմիածնի
Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց
Յայտարարութիւն

Ի Հոգևոր Կառավարութեանս լուան զզեկուցումն Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ, ի հետևումն յայտարարութեան սորին

[391] 1908 թ. դեկտեմբերի 4-ին Երևանի փոխթեմակալի ժամանակաւոր պաշտօնակատար Հմայեակ վարդապետը հետևեալ շրջաբերականն է ուղարկել թեմի բոլոր գործակալներին. «Ի կատարումն առաջադրութեան Ամենապատիւ Տ. Տեղապահի Կաթողիկոսի Ամենայն Հայոց յ17 նոյեմբ. տարւոյս ընդ N695 յղելով ընդ այսմ զմի օրինակ հրահանգի վասն ընտրութեան ծխական պատուիրակաց և շրջանային պատուիրակաց առ յընտրել զփոխ-թեմակալ Երևանի, առաջադրեմ Ձեզ ըստ մտաց հրամանի ընտրել զծխական և շրջանային պատուիրակս և պարտաւորել, զի ներկայ լիցին շրջանային պատուիրակդ յԵրևան քաղաքի ոչ ուշ քան զ30 յունուարի 1909 ամի, զի ընտրութիւն փոխթեմակալին լինելոյ է ի մէկ փետրուարի նոյն ամի (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 809, թ. 4):

ի 18-ն հոկտեմբերի 1907 ամի N *1086, առաջադրութեամբ իւրով յ31 այնր հոկտեմբերի* N *6188, պատուիրեալ էր սմին՝ աշխատ լինել ընկալնուլ ի գաղթականաց զ3 ր. պսակադրամս և զմի րուբլի ի նպաստ Թեմական դպրանոցի, իսկ ի տեղական պսակատեարց զ5 ր. պսակադրամ և զմի րուբլի ի նպաստ դպրանոցին։ Սակայն, ընդունելով զմիտս հրամանի Ս. Ատենիդ ի 18 ապրիլի 1907 ամի* N *847, յանուն Կոնսիստորիային, զի զպսակադրամս, որ սահմանեալ է ստանալ զ4 ր. ի գաղթական և զ5 ր.-50 կ. ի տեղական պսակատեարց, պարտ էր համարել յօգուտ Մայր Աթոռոյ ամբողջապէս և ոչ՝ ճեմարանի, հետևաբար և ոչ Թեմական Դպրանոցի, Հոգևոր Կառավարութիւնս խոնարհեալ առաջի կրկնողական և յանդիմանողական առաջադրութեանց Թեմական Ատենին ի 14-էն յունիսի 1908 ամի սկսեալ էր ի կատար ածել զմիտս վերոյիշեալ առաջադրութեան նորին ընդ* N *6188, ըստ այսմ. ա) յօրէ յայնմանէ գրել ի կտրոնաւոր տումարի պսակաց գործակալութեան կարուց, որ վարէ Հոգևոր Կառավարութիւնս, զհասս Մայր Աթոռոյ և դպրանոցին ուրոյն-ուրոյն և որոշակի։ Եւ բ) ի 1-էն յունուարի տարւոյն, վասն արձակեալ մէն մի հրամանաց պսակի որպէս ի Հոգևոր Կառավարութենէս, նոյնպէս և ի գործակալաց վիճակիս համարել ի վերջ տարւոյն իբրև նպաստադրամ Թեմական դպրանոցի։*

Եւ զտեղեկութիւն ի կտրոնաւոր տումարէ պսակաց գործակալութեան կարուց վասն 1908 ամի, յորմէ տեսանի, զի ի 14-էն յունիսի ցվերջ տարւոյն ըստ NN *110-269 կտրոնաց գոյացեալ են նպաստադրամք յօգուտ Թեմական դպրանոցի՝ 147 ր. 90 կ., որք և գրեալ են ի մուտս մատենի օտարային արդեանց այնր ամի ընդ յօդուածովք* NN*41-44, 67, 70 և 79, և յորոց 40 ր. 80 կ. հանդերձ ընկալեալ ի գործակալէ Ուխտեաց 4 ր. նոյնպիսի դրամովք, առաքեալ են ի Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ ընդ յայտարարութեան սորին ի 16 հոկտեմբերի* N *1305։ Մնայ, ուրեմն, 107 ր. 10 կ.։ Իսկ ի 1-էն յունուարի ց14 յունիսի տարւոյն գոյացեալ ըստ* NN *1-109 կոճեղց պսակադրամքն մուծեալ են ի մուտս մատենի վիճակային արդեանց ընդ յօդուածովք* NN*8, 16, 22, 26 և 29, ընդունելով զայնս միմիայն աթոռահաս։*

Սահմանեցին. *նախ՝ ըստ որոշման Հոգևոր Կառավարութեանս, ի 14-էն յունիսի 1908 ամի՝ բառնալով յարձակեալ ի Հոգևոր Կառավարութենէս ի 109 պսակաց զմի-մի րուբլի, ընդ ամենայն զ109 ր. գրել, յելս մատենի վիճակային արդեանց 1908 ամի, իսկ ի մուտս և յելս մատենի օտարային արդեանց այնր ամի, որպէս նպաստադրամ Թեմական դպրանոցի և մատուցանել Վիճակային Կոնսիստորիային Հայոց Երևանայ որպէս զայնս, նոյնպէս և զմնացեալ 107 ր. 10 կ. ի գումարի 216 ր. 10 կ., խնդրելով զստացմանէ դրամացն ընկալագիր։*

Երկրորդ՝ ի ստանալն ի գործակալաց վիճակիս զտումարս պսակահարկ արդեանց 1908 ամի, զննել և ըստ թուոց արձակեալ հրամա-

նաց պսակաց բառնալ զորոշեալ նպաստադրամս Թեմական դպրանոցի։ Եւ երրորդ՝ զվերոգրելոցն խոնարհաբար զեկուցանել Ս. Աթենիդ ի տեղեկութիւն։

Նախագահ կառավարութեան՝ (ո՛չ գոյ)
Անդամք՝ Մեսրովբ քահանայ Գրիգորեան[392]
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 296, թթ. 11-12, բնագիր, ձեռագիր:

№ - 185
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՈՒԽՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆԻՆ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 մարտի 1909 թ.
Կարս

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1909 թուի մարտի 1-ին, Կարս

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Տ. Փոխարքայի հաճութիւնը՝ 1908 թուի նոյեմբերի 30-ին կայացած պատգամաւորական ժողովում ընտրուած Տ. Իսահակ վարդապետին[393] *Կարսի Վիճակի Փոխանորդ հաստատելու վերաբերմամբ, չլինելու պատճառով, Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան հրաւէրով այսօր քաղաքիս ծխական դպրոցի դահլիճում պատգամաւորական ժողով կայացաւ Յաջորդական նոր ընտրութիւն կատարելու համար։ Ժողովի նախագահ ընտրուեց Հոգևոր Կառավարութեան ներկայացուցիչ Արժանապատիւ Տ. Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանը, իսկ քարտուղար՝ Յովհաննէս Այվազեանցը։ Ժողովին ներկայ էին հետևեալ պատգամաւորները.*

Ս. Աստուածածին եկեղեցու ծխականներից ընտրուած

---

392 Մեսրովպ քահանայ Գրիգորեան – ծնուել է 1849 թ.: 1882 թ. ձեռնադրուել է քահանայ Կարսի Ս. Նշան եկեղեցու վրայ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 12 շրջ. 13):

393 Իսահակ վարդապետ Տէր-Միքայէլեան – Ծնուել է 1868 թ. Գանձակի Բանանց գիւղում: Կրթութիւնը ստացել է Երևանի թեմական դպրոցում: 1894 թ. ընդունուել է Ս. Էջմիածնի միաբանութեան շարքը: 1896 թ. կարգուել է Սաղեանի Նախավկայի վանքի միաբան: 1896 թ. Մակար եպիսկոպոսի կողմից ձեռնադրուել է սարկաւագ: Մկրտիչ Ա. Կաթողիկոսի հրամանով 1899-ի յուլիսի 28-ին կարգուել է Գորու վիճակի վրացախօս հայոց առաջնորդական փոխանորդ, 1901-ին՝ Նուխիի, 1902-ին՝ Նախիջևանի հայոց առաջնորդական փոխանորդ: 1906 թ. մայիսի 13-ի կոնդակով նշանակուել է Մայր Աթոռի տպագրական կոմիտէի անդամ, 1908 թ. սեպտեմբերի 26-ին նշանակուել է վանական կառավարութեան անդամ: 1910 թ. Մատթէոս Կաթողիկոսի Թ. 141 կոնդակով նշանակուել է Ղրիմի Ս. Խաչվանքի միաբան: 1924-1926 թթ. Շիրակի թեմի առաջնորդ, 1927-1928 թթ. Գանձակի փոխանորդ: 1937 թ. ապրիլի 13 լոյս 14-ին ձերբակալուել է «հակայեղափոխական, ազգայնամոլական, դաշնակցական» լինելու մեղադրանքով: Մահացել է 1938 թ. աքսորավայրում:

1.Յակովբ Տէր-Կարապետեան
2. Խաչատուր Բզնունի
3. Ղազարոս Բոստանջեանց
4. Արսէն Թիւթիւնջեանց
Ս. Նշան եկեղեցու ծխականներից ընտրուածներ
5. Մկրտիչ Կոստանեանց
6. Թադէոս Փինաչեանց
7. Հրաչեայ Զաքարեան
8. Առաքել Վարդանեան
9. Սարգիս Փամբուղչեանց
10. Մխիթար Տէր-Սաղաթէլեանց՝ Օլթուլ Գործակալութեան կողմից
11. Համազասպ քահանայ Ղարագէօզեան[394], Անուղ Գործակալութեան կողմից
12. Կորիւն քահանայ Քոթանջեանց, Անուղ Գործակալութեան կողմից
13. Եղիշէ քահանայ Տէր-Աւետիսեան[395], Շիրակայ Գործակալութեան կողմից
14. Տօնիկ Աշղեան և
15. Ներսէս քահանայ Մարտիրոսեան՝ Բասենոյ-Շատևանի և Զարիշատի գործակալութեանց պատգամաւորները տկարութեան պատճառով անկարող են գտնուել ներկայանալ ժողովին և մասնակցել ընտրութեան, իսկ իրենց ձայնը տուել են, առաջինը՝ Յովհաննէս Այվազեանցին և երկրորդը՝ Տ. Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանցին, որոնք ժողովի կողմից ճանաչուեցին իրաւասուներ։

Անյայտ պատճառներով բացակայ էին ժողովից Անուղ Գործակալութեան պատգամաւոր՝

1. Մելքիսեդեկ քահանայ Մելքոնեանը
2. Կաղզուանի Գործակալութեան պատգամաւորներ՝ Արտաշէս Քանանեանը և
3. Սարգիս Փամբուղչեանը
4. Բէնկլիահմէտի Գործակալութեան՝ Պօղոս Թովմասեան և
5. Կարսի Գործակալութեան՝ Յարութիւն Խաչատրեանը։ Իսկ Արդահանի և Տիկոռի գործակալութիւնների մէջ պատգամաւորական ընտրութիւն կայացուած չէր արդէն։

Ժողովականների օրինական թիւը լրացուած համարելով, ժողովը միաձայն Կարսի Վիճակի փոխանորդ ընտրեց Բարձրապատիւ Տ.

---

394 Համազասպ քահանայ Ղարագէօզեան – ծնուել է 1875 թ.: Կրթութիւնը ստացել է Կարսի քաղաքային դպրոցում: Քահանայ է ձեռնադրուել 1903 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 12 շրջ. 13):

395 Եղիշէ քահանայ Տէր-Աւետիսեան – ծնուել է 1868 թ.: Կրթութիւնը ստացել է Ալեքսանդրապոլի չորսամեայ դպրոցում: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1898 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. 17)::

Ուխտանէս վարդապետ Տէր-Գասպարեանին[396], որի համաձայնութիւնը մասնաւորապէս արդէն ստացուած էր։ Եւ ապա ժողովը որոշեց՝ խնդրել Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից, նրա ներկայացուցչի միջոցաւ, նորընտիր Յաջորդի հաստատութիւնը փութացնելու համար, արձանագրութեան պատճէնը ուղղակի ուղարկել Նորին Ամենապատուութեան Տ. Տեղապահին, ի վերայ իսկականին ստորագրեալ են. Նախագահ՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան, խաչատուր Բզնունի, Կորիւն քահանայ Քոթանջեանց, Մխիթար Սաղաթէլեանց, Եղիշէ քահանայ Տէր-Աւետիսեանց, Համազասպ քահանայ Ղարագէօզեանց, Յ. Այվազեան, Մկրտիչ Կոստանեան, Յակովբ Տէր-Կարապետեան, Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան, Արսէն Թութանջեան, Ղ. Բոստանջեան, Թադէոս Փինաչեանց, Առաքել Վարդանեան, Վահան Փամբուղչեանց և Հր. Զաքարեան։

Համեմատ է ընդ բնագրին.

Անդամ Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց՝
Կորիւն քահանայ
Քարտուղար՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 133, թթ. 15-16, հաստատուած պատճէն, ձեռագիր:

№ - 186
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻՆ՝ ՈՒԽՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԸՆՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Թիւ 200 *4 մարտի 1909 թ.*
Կարս

Նորին Ամենապատուութեան Տեղապահի Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Գէորգայ Բարձր Սրբազան արեղպիսկոպոսի[397] ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Կարուց

396 Ուխտանէս վարդապետ Տէր-Գասպարեան – ծնուել է 1869 թ.: Կրթութիւնը ստացել է Բաքուի Ռեալական դպրոցում, ապա՝ Բոննի համալսարանում: 1905 թ. լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոսի կողմից ստացել է վարդապետական մասնաւոր իշխանութիւն: 1909 թ. ընտրուել է Կարսի վիճակի փոխանորդ: Կաթողիկոսի տեղապահը 1911 յունուարի 9-ին ընդունել է Ուխտանէս վարդապետի հրաժարականը և առաջադրել է Ս. Սինոդին ուղարկել նրան, իր խնդրանքի համաձայն, Սանահինի վանք: 1911 թ. հոկտեմբերի 20-ին Ուխտանէս վարդապետը Կաթողիկոսական Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսին է ներկայացրել կուսակրօնութիւնից հրաժարուելու դիմում: Նոյն թուականի նոյեմբերի 11-ին Սինոդը որոշեց նրան «իսպառ արձակել հոգևոր կոչումից» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11121, թթ. 11, 12 և շրջ., ֆ. 57, ց. 3, գ. 38, թթ. 5-6, «Արարատ», 1905, յունիս, էջ 526, 1911, յունուար, էջ 6, 1911, դեկտեմբեր, էջ 971):

397 Գէորգ արք. Սուրէնեան[ց]– Յետագայում՝ Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոս (1847-1930 թթ.) - 1872-ին ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները, 1874-ին՝ Էջմիածնի Գէորգեան ճեմարանի ուսուցիչ, 1875-ին՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ և դպրոցների տեսուչ, 1878-ից՝ Ալեքսանդրապոլի վիճակի առաջնորդական փոխանորդ (կառուցել է Ալեքսանդրապոլի Ս. Աստուածածին եկեղեցին): 1882-ին ձեռ-

Խոնարհ Յայտարարութիւն

Ըստ ցանկութեան պատգամաւորական ժողովոյ Վիճակիս, Հոգևոր Կառավարութիւնս ընդ այսմ խոնարհաբար մատուցանէ ի բարեհաճ տնօրէնութիւն Ամենապատիւ Տեառնդ զպատճէն արձանագրութեան յիշեալ ժողովոյն, որ ի մասին ընտրութեան Բարձրապատիւ Տ. Ուխտանէս վարդապետի ի Փոխանորդ Վիճակիս

Նախագահ Կառավարութեան (ո՛չ գոյ)
Անդամք՝ Մեսրովբ քահանայ Գրիգորեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 133, թ. 14, բնագիր, ձեռագիր:

№ - 187

ՍԻՆՈԴԻ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԸՆՏՐՈՒԱԾ ՈՒԽՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆԻՆ ԻՐ ՊԱՇՏՕՆՈՒՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 955 *26 ապրիլի 1909 թ.*
Ս. Էջմիածին

Ի Սինոդն Սրբոյ Էջմիածնի

Քանզի վիճակն Կարուց թափուր էր ի փոխանորդէ և կամէր մեզ կարգել զմիաբան Մայր Աթոռոյս զՏ. Ուխտանէս վարդապետն ի նմին պաշտամանն, ուստի և հարցաք զհաճութիւն Տ. Փոխարքային Կովկասու, որ գրութեամբ ի 21-ն ամսոյս ընդ համարաւ 8891 պատասխանի առնէ, եթէ չիք արգել յիւրմէ կողմանէ ի կարգել զյիշեալ վարդապետն ի պաշտամանն:

Արդ՝ կարգելով մեր զՏ. Ուխտանէս վարդապետն ի պաշտամանն փոխանորդի վիճակին Կարուց, առաջադրեմք Սինոդիդ տնօրինել զայսմանէ զարժանն[398]*:*

Տեղակալ՝ Գէորգ արքեպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10867, թ. 1, բնագիր, ձեռագիր:

նադրուել է եպիսկոպոս, 1895-ին՝ արքեպիսկոպոս: 1886-ից Աստրախանի թեմի առաջնորդ էր, որտեղ խթանել է կրթական գործը: 1907 և 1910 թթ. նշանակուել է Կաթողիկոսական տեղապահ, 1911-ին ընտրուել է Ամենայն Հայոց Կաթողիկոս: 1912-ին, երբ վերստին ասպարէզի վրայ էր Հայկական հարցը, Գէորգ Սուրէնեանցի նախաձեռնութեամբ կազմուել է Հայազգային պատուիրակութիւնը՝ Պօղոս Նուբարի գլխաւորութեամբ, որը պէտք է պաշտպանէր Հայ դատը Եւրոպական կառավարութիւնների առջև: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, համոզուելով, որ Ռուսաստանի յաղթանակից է կախուած արևմտահայերի ճակատագիրը, դիմել է Նիկոլայ Բ. կայսեր օգնութեանը: Աջակցել է կամաւորական շարժմանը, ապա՝ հայ գաղթականներին օգնութիւն կազմակերպելու գործին: Եղել է Առաջին Հանրապետութեան հետ և նրա կողքին: Խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ լաւատեսօրէն է տրամադրուել նոր իշխանութիւնների հանդէպ:

398 1909 թ. մայիսի 8-ին Սինոդը, լսելով հարցը, որոշեց. «Նախ՝ զկարգմանէ Տ. Ուխտանիսի վարդապետի ի պաշտօն փոխանորդի Կարուց տալ տեղեկութիւն Կոնսիստորիային Երևանայ, Հոգևոր Կառավարութեան Կարուց և ինքեան Տ. Ուխտանիսի վարդա-

№ - 188
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՂԶՈՒԱՆ ԱՒԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ՄԱՏՈՒՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 4507 *24 սեպտեմբերի 1909 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի Ի Կոնսիստորիայէ վիճակին Հայոց Երևանայ Յայտարարութիւն

Ի կոնսիստորիայիս լուան զյայտարարութիւն Հոգևոր Կառավարութեան Կարուց ի 11 յուլիսի տարւոյս N *1052, ընդ որում առաջի առնել ի հաստատութիւն սորին զնախագիծ կառուցման մատրան ի գերեզմանատանն Հայոց Կաղզուան աւանի արդեամբք և ծախիւք այրի Թագուհւոյ Ջանփոլադեան*[399]*: Ատեանս զնախագիծն ընդ առաջադրութեան ի 14 օգոստոսի անցելոյ* N *3401 առաքեաց Ջինուորական Նահանգական Շրջանային Վարչութեան Կարուց խնդրելով վաւերացուցանել զայն, որ և հաստատեալ առաքեաց ի սոյնն ընդ գրութեան ի 27 օգոստոսի անցելոյ* N *611. Ահմանեցին. մատուցմամբ վաւերացուցեալ նախագծի վասն կառուցման մատրան ի գերեզմանատան Հայոց Կաղզուան աւանի հայցի զտնօրէնութիւն Սրբազան Սինոդիդ յաղագս թոյլատրելոյ այրի Թագուհւոյ Ջանփոլադեան կառուցանել զայն արդեամբք և ծախիւք իւրովք*[400]*:*

Նախագահող Կոնսիստորիայի՝ Յակոբ քահանայ Տէր-Սիմէօնեան
Անդամք՝ Կորիւն քահանայ Քոթանջեան
Անդրանիկ քահանայ Դաւթեան[401]
Ատենադպիր՝ Գ. Սիմոնեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10936, թ. 1, բնագիր, ձեռագիր:

պետի և երկրորդ՝ պատուիրել գանձապահի Սինոդիս տալ փոխարինաբար Տ. Ուխտանիսի վարդապետի ի ծախս ճանապարհի ռուբլիս քսան և հինգ, զորս ունի ապա հատուցանել Հոգևոր Կառավարութիւնն Կարուց ի վիճակային արդեանց» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10867, թթ. 2-3):

399 Թագուհին Զաքարէ Ջանփոլադեանի կինն էր: Եկեղեցու շինութիւնը ձեռնարկել է Զաքարէի կողմից, որը մահացել է 1906 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 220, թ. 68): Տես նաև թիւ 167 փաստաթուղթը:

400 1909 թ. հոկտեմբերի 23-ին Սինոդը հետևեալ հրահանգն է առաքել Երևանի Հայոց Կոնսիստորիային. «Դարձուցանելով զվաւերացեալ յատակագիծ շինութեան մատրան ի գերեզմանատան Կաղզուան աւանի, թոյլ տալ այրի Թագուհւոյ Ջանփոլադեան կառուցանել զայն արդեամբ և ծախիւք իւրովք, զոր հաղորդել նմա ի ձեռն Կոնսիստորիային Երևանայ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10936, թ. 2 և շրջ.):

401 Անդրանիկ քահանայ Դաւթեան – ծնուել է 1878 թ.: Կրթութիւնը ստացել է Գէորգեան ճեմարանում: Քահանայ է ձեռնադրուել 1907 թ. Երևանի Ս. Յովհաննէս եկեղեցու վրայ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թ. 2 և շրջ.):

№ - 189
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ԲԱԳԱՐԱՆԻ Ս. ԳԷՈՐԳ ԵՒ ՎԱՐԴԻԿ ՀԱՅՐ ՈՒԽՏԱՏԵՂԵՐԻՑ ՍՏԱՑՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 23 *14 յունուարի 1910 թ.*
Կարս

Ի Լուսաւորչական Հայոց Սրբազան Սինոդն Սրբոյ Էջմիածնի Ի Հոգևոր Կառավարութենէ Հայոց Վիճակին Կարուց Յայտարարութիւն

Ի կատարումն հրամանի Հաշուարարական Մասին Սրբազան Սինոդիդ ի 11-ն ամսոյս N 2905, Հոգևոր Կառավարութիւնս խոնարհաբար յայտ առնէ եթէ՝ Ս. Գէորգ ուխտատեղին Բագարան գեղջ, որպէս յայտարարեալ է Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ յայտարարութեամբք սորին, ի 26 մայիսի 1901 ամի N 745 և ի 29 յունուարի տարւոյս N 42, համարի եկեղեցի ծխական, հետևաբար արդիւնք նորին պատկանին գիւղական եկեղեցւոյ տեղւոյն, իսկ ունելով առաջի աչաց, զի ժողովրդականք գեղջն վատնէին զգոյացեալ արդիւնս յուխտաւորաց ի պէտս անձնական կարեաց՝ ըստ հաճոյից իւրեանց, ուստի Հոգևոր Կառավարութիւնս շարունակէ զկատարումն որոշման նախկին կազմի իւրոյ՝ կայացելոյ ի 26 սեպտեմբերի 1900 ամի, այն է՝ յիւրաքանչիւր ամի ի տօնի Ս. Գէորգայ Զօրավարի միմիայն ընդ ձեռն ներկայացուցչաց իւրոց հսկէ ի վերայ արդեանցն և զգոյացեալսն որպէս աւանդադրամ առնու ի տեսչութիւն իւր, մուծանելով զայնս ի տոմարս օտարային արդեանց և տալով յանուն երեսփոխանի գեղջն զօրինաւոր ընկալագիրս, նպատակաւ գործադրելոյ զգումարսն ի պէտս անհրաժեշտ կարեաց եկեղեցւոյն և կրթական գործոյ հասարակութեան գեղջն։

Ի գոյացեալ ցարդ յաւանդադրամոցն յանձնեալ է Հոգաբարձութեան եկեղեցական-ծխական դպրոցի և ուսուցչի գեղջն ութն հարիւր րուբլի, զորմէ և զեկուցեալ է նախկին Փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ՝ Գերապատիւ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի յ2-ն նոյեմբերի 1906 ամի N 123։ Մնան յարկեղ գանձուց սորին 311 րուբլի 7 կոպէկ և առ խորէն քահանայն Ստամբօլցեանց քաղաքիս 389 րուբլ. 17 կոպ. ընդամենայն 700 րուբլի 24 կոպէկ։

Հսկողութիւն արդեանց ուխտատեղւոյն Վարդիհօր ց1903 ամն յանձնեալ էր երեսփոխանի եկեղեցւոյ Կաղզուան աւանի, որ զգոյացեալսն մատուցանիւր սմին, զորս, ընդ ամենայն 725 րուբլի 16 կոպէկ, Հոգևոր կառավարութիւնս առաքեալ է ի Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Երևանայ ընդ յայտարարութեան ի 14-ն հոկտեմբերի 1903 ամի

N 2367, իսկ յետ այնու կատարէր հսկողութիւնն վանահայր վանուցն՝ Տ. Մկրտիչ քահանայն Տ. Գրիգորեանց և զարդիս կարգադրութեամբ Տ. Փոխանորդի վիճակիս հսկէ հոգաբարձութիւն կաղզուան աւանի և զգոյացեալ արդիւնսն գործադրէ ի պէտս ծխական դպրոցի տեղւոյն։

Շրջաբերական առաջադրութեամբք պատուիրեալ է ամենայն գործակալաց վիճակիս ցվերջ ամսոյս մատուցանել զամենատեսակ դրամս վիճակային և օտարային արդեանց, զորս ընդ գանձելն Հոգևոր Կառավարութիւնս ունի առաքել ըստ պատկանելեաց անմիջապէս։

Նախագահ Կառավարութեան՝ Ուխտանէս վարդապետ
Անդամք՝ Կորիւն քահանայ Քոթանջեան
Համազասպ քահանայ Ղարագէօզեան
Քարտուղար՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 288, թթ. 2 և շրջ., 4, բնագիր, ձեռագիր։

№ - 190
ԿԱՂԶՈՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ 1900 Թ. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅԱՆՁՆՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԵՏ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 45 *28 յունուարի 1910 թ.*
Կաղզուան

Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին
Կաղզուանի Հ. եկեղեցական ծխական երկդասեան դպրոցի Հոգաբարձութիւնից
Խնդիր

Կաղզուանը՝ լայն շրջան չունենալով, ճանապարհների հաղորդակցութիւնից զուրկ և մի խուլ անկիւնում գտնւելով՝ նրա բնակիչները՝ միանգամայն զուրկ են մնացել թէ մտաւորապէս և թէ նիւթապէս։ Այդ բանին գործնական փաստ կարող է ծառայել այն իրողութիւնը, որ Կաղզուանի ժողովուրդը 1884 թուին ձեռնարկելով իր եկեղեցու շինութեան՝ մինչև օրս էլ չկարողացաւ լիովին աւարտել շինութեան գործը.- թէև այժմ եկեղեցում ժամերգութիւն լինում է, բայց դեռ շատ թերութիւններ ունի, իսկ զանգակատունը՝ միանգամայն կիսատ է մնացել։

Այսպէս. մեր միակ եկեղեցին նիւթական խիստ կարիքի մէջ ընկնելով՝ մեր դպրոցների վերաբացման օրից՝ տեղիս միակ եկեղեցական ծխական դպրոցին չկարողացաւ բաւարար չափով նպաստել, ուստի 1905 թուից սկսեալ դպրոցը դեռ պարտէ մնացել ուսուցիչներին։ Բացի դրանից, այս երկրորդ տարին է, որ Հոգաբարձութիւնս՝ նիւթականի սղութեան պատճառով՝ ստիպուած է լինում արձակել դպրոցից Դ. բաժանման աշակերտներին՝ չկարողանալով բաց անել Ե. բաժանմունք։

Դեռ չենք յիշում այն իրողութիւնն էլ, թէ ինչ-ինչ մուրացիկ միջոցներով ենք լրացնում դպրոցի նախահաշիւը, որը չի անցնում 3000 րուբլուց։

Արդ. Ջերդ Վեհափառութեան – Համայն Հայոց Պետին այս համառօտ տեղեկութիւնը տալով՝ Ջերդ հայրախնամ ուշադրութիւն ենք խնդրում այն բանի վրայ, որ 1900 թուին Կարսի յաջորդ Հայր Եղիշէ վ. Մուրադեանը տեղիս եկեղեցու երեցփոխ Ս. Բուդաղեանին նախապէս ստացական տալով, որը այժմ գտնւում է Հոգաբարձութեանս արխիւում – նրանից ստանում է 700 րուբլի եկեղեցական դրամից Կարսի արքունական գանձարանը գցելու պատրուակով։ Սակայն Հայր Եղիշէն, ինչպէս յետոյ պարզուեց իր գրութիւններից, յիշեալ գումարը գործադրել է Կարսում իր ձեռնարկած մեծ շինութեան վրայ, որը այժմ ծառայում է տեղի Հոգևոր Կառավարութեան և ծխական երկսեռ դպրոցներին Հայր Եղիշէի գրութեանց հիման վրայ՝ մենք յիշեալ գումարի համար դիմեցինք Կարսի Հոգևոր Կառավարութեան, որ և վերջինս էլ՝ 200 րուբլին Կաղզուանի եկեղեցու կողմից հաշուելով նպաստ առաջնորդարանի շինութեան՝ խոստացաւ մնացած 500 րուբլին վճարել։ Սակայն վերջին ժամանակներում, երբ Հոգաբարձութիւնս նիւթականի խիստ կարիք զգալով՝ նորից դիմում արեց Կարսի Հայր յաջորդին, նա միանգամայն մերժեց վճարել, առարկելով՝ որ յիշեալ 700 րուբլի գումարը շինութեան մուտքի և ելքի մատեաններում չկայ արձանագրուած, ուստի պէտք է դիմենք Հայր Եղիշէին։ Բայց մենք քանիցս դիմել ենք Հայր Եղիշէին, պատասխանել է, որ յիշեալ գումարը ինքը ծախսել է «առաջնորդարանի» վրայ, ելևմտից մատեաններում արձանագրել է, որոնք գտնւում են Ս. Սինոդում, կարող ենք դիմել Կարսի Հոգևոր Կառավարութեան և մեր արդար պահանջն անել նրանից։

Վեհափառ Տէ՛ր, պարզ եղելութիւնը հաղորդելով Ջերդ Վեհութեան՝ խոնարհաբար խնդրում ենք Ջերդ բարեհաճ տնօրէնութիւնը այդ մասին։

Սրա հետ ուղարկում ենք Հայր Եղիշէի տուած ստացականի պատճէնը[402]*։*

Փ. Նախագահ Հոգաբարձութեան՝ Թ. Գիւլբայազեան
Անդամք՝ Մ. Նահապետեանց
Տիգրան Ղանթարճեան
Մուշեղ Ներսիսեան
Տեղիս ծխ. եկեղեցւոյ երեցփոխ Ա. Մատղաշեանց
Քարտուղար՝ Թ. Ասլեանց

[402] Խօսքը հետևեալ ստացականի մասին է. «Ստացայ Կաղզուանի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ երեսփոխան Պ. Սահակ Բուդաղեանից եկեղեցապատկան դրամագլխից խնայողական գանձարանում Պետական բանկն յանձնելու համար եօթն հարիւր րուբլի (700 ր.)։ 1897 թի օգոստոսի 5, Կաղզուան» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 573, թ. 3)։

Մակագրութիւն. *Յանձնում ենք Ս. Էջմիածնի Սինոդին ի տնօրէնութիւն։*

Մատթէոս Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց[403]*. 10 փետրուարի 1910 թ., Ս. Էջմիածին*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 513, թթ. 2 և շրջ., 16, բնագիր, ձեռագիր:

№ - 191
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԻ ԱՅՑԵԼՈՂՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 փետրուարի 1910 թ.
Ս. Էջմիածին

Նորին Վեհափառութեան Տ.Տ. Մատթէոսի Կաթուղիկոսին
Ամենայն Հայոց
Անիի վանահայր Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանից
Յայտարարութիւն

Մի տարուց աւելի է, որ Ս. Սինոդը Հոռոմոսի նշանաւոր վանքի վերահսկողութիւնն էլ յանձնել է ինձ. տարաբաղդաբար ոչնչով չեմ կարողացել օգտակար լինել վանքին նիւթական միջոցների սղութեան պատճառով։ Նոյն իսկ վանքը մի օրինաւոր սենեակ չունի վանահօր բնակութեան կամ հիւրերի ընդունելութեան համար։ Այժմ էլ մի մեծ վտանգ սպառնում է բուն տաճարին արևելեան կողմից, իսկ զանգակատանը արևմտահիւսիսային անկիւնից, արևելեան կողմից, ինչպէս և զանգակատան հիւսիսարևմտեան անկիւնից քարեր են թափուած և պատի ճեղքերից լոյս է երևում։ Առ այժմ կարելի է մի քանի հարիւր րուբլի ծախսելով այդ վտանգի առաջն առնել, յետաձգելով նորոգութիւնը, կարող է մեր նախնեաց այդ պատմական և ճարտարապետական նշանաւոր կոթողին այնպիսի վտանգ սպառնալ, որ հազարներով անկարելի լինի առաջն առնել։ Հոռոմոսի վանքը իւր ճարտարապետական հնութիւններով նոյնչափ գրաւում է հայ և օտար այցելուներին, որչափ և Անին, շատ յաճախ տրտունջներ և յանդիմանութիւններ

[403] Մատթէոս Բ. Կոստանդնուպոլսեցի Իզմիրլեան (22 փետրուարի 1845, Կ. Պոլիս -11 դեկտեմբերի 1910, Ս. Էջմիածին) – Ամենայն Հայոց Կաթողիկոս 1908-1910 թթ.: 1869 թ. ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները, 1876-ին ձեռնադրուել է եպիսկոպոս: 1886-1890 թթ. եղել է Եգիպտոսի թեմի առաջնորդ, 1894-1896 թթ.՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք: Պայքարել է հայկական բարենորոգումների իրականացման համար և իր վճռականութեան շնորհիւ կոչուել Երկաթեայ Պատրիարք: 1896-1908 թթ. աքսորուել է Երուսաղէմ: «Երիտթուրքական» յեղաշրջումից յետոյ 1908 թ. հոկտեմբերին վերընտրուել է Կ.Պոլսի Հայոց Պատրիարք: Կաթողիկոս ընտրուելուց յետոյ 1909 թ. յունիսին ժամանել է Ս. Էջմիածին:

եմ լսում իմ և հոգևոր իշխանութեան հասցէին: Համարձակւում եմ իմ կողմից աւելացնել Վեհափառ Տէր, թէ միանգամայն արդար կը լինեն այդ տրտունջները, եթէ հոգևոր իշխանութիւնը չհոգայ վաղօրօք վտանգի առաջն առնել: Այսու զեկուցանելով Ձերդ Վեհափառութեան այդ մասին, խոնարհաբար խնդրում եմ նաև ազատ կացուցանել ինձ Հոռոմոսի վանքի վերահսկողութեան պաշտօնից, որովհետև ես ոչնչով չեմ կարող օգնել այդ վանքին:

Թոյլ տուէք մի խնդիրք ևս կցել Անիի վերաբերութեամբ: Գարունն արդէն մօտենում է, կսկսուին ուխտաւորների ու նախնեաց յիշատակներով հետաքրքրուողների այցելութիւնները, բայց վանքս ոչինչ չունի. նշանակուած ցորենադրամից անցեալ տարուանից մնում է 74 րուբլի, խնդրում եմ հաճեցէք կարգադրել տալ ինձ այդ գումարը կամ ցորենը և պատուիրել Հոգևոր Կառավարութեան այսուհետև կանոնաւորապէս տալու վանքին հասանելիքը, որպէսզի ես էլ հիւրերի առաջ սևերես չմնամ:

Անցեալ յունիսից Սինոդը կարճել է իմ հանդերձագինը. վերցնել մի մասը իմ տալիքի փոխարէն՝ այդ իւր իրաւունքն էր, բայց իսպառ զրկուելով հանդերձագնից, ընկել եմ մի դժուարին, համարեայ թէ անելանելի վիճակի մէջ: Իմ հանդերձագնի մեծ մասը դարձեալ ես ծախում էի հիւրերի համար, եթէ չէք կամենայ իմ անունով նշանակել, նշանակեցէք մի բան հիւրերի ընդունելութեան համար: Հակառակ դէպքում շատ դժուարին կլինի ինձ համար կատարել իմ հիւրընկալութեան պարտականութիւնը: Ներեցէք, Վեհափառ Տէ՛ր, համարձակութեանս իմ ցաւերն այսպէս Ձեր հայրական գթութեան առաջ դնելու համար[404]*:*

Հայցելով Ձեր Հայրապետական օրհնութիւնը մնամ խոնարհ ծառայ՝
Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

Մակագրութիւն. *Յանձնում ենք Ս. Էջմիածնի Սինոդին տնօրինել հարկաւորը: 24 փետր. 1910 թ., Ս. Էջմիածին*
Մատթէոս Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

[404] 1910 թ. մարտի 10-ին Սինոդը հետևեալ գրութիւնն է առաքել Միքայէլ վարդապետին. «Իբրև պատասխան Վեհափառ Կաթողիկոսի անունով անցեալ փետրուարի 20-ին Ձեր ներկայացրած յայտարարութեան, Սինոդիս Կառավարչական մասը նախ՝ յայտնւում է Ձերդ Բարձրապատուութեան, թէ Ձեր հրաժարականը Հոռոմոսի վանքի կառավարութիւնից չի ընդունւում, և Դուք պէտք է կատարէք այդ վանքի վանահօր պաշտօնը ժամանակաւորապէս, մինչև առանձին կարգադրութիւն, և երկրորդ՝ հաւաստիանալով Ձեր յայտարարութիւնից, որ Հոռոմոսի վանքը կարիք ունի շուտափոյթ նորոգութեան, առաջադրում է Ձերդ Բարձրապատուութեան շուտով կազմել ճարտարապետ Պ. Թորամանեանի հետ վանքի անհրաժեշտ նորոգութեան համար մանրամասն նախահաշիւ, ժապաւինեալ ծախքը խնայողութեամբ և ներկայացնել Սինոդս» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թթ. 2-3):

№ - 192
ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ՈՒԽՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆ ԱՐՍԷՆ ՔԱՀԱՆԱՅ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻՆ ՃՈՒՐՃՈՒՐԻՍ ԳԻՂՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

թիւ 647 *28 փետրուարի 1910 թ.*
Կարս

Երևանի Հայոց Բարձրապատիւ Տ. Փոխ-Թեմակալին
Կարսի վիճակի Փոխանորդից
Յայտարարութիւն

Դարձնելով Ձեր Բարձրապատուութեան ամսիս 4-ի N 172[405] առաջադրութեան հետ ուղարկած վիճակիս Ճուրճուրիս գիւղի ժամանակաւոր հովիւ գաղթական Արսէն քահանայ Կիրակոսեանի[406] Վեհափառ Հայրապետի անունով տուած խնդիրը, յայտնում ե[մ], որ խնդրատու քահանայի նկարագրածները, ինչպէս երևում է խնդրից, անցել են իւր հայրենիքում՝ Տաճկաստանում, հետևապէս հնարաւորութիւն չկայ ստուգել առաջ բերուած պատճառաբանութիւնները: Իսկ իմ Օլթուոյ գործակալութիւնը այցելածս ժամանակ նկատել եմ, որ յիշեալ քահանան իւր հեզահամբոյր և անշահասէր բնաւորութեամբ գրաւել է բարեպաշտ ժողովրդի սէրը և համակրութիւնը դէպի ինքը, որպիսի հանգամանքը վստահութիւն են տալիս ինձ ենթադրելու, որ խնդրատուի գծագրածները կարող են զուրկ չլինել ճշմարտութիւնից:

Աւելորդ չեմ համարում յայտնել, որ ի նկատի ունենալով ժողովրդի հոգևոր անմխիթար դրութիւնը՝ զիջեցի նրա թախանձանքին և ամսոյս 20-ի N 551 առաջադրութեամբ յանձնարարեցի Ուխտեաց գործակալին թոյլատրել յիշեալ Արսէն քահանային քահանայագործել ցնոր Բարձր տնօրէնութիւնը ազգիս Վեհափառ Հայրապետի:

Փոխանորդ վիճակին՝ Ուխտանէս վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 825, թ. 15 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 193
ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ՈՒԽՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՌԱՖԵԱՆՑԻՆ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻ

Թիւ N 691 *6 մարտի 1910 թ.*
Կարս

Նորին Ս. Օծութեան
Ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Մատթէոսի Երկրորդի
Կարսի Վիճակի Փոխանորդից

[405] Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 825, թ. 16:

[406] Արսէն քահանայ Կիրակոսեան – ծնուել է 1844 թ.: Ստացել է տնային կրթութիւն: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1891 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ.-14):

Ամենախոնարհ Յայտարարութիւն

Վեհափառ Տէ՛ր,

Ինձ հաւատացած վիճակի քահանաները իրենց մտաւոր ու բարոյական վիճակով շատ տխուր պատկեր են ներկայացնում։ Բազմաթիւ քահանաների մէջ միայն երկու քահանայ կայ, որոնք իրենց բարոյական կենցաղով և գործունէութեամբ պատիւ են բերում ամբողջ հոգևոր դասին։ Դրանցից առաւելագոյնն է, ինչպէս այցելածս ժամանակ փորձով տեսայ և Հոգևոր Կառավարութեան գործերից տեղեկացայ, Օլթիի աւանի ծխատէր նոյն և շրջանի գործակալ Վարդան քահանայ Սառաֆեանցը, որը իւր գովանի վարք ու բարքով գրաւել է ո՛չ միայն իւր ծխականների և գործակալութեան մերազգի ժողովրդի, այլ և օտարազգի ամեն դասակարգի սէրը և համակրանքը։

Որպէս գործակալ 1892 թուականից ցարդ վարում է պաշտօնը ըստ ամենայնի հաւատարիմ, արդիւնաւոր և ճշտապահ գործունէութեամբ, յաճախ կրելով նիւթական զրկանքներ, միշտ արժանացել է հոգևոր իշխանութեան գոհունակութեանը։

Արդ՝ կամենալով աւելի ևս քաջալերել նրան իւր շիտակ և օգտաւէտ գործունէութեան մէջ, մանաւանդ որ ներկայիս իւր վատառողջ վիճակում ևս անսալով իմ յորդորներին շարունակում է մնալ գործակալի պաշտօնի մէջ, ուստի սրա հետ ամենախոնարհաբար ներկայացնելով նորա պաշտաման ցուցակը, համարձակւում եմ ամենախոնարհաբար հայցել Ձերդ Ս. Օծութեան բարեհաճութիւնը նրան աւագ քահանայի պատուին արժանացնելու, ի վարձատրութիւն և ի խրախոյս վաստակաւոր քահանային և յուրախութիւն մեր բարեպաշտ ժողովրդոց։

Կարսի վիճակի Փոխանորդ՝ Ուխտանէս վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 819, թ. 10 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 194

ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝

Թիւ 7 *26 մարտի 1910 թ.*

Անի

Ս. էջմիածնի Սրբազան Սինոդին

Անտոյ վանահայր Միխայէլ վարդապետ Տէր-Մինասեանից

Յայտարարութիւն

Ս. Սինոդը սոյն մարտի 8-ի N 567 առաջադրութիւնով պատուիրում է ինձ շուտով կազմել ճարտարապետ Պ. Թորամանեանի հետ Հոռոմոսի վանքի անհրաժեշտ նորոգութեան համար մանրամասն նախահաշիւ և ներկայացնել այն Ս. Սինոդիդ[407]*։ Ձգալով խնդրի կարևորութիւնը շու-*

[407] Տես թիւ 404 ծանօթագրութիւնը:

տափոյթ կարգադրելու առթիւ, Ս. Սինոդիդ պատուիրանի համաձայն առաջարկեցի ճարտարապետ Պ. Թորամանեանին կազմել պահանջուած նախահաշիւը, սակայն նա զբաղուած լինելով իւր գործերով հրաժարուեցաւ աջակցել ինձ նախահաշուի կազմութեան գործում։

Յայտնելով այս մասին, ամենախոնարհաբար խնդրում եմ Ս. Սինոդիդ տնօրէնութիւնը[408]*։*

Վանահայր Անուոյ՝ Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

Մակագրութիւն. *Փութով զեկուցանել։*

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թ. 4, բնագիր, ձեռագիր:

№ - 195
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 3248 *29 ապրիլի 1910 թ.*
Երևան

Ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Սրբոյ Էջմիածնի
Ի Կոնսիստորիայէ վիճակիս Հայոց Երևանայ
Յայտարարութիւն

Ի հետևումն Ս. Սինոդիդ 1906 թ. դեկտեմբերի 8-ի N *2529 հրամանի և 1907 թուի նոյեմբերի 16-ի* N *2518 առաջադրութեան Կոնսիստորիայս շնորհ ունի խոնարհաբար յայտնելու Ս. Ատենիդ, որ Կարսի Հոգևոր Կառավարութիւնը, որին յանձնուած է եղել Յաջորդարանի և եկեղեցական շինութիւնների կառուցման գործերի և փաստաթղթերի զննութիւնը, անցեալ մարտի 20-ին* N *855 յայտարարութեամբ յայտնում է, որ անհնարին բան է այդ հաշիւների զննելը, որովհետև դոքա տարուել են չափազանց անկանոն կերպով, ուստի և Կոնսիստորիայս ներկայ յայտարարութեան հետ յիշեալ շինութիւնների կառուցման վերաբերեալ փաստաթղթերը, մատեանները և գործերը ներկայացնում է ի տնօրէնութիւն Ս. Սինոդիդ։*

Ատենապետ՝ Խորէն վարդապետ Մուրադբէկեան
Անդամներ՝ Յակոբ քահանայ Տէր-Սիմոնեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Ատենադպիր՝ Գ. Սմբատեան

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 513, թ. 1, բնագիր, ձեռագիր:

---

[408] 1910 թ. մարտի 31-ին Սինոդը Միքայէլ վարդապետին ուղարկել է հետևեալ գրութիւնը. «Իբրև պատասխան այս մարտի 26-ի N7 յայտարարութեան Սինոդիս Կառավ. մասն առաջադրում է Ձերդ Բարձրապատուութեան կազմել Հոռոմոսի վանքի նորոգութեան նախահաշիւը Աղէքսանդրապօլցի վարպետ Գէորգ Ղաբզիմալեանի հետ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թ.5):

№ - 196
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 10 *26 մայիսի 1910 թ.*
Անի

Լուսաւորչական Հայոց Սինոդին Ս. Էջմիածնի Անւոյ վանահայր Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանից Յայտարարութիւն

Ս. Սինոդիդ առաջադրութեան համաձայն 31 մարտի ներկայ թուի N 792[409], կազմելով Հոռոմոսի վանքի նորոգութեան նախահաշիւը մասնակցութեամբ Աղէքսանդրապօլցի վարպետ Գէորգ Ղաբզիմալեանի, նոյնպիսին սորա հետ – պարտք եմ համարում ներկայացնելու Ս. Սինոդիդ տեսութեան և տնօրէնութեան, աւելացնելով, որ գլխաւոր անհրաժեշտութիւն է ներկայանում այժմէն տաճարի ս. նշխարատան նորոգութիւնը, իսկ մնացեալ սենեակների և վանահօր բնակարանի շինութիւնը կարելի է առ այժմ թողնել յարմարագէպ ժամանակի, երբ հնարաւոր կլինի վանքի նիւթականի կողմից, սկսել յիշեալ սենեակների նորոգութիւնը։

Վանահայր Անւոյ՝
Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

Մակագրութիւն. *Փութով զեկուցանել։*

Հոռոմոսի վանքի նորոգութեան նախահաշիւը, կազմուած Ս. Էջմիածնի Ս. Սինոդի N 792, 31 մարտի 1910 թ. առաջադրութեան, Անւոյ վանահայր Տէր Միքայէլ վարդապետի անունով

N/N		Րուբլի
1.	Վանքի հիւսիս-արևելեան և հարաւ-արևելեան կողմի անկիւնների քանդուած պատերի 23 քառակ. սաժէն, մի սաժէնի գինը հաշուելով բոլոր նիւթեղէններով 32 րուբլի	736
2.	Հիւսիս-արևմտեան անկիւնների փլած պատերի նորոգելուն 11 քառակ. սաժէն, իւրաքանչիւր սաժէնը 32 ր. - ամենն	352
3.	Գաւթի միջի սիւների պատուանդանների փոխելուն, նոր քարով և ցեմենտով լցնելուն, արժէն	80
4.	Վանքի և գաւթի տանիքների սալերն ամրապինդ շինելուն, կառնիզների[410] պակասը նոր քարերով նորոգելուն, և տանիքի վրայ մնացած հին սալերի արանքները մաքրելուն և ցեմենտով ամուր շինելու համար	250

[409] Տես թիւ 408 ծանօթագրութիւնը:

[410] Կառնիզներ (карнизы) – քիւեր:

5.	Վանքին կից եկեղեցու և կաթուղիկէի տանիքի սալերը, կառնիզները, բոլորը նոր քարից շինելու, ցեմենտով լցնելու համար	200
	Գումար	1618

Վանահայր Անուշ՝ Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց
Վարպետ՝ Գէորգ Ղաբզիմալեանց

Խորհրդարանի և նշխարատան նորոգութեան նախահաշիւը

N/N		Րուբլի
1.	Հիւսիսային փլած պատի երեք քառակուսի սաժէն, իւրաքանչիւր սաժէնը 32 րուբլի հաշուելով	96
2.	Գաւթի արևելեան կողմի պատի անկիւնը երեք քառակուսի սաժէն	96
3.	Գաւթի հիւսիսային փլած պատի տարած. 26 քառակուսի սաժէն	832
4.	Արևմտեան անկեան պատը 10 քառակուսի սաժէն	320
5.	Բակի մէջ երկու դռների նորոգութեան չորս քառակուսի սաժէն	128
6.	Բակի արևելեան կողմի անկեան չորս քառակուսի սաժէն	128
7.	Բակի արևմտեան կողմի անկեան պատի չորս քառակ. սաժէն	128
8.	Հարաւային կողմի ամբողջ պատի նորոգելու 24 քառակուսի սաժէն	768
9.	Հիւսիսային պատի – 10 քառակուսի սաժէնին	320
10.	Երկու անկիւնների թօլերը շինելուն չորս քառակուսի սաժէն	128
11.	Նշխարատան միջի 10 սների բոլոր պատուանդանները նոր քարից շինելու և ցեմենտով ամրացնելու համար, ամեն մի սեանը 10 րուբլով	100
	Գումար	3044

Վանահայր Անուշ՝ Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց
Վարպետ՝ Գէորգ Ղաբզիմալեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թթ. 7, 8-9, բնագիր, ձեռագիր:

№ - 197
ԿԱՐՍԻ ՎԵՐԱԲՆԱԿԻՉ ԲԱՂԴԱՍԱՐ ՋԱՏԻԿԵԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԻԲՐԵԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԿԱՐՍ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎՐԱՅ ԾԱԽՍԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՏ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

7 յունիսի 1910 թ.
Կարս

Նորին Ս. Օծութեան Աստուածարեալ Հայրապետի և Պատրիարք-Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Մատթեոս Բ.-ի
Կարս քաղաքում վերաբնակվող Բաղդասար Ջատիկեանից
Ամենախոնարհ խնդիր

1892-98 թուականների ընթացքում կարս քաղաքի եկեղեցական շինութիւնների վերայ Հոգաբարձութեան անդամ լինելով իմ միջոց-

ներից ծախսեցի այդ շինութեան վերայ 3630 րուբլու չափ դրամ, որից եղիշէ վարդապետի յաջորդութեան օրօք ստացել եմ 1374 րուբլի, ցարդ մնում է ստանալու 2256 րուբլի, որոց համար ունիմ օրինաւոր փաստաթղթեր։

Եկեղեցական կալւածների գրաւման ժամանակ և յետ ստանալուց յետոյ կարող էի օրինական ճանապարհով և հեշտութեամբ վերջ տալ այդ հաշիւներին և ստանալ իմ արդար իրաւունքը, բայց տեղիս յաջորդները և պատուելի հոգաբարձուները զանազան խոստումներով արգելք եղան և թոյլ չտուին այդ միջոցներին դիմելու։ Իսկ թէ որքան դիմումներ եմ արել հանգուցեալ Վեհափառ Հայրապետին և Ս. Սինոդին այդ հաշիւները մաքրելու և ինձ բաւարարութիւն տալու համար, թէ որքան զրկանքներ եմ կրել այդ առթիւ և պարտուց տակ ճնշուել, աւելորդ եմ համարում նորից մանրամասն կրկնելու, միայն այսքանը կասեմ, որ չնայելով հանգուցեալ Հայրապետի արած կարգադրութեանց և Ս. Սինոդի հրամաններին, տեղիս Գեր. յաջորդները և պատուարժան հոգաբարձուները, ոչ միայն անտես են արել այդ Բարձրագոյն հրամանները և կարգադրութիւնները, այլև մինչև օրս ոչ մի կարգադրութիւն չեն արել իմ հաշիւներս գննելու և ինձ գոնէ մի գրաւոր ապահովութիւն տալու համար։

Ի նկատի ունենալով այս անխիղճ ու ապօրինի վերաբերմունքը դէպի իմ համեստ և օրինական պահանջը, համարձակւում եմ դիմել առ ոտս Աստուածարեալ Հայրապետիդ ու արդարութիւն և իրաւունք հայցել, որով միջոց տուած պիտի լինիք նուաստիս ազատուելու նիւթական նեղ պայմաններից և ըստ առաջնոյն օգտակար լինելու մերս Ս. եկեղեցւոյն և ազգիս պիտանի հիմնարկութեանց։

Տողերս գրում եմ ծանր հիւանդութեան գուցէ և մահուան մահճից՝ յուսով, որ Ձերդ Օծութիւնը չի մերժիլ վերցնելու իմ որբերին իր Ս. Աջի տակ։

Ձերմագին համբոյր մատուցանելով Աստուածարեալ Վեհիդ Ս. Աջոյն մնամ ամենախոնարհ որդի և ծառայ

Բաղդասար Ջատիկեան

Մակագրութիւն. *Յանձնում ենք Ս. Էջմիածնի Ս. Սինոդին ի տնօրէնութիւն։*

Մատթէոս Բ. Կաթուղիկոս Ամենայն Հայոց. 13 յունիսի 1910 թ.,
Ս. Էջմիածին

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 513, թթ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 198
ԱՆԻԻՍ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱՏԹԷՈՍ Բ.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՎԱՆԱՀԱՅՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒԵԼՈՒ ԵՒ ԴՐԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5 յուլիսի 1910 թ.
Կարս

Նորին Ս. Օծութեան Աստուածարեալ Հայրապետի և Պատրիարք-
Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Մատթէոս Բ.-ի
Անուշ վանահայր Միքայէլ վարդապետից
Ամենախոնարհ խնդիր

Տասն տարուց աւելի է, որ ստանձնել եմ Անուշ աւիրակաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքի վանահայրութեան պաշտօնը և ըստ չափու կարեաց իմոց և հասկացողութեան կատարել եմ այդ պարտականութիւնը, աշխատելով որքան կարելի է պէտք գալ մեր նախնեաց սրբազան յիշատակներին բազմաթիւ հայ և օտար այցելուներին, սակայն տարիների ընթացքում շնորհիւ Կայսերական Հնագիտական Ճեմարանի անդամ պրոֆեսոր Մարրի պեղումների, Անուշ նշանակութիւնը այնքան բարձրացաւ գիտական տեսակէտով, և այնքան բարձրաստիճան ու գիտնական այցելուներ գրաւեց, որոց առաջ արդարև զգում եմ իմ տկարութիւնը և ամօթ համարում այդ գիտական աշխարհի և ամբողջ հայութեան զգացմունքի կենդրոնացած վայրում իբրև ներկայացուցիչ հայ հոգևորականութեան հանդիսանալ և վարել իմ վանահայրութեան պատասխանատու պաշտօնը։ Ուստի և անհրաժեշտ եմ գտնում դիմել առ այս Աստուածարեալ Վեհիդ և աղերսել, որ ինձ հրաժարեցնէք այդ պաշտօնից նշանակելով մի գիտնական և լեզուագէտ հոգևորականի, իսկ նուաստիս ազատելով որևէ պատասխանատուութիւնից, թողնել լոկ միաբանի դերի մէջ, կամ Ղօշավանքի վանահայրութեան պաշտօնում, որը ժամանակաւորապէս յանձնուած էր ինձ, և կամ ուր որ կբարեհաճի Օծեալ Վեհիդ սուրբ կամքը, որ և մնամ ընդմիշտ ամենախոնարհ որդի և ծառայ՝

Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

Մակագրութիւն. *Կարգումն վանահարց և փոխանորդաց առայժմ թողնել անհետևանք։*

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1708, թ. 2 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 199
ԿԱՂԶՈՒԱՆԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ՝ ՄԵՍՐՈՎԲ ՂԱԶԱՐԵԱՆՑԻՆ ԵՒ ԱՒԵՏԻՍ ՏԷՐ ՆԵՐՍԻՍԵԱՆԻՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 յուլիսի 1910 թ.
Կաղզուան

Համախօսական թերթ

1910 թուի յուլիսի 25-ին մենք՝ Կաղզուանի հայ հասարակութիւնս, ի նկատի ունենալով. 1. որ մի քահանայ անկարող է 800 տուն բնակիչ ունեցող ծխականներիս հովուել, մանաւանդ որ այդ մի քահանան բացի իր անմիջական պարտականութիւնները կատարելուց ծանրաբեռնուած է նաև տեղիս ռուսաց երեք դպրոցներում ունեցած դասերով, 2. ի նկատի ունենալով՝ որ անցեալներում 4 ծխատէր քահանաներ են հովուել տեղումս, իսկ այժմ միմիայն մէկ քահանայ է մնացել, ուստի անհրաժեշտ կարիք զգալով գէթ երկու նոր քահանայի ևս, այդ առթիւ ունեցանք մի քանի ծխական ժողովներ արժանաւոր թեկնածուներ ընտրելու համար. և այդ ժողովներում ամեն անգամ՝ աչքի առաջ ունենալով մեր համադրացի Պ. Պ. Մեսրովբ Ղազարեանցի և Աւետիս Տէր-Ներսիսեանի մտաւոր և բարոյական արժանիքները, որոնցից առաջինը աւարտելով 1884 թուին տեղիս ծխական դպրոցի դասընթացը և 1890 թուին մտնելով ուսուցչական կազմի ցանկի մէջ, վարել է տեղիս դպրոցում 14 տարի ուսուցչական պաշտօն, իսկ երկրորդը աւարտելով 1897 թուին Ներսիսեան դպրանոցի դասընթացը, ուսուցչութեան պաշտօն է վարել զանազան տեղերում 10 տարի, և հասարակութիւնս բուռն ցանկութեամբ աշխատում էր համաձայնութիւն ստանալ նրանցից, որ և աջողուեց ներկայ թուիս յունիսի 25-ին կայացած չորրորդ և վերջին ժողովում: Այժմ հասարակութիւնս կառավարութեան վճարելիք, նրանց հարկը իր վրայ առնելով խոնարհաբար խնդրում է Հոգևոր Բարձր իշխանութիւնից, որ հնարաւորութիւն եղածի չափ շուտափոյթ նրանց արժանացնէ քահանայական կոչման, որով ազատած կլինի ժողովրդիս ներկայ հոգևոր անմխիթար վիճակից[411]:

Արսէն Խաչատրեան
Դաւիթ Ներսէսեանց
Խաչատուր Սարգսեանց[412]

---

411 1912 թ. նոյեմբերի 2-ին Սինոդը կայացրել է հետևեալ որոշումը. «Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աւետիս Տէր-Ներսիսեանին և յանձնարարել փոխ-թեմականին ձեռնադրել նորան քահանայ Կաղզուան աւանի համար» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 756, թ. 14):

412 Հետևում է ևս 499 ստորագրութիւն:

Այս համախօսականի օրինաւոր կազմուելու մասին Հոգաբարձութիւնս իր սեփական ստորագրութեամբ և դպրոցական կնքով վաւերացնում է.

Նախագահ Հոգաբարձութեան՝ Ա. Քանանեան
Անդամներ՝ Տիգրան Ղանթարճեան
Գէորգ Ստեփանեան
Մնացական Նահապետեան[413]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 756, թթ. 6-10 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 200
ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԵՒ ԱՆԻԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՅ ՄԱՍԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

19 օգոստոսի 1910 թ.
Ս. Էջմիածին

Նորին Սրբութեան Տ. Տ. Մատթէոս Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Յայտարարութիւն

Ջերդ Սրբութեան թոյլտուութեամբ Անի գնալով՝ յանձնարարութիւն ունէի բերանացի նաև Ս. Սինոդի կողմից տեսնել Հոռոմոսի վանքը և տեղեկութիւն յայտնել նորոգելիք տեղերի մասին: Այսու որդիական պարտաւորութիւն եմ համարում Ջերդ Հայրապետական բարձր ուշադրութիւնը հայցել իւր պատմական անցեալով և ճարտարապետութեամբ հռչակաւոր վանքի վերայ, որին կործանման վտանգ է սպառնում, եթէ անմիջական նորոգութիւններ չկատարուին:

Արևելեան կողմից, որ միևնոյն ժամանակ վանքի պարսպի մասն է կազմում կործանման մօտ է «Հարսնատուն» կոչուած աւերակի պատը: Հին ժամանակներում ևս նորոգուած է այդ մասը պատի քանդուած ճեղքերից երևում են արձանագրութեանց և խաչքարերի մնացորդներ: Այդ եկեղեցին կրկնայարկ է եղել և ծառայել է, հաւանօրէն, որպէս դամբարան, բայց այժմ ի սպառ կործանուած է և մնացել է միայն արևելեան քայքայուած և կործանուած վերին յարկի կաթուղիկէի մի մասով: Հնութիւնից, ուրեմն, ոչինչ չէ մնացել, բացի մի քանի խաչերն ու խաչքարերը, և դժուար կլինի նորոգել ներքին պատը և պահել փոքրիկ գմբէթի մնացորդը, որ այլևս իբրև հնութիւն արժէք չունի: Այս «Հարսնատունը» կպած է տաճարի արևելեան պատի հիւսիսային ծայրին:

[413] Փաստաթուղթը կնքուած է Կաղզուանի եկեղեցական հոգաբարձութեան կնիքով:

Տաճարի արևելեան պատին հարաւային կողմից ևս վտանգ է սպառնում. թափուած են պարսպի քարերը մի քանի արշին տարածութեամբ և այսօր վաղը մնացած մասն էլ կթափուի, խախտելով և տաճարի պատը։

Բուն տաճարը ամբողջ է և անվնաս, բացի կտուրի փչացած և կոտրած սալերից, որ պէտք է փոխել կամ ամրացնել։ Բայց նորա գաւիթը, Բագրատունեաց շրջանի վերջին հրաշալիքներից մէկը իւր առաստաղի քանդակներով և զարդերով, վտանգուած է մեծ չափով արևմտեան կողմից։ Ոչ միայն մասամբ թափուած են կամ խախտուած այդ պատի սրբատաշ քարերը, այլ և շաղախը, այնպէս որ լոյսը թափանցում է պատի միջով։ Տաճարի հարաւային կողմից ոչ շատ վաղ ժամանակներում անճաշակ մի նորոգութիւն է կատարուած, այդ մասի քարերն արդէն խախտուած. նորոգութեան ժամանակ պէտք է փոխել և ամրացնել նաև այդ մասը։

Բայց առանձին ուշադրութեան արժանի է «Նշխարատուն» կոչուած սիւնազարդ մեծ շէնքը, որ իշխանական դամբարան է եղել, իսկ այժմ կտուրն ու պատերը տեղ տեղ թափած, սիւների խարսխները փշրուած և ամբողջական կործանման վտանգ է սպառնում։ Այս բոլորը կարելի կլինի մօտաւորապէս 3500 րուբլով նորոգել, իսկ տաճարին կից մասերը, գաւիթն ու կտուրները մօտաւորապէս 1200-1500 րուբլով։

Հոգևոր Տէ՛ր, թոյլ տուէք երկու խօսք ևս Անիի Լուսաւորչի նկարազարդ եկեղեցու մասին ասել. այդ եկեղեցին մեր միակ սեպհականութիւնն է Անիում և այստեղ է կատարւում այժմ ժամերգութիւնը։ Շէնքը անվնաս է բացառութեամբ գմբէթի և կտուրի, որի սալերն են միայն թափած։ Այդ եկեղեցին միակն է, որ ամբողջապէս ծածկուած է որմնանկարչութեամբ՝ Ս. Գրքի և Լուսաւորչի պատմութեան տեսարաններով։ Անձրևի ջուրն այժմ անցնում է գմբէթի միջով և սպառնում է փչացնել իւր տեսակի մէջ միակ այդ յիշատակարանը։

Որդիական ակնածութեամբ մատչելով ի համբոյր Հայրապետական աջոյդ

Նուաստ Գարեգին վարդապետ Յովսէփեան
Միաբան Ս. Էջմիածնի

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 170, թ. 24 և շրջ., ինքնագիր։

№ - 201
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲԱՅՐԱԽՏԱՐ ԳԻՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԻՉ ՏԱՃԱՏ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԻՐԵՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հոկտեմբերի 1910 թ.

Նորին Վեհութեան Տ. Տ. Մատթէոս Բ. Սրբազնագոյն Կաթուղիկոսին
Ամենայն Հայոց
Կարսի շրջանի Շիրակայ Մասի Բայրախտար գիւղի վերաբնակիչ
Տաճատ Բահանայ Տէր-Աբրահամեանից
Խոնարհ խնդիր

Ականատես լինելով մինչև 1894 թուականների բոլոր այն աւերածութիւններին, որոնք տեղի ունեցան Տաճկահայաստանում և դժբախտացրին բազմաթիւ ընտանիքներ, սրի ու կոտորածի բաժին դարձնելով, երբ այդ աւերածութիւնների ժամանակ անպատուութեան մատնուեցան ամեն սրբութիւն ու նուիրական բան, ահա այդ նոյն թուին դժբախտս էլ անճարացած վերցրի բազմանդամ ընտանիքս ու ձեռս առնելով ճանապարհորդական ցուպը, դիմեցի դէպի մեր բիւրաւոր ցաւերը ամոքող Ռուսաստանը բախտ որոնելու։

Սակայն յայտնի է Ձերդ Վեհութեան այդ շրջանի հայ ընտանիքի նիւթական դրութիւնը։ Երեխաներս ճանապարհին սովից չկոտորելու պատճառով ծախեցի մի ձեռք տունս ու հողերս և եկայ մի կերպ հասայ Ռուսաստան, հայրենի երկրի աւիրածների տառապանքը դրօշմած կրծքիս։ 17 տարի է ինչ քահանայութիւն եմ անում Ռուսաստանում՝ Շիրակի գիւղերում, տարին մի գիւղ տեղափոխուելով հազիւ ճարում եմ 15 հոգուց բաղկացած բազմանդամ ընտանիքիս օրական պարէնը։ Ձերդ Վեհութիւնը հրամայել է որպէս Տաճկահպատակ քահանայի վերադառնալ հայրենիք, դրա հետ Ձերդ Վեհութեան հրամանը ի կատար ածելու համար, Կարսի Հոգևոր կառավարութիւնը արգելում է ինձ քահանայութիւն անել և զրկում բազմանդամ ընտանիքիս ապրելու միակ հնարաւորութիւնից։ Սակայն կայ և մի կարևոր հանգամանք. տղաներս 17 տարուայ ընթացքում ամուսնացել են տեղացի օրիորդների հետ, նրանք չեն համաձայնւում գալ ինձ հետ, իսկ ես առանց նրանց չեմ կարող գնալ, որդկերանցիցս բաժանուելը չափազանց կյուզէ առանց այն էլ վշտացած սիրտս։ Վերջապէս 1902 թուից արդէն ես ընդունել եմ ռուսահպատակութիւնը և եթէ վերադառնամ էլ Տաճկաստանում պիտի ապրեմ որպէս գաղթական, քանի որ ոչինչ չունեմ։ Պարզելով Ձերդ Վեհութեան անելանելի դրութիւնս, խոնարհաբար խնդրում եմ թոյլատրէք ինձ Ռուսաստանի գիւղերում քահա-

նայութիւն անելու և պատճառ չդառնաք սիրեցեալ ընտանիքիս բաժանման։

Բայրախտար գիւղի ժամանակաւոր ծխատէր քահանայ՝
Տաճատ քահանայ Տ. Աբրահամեանց

Մակագրութիւն. *Պատուիրում ենք Երևանի Հայոց Փոխ-Թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին քննել սոյն խնդիրը և յայտնել իւր կարծիքը։ 7 նոյեմբ. 1910 թ.։ Մատթէոս Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց*[414]։

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 825, թ. 6 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 202
ԿԱՐՍԻ «ՉԱՄՐԼԻ ԴԱՐԱ» ԹԱՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՄԱՏԹԷՈՍ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆԻՆ ՀՈՎՈՒԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

29 նոյեմբերի 1910 թ.
Կարս

Նորին Ս. Օծութեան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին Կարսի «Չամրլի դարա» թաղի հասարակութիւնից Ամենախոնարհ խնդիր

1895 և 1896 թուերի կոտորածներից փախչելով, բնակութիւն հաստատեցինք Կարսի գիւղերում, որտեղից տեղական ժողովրդի խնդրանօք հողի սղութեան պատճառով, Տէրութիւնը մեզ ստիպեց 1905 թուին գիւղերից դուրս գալ և դառնալ Տաճկաստան կամ գրուել ռուսահպատակ։ Եւ որովհետև կոտորածների ուրուականը մեր աչքից չէր հեռանում, գրուեցինք կարսեցի և վերոյիշեալ 1905 թուից մինչև այսօր Կարսի «Չամրլի դարա» կոչուած տեղում մեր ճակատի քրտինքով տներ շինեցինք, որը հիմայ իւր մեծութեամբ չետ չի մնում միւս գիւղերից։ Մեր այս բնակութեան տեղը քաղաքի կեդրոնից և եկեղեցիներից 1 ½ - 2 վերստի վերայ գտնուելով, մտածեցինք որ անհրաժեշտ է մեզ ունենալ սեփական քահանայ մեր հոգևոր պէտքերը հոգալու «Թազա մալեա» կոչուած թաղը, ճիշտ է, ունէր 2 քահանաներ Դիոնիսիոս քահ. Տ. Մինասեան և Առաքել քահ. Տ. Առաքելեան, բայց նրանք որպէս կարգալոյծ եղածներ Վեհիդ հրամանով հեռացուեցին

---

414 1910 թ. դեկտեմբերի 11-ին Երևանի փոխթեմակալը հետևեալ գրութիւնն է յղել Կարսի Հոգևոր կառավարութեանը. ‹‹Առաջարկում եմ Հոգևոր կառավարութեանդ աչքի առաջ ունենալ որ Աքսի-Ղազի գիւղի Տէր Դաւիթ և Բայրախտարի Տէր Տաճատ քահանաները մեծ ժամանակ են կարգուած իրենց տեղերում, նրանց անմիջական Հոգևոր իշխանութիւնը պահանջում է նրանց և մանաւանդ Վեհափառ Հայրապետի համապատասխան կոնդակին միանգամայն հակառակ է նրանց Ռուսիոյ սահմաններում պաշտօնավարութիւնը, անմիջապէս կարգադրել, որ նոքա փոխադրուեն իրենց տեղերը, իսկ նրանց թափուր տեղերը յանձնել տեղական քահանաներին մինչև այդ գիւղերի յատուկ քահանայ ունենալը›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 825, թ. 2):

Տաճկաստան[415]: Օրինակատարութիւն պատահելիս ստիպուած ենք ոտով ահագին տարածութիւն կտրել, որ քահանայ հրաւիրենք քաղաքից, բայց այդ ինտիլիգենտ քահանաները չեն կարող գալ մեր հոգևոր պէտքերը հոգալու. նախ որ առանց այն էլ նրանք քաղաքում շատ ծուխ և պաշտօններ ունենալով, հազիւ են իրանց գործերը կատարում և մէկ էլ որ մենք՝ քեասիբներս, չենք կարող նրանց համար կառք վարձել: Մանաւանդ, ձմեռ ժամանակ նրանք չեն համաձայնուի 3-4 վերստ սայլով ննջեցեալ տանել գերեզմանատուն:

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալ հանգամանքները, Վեհափառ Տէ՛ր, մենք, որպէս ազատամիտ եկեղեցու զաւակներ, մեզ հովիւ ընտրեցինք մեր հայրենակից Բարսեղ ք[ահանայ] Տ. Բարսեղեանին, որը մեզ մի մասին հովուել է Բերնա և Դօլբանդլի գիւղերում և որը արդէն ռուսահպատակ է գրուած քանի տարիներից ի վեր: Նրան ընտրեցինք աչքի առաջ ունենալով հետևեալ հանգամանքները.

1) Յիշեալ քահանան Տաճկաստանից գաղթելուց յետոյ, նրա հայրենի կարնոյ Վիճակի Արշունի գիւղի վրայ արդէն երկու քահանայ են ձեռնադրել, որոնցից վերջինը, Խաչատուր Անտօնեան Պապոյեանցը 8 ամիս հազիւ կայ ձեռնադրուել է, հետևապէս հայրենի գիւղը նրան այլևս կարիք չունի:

2) Տաճկաստանում ոչինչ չունի, ունի 4 որդիք իրանց ընտանիքներով, որոնք մեզ հետ տուն են շինել և ապրում են մեր թաղում:

3) Յիշեալ քահանան յայտնի է իւր ճշտապահութեամբ և անշահասիրութեամբ, որ մեզ պէս աղքատ հասարակութեան համար ձեռնտու է:

Յայտնելով այս բոլորի մասին, Վեհափառ Տէ՛ր, երեսանկեալ կաղաչեմք հրամայէք մեր ասածները ստուգելուց յետոյ, կարգել յիշեալ Բարսեղ ք[ահանայ] Տ. Բարսեղեանին հովիւ մեզ վերայ և միաբան կարսի Ս. Նշան եկեղեցու, աւելացնելով որ այս մասին խնդիր ենք տուել և Երևանի Փոխան-թեմակալին: 1910 թուի նոյեմբերի 29, Կարս:

Աղաբաբ Սարգիսով

Արամ Օվանէսով, Ակոբ Պալասանեանց[416]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 167, թթ. 106-107, բնագիր, ձեռագիր:

---

415 Քահանաների մասին «Արարատ»-ը գրում է. «Յուլիսի 22-ին Սինոդը լսեց Երևանի շրջանական դատարանի Պրօկուրօրի գրութիւնը յունիսի 8-ից N 306, որի հետ ուղարկելով Թիֆլիսի դատաստանական պալատի վճիռը 1904 թուի սեպտեմբերի 21-ից, խնդրում է Սինոդի տնօրինութեանը երկու ամսուայ ընթացքում կարգալոյծ անելու Կարս քաղաքի երկու քահանաներին՝ Տէր Առաքել Տէր- Առաքելեանցին և Տէր Դիոնիսիոս Տէր-Մինասեանցին, որոնք զրկուած են մի քանի իրաւունքներից և դատապարտուած միամեայ բանտարկութեան: Դատաստանական պալատի վճռից երևում է, որ յիշեալ քահանաներն այլոց հետ միասին մեղադրուած և դատապարտուած են պատժական օրինաց 263 դ. յօդուածի համաձայն: Հրամայեցին ուղարկելով վճռի պատճէնը, պատուիրել Երևանի վիճակային Կոնսիստորիային կարգալոյծ անել յիշեալ երկու քահանաներին և տեղեկութիւն տալ Սինոդին» («Արարատ», յուլիս-օգոստոս, 1905, էջ 593): Տես նաև թիւ 222 փաստաթուղթը:

416 Հետևում է ևս 98 անձի ստորագրութիւն:

№ - 203
ԱՆԻԻ ԵՒ ՂՕՇԱՎԱՆՔԻ ՎԱՆՔԵՐԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՀՈՌՈՄՈՍԻ (ՂՕՇԱՎԱՆՔ) ՎԱՆՔԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

8 դեկտեմբերի 1910 թ.
Կարս

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեանը[417]
Անւոյ և Ղօշավանքի վանահայր Միքայել վարդապետ Տէր-Մինասեանին

Յայտարարութիւն

Պարտականութիւն կը համարեմ իբրև մերձաւոր իշխանութեան Ատենիդ յայտնել ինչպէս, որ Ազգիս Վեհափառ Հայրապետին Ս. Սինոդին ևս յայտնել եմ և հրաւիրել լուրջ ուշադրութիւնն մեր նախնեաց ամենապանծալի յիշատակներից մէկի – Ղօշավանքի ներկայ դրութեան մասին, որ մատնուած է իսպառ քայքայուելու վիճակի։

Ճիշտ մօտ երկու տարի է, որ այդ վանքի վանահայրութեան պաշտօնը ժամանակաւորապէս յանձնել են ինձ, բայց ես ոչ մի հնարաւորութիւն չունեմ այդ սրբավայրի վերայ իմ պարտքս կատարել, որովհետև իմ նիւթական վիճակս Ձեզ յայտնի է, իսկ այդ պաշտօնի համար ոչ ռոճիկ է տրւում ինձ, և ոչ էլ հնարաւորութիւն օգտուելու դորան յատկացուած տասն և հինգ դեսեատին հողից, որը շնորհիւ իշխանութեան և նախկին վանահայրերի դատապարտելի անհոգութեան մնացել է կապալառուների ձեռքին և նորանց օգտին շահագործուել։

Այս ամենը յայտնի են Ս. Սինոդին, որի կարգադրութեամբ Գարեգին վարդապետը եկել և անձամբ ստուգել է այդ վանքի վիճակը, բայց և այնպէս Ատենիդ վերայ ևս պարտականութիւն կայ լուրջ ուշադրութիւն դարձնելու և միջնորդելու Հոգևոր Բարձր իշխանութեան առաջ այդ սրբավայրի վիճակը ըստ կարելւոյն բարեփոխելու և ազգի ու եկեղեցւոյ առաջ անդատապարտ մնալու։

Որպէս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ամենայետին պաշտօնեայ և անարժան մի վարդապետ, պարտականութիւն ունեմ այս ամենի մասին յայտարարելու և ինձ ազատելու ապագայում որևէ պատասխանատուութիւնից, և քաղցր է ինձ յուսալ, որ իմ այս համեստ յայտարարութիւնը անհետևանք չպիտի մնայ։

Անւոյ և Ղօշավանքի վանքերի վանահայր՝
Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թ, 16 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

[417] 1910 թ. դեկտեմբերի 27-ին Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիան Միքայէլ վարդապետի զեկուցագիրը ներկայացրել է Սինոդին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10987, թ. 15):

№ - 204
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՔԵՐՍ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆՑԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

11 դեկտեմբերի 1910 թ.
Քերս

Արձանագրութիւն

Կաղզուան գաւառի Քերս գիւղի համայնքս ծխական ժողով կազմելով նախագահութեամբ երեցփոխ Թադէոս Պետրոսեանի՝ թախանձագին խնդրեցինք մեր համադրացի Սարգիս քահանայ Տ. Գէորգեանցին, որ նա՝ ստանալով հրաման մեր թեմի Գերապատիւ Առաջնորդ Խորէն եպիսկոպոս Մուրատբէկեանին և արտասուագին աղաչելու, որ մեր նորընծային թոյլատրէ քահանայագործելու համար, որ մինչև այժմս չունէր ուսման վկայագիր և Հոգևոր իշխանութեան հրամանաւ դադար ածէր քահանայագործութիւնից, պատրաստուելով քննութիւն տալով ձեռք է բերել թեմական դպրանոցի երկրորդ դասարանի վկայականը։

Իսկ ժողովը աչքի առաջ ունեցաւ, որ մեր գիւղը տասը տարուց աւելի է, որ կառավարւում էին երթևեկ քահանաների ձեռամբ, ներկայ ժամանակում երթևեկ քահանաները գնալով Տաճկաստան իրանց Հայրենիքը, գիւղը մնացել է առանց քահանայի։ Այժմ աղերսում ենք և խնդրում ենք մեր թեմի Սրբազան Հօրը, որ աչքի առաջ ունենայ, որ մօտակայ[418] և այս արձանագրութեան հետ ներկայացնելով վերոյիշեալ Սարգիս քահանայ Տէր-Գէորգեանի ուսման վկայականը շուտափոյթ իրաւունք տալ քահանայագործելու, որով մեզ իննսունուհինգ տանից բաղկացած, չմնանք առանց Հոգևոր մխիթարութեան։

Համայնքս շատ լաւ ճանաչելով յիշեալ քահանայի ազնիւ բարքուվարքը, նա թէև ուզում էր միանգամայն թողնել հոգևոր կոչումը աչքի առաջ ունենալով Վեհի հրամանը, իր մտաւորապէս անպատրաստ լինելը, սակայն համայնքիս կրկին թախանձանքն ու խրախուսանքը նրան բարոյապէս ստիպեց պատրաստուել, որ և նա իր երկրագործական շատ կարևոր անասուններն և սերմացու գարի, ցորենը ծախելով պատրաստուեց ու ստացաւ այդ արտօնութիւնը - վկայականը, ուստի մեր միահամուռ ցանկութիւնն է, որ նա՝ այդքան նիւթական ու բարոյական զրկանքներ կրելուց վերջը, հասած լինի իր նպատակին, որով և մենք՝ ամբողջ համայնքս, հոգեպէս մխիթարուած կլինենք։

Նախագահ ժողովի երեցփոխան՝
Թադէոս Պետրոսեան
1. Յարոյ Ակոբեան

418 Փաստաթղթում այսպէս է։

2. Մատոյ Ակոբեան
3. Արոյ Ղազարեան[419]
Վաւերացնում եմ Քերս գիւղի Տանուտէր՝ Գրիգոր Հայրապետեան
Ս. Աստուածածին եկեղեցւոյ երեցփոխ՝ Թադէոս Պետրոսեան[420]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 828, թթ. 38-39, բնագիր, ձեռագիր:

№ - 205
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՔՈՒԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝

Թիւ 3773 *13 դեկտեմբերի 1910 թ.*
Կարս

Բագուի Հայոց եկեղեցիների գործակալ Բարձրապատիւ
Տ. Զաւէն վարդապետին

Համաձայն Ձեր 1910 թ. հոկտ. 31-ի N 1279 գրութեան, Հոգևոր Կառավարութիւնս պարտք է համարում սրա հետ ուղարկել վիճակիս գիւղերի և քահանաների անունների ցանկը, իրանց հասցէներով:
Անդամ Կառավարութեան՝ Կորիւն քահանայ Քոթանջեան
Կ. պ. քարտուղարի՝ Գ. Է.

Անուանական ցանկ
քահանաների և գիւղերի Երևանի թեմի Կարսի վիճակի

N/N	Անուն և ազգանուն	Ո՞րտեղ է ապրում	Փոստային հասցէ
1	Մինաս աւագ քահանայ Տէր Պետրոսեան	Կարս	Карс, Армянскому Духовному Правлению
2	Կորիւն քահանայ Քոթանջեան	Կարս	
3	Խորէն քահանայ Ստամբօլցեան	Կարս	
4	Համազասպ քահանայ Ղարագէօզեան	Կարս	
5	Վաղինակ քահանայ Ֆրոյեան[421]	Կարս	

419 Հետևում է ևս 92 անձի ստորագրութիւն:

420 Փաստաթուղթը կնքուած է տանուտիրոջ և երեսփոխանի կնիքներով:

421 Վաղինակ քահանայ Ֆրոյեան – ծնուել է 1858 թ. (ըստ մէկ այլ աղբիւրի՝ 1861-ին, ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14): Կրթութիւնը ստացել է Կարինի ազգային վարժարանում և ապա՝ Կ. Պոլսում: 1894-ին Կարինում ձեռնադրուել է քահանայ: 1879-1899 թթ. զբաղուել է ուսուցչութեամբ Կարինում, Տրապիզոնում և Կ.Պոլսում: 1897-ից քահանայագործել է Կարսում: 1897 թ. փետրուարի 10-ին Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակով պարգևատրուել է քահանայական լանջախաչով և ծաղկեայ փիլոնով (ՀԱԱ, ֆ. 47, ց. 1,

6	Արսէն քահանայ Տէր Գրիգորեան	Կարս	Карс, Армянскому Духовному Правлению
7	Մեսրովբ քահանայ Գրիգորեան	Կարս	
8	Յակովբ քահանայ Տէր Մկրտչեան[422]	Կարս	
9	Աւետիս քահանայ Տէր Սիմէօնեան	Բերնա	
10	Կարապետ քահանայ Տէր Սիմէօնեան[423]	Բերնա	
11	Յակովբ քահանայ Ռշտունի	Օրթաքիլիսէ	
12	Խաչատուր քահանայ Սիմէօնեան[424]	Մազրա	
13	Յակովբ քահանայ Տէր Աստուածատուրեան	Չայիմ	
Բէնկլի-Ահմէտի գործակալութիւն			
14	Վարդան քահանայ Տէր Վարդանեան	Բէնկլի-Ահմէտ	
15	Գրիգոր քահանայ Մուսիկեանց[425]	Գեօտալի	
16	Մելքոն քահանայ Տէր Մելքոնեանց	Բայդարա	
17	Միքայէլ քահանայ Տէր Պօղոսեան	Գեարմլի	
18	Մինաս քահանայ Խաչատրեան[426]	Օրթաղալա	
19	Մեսրովբ քահանայ Թերզեան	Աբատ-Սէօգիւտլի	
21	Տաճատ քահանայ Տէր Վարդանեան	Սարիղամիշ	с. Сарикамыш
Գործակալութիւն Արդահանի			
22	Յակովբ քահանայ Տ. Յակովբեան	Արդահան	м. Ардаган (Карс. облости)
23	Համազասպ քահանայ Նուրիջանեան	Ուրուտ	тоже
Գործակալութիւն Օլթւոյ			

24	Վարդան քահանայ Սարաֆեան	Օլթի աւան	м. Ольты (Карс. облости)
25	Կարապետ քահանայ Տէր Յովհաննիսեան[427]	Չարդանիս	
26	Արսէն քահանայ Բլրցեան	Բերդուս	

գ. 883, թթ. 49-50):

422 Յակոբ քահանայ Տէր-Մկրտչեան – ծնուել է 1837 թ.: 1878 թ. ձեռնադրուել է քահանայ Կարսի Ս. Նշան եկեղեցու վրայ, մահացել է 1914 թ. յունիսին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 12 շրջ. 13, ֆ. 48, ց. 1, գ. 891, թ. 8):

423 Կարապետ քահանայ Տէր-Սիմէօնեան – ծնուել է 1873 թ., քահանայ է ձեռնադրուել 1892 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

424 Տե՛ս թիւ 195 ծանօթագրութիւնը:

425 Գրիգոր քահանայ Մուսիկեանց – ծնուել է 1869 թ. քահանայ է ձեռնադրուել 1902 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

426 Մինաս քահանայ Խաչատրեան – ծնուել է 1827 թ., քահանայ է ձեռնադրուել 1870 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 13 շրջ. - 14):

427 Կարապետ քահանայ Տէր-Յովհաննիսեան – ծնուել է 1844 թ.: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1870 թ. (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9093, թ. 349 շրջ.):

	Գործակալութիւն Չարիշատի		
27	Ներսէս քահանայ Մարտիրոսեան[428]	Աղճաղալա	
28	Արիստակէս քահանայ Քաջբերունի	Քիւրակդա-րա	
29	Գրիգոր քահանայ Ներսիսեան	Գեոդակ-Սաթըլմիշ	
30	Աղէքսանդր քահանայ Մելիք-Սարգսեան[429]	Մեծ Փարքեթ	
	Գործակալութիւն Արևմտեան Շիրակի		
31	Կարապետ քահանայ Ասլանեանց	Ղզըլ-Չախչախ	Сел. Баш-Шурагел (Карс. области)Армянскому блогочинному священнику Мелкиседеку Тер-Гаспарян
32	Եղիշէ քահանայ Տէր Աւետիսեան	Ղզըլ-Չախչախ	
33	Գրիգոր քահանայ Մարտիրոսեան	Ղարա-Մահմետ	
34	Եղիա քահանայ Թումասեան[430]	Բազերկեան	
35	Յովհաննէս քահանայ Տէր Ակովբեան	Օճախ-Ղուլի	
36	Մելքիսեդեկ քահանայ Տէր Գասպարեան[431]	Բաշ-Շորա-կէլ	
37	Անանիա քահանայ Շիրակունի[432]	Փիրուալի	
	Գործակալութիւն Անւոյ		
38	Մկրտիչ քահանայ Պօղոսեան	Ներքին-Քեադիկլար	Анинскому Армянскому Блогочинному Священнику Егишэ Тер-Григоряну, в с.
39	Մելքիսեդեկ քահանայ Մելքոնեան	Կարմիր վանք	
40	Եղիշէ քահանայ Տէր Գրիգորեան[433]	Ուղուզլի	

[428] Ներսէս քահանայ Մարտիրոսեան – ծնուել է 1871 թ.: Կրթութիւնը ստացել է Ալեքսանդրապոլի ծխական դպրոցում: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1905 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ.-17):

[429] Աղէքսանդր քահանայ Մելիք-Սարգսեան – ծնուել է 1960 թ., ստացել է տնային կրթութիւն, քահանայ է ձեռնադրուել 1906 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 17 շրջ. - 18):

[430] Եղիա քահանայ Յովհաննէսի Թումասեանց – ծնուել է 1854 թ., քահանայ է ձեռնադրուել 1898 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

[431] Մելքիսեդեկ քահանայ Տէր-Գասպարեան – ծնուել է 1961 թ.: Կրթութիւնը ստացել է ծխական դպրոցում, քահանայ է ձեռնադրուել 1900 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

[432] Անանիա քահանայ Շիրակունի – ծնուել է 1858 թ.: Կրթութիւնը ստացել է Կարսի դպրոցում, քահանայ է ձեռնադրուել 1899 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 16 շրջ. - 17):

[433] Եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեան – ծնուել է 1870 թ., քահանայ է ձեռնադրուել 1905 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

41	Ներսէս քահանայ Տէր Ղազարեան[434]	Ղույլուճուխ	Угузлы через Байрахтарское сел. ок. правление в Кизил-Чахчахе (Карс. обл.)
42	Յակովբ քահանայ Տէր Սարգսեանց[435]	Թազա-քեանդ	
43			
44	Յովհաննէս քահանայ Բագրատունի	Արազի	
45	Արիստակէս քահանայ Տէր Ստեփանոսեան[436]	Օրթա-Քեադիկլար	
46	Մելքիսեդեկ քահանայ Չատիկեան	Ղօշավանք	
	Գործակալութիւն Տիկոռի		
47	Խաչատուր քահանայ Օվոյեան	Չոչի	
48	Սարգիս քահանայ Ներսիսեան	Լալոյի Մաւրակ	
49	Յովհաննէս քահանայ Երիցեան	Տիկոռ	
50	Սարգիս քահանայ Տէր Սարգսեան[437]	Նախիջևան	
51	Յակովբ քահանայ Տէր Գրիգորեան	Արմուտլի	
52	Յակովբ քահանայ Պետրոսեան	Ղօշաքիլիսա	
53	Յովհաննէս քահանայ	Բագարան	

	Գործ[ակալութիւն] Բասենի և Շատևանի		
54	Յակովբ քահանայ Միրզոյեան[438]	Գիւլանթապ	с. Сарикамыш (Карс. обл.) г. Сааку Кешишяну. Передать Басено-Шатеванскому арм. благочинному священнику
55	Գէորգ քահանայ Աբրահամեան[439]	Յորերան	
56	Թէոդորոս քահանայ Նիկողոսեան[440]	Շատևան	
57	Մկրտիչ քահանայ Տէր Գրիգորեան	Կաղզուան	
58	Գամաղիէլ քահանայ Մարտիրոսեան	Ղարաբաղ	
59	Մելքիսեդեկ քահանայ Բարիքեանց[441]	Խար	

ՀԱԱ, ֆ. 458, ց. 1, գ. 184, թթ. 15-19, բնագիր, ձեռագիր:

[434] Ներսէս քահանայ Տէր-Ղազարեան – ծնուել է 1879 թ., քահանայ է ձեռնադրուել 1904 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

[435] Յակոբ քահանայ Տէր Սարգսի Աւագեանց – ծնուել է 1857 թ., քահանայ է ձեռնադրուել 1887 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[436] Արիստակէս քահանայ Տէր Ստեփանոսի Տէր-Մարտիրոսեան – ծնուել է 1872 թ., քահանայ է ձեռնադրուել 1904 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

[437] Սարգիս քահանայ Տէր-Սարգսեան – ծնուել է 1871 թ., քահանայ է ձեռնադրուել 1900 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

[438] Յակոբ քահանայ Միրզոյեան – ծնուել է 1969 թ., սովորել է ծխական դպրոցում, քահանայ է ձեռնադրուել 1903-ին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[439] Տե՛ս թիւ 303 ծանօթագրութիւնը:

[440] Թէոդորոս քահանայ Տէր Նիկողայոսի Կիրակոսեանց – ծնուել է 1863 թ., կրթութիւնը ստացել է ծխական դպրոցում, քահանայ է ձեռնադրուել 1901 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 15 շրջ. - 16):

[441] Տե՛ս 263 ծանօթագրութիւնը:

№ - 206
ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՈՒԽՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆԻՆ՝ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 յունուարի 1911 թ.
Ս. Էջմիածին

Նորին Ամէնապատուութեան Տ. Տեղակալին Կաթողիկոսի
Ամենայն Հայոց
Կարսի վիճակի Փոխանորդ Ուխտանէս վարդապետից
խոնարհ յայտարարութիւն

Իմ անցեալ դեկտեմբերի 2-ի յայտարարութեամբ բացատրելով այն հանգամանքները, որոնք անկարելի էին դարձնում իմ խաղաղ պաշտօնավարութիւնը Կարսում, ամենախոնարհաբար խնդրել էի նորոգ հանգուցեալ Վեհափառ Հայրապետին ազատ կացուցանել ինձ Կարսի վիճակի փոխանորդի պաշտօնից: Վեհափառ Հայրապետի անակնկալ մահի հետևանքով իմ հրաժարականիս մասին ո՛չ մի տնօրինութիւն չեղաւ:

Ա՛րդ, Ձեր Ամենապատուութեան ուշադրութիւնը դարձնելով հանգուցեալ Հայրապետին մատուցած խնդրագրիս վրայ, խոնարհաբար խնդրում եմ, ի նկատի առնելով յիշեալ հանգամանքները, ազատ համարել ինձ Կարսի փոխանորդի պաշտօնից:

Թոյլ տուէք ինձ, Ամենապատիւ Սրբազան Հա՛յր, մի խնդիր ևս: Իմ խանգարուած առողջութիւնը վերականգնելու համար, հանգուցեալ Հայրապետի թոյլտուութեամբ, դիմեցի Թիֆլիս բժիշկների խորհուրդին, բայց նիւթական միջոցներ չունենալով չկարողացայ օգտուել նրանց խորհուրդներից և վերադարձայ Էջմիածին: Իմ առողջական դրութեան մասին ներկայացրել եմ Ձեր Ամենապատուութեան բժշկի տուած վկայագիրը: Այժմ, խոնարհաբար խնդրում եմ նշանակել ինձ Սանահնի ժամանակաւոր վանահայր, ուր թերևս կարողանամ ապաքինուել իմ ջղային տկարութիւնից և պէտք եղած դէպքում դիմել Թիֆլիսի բժիշկների խորհուրդին, մանաւանդ աչքերիս համար:

Կարսի վիճակի Փոխանորդ՝ Ուխտանէս վարդապետ

Մակագրութիւն. *Ընդունելով Մեր զհրաժարական Տ. Ուխտանէս վարդապետի, առաջադրեմք Սինոդի Ս. Էջմիածնի արձակեալ համարել զնա ի պաշտամանէ Փոխանորդութեան Կարուց և առաքել ի վանս Սանահնոյ իբրև ժամանակաւոր միաբան, պատուիրելով նախագահողի Վիճակային Կոնսիստորիային Հայոց Վրաստանի Տ. Եփրեմ եպիսկոպոսի հոգալ զսնունդ և տալ զհանդերձագին Տ. Ուխտանէս վար-*

դապետի՝ յարդեանց վանուցն ցառանձին տնօրէնութիւն Մեր[442]։ 9 յունուարի 1911 ամի, ի Ս. էջմիածին

Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11121, թ. 1 և շրջ., ինքնագիր:

№ - 207
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԿՐՏԻՉ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏՈՒԱԾ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

12 յունուարի 1911 թ.
Կարս

Երևանի Փոխ-Թեմակալ Գերապատիւ Խորէն Սրբազանին
Կարսի Հոգևոր Կառավարութեան ժամանակաւոր Քարտուղար
Մկրտիչ Տէր-Մկրտչեանից
Յայտարարութիւն

Պատիւ ունիմ խոնարհաբար յայտնելու Ձերդ Գերապատուութեան, որ Կարս հասնելուցս յետոյ, մօտ մի ամիս ծանօթանալով Հոգևոր Կառավարութեան գործերի հետ, եկայ տխուր եզրակացութեան։ Բոլոր գործերը գտայ շատ խառն ի խուռն և անկանոն դրութեան մէջ։ Դրամական հաշիւները բոլորովին խճճուած, կարծես դիտմամբ խառնած լինէին, մի հաշիւ ուղղելու համար, օրինակ՝ Արարատագին, ստիպուած եմ տասը, տասն և հինգ տարուայ գործերը քրքրել, սակայն դարձեալ ապարդիւն, որովհետև շատ յայտարարութիւններ չլինելու պատճառով անհնար է դարձել պարզ հաշիւ կազմելը։

Ձգտայ մի գործ, որ զուտ այն մասին կազմած լինէր, որի համար սկսուած է, այլ նրա մէջ խառնել են զանազան գրութիւններ կամ նրա վերաբերեալ գրութիւնները գցել են զանազան գործերի մէջ։

Միևնոյն ժամանակ ստուգելով ծննդական վկայականների այն գործերը, որոնք ստացւում են Կոնսիստորիայից, գտայ, որ կան ստացուած դրամներ յօգուտ Թեմական դպրանոցի, որոնց մասին Կոնսիստորիայն մի շարք առաջադրութիւններ է արել։ Սակայն չի երևում, թէ ո՞ւմ մօտ է գտնւում. միայն իմ հարցին, թէ ո՞ւմ մօտ է պատասխանում են, թէ՝ նախկին քարտուղարի։

---

[442] 1911 թ. յունուարի 19-ին Ս. Սինոդը հաստատեց Գէորգ արքեպիսկոպոսի առաջարկը և այդ մասին տեղեկացրեց Վրաստանի Հայոց Հոգևոր կառավարութեան նախագահին (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11121, թթ. 2-3 շրջ.):

Ամենամեծ չափով զբաղուեցի վիճակային արդեանց գործերով, որտեղ չգտայ համարեայ թէ ոչ մի օրագիր ծախսուած դրամների մասին, մանաւանդ այն ծախսուած դրամների, որոնք արուած են նախահաշուից դուրս։ Իսկ հաշուարարութիւնը տարել են այնպէս, որ ոչ մի տարուայ գործերից պարզ չի երևում, թէ այդ տարուայ ընթացքում որքան վիճակային արդիւնք է եղել, որքան է ծախսուել և որ գլխաւորն է, պարզ յայտնի չէ, թէ որքան է ստացուել և որքան է ապառիկ մնացել։ Որովհետև մի քանի գործակալներ տարուայ վերջը ներկայացնելով իրենց հաշիւները, առանց մի որոշ գումարի դրամի, խնդրել են այդ գումարը թողնել իրենց վրայ պարտք որոշ ժամանակով և այդ մասին առանց օրագրական որոշում կայացնելու, յայտարարութիւնները գցել են գործի մէջ և այն էլ ոչ վիճակային արդեանց, այլ նոյն քահանայի մասին եղած այլ գործի մէջ։

Վերոգրեալիս մասին, ես ինձ պարտաւոր զգացի մի զեկուցում տալ Հոգևոր Կառավարութեան և ծանօթացնել գործերի խառնաշփոթ դրութեան մասին, որ առաջ է եկել նախկին քարտուղարի անփութութեան շնորհիւ, դրա համար էլ ամսոյս 10-ին մի յայտարարութիւն ներկայացրի Հոգևոր Կառավարութեանը, որով խնդրել էի մի քանի կարգադրութիւններ անել և զեկուցանել Ձերդ Գերապատուութեան, սակայն Հոգևոր Կառավարութիւնը փոխանակ ստանալու յայտարարութիւնս և որոշում կայացնելու, զանազան ջնջումներ անելով վրան՝ վերադարձնում է ինձ և առաջարկում, որ նորը գրեմ իրեն ցանկութեան համաձայն։

Իսկ ես գտնելով, որ Կառավարութիւնը ջերմ կերպով ցանկանում է պաշտպանել նախկին քարտուղարին, որովհետև ես յայտարարութեանս մէջ շեշտել եմ թէ՛ նրա անփոյթ վերաբերմունքի և թէ՛ դրամականի տեսակէտով անբարեխիղճ գտնուելու մասին, իսկ Կառավարութիւնը չի ցանկանում ոչինչ գրեմ և ջնջում է գլխաւորապէս այն յօդուածներս, որոնք նրան են ուղղուած։ Ուստի բարւոք համարեցի այլևս նոր յայտարարութիւն չտալ Կառավարութեան։

Եւ որպէս զի կարողանամ և որ գլխաւորն է հնարաւորութիւն ունենամ վարել գործերը այնպէս, ինչպէս Գերապատուութիւնդ կը ցանկանար, ուստի սորա հետ խոնարհաբար ներկայացնում եմ Ձերդ Սրբազնութեան, Հոգևոր Կառավարութեան գրածս, ամսոյս 9-ի յայտարարութիւնը, որի վրայ Կառավարութիւնը իր ցանկութեան համաձայն ջնջումներ է արել, խնդրում եմ Ձեր բարեհաճ տնօրինութիւնը։

Պատիւ ունեմ նոյնպէս խոնարհաբար խնդրել Ձերդ Գերապատուութեան բարեհաճ թոյլտուութիւնը երկրորդ գրագիր ունենալուս մասին, որովհետև նախ՝ ես պէտք է զբաղուեմ գործերի կանոնաւորելով, ապառիկների ցուցակ կազմելով և երկրորդ, կառավարութեանս ընթացիկ և նախկին գործերը այնքան շատ են, որ եթէ ամբողջովին

զբաղուեմ ընթացիկ և նախկին գործերով անգամ, դարձեալ անհնարին կլինի բաւարարութիւն տալը։

Կարսի Հայոց Հոգևոր կառավարութեան
ժամանակաւոր քարտուղար՝
Մկրտիչ Մկրտչեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 826, թ. 44-45, ինքնագիր:

№ - 208
ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՏԵԿՈՐԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 8 *22 յունուարի 1911 թ.*
Կարս

Երևանի Փոխ-Թեմակալ Տէր Խորէն Սրբազան եպիսկոպոսին
Կարսի Հոգևոր Կառավարութեան Նախագահ
Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Ի լրումն Ձերդ Սրբազնութեան ամսիս 19-ին №6 գրածս յայտարարութեան, կարևոր եմ համարում ամենախոնարհաբար յայտնել, որ Տիկոռի Ս. Երրորդութիւն եկեղեցին, ինչպէս երևում է գործից, այժմ ունի մի հազար մի հարիւր տասն և մի րուբլի 95 կոպէկ։ Այդ գումարից 250 րուբլին գտնւում է քաղաքիս ուսումնարանների Հոգաբարձութեան և 46 րուբլի 58 կոպէկ Խորէն քահանայ Ստամբօլցեանի վերայ պարտ, իսկ մնացորդ գումարը գտնւում է քաղաքիս Խնայողական գանձարանում[443]։ Այդ գումարով կարելի է շինել մի վայելուչ եկեղեցի նոյն գիւղում և այդ ստիպողական անհրաժեշտ պահանջը լրացնել գիւղական ժողովրդի բարոյական մխիթարութեան համար։

Ուստի՝ սեպուհ պարտականութիւն եմ համարում այս ամփոփ տեղեկութիւնը հաղորդել Ձեր Սրբազնութեանը՝ կարևոր տնօրէնութեան համար[444]։

---

443 1911 թ. ապրիլի 21-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է յղել Կարսի Հոգևոր Կառավարութեանը. «Համաձայն Հոգևոր Կառավարութեանդ Նախագահի առաջարկութեան առաջադրում եմ ամբողջացնել Տեկորի Ս. Երրորդութեան եկեղեցուն պատկանեալ գումարը պահանջելով անմիջապէս Խորէն քահանայից իր պարտքը և դպրոցի պարտքի դիմաց պահելով և հետզհետէ մուծելով մատեան քաղուածքներից գոյացած դպրոցահաս արդիւնքը» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 113, թ. 5)։

444 1911 թ. ապրիլի 21-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է յղել Մինաս աւագ քահանային. «Համաձայն Աւագապատուութեանդ յայտարարութեան, առաջարկում եմ հոգ տանել Տեկորի Ս. Երրորդութեան եկեղեցու վերանորոգութեան մասին, ընտրել տալով մի յանձնաժողով, որը Ձեր նախագահութեամբ և ցուցմունքներով գործը գլուխ կը հանէ։ Միաժամանակ կազմեցէք մի նախահաշիւ ուղարկեցէք մեզ ի հաստատու-

Նախագահ Հոգևոր Կառավարութեան Հայոց Կարուց՝
Մինաս ա. քահանայ Տէր-Պետրոսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 113, թ. 3, ինքնագիր:

№ - 209
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՋՈՐԴԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇԻՒՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

31 յունուարի 1911 թ.
Ս. Էջմիածին

Լսեցին զեկուցումն. Սինոդս 1906 թ. դեկտեմբեր 8-ի N *2529 և 1907 թ.նոյեմբ. 16-ի* N *2518 առաջադրութիւններով յանձնել էր Երևանի Կոնսիստորիային մանրամասն զննել Կարսի Հոգևոր Կառավարութեան և յաջորդարանի շինութեան վերաբերեալ դրամական հաշիւները և զեկուցանել Ատենիս: Անցած 1910 թ. ապրիլի 29-ի Թ. 3248 յայտարարութեամբ Կոնսիստորիան վերադարձնելով Կարսի յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան հաշիւները զեկուցանում է, որ Կարսի Հոգևոր Կառավարութիւնը, որին յանձնուած է եղել զննել այդ հաշիւները Թ. 855 յայտարարութեամբ յայտնում է, որ անհնարին բան է այդ հաշիւների զննելը, որովհետև դոքա տարուել են չափազանց անկանոն կերպով, ուստի և Կոնսիստորիան ուղարկում է այդ հաշիւները ի տնօրէնութիւն Սինոդի*[445]*: Կաղզուանի եկեղեցական-ծխական դպրոցի Հոգաբարձութիւնն անցած 1910 թ.* N *45 յայտարարութեամբ*[446]*, ի Տէր հանգուցեալ Հայրապետի անունով, յայտնում է, որ Կարսի նախկին Յաջորդ Եղիշէ ծ.վարդապետ Մուրադեանը ստացել է եկեղեցական գումարից 700 ռ. և ծախսել է յաջորդարանի շինութեան վրայ. այդ գումարից Հոգաբարձութիւնը ստացել է 200 ռ., մնում է ստանալու 500 ռ., որի համար խնդրում է տնօրինել վերադարձնել իրեն: Ապա Կարսում վերաբնակուող Բաղդասար Զատիկեանն անցած 1910 թ. յունիսի 7-ի խնդրով յայտնում է, որ ինքը Կարսի յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան շինութեան Հոգաբարձութեան անդամ լինելով ծախսել է իւր միջոցներից 3630 ռուբ., որից ստացել է միայն 1374 ռ. և մնում է ստանալու 2256 ռ., ուստի և խնդրում է տնօրինել վճարել իրեն այդ գումարը*[447]*: Տեղեկութիւն. Հաշուարարական Մասի Թ. 25/902 գործին կցուած է Եղիշէ վարդապետի Կարսի շրջանում յաջորդարանի շինու-*

թիւն, որից յետոյ Ձեզ իրաւունք կը տրուի ծախսել Հոգևոր Կառավարութեան մէջ եղած յիշեալ եկեղեցու անունով գումարը» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 113, թ. 4):

445 Տես թիւ 195 փաստաթուղթը:

446 Տես թիւ 190 փաստաթուղթը:

447 Բ. Զատիկեանի խնդրագիրը, տես նոյն տեղում, թ. 4 և շրջ.:

թեան օգտին ժողոված 7851 ռ. 10 կ. ցուցակի պատճէնն և այլ դրամներ ստացականները և Կարսի վերաբնակիչ տաճկահպատակ Մանուկ Կոնդաղչեանի 1906 թ.մարտի 28-ի և 1907 թ.ապրիլի 18-ի հանգուցեալ Մկրտիչ Կաթուղիկոսի անունով տուած երկու խնդիրները, որոնցով պահանջում է 679 ռուբլի իւր տուած 155 գերանի արժէքի մնացորդը: Այդ գերանները գնահատուած են 1600 ռուբլի, որից Կոնդաղչեանը ստացել է միայն 921 ռուբլի: Հրամայեցին. Քանի որ Կարսի յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան շինութիւնից առ այժմ օգտուում է Կարսի եկեղեց. – ծխական Հոգաբարձութիւնը, ուստի պատուիրել վերջինիս իրաւախոհութեամբ հատուցանել Կաղզուանի եկեղեց. – ծխական Հոգաբարձութեան հասանելիք 500 ռ., Բաղդասար Զատիկեանի 2256 ռ. և Մանուկ Կոնդաղչեանի 679 ռ. պարտքերը, եթէ սոքա հաստատեն իրենց պահանջի արդարացի լինելը: Վճռական կատարման համար տալ հրաման Երևանի Կոնսիստորիային, պատուիրելով տեղեկութիւն տալ Ատենիս այդ մասին[448]

Տեղակալ՝ Գէորգ արքեպիսկոպոս
Անդամք՝ Յուսիկ արքեպիսկոպոս
Սահակ վարդապետ[449]*,*
Մատթէոս վարդապետ[450]

---

448 Սինոդը 1911 թ. փետրուարի 7-ին որոշման մասին տեղեկացրել է Երևանի Հայոց Կոնսիստորիային: Ի պատասխան Կոնսիստորիային՝ 1911 թ. փետրուարի 26-ին հետևեալ գրութիւնն է առաքել Սինոդին. «Ի հետևումն Ս. Սինոդիդ ամսոյս 7-ի N հրամանի, որով պատուիրում էք Ատենիս Կարսի յաջորդարանի և Հոգևոր Կառավարութեան շինութեան հաշիւների մասին տեղեկութիւն տալ Հոգ. Կառավարութեան Ատենիդ հրամանն ու կարգադրութիւնը, ուստի Ատեանս խոնարհաբար յայտնում է ի գիտութիւն, որ Ս. Սինոդիդ հրամանը բոլորագրութեամբ յայտնուած է Կարսի Հոգ. Կառավարութեան» (ՀԱԱ, ֆ. 56, g. 19, գ. 513, թ. 7):

1911 թ. հոկտեմբերի 27-ին Երևանի Վիճակային Կոնսիստորիան հետևեալ զեկուցագիրն է ուղարկել Սինոդին. «Ի կատարումն Ս. Սինոդիդ տարւոյս փետրուարի 7-ի N 340 առաջադրութեան, Կոնսիստորիաս պատիւ ունի խոնարհաբար յայտնելու, որ Ղարսի ծխական Հոգաբարձութիւնը հրաժարւում է վճարել Կաղզուանի ծխական Հոգաբարձութեան 500 ռ., Բաղդասար Զատիկեանին՝ 2256 ռ. և Մանուկ Ղոնդաղսազեանին 679 ռ. պատճառաբանելով, որ դպրոցի շինութեան հաշիւները ժամանակին վարուել են անկանոն կերպով: Յայտնելով վերոյիշեալը Ատեանս պատիւ ունի յարգանօք մատուցանելու Ս. Սինոդիդ ամբողջ գործը ի տնօրէնութիւն» (ՀԱԱ, ֆ. 56, g. 19, գ. 513, թ. 12):

449 Սահակ վարդապետ Գէորգի Ամատունի – Ծնուել է 1856 թ., կրթութիւնը ստացել է Գէորգեան ճեմարանում, 1870 թ. ստացել է հոգևոր կոչում: 1876 թ. Մեսրոպ եպիսկոպոսի կողմից ձեռնադրուել է սարկաւագ: 1883 թ. նշանակուել է Ս. Էջմիածնի տպագրական կոմիտէի անդամ: 1887 թ. ձեռնադրուել է աբեղայ: 1893 թ, նոյեմբերի 20-ին ստացել է վարդապետական աստիճան: 1894 թ. հոկտեմբերի 6-ի կոնդակով պարգևատրուել է ականակուռ լանջախաչով (ՀԱԱ, ֆ. 57, g. 2, գ. 58, թ. 171): 1906 թ. նշանակուել է Մայր Աթոռի մատենադարանապետի պաշտօնում: Մահացել 1917 թ.:

450 Մատթէոս եպիսկոպոս Մատթեւոսեան – Ծնուել է 1863 թ.: Սովորել է Ներսիսեան հոգևոր դպրոցում: 1896 թ. ընդունել է հոգևոր կոչում և դարձել Ս. Էջմիածնի միաբանութեան անդամ: 1897-ին ձեռնադրուել է աբեղայ և նոյն թուականի դեկտեմբերին՝ վար-

Բաբգէն վարդապետ[451]

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 513, թթ. 5-6, բնագիր, ձեռագիր:

№ - 210
ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԻՐԵՆ ՊԱՇՏՕՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 22 *22 մարտի 1911 թ.*
Կարս

Երեւանի վիճակի Գերապատիւ Փոխ-Թեմակալ Տէր Խորէն Սրբազան Եպիսկոպոսին
Կարսի Հոգեւոր Կառավարութեան Նախագահ
Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանից
Յայտարարութիւն

Գարունը բացուելու հետ միասին սկսւում է արդէն քաղաքիս Մայր եկեղեցու տակաւին կիսակատար շինութեան ստիպողական գործը, որ հանգամանքների շնորհիւ ծանրացած է միայն իմ վերայ, հետևապէս զբաղուելով այդ անհրաժեշտ, ստիպողական գործով, անկարող պէտք է գտնուեմ, որպէս խիղճս և ստանձնածս պարտականութիւնն է թելադրում, անթերի կատարել Հոգևոր Կառավարութեան նախագահութեան պատասխանատու պաշտօնը և թերևս ժամանակին պատասխանատուութեան ենթարկուելու բաղդին արժանի համարուեմ իշխանութեան կողմից, որ դժուար ինչ է: Ուստի, ամենախոնարհաբար խնդրում եմ Ձեր Սրբազնութիւնից, բարեհաճել յանձնել նոյն պաշտօ-

---

դապետ: 1898 թ. նշանակուել է Ղարաբաղի Կոնսիստորիայի անդամ, ապա՝ 1899-ին՝ Ալեքսանդրապոլի վիճակի փոխանորդ: 1902 թ. Խրիմեան Հայրիկի կոնդակով նշանակուել է Ախալցխայի եկեղեցիների քարոզիչ: Մէկ տարի անց գործուղուել է Բաքու՝ որպէս տեղի հայոց եկեղեցիների քարոզիչ: 1904 թուականին նշանակուել է Սինոդի անդամ: 1907 թ. ապրիլից կրկին Ալեքսանդրապոլի վիճակի առաջնորդական փոխանորդ էր: 1908 թ. նոյեմբերին նշանակուել է ‹‹Արարատ›› ամսագրի խմբագիր և պաշտօնավարել մէկ տարի: 1909 թ. նշանակուել է Սինոդի անդամ և այդ պաշտօնում մնացել մինչև 1921 թ. : 1918-1920 թթ. եղել է Ս. Էջմիածնի վանական խորհրդի և միաբանական ժողովի նախագահ, 1924 թ. Գերագոյն հոգևոր խորհրդի անդամ, 1925-1930 թթ. Բաքուի և Թուրքեստանի թեմի առաջնորդ, ապա նորից Գերագոյն հոգևոր խորհրդի անդամ: Վախճանուել է 1936 թ. մարտին:

451 Բաբգէն վարդապետ Աղաւելեան - (10 հոկտեմբեր 1869, Շուշի-3 յունուար 1916, Ս. Էջմիածին) – Յետագայում՝ ծայրագոյն վարդապետ: 1895 թ. աւարտել է Գէորգեան ճեմարանը: 1897 թ. նոյեմբերի 30-ին ձեռնադրուել է աբեղայ, 1898 թ. յունիսի 18-ին ստացել է վարդապետական աստիճան: Սովորել է Խարկովի իրաւաբանական համալսարանում: Մայր Աթոռում և թեմերում ստանձնել է բազմաթիւ պաշտօններ, 1904 թ. նշանակուել է Սինոդի անդամ: Հրատարակել է բանասիրական աշխատութիւններ:

նը մի ուրիշին և ինձ ազատ համարել այդ պատասխանատու պաշտօնից։

Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան

Մակագրութիւն. *Մերժել*[452]։

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 826, թ. 28, ինքնագիր:

№ - 211
ԱՔՍԻ ՂԱԶԻ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆ ԹԵՐԹԸ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԵԼՔՈՆԻ ՄԱՆԱՍԵԱՆԻՆ ԻՐԵՆՑ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 ապրիլի 1911 թ.
Աքսի Ղազի

Համախօսական թերթ
1911 թուի մէկն ապրիլի

Սրա տակ ստորագրողներս Կարսի շրջանի Աքսի Ղազի գիւղի հասարակութիւնս բաղկացած 50 ծխերից կազմելով ծխական ժողով, նախագահութեամբ գործակալ Գրիգոր քահանայ Մուսիկեանի, որոշեցինք հետևեալ.

1. Աչքի առաջ ունենալով, որ ահա երկար տարիներէ այսքան ժամանակամիջոցում մեր հասարակութիւնը զրկուած է եղել հոգևոր մխիթարութիւնից և սեփական հովուից այլ ենթակայ է եղել երթևեկ քահանաների, դրա համար շատ անգամ զրկուած ենք ամենաանհրաժեշտ ծխակատարութիւնից, այժմ կարևոր ենք համարում ունենալ մեզ հաստատ ծխատէր քահանայ։ Վերջինին, մենք մեզ համար ընտրեցինք մեր գիւղի բնակիչ Համբարձում Մելքոնեան Մանասեանին[453]։

2. Մենք սոյն համախօսականով պարտաւորում ենք յիշեալ ընծայացուին հոգալ տնտեսական պէտքերն տալով նրան քահանայավայել արդիւնք և տալ պտուղ, ցորեն, գարի մեր նախկին քահանայի որոշած հասոյթներով։

3. Մենք յանձն ենք առնում յիշեալ ընծայացուի, արքունական և հասարակական հարկատուութեանց վերաբերեալ պահանջները։ Ընծայացուի և իր զաւակներին որ և կատորագրեմք հասարակութիւնքս.

---

452 Տես թիւ 213 փաստաթուղթը:

453 1913 թ. յունուարի 12-ին Երևանի Փոխթեմակալ Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է առաքել Երևանի թեմական կոնսիստորիային. «Համաձայն Ս. Սինոդի 1912 թ. դեկտեմբերի 25 N3010 հրամանի անցեալ դեկտեմբերի 30-ին քահանայ ձեռնադրեցի քաղաքիս Ս. Սարգիս եկեղեցում խարդաւիլակութեամբ Սիմէօն քահանայ Աբրահամեանի Կարսի Վիճակի Ակսի Ղազի գիւղի բնակիչ Համբարձում Մանասեանցին հովուելու Ակսի Ղազի ծխականներին, անուանելով նրան Տէր Ներսէս:

Սորա հետ ուղարկելով նորընծայ Տէր Ներսէս քահանայի ձեռնադրութեան N78 վկայականը առաջադրում եմ վաւերացնել այն օրինաւոր կերպով և ուղարկել իրեն» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 620, թ. 11):

1. Կարապետ Մելքոնեան, 2. Ստեփան Մարտիրոսեան
3. Գրիգոր Ստեփանեան[454]

Սոյն համախոհական թերթն ուղիղ ըլլալու մասին վաւերացնում եմ արքունի կնիքով Բէնկլի Ահմէդի գործակալ՝

Գրիգոր քահանայ Մուսիկեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 620, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 212
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԳԵԱՐՄԱԼԻ ԳԻՒՂԻ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ ՏԻՐԱՑՕՒ ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԻ ՇԱՀԻՆԵԱՆՑԻՆ ԻՐԵՆՑ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

18 յունիսի 1911 թ.
Գեարմալի

Համախոսական թերթ

Սրա տակ ստորագրողներս Կարսի շրջանի Գեարմալի գիւղի հասարակութիւնքս, բաղկացած 60 ծխերից, կազմելով ծխական ժողով՝ նախագահութեամբ Բէնկլի Ահմէդի գործակալ Գրիգոր քահանայի Մուսիկեանի, որոշեցինք հետևեալը.

1) *Աչքի առաջ ունենալով որ մեր գիւղի զառամեալ ծխատէր Միքայէլ քահանայ Պօղոսեան*[455] *այլևս անկարող է ըստ ժամանակին բաւարարութիւն տալ մեր հոգևոր կարիքներին, ուստի կարևոր համարեցինք մեր գիւղացի տիրացու Սարգիս Մինասեան Շահինեանց լինի մեզ քահանայ*[456]*։*
2) *Մենք սոյն համախոհականով պարտաւորւում ենք յիշեալ ընծայացուին հոգալ տնտեսական պէտքերն և քահանայավայել արդիւնք, տալ պտուղ, ցորեն և գարի մեր նախկին սովորութեան համաձայն։ Իսկ մեր զառամեալ քահանայի անձի հասոյթ կարող է մերձակայ Հոգևոր Կառավարութիւն որոշել տալ և ստանալով նոր ընծայացուի հասոյթից յանձնել նախկին քահանային։*

Որ և կստորագրեմք հաւարակութիւնքս

Յովհաննէս Սարգիսեան
Արշակ Ներսէսեան
Համբարձում Ներսէսեան[457]

---

454 Հետևում է ևս 47 անձի ստորագրութիւն:

455 Տես թիւ 236 ծանօթագրութիւնը:

456 1913 թ. փետրուարի 19-ին Սինոդը կայացրել է հետևեալ որոշումը. ‹‹Թոյլ տալ Երևանի Վիճակային Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Գիրմալի գիւղի բնակիչ Սարգիս Շահինեանին քահանայ Գիրմալի գիւղի վրայ›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 841, թ. 14):

457 Հետևում է ևս 40 անձի ստորագրութիւն:

Սոյն Համախօսականի ուղիղ ըլլալու մասին վաւերացնում եմ արքունի կնիքով,

Բէնկլի Ահմէտի գործակալ՝
Գրիգոր քահանայ Մուսիկեանց[458]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 841, թթ. 4-5, վաւերացուած պատճէն, ձեռագիր:

№ - 213 ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԻՐԵՆ ՊԱՇՏՕՆԻՑ ԱՉԱՏԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 49 *7 յուլիսի 1911 թ.*
Կարս

Գերապատիւ Փոխ-Թեմակալին Երևանայ Տէր Սրբազան
Խորէն եպիսկոպոսի Մուրադբէգեանց
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան Նախագահ
Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանից ամենախոնարհ
Յայտարարութիւն

Ստացայ Գերապատուութեանդ ամսիս 2-ի N 1216 ինձ տողած գրութիւնը հրաժարականիս վերաբերմամբ, որով անհնար էք համարում ինձ հրաժարելը, աւելացնելով, որ, քարտուղար Յովհաննէս Այվազեանի պաշտօնի մէջ մնալը պայմանաւորուել է իմ նախագահութեան պաշտօնի հետ: Ներեցէ՛ք, Սրբազա՛ն Հայր, ես պաշտօնավարութիւնս չեմ պայմանաւորել Այվազեանի քարտուղարութեան պաշտօնի հետ, այլ խոնարհելով Ձեր Գերապատուութեան հրամանին առժամանակ Մայր Աթոռին ծառայելու զգացմունքով: Եթէ ես ցանկացել եմ Այվազեանցին քարտուղարութեան պաշտօնում ունենալ, մի միայն նրա համար, որ ես շատ և շատ լաւ էի ճանաչում նրա ընդունակութիւնը այդ պաշտօնում և հաւատում էի, որ Հոգևոր Կառավարութեան տխուր դրութեան հասած անկերպարան գործերի կանոնաւորումը նա միայն կարող է անել և ոչ՝ անձեռնհաս մարդիկ: Այժմ լիովին հասած եմ իմ նպատակին, հաստատութիւնը կանոնաւոր դրութեան մէջ դնելով, որը հոգեպէս բաւականութիւն է պատճառում ինձ: Այս այսպէս լինելուց յետոյ, եթէ կարողանայի այսուհետև ևս շարունակել ստանձնածս պաշտօնը, առանց դժկամելու լռիկ մնջիկ կը կատարէի բայց որովհետև անհնարին է ինձ համար, ուստի ամենախոնարհաբար աղաչում եմ ազատ կացուցանել ինձ հնարաւորելով ուղարկել տալ մի վարդապետ փոխանորդական պաշտօնով: Մեծայոյս եմ, որ Ձեր Սրբազնութիւնը յարգելով արդարացի խնդիրս, թոյլ չպէտք է տայ ինձ

458 Փաստաթուղթը կնքուած է արքունի կնիքով:

հակառակ ընտաբոյս բնաւորութեանս, չկատարելով իշխանութեանս հրամանը, պատասխանատու մնալ նրա առջև։

Մնամ ամենախոնարհ ծառայ Ձերդ Սրբազնութեան՝
Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 826, թ. 46 և շրջ., ինքնագիր:

№ - 214
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼԻՆ՝ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՈՒԱՆԵԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ՆՈՒԻՐԱԾ՝ ԿԱՐՍՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1947 *10 օգոստոսի 1911 թ.*
Էջմիածին

Երևանի Փոխ-Թեմակալին

Կարս քաղաքի հարաւային կողմում, օդաչու կայարանի մօտ, գտնուում է մի կտոր հող մօտաւորապէս 240 քառ. սաժ. տարածութեամբ, որ պատկանելիս է եղել հանգուցեալ Աղուանեան եպիսկոպոսին և անցել է նորա մահից յետոյ Մ. Աթոռին իբրև սեպհականութիւն։ Սինոդիս Տնտեսական Մասն յանձնարարում է Ձերդ Սրբազնութեան տեղեկանալ և յայտնել, թէ այդ հողը ներկայումս ո՞ւմ տիրապետութեան տակ է, իրապէս ի՞նչ տարածութիւն ունի և ի՞նչ պայմաններով է շահագործւում։

Անդամ Սինոդի՝ Մատթէոս վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 825, թ. 28, բնագիր, ձեռագիր:

№ - 215
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ԾԽԱՏԷՐ ՏԱՃԱՏ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ՝ ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՈՒԱԾ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԻՐ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1431 *31 օգոստոսի 1911 թ.*
Երևան

Սարիղամիշի ծխատէր Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանին

Թեմական ատեանը, համաձայն Կարսի Հոգևոր Կառավարութեան յայտարարութեան, հաստատել է եկեղեցու և դպրոցի կառուցման Հոգաբարձութեան անդամներ՝ Ձեզ, Ղազարոս Տէր-Խաչատրեանին, Տիգրան Քալանթարեանին, Սարգիս Մխչեանին, Սարգիս Խանամիրեանին, Գրիգոր Բազազեանին և որպէս փոխանդամներ՝ Տիգրան Բէգլարեանին և Կարապետ Մալխասեանին։

Տեղեկանալով, որ Հոգաբարձութիւնը եռանդով սկսել է իր գործունէութիւնը և արդէն վերոգրեալ նպատակի համար հանգանակել է մի որոշ գումար, առանձին բաւականութեամբ հրաւիրում եմ պատուարժան Հոգաբարձութեանը սիրով և ամենայն եռանդով շարունակել իր գործունէութիւնը: Եկեղեցու և դպրոցի կառուցման գործը Սարիղամիշի հայ համայնքի համար անհրաժեշտութիւն է: Ամեն մի հայ համայնք պարտաւոր է ունենալ վայելուչ եկեղեցի և դպրոց: Դորա մէջ նա պէտք է գտնէ իր հոգեկան մխիթարութիւնը և դորանով նա իրաւունք ունի պարծենալ թէ՛ այլ համայնքների և թէ՛ օտարների մօտ:

Օրհնելով պատուարժան Հոգաբարձութեան սկսած գործը, ես համոզուած եմ, որ Դուք Ձեր նախնիների գործերը յիշելով ջերմ սիրով շաղկապուած ի պատիւ հայութեան և մասնաւորապէս ի պատիւ Սարիղամիշի հայ համայնքի մօտիկ ապագայում կը կանգնեցնէք թէ՛ եկեղեցին և թէ՛ դպրոցը:

Յոյս ունիմ, Արժանապատիւ Հա՛յր, Դուք Ձեզ յատուկ եռանդով կը ղեկավարէք գործը և կաշխատէք որ Հոգաբարձութիւնը ժողոված գումարը անձեռնմխելի կը պահէ գործադրելու միմիայն իր նպատակի համար:

[Երևանի Թոխ-Թեմական՝ Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 113, թթ. 23-24, թողօն, ձեռագիր:

№ - 216
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ՝ ՊԵՏՐՈՍ ՈՒՄՐՈՅԻ ՊԵՏՐՈՍԵԱՆՑԻՆ ՆՈՐ ԹԻՔՆԻՁ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2372 *9 սեպտեմբերի 1911 թ.*
Կարս

Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիային
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Ներկայացնելով սրա հետ վիճակիս Նոր Թիքնիզ գիւղի ժողովրդեան համաձայնական թերթը նոյն գիւղացի Պետրոս Ումրոյեան Պետրոսեանցին իրեն համար քահանայացու ընտրելու մասին, նաև ընծայացուի ուսման և զինուորակոչութեան վկայականները, Հոգևոր կառավարութիւնս խոնարհաբար խնդրում է Թեմական Ատենիդ տնօրէնութիւնը՝ յիշեալ ընծայացուին քահանայ ձեռնադրելու համար:

Հոգևոր Կառավարութիւնս պարտք է համարում խոնարհաբար զեկուցանել, որ Նոր Թիքնիզ գիւղը բաղկացած է 84 տնից և ընտրուած

ընծայացուն իւր վարք ու բարքով և ունեցած պատրաստութեամբ արժանի է հոգևոր կոչման[459]*։*

Նախագահ կառավարութեան՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան

Անդամ՝ Վաղինակ քահանայ Ֆրոյեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 807, թ. 16, բնագիր, ձեռագիր:

№ - 217
ԱՆԻԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ -ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԳԵՕՌԽԱՆԱ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ՉԼԻՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՊՍԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 80 *30 հոկտեմբերի 1911 թ.*
Ուղուպլի

Կարսի Հայոց Հոգևոր կառավարութեան
Անուոյ գործակալից
Յայտարարութիւն

Պատիւ ունեմ յայտնելու Հոգևոր Ատենիդ, որ Գեօռխանա գիւղի ծխատէր եղիշէ քահանայ Յովհաննիսեանը[460] *յայտարարութիւնով դիմել է ինձ և խնդրել, թէ արդեօք Գեօռխանա գիւղի եկեղեցի չլինելու պատճառով կարելի է տներում պսակի խորհուրդ կատարել։ Իսկ ես իմ կողմից արգելել եմ, որովհետև հաստատապէս չգիտեմ կարելի է, թէ ոչ։ Ուստի խնդրում եմ այդ առթիւ Հոգևոր Ատենիդ պաշտօնապէս ինձ յայտնէք։*

Գործակալ՝ եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեան

Մակագրութիւն. *Ջեկուցանելով Գեր. Փոխ-թեմակալին՝ խնդրել նրա տնօրէնութիւնը*[461]*։*

Նախագահ Հոգևոր կառ. Մինաս ա. քահանայ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 623, թ. 7, բնագիր, ձեռագիր:

---

459 1912 թ. մարտի 12-ին Սինոդը կայացրել է հետևեալ որոշումը. ‹‹Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Պետրոս Պետրոսեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Նոր Թիքնիզ գիւղի համար›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 807, թ. 23):

460 Եղիշէ քահանայ Յովհաննիսեան – ծնուել է 1866 թ.: Կրթութիւնը ստացել է Երևանի Թեմական դպրոցում: Քահանայական ձեռնադրութիւնը ստացել է 1908 թ. (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

461 1911 թ. նոյեմբերի 9-ին Երևանի Փոխթեմակալ Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Կարսի Հոգևոր կառավարութեանը. ‹‹Ի հետևումն Հոգ. կառավարութեանդ սոյն նոյեմբերի 2-ի Թ. 2885 յայտարարութեան թոյլատրում եմ Գեօրխանա գիւղի մէջ գտնուած մատուռում կատարել պսակի խորհուրդներ այն պայմանով, որ առաջադրութիւնս ստանալուց յետոյ մի կիրակի օր յիշեալ մատուռում կատարուի պղծեալ տաճարի արարողութիւնը›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 623, թ. 8):

№ - 218
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ԳԵՕՌԽԱՆԱ ԳԻՒՂԻ ՄԱՏՈՒՌՈՒՄ ՊՍԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻԻՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2885 *2 նոյեմբերի 1911 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական Թեմի Փոխ-Թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից Յայտարարութիւն

Ներկայացնելով սրա հետ Անուղ գործակալի անցեալ հոկտեմբերի N80 յայտարարութիւնը ի տնօրէնութիւն Ձերդ Գերապատուութեան[462], Հոգևոր կառավարութիւնս պարտք է համարում խոնարհաբար զեկուցանել նախ՝ որ Գեօռխանա գիւղը գտնւում է մեկուսացած շրջակայ հայաբնակ գիւղերից, իսկ ձմրան եղանակին յաճախ ընդհատւում է հաղորդակցութիւնը միւս գիւղերի հետ, և երկրորդ՝ այդ գիւղը ունի հնաւուրց մի եկեղեցու տեղի վերայ մի մատուռ, ուր գտնւում է մի խաչքար, որը ուխտատեղի է տեղական ժողովուրդների համար: Ուստի Հոգևոր կառավարութիւնս խոնարհաբար խնդրում է թոյլատրել պսակի խորհուրդը կատարել յիշեալ մատուռում մինչև տեղական եկեղեցու վերաշինութեան աւարտուելը, որ առաջիկայ 1912 թ. ամառը անշուշտ վերջանալու է և որի շինութեան թոյլտուութիւնը ստացուած է արդէն Կոնսիստորիայի տարւոյս օգոստոսի 25-ի N6453 հրամանագրութեամբ[463]:

Նախագահ կառավարութեան՝ Մինաս աւագ քահանայ Տէր- Պետրոսեան
Անդամներ՝ Վաղինակ քահանայ Ֆրոյեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 623, թ. 6 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 219
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 3242 *24 դեկտեմբերի 1911 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական Թեմի Փոխ-Թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին

[462] Տես թիւ 217 փաստաթուղթը:

[463] Տես նաև թիւ 461 ծանօթագրութիւնը:

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Կառավարութեանս Նախագահ արժանապատիւ Տ. Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանը տարւոյս հոկտեմբերի սկզբներում քաղաքիս «Ջխուր Մահալա» կոչուած թաղի իւր մի ծխականի կողմից հրաւիրւում է օրինակատարութեան: Դիշեր ժամանակ մէն-մենակ տուն վերադառնալիս պատահաբար ընկնում է մի փոսի մէջ: Պատահած մարդկանց օգնութեամբ կառքով հազիւ հազ հասնելով տուն՝ մատնւում է անկողնու մինչև նոյեմբերի սկիզբները: Այդ ժամանակուայ ընթացքում կառավարութիւնս ընթացք էր տալիս գործերին նորա գիտութեամբ և ստորագրութեամբ: Այնուհետև՝ մի փոքր կազդուրուելուց անմիջապէս յետոյ գնաց նա կաղզուան պաշտօնական գործերով: Վերադառնալուց մի օր յետոյ լուրջ հիւանդութիւն ստացաւ: Բժիշկների խորհրդով ամսիս 8-ին գնաց Տփխիս ուր և բժշկւում է մինչև ցայժմ:

Այս մասին Հոգևոր Կառավարութիւնս պարտք է համարում խոնարհաբար զեկուցանել Ձերդ Սրբազնութեանն ի տեղեկութիւն:

Անդամներ Կառավարութեան՝
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Յ. Այվազեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 124, թ. 3 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 220
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ- ՄԻՆԱՍԵԱՆՑԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻՆ՝ Ս. ՊԱՏԱՐԱԳՆԵՐԸ ՊԱՏՇԱՃ ՁԵՒՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՊԻՐ ՎԱՐՁԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

9 մայիսի 1914 թ.
Ս. Էջմիածին

Ս. էջմիածնի Ս. Սինոդին
Անուայ վանահայր Միքայել վարդապետից
Յայտարարութիւն

Վերջին տարիներում, երբ Պ. Մառի շնորհիւ Անւոյ աւերակները պեղուեցան, առաւել հետաքրքիր դարձան, որի պատճառով էլ զանազան կողմերից հետաքրքիր թէ՛ Եւրոպացի և թէ՛ հայ այցելուներ են տեղում, տեսնելու այդ հնադարեան յուշարձանները և պեղումները: Իմ կարեաց չափով վանահայրութեանս ընթացքում աշխատել եմ ամեն կերպ դիւրութիւններ ստեղծել այցելուների համար, պատրաստելով թէ բնակութեան, կամաւորութեան և թէ ուտեստի յարմարութիւններ, վարձել եմ կարևոր թուով ծառաներ՝ փոքրիկ տնտեսութիւնը կառավարելու համար:

Հայ այցելուները շատ անգամ խնդրում են ինձ ս. պատարագ մատուցանելու, որը կատարում եմ առանց դպրի և պատշաճ ձևականութեան, սակայն չունենալով դպիր՝ մեծ նեղութիւն եմ կրում: Այդ հանգամանքը ի նկատի առնելով՝ անցեալ ապրիլ ամսից վարձեցի ժամանակաւորապէս յայջեցի Ղազար քահանայի որդի Յակովբին, որը բոլորովին վարժ է դպրութեան մէջ, ամսական 10 ռ. ռոճկով:

Խոնարհաբար խնդրում եմ Ս. Սինոդիդ տնօրէնութիւնը, ի նկատի առնելով վերոգրեալ հարկեցուցիչ հանգամանքները, թոյլ տալ վարձելու յիշեալ Յակովբին դպիր, և վճարելու նրա ամսական 10 ռ. ռոճիկը Կարսի Հոգևոր Կառավարութեան ձեռքով, իսկ՝ եթէ հաճելի չի լինի Ս. Սինոդիդ տարեկան վարձելու, խնդրում եմ գոնէ թոյլ տալ վարձելու սկսած ապրիլից մինչև սեպտեմբերի վերջը, երբ շարունակաբար լինում են այցելուներ և միշտ տեղի է ունենում ս. պատարագ, իսկ ես հոգալու եմ դպրի սնունդը: Յոյս ունեմ, որ Ս. Սինոդդ այցելուների կրօնական պահանջներին պատշաճ բաւարարութիւն տալու տեսակէտից՝ կբարեհաճի անելու պատշաճ կարգադրութիւն[464]*:*

Անուոյ վանահայր՝ Միքայէլ վարդապետ
Տէր-Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11485, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 221
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ- ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՏԻԳՐԱՆ ՍԷՅԼԱՆԵԱՆԻ ԴԻՆ ԿԱՐՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՑՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՒԹՈՒՄ ԹԱՂԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1278 *25 յուլիսի 1912 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան նախագահից
Յայտարարութիւն

Ի հետևումն Ձերդ Գերապատուութեան ամսիս 19-ի Թ. 851 Հոգևոր կառավարութեան ուղղած առաջադրութեան, պարտք եմ համարում խոնարհաբար զեկուցանել հետևեալը.

---

[464] 1912 թ. յուլիսի 6-ին Սինոդը կայացրեց հետևեալ որոշումը. «Անուոյ վանահօր միջնորդութիւնը, դպրի համար դրամ յատկացնելու մասին, թողնել առանց հետևանքի, որի մասին յայտնել վանահօրը Երևանի Կոնսիստորիայի միջոցով» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11485, թ. 2):

Ամսիս 14-ի երեկոյեան, մօտաւորապէս ժամը 8 ½ -ին անյայտ չարագործների ձեռքով սպանուեց 1-ին կարգի վաճառական Տիգրան Սէյլանեանցը։ Երեք օրից յետոյ՝ ամսիս 17-ին տեղիս հայ հասարակութեան որոշ մասը առանձին խնդրագրով դիմելով ինձ՝ որպէս Հոգևոր իշխանութեան ներկայացուցչի, խնդրեց միջնորդել պատշաճաւոր իշխանութեան առաջ, որպէս զի թոյլատրուի հանգուցեալին, որ հասարակութեան համակրանքը վայելող և պատուաւոր անդամներից էր, թաղուի նորակառոյց եկեղեցու գաւթում։ Ինչպէս հասարակութիւնը՝ նոյնպէս ինքս ակնկալում էինք և հաւատացած, որ հանգուցեալի ժառանգները չանձն կառնեն եկեղեցու շինութեան գործին աւարտ տալ և այլ բարեգործական նպատակներով նուիրատուութիւններ անել։

Ի նկատ ունենալով գործի շտապողական դրութիւնը և այն հանգամանքը, որ Ձերդ Գերապատուութիւնը կարող էր Երևանում չգտնուել և որ այդպիսի գործի լուծումը վերապահուած է միմիայն Ազգիս Վեհափառ Հայրապետին, համարձակուեցի անմիջապէս դիմել առ այս Նորին Ս. Օծութեան հեռագրով, հետևեալ բովանդակութեամբ.

«Эчмиадзин, Его Святейшеству Верховному Патриарх Католикосу Всех Армян. *14*-ого убит известный почетный член общества Тигран Сейланян. Карсское Армянское обшество обратилось ко мне письменной просбой ходатействовать пред Вашим Святейшеством о разрешение погребения ограде местной новостроющейся церкови. Находя просьбу общества достойной, осмеливаюсь подвергнуть оную к стоком Вашего Святейшества, всепокорнейше прося милостивого распоряжения».

Վեհափառից մինչև այժմ որևէ կարգադրութիւն չէ ստացուել։ Ստացուել է Ձերդ Սրբազնութեան հեռագրական հրահանգը, ամսիս 19-ի առաւօտեան ժամը 11 ½ -ին, երբ արդէն ժառանգների որոշմամբ հանգուցեալի յուղարկաւորութիւնն էր կատարւում դէպի տեղական հայոց հասարակութեան գերեզմանատունը, ուր և թաղուեց։

Աւելորդ չեմ համարում զեկուցանել նաև, որ հանգուցեալի ժառանգները՝ որպէս երևաց ծխատէր քահանայի դամբանականից՝ յատկացրել են զանազան բարեգործական նպատակների համար 25 հազար րուբլի, որպիսի գումարից միայն 1000 րուբլի տեղիս եկեղեցու շինութեան և 1000 րուբլի ծխական ուսումնարանի օգտին։

Նախագահ Կառավարութեան՝ Մինաս աւագ քահանայ
Տէր-Պետրոսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 141, թթ. 1-2, բնագիր, ձեռագիր:

№ - 222
ԿԱՐՍԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՔԱՀԱՆԱՆԵՐ ԱՌԱՔԵԼ ՏԷՐ-ԱՌԱՔԵԼԵԱՆԻՆ ԵՒ ԴԻՈՆԷՍԻՈՍ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

20 օգոստոսի 1912 թ.
Կարս

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Կաթողիկոսի
Ամենայն Հայոց
Կարսի հայ հասարակութիւնից
Ամենախոնարհ խնդիր

Վեհափառ Տէ՛ր,

Կարսի Հայոց Ս. Նշան եկեղեցւոյ քահանաներից Տէր Առաքել Տ. Առաքելեան և Տէր Դիոնէսիոս Տ. Մինասեան 1903-ի Հայ եկեղեց. կալուածոց գրաւման թուականին կալանաւորուեցին մաս մը ժողովրդեան հետ, որպէս ընդդիմացողներ, և քանհինգ ամիս բանտում տանջուելուց յետոյ՝ Ողորմած Կայսեր Բարձրագոյն Ներման արժանանալով՝ ազատ արձակուեցան:

Որովհետև չիշեալ քահանայք, ընդդէմ եկեղեցական օրինաց, ոչնչով չէին մեղանչել, իսկոյն դիմեցին երջանկայիշատակ Խրիմեան Հայրիկին, որ և խնդիրը յանձնեց Ս. Սինոդի քննութեան: Սինոդը՝ ինչպէս երևում է իր արձանագրութիւնից, նկատելով որ քահանաների կալանաւորումը արդիւնք էր եկեղ. կալուածոց գրաւման, և արդէն այդպիսիք արժանացած են Կայսերական Բարձրագոյն Ներման. այս մտօք արձանագրութիւն թողելով, տնօրէնութիւնը յանձնած է Կաթողիկոսական Դիւանատան, որ և մնացել է առանց վերջնական լուծման:

Ահա շուրջ երեք տարի է, քահանայագործելու իրաւունքից զրկուած են իրենց կարգակից եկեղեցական եղբայրներից օրինապահութեան պատրուակով, չունենալով ապրելու այլ միջոց կամ արհեստ, թշուառ դրութեան մէջ կը գտնուին բազմանդամ գերդաստանօք:

Արդ, Վեհափառ Տէ՛ր, պատեհ ժամանակ հասած համարելով՝ խոնարհաբար խնդրում և աղաչում եմք Սրբութեանդ, որ ողորմածաբար բարեհաճէք ընթացք տալ սոյն քահանաների գործին և տնօրինել զարժանն[465]*:*

Կը մաղթեմք ի համբոյր Սուրբ Աջոյդ՝
Մնալով խոնարհ որդիք Վեհափառութեանդ

1. Սիմէօն Ալոյեանց 2-րդ կարգի վաճառական
2. Գրիգոր Բարբարեանց
3. Յարութիւն Խալաթեանց[466]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 291, թթ. 1-5 շրջ., բնագիր, ձեռագիր:

---

[465] Տես թիւ 415 ծանօթագրութիւնը:

[466] Հետևում է ևս 556 անձի ստորագրութիւն:

№ - 223
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՅՈՐԵՐԱՆ ԳԻՒՂԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԻՐԵՆՑ ԾԽԱՏԵՐ ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 օգոստոսի 1912 թ.
Յորերան

Կարսի Հայոց Հոգևոր կառավարութեան
Բասենի-Շատվանի Գործակալութեան
Յորերան գիւղի հայ հասարակութեան կողմից
Խնդիրք

Աչքի առաջ ունենալով մեր գիւղի ծխատէր Գէորգ քահանայ Աբրահամեանի քահանայական անշեղ գործունէութիւնը սոյն խնդիրքով դիմում ենք հոգևոր ատենիդ դրուատելով նրա արժանաւորութիւնքը, հասարակական սոյն արդարացի պահանջին լուծումն խնդրելու Հոգևոր Կառավարութենէդ։

Տէր Գէորգ քահանան իւր 15 ամեայ քահանայական ասպարէզում հովուել է մեզ «Հովիւ քաջ հովիւ բարի» սկզբունքով նա իւր հեղինակութեամբ աշխատել է գիւղումս ծագած բանակռիւ, վէճ, տարաձայնութիւնք, բամբասանքների կողմնակցութեան և այլն վերջ տալու։

Նա իւր խաղաղասէր բնաւորութեամբ յորդորել, համոզել, խրատել և խաղաղութիւն է հաստատել գիւղիս հասարակութեան մէջ։ Հաշտեցրել է անհաշտ մտքերը, անհաշտ թշնամութիւնքը և անհաշտ ատելութիւնքը, որոնք յաճախ ծնունդ են առնում գիւղական մթնոլորտում։ Տէր Գէորգ քահանան տիպար պէտք է համարել բարոյականութեան, անձնանուիրութեան յօգուտ հասարակական անդուլ ջանքի։

Նա իւր վարմունքով և խրատական լեզուով համոզում, խրատում է իւր ծխի անհատներին, հեռի մնալ ատելութիւնից, թշնամանքից և այլն։

Նա անշեղ կատարում է իւր վրայ տրուած քահանայական պարտականութիւնքը, և մենք բաղդաւոր ենք համարում մեզ, որ ունենք արժանաւոր քահանայ իւր բոլոր արժանիքներով։ Հոգևոր կառավարութեանդ քաջ յայտնի լինելով Տէր Գէորգ քահանայի անկաշառ ուղղութիւնը, յանձնել է Շատվանի-Բասենի գործակալութիւնը. որը վարում է այդ պաշտօնը տասնեակ տարիներից աւելի, չնայելով իւր հրաժարումներին այնուամենայնիւ անսալով Հոգևոր Կառավարութեանդ հրամանին, շարունակում է վարել, և մենք հաւատացած ենք որ գոհունակութիւն պէտք է պատճառած լինի, քանի որ չենք լսած երբէք որ նա զեղծում կատարած լինէր։ Հեռու է նա զեղծումներից, և մենք լիայոյս ենք որ թէ՛ Գործակալութեան շրջանում և թէ՛ իւր կարգակից

քահանաների միջավայրում ստեղծած է ուղղութիւն։ Տէր Գէորգ քահանային ենք պարտական որ գիւղումս մի հին շինութեան տեղ (կարծեօք հնումն եկեղեցի) շինել և ծածկել տուեց ուսումնարանի ծառայելու համար, մի առ ժամանակ մինչև նոր ուսումնարանի կառուցումն։ Տէր Գէորգ քահանայի գլուխ գործոցն է գիւղիս նորակառոյց եկեղեցին, մի մեծ հոյակապ սրբատաշ շինութիւն, որը գլուխ եկաւ կարճ ժամանակի ընթացքում, այն է 2 ½ տարում Գէորգ քահանայի անդուլ ջանքերով, հասարակութեան աշխատութեամբ։ Սոյն եկեղեցին բարոյական նախանձ կարող է զարթեցնել եկեղեցազուրկ համայնքներում և վայրերում։ Ջնայելով որ փոքր գիւղիս (60 տուն) հասարակական միջոցները չէին ներէ երբէք, այդքան նիւթական զոհաբերութիւն մի այդպիսի հսկայական շինութիւն կառուցանելու միապաղաղ քարեայ սիւներով՝ քարուկրեայ-կամարակապ, և չնայելով որ լրագրութեան միջոցաւ դիմումն արինք հայ հասարակութեան օժանդակելու մեր ձեռնարկած գործին, բայց ոչ մի տեղից չստանալով օգնութիւն (ի բաց առեալ մի քանի գիւղորէից մանր նուիրատուութիւնքը) այնու ամենայնիւ, չյուսահատուեց քահանան, չյուսահատուեցինք և մենք, այլ աւելի եռանդուն կերպով Գէորգ քահանան նուիրուեց գործին, և նրա յորդորներին ենք պարտական որ հիմայ կանգնած է Յոբերան գիւղում մի գեղեցիկ և հսկայ շինութիւն, որը միակն է ամբողջ Բասենի գիւղորէից եկեղեցիների մէջ. և եթէ չենք սխալւում կարող է մրցել իւր գեղեցկութեամբ, մեծութեամբ և հոյակապութեամբ ամբողջ Կարսի շրջանի նորաշէն գիւղական եկեղեցիների դէմ, և որի օծումը կատարուելու է մօտ օրերումս։ Այս ամենը աչքի առաջ ունենալով սոյն խնդիրքով դիմում ենք Հոգևոր Ատենիդ, որպէսզի միջնորդ հանդիսանաք Թեմիս Ս. Առաջնորդ Փոխ-Թեմակալին Գերապատիւ Տէր Խորէն եպիսկոպոսի առաջ և Երևանի Կոնսիստորիայում վարձատրելու գիւղիս ծխատէր Տէր Գէորգ քահանայ Աբրահամեանին քահանայական մի նուիրատուութեամբ կամ մի խաչիւ իւր վերոգրեալ բարեմասնութեամց համար՝ ի մխիթարութիւն և քաջալերութիւն քահանային և յուրախութիւն մեզ։

Այսու մենք խոնարհ ծառայք Հոգևոր Ատենիդ ակնապիշ սպասելով Հոգևոր իշխանութեան տնօրէնութեան[467]*։*

1. *Մխիթար Յովակով*
2. *Յարութ Մկրտիչով*
3. *Պետրոս Մատոյեան*[468]

---

467 Տես թիւ 524 ծանօթագրութիւնը:

468 Հետևում է ևս 52 անձի ստորագրութիւն:

№ - 224
ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 36 *14 սեպտեմբերի 1912 թ.*
Երևան

Նորին Սրբազնութեան Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի
Քննիչ Արտակ վարդապետից[469]
Յայտարարութիւն

Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիայի տարւոյս օգոստոսի 8-ի Թ. 5401 առաջադրութեան համաձայն նշանակուած լինելով քննիչ Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան և վիճակի համար, առիթից օգտուելով Ձերդ Սրբազնութեան պատուէրի համաձայն, ճանապարհորդութեանս ժամանակ այցելեցի նաև ճանապարհիս վերայ գտնուած ծխական դպրոցները, հրաւիրեցի հոգաբարձուներին և հարկաւոր տեղեկութիւններն ստացայ նոյն դպրոցների առաջիկայ 1912/13 ուսում. տարուայ համար: Այդ դպրոցների վերաբերեալ հաւաքածս տեղեկութիւնները խոնարհաբար ներկայացնում եմ Ձերդ Սրբազնութեան ի գիտութիւն և ի տնօրէնութիւն:

Ա. Կարսի Հայոց ծխական երկդասեան դպրոց: Դպրոցի նորընտիր Հոգաբարձութիւնը սկսել է արդէն իւր գործունէութիւնը, ուսուցչական խումբն արդէն կազմուած և դասերն սկսուած են կանոնաւոր կերպով: Որովհետև նորընտիր Հոգաբարձութիւնը ուշ էր ստանձնել իւր պաշտօնը, ուստի ուսումնարանի շինութեան վերայ կատարուելիք նորոգութիւնները պատճառ եղան, որ ուսումն սկսուեց ոչ թէ սեպտեմբերի 1-ին, այլ՝ մի 6-7 օր ուշ:

Հոգաբարձութեան մէջ ծագած տարաձայնութիւններն արդէն հարթուած են: Մանաւանդ, երբ Ձերդ Սրբազնութիւնը հեռագրել էր, թէ Հոգաբարձութեան որոշումը՝ երկու հին հոգաբարձուների մաս-

469 Արտակ վարդապետ Սմբատեան – Յետագայում՝ եպիսկոպոս: Ծնուել է 1876 թ. մարտի 19-ին: Սովորել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, Գէորգեան ճեմարանում, Դորպարտի համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտետում: 1902 թ. ձեռնադրուել է աբեղայ, 1903 թ.-ն ստացել է մասնաւոր վարդապետութեան աստիճանները: Երկար տարիներ Մայր Աթոռում վարել է գանձապահի, վանական կառավարութեան և վերանորոգման յանձնաժողովի անդամի և այլ պաշտօններ: 1910-1913 թթ. եղել է Նոր-Բայազէտի գործակալ, 1914 թ. նշանակուել է Ալեքսանդրապոլի վիճակի փոխանորդ, իսկ 1920 թ.՝ Շիրակի թեմի առաջնորդ: 1922 թ. արժանացել է եպիսկոպոսական աստիճանի: Այնուհետև՝ 1922 թ. Սիւնեաց, 1927 թ. նորից Շիրակի, 1930-1932 թթ՝ վիրահայոց թեմերի առաջնորդ: 1932 թ. վերադառնալով Էջմիածին, ընտրուել է Գերագոյն հոգևոր խորհրդի անդամ, 1937 թ. նշանակուել Մայր աթոռի դիւանապետ: 1937 թ. ապրիլի 13-ին ձերբակալուել է և եռեակի որոշմամբ գնդակահարուել 1937 թ. սեպտեմբերի 2-ի լոյս 3-ի գիշերը: (ՀԱԱ, ֆ. 312, ց. 2, գ. 1341, թթ. 2, 8):

նակցութեան համար գտնում ենք ցանկալի և արդարացի, այն ժամանակ Պ. Ջամբազեանն էլ եկել էր իւր հրաժարականը յետ վերցրել և այդպիսով տարաձայնութեանը վերջ դրել: Եւ այժմ ամբողջ հոգաբարձական կազմը սիրով և համերաշխութեամբ գործում է:

Նորընտիր Հոգաբարձութեան անդամները որոշել են և իրենց առաջին նիստերի նիւթ դարձրել ուսուցչական կազմի անփոփոխ պահելը ամեն տարի, ի բացառեալ այն դէպքերը, երբ փաստացի կհաստատուի, որ ուսուցիչը իւր կոչման բարձրութեան վերայ չէ կանգնած: Բացի այդ որոշել են ճիշտ կերպով ուսուցիչների ռոճիկը վճարել ամէն ամիս, որոշ օր. դրամ չեղած ժամանակ բանկից պարտք վերցնելով և յետոյ շիջելով:

Աւագ ուսուցչի խնդրում, Պ. Նոհրատեանը[470] *յայտնեց որ «Հոգաբարձութիւնը շատ կորրեկտ է վարուել: Ամէն մարդ սխալական է: Աւագ ուսուցիչը բանկային գործի վերաբերմամբ իւր պատիժը քաշել է և այժմ դպրոցական գործը տանում է շատ սիրով և խաղաղութեամբ, և յոյս կայ, որ ուսումնական տարին առանց խլրտումների կանցնի: Ուստի լրագրութեան մէջ գրածներին շատ հաւատք չպէտք է ընծայել, դրանք ջուրը պղտորելու համար են միայն»:*

Հոգաբարձութիւնը դպրոցի վերին յարկը յարմարեցնում է քրեհով տալու փոխ-ինայողական գանձարանի վարչութեանը, որից յոյս ունի և վճռել է պարտք վերցնել և թէ՛ խանութների վերին յարկը շինել և թէ՛ դպրոցական շէնքի երկու թևերը շարունակել: Հոգաբարձութիւնը յոյս ունի դրանից յետոյ քրեհով տալ նաև նոյն շէնքի ստորին յարկը: Այս դէպքում խոստանում են Հոգաբարձութեան համար ևս սենեակներ յատկացնել:

Հոգաբարձութիւնը վճռել է մօտիկ ապագայում ծխական ժողով հրաւիրել և յոյս ունի յաջողեցնելու և ծխական տուրք նշանակելու մինչև 10.000 ռ. որը երեք տարի շարունակ պիտի անձեռնմխելի մնայ և դպրոցի անուամբ մի անշարժ կալուածք պիտի առնուի:

Նորընտիր Հոգաբարձութիւնը արդէն կազմել է 1912/13 ուսում. տարւոյ նախահաշիւը, որից երևում է, որ ելքն աւելանում է մուտքից 3000 ռուբլով, որի մի մասը հին Հոգաբարձութիւնը թողել է իբրև պարտք: Հոգաբարձութիւնը ջանք պէտք է գործ դնի այդ պակասը մի կերպ ծածկելու: Սորա հետ ներկայացնում եմ դպրոցի նախահաշիւը Զերդ Սրբազնութեանը:

Բ. Օլթիի միդասեան ծխական դպրոց:

---

[470] Համազասպ Նոհրատեանի մասին է: 1892-ից Բաթում-Կարս շրջանի դաշնակցական գործիչ: Նա եղել է Կարսի ծխական դպրոցի ուսուցիչ, Կարսի Կենտրոնական Կոմիտէի անդամ, Կարսի քաղաքագլուխ: Նա գերի ընկաւ և տանջամահ արուեց (նետեցին հորը): Եղիշէ Չարենցի «Երկիր Նաիրի» վէպի գլխաւոր հերոսի նախատիպը հանդիսացել է հէնց Նոհրատեանը (Մազութի Համոն):

Օլթիի դպրոցն ունի իւր սեպհական շէնքը, չորս մեծ լուսաւոր, բարձր սենեակներից և մի միջանցքից բաղկացած, շինուած քար ու կրով սրբատաշ քարից: Աւագ ուսուցիչն արդէն Օլթիումն է, երկրորդական առարկաների համար պակաս էր մի ուսուցիչ, որի համար և դիմել էր Հոգաբարձութիւնը թեմական տեսուչ Պ. Թ. Խզմալեանին[471]: Դպրոցի նիւթականը մի քիչ սուղ է, որովհետև արդիւնքի առանձին աղբիւր չունի: Աշակերտների թիւը հասնում է մօտաւորապէս 100-ի: Ծխական տուրք է նշանակուած մօտ 700 ռուբլի, սակայն տարուայ ընթացքում հազիւ կարողանում է հաւաքել Հոգաբարձութիւնը 4-5 հարիւր ռուբլի: Չնայած, որ Բարեգործական Ընկերութիւնից էլ նպաստ է ստացւում 200 ռուբլի, բայց և այնպէս դպրոցական տարին փակւում է միշտ դիֆիցիտով:

Օլթեցի Յարութիւն Թազաֆեանը վախճանուելով իւր տան կէսը կտակով նուիրել է դպրոցին, իսկ միւս կէսը իւր որդուն: Այդ տանից Հոգաբարձութիւնը առաջիկայ յունուարից կստանայ քիչը 200 ռուբլի արդիւնք: Հետևապէս այդ արդիւնքը դպրոցի համար կլինի իբրև մշտական աղբիւր: Հոգաբարձութիւնը կազմել [է] 1912/13 ուս. տարուայ նախահաշիւը, որը ներկայացնում եմ Գերապատուութեանդ ի գիտութիւն և ի տնօրէնութիւն:

Գ. Արդահանի միդասեան ծխական դպրոց[472]:

Արդահանի ծխ. դպրոցի ուսուցչական մարմինը օգոստոսի վերջին արդէն իւր պաշտօնավարումն էր և սեպտեմբ. 1-ից պէտք է կանոնաւոր դասատուութիւն սկսուէր: Դպրոցը սեպհական շէնք չունի, վարձովի տան մէջ են զետեղուած դասարանները:

Հոգաբարձութիւնը անցեալ ուսումնական տարին փակել է առանց պարտքի և 1912/13 ուս. տարւայ նախահաշիւն արդէն կազմել է, որը խոնարհաբար ներկայացնում եմ Սրբազնութեանը ի գիտութիւն և ի տնօրէնութիւն:

Դպրոցը մշտական արդիւնքի աղբիւր չունի, սակայն յոյս ունի հետևեալ եղանակով յօգուտ դպրոցի կալուածքներ շահելու: Թիֆլիզեցի հարուստ Պ. Արշակ Մելովը Քուռ գետի ափին, Արդահանում ունի մի յարկանի շէնք, ուր այժմ զետեղուած է զօրքի հիւանդանոցը: Ախալցխացի Պ. Սուրէն Մութաֆեանն էլ ունի մի բաղանիք: Մութաֆեանը խոստացել է Հոգաբարձութեանը իւր բաղանիքի շէնքը նուիրել դպրոցին այն ժամանակ, եթէ Պ. Մելովն էլ զինուորական հիւանդանոցին յատկացրած իւր շինութիւնը նուիրէ դպրոցին: Պ. Մելովի

---

471 ԽզմալեանԹադէոս Դաւթի (1869-1918) – մանկավարժ, աւարտել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, եղել է Ալեքսանդրապոլի, Երևանի, Թիֆլիսի դպրոցների տեսուչ, հեղինակ մի շարք դասագրքերի:

472 Արդահանի արական եկեղեցական-ծխական դպրոցը բացուել է 1887 թ. նոյեմբերի 1-ին և հաստատուել է կաթողիկոսի՝ 1888 մարտի 23-ի կոնդակով (ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 46, թ. 4 և շրջ.):

համար, որ կարողութեան տէր է և Արդահանում մի քանի կալուածք ունի, այդպիսի մի շէնքի նուիրաբերութիւնը ծանր չպէտք է լինի։ Եւ եթէ յաջողուի, որ Պ. Մելովը և Մուրթաֆեանցը իրենց շէնքերը նուիրեն դպրոցին, այն ժամանակ ծխական դպրոցը մշտապէս ապահովուած կլինի մօտ 1000 ռուբլի արդիւնքով։

Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով, Արդահանի ծխական դպրոցի Հոգաբարձութիւնը խնդրել է ինձ յատկապէս միջնորդել Զերդ Սրբազնութեան առաջ, որ Գերապատուութիւնդ անձնական ծանօթութեան միջոցով և կամ Հ. Առաքելեանի[473] կամ Քալանթարի[474] միջոցով ազդէք և համոզէք Պ. Մելովին, իւր Արդահանի վերոգրեալ շինութիւնը նուիրաբերէ ծխական դպրոցին։ Նրա նուիրաբերութիւնը առիթ պիտի լինի, որ ուրիշները ևս կալուածքներ ընծայեն և այդպիսով դպրոցն ապահովեն։

Այս խնդրի վերայ Հոգաբարձութիւնը Զերդ Սրբազնութեան բարեհաճ ուշադրութիւնն էր հրաւիրում։

Դ. Սարիղամիշի միդասեան ծխական դպրոց։

Այս դպրոցը սեպհական շէնք չունի[475]։ Աւագ ուսուցչի համար Հոգաբարձութիւնը դիմել էր Պ. Թ. Խզմալեանին։ Նախահաշիւը դեռ կազմուած չէր, սպասում էին աւագի գալուն։ Միւս երկու վարժուհիներն արդէն այնտեղ էին և սկսել էին աշակերտների ընդունելութիւնը Հոգաբարձութեան հետ։ Հոգաբարձութիւնն ունի մօտ 450 ռուբլի պարտք։ Դրա պատճառը այն է, որ տարուայ երկրորդ կէսին բաւական թուով աշակերտներ են դուրս գնում թոշակ չկարողանալով վճարել։ Սակայն Հոգաբարձութիւնը մտածել էր այդ էլ ծխական տուրքի մէջ ձգել և յոյս ունէին, որ ամբողջը կհաւաքին։ Առաջիկայ տարուայ նախահաշիւը մօտաւորապէս պէտք է կազմուի այսպէս. թոշակներից – 600 ռ. եկեղեցաց 300 ռ., կամաւոր տուրք – 400 ռ., Աւետիսից – 150 ռ., այլ նուէրներ - 150 ռ., պրոֆիկատորից – 60 ռ.։ Ներկայացումներից չնչին արդիւնք է մնում, որովհետև պրոֆեկատորի գոյութիւնը խանգարում է։ Ելք սպասւում է՝ աւագ ուսուցչին՝ 450, առանց սենեակի, 2 վարժուհուն՝ 800 ռուբլի, սենեակով, ուսումնարանի վարձ՝ 300 ռ., ծառայի՝ 120 ռ., վառելիքի՝ 90 ռ.։

---

473 Առաքելեան Համբարձում Աստուածատուրի – Ծնուել է 1855 թ. Շուշիում – սպանուել է 1918 թ. Թիֆլիսում, հասարակական- քաղաքականգործիչ, հրապարակախօս, գրող: Սովորել է Շուշիում, Թաւրիզում, Բաքուում, Մոսկուայում: 1892թ. ապրել է Թիֆլիսում, աշխատակցել, իսկ 1908 թուականից խմբագրել է ‹‹Մշակ››-ը: 1906 թ. գործուն մասնակցութիւն է ունեցել Մայր Աթոռում գումարուած Կենտրոնական ժողովին::

474 Հաւանաբար խօսքը հայ անասնաբոյծ, խմբագիր, հասարակական-քաղաքական և գրական գործիչ, Անդրկովկասում անասնաբուծութեան գիտութեան հիմնադիր Ալեքսանդր Քալանթարի մասին է:

475 1913-1914 ուսումնական տարում դպրոցն արդէն ունէր սեփական շէնք և գրադարան (ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ.)

Չնայած, որ այժմ Հոգաբարձութիւնը այդպիսի դրութեան մէջ էր, բայց Սարիղամիշի հայերը բաւական ունևոր են, և Հոգաբարձութիւնը յոյս ունի ոչ մի կոպէկ պարտք չթողնել։

Բացի այդ, Հոգաբարձութիւնը աչքի առաջ ունենալով, որ անցեալ տարուայ աւարտածները ցանկանում են շարունակել իրենց ուսումն մի տարի ևս, ուստի խնդրում էին խոնարհաբար Ջերդ Սրբազնութիւնից մի տարով միայն օգնութիւն – մի ուսուցչի ռոճիկ գտնելու Ե. բաժանմունքի ուսուցչի համար, և յաջողութեան դէպքում ուսուցչին ևս ուղարկելու բարեհաճութիւնն ունենալ։ Եթէ մի տարի յաջողութիւն լինի դրսից նպաստ ստանալու, յաջորդ տարին Հոգաբարձութիւնը յոյս ունի ծխական տուրքով լրացնելու։

Ե. Կաղզուանի երկդասեան դպրոցը։

Կաղզուանի ծխական դպրոցը գտայ շատ ողբալի դրութեան մէջ։ Հոգաբարձութեան և ծխականների միջև տարաձայնութիւններ էին ծագել եկեղեցապատկան գումարների նկատմամբ և հասարակութեան որոշ մասը ծխական ժողով կազմելով Յանձնաժողով էր ընտրել քննելու թէ՛ Հոգաբարձութեան և թէ՛ երեցփոխի հաշիւները։ Յանձնաժողովը երկուսի հաշիւների մէջ էլ զեղծումներ էր գտել և սեպտեմբերի 2-ին կազմած ծխական ժողովին ներկայացրել։ Ծխական ժողովն էլ լսելով Յանձնաժողովի արձանագրութիւնները և զեկուցումը – եզրակացութիւնը, անմիջապէս լուծուած է համարում ամբողջ Հոգաբարձական կազմը և արձակուած երեցփոխին։ Կատարւում է նոր ընտրութիւն Հոգաբարձական կազմի, իսկ երեցփոխանի հաշիւները քննելուց յետոյ ես որոշ զեղծումներ և անփութութիւն գտնելով նրա պաշտօնավարութեան մէջ, իրաւունք տուի գործակալին ծխական ժողով հրաւիրել ամսոյս 9-ին և նորն ընտրել։

Երկու օր մնալով Կաղզուանում երկու անգամ ներս հրաւիրեցի Հոգաբարձական հին և նոր կազմին, թէ վերոգրեալ տարաձայնութիւնների և թէ դպրոցի մասին տեղեկութիւններ ստանալու համար։

Յաւալի էր տեսնել, որ սեպտեմբերն արդէն թևակոխել էր, պետական բոլոր դպրոցներում սեպտ. 1-ից կանոնաւոր դասատուութիւն էր սկսուել, իսկ Կաղզուանի հայոց ծխական դպրոցը ոչ միայն ուսուցչական կազմ չունէր, որովհետև նախկին Հոգաբարձութիւնը ամբողջ կազմը արձակել էր, այլև դպրոցի շէնքի մէջ հարկաւոր նորոգութիւնը չէր կատարուած։ Իմ յորդորանօք նոր Հոգաբարձութիւնը անմիջապէս ստանալով հին կազմից հաշիւները, սկսել էր թեթև նորոգութիւն կատարել, մինչև աւագ ուսուցչի գալը, որի համար Հոգաբարձուներից մէկն էլ գնաց Կարս Եղիկեան ազգանուամբ մի ուսուցչի հետ աւագի պաշտօնի համար պայմանաւորուելու։ Վերջինս յանձն էր առել աւագ ուսուցչի պաշտօնը և ուսուցչական մարմինը կազմելու հետևից էր, երբ ես Կաղզուանից Կարս վերադառնալով իրեն հետ տեսակցեցի և

խնդրեցի որքան հնարաւոր է շուտ կազմել և գնալ Կաղզուան։ Յոյս կար մինչև առաջիկայ կիւրակի վերջացնել ուսուցչական խմբի կազմելու գործը և դասատուութիւնը սկսել։

Անցեալ տարուայ աւագ ուսուցչի արձակման պատճառը եղել է այն, որ աւագը շարունակ նախատելիս է եղել Հոգաբարձութեան անդամներին, որոնք գիշերները կլուբում թղթախաղութեամբ անցնելուց յետոյ գալիս էին դասը լսելու և դասի ժամանակ քնում էին, դպրոցի վերայ բոլորովին ուշք չէին դարձնում և այլն։ Այդ բանից ստիպուած՝ Հոգաբարձութիւնը դեռ տարեկան ակտը չվերջացրած որոշում է աւագ ուսուցչին անպատճառ արձակել։ Առ հասարակ ամբողջ տարին անցել է շատ աղմկալից կերպով, ինչպէս պատմում էին։

Իսկ Հոգաբարձութեան և ծխական ժողովի միջև ծագած տարաձայնութեանց վերաբերութեամբ խոնարհաբար ներկայացնում եմ Սրբազնութեանդ առանձին կարծիքս ի գիտութիւն։

Պարտք եմ համարում խոնարհաբար աւելացնել, որ Կաղզուանի եկեղեցին ունի 500 ռուբլու մի գումար, որի շուրջն է ծագել վերոգրեալ տարաձայնութիւնները, որովհետև մուրհակներով Հոգաբարձութիւնը փող է տուել, ժամանակն անցել է մուրհակները չեն նորոգել, տոկոսներ չեն ստացել ժամանակին, որովհետև այդ պարտապանների մէջ իրենք Հոգաբարձուները ևս գտնւում են։ Դուրս է գալիս, որ միմեանց շահերն են պաշտպանել։

Ուստի խոնարհաբար խնդրում եմ հրամայել նոր Հոգաբարձական կազմին, գանձել բոլոր մուրհակներով գումարները և ձգել գանձարան, մինչև կալուածքի գնելը զեկուցանելով Ձերդ Սրբազնութեանը։

Քննիչ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 388, թթ. 1-4 շրջ., ինքնագիր։

№ - 225
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱՆԱՍԵԱՆԻՆ ԱԿՍԻ-ՂԱԶԻ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 2459 *2 նոյեմբերի 1912 թ.*
Ս. Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Սինոդից Երևանի Տ. Փոխ-Թեմակալին.

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով Սինոդումս լսեցին զեկուցում կաղզուանցի Աւետիս Տէր-Ներսիսեանցին քահանայ ձեռնադրելու մասին։ Հրամայեցին. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աւետիս Տէր-Ներսիսեանցին և յանձ-

նարարել Փոխ-թեմակալին՝ ձեռնադրել նորան քահանայ Կաղզուան աւանի համար[476]։ 2 նոյեմբերի 1912 թ. Ս. Էջմիածին

Սինոդի անդամ՝ Մատթէոս վարդապետ
Ի տ. Գործավարի՝ Ա. Հայկազունի

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 56, բնագիր, ձեռագիր:

№ - 226
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԵԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԿԱՐԳԱՒՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 22 *19 դեկտեմբերի 1912 թ.*
Կարս

Երևանի Հայոց թեմի Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Վիճ. փոխանորդ Երեմիա վարդապետ Ստեփանեանից[477]
Յայտարարութիւն

Վիճակիս եկեղեցիների չնչին գումարները կորչում են երեսփոխների անհոգութիւնների և խնամական յարաբերութիւնների շնորհիւ, առանց բացառութեան եկեղեցու եղած գումարները բաժանւում են գիւղացիների վերայ և որպէս ապահովութիւն ստացւում է մի կտոր անգրագէտի ստորագրութեամբ թուղթ։ Ուստի ես մտադիր եմ և որոշել եմ 1913 թուից կարգադրել, որ փողերը իսկոյն պարտատէրերը վճարեն, իսկ հակառակ դէպքում, որ այդպէս էլ պիտի լինի, տալ փաստաբանին գործը։ Գիտակից գիւղացիները վերջինիս հետ միանգամայն համաձայն են. փողերը իւրաքանչիւր եկեղեցու անունով պէտք է դնել կամ պահ տալ խնայողական արկղներում։ Իսկ հարկաւոր դէպքում ոչ Հոգևոր իշխանութիւնը նեղ կը մնայ և ոչ համայնքը[478]։

---

476 1912 թ. դեկտեմբերի 10-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Կարսի Հոգևոր կառավարութեանը. ‹‹Համաձայն Ս. Էջմիածնի Սինոդի տարւոյս նոյեմբերի 2-ի Թ. 2459 հրամանի ամսոյս 9-ին քահանայ ձեռնադրեցի Կաղզուանցի Աւետիս Տէր Ներսիսեանին՝ Կաղզուան աւանի համար անուանելով Տէր Ներսէս: Առաջադրում եմ Կառավարութեանդ կարգադրել, որ քառասնօրեայ տքնութիւնը տանի դպրոցում, որպէսզի դպրոցական գործը չը տուժի և ի նկատի ունենալով, որ ձեռնադրութիւնը փոքր-ինչ ուշացաւ, թոյլ տալ անդրանիկ ս. պատարագը մատուցանել յունուարի 6-ին Ս. Ծննդեան և մկրտութեան օրը›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 55):

477 Երեմիա վարդապետ Ստեփանեանը 1916 թ. հոկտեմբերի 21-ին նշամակուել է Նուխու վիճակի փոխանորդ: 1920 թ. ձերբակալուել է Խորհրդային Ադրբեջանի իշխանութիւնների կողմից և յետագայ ճակատագիրն անյայտ է:

478 1913 թ. յունուարի 25-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Երեմիա վարդապետին. ‹‹Ի հետևումն Բարձրապատուութեանդ անցեալ տարուայ դեկտեմբերի 19-ի Թ. 22 յայտարարութեան, որը վերաբերում է եկեղեցական գումարները պետական

Խնդրում եմ Ձերդ Սրբազնութեան համաձայնութիւնը։
Կարսի Վիճակի Փոխանորդ՝ Երեմիա վարդապետ Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 156, թ. 10, բնագիր, ձեռագիր:

№ - 227
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ՄԻ ՇԱՐՔ ՊԱՇՏՕՆՆԵՐ ՎԱՐՈՂ ԿՈՐԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ ՔՈԹԱՆՋԵԱՆԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԹԵԹԵՒԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 24 *19 դեկտեմբերի 1912 թ.*
Կարս

Երևանի Հայոց թեմի Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Վիճ. Փոխանորդ Երեմիա վարդապետ Ստեփանեանից
Յայտարարութիւն

Քաղաքիս քահանաներից շատերը, ինչպէս ուսումնասիրել եմ, անգրագէտ են, ձեռնհաս չեն Աստեղիս անդամութեան պաշտօնները վարելու։ Եղածներից ոմանք ժամանակի ընթացքում իրանց վատ արարմունքներով՝ նոյն անդամութեան շրջանում նկատուած են եղել որպէս ապիկարներ։ Մնում են մի երկուսը, մի քանիսն էլ ծանրաբեռնուած են դպրոցներում դասերով, այսպէս ներկայումս մեր գանձապահ Տէր Կորիւն քահանայ Քոթանջեանը նախ ունի դասեր, մօտ 300 տան ծուխ է հովուում, վարում է կառավարութեանս գանձապահի և անդամի պաշտօն, բացի դրանից և Կարսի գործակալութիւնը իր ձեռքն է։ Հոգևոր կառավարութեան անդամները ըստ իս պարտական են առաւօտեան ժամը 8-ից մինչև ժամը 2-ը ներկայ լինել Աստեղումս ինչպէս, թող ներուի ասելու, ես եմ անում, իսկ մեր գանձապահը հակառակ իր բուռն ցանկութեան, եթէ կամենայ էլ չի կարող անել, շատ անգամ ներս մտած փողերը այլ անդամն է ընդունում և այլն. կառավարութեանս գլխաւոր մեքենան գանձապահն է, ուստի այս ամեն աչքի առաջ ունենալով և մանաւանդ կարգին տանելու համար գործերը, պէտք է նորան որոշ աշխատանքից ազատ համարել։

Առ այժմս ես դժուարանում եմ գանձապահ անդամութիւնից հեռացնելու հէնց իր յայտարարութիւնը ի նկատի առած, խօսքս 442 ր.

գանձարկղում տեղաւորելուն, յայտնում եմ, որ այդ ուղղութեամբ քանի անգամ գրուած է և պատուեցուած ենթադրեալ ատեաններին և գործակալներին և դժբախտաբար շատ քիչ բան է ստացուած։ Ցանկալի կը լինէր որ Ձերդ Բարձրապատուութիւնը այդ ուղղութեամբ կարգադրէր հարկաւորը, որպէսզի մեր եկեղեցիները չը զրկուեն իրենց դրամագլուխներից։ Ես իմ կողմից ցանկալի եմ համարում որ նախ նորոգուէին այն մուրհակները և յայտագրերը, որոնց ժամանակը լրացել է, ապա պահանջուէին և չստացուելու դէպքում գործը յանձնուէր դատարանին» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 156, թ. 9 և շրջ.)։

մասին է, և երկրորդ՝ ցանկանում եմ, որ իր ձեռքով մաքրուեն առկախ մնացած գործերը։

Նորանից կարելի է միայն գործակալութիւնը վերցնել և յանձնել Հոգևոր Կառավարութեանս, բոլոր երեք անդամների փոխադարձ յատուկ պատասխանատուութեամբ. հին ժամանակներում էլ այդպէս է եղել։

Նոյնիսկ ցանկալի է գիւղերի, որոշ շրջանների գործակալութիւնները վերջացնելու. այդ մասին դեռ վերջնական եզրակացութեան չեմ եկել։

Արդե՞օք Ձերդ Սրբազնութիւնը ինձ հետ համաձայն էք, թէ ո՛չ. այդ ամենը ես գիտակցաբար եմ Ձեզ գրում, որ ապագայում առարկութիւն չստեղծուի, թէ ինքնագլուխ եմ արել, թէև այդ զուտ տեղային գործ է։ Սպասում եմ Ձերդ Սրբազնութեան տնօրէնութեանը[479]*։*

Կարսի վիճ. Փոխանորդ՝ Երեմիա վ. Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 863, թ. 1 և շրջ., ինքնագիր:

№ - 228
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱՆԱՍԵԱՆԻՆ ԱՔՍԻ-ՂԱԶԻ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 3010 *25 դեկտեմբերի 1912 թ.*
Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց Ս. էջմիածնի Հայոց Սինոդից Երևանի Տ. Փոխ-Թեմակալին.

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով Սինոդումս լսեցին զեկուցում Կարսի շրջանի Ակսի-Ղազի գիւղի բնակիչ Համբարձում Մանասեանին քահանայ ձեռնադրելու մասին։ Հրամայեցին. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Համբարձում Մանասեանին և յանձնարարել փոխ-թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Ակսի-Ղազի գիւղի համար[480]*։ 25 դեկտեմբերի 1912 թ. Ս. էջմիածին*

Սինոդի Անդամ՝ Սահակ վարդապետ

---

479 1913 թ. յունուարի 10-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է յղել Երեմիա վարդապետին. «Ի հետևումն Բարձրապատուութեանդ դեկտ. 19-ի Թ. 24 գրութեան յայտնում եմ որ գործի տեսակէտից անհրաժեշտ եմ համարում Ղարսի գործակալի պաշտօնից արձակել Տ. Կորիւն քահանային ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա չափազանց զբաղուած է, և որովհետև չկայ քաղաքի քահանաներից մէկը, որ կարողանայ տանել այդ պաշտօնը միանգամայն համաձայն եմ Բարձրապատուութեանդ հետ շրջանի գործերի վարումը յանձնել Հոգևոր Կառավարութեանը» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 863, թ. 2):

480 1912 թ. դեկտեմբերի 3-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Կար-

Ի տ. Գործավարի՝ Ա. Հայկազունի

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 48, բնագիր, ձեռագիր:

№ - 229
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲԱՇ-ՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԸՆԾԱՅԱՑՈՒ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻՆ ԻՐԵՆՑ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յունուար, 1913 թ.
Բաշ-Քեադիկլար

Նորին Սրբազնութեան Թեմական Առաջնորդին Երևանի Թեմի Կարսի վիճակի Բաշ-Քեադիկլար գիւղի ծխականներից խնդիր

Գիւղս բաղկացած լինելով մօտաւորապէս 90 ծխից, տարիներից ի վեր է, որ զրկուած է հոգևոր մխիթարութիւնից իւր սեփական քահանան չունենալու պատճառով[481]: Վերջապէս մօտ անցեալում համայնքս այսպիսի դժուարութիւնները հարթելու և երթևեկող քահանաների պատճառած անախորժութիւններից ազատուելու համար ընտրեց իւր միջից ընծայացու Արիստակէս Գրիգորեան Յարութիւնեանցին, որի ձեռնադրութեան իրաւունքը, եթէ չենք սխալւում, պէտք է տրուած լինի ամիս ու կէս առաջ, բայց դժբախտաբար մինչև օրս ձգձգւում է և այդ իհարկէ մեզ անյայտ պատճառներով: Այդպիսով ուրեմն ծխականներս անցկացրեցինք տօն օրերը առանց հոգևոր բաւականութիւնների: Մօտենում է շուտով Մեծի Պահոց և քրիստոնեաներիս սրտին մօտ քաւութեան օրեր, որի ժամանակ դարձեալ մնալու ենք առանց հոգևոր հովուի և առանց հոգևոր մխիթարութեան:

Սոյն խնդրով ներքևում ստորագրող ծխականներին դիմելով Սրբազնութեանդ աղերսանօք խնդրում ենք և սպասում, որպէս զի կարգադրէք որքան հնարաւոր է շտապեցնելու վերևում յիշուած մեր ընծայացուի ձեռնադրութեան գործը, որը և հնարաւորութիւն տուած կլինէք ծխականներին՝ չզրկուել հոգեկան վեհ զգացողական բաւականութիւններից, կրկնում ենք մանաւանդ առաջիկայ քաւութեան օրերին[482]:

սի Հոգևոր կառավարութեանը. ‹‹Ամսոյս 30-ին ձեռնադրեցի քահանայ Ակսի Ղազի գիւղի բնակիչ Համբարձում Մանասեանին նոյն գիւղի համար, անուանելով Տէր Ներսէս: Առաջարկում եմ Կառավարութեանդ՝ տնօրինել նրա քառասնօրեայ տքնութեան տեղի մասին և թոյլատրել նրան մատուցանելու անդրանիկ ս. պատարագը փետրուարի 10-ին›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 47):

481 Բաշ-Քեադիկլար և Ներքին Քեադիկլար գիւղերը ուէին մէկ քահանայ՝ Մկրտիչ քահանայ Նիկողոսեանը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

482 Տես թիւ 232 փաստաթուղթը և թիւ 487 ծանօթագրութիւնը:

Գալուստ Աւետիսեան
Եգոր Վարդանեան
Ալեքսան Գրիգորեան[483]
Վաւերացնում եմ տանուտիրոջ կնիքով՝ Արշակ Տօնոյեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 64 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 230
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ԿՐՕՆԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 1 *8 յունուարի 1913 թ.*
Կարս

Երևանեան Հայոց թեմի Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Վիճ. Փոխանորդ Երեմիա վ[արդապետ] Ստեփանեանից

Վիճակիս ռուսական շրջանային Պ.Պ. տեսուչները միշտ էլ դիմում են գրաւոր թէ այսինչին, այնինչին կրօնուսոյց և հայոց լեզուի ուսուցիչ կարգադրելու դէմ մեր կողմից արգելք չկա՞յ. ուստի խնդրում եմ հրահանգել ինչպէս վարուել: Եւ երկրորդ, կան դոցա մէջ և այնպիսիները, որոնք դպրոցական և ոչ մի վկայագիր չունեն: Սպասում եմ շուտափոյթ Ձեր տնօրէնութեանը, որ ես էլ այդ մտքով պատասխանեմ[484]*:*
Փոխ[անորդ] Կ[արսի] Հ[այոց] Վիճակի՝
Երեմիա վ[արդապետ] Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 156, թ. 2, ինքնագիր:

---

483 Հետևում է ևս 57 անձի ստորագրութիւն: Փաստաթուղթը կնքուած է գիւղապետի կնիքով:

484 1913 թ. յունուարի 12-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ պատասխանն է ուղարկել Երեմիա վարդապետին. ‹‹Առհասարակ կրօնուսոյցներ կարգելու ժամանակ պետական դպրոցների վարչութիւնները պարտաւոր են հարցնել թեմական իշխանութեան կամքը: Ցանկալի կը լիներ, որ Ձերդ Բարձրապատուութիւնը կրօնի և Հայոց լեզուի դասերը յանձնելու համար համաձայնութիւն տար աշխարհականներից այնպիսիների համար, որոնք աւարտել են որևէ Հայոց թեմական դպրոցի լիակատար դասընթացը, իսկ հոգևորականներից՝ որոնք առնուազն թեմական դպրանոցի չորրորդ դասարանի վկայական ունեն›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 156, թ. 1):

№ - 231
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ՎԱՂԻՆԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՖՐՈՅԵԱՆՑ ԱՒԱԳՈՒԹԵԱՆ ԱՍՏԻճԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 4 *9 յունուարի 1913 թ.*
Կարս

Երևաւեան Հայոց թեմի Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Վիճ. Փոխանորդ Երեմիա վ[արդապետ] Ստեփանեանից
Յայտարարութիւն

Համաձայն Ձերդ Սրբազնութեան պատուէրի 8-ն դեկտեմբերի 1912 ամի Թ. 2026 պատիւ ունեմ յայտնելու, թէ տեղիս Ս. Նշան եկեղեցու բարեկարգիչ և նախկին անդամ Հոգևոր Կառավարութեան Բարեկրօն Տէր Վաղինակ քահանայ Ֆրոյեանցը յիրաւի արժանի է գոհունակութեան Ձերդ Սրբազնութեան կողմից, քանի որ նա որպէս անդամ քահանայ իր պաշտօնները վարել է անթերի, նախ՝ ինչպէս գործերն են ցոյց տալիս և երկրորդ՝ ծխականներից շատերը և նոյն եկեղեցու երեսփոխը ցանկութիւն յայտնեցին նրան աւագ քահանայ տեսնել: Ուստի բարւոք կը լիներ բարեհաճէիք միջնորդել ուր հարկն է ա[ւագ] քահանայութեան համար[485]*:*

Կցել պէտք է, որ յերջանկայիշատակ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի սրբատառ կոնդակով պարգևատրած է 10-ն փետրուարի 1897 ամի Թ. 114 քահանայական լանջախաչով և ծաղկեայ փիլոնով[486]*:*

Փոխանորդ Կարսի Հայոց Վիճակի՝ Երեմիա Վ. Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 877, թ. 8, ինքնագիր:

№ - 232
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻՆ ԲԱՇՔԵԱԴԻԿԼԱՐ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 92 *21 յունուարի 1913 թ.*
Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Սինոդից Երևանի Տ. Փոխ-Թեմակալին.

---

485 1913 թ. յունուարի 24-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Երեմիա վարդապետին. «Ի հետևումն Բարձրապատուութեանդ ամսոյս 9-ի Թ. 4 յայտարարութեան խնդրում եմ ուղարկել Վաղինակ քահանայ Ֆրոյեանի՝ Ձեր կողմից վաւերացրած ծառայութեան ցուցակը» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 877, թ. 7):

486 Տե՛ս ՄԱՍԷԱ, ց. 1, գ. 299, թ. 29:

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով Սինոդումս լսեցին զեկուցում Կարսի վիճակի Բաշքեադիկլար գիւղի բնակիչ Արիստակէս Յարութիւնեանցին քահանայ ձեռնադրելու մասին: Հրամայեցին. ընդունել Բաշքեադիկլար գիւղի բնակիչ Արիստակէս Յարութիւնեանցին հոգևոր կոչման մէջ և պատուիրել Երևանի Հայոց Կոնսիստորիային մտցնել հոգևորականների ցուցակի մէջ և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել ընծայացու Արիստակէս Յարութիւնեանին քահանայ Բաշքեադիկլար գիւղի համար[487]*: Այս մասին տեղեկութիւն տալ Թիֆլիզի բրիգադայի պետին, Բաշքեադիկլար գիւղի բնակիչ Արիստակէս Յարութիւնեանին հանել պահեստի զինուորների շարքից: 21 յունուարի 1913 թ., Ս. Էջմիածին*

Սինոդի Անդամ՝ Բաբգէն վարդապետ
Ի տ. ատենադպրի՝ Գր. Եսայեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 43 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 233
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ՝ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Թիւ 181 *24 յունուարի 1913 թ.*
Երևան

Կարսի վիճակի Փոխանոռդ Բարձրապատիւ Երեմիա վարդապետին

Ի հետևումն Բարձրապատուութեանդ ամսոյս 19-ի Թ. 23 յայտարարութեան[488] *կարևոր եմ համարում յայտնել, որ Ձեր որոշումը՝ պարտաւորեցնել կառավարութեան գանձապահին ստացուած իւրաքանչիւր րուբլին մտցնել գանձարան առանձին գրքոյկով, շատ ցանկալի է և այդպէս էլ պէտք է լինի, որպէսզի Ձեր ամեն մի ստուգութեան ժամանակ առձեռն պատրաստ լինի գանձուած գումարը: Որովհետև կառավարութիւնը չունի իր դրամարկղը, ուստի առանձին առաջադրութեամբ պատուիրեցէք Հոգևոր կառավարութեանը օրագրական վճռով կարգադրել.*

---

487 1913 թ. մարտի 9-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է առաքել Երևանի Թեմական Կոնսիստորիային. ‹‹Համաձայն Ս. Էջմիածնի Սինոդի տարւոյս յունուարի 21-ի Թ. 92 հրամանի ամսոյս 3-ին Սևանի մենաստանի Ս. Աստուածածին եկեղեցում Գերապատիւ Տ. Սարգիս Եպիսկոպոսը քահանայ է ձեռնադրել Ղարսի շրջանի Բաշ-Քեադիկլար գիւղացի Արիստակէս Յարութիւնեանին նոյն գիւղի ծխականներին հովուելու համար, թողելով նրան նոյն անունը: Սորա հետ ուղարկելով յիշեալ նորընծայ Տ. Արիստակէս քահանայի Թ. 35 վկայականը առաջադրում եմ Թեմական Ատենիդ վաւերացնել այն օրինաւոր կերպով և ուղարկել ըստ պատկանելոյն›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 42):

488 Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 156, թ. 4:

1. Ստացուած դրամական յայտարարութիւնները անմիջապէս մուծել մի առանձին մատեան, որը կլինի ժապաւինեալ և որի մէջ կը յիշուի յայտարարութեան թիւը և համարը, ուղարկողի անունը ու գումարի քանակը: Ապա այդ դրամական յայտարարութիւնը կը դրուի մուծելու մտից թղթոց մատեանը և ապա գանձարանը վրան մակագրելով հարկաւորը կը մուծէ ըստ տեսակի օտարային կամ վիճակային մատեանում: Շատ լաւ կը լինի եթէ առաջին մատեանը վարձէք Դուք ինչպէս ես անում եմ Կոնսիստորիայում, քանի որ Դուք ամեն րոպէ կառավարութեան մէջ էք:

2. Նոյն առաջադրութեամբ պատուիրեցի որ գանձապահը ամենայն օր ստացուած դրամները մտցնէ պետական գանձարանը՝ կառավարութեան անունով ստացուած գրքոյկով:

3. Ամսուայ վերջը կատարել ստուգութիւն երկու մատեանների օգնութեամբ և ուղարկել Թեմական Ատեան թէ օտարային դրամները և թէ վիճակայինը, պահելով մի փոքրիկ գումար անակնկալ ծախսերի համար:

4. Որպէսզի ոչ մի թիւրիմացութիւն առաջ չը գայ քաղուածքների դրամական հաշիւներում կարգադրեցէք, որ ամէն մի խնդիր իր վրայ ունենայ փակցրած ցուցուած անդորրագիր՝ կտրուած ժապաւինեալ անդորրագրերից կամ Ձեր մակագրութիւնը, եթէ քաղուածքը տրուելու է ձրիաբար, ապա ամսուայ վերջը հաշուել անդորրագրերով ստացուած գումարները և մուտք գրել վիճակային մատեանում:

5. Յանկալին այն է, որ նախահաշուից դուրս ծախսեր չարուին և ամէն անգամ նախապէս խնդրուի Թեմական Ատենի թոյլտուութիւնը: Յուսով եմ Ձերդ Բարձրապատուութիւնը ամէն կերպ կաշխատէ դրամական հաշիւների գործում միանգամ ընդմիշտ կանոնաւորում մտցնել:

[Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 156, թթ. 3-4, թողօն, ձեռագիր:

№ - 234
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՍԱՐԳԻՍ ՇԱՀԻՆԵԱՆԻՆ ԳԱՐՄԱԼԻ ԳԻՒՂԻ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 359 *19 փետրուարի 1913 թ.*
Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Սինոդից Երևանի Տ. Փոխ-Թեմակալին.

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով Սինոդումս լսեցին զեկուցում Կարսի շրջանի Գիրմալի գիւղի բնակիչ Սարգիս Շահինեանին քահանայ ձեռնադրելու մասին: Հրամայեցին թոյլ տալ Երևանի Վիճակային Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Գիրմալի գիւղի բնակիչ Սարգիս Շահինեանին և պատուիրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել յիշեալ Շահինեանին քահանայ Գիրմալի գիւղի վրայ[489]: Ներկայացրած վկայականները վերադարձնել Կոնսիստորիայի միջոցով: 19 փետրուարի 1913 թ., Ս. Էջմիածին

Սինոդի Անդամ՝ Մատթէոս վարդապետ
Ի տ. Գործավարի Գր. Եսայեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 36, բնագիր, ձեռագիր:

№ - 235
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱԿԱՆԱԿՈՒՌ ԼԱՆՋԱԽԱՉՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 591 *25 փետրուարի 1913 թ.*
Երևան

Վեհափառին

Ջերդ Վեհափառութեան բարեհաճ ցանկութեամբ և հրամանով Ս. Էջմիածնի միաբան Տ. Երեմիա վարդապետը նշանակուեց Ղարսի Վիճակի Փոխանորդ: Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ Ղարսը նահանգական-զինուորական քաղաք է և տեղւոյն փոխանորդը աւելի յաճախ գործ ունի պաշտօնական անձանց և հիմնարկութեանց հետ, թոյլ եմ տալիս յայտնելու համեստ կարծիքս, որ անհրաժեշտ է փոխանորդին խաչ ունենալ: Ի նկատի ունենալով նաև Երեմիա վարդապետի եօթը տարուայ պաշտօնավարութիւնը, ներկայացնելով նրա ծառայութեան ցուցակը ամենախոնարհաբար խնդրում եմ արժանացնել նրան Հայրապետական շնորհի՝ պարգևատրելով վարդապետական ականակուռ խաչով:

[Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 877, թ. 18 և շրջ., թողօն, ձեռագիր:

---

489 1913 թ. մարտի 9-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է առաքել Երևանի Թեմական Կոնսիստորիային. ‹‹Համաձայն Ս. Էջմիածնի Սինոդի տարւոյս փետրուարի 19-ի Թ. 350 հրամանի ամսոյս 3-ին Սևանայ մենաստանի Ս. Աստուածածին եկեղեցում Գերապատիւ Տէր Սարգիս եպիսկոպոսը քահանայ է ձեռնադրել Ղարսի շրջանի Գիրմալի գիւղացի Սարգիս Շահինեանին նոյն գիւղի ծխականներին յանձնելու համար, թողելով նոյն անունը: Սորա հետ ուղարկելով Տէր Սարգիս նորընծայի Թ. 34 վկայականը, առաջադրում եմ Թեմական Ատենիդ վաւերացնել այն պատշաճաւոր կերպով և ուղարկել ըստ պատկանելոյն›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 35):

№ - 236

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ՅՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆԴԱՄ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ ՆՈՐ ԱՆԴԱՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 104 *27 մարտի 1913 թ.*

Կարս

Երևանի Հայոց Հայրապետական Թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Փոխանորդ Կարսի Հայոց Վիճ. Երեմիա վ. Ստեփանեանից
Յայտարարութիւն

Սորա հետ պատիւ ունեմ ներկայացնելու Ձերդ Սրբազնութեանը մեր անունով 20-ն մարտի 1913 ամի N 14 տուած Ատենիս բազմամեայ անդամ բարեկրօն Տէր Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանի հրաժարականը, որի առթիւ նախապէս մի քանի անգամ խնդրեցի, որ յետ առնի, բայց նա ներողութիւն խնդրելով չը համաձայնեց: Բնականաբար պէտք է կառավարութեան կազմը լրացնել պաշտօնի հրաւիրելով մի այլ քահանայի: Տեղիս միաբան քահանաները սոքա են.

Ս. Աստուածածնի

1. Արժ. Տէր-Մինաս ա. ք. Տէր Պետրոսեան
2. Տ. Խորէն [քահանայ] Ստամբօլցեան
3. Տ. Կորիւն [քահանայ] Քոթանճեան (արդէն անդամ է)
4. Տ. Յակովբ [քահանայ] Տէր-Մկրտչեան
5. Տ. Համազասպ [քահանայ] Ղարակեօզեան

Ս. Նշանի

1. Տ. Մեսրովբ [քահանայ] - ծեր.
2. Տ. Արսէն [քահանայ] Տ. Գրիգորեան
3. Տ. Գրիգոր [քահանայ] Ստամբօլցեան
4. Տ. Վաղինակ [քահանայ] Ֆրոյեան

Սոցանից որին լաւ կը ճանաչէք և որին օգտակար կը համարէք խնդրեմ բարեհաճէք տնօրինելու: Իմ կարծիքը հետևեալ անձանց վերայ է. Տ. Համազասպ Ղարագէօզեան մանաւանդ յաջող ռուսերէն գիտէ, որին պէտք է այժմեան ժամանակում կարևորութիւն տալ, երկրորդ Տ. Վաղինակ ք[ահանայ] Ֆրոյեանը, որպէս Ս. Նշանի միաբանների ներկայացուցիչ: Այդ է իմ վերջին կարծիքը կա՛մ առաջինը և կա՛մ երկրորդը, որին որ կը բարեհաճիք:

Փոխանորդ Կ[արսի] Հ[հոգևոր] վ[իճակի]՝
Երեմիա վ[արդապետ] Ստեփանեան

Մակագրութիւն: *Հաստատել Վաղինակ քահանայ Ֆրոյեանին:*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 159, թ. 43 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 237
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ՓԱԼԴՐՈՒԱՆ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 1421 *1 յուլիսի 1913 թ.*
Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Սինոդից Երևանի Տ. Փոխ-Թեմակալին.

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով Սինոդումս լսեցին զեկուցում Կարսի շրջանի Փալդրուան գիւղի բնակիչ Սարգիս Սարգսեանին քահանայ ձեռնադրելու մասին: Հրամայեցին. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Փալդրուան գիւղի բնակիչ Սարգիս Սարգսեանին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել յիշեալ Սարգսեանին քահանայ Փալդրուան գիւղի վրայ[490]*: 1 յուլիսի 1913 թ., Ս. Էջմիածին*

Սինոդի Անդամ՝ Մատթէոս վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 139, բնագիր, ձեռագիր:

№ - 238
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ ՍԿՍՈՒԵԼՈՒ ԵՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

13 յուլիսի 1913 թ.
Անի

Նորին Բարձր Սրբազնութեան Երևանի Հայոց Փոխթեմակալ
Տ. Խորէն եպիսկոպոսին
Անւոյ վանուց վանահայր Միխայէլ վարդապետից
Խնդիր

Ի լրումն ամսոյս 3-ի խնդրագրիս սորանով յայտնում եմ, որ արդէն սկսում են Անւոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի (Նախշլի) եկեղեցւոյ վերանորոգութիւնն երանել, ևս և հարկադրում են Մայր եկեղեցւոյ

[490] 1913 թ. սեպտեմբերի 27-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է առաքել Կարսի Հոգևոր Կառավարութեանը. ‹‹Համաձայն Ս. Սինոդի տարւոյս յուլիսի 1-ի Թ. 1421 հրամանագրութեան ամսոյս 22-ին քահանայ ձեռնադրեցի Փալդրուան գիւղի բնակիչ Սարգիս Սարգսեանին հովուելու յիշեալ գիւղը անուանելով Ղևոնդ: Ուղարկելով նորընծայ Ղևոնդ քահանային, առաջադրում եմ կարգադրել հարկաւորը նորա քառասնօրեայ տքնութեան մասին և թոյլատրել հոկտեմբերի 27-ին Գիւտ Խաչի տօնի օրը մատուցանել անդրանիկ ս. պատարագը›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 876, թ. 138):

բանալին իրանց տալ, վերջին անգամ խնդրում եմ շուտափոյթ կարգադրութիւն անել, և ինչպէս վարուելս ինձ յայտնել պաշտօնական գրութեամբ։

Վանահայր Անուոյ՝ Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 540, թ. 5, բնագիր, ձեռագիր:

№ - 239
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԻՐ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14 յուլիսի 1913 թ.
Անի

Նորին Բարձր Սրբազնութեան Երևանի Հայոց Փոխթեմակալ
Տ. Խորէն եպիսկոպոսին
Անուոյ վանուց վանահայր Միքայէլ վարդապետից
Ամենախոնարհ խնդիր

Անուոյ պեղումների պատճառով մեր նախնեաց յուշարձանների նշանակութիւնը բարձրացած լինելու և անթիւ հայու օտար այցելուներ գրաւելու պատճառով վերջին երեք-չորս տարուայ ընթացքում քանիցս դիմել և խնդրել եմ հանգուցեալ հայրապետներին և Ս. Սինոդին առանձին ուշադրութիւն դարձնել թէ՛ Անուոյ և թէ՛ Ղօշավանից վանահայրութիւնը բարելաւելու և ժամանակի պահանջին համապատասխան վանահայր նշանակելու մասին, բայց մինչև օրս էլ իմ խնդիրներս մնացին անհետևանք։

Այսօր Անուոյ վանահայրութեան պայմանները բոլորովին փոխուած լինելու պատճառով ստիպուած եմ և պարտականութիւն ունիմ սոյն խնդրագրութեամբ դիմելով Բարձր Սրբազնութեանդ յայտնելու իմ Հոգևոր Բարձր իշխանութեանը և նորա տնօրինութիւնը հայցելու։

Անցեալ յունիս ամսոյ 29-ին Անի այցելեց Կովկասի Փոխարքայի օգնական Նորին Գերազանցութիւն Պ. Վատացին[491] *որին պատուաւոր ընդունելութիւն ցոյց տալու համար շրջապատի հայ և թուրք բնակչութեան հետ ես ևս Անուոյ գործակալ Տէր Եղիշէի հետ դիմաւորեցի Աւագ դրան մօտ, ուր Նորին Գերազանցութիւնը դիմելով ինձ հարցրեց. «Դուք ո՞վ էք և ի՞նչ էք ներկայացնում այստեղ», չնայելով որ երկու տարի առաջ կրկին եկած էր և լաւ գիտէր այդ բանը։ Կարսի Պ.*

[491] Էմմանուէլ Ալեքսանդրի Վատացի (1856 – 1920) – ռուս պետական գործիչ, Ներքին Գործերի Նախարարի տեղակալ, սենատոր: 1909 – 1915 թթ. եղել է Կովկասի Փոխարքայ Վորոնցով-Դաշկովի օգնականը:

Նահանգապետը[492] պատասխանեց, որ սա Անուշ վանուց վանահայրն է. բայց իշխանը ասաց որ «այստեղ ո՛չ վանք կայ և ո՛չ էլ վանահայրութիւն, այս բանը լաւ ի նկատի պիտի ունենաք ...»: Ի հարկէ ես ոչինչ չկարողացայ պատասխանել Նորին Պայծառութեանը, բայց նորա գնալուց յետոյ բացատրութիւն խնդրեցի Պ. Պրոֆեսոր Մարրից, որը ինձ կտրական կերպով ասաց. «Այո՛, ես երբէք թոյլ չպիտի տամ, որ այստեղ վանք և վանահայրութիւն և կամ միաբանութիւն լինի, այլ կարող է մի եկեղեցի լինել հարկաւոր դէպքում պաշտօն կատարելու համար, այսօր Դուք էք այդ պաշտօնը կատարողը, վաղը կարող է քեզ պէս մի ուրիշը լինել ...»:

Այս ամենը յայտնելով՝ ամենախոնարհաբար խնդրում եմ դնել առ ոտս Աստուածարեալ Հայրապետին մերոյ Տ. Տ. Գէորգ Կաթուղիկոսի, տնօրինել ինչ որ արժանն է և ինձ յայտնել որքան շուտ, այնքան լաւ, թէ՝ ի՞նչ պիտի լինի այսուհետև իմ դրութիւնը և թէ իբրև վանահայր ինչպէ՞ս պիտի վերաբերուիմ այս պայմանների մէջ, ուշադրութիւն դարձնելով նաև այն հանգամանքի վերայ, որ վերջին երկու տարիների ընթացքում նկատելի էին անախորժ վարմունք և իմ իբրև վանահօր իրաւունքների դէմ ոտնձգութիւններ պ. պրոֆեսորի մարդկանց և ծառաների կողմից, որպիսի վարմունքը այսուհետև աւելի սուր կերպարանք կարող են ստանալ և աւելի վատ հետևանքներ ունենալ ի վնաս Ս. էջմիածնի պատուոյ իրաւանց, որում մնամ միշտ հաւատարիմ սպասաւոր և խոնարհ ծառայ:

Վանահայր Անուշ Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 540, թ. 4 և շրջ., ինքնագիր:

№ - 240
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՎԱՆՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ՀԻՆԱՒՈՒՐՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2337 *26 յուլիսի 1913 թ.*
Երևան

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգայ Ե.
Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի
Ս. էջմիածնի
Երևանի Փոխ-թեմակալից
Ամենախոնարհ յայտարարութիւն

[492] Խօսքը գնդապետ Ալեքսէյ Դմիտրիի Պոդգուրսկիի մասին է: 1912 թ. յուլիսի 12-ից 1915 թ. եղել է Կարսի նահանգապետը:

Ուղարկելով սորա հետ Անւոյ վանահօր երկու յայտարարութիւնները[493] և յայտնելով Ձերդ Վեհափառութեան, որ վանահօր գրածները ստուգել եմ և գտել եմ ճշմարիտ, ամենախոնարհաբար խնդրում եմ կարգադրել հարկաւորը, որպէսզի մեր հինաւուրց իրաւունքը պահպանուի մեր եկեղեցիների և վանքերի վրայ, որոնց կամարների տակ մինչև այսօր դարեր շարունակ հայ հոգևորականութիւնը իր ժողովրդի հետ միասին աղօթել է։

Աւելորդ չեմ համարում յայտնել, որ ինչպէս տեղեկացնում են Ալեքսանդրապոլի և Ղարսի փոխանորդները, հայ ժողովուրդը իրեն վիրաւորուած է զգում։ Ես մինչև Ձերդ Վեհափառութեան կարգադրութիւնը առաջարկել եմ վանահօրը պահել իր մօտ վանքերի բանալիները և չտալ ոչ ոքի։ Միաժամանակ պահանջել եմ Անւոյ վանքի վերաբերեալ բոլոր գործերը Ղարսի Հոգ. կառավարութիւնից, որպէսզի հնարաւոր լինի մանրամասն զեկուցումն ներկայացնելու Ձերդ Ս. Օծութեանը։

Խորին ակնածութեամբ Վեհափառութեանդ ամենախոնարհ որդի՝
Խորէն եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 540, թ. 3, բնագիր, ձեռագիր:

№ - 241
ԱՆԻԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ԲԱՅՐԱԽՏԱՐ ԳԻՒՂԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԷՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ ՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՒԷՐՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 59 *30 օգոստոսի 1913 թ.*
Բայրախտար

Նորին Բարձրապատուութեան Տ. Փոխանորդին Կարսի վիճակի
Անւոյ Գործակալից
Յայտարարութիւն

Ի կատարումն Բարձրապատուութեանդ ամսիս 9-ի N 182 առաջադրութեան, պատիւ ունեմ խոնարհաբար յայտնելու Բարձրապատուութեանդ որ Բայրախտար գիւղի դպրոցը շինուել է ծխականներից համախօսականով եկեղեցուն յատկացրած հողի վերայ, ուսումնարանը շինուել է եկեղեցւոյ ունեցած դրամներով և մասնաւորապէս էլ ծխականների նուէրներով։ Խնդրում եմ պատշաճաւոր տնօրէնութիւն։
Գործակալ Անւոյ՝ Եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թ. 96, ինքնագիր:

493 Տե՛ս թիւ 239 փաստաթղթերը:

№ - 242
ԱՆԻԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ԹԱԶԱՔԵԱՆԴ ԳԻՒՂԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԷՆՔԸ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 60 *30 օգոստոսի 1913 թ.*
Թապաքեանդ

Նորին Բարձրապատուութեան Տ. Փոխանորդին Կարսի վիճակի Անտյ Գործակալից
Յայտարարութիւն

Ի կատարումն Բարձրապատուութեանդ ամսիս 9-ի N 182 առաջադրութեան, պատիւ ունեմ խոնարհաբար յայտնելու, որ Թազաքեանդ գիւղի նորակառոյց դպրոցը շինուել է եկեղեցական հողի վերայ, եկեղեցու պարսպին կից։ Դպրոցը շինուել է հասարակութեան նուէրներով և աշխատանքով։ Թազաքեանդ գիւղի ծխականների թիւը քիչ լինելու և աղքատ լինելու պատճառաւ, չեն կարող դպրոցը բանալ այս տարի, եթէ մի տեղից նպաստող չլինի։

Գործակալ Անտյ՝ Եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թ. 97, ինքնագիր:

№ - 243
ԲԷԳԼԻ ԱՀՄԷՏ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ՝ ԳԻՒՂԻ ԾԽԱՏԷՐ ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

18 սեպտեմբերի 1913 թ.
Բէգլի Ահմէտ

Համախօսական
1913 թ. 18 սեպտեմբերի, Բէգլի Ահմէտ

Մեք սորա տակ ստորագրող Բէգլի Ահմէտի հասարակութիւնը սեպտեմբ. 18 կայացած ծխական ժողովում որոշեցինք հետևեալի մասին.

Աչքի առաջ ունենալով որ մեր ծխատէր Վարդան քահանայ Տէր-Վարդանեանցը ահա 42 տարի է, որ մեզ հովում է որպէս ծխատէր և այդքան տարուայ ընթացքում նա անտրտունջ կատարել է իւր ս. պարտականութիւնը, բացի դրանից 1880-85 թուականներին եղել է Սարիղամիշի ծխական դպրոցի Հոգաբարձութեան նախագահ, 1885-90 թ. գործել է գիւղիս ծխական դպրոցում Հոգաբարձութեան անդամ գանձապահ և 1890-1900 թուականներին կատարել է շրջանիս գործակալի պաշտօնը։

Ընդհանրապէս յիշեալ քահանան գործել է հասարակութեան օգտին, հարազատ ծառայել է մայր եկեղեցուն, աշխատել է միշտ գիւղիս ծխական դպրանոցի պահպանութեան նպաստելով իւր սեպհական միջոցներից և 1913 թ. գիւղիս ծխական դպրոցի սեպհական շինութեան համար նուիրեց դարձեալ յիսուն րուբլի (50 ր.)։

Ուստի աչքի առաջ ունենալով այդ՝ խոնարհաբար խնդրում ենք Հոգևոր կառավարութեանդ միջնորդել Հոգևոր Բարձր իշխանութեան առաջ վարձատրել մեր ծխատէր քահանային ըստ արժանւոյն[494]*։*

1. Խաչատուր Ղազարեան Տէր-Գրիգորեանց
2. Խաչատուր Մուրադեան Մելիքեանց
3. Պետրոս Մխոյեանց[495]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 877, թթ. 75-76, բնագիր, ձեռագիր:

№ - 244
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԽՔԱՅԵԼՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԳԷՈՐԳ Ե.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՆԻԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

29 սեպտեմբերի 1913 թ.
Անի

Նորին Ս. Օծութեան Աստուածարեալ Հայրապետին և
Կաթողիկոսին Ամենայն Հայոց
Անուշ վանուց վանահայր Միխայէլ վարդապետ Տէր-Մինասեանց
Ամենախոնարհ խնդիր

Աստուածարեալ Հայրապետիդ Դիւանի անցեալ օգոստոս ամսի 16-ին N 1129 գրութեամբ հրամայել էիք նուաստիս Անուշ եկեղեցեաց բանալիները չյանձնել օտարի և անցեալ տարիների նման հոգ տանել մեր երջանկայիշատակ նախնեաց թողած խնկելի աւերակների վրայ։

Քաղցր է ինձ Օծեալվեհիդ հրամանը ամենայն հնազանդութեամբ ի կատար ածել, յայտնի է արդէն, որ տասն և հինգ տարիների ընթացքում ապրել եմ այդ աւերակների մէջ, սիրել և ըստ չափ ու կարողութեան պահպանել, որոյ յատակագիծը թէ նախորդների սև թէ իմ ձեռքով կատարուած՝ պարտք եմ համարում ամենախոնարհաբար ներկայացնել սորա հետ[496]*, միայն, Աստուածարեալ Հայրապե՛տ, ինչպէս տարւոյս յուլիս 3-ին Երևանի Փոխթեմակալի անունով տուածս*

494 Կարսի Փոխանորդ Երեմիա վարդապետը համախօսականը ուղարկել է Երևանի փոխթեմակալին՝ կից գրութեամբ (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 788, թ. 74):

495 Հետևում է ևս 131 անձի ստորագրութիւն:

496 Յատակագծերը տես նոյն տեղում:

խնդրում յայտնել էի, ներկայիս Անւոյ վանահայրութեան պայմանները միանգամայն փոխուել են շնորհիւ Փոխարքայի օգնական Սենատոր Վատացու բանաւոր յայտարարութեան և այստեղ պեղումների ղեկավար պրոֆեսոր Ն. Մարրը ու նրա աշխատակիցները այլևս չէին աշխատում ծածկել իւրեանց բուն նպատակը, և ըստ ամենայնի աշխատում են Մայր Աթոռի բարոյական իրաւունքը, որ սրբագործուած է երեսուն և հինգ տարիների ընթացքում և ճանաչուած մարմնաւոր իշխանութիւնից, չճանաչել և իսպառ չէզոքացնել, որպէսզի իւրեանց գիտական աշխատանքներին իբր թէ արգելառիթ չլինեն, որպիսի նպատակին ուշ թէ շուտ պիտի աշխատեն հասնել, ինչպէս որ պարզ երևում է նոցա վարմունքներից և ասածներից։

Այս ծանր հանգամանքը ստիպում է ինձ սոյն համեստ խնդիրս դնել առ ոտս Սրբազնասուրբ Հայրապետիդ և աղերսել, քանի դեռ աւելի սուր կերպարանք չէ առել այդ տխուր յարաբերութիւնը և Մայր Աթոռի համար աւելի անպատուաբեր կերպարանք չէ ստացել, այժմէն իսկ պարզել Ս. էջմիածնի ներկայացուցչի – Անւոյ դժբախտ վանահօր պարտուց և իրաւանց սահմանները գալիք ծանր թիւրիմացութեանց առաջն առնելու համար։

Ահա այս հանգամանքի վրայ համարձակւում եմ հանուր հայազգի Օծեալ Տեառնդ քաղցր ուշադրութիւնը հրաւիրել, որում մնամ ամենախոնարհ որդի և ծառայ.

Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 539, թ. 3 ևշրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 245
Վ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԵՒ Ն. ԱԴՈՆՑԻ ՆԱՄԱԿԸ ԳԷՈՐԳ Ե.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ Ն. ՄԱՌԻԴԵՄԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑԻ ԳԱՆԳԱՏՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՉՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

16 նոյեմբերի 1913 թ.
Ս. Պետերբուրգ

Վեհափառ Տէ՛ր,

Համբուրելով օծեալ Աջդ, դիմում ենք Ձեզ հետևեալ խոնարհ խնդրով։ Վերջերս թերթերում տարածուած լուրերը Պ. Մառի վերաբերեալ մեծապէս խոցեցին մեր սիրտը։ Յաւալի է, որ անարդար լուրերը շօշափում են մի մարդու անուն, որին լաւ ճանաչում ենք և որն արժանի չէ բնաւ այդպիսի վերաբերման։ Տայ Աստուած, որ ամեն մի հայ այնքան արտացաւ լինի մեզ համար, որքան Պ. Մառը։ Ձենք ուզում ծանրանալ խնդրի վերայ ըստ էութեան, այդ թողնում ենք ուրիշ անգամուայ։ Ամեն ինչ մեզ յայտնի է և կարող ենք վստահացնել Վե-

հափառութեանդ, որ ոչ մի վտանգ չէ սպառնում Անիին ոչ ոքի կողմից, իրերի դրութիւնը կը մնայ այնպէս, ինչպէս եղել է մինչև այժմ: Մեզ համար այս հարցում ամենից անախորժն այն է, որ անհիմն զրոյցները կապւում են Մայր Աթոռի և նորա Բարձր Տիրոջ անուան հետ: Շատերի համար, անշուշտ և Մառի, վիրաւորականը և ցաւալին այն չէ, որ անհեթեթութիւններ են գրւում նորա մասին, այլ որ տարածելով այն լուրը, որ Վեհափառութիւնդ ընդունել է Հ. Միքայէլի գանգատը, գործն այնպէս են ձևացնում, որ Հայրապետդ նշանակութիւն է տուել գանգատին: Անախորժ և մեզ համար անպատուաբեր լուրերի առաջն առնելու է օր առաջ, մանաւանդ որ, ինչպէս մեզ յայտնի է, նորանոր անհաճութեանց պատճառ կարող է լինել: Մեր սեպուհ և քաղցր պարտաւորութիւնն ենք համարում մեր սեփական կարծիքն յայտնել Ձերդ Վեհութեան բարձր տրամադրութեան և բարի հայեցողութեան, անհրաժեշտ է, որ Դիւանդ նախաձեռն լինի ցրելու տարածուած լուրերը երկտող յայտարարութեամբ մօտաւորապէս այն մտքով, որ ճշմարիտ է, Հ. Միքայէլը դիմել էր Վեհափառին գանգատով, բայց Նորին Վեհափառութիւնը թիւրիմացութեան արդիւնք համարելով, անհետևանք է թողել, քաջ ճանաչելով Պ. Մառին և մեծապէս գնահատելով նորա գործունէութիւնը Անիում:

Կրկնում ենք, որ միայն ծանր պարտք կատարելու գիտակցութիւնը և պահանջն է, որ ստիպում է մեզ գրութեամբ դիմել Ձերդ Վեհափառութեան:

Համբուրելով Հայրապետիդ Աջը և ցանկանալով արևշատութիւն և յաջողութիւն բոլոր ձեռնարկներիդ, մնանք՝

Վ. Վարդանեան[497]
Ն. Ադոնց[498]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 540, թ. 7 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

497 Վարդանեան Վարդան Յովհաննէսի (Իվանի), (1853-1919) – 1871 թ. ընդունուել է Սանկտ-Պետերբուրգի կայսերական բժշկա-վիրաբուժական ակադեմիան, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցելուց յետոյ ընդունուել է Ակադեմիայի ֆիզիոլոգիական լաբորատորիան, 1892 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսութիւն և ղեկավարել ֆիզիոլոգիական ամբիոնը: Դասաւանդել է նաև Պետերբուրգի Կանանց Բժշկական ինստիտուտում, եղել՝ պրոռեկտոր: Ակտիւօրէն մասնակցել է հայկական հասարակական-քաղաքական կեանքին, հանդիսացել է Սանկտ-Պետերբուրգի հայկական խմբակի (1907-1918) հիմնադիրներից մէկը:

498 Ադոնց (Տէր-Աւետիսեան) Նիկողայոս Գէորգի - Պատմաբան: Ծնուել է 1871 թ. Զանգեզուրի Բռնակոթ գիւղում: Կրթութիւնը ստացել է Գէորգեան ճեմարանում, Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, ապա՝ Պետերբուրգի համալսարանում: Արժէքաւոր ձեռագրերի ուսումնասիրութեան նպատակով ճամփորդել է Եւրոպայում, նաև՝ Թիֆլիսում, Էջմիածնում: 1915-ին Պետերբուրգում լոյս է տեսել նրա դոկտորական դիսերտացիան՝ ‹‹Դիոնիսիոս Թրակացու քերականութեան հայերէն թարգմանութիւնը››: Դասախօսել է Պետերբուրգի համալսարանում, յետոյ՝ մեկնել է Լոնդոն, աշխատել հայագէտ Կոնիբեըրի հետ: Փարիզում զբաղուել է բանասիրական գիտական աշխատանքով: Նրա մի

№ - 246

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2196 *19 նոյեմբերի 1912 թ.*

Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Յայտարարութիւն

Սորա հետ պատիւ ունեմ ներկայացնելու Ձերդ Գերապատուութեանը տեղիս նորակառոյց եկեղեցու շինութեան Հոգաբարձական անդամների կազմը լրացնող նորընտիր անդամների արձանագրութեան թերթը[499]*։*

Աւելորդ չեմ համարում յայտնելու հետևեալը։ Այդ ընտրութեան առթիւ առաջ էլ մի քանի ժողովներ կայացել են, բայց ծխականների քչութեան պատճառով որոշ հետևանքի չեն հասել, ուստի ինչպէս հրաւէրում յիշուած էր և ինչպէս ներկայ եղողները ընդունեցին, որ այդ ժողովը լինի վերջինը, այդպէս էլ եղաւ։

Նախկին կազմից մնացել էին և են – Արժ. Տէր Մինաս ա. ք. Տէր-Պետրոսեանը

Պ. Յակովբ Ասլանեանը
Պ. Յարութիւն Ղազանչեան

18-ի ժողովում ընտրուեցան – Պ. Մկրտիչ Կոստանեան, երեսփոխ. Հոգաբ.

Պ. Յակովբ Վարդանեան, երեսփոխ, Հոգաբ.
Պ. Խաչատուր Բզնունի
Պ. Սեդրաք Գրիգորեան

Եղածների հետ ընդամենը եօթը հոգի, ուստի ամենախոնարհաբար խնդրում եմ բարեհաճէք վերոյիշեալ եօթ անձանց հաստատել նորակառոյց եկ. շինութեան հոգաբարձու անդամներ[500]*։*

Փոխանորդ Երեմիա վ. Ստեփանեան

շարք աշխատութիւններ լոյս են տեսել տարբեր պարբերականներում: 1931-ից մինչև իր կեանքի վերջը Բրիւսելի համալսարանում դասախօսել է հայերէն: Վերջին տարիների մեծագոյն աշխատութիւնը լինելու էր ‹‹Հայոց պատմութիւնը››, որը չաւարտած՝ մեռել է, իսկ աշխատութեան 1-ին մասը ֆրանսերէն լոյս է տեսել 1946 թ., հայերէն՝ 1972 թ.: Մահացել է 1942 թ.:

499 Ժողովը տեղի է ունեցել 1912 թ. նոյեմբերի 18-ին: Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 131, թ. 40 և շրջ.:

500 1912 թ. դեկտեմբերի 17-ի գրութեամբ Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեանը յայտնում է Երեմիա վարդապետին, որ հաստատում է հոգաբարձական նոր կազմը և աւելացնում է. ‹‹Յոյս ունեմ նորընտիր Հոգաբարձուները հների հետ միասին Բարձրապատուութեանդ ղեկավարութեամբ ամենայն եռանդով գործի կանցնեն և մօտիկ ապագայում

Մակագրութիւն. *Հաստատել։*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 131, թ. 39, բնագիր, ձեռագիր:

№ - 247
ԱՆԻԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՆԻՒԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1912 թ.
Ամի

Նորին Բարձր Սրբազնութեան Երևանի թեմի Փոխանորդ
Տ. Խորէն եպիսկոպոսին
Անուշ վանահայր Միքայէլ վարդապետից
Խնդիր

Մի քանի անգամ Սրբազան Սինոդին խնդիր եմ ներկայացրել, թէ Անուշ և թէ Ղօշավանից վանահայրութեան և թէ իմ դրութեան ու ոյժից վեր պաշտօններ ինձ յանձնուած լինելու առթիւ, խնդրելով ըստ արժանւոյն տնօրէնութիւն անելու մասին, բայց մինչև օրս էլ իմ խնդիրներս անտես են առնուել և ոչ մի կարգադրութիւն չեն տնօրինել: Ուստի այսօր համարձակւում եմ սոյն խնդրագրով դիմել Բարձր Սրբազնութեանդ և աղաչել, որի ստորև նշանակուած խոնարհ աղերսս դնելով առ ոտս Նորին Վեհ Օծութեան Աստուածարեալ Հայրապետին ամենայն Հայոց մի դրական տնօրէնութիւն անելու շնորհը ստանաք, որով նուաստիս անհունս մխիթարած ու անելանելի և իսպառ անորոշ վիճակից ազատած պիտի լինիք:

Բարձր Սրբազնութեանդ և ամբողջ մեր միաբանութեանը քաջայայտէ, որ ես տասն տարուց աւել է Անուշ վանահօր պաշտօնի մէջ եմ, ստանում եմ միայն 25 րուբլի ամսական ռոճիկ և տարեկան 90 փութ ցորեն, 3 փութ իւղ և 3 փութ պանիր, որոնց ձեռք բերելու համար անթիւ անախորժութիւնների և աւելորդ ծախսերի եմ ենթարկւում: Ճիշտ է Անուշ այցելուներից նպաստներ ստանում եմ և այն միայն ամառ ժամանակ, բայց բոլորն էլ կարող են վկայել, որ այդ նպաստները հազիւ կարող էին բաւականութիւն տալ այդ հիւրերին պատուաւոր կերպով ընդունելու և ճանապարհ գցելու համար իսկ պատահած նորոգութիւնների և ծառաների վարձերի, իմ ոյժից աւելի ծախսեր անելով միշտ պարտքից աչք չեմ բացել և աւելորդ չեմ համարում ասել, որ հանգուցեալ միաբանների շորերով եմ կառավարուել:

կը վերջացնեն եկեղեցու շինութեան գործը յուրախութիւն իմ և ի պարծանս Ղարսի հայ հասարակութեան: Համոզուած եմ Ձերդ Բարձրապատուութիւնը ամեն ջանք գործ կը դնէ Ս. Տաճարի շինութեան գործը յաջողութեամբ աւարտելու համար (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 131, թ. 38 և շրջ.):

Այս վերջին երեք տարին էլ Ղօշավանքի ժամանակաւոր հսկողութիւնն են դրել ինձ վերայ, որի պատճառով էլ ոչ պակաս նեղութիւններու աւելորդ ծախսեր եմ կրում։ Բայց ինչ կարող էր անել մի Միքայէլ վարդապետ Ղօշավանքի ծով կարիքների առաջ, իսկ Անուշ նշանակութիւնը ինչպէս յայտնի է, օրաւուր բարձրանում է յաչս մեր ազգայինների և օտարների և անթիւ այցելուներ գրաւում, որոց բաւարարութիւն տալու համար միանգամայն ես ինձ թոյլ եմ զգում և անկարող այլևս այս դրութիւնը շարունակելու։

Ուստի ամենախոնարհաբար խնդրում եմ, ի նկատի ունենալով անձիս տկարութիւնը ազատել ինձ այս պարտականութիւններից և նշանակել Խոր Վիրապի և կամ Գեղարդի միաբան և կամ ուր Նորին Վեհ Օծութիւնն կհրամայէ նուաստիս ծառայել, իսկ հակառակ դէպքում, եթէ չպիտի այդ շնորհին արժանանամ, գոնէ մի քիչ նիւթական միջոցս բարուոքել ու շնորհն արուի, որ ես էլ կարողանամ իբրև մարդ չստորանալ շատերի առաջ և իմ կոչումիս համապատասխան ապրել, ես կարծում եմ, որ այս խնդիրս շատ համեստ պիտի լինի, քանի որ մեր միաբաններից ոմանք 50-60 րուբլի ռոճիկ են ստանում և ինձ չափ էլ ծանրաբեռնուած չեն, ես բաւական մխիթարուած պիտի լինէի, այդ չափ ռոճիկ ստանալով և ընդմիշտ ազատուելով ցորենի, իւղի և պանրի հաւաքելու ծանրութիւններից ու անախորժութիւններից։

Հուսկ ամենից պատիւ ունիմ ամենախոնարհաբար խնդրել Բարձր Սրբազնութիւնիդ բարեհաճէք կարգադրել ու մի ռոճկաւոր դպիր ունենալ Անուշ եկեղեցում սպասաւորելու համար, որի կարիքը անհրաժեշտ զգացւում է, ինչպէս անցեալ գարնանից ստիպուած եղայ 40 րուբլի ռոճիկ տալ իմ սեպհականութիւնից ղուլումճուղեցի դպիր Յակոբ Տէր-Ղազարեանին յիշեալ պաշտօնը կատարելու համար։

Լիայոյս եմ, որ Բարձր Սրբազնութիւնդ վերև յիշուած խոնարհ և համեստ խնդիրներս չի մերժիլ։

Անուշ վանահայր՝ Միքայէլ վարդապետ Տէր- Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 539, թթ. 1-2, ինքնագիր:

№ - 248
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԱՉՄԱԼԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԲԷԿԼԻ ԱՀՄԷՏԻ ԵՒ ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՍԻՆ

Թիւ 360 *5 ապրիլի 1913 թ.*
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալիս Երևանի թեմի

Ջեկուցում

Մարտի 22-ից մինչև նոյն ամսի 29-ը այցելեցի թեմիս հետևեալ դպրոցները.

1) Բէկլի-Ահմէտի դպրոցն այցելեցի երկրորդ անգամ մարտի 23-ին: Հետևեցի դասերին և արի մի քանի նոր դիտողութիւններ: Ընդհանուր առմամբ ուսուցումը գտայ բաւարար: Առանձին փոփոխութիւններ չկան[501]:

2) Սարիղամիշի դպրոցն այցելեցի երկրորդ անգամ մարտի 25-ին: Հետևեցի դասերին և արի մի քանի նոր դիտողութիւններ: Դպրոցի առաջադիմութիւնը գտայ բաւարար: Յունուարի 15-ից վարժուհի Աշխէն Ատուածատրեանը եղբօր մահուան պատճառով հեռացել է դպրոցից: Նրա փոխարէն նշանակուած է Տիկ. Կատարինէ Խաչատրեանը, որ աւարտել է Երևանի Գիմնազիայի VII դաս., ունի 5 տարուայ փորձառութիւն, առաջին տարին է Սարիղամիշում: Աւանդում է 28 դաս, ստանում է կէստարուայ համար 230 ր.:

Վարժուհի Անահիտ Բաբեանը մարտի 1-ից ստանձնել է ևս 5 դաս, այժմ ունի ընդամենը 12 դաս:

Փորձնական դաս.մարտի 27-ին նոր վարժուհի Կատարինէ Խաչատրեանը տուեց մի փորձնական դաս, ռուս լեզուից IV բաժնում և ներկայ էին Հոգաբարձութիւնը և ուս. խումբը, թուով 6 հոգի, դասն անցաւ բաւարար:

3) Շատևանի դպրոցն այցելեցի առաջին անգամ մարտի 26-ին: Դպրոցը 3 ամեայ է, խառն, գոյութիւն ունի 1906 թուից, ղեկավարւում է 2 ուսուցչով: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և արի հետևեալ դիտողութիւնները. 1) Տետրակները պահել մաքուր և կանոնաւոր, 2) Մեծ ուշք դարձնել խմբական ընթերցանութեանը և պատասխաններին, 3) Հարցերն ուղղել դասարանին, 4) Կրօնից I բաժ.անցնել նաև փոքրիկ, բարոյագիտական պատմուածքներ, 5) Գրաւոր աշխատանքները տանել խնամքով:

Ուսուցումը ուշ է սկսւում, այդ պատճառով էլ դեռևս ծրագիրը չեն աւարտած:

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց.

1) Դանիէլեան Հայրապետ – աւագ ուսուցիչ, աւարտել է Երևանի Թեմ. դպրոցը, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 29 դաս, ամուրի է, ստանում է 300 ր. և յարմարութիւններ:

2) Գափամաճեան Կարապետ – աւարտել է Պօլսի դպրոցը, ունի 30 տարուայ փորձառութիւն, աւանդում է 18 դաս, ամուսնացած է, ստանում է 60 րուբլի:

---

501 1913-1914 ուսումնական տարում դպրոց էին յաճախում 55 սաներ (33 տղա, 22 աղջիկ), որոնց ուսուցանում էին 2 ուսուցիչներ: Դպրոցն ունէր սեփական շէնք և գրադարան (ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 162, թթ. 58 շրջ. -59):

Աշակերտութեան թիւն է 76, որոնցից 9-ը օրիորդներ են: Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, բաղկացած է 2 սենեակից և մի հաշտից[502], յարմար է, կահկարասիքը բաւարար է:

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. Դպրոցը չունի գրադարան, ուսումնական պիտոյքները անբաւարար են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բագուի Կուլտուրական Միութիւնից[503] 180 ր., 2) Աշակերտական թոշակներից 150 ր., 3) Եկեղեցուց 120 ր. - ընդամենը 450 րուբլի:

Գիւղն ունի 676 հոգի:

4) Կարսի դպրոցն այցելեցի երկրորդ անգամ մարտի 28-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները: Ուսուցումը գտայ բաւարար: Առանձին փոփոխութիւններ չեն տեղի ունեցել:

Փորձնական դասեր. Տրուեցին երեք փորձնական դասեր հետևեալ առարկաներից.

1) *Հ. լեզու I – Անուշաւան Ստամբօլցեան*
2) *Թուաբանութիւն III բաժ.- Լևոն Տէր-Կարապետեան*
3) *Նկարչութիւն II բաժ.- օր[իորդ] Շող. Մարտիրոսեան*

Ներկայ էին Հոգաբարձուները, ուսուցչական խումբը՝ թուով 16 հոգի: Դասերից յետոյ եղաւ մտքերի փոխանակութիւն: Դասերն անցան յաջող:

Մինչև օրս տրուել է ընդամենը 57 փորձ. դաս:

Թեմական Տեսուչ՝ Թադէոս Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 388, թթ. 44-45, բնագիր, ձեռագիր:

№ - 249
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲԱՅՐԱԽՏԱՐ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՕՍԱԿԱՆԸ՝ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 ապրիլի 1913 թ.
Բայրախտար

Մենք ի ներքոյ սորին ստորագրեալներս, Բայրախտար գիւղի բնակիչներս այս 1913 թուականի ապրիլ 27-ին հաւաքուելով հասարակական ժողովի Կարսի շրջանի Առաջնորդ Բարձր. Երեմիա վարդապետի նախագահութեամբ որոշեցինք հիմնել հայոց եկեղեցական-ծխական

502 Հաշտ – դահլիճ, միջանցք, սրահ:

503 Բաքուի Հայոց Կուլտուրական Միութիւն – հիմնադրուել է 1906 թուականին՝ հասարակական-քաղաքական գործիչ Կոնստանտին Խատիսեանի նախաձեռնութեամբ: Ընկերութեան նպատակն էր ընդարձակել հանրակրթական և մասնագիտական դպրոցների ցանցը, նպաստել ինքնուրոյն և թարգմանական գրականութեան հրատարակութեան, հայոց լեզուի, բեմարուեստի, երաժշտութեան, կերպարուեստի և ճարտարապետութեան զարգացման: Լուծարուել է 1918 թ.:

ուսումնարան ‹‹Գէորգեան›› անունով Բայրախտար գիւղի Ս. Յակովբ եկեղեցու միջոցներով և փողով և որոշեցինք հետևեալ սահմանքը ունեցող տեղը ջրի ափին. հիւսիսային և արևմտեան կողմից գիւղի մօտով անցնող գետը, հարաւից և հարաւ-արևելեան կողմից ճանապարհը և կաւնոցը՝ ընդամենը 250 քառակուսի սաժէն, որի համար և ստորագրում ենք. 1913 թ. ապրիլ 28 ի գ. Բայրախտար

1. Председатель Викарий Арх. Еремия
2.Գործակալ Անիի՝ Եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեան
3. Մխատէր Տէր Տաճատ քահանայ Տ. Աբրահամեան
4. Տանուտէրի օգնական Ղազար Ամրխանեան[504]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թ. 89, բնագիր, ձեռագիր:

№ - 250
ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՆԻԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՒՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 124 *11 մայիսի 1913 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Փոխանորդ Կարսի Հայոց վիճակի Երեմիա վ. Ստեփանեանից
Յայտարարութիւն

Կարևոր եմ համարում զեկուցանելու, որ գիւղերից վերադարձայ, շրջեցի միայն Անւոյ գործակալութիւնը, մնացի մօտ 13 օր: Գիւղերը սոքա են, ուր մնացի տեղ-տեղ 3 օր, և հաւաքեցի եկեղեցու տարիների ընթացքում մուրհակներով մնացած ապառիկները.

Ա) Բայրախտար - 771 ռ.՝ որի 250 ռ.-ին դպրոցի հիմը օրհնելուց յետոյ կամաւոր նուէրներ հաւաքեցինք: Արդէն քարերը կրում են[505]*:*

504 Հետևում է ևս 50 անձ ստորագրութիւն: Փաստաթուղթը կնքուած է Բայրախտար գիւղի տանուտէրի կնիքով:

505 1913 թ. օգոստոսի 6-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Երեմիա վարդապետին, ‹‹Անցեալ մայիսի 11-ի Թ. 124 յայտարարութեամբ զեկուցանելով Անւոյ գործակալութեան շրջանի գիւղերի եկեղեցական ապառիկների մասին, ի միջի այլոց նոյն յայտարարութեամբ յայտնել էի, որ այցելելով Բայրախտար և Թազաքեանդ գիւղերը օրինել էք կառուցուելիք դպրոցական շինութեանց հիմքերը:

Յիշատակուած Բայրախտար գիւղում, արդէն ծխական դպրոցը գոյութիւն ունի, իսկ վերջինումս դպրոց դեռ չկայ: Առաջարկում եմ յայտնել ինձ ի՞նչ միջոցներով են կառուցում այդ շէնքերը և ուր - եկեղեցապատկա՞ն, թէ ուրիշ հողի վրայ, ի՞նչ դրութեան մէջ են ներկայումս շինութեան գործը և թէ Թազաքեանդում չէ՞ր կարելի արդեօք առաջիկայ ուսումնական տարուայ ծխական դպրոց բանալ›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թ. 82):

Բ) Արագի գիւղինը - 550 ռ., պէտք է անպայման եկեղեցու կտուրը փոխուի, այլապէս կը փակուի և ժամասացութիւնը կը դադարի։

Գ) Կարմիր վանք 104 ռ., - վանքի չորս կողմը պէտք է շրջապատեն։

Դ) Բաշ-Քատիկլար – 40 ռ.

Ե) Օրթա-Քատիկլար – 36 ռ.

Զ) Թազաքեանդ – 32, այստեղ ևս օրհնեցի դպրոցի հիմքը։ Ուրեմն երկու նոր դպրոցներ են բացուելու, եթէ Տէրը կամենա։

Եղայ մի քանի ժամով Մաւրակ, ճալա դպրոցի դռները փակ էին, ուսուցիչը այնտեղ չէր։ Համզաքեարակ, Ուղուզլի, Բուլանուղ և Գեօղխանա, որի նորաշէն եկեղեցին մօտ է վերջանալու։ Այցելեցի թէ՛ եկեղեցի, թէ՛ պետակ. դպրոցները շատ խղճալի վիճակի մէջ են մանաւանդ սենեակների կողմից։ Աշակերտութիւնը ինքն իրան արձակել է, հանդն է գնացել։

Կարևոր եմ համարում Ձեր Սրբազնութեանը խնդրելու, որ Դուք կամ ես (ի հարկէ Ձեր միջնորդութիւնը աւելի պիտի հեղինակութիւն ունենայ) միջնորդենք բարեգործական հաստատութիւններին, որ աւելի լայն կերպով օգնեն և որի մէջ ես էլ ձայն ունենայի։ Կարևոր է նրա համար, որ երբ նուէր ես խնդրում, պէտք է՝ որ նախաձեռնողն էլ մի որոշ քայլ անի, բացի դրանից դա մի խթան է, որ միշտ գիւղացուն կզգաստացնի։

Եղանակները փոխուելուց յետոյ գնալու եմ Բագրան։

Փոխանորդ Կարսի Հայոց Վիճակի՝ Երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թ. 83 և շրջ., ինքնագիր:

№ - 251
ԳԵՕՐԽԱՆԱ ԳԻՒՂԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՆԻԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻՆ՝ ԳԻՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՕԾԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

7 սեպտեմբերի 1913 թ.
Գեօրխանա

Բարեկրօն Գործակալին Անուց եղիշէ քահանայ Տէր-Գրիգորեանցին
Գեօրխանա գիւղի հոգաբարձուներ Համբար Սարգսեանից, Վարոս
Ջատիկեանից և Յարութիւն Տէր-Ալէքսան[դր]եանից, երեսփոխան
Մելիք Տէր-Մելիքսեդեանից և ծխատէր եղիշէ քահանայ Սարգսեան
Յովհաննիսեանցից
Յայտարարութիւն

Սոյն յայտարարութիւնով դիմում ենք Ձերդ Բարեկրօնութեան, որ Ձեզ քաջ յայտնի է քանի տարի է մենք զրկուած ենք եկեղեցուց և եկեղեցական ծիսակատարութիւնից ու հոգևոր մխիթարութիւնից, ուստի

Աստուծոյ յաջողութեամբ և մեր ժողովրդի օգնութեամբ պատրաստել ենք մեր եկեղեցին, խոնարհաբար խնդրում ենք միջնորդէք և պաշտօնական կերպով յայտնէք մեր Կարսի վիճակի առաջնորդին, եթէ կարելի է շուտով օծեն մեր եկեղեցին գոնէ Խաչվերացի տօնին կատարուի եկեղեցւոյ օծման ծէսը, որի համար ստորագրում ենք[506]

Հոգաբարձուք՝ Վարոս Զատիկեան
Համբար Սարգսեան
Յարութիւն Տէր-Ալէքսանդրեանց
Երեսփոխան Տէր-Մելքիսեդեանց
Ծխատէր Գեօրխանայի՝ եղիշէ քահանայ Սարգսեան
Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 641, թ. 38, բնագիր, ձեռագիր:

№ - 252
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԲԷՆԿԼԻ ԱՀՄԷՏ ԳԻՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՕԳՏԻՆ ՆՈՒԻՐԱՀԱՒԱՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 239 *15 սեպտեմբերի 1913 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Փոխանորդ Ղարսի Հայոց վիճակի
Յայտարարութիւն

Պատիւ ունեմ յայտնելու, որ Բէնկլի-Ահմէտ գիւղի ծխատէր Տ. Վարդան քահանայ Տէր-Վարդանեանի և դպրոցի Հոգաբարձուաց բանաւոր խնդրի համաձայն գնալու եմ իրանց գիւղը դպրոցական շէնքի համար կամաւոր նուէրներ հաւաքելու, ինչպէս իրանք գիւղացիք խոստացել էին, որպէսզի այդ փողերով, եկեղեցու ունեցածով և ապառիկների հաւաքումից մի գումար գոյացուի, որպէսզի հնարաւոր լինի փոստի կայարանը գնենք եկ. ծխ. դպրոցի համար: Ուստի այս մասին աւելորդ չհամարեցի հաղորդել ի գիտութիւն. հաւատացած եմ յաջողութեամբ պիտի վերջացնեմ:

Փոխանորդ Ղարսի Հ[ոգևոր] վ[իճակի]՝ Երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 406, թ. 110, ինքնագիր:

---

506 Տես թիւ 509 ծանօթագրութիւնը:

№ - 253
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԳԵՕՐԽԱՆԱ ԳԻՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՕԾԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2437 *23 սեպտեմբերի 1913 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Հոգևոր Կառավարութիւնս սրա հետ խոնարհաբար ներկայացնում է ի պատշաճաւորն տնօրէնութիւն Ձերդ Գերապատուութեան Անուոյ գործակալի ամսիս 10-ի N65 յայտարարութիւնը[507], և նորան կցած Գեօրխանա գիւղի Հոգաբարձութեան ամսիս 7-ի յայտարարութիւնը[508], որոնք վերաբերում են նոյն գիւղի նորակառոյց եկեղեցին օծելուն։

Նախագահ Կառավարութեան՝ Երեմիա վ. Ստեփանեանց
Անդամներ՝ Վաղինակ քահանայ Ֆրոյեան
Կորիւն քահանայ Քոթանջեան

Մակագրութիւն. *Փոխանորդին. ի հետևումն Հոգևոր Կառավարութեան ամսոյս 23-ի Թ. 2437 յայտարարութեան խնդրում եմ Բարձրապատուութեանդ համաձայն ժողովրդի ցանկութեան օծել վիճակիդ Գեօրխանա գիւղի նորակառոյց եկեղեցին[509]։ [Խորէն եպիսկոպոս]*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 641, թ. 36, բնագիր, ձեռագիր:

№ - 254
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԶՄԱԼԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԳԻՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 468 *4 նոյեմբերի 1913 թ.*
Ալեքսանդրապոլ

---

507 Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 641, թ. 37:

508 Տես թիւ 251 փաստաթուղթը:

509 Երևանի Փոխթեմակալ Խորէն եպիսկոպոսը յետևեալ գրութիւնն է առաքել Երևանի Վիճակային Կոնսիստորիային. ‹‹Ղարսի Հոգևոր Կառավարութիւնը տարւոյս նոյեմբերի 15-ի Թ. 2898 յայտարարութեամբ յայտնում է, որ վիճակի Գեօրխանա գիւղի նորակառոյց եկեղեցին Տ. Փոխանորդը, մասնակցութեամբ Հոգևոր կառավարութեան անդամ Կորիւն քահանայի, Անուոյ գործակալի և շրջակայ գիւղերի ծխատէր քահանաների, անցեալ հոկտեմբերի 20-21-ին օծել է՝ անուանելով Ս. Փրկիչ:

Վերոգրեալը յայտնելով, առաջադրում եմ Թեմական Ատենիդ մտցնել յիշեալ եկեղեցին ցուցակում›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 641, թ. 51):

Գեղապատիւ Փոխ-թեմակալին Երևանի թեմի

Սոյն նոյեմբերի 7-ից մինչև 13-ը այցելել եմ Կարսի շրջանի հետևեալ դպրոցները.

1) Բաշ-Շիրակի դպրոցը չորսամեայ է, գոյութիւն ունի 1860 թուականներից: Դպրոցն այցելեցի նոյեմբերի 7-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի:

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց.

1) Մխիթար Մխիթարեան, աւագ ուսուցիչ, աւարտել է Աղէքսանդրապօլի Առևտրական դպրոցը, ունի 2 տարուայ փորձառութիւն, աւանդում է շաբաթական 28 դաս, ամուսնացած է, ստանում է 450 րուբլի:

2) Վարոս Սարգսեան, աւարտել է Թիֆլիզի Գեղարուեստական կուրսերը, ունի 6 տարուայ փորձառութիւն, աւանդում է շաբաթական 28 դաս, ամուսնացած է, ստանում է 350 րուբլի:

Աշակերտութեան թիւն է 80, որոնցից 30-ը օրիորդներ են: Դպրոցը յաճախում են Օճախուլիից 1 աշ[ակերտ] և Աղջաղալայից 1 աշ[ակերտ]. ընդամենը՝ 2 աշ[ակերտ]:

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 3 սենեակից և մի միջանցքից: Կարիք է զգացւում ըէմօնտի: Կահկարասիքը միջակ է:

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները: Դպրոցն ունի գրադարան, որ բաղկացած է 200 կտոր հայ և ռուս գրքերից: Ուսումնական պիտոյքները անբաւարար են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Տեղացի Արշակ Սիմէօնեանից 100 ր., 2) Եկեղեցուց 200 ր.: Պակասը լրացնելու է համայնքը: Աշակերտները թոշակ չեն վճարում, ուսումը ձրի է:

Համոզեցի գիւղացիներին 400-500 ր. ծխական տուրք վճարել: Տանուտէրի և մի քանի ազդեցիկների բացակայութեան պատճառով համայնական ժողովը յետաձգեցի: Մօտ օրերս կը գնամ և յուսով եմ, յաջողութիւն կը գտնեմ:

Գիւղն ունի 1540 հոգի:

* * *

2) Փիրուալիի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1884 թուից: Դպրոցն այցելեցի նոյեմբերի 7-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի:

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց:

1) Սմբատ Մանուկեան – աւագ ուսուցիչ, աւարտել է Աղէքսանդրապօլի Ս. Փրկիչ դպրոցը (5-րդ դաս.), ունի 3 տարուայ փորձառութիւն նոյն գիւղում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուրի է, ստանում է 250 ր. և յարմարութիւններ:

2) Լևոն Սարգսեան – աւարտել է Աղէքսանդրապօլ քաղաքային դպրոցը, ունի 5 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն գիւղում, աւանդում է 27 դաս, ամուրի է, ստանում է 250 ր. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 60, որից 4-ը օրիորդներ են։ Դրսից սաներ չեն յաճախում դպրոցը։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 2 սենեակից և մի միջանցքից։ Կահկարասիքը լաւ է։

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. գրադարանն ունի 350 կտոր հայ և ռուս գրքեր։ Ուսում. պիտոյքներն անբաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բարեգործական Ընկերութիւնից 200 ., 2) Աշակ. թոշակներից 200 ր., 3) Եկեղ. 150 ր.- ընդամենը 550 ր.։

Համայնական ժողովը տանուտէրի ներկայութեամբ միաձայն որոշեց այս տարուանից ծխական տուրք չօգուտ դպրոցի վճարել 250 ր. հողի չափով և միանգամայն վերացնել թոշակները։

Գիւղն ունի 1050 հոգի։

* * *

3) Քիւրակ-դարայի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1897-ից։ Դպրոցն այցելեցի նոյեմբերի 8-ին. հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի։

Դպրոցի վարժուհին է Եղիսաբէթ Տէր-Յակոբեանը, որ աւարտել է Արղութեան դպրոցը, ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն գիւղում, աւանդում է շաբաթական 30 դաս, ստանում է 360 ր. և յարմարութիւններ։

Աշակերտների օր ըստ օրէ շատանալու պատճառով Հոգաբարձութիւնը մտադիր է երկրորդ ուսուցիչ հրաւիրել։

Աշակերտութեան թիւն է 32, որոնցից 6-ը օրիորդներ են։ Դրսից աշակերտներ չեն յաճախում դպրոցը։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. Շէնքը սեպհական է, բաղկացած է 2 սենեակից, խիստ անյարմար է։ Կահկարասիքը միջակ է։

Գրադարանը և ուսում. պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, ուսումնական պիտոյքներն անբաւարար են։

Դպրոցի տնտես. դրութիւնը. 1) Բարեգ[ործական] Ընկերութիւնից 2000 ր., 2) Աշակ. թոշակներից 100, 3) Եկեղեցուց 100 ր. - ընդամենը 400 րուբլի։

Ամսոյս 8-ին տեղի ունեցաւ համայնական ժողով տանուտէրի նախագահութեամբ։ Որոշուեց 200 ր. ծխական տուրք վճարել. հաստատ չեմ կարող ասել, թէ բոլորը կընդունեն այս որոշումը, որովհետև գիւղում կայ նաև պետական դպրոց։ Վերջինիս կողմնակիցները գուցէ հակառակեն, թէպէտ նրանց մի մասը համաձայն էր։

Հետևանքի մասին կը գրեմ։
Գիւղն ունի 1190 հոգի։

* * *

4) Փոքր Փարքետ – այս տարի է բացուել։ Անցեալ տարի ես այցելեցի այս գիւղը, որոշուեց դպրոց բանալ և շէնք շինել։ Դժբախտաբար այս վերջին որոշումը դեռ չէ իրագործուել։ Նորից ժողով ունեցայ. որոշուեց գարնանից սկսել նոր դպրոցական շէնքը։

Շուտով կուղարկեմ ուսուցիչ և կսկսուի ուսումը մի վարձու շէնքի մէջ։

5) Գեադուկ-Սաթըլմիշի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1905 թուից։ Դպրոցն այցելեցի նոյեմբերի 9-ին, հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի։

Ուսուցիչն է Յուսիկ Տէր-Մկրտչեանը, որ աւարտել է Ս. Փրկչի դպրոցը (5-րդ դաս.), ունի 4 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն գիւղում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուրի է, ստանում է 300 ր. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 32։ Դրսից աշակերտներ չեն յաճախում դպրոցը։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. Շէնքը սեպհական է, բայց չէ վերջացած։ Այս տարի շարունակւում է ուսումը վարձու շէնքի մէջ։ Կահկարասիքը միջակ է։

Գրադարանը և ուսումնական պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, պիտոյքներն անբաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բագուի Կուլտ[ուրական] Միութիւնից 180 րուբլի, 2) Աշակ. թոշակներից 130 ր. - ընդամենը 310 ր.

Ունեցայ ծխական ժողով, ուր խօսուեց դպրոցական կարիքների մասին։

Գիւղն ունի 750 հոգի։

* * *

6) Օրթաքեադիկլարի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1905 թուից։ Դպրոցն այցելեցի նոյեմբերի 10-ին։ Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի։

Ուսուցիչն է Գարեգին Գեոլչանեանը, որ աւարտել է Ս. Փրկչի դպրոցը, ունի 3 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուրի է, ստանում է 170 րուբլի և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 28, որից 8-ը օրիորդներ են։ Դպրոցը յաճախում են 1 աշակերտ և մի աշակերտուհի մալականներ։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը նոր է, սեպհական, բաղկացած է 2 սենեակից և մի միջանցքից: Կահկարասիքը միջակ է:

Գրադարանը և ուսումնական պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, պիտոյքներն աղքատիկ են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Աշակ. թոշակներից 130 ր., 2) Եկեղեցուց 50 ր. - ընդամենը 180 րուբլի:

Գիւղն ունի 580 րուբլի

* * *

7) Բաշ-քադիկլարի դպրոցը. 4 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1890 թուականից: Դպրոցն այցելեցի նոյեմբերի 10-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և արի դիտողութիւններ, որոնք արձանագրուած են մատեանում:

Ուսուցչական կազմը բաղկացած է 2 հոգուց.

1) Մատթէոս Մուրադեան – աւագ ուսուցիչ, աւարտել է Երևանի Թեմական դպրոցի V դաս., ունի 9 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուսնացած է, ստանում է 300 րուբլի:

2) Բենիամին Թոսունեան – աւարտել է Ս. Փրկչի դպրոցը ունի 4 տարուայ փորձառութիւն նոյն դպրոցում, աւանդում է 27 դաս շաբաթական, ամուրի է, ստանում է 110 րուբլի:

Աշակերտութեան թիւն է 89, որից 12-ը օրիորդներ են: Դրսից սաներ չեն յաճախում դպրոցը:

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 3 սենեակից և մի միջանցքից:

Գրադարանը և ուսումնական պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, պիտոյքները միջակ են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Կովկասի Բարեգործական Ընկերութիւնից 200 ր., 2) Աշակերտ. թոշակներից 250 ր. - ընդամենը 450 ր.:

Գիւղն ունի 1200 հոգի:

* * *

8) Բայրախտարի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1907 թուից: Դպրոցն այցելեցի նոյեմբերի 11-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի:

Ուսուցիչն է Յակոբ Գրիգորեանը, որ աւարտել է Ս. Փրկչի դպրոցը, ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին նոյն դպրոցում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուրի է, ստանում է 220 ր. և յարմարութիւններ:

Աշակերտութեան թիւն է 32, որից 3-ը օրիորդներ են: Դրսից սաներ չեն յաճախում դպրոցը:

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. անցեալ տարի որոշել էինք նոր դպրոցական շէնք կառուցանել: Այս տարի շնորհիւ Երեմիա վարդապետի ջանքերիւ գիւղն ունի մի գեղեցիկ դպրոցական շէնք, որ բաղկացած է 2 սենեակից և մի միջանցքից: Սենեակներից մէկի կտուրը դեռևս պատրաստ չէ: Կահկարասիքը բաւարար է:

Գրադարանը և ուսումնական պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, ուսումնական պիտոյքներն անբաւարար են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Աշակերտական թոշակներից 250 ր. - ընդամենը 250 ր.: Գարնանից կը մտցնենք ծխական տուրք:

Գիւղն ունի 510 հոգի:

* * *

9) Մաւրակի դպրոցը 4 ամեայ է, արական, գոյութիւն ունի 1905 թուից: Դպրոցն այցելեցի նոյեմբերի 11-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրել տուի:

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց.

1) Ենովք Տէր-Մատթէոսեան – ցենզիստ, ունի 5 տարուայ փորձառութիւն, 2 տարին սոյն դպրոցում, աւանդում է շաբաթական 27 դաս. ամուրի է, ստանում է 350 րուբլի:

2) Յովհաննէս Սահրատեան – աւարտել է Ս. Փրկչի դպրոցը, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուրի է, ստանում է 160 րուբլի:

Աշակերտութեան թիւն է 60, օրիորդներ չեն սովորում, դրսից սաներ չեն յաճախում դպրոցը:

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. Շէնքը նոր է, յարմար, բաղկացած է 2 սենեակից և մի միջանցքից: Կահկարասիքը նոր է և յարմարաւոր:

Գրադարանը և ուսումնական պիտոյքները: Գրադարանն ունի 54 կտոր հայ և ռուս գրքեր: Ուսումնական պիտոյքները բաւարար են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Կովկասի Հայոց Բարեգ[ործական] Ընկերութիւնից 250 ր., 2) Աշակերտ. թոշակներից 240 ր., 3) Եկեղեցուց 50 - ընդ[ամենը] 540 ր.:

Գիւղն ունի 500 հոգի:

* * *

10) Ուղուզուլիի դպրոցը, որ նպաստ է ստանում Բագուի Կուլտուրական Միութիւնից, շնորհիւ գործակալ քահանայ Տէր Եղիշէի անփոյթ վերաբերմունքի մինչև օրս չունի ուսուցիչ, թէև բազմիցս գրել և յիշեցրել եմ և երկու անգամ էլ ուսուցիչներ եմ ուղարկել, բայց ինչ-ինչ պատճառներով չեն պայմանաւորուել: Գլխաւոր պատճառն այն է եղել, թէ Միութիւնը այլևս չէ նպաստելու: Այդ մասին 2-3 անգամ գրել եմ գործակալ քահանային և ցոյց տուել նման լուրի սխալ լինելը: Վա-

ղը մի վարժուհի եմ ուղարկելու այդ գիւղը։ Այդ մասին կը հաղորդեմ Ձերդ Գերապատուութեանը։

11) Ճալայի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1905 թուից։ Դպրոցն այցելեցի նոյեմբերի 12-ին։ Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և արի դիտողութիւններ։

Ուսուցիչն է Գալուստ Աւետիսեանը, որ աւարտել է Գէորգեան ճեմարանի IV դաս., ունի 14 տարուայ փորձառութիւն, 2 տարին նոյն դպրոցում։ Աւանդում է շաբաթական 27 դաս, ամուսնացած է, ստանում է 350 ր. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 32, որից 4-ը օրիորդներ։ Դրսից սաներ չեն յաճախում դպրոցը։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 4 սենեակից, և մի մեծ միջանցքից։ Կահկարասիքը լաւ է։

Գրադարանը և ուսումնական պիտոյքները. գրադարանը բաղկացած է 600 կտոր հայ և ռուս գրքերից։ Պիտոյքները բաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) աշակերտ. թոշակներից 250 ր., 2) կալուածներից 100 ր., 3) եկեղեցուց 50 ր. - ընդամենը 400 րուբլի։

Գիւղն ունի 1200 հոգի։

Ուբեցայ ծխական-հոգաբարձական ժողով, որը կանգ առաւ ծխական տուրքի վրայ։ Կազմուեց համախօսական, բայց դեռևս մեծամասնութիւնը չի ստորագրել։ Հետևանքի մասին կը գրեմ։

* * *

12) Արազի գիւղի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1911 թուից։ Դպրոցն այցելեցի նոյեմբերի 12-ին։ Հետևեցի դասերին և մի քանի խորհուրդներ տուի ուսուցչին։

Ուսուցիչն է Յարութիւն Թորոսեանը, որ աւարտել է Բաշ-քադիկլարի երկդասեան ծխական դպրոցը, ունի 11 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, ստանում է 80 րուբլի և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 36, որից 3-ը օրիորդներ են։ Դրսից սաներ չեն յաճախում դպրոցը։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը վարձովի է, բաղկացած է 1 սենեակից։ Կահկարասիքը շատ անյարմար է։ Որոշեցինք կահկարասիք և ուսումնական պիտոյքներ գնել եկեղեցական փողերով։

Գրադարան և ուսում.պիտոյքներ. դպրոցը չունի գրադարան և ուսում. պիտոյքներ։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Աշակերտ. թոշակներից 120 ր., ուրիշ եկամուտներ չունի։

Գիւղն ունի 510 հոգի։

* * *

13) Ղօշավանքի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1888 թուից: Դպրոցը այցելեցի նոյեմբերի 12-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և դիտողութիւններ արի:

Ուսուցիչն է Յովհաննէս Մարգարեանը, որ աւարտել է Ս. Փրկչի դպրոցը, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է շաբաթական 27 դաս, ամուրի է, ստանում է 200 ր. և յարմարութիւններ:

Աշակերտութեան թիւն է 32, որից 3-ը օրիորդներ են: Դրսից սաներ չեն յաճախում դպրոցը:

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, վանական, անյարմար է, բաղկացած է 1 սենեակից և մի միջանցքից: Կահկարասիքը միջակ է:

Գրադարանը և ուսումնական պիտոյքները. Դպրոցը չունի գրադարան, ուսումն. պիտոյքներն անբաւարար են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Աշակ. թոշակներից 50 ր., 2) կալուածներից 200 ր. - ընդամենը 250 ր.:

Գիւղն ունի 300 հոգի:

* * *

Տիրացուական դպրոցներ ունեն Կարմիր վանք և Թազա-գիւղ գիւղերը: Անյարմար եմ համարում ցանկի մէջ մտցնելը: Յուսով եմ, որ միւս տարուանից այս գիւղերը կունենան կանոնաւոր դպրոցներ:

Բարեգործական Ընկերութեան նպաստներով պահուող դպրոցների մասին առանձին տեղեկագիր կուղարկեմ Խորհրդին:

Թեմական Տեսուչ՝ Թադէոս Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 388, թթ. 111-116, բնագիր, ձեռագիր:

№ - 255
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ ԳԱՒԱՌԻ ՕՃԱԽ-ՂՈՒԼԻ ԳԻՒՂԻ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԴՊՐԱՊԵՏ ՍՈՒՔԻԱՍ ՄԱՀՏԵՍԻ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ ՈՒՐԱՐ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

14 յունուարի 1914 թ.
Օճախ-ղուլի

Նորին Գերապատուութեան Տ. Փոխ-թեմակալին
Հայրապետական թեմին Հայոց Երևանայ
Կարսի շրջանի Շիրակ գաւառի Օճախ-ղուլի գիւղական հասարակութեան հաւատարմատարներ երեցփոխ Արմենակ Սաֆարեանից և խաչատուր Փանոսեանից
Խնդիր

Գերապատիւ Սրբազան Հայր.

Սրա հետ ներկայացնելով մեզ լիազօրած համախօսական թերթը՝ կազմուած Կարսի շրջանի Օճախ-ղուլի գիւղի ծխական հասարակութեան կողմից[510], պատիւ ունեմ խոնարհաբար խնդրել Ձերդ Բարձր Սրբազնութիւնից, բարեհաճել կատարել ըստ ցանկութեան մեզ լիազօրող ժողովրդեան, շնորհելով հրամանագիր մեր համագիւղացի հոգաբարձական նախագահ և դպրապետ Սուքիաս Մահտեսի Մելիքեանին կրել ուրար[511]։

Սոյն խնդրի մատուցումը հաւատում ենք և յանձնարարում յիշեալ Սուքիաս Մահտեսի Մելիքեանին։

Սրա հաստատութեան համար ստորագրում ենք և կնքում եկեղեցական կնիքով։

Երեցփոխան՝ Արմենակ Սաֆարեան
Հոգաբարձու՝ Խաչատուր Մինասեան[512]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 883, թ. 3, բնագիր, ձեռագիր:

№ - 256
ՂԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ՄԱՀՏԵՍԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՉԱԼԹԻԿԵԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՒԻՐԱԲԵՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 31 *28 յունուարի 1914 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական Թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տէր Խորէն եպիսկոպոսին
Ղարսի փոխանորդից
Յայտարարութիւն

Աւելորդ չեմ համարում հաղորդելու Ձերդ Սրբազնութեան, թէ ամսիս 26-ին հանգուցեալ Մահտեսի Աղէքսանդր Չալթիկեանի ժառանգները, կատարելով հանգուցեալի տարելիցի առթիւ հոգեհանգիստ, յայտարարել տուին իմ բերանով, որ արդէն փոխադրել են Նորին Օծութեան անունով Ս. Էջմիածին դպրոցական ֆօնդի օգտին մի հազար րուբլի։ Մենք էլ դպրոցական ֆօնդի հաշիւները շուտով կը փակենք։

Այլև քսան և հինգ հազար րուբլիների վեկսիլները[513] վճարել են բանկին, քանի օր Հոգաբարձութիւնը իր երաշխաւորութեամբ նոյն

510 Տես նոյն տեղում, թթ. 4-5:

511 1914 թ. յունուարի 22-ին Երևանի Փոխթեմակալ Խորէն եպիսկոպոսը Սուքիաս Մահտեսի Մելիքեանին շնորհել է ուրար կրելու իրաւունք (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 883, թ. 2 և շրջ.):

512 Փաստաթուղթը կնքուած է եկեղեցական կնիքով:

513 Վեկսիլ (вексель) – մուրհակ:

գումարը զանազան ժամանակներում զեղչով վերցրել է և որպէս զեղչ դուրս էին եկել մօտ (1000) մի հազար րուբլի, կը նշանակէ ժառանգներից զուտ ստացած է 24.000+1000=25.000 ր.: Վերոյիշեալ գումարը գլխովին ծախսուելու է և դեռ մօտ 8-10 հազար կը պակասի բոլորովին եկեղեցու շինութիւնը պատրաստ լինելու, հաշուի առած և դրսի շրջապատի պարսպապատելը, մի երկու սենեակների շէնքը, սալահատակ մայթերը և այլն:

Մակագրութիւն. *Հարցնել Դիւանից ստացե՞լ են 1000 ր., զեկուցել վեհին, որ խոստացած 25.000 ր. վճարում է եղել շինութեան հոգաբարձութեանը*[514]*:*

[Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, 48, ց. 1, գ. 176, թ.7, բնագիր, ձեռագիր:

№ - 257
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԶՄԱԼԵԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՕՃԱԽՂՈՒԼԻ ԳԻՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 494 *3 փետրուարի 1914 թ.*
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալիս Երևանի թեմի

Փետրուարի 1-ին այցելեցի Կարսի շրջանի Օճախղուլի գիւղի դպրոցը, որը երկսեռ է, 3 ամեայ, գոյութիւն ունի 1912 թուից: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և արձանագրել տուի իմ դիտողութիւնները:

Ուսուցիչն է Յարութիւն Տէր-Աղէքսանդրեանը, որ աւարտել է Աղէքսանդրապօլի Քաղ[աքային] դպրոցը, ունի 5 տարուայ փորձառութիւն, 2 տարին նոյն դպրոցում, աւանդում է 30 դաս, ամուսնացած է, ստանում է 200 ր. և յարմարութիւններ:

Աշակերտութեան թիւն է 47, որից 12-ը օրիորդներ են:

514 1914 թ. փետրուարի 24-ին Կաթողիկոսական դիւանը հետևեալ գրութիւնն է ուղարկել Խորէն եպիսկոպոսին. «Նորին Ս. Օծութեան հրամանով դիւանս յանձնարարում է Ձերդ Գերապատուութեան յայտնել, թէ հանգուցեալ Չալթիկեանի նուիրաբերած 25000 րուբ. պարտամուրհակների զեղչուելուց որքա՞ն կանխիկ դրամ է գոյացել ամբողջապէս, որ չի պարզուում Ձեր յայտարարութիւնից»: Փետրուարի 27-ին ստացուել է Խորէն եպիսկոպոսի հետևեալ պատասխանը. «Ինչպէս երևում է Ղարսի Տ. Փոխանորդի անցեալ յունուարի 28-ի Թ. 31 յայտարարութիւնից, ղարսեցի հանգուցեալ Չալթիկեանի ժառանգների նուիրաբերած 25000 ռ. պարտամուրհակների զեղչումից գոյացել է 24000 ռ. կանխիկ դրամ (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 176, թթ. 2, 3):

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 1 սենեակից, կահկարասիքը անբաւարար է։

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, ուսումն. պիտոյքների կողմից աղքատ է։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բարեգործական Ընկերութիւնից նպաստ 50 րուբլի. 2) Աշակերտական թոշակներից 160 րուբլի. ընդամենը 210 րուբլի։

Գիւղն [ունի] 130 տուն։

Մենք չենք ուզում այս գիւղում հիմնովին բարեփոխել դպրոցը, որովհետև գարնանից հաւանականօրէն կառավարութիւնը կը գաղթեցնէ այս և հարևան գիւղերը։

Վաղը, ամսոյս 4-ին կը գնամ Բագարան, այնտեղից կանցնեմ Սարդարապատի շրջանը։ Վերջացնելուց յետոյ կը գնամ Երևան։

Թեմական Տեսուչ՝ Թադէոս Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թ. 14 և շրջ., ինքնագիր:

№ - 258
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԶՄԱԼԵԱՆԻ ՉԵԿՈՒՑԱԳՐԻՑ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԲԱԳԱՐԱՆԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 495 *8 փետրուարի 1914 թ.*

Վլեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալիս Երևանի թեմի

Փետրուար ամսի 4-ից մինչև նոյն ամսի 8-ը այցելեցի թեմիս հետևեալ գիւղական դպրոցները.

1. Բագարանի դպրոցը (Կարսի շրջան) 3 ամեայ է, երկսեռ, ունի 7 տարուայ անցեալ։ Դպրոցն այցելեցի փետրուարի 4-5-ին, հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և արձանագրեցի իմ դիտողութիւնները։

Ուսուցիչն է Վարշամ Զիլինգարեանը, որ աւարտել է Երևանի Թեմ. դպրոցի V դաս., ունի 6 տարուայ փորձառութիւն, 2 տարին նոյն դպրոցում, աւանդում է 24 դաս, ամուսնացած է, ստանում է 400 ր, և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 42, որից 2-ը օրիորդներ են։ Նոյն գիւղի պետական դպրոցն ունի 23 աշակերտ։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. դպրոցական շէնքը նոր կառուցուած է, յարմար, բաղկացած է 3 սենեակից և մի միջանցքից։ Կահաւորութիւնը բաւարար է։

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. Գրադարանն ունի 30 կտոր հայ և ռուս գրքեր, պիտոյքներն անբաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Ս. Գէորգի արդիւնքից 500 ր., ընդամենը 500 րուբլի։ Գումարեցի ծխական ժողով և տրամադրեցի 200 ր. ծխական տուրք վճարել միւս տարուանից, որպէսզի դպրոցը վերածուի երկդասեանի։ Տուրքի գաղափարը սիրով ընդունեցին, մնում է պաշտօնական ձև տալ, որ և կանէ ուսուցիչը յարմար դէպքից օգտուելով։

Գիւղն ունի 80 տուն[515]*։*

Թեմական Տեսուչ՝ Թադէոս Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թ. 17 և շրջ., ինքնագիր:

№ - 259
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԶՄԱԼԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԲԱԾ-ՇԻՐԱԿ ԵՒ ԲԵՐԴՈՒՍ ԳԻՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 496 *8 փետրուարի 1914 թ.*
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալիս Երևանի թեմի

Սրանով պատիւ ունեմ հաղորդելու Ձերդ Գերապատուութեանը, որ ի հետևումն իմ N491 գրութեան Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ամսոյս 5-ին որոշել է Կարսի շրջանի Բաշ-Շիրակ գիւղի դպրոցին 200 ր. նպաստ տալ։ Խորհուրդը միաժամանակ ինձ խնդրել է, որ ես տեղեկագրեր տամ Բաշ-Շիրակի և նոյն շրջանի այն դպրոցների մասին, որոնք այս տարուանից նպաստ են ստանալու ընկերութիւնից։

Այդպիսի տեղեկագիր ես կուղարկեմ հէնց այսօր։

Օլթայ շրջանի Բերդուս գիւղի դպրոցի մասին Արժանապատիւ Վարդան քահանայ Սարաֆեանը ինձ գրում է, որ այս տարի դպրոցը չունի ուսուցիչ։ Գիւղը տարւայ սկզբից որոշել էր 150 ր. վճարել ուսուցչին։ Ես այդ ռոճիկով մարդ չգտայ և այժմս էլ չեմ կարողանում գտնել իսկ Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը տարուայ սկզբից մերժեց նպաստ տալ վերոյիշեալ դպրոցին։

Թեմական Տեսուչ՝ Թադէոս Խզմալեան

Մակագրութիւն. *Նշանակել որ ուսուցիչ չլինելու պատճառով փակ է մնացել։*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թ. 15, ինքնագիր:

---

515 Բաց է թողնուած Ալեքսանդրապոլի գիւղերին վերաբերող մասը:

№ - 260
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՏԵԿՈՐ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

10 փետրուարի 1914 թ.
Տեկոր

Նորին Գերապատուութեան Փոխանորդին Կարուց նահանգի Համայնի Տիկոռու գիւղի Նախիջեւանու շրջանի խնդիր

Պարտ համարեմք բացատրելու բազմաթիւ, թշուառ ժողովուրդի անելանելի դրութիւնը մեր Հոգևոր ղեկավարներին, որովհետև 500-ից աւելի երկսեռ ժողովուրդ չունի եկեղեցի, երկար ժամանակ է իսպառ զրկուած են ամեն մի եկեղեցական օրէնքից: Սակայն լիովին կարողութիւն չկայ եկեղեցի շինելու: Բնութեան պատահարներից աղքատացել է ժողովուրդը, ուստի աղօթատուն կառուցանելու համար մեր տուած խնդիրները միշտ մնացել են անհետևանք, մի՞թէ կարելի է մոռանայ հովիւը իւր տակար ոչխարը, ուստի հովուէք բանաւոր հօտի:

Ըստ որում մենք պատիւ ունենք ամենախոնարհաբար խնդրել Ձերին Գերապատուութեանդ լինել բարերար, ներկայացնել մեր այս աղերսագիրը Բարձրագոյն Հոգևոր իշխանութեանը, Ձերին շնորհիւ միջնորդել Նորին Բարեհայեցողութեանը այս կարևոր հարցը տնօրինելու, որ է շինել մեզ եկեղեցի և իրաւունք տրուի հանգանակութիւն անելու:

Ե. Դանիէլեանց, Երուանդ Աւագեան
Կարապետ Մալխասեան[516]

Վասն ուղիղ լինելուն սոյն խնդրագիրը իմ ներկայութեան, որի համար կը վաւերացնեմ արքունական կնքով

Տանուտէր Տիկոռի՝ Յակոբ Աւետիսեան
Երեսփոխան Տիկոռի եկեղեցւոյ՝ Յովակիմ Դանիէլեանց
Տեկոռու ծխատէր Յովհաննէս քահանայ Երիցեանց[517]

ՀԱԱ, 48, ց. 1, գ. 176, թ. 5 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 261
ՂԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՏԵԿՈՐ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 72 *22 փետրուարի 1914 թ.*
Կարս

516 Հետևում է ևս 14 անձի ստորագրութիւն:

517 Փաստաթուղթը կնքուած է տանուտէրի, երեսփոխանի և քահանայի կնիքներով:

Երևանի Հայոց Հայրապետական Թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տէր Խորէն եպիսկոպոսին
Ղարսի փոխանորդից

Սորա հետ պատիւ ունեմ Ձերդ Սրբազնութեանը իմ անունով ստացած Տիկոռի մերայինների խնդիրը ներկայացնելու, որը հարկաւ անուշադիր չէ թողնուած. պարզելու համար հարկ եմ համարում յարակցել, որ իրանց նախնական խնդրին ելք տուած ենք Տիկոռի գործակալի միջոցով և պահանջել էինք տեղեկութիւններ: Այժմս հարցը պարզում է, որ իրանք չեն կարող սեպհական միջոցներով նոր աղօթատուն ունենալ: Երկրորդ, աղերսում են, որ իրանց թոյլատրուի ժողովարարութեան դիմել: Տիկոռի անունով որպէս պահեստի դրամ ներկայումս կայ կանխիկ 891 ր. սրա (500 ր. բէնտայ[518] է) և ունինք ստանալիք Ս. Աստուածածնի եկ. միաբան Տէր Խորէն ք[ահանայ] Ստամբօլցեանից մօտ 300-400 ր.: Այս ամենը յայտնելուց յետոյ խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Սրբութեան բարեհաճ տնօրէնութիւնն և թոյլ տալ կազմել տալու աղօթատան նախահաշիւը, շէնքի պլանը՝ եղած գումարներից ծախք անելով: Թողնելով միւս կէտերի տնօրէնութիւնը կամ հրահանգութիւնը Նորին Սրբազնութեանդ[519]:

Փոխանորդ Ղարսի Հայոց Վիճ. Երեմիա վ. Ստեփանեան

Մակագրութիւն. *կազմել շինարարական յանձնաժողով և ապա սկսել նախնական աշխատանքները, կազմել նախահաշիւ պլան և այլն:*

ՀԱԱ, 48, ց. 1, գ. 176, թ. 6, ինքնագիր:

№ - 262
ՂԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՏԵԿՈՂ ԳԻՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 100 *27 մարտի 1914 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական Թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տէր Խորէն եպիսկոպոսին
Ղարսի փոխանորդից

---

518 Բէնտա – հողային հասոյթ, հասոյթ, եկամուտ, որ ստացւում է տոկոսաբեր թղթերից, վարձով տուած կալուածքից և այլն:

519 1914 թ. փետրուարի 27-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է առաքել Երեմիա վարդապետին. «Ի հետևումն ամսոյս 22-ի Թ. 72 յայտարարութեան, խնդրում եմ Ձերդ Բարձրապատուութեանը կարգադրել հարկաւորը վիճակիդ Տիկոռի գիւղի աղօթատան շինութեան համար: Նախապէս ցանկալի է ընտրել շինարարական յանձնաժողովին, ապա կազմել հարկաւոր նախահաշիւ և ի հաստատութիւն ներկայացնել ինձ» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 176, թ. 4):

Յայտարարութիւն

Համաձայն Ձերդ Սրբազնութեան պատւէրի 27-ին փետրուարի ն[որ]/տ[ոմար] Թ. 468 Տիկոռի աղօթատան մասին կատարած հոգացողութեանս հետեւանքը է՝

ա) Սորա հետ ներկայացնում եմ աղօթատան սեւագիր պլանը և նախահաշիւը, խնդրելով Ձեր հաւանութիւնը և կամ դիտողութիւնները ու վերադարձնել ինձ, որ իսկականը կազմել տամ։

բ) Շինարար հոգաբարձուներ ճանաչել կամ հաստատել նախկիններից Պ.Պ. Յակովբ Մոսոյեան, Աթոյ Խաչատրեան, Սարգիս Յովհաննիսեան և երեսփոխ Դանիէլեանին։

գ) Նշանակել կամ ճանաչել նախագահ մէկին, որը կը լինի Ձեր ներկայացուցիչը (ուրեմն ինձ) նոցա ցանկութիւնն է, որ գրում եմ։

դ) Թոյլ տալ իմ գիտութեամբ և իմ անմիջական հսկողութեամբ մակարդակը նկատել տալ և ծախքերը հոգալ Հոգևոր Կառավարութեան մէջ եղած պահեստի պատրաստի գումարից և ներկայացնել Ատենին փաստացի թղթեր բոլոր հոգաբարձուների գիտութեամբ։

ե) Ներկայումս Տիկոռի Ս. Երրորդ. գումարը հետևեալ պատկերն է տալիս.

1.	*Ղարսի մանր վարկ. ընկ. գանձարանում կայ*	*358 ր.*
2.	*Տէր Խորէն քահանայ Ստամբօլցեանը վճարել է մօտ.*	*340 ր.*
3.	*Բէնկլի Ահմէտի Հոգ. փոխարինաբար վերցրած*	*500*
		-------- 1198 ր.

(իմ գրածի նման էլ եղաւ-600 ր. վեկսիլը յետ գնեցինք 510 ր. դպրոցը շահեց 90 ր. սա քիչ բան չէ)։ Եղած գումարով ամենայն վստահութեամբ կարելի է գործը սկսել։

զ) Թոյլ տալ բարեհաճիք Ձատկից անմիջապէս յետոյ գնալ Տիկոռ և աղօթատան տեղ օծել կամ օրհնել։

է) Անհրաժեշտ է տալ մի ժապաւինեալ մատեան՝ նախ նուէրները և ապա ծախքերը արձանագրելու։

Ի միջի այլոց քանդած քարերը շատ գործը կը հեշտացնէին, բայց Մառի մօտ աշխատող Օրբելին[520] բողոքել է տեղի նաչալնիկին, որը արգելել է ոչ մի քարի ձեռք չտալ, եթէ հնարաւոր լինի թոյլտուութիւն ստանալ, դա կը նշանակէր աղօթատունը շինուած՝ վերջացած է։

Ձեկուցանելով այդ ամենի մասին՝ սպասում եմ Ձերդ Սրբազնութեան շուտափոյթ տնօրէնութեանը։

Փոխանորդ Ղարսի Հայոց Վիճ.՝ Երեմիա վ. Ստեփանեան

ՀԱԱ, 48, ց. 1, գ. 176, թ. 43 և շրջ., ինքնագիր:

[520] Յովսէփ (Իոսիֆ) Օրբելի (8/20 մարտ 1887, Քութայիս, Վրաստան – 2 փետրուար 1961, Լենինգրադ) – Արևելագէտ, հնագէտ, հասարակական գործիչ, Խ.Ս.Հ.Մ. Գիտութիւնների Կաճառի ակադեմիկոս (1935), Հ.Խ.Ս.Հ. Գիտութիւնների Կաճառի ակադեմիկոս և առաջին նախագահ (1943-1947):

№ - 263
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՌՈՒՑՈՒՈՂ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ ՅԻՇԱՏԱԿԱԳՐԵՐՈՎ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԵՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

5 մայիսի 1914 թ.
Կարս

Առնանագրութիւն

1914 թ. մայիս 5-ի երեկոյեան ժամը 7-ին կայացաւ Կարսի Հայոց Եկեղեցաշինութեան Հոգաբարձութեան նիստը Կարսի Յաջորդ Տ. Երեմիա վարդապետի նախագահութեամբ, վերջինիս բնակարանում։ Ամբողջ կազմից բացակայ էին նիստին Պ.Պ. Յարութիւն Ղազանջեանց և գանձապահ Պ. Յակովբ Ասրանեանց։

Ժողովը լսեց.

Նախ՝ եկեղեցու արևմտեան ու հարաւային ընկուզէ և քանդակագործ դռների ճակատների վերայ արձանագրուած են հետևեալ յիշատակագրերը. առաջնի վերայ «Յիշատակ է Թադէոսի Մկրտչեան Փինաչեանց», իսկ երկրորդի վերայ. «Յիշատակ է Գայիանէի Մելքոնեան Փինաչեանց», որպիսի յիշատակագրերի առիթով Հոգաբարձութիւնս ստացել է մի քանի թերթերի վրայ 445 ստորագրութեամբ բողոքագրեր Կարսի հայ հասարակութեան զանազան խաւերից, որոնք գտնում են այդ յիշատակագրերը «անվայել» ու պահանջում են ջնջել այդ վերադարձնելով Փինաչեան ամուսիններին այն 740 ր. գումարը, որով վճարուած է դռների արժէքը և որպիսի գումարը ստորագրութեան թերթերով հաւաքուած է բողոքարկուներից, եթէ միայն Փինաչեանները չեն պահանջեն կամ կը համաձայնեն չեն ստանալ այդ գումարը։

Երկրորդ՝ կարդացուեց Հոգաբարձութեան այն արձանագրութիւնը, որ տեղի է ունեցել անցեալ ապրիլ 26-ին և որով վճռուած է յիշատակագրերի առջևից աւելացնել «դուռս այս» բառերը թիւրիմացութեան ոչ մի տեղիք չը տալու համար։

Երրորդ՝ թէ ամսիս 4-ին կայանալի ծխական ընդհանուր ժողովի փոխարէն տեղի էր ունենալու ծխական ներկայացուցչական ժողով, սակայն ժամանակի սղութեան պատճառով ծխականները հնարաւորութիւն չունենալով ներկայացուցիչներ ընտրելու ու առաջարկելու ժողովի, եկել էին 100-150 անձինք, որոնք ընտրելով նախագահ ու ժողովն համարելով մի միայն խորհրդակցական, ձայների ստուար մեծամասնութեամբ քննելով հետևեալ սկզբունքային խնդիրը, թէ արդեօ՞ք օրինական է յիշատակագրերով նուիրատուութիւններ ստանալ

զանազան անձերից կամ օրինականութիւններից յօգուտ եկեղեցու շինութեան կամ սրա արդ ու զարդի, ձայների բացարձակ մեծամասնութեամբ վճռել են Հոգաբարձութեանս պարտաւորեցնել սկսած Փինաչեան ամուսինների նուիրաբերած դռներից այլ ևս ոչ մի կերպ և ոչ ոքից յիշատակագրերով նուէրներ չստանալ կառուցանուող եկեղեցու օգտին։

Հոգաբարձութիւնս ի նկատի առնելով նախ, որ թէ՛ 445 անձանց բողոքագիրը և թէ՛ խորհրդակցական անուանուած ժողովի բացարձակ վճիռը, թէ ոչ մի նուիրաբերութիւն չը պէտք է ընդունել յիշատակագրերով, հակասում են այն դարերով սրբագործուած ու քաղաքացիական իրաւունք ստացած սովորութիւններին, որոնցով ղեկավարուել է հայ ազգը և շարունակ յիշատակագրերով նուիրաբերութիւններ ստացել թէ՛ եկեղեցիների և թէ՛ այլ հասարակական հիմնարկութիւնների կառուցման ժամանակ առանց իրաւունք վերապահելու այդ շէնքերը կառուցանողներին մերժել նուիրաբերողների նուէրներով արհամարհելով նրա կրօնական զգացմունքները։

Երկրորդ, որ Կարսի հայ հասարակութեան մի զգալի մասը իւր այդ անիրաւացի պահանջներով, թէ չնչեցէք Փինաչեանների յիշատակագրերը, թէ ոչ մի նուիրաբերութիւն յիշատակագրերով այլ ևս մի ընդունէք, ճնշում է գործում Հոգաբարձութեանս վերայ և զրկում սրան եկեղեցու շինութիւնը շարունակելու հնարաւորութիւնից։

Հոգաբարձութիւնս որոշեց հրաժարուել ներկայ եղողների ամբողջ կազմով Կարսի Հայոց կառուցանուող եկեղեցու շինարար Հոգաբարձութեան պաշտօնից և դադարեցնելով եկեղեցու շինութեան շարունակութիւնը՝ խնդրել Կարսի Տէր Յայտորդին նշանակել ծխական Ընդհանուր ժողով ընտրելու Հոգաբարձութեանս հաշիւները վերստուգող մի Մասնաժողով, որին և ներկայացնել շինութեան ընդհանուր հաշիւներն ի քննութիւն, իսկ Գեր. Տէր Փոխ-թեմակալին Երևանի ներկայացնել ներկայ արձանագրութիւնը ի տես և ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն։

Հոգաբարձութեան նախագահ
Անդամներ՝ Ս. Գրիգորեան
Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան
Խաչ. Բզնունի
Յակոբ Վարդանեան
Մկրտիչ Կոստանեանց

ՀԱԱ, 48, ց. 1, գ. 176, թ. 29-30 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 264
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԶՄԱԼԵԱՆԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 514 *3 յունիսի 1914 թ.*
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալին Երևանի թեմի

Ապրիլ ամսի 22-ից մինչև մայիսի 26-ը այցելել եմ թեմիս հետևեալ դպրոցները.

I. *Կաղզուան աւանի դպրոցը 5 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 80-ական թուականներից: Դպրոցն այցելեցի ապրիլի 24-ին և 25-ին: Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրեցի մի առանձին մատեանում:*

Ուսուցչական կազմը բաղկացած է 6 հոգուց.

1) Մելիք Եղիկեան – աւագ ուսուցիչ, աւարտել է Գէորգեան ճեմարանը, ունի 13 տարուայ փորձառութիւն, երկրորդ տարին նոյն դպրոցում, աւանդում է 18 դաս, ամուրի է, ստանում է 850 րուբ.:

2) Տիկին Շուշանիկ Հայրապետեան – աւարտել է Բագուի Գիմնազիայի VIII դաս., ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին նոյն դպրոցում. աւանդում է 25 դաս և միաժամանակ Մանկավարժական ժողովի քարտուղարն է, ստանում է 500 րուբ.:

3) Օր[իորդ] Վարսենիկ Զարգարեան – աւարտել է Թիֆլիսի Գիմնազիայի VIII դաս., առաջին տարին է պաշտօնավարում, ստանում է 400 ր.:

4) Օր[իորդ] Արփենիկ Զիլինկարեան – աւարտել է Թիֆլիսի Բարեգործական Ընկերութեան կար ու ձևի դպրոցը, աւանդում է 12 դաս, ստանում է 150 րուբ.:

5) Վահան Առաքելեան – Հայ լեզուից աւարտական քննութիւն է տուել Երևանի Թեմական դպրոցում, Թիֆլիսի երաժշտական դպրոցի II կուրսից, աւանդում է 24 դաս, խմբապետ, ամուրի, ստանում է 550 րուբ.:

6) Սմբատ Բայբուրդեան – աւարտել է Երևանի Թեմական դպրոցը, ունի 4 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում:

Աշակերտութեան թիւն է 165, որից 88 աշակերտուհիներ են:

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 6 սենեակից և մի միջանցքից, ունի մշտական բեմ. կահկարասիքը բաւարար է:

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները, Գրադարանը բաղկացած է 300 կտոր հայ և ռուս գրքերից: Ուսումնական պիտոյքները բաւարար են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Կամաւոր նուէրներ 600 ր., 2) Աշակերտական թոշակներից 650 ր., 3) Եկեղեցական կալուածներից 1000 ր., 4) Պատահական եկամուտներ 1200 ր. – ընդամենը 3450 րուբլի։

Աւանն ունի 800 հայ տուն։

Ապրիլի 28-ին ունեցայ ծխական ժողով, ուր խօսեցի դպրոցի կարիքների մասին։

***

II. *Շատևան գիւղի դպրոցը 3-ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1908 թուից։ Դպրոցն այցելեցի ապրիլի 30-ին, հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրեցի մի առանձին մատեանում։*

Ուսուցչական կազմը բաղկացած է 2 հոգուց.

1) Հայրապետ Դանիէլեան –աւագ ուսուցիչ աւարտել է Երևանի Թեմական դպրոցը, ունի երկու տարուայ փորձառութիւն միևնոյն դպրոցում, աւանդում է 25 դաս, ամուրի է, ստանում է 400 ր. և յարմարութիւններ։

2) Հմայեակ Վարդապետեան – օգնական ուսուցիչ, ծխական դպրոց է աւարտել, ունի 16 տարուայ փորձառութիւն, առաջին տարին նոյն դպրոցում, աւանդում է 21 դաս, ամուսնացած է, ստանում է 120 ր.։

Աշակերտութեան թիւն է 79, որից 13-ը օրիորդներ են։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 2 սենեակից և մի հաշտից։ Կահաւորութիւնը միջակ է։

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, ուսում. պիտոյքներն անբաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բագուի Կուլտուրական Միութիւնից 135 ր., 2) Ծխական տուրքեր 50 ր., 3) Աշակերտական թոշակներից 235 ր., 4) Եկեղեցական կալուածներից 70 ր., 5) Պատահական նուէրներից 45 ր. – ընդամենը 535 ր.։

Գիւղն ունի 100 տուն։

III. *Սարիղամիշի դպրոցն այցելեցի երկրորդ անգամ մայիսի 2-ին։ Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրեցի։ Սարիղամիշում ունեցայ ծխական ժողով։*

IV. *Արդահանի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 80-ական թուականներից։ Դպրոցն այցելեցի մայիսի 15-ին և 16-ին։ Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրեցի։*

Ուսուցչական կազմը բաղկացած է 3 հոգուց.

1) Մկրտիչ Լոռեցեան – աւագ ուսուցիչ, աւարտել է Երևանի Թեմական դպրոցը, ունի 6 տարուայ փորձառութիւն, առաջին տարին նոյն

դպրոցում, աւանդում է 20 դաս, ամուսնացած է, ստանում է, ստանում է 690 ր. և յարմարութիւններ (խմբապետ է)։

2) Տիկին Աստղիկ Լոռեցեան – աւարտել է Թիֆլիսի Օր[իորդական] Գիմնազիան, ունի 7 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում. աւանդում է 25 դաս, ստանում է 450 ր.։

3) Անուշաւան Լալայեան – Երևանի Թեմական դպրոցի V դասարանից, ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 24 դաս, ամուրի է, ստանում է 450 ր.։

Աշակերտութեան թիւն է 127, որից 67-ը օրիորդներ են։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը վարձովի է, յարմար, բաղկացած է 6 սենեակից, ունի մշտական բեմ, կահաւորութիւնը միջակ է։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բարեգործական Ընկերութիւն - 300 ր., 2) Ծխական տուրք - 800 ր., 3) Աշակերտական թոշակ - 400 ր., 4) Եկեղեցուց - 430 ր., 5) Պատահական նուէրներ – 300 ր., ընդամենը – 2230 ր.։

Աւանն ունի 600 հայ ընտանիք։

Մայիսի 18-ին Արդահանում ունեցայ ծխական և ծնողական ժողով և խօսեցի դպրոցի ու ուսման մասին։

*****

Օլթիի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 80-ական թուականներից։ Դպրոցն այցելեցի մայիսի 19-ին, 20-ին և 21-ին։ Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և իմ դիտողութիւններն արձանագրեցի։

Ուսուցչական կազմը բաղկացած է 3 հոգուց.

1) Սիմէօն Մելքոնեան – սովորել է Ներսիսեան դպրոցում, ունի ուսուցչական ցենզ, ունի 6 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւագ ուսուցիչ է, աւանդում է 23 դաս, ստանում է 500 ր.։

2) Տիկին Մարգարիտ Մելքոնեան – ունի ուսուցչական ցենզ, 9 տարի ծառայել է նոյն դպրոցում, աւանդում է 25 դաս, ստանում է 300 ր.։

3) Տիկին Մարիամ Միքայէլեան – աւարտել է երկդասեան պետական դպրոց, աւանդում է թուաբանութիւն և ձեռագործ, ունի 6 տարուայ փորձառութիւն նոյն դպրոցում, աւանդում է 18 դաս, ստանում է 120 ր.։

Աշակերտութեան թիւն է 105, որից 58 աշակերտուհիներ են։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 4 սենեակից, ունի մշտական բեմ, կահաւորութիւնը միջակ է։

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. գրադարանն ունի 300 կտոր հայ և ռուս գրքեր։ Ուսումնական պիտոյքներն այնքան էլ բաւարար չեն։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) 200 ր. Բարեգործական Ընկերութիւնից, 2) Մխական տուրք – 500 ր., 3) Աշակերտական թոշակ – 300 ր., 4) եկեղեցուց 100 ր., ընդամենը 1200 րուբլի։

Աւանն ունի 200 հայ ընտանիք։

Օլթիում ունեցայ 2 ծխական և ծնողական ժողովներ։ Առաջին ժողովում ընտրեցինք նոր հոգաբարձուներ, որովհետև հին կազմը ամբողջովին հրաժարւում էր իր պաշտօնից։

*****

Զարդենէսի դպրոցը 3 ամեայ է, երկսեռ, գոյութիւն ունի 1908 թուից։ Դպրոցն այցելեցի մայիսի 21-ին։ Դասերին չկարողացայ հետևել, որովհետև աշակերտները դաշտային աշխատանքներով էին զբաղուած։

Դպրոցի ուսուցիչն է Մարուքէ Խաչատրեանը, որ աւարտել է ծխական երկդասեան դպրոց, բայց ինքնակրթութեամբ հասել է ցանկալի զարգացման։ Առաջին տարին է պաշտօնավարում։ Այս ամառ քննութիւն է տալու հայկական միջնակարգ դպրոցներից որևէ մէկում։ Ստանում է 300 ր. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 40, որից 15-ը աշակերտուհիներ են։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 3 սենեակից և մի միջանցքից։ Կահաւորութիւնը միջակ է։

Դպրոցի գրադարանը և ուսումնական պիտոյքները. Գրադարանը բաղկացած է մօտ 100 կտոր հայ և ռուս գրքերից։ Ուսում. պիտոյքներն անբաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բարեգործական Ընկերութիւնից 250 ր., 2) Մնացածը հոգում է գիւղը։

Գիւղն ունի 25 տուն։

*****

VII. *Ագարակ գիւղի դպրոցը 3 ամեայ է, արական, գոյութիւն ունի 1908 թուից։ Դպրոցն այցելեցի մայիսի 24-ին։ Հետևել դասերին չկարողացայ, որովհետև աշակերտութիւնը վաղուց դադարել էր դպրոցը յաճախել դաշտային աշխատանքների պատճառով։*

Դպրոցի ուսուցիչն է կարապետ Տէր-Յովհաննէսեանը, որ աւարտել է Գէորգեան Ճեմարան, ունի IV դասարանը, ունի 20 տարուայ փորձառութիւն, 5 տարի նոյն դպրոցում, աւանդում է 24 դաս, ամուսնացած է, ստանում է 245 ր. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 27, օրիորդներ չեն յաճախում դպրոցը։

Դպրոցի շէնքը և կահկարասիքը. շէնքը վարձու է, անյարմար, բաղկացած է 1 սենեակից. կահկարասիքը աղքատիկ է։

Դպրոցի գրադարանը և ուսում. պիտոյքները. դպրոցը չունի գրադարան, պիտոյքները անբաւարար են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1) Բագուի Կուլտուրական Միութիւնից 135 ր., 2) Աշակերտական թոշակներից 130 ր., ընդամենը 265 րուբլի։

Գիւղն ունի 26 տուն։

Ունեցայ ծխական ժողով, ուր ընտրուեցին նոր հոգաբարձուներ։

VIII. Բէկլի-Ահմէտի դպրոցն այցելեցի երկրորդ անգամ մայիսի 26-ին։ Հետևեցի դասերին, նայեցի գրաւոր աշխատանքները և մի շարք դիտողութիւններ արի դասաւանդման մեթոդների վերաբերմամբ[521]*։*

***

Փորձնական դասեր. ապրիլի 25-ին կաղզուանում ունեցանք հետևեալ փորձնական դասերը.

1) Նկարչութիւն IV բ[աժանմունք] օր[իորդ] - Արփենիկ Զիլինկարեան

2) Երգեցողութիւն V բ[աժանմունք] - Վահան Առաքելեան

Ներկայ էին ուսուցիչները և հոգաբարձուները – ընդամենը 8 հոգի։

Մայիսի 26-ին նոյն դպրոցում եղան հետևեալ փորձնական դասերը.

1) Ռ [ուս] լեզու IV բ[աժանմունք] - Տիկին Շուշանիկ Հայրապետեան

2 Հ[այ] լեզու IV բ[աժանմունք] - Մելիք Եղիկեան

Ներկայ էին նոյն մարդիքը։

Նկարչութիւնը, երգեցողութիւնը և ռուս լեզուն անցան բաւարար, հայ լեզուն՝ յաջող։

Փորձնական դասերի քննադատութիւնը մանրամասն արձանագրում է մանկավարժական ժողովների մատեանում։

Մայիսի 17-ին Արդահանում տեղի ունեցան հետևեալ փորձնական դասերը.

1) Թուաբանութիւն II բաժ[անմունք] – Անուշաւան Լալայեան

2) Հ[այ] լեզու III բ[աժանմունք] – Մկրտիչ Լոռեցեան

3) Ռ[ուս] լեզու III բ[աժանմունք] – Տիկին Աստղիկ Լոռեցեան

Ներկայ էին ուսուցիչները և հոգաբարձուները՝ ընդամենը 5 հոգի։

Հ[այ] լեզուն անցաւ յաջող, իսկ ռ[ուս] լեզուն և թուաբանութիւնը՝ միջակ։ Դասերի քննադատութիւնը արձանագրուած է մանկավարժական ժողովների մատեաններում։

Մայիսի 21-ին Օլթիում տեղի ունեցան հետևեալ փորձնական դասերը.

1) Թուաբանութիւն I բաժ[անմունք] – Տիկ. Մարիամ Միքայէլեան

2) Հ[այ] լեզու III բ[աժանմունք] – Սիմէօն Մելքոնեան

3) Ռ[ուս] լեզու III բ[աժանմունք] – Տիկ. Մարգարիտ Դանիէլեան

---

521 Տես թիւ 501 ծանօթագրութիւնը։

Ներկայ էին ուսուցիչները և հոգաբարձուները. ընդամենը՝ 8 հոգի։ Դասերն անցան բաւարար։ Դասերի քննադատութիւնը արձանագրուած է մանկավարժական ժողովների մատեանում։

Սոյն ուսումնական տարուայ ընթացքում թեմիս դպրոցներում տեղի են ունեցել 39 փորձնական դասեր, որոնց մասին իր ժամանակին պարբերաբար հաղորդել եմ Ձերդ Գերապատուութեանը։

Թեմական Տեսուչ՝ Թադէոս Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թթ. 34 և շրջ., 38-39 րջ., 40ա-40բ, ինքնագիր:

№ - 265
ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՅՈԲԵՐԱՆ ԳԻՒՂԻ ԾԽԱՏԵՐ ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻՆ ԾԱՂԿԵԱՅ ՓԻԼՈՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Թիւ 200 *14 յունիսի 1914 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Ղարսի Փոխանորդից
Յայտարարութիւն

Սորա հետ ներկայացնելով Յոբերան գիւղի Արժ. Տէր Գէորգ քահանայ Աբրահամեանի պարգևատուութեան համախօսականները[522], ես ն[որ]/տ[ոմարով] յունիսի 7-ին՝ երբ օրհնեցի եկ. ծխական դպրոցի հիմքը, անձամբ համոզուեցայ, որ այդ ամենը ճիշտ են և թէ նա արժանի է պարգևատրուելու քահանայական խաչով, բայց քանի որ նա դեռ ծաղկեայ փիլոն չունի ուստի ամենախոնարհաբար խնդրում եմ բարեհաճէք հրամայել կրելու ծաղկեայ փիլոն, և ապա երբ դպրոցի շինութիւնը կը վերջացնի, որից շատ բան է կախուած և որը հոգով աշխատում է, կարելի է այն ժամանակ միջնորդել[523]։

Փոխանորդ Ղարսի Հ. Վիճ.՝ Երեմիա վարդ. Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 883, թ. 78, բնագիր, ձեռագիր:

---

522 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 883, թթ. 80 և թիւ 223 փաստաթուղթը:

523 1914 թ. յունիսի 26-ին Երևանի Փոխթեմակալ Խորէն եպիսկոպոսը Գէորգ քահանային շնորհել է մանիշակագոյն կերպասեայ փիլոն կրելու իրաւունք (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 883, թ. 77 և շրջ.):

№ - 266
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐԱԶԻՆ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՆԻՔԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

18 յուլիսի 1914 թ.
Ս. Էջմիածին

Լսեցին զեկուցում Սինոդս 1913 թ. հոկտ. 23-ին N2402 հրամանով թոյլ էր տուել Կարսի վիճակի Արազին գիւղի ծխականներին իրենց եկեղեցու տանիքը նորոգելու համար ծախսել եկեղեցու դրամագլխից 350 ռ.[524]: Արդ՝ Երևանի Կոնսիստորիան այս տարուայ յուլիսի 7-ի N 3653 յայտարարութեան հետ ներկայացրել է Սինոդիս տնօրէնութիւնը Արազին գիւղի եկեղեցական ծխական Հոգաբարձութեան գրութիւնը, որտեղ ասուած է, թէ մանրամասն կազմուած նախահաշուից երևում է, որ վերանորոգութեան համար պահանջուում է ոչ թէ 350 ռ., այլ 600 ռուբլի, ըստ այսմ փայտեղէնի 245 ռ., վարպետների 100 ռ., քարի 50 ռ., պատ շարող վարպետների 120 ռ., մշակներին 20 ռ., պատերը ծեփելու 50 ռ., մեխի 10 ռ., լուսամուտների ապակի 5 ռ., ընդամենը 600 ռուբլի: Հոգաբարձութիւնը աւելացնում է, թէ եկեղեցին ունի կանխիկ 500 ռուբ., ուստի և խնդրում է թոյլ տալ ծախսել եկեղեցու մնացած 150 ռ. դրամագլուխը, իսկ պակասաւոր 100 ռուբլին ծխականները հոգալու են իրենց միջոցներից: Գրութիւնը և նախահաշիւը ստորագրել են եկեղեցու քահանան, երեսփոխանը և երկու հոգաբարձու: Հրամայեցին. թոյլ տալ Կարսի վիճակի Արազին գիւղի ծխականներին ծախսել իրենց եկեղեցու նորոգութեան վերայ եկեղեցու դրամագլխից ևս մի հարիւր չիսուն ռուբլի:

ՀԱԱ, ֆ. 56, ց. 19, գ. 631, թթ. 2-3, թողօն, ձեռագիր:

№ - 267
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԶՄԱԼԵԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳՐԻՑ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ԾԽԱԿԱՆ-ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 82 *30 հոկտեմբերի 1914 թ.*
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալիս Երևանի թեմի Ջեկուցում

... Կարսի շրջանում բացուած են հետևեալ դպրոցները. 1) Բաշ Շիրակ, 2) Օճախուլի, 3) Մաւրակ, 4) Օրթաքեադիկլար, 5) Ուղուզուլի,

[524] Տես ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11741, թթ. 2-3:

6) Գեադուկ-Սաթըրմիշ, 7) Քիւրակ-դարա, 8) Փիրուալի, 9) Ճալա, 10) Ղօշավանք, 11) Սարիղամիշ, 12) Արդահան, 13) Կաղզուան, 14) Բայրախտար, 15) Շատևան։

Դեռևս չեն բացուած հետևեալ դպրոցները. 1) Կարս քաղաքում, 2) Օլթի, 3) Զարդենիս, 4) Ագարակ, 5) Բաշքադիկլար, 6) Բէկլի-Ահմէտ, 7) Բերնա, 8) Բագարան։

Կարսում դպրոցը չի կարող բացուել, որովհետև ժողովրդին հեռացնում են քաղաքից։ Օլթին, Զարդենիսը և Ագարակը նոյն պայմանների մէջ են։ Զարդենիսի և Ագարակի ուսուցիչները Կարսից դէնը չգնացին։ Այժմ նամակով ինձ յայտնում են որ իրանց ազատ կացուցանեմ։ Բագարանի դրութիւնը Ձեզ յայտնի է։ Ուսուցիչը ինձ էլ գրել է և նպաստ է խնդրում։ Հնարաւորութիւն չունեմ բաւարարութիւն տալու նրա խնդրին։ Մնացած գիւղերում դպրոցներ կը բացուեն։

Կայ մի այլ խնդիր, որի վրայ կուզեմ հրաւիրել Ձերդ Գերապատուութեան ուշադրութիւնը։ Թեմիս մի քանի դպրոցները, որոնք նպաստ էին ստանում Բարեգործական Ընկերութիւնից և Կուլտուրական Միութիւնից, այժմ պատերազմի պատճառով փոխուած են։ Այդպիսի դպրոցներն են Օլթին, Զարդենիսը, որոնք Բարեգործական Ընկերութիւնից 400 ր. և նոյն շրջանի Ագարակ գիւղը, որ Կուլ. Միութիւնից ստանում է 135 ր.։ Հարկաւ այդպիսի դպրոցներ կը լինեն մեր թեմի և այլ մասերում։ Իմ կարծիքով լաւ կը լինէր բանակցութեան մէջ մտնել անձամբ կամ գրաւոր յիշեալ ընկերութիւնների հետ, որպէսզի մի տարի ժամանակով այդ նպաստները դրուեն ուրիշ դպրոցների մեր ներկայացրած ցուցակի համաձայն։ Խնդրում եմ այս մասին անէք հարկաւոր կարգադրութիւն և ինձ ևս իրազեկ պահէք խնդրին։

Հէնց այժմ լուր առայ Բարձրապատիւ Երեմիա վարդապետից, որ Բէկլի-Ահմէտի մեր դպրոցի, ինչպէս և պետական դպրոցի շէնքերը վերածուած են զինուորանոցի։

Թեմական Տեսուչ՝ Թ. Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 390, թթ.65-66 շրջ., ինքնագիր:

№ - 268
ԱՆԻԻՍ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՎԱՆԱՀԱՅՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԻՑ ՀՐԱԺԱՐՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 նոյեմբերի 1914 թ.
Ս. Էջմիածին

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե.-րդ Կաթուղիկոսին
Ամենայն Հայոց

Անուղ վանահայր Միքայէլ վարդապետից Ամենախոնարհ խնդիր

Երկար ժամանակ, որքան ներածեն իմ տկար ոյժերը, ծառայել եմ եկեղեցուն և ազգին, ներկայումս իմ հիւանդութեան պատճառով այլևս անկարող եմ շարունակել ծառայութիւնս։ Ուստի խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Վեհութեան, նշանակել մէկնումէկին, որ ցուցակով ստանայ Անիում եղած բոլոր ինչքը և Ձեր Վեհութեան զեկուցանէ իմ ծառայութիւնը, որպէսզի Դուք միջոց ունենաք ճիշտ գաղափար կազմելու իմ արած ծառայութեան մասին։

Այդ բոլորից յետոյ, եթէ կարժանանամ Ձերդ Վեհափառութեան ուշադրութեանը՝ խնդրում եմ բարի եղէք նշանակելու գոնէ մի հանդերձագին ինձ համար և Խծկոնքի միաբան, ուր կան հանքային ջրեր, որտեղ և առիթ կունենամ օգտուելու և բժշկուելու ունեցածս յօդացաւից և ստամոքսի հիւանդութիւնից, քանի որ զուրկ լինելով միջոցներից անհնարին է ինձ համար աւելի բարձր յատկութիւն ունեցող հանքային ջրեր գնալու։ Գուցէ վերջին օրերս է, յոյս ունիմ որ Ձերդ Վեհափառութիւնը շնորհ կունենայ իմ կեանքի վերջալուսին, ազատ և հանգիստ պարգևելու, որի համար օրհնող կլինեմ Ձերդ Վեհափառութեան թանկագին կեանքը։ Մնամ Վեհափառութեանդ ամենախոնարհ ծառայ՝

Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1964, թ. 1 ևշրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 269
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՆԻՈՒՄ ԴՊՐՈՑ, ՓՈՐՁԱԴԱՇՏ ԵՒ ՀԻՒՐԱՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀՐԱՒԱՆԳԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2461 *22 դեկտեմբերի 1914 թ.*
Ս. Էջմիածին

Սինոդս առաջադրում է Ձերդ Գերապատուութեան փութով կատարել տարւոյս մայիսի 2-ի N657 պատուէրը, որ վերաբերում է Անիում դպրոց, փորձադաշտ և հիւրանոց շինելու գործին։

Անդամ Սինոդի՝ Սահակ վարդապետ
Կ. պ. Ատենադպրի՝[525]
Կ. պ. Գործավարի՝ Գր. Եսայեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 550, թ. 2, բնագիր, ձեռագիր:

[525] Ստորագրութիւնն անընթեռնելի է:

№ - 270
ՄԻՆԱՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ <<ՄՇԱԿ>>-Ի ԽՄԲԱԳԻՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՕԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 դեկտեմբերի 1914 թ.
Կարս

Կարսի հայ հասարակութիւնը զուրկ էր հոգեկան մխիթարութիւնից իւր ունեցած երկու ըստ ամենայնի անյարմար եկեղեցիների շնորհիւ, ըստ որում նրանցից մինը շինուած է միջնաբերդի կրծքին և քաղաքի կեդրոնից բոլորովին դուրս, մանաւանդ զառիվեր տանող անյարմար ճանապարհը հնարաւորութիւն չէր տալիս ժողովրդին յաճախել եկեղեցի և իւր հոգեկան պարտքը կատարել. միւսը՝ Բագրատունեաց ժամանակից շինուած մի փոքրիկ մատռաձև տաճար է, որ հազիւ երեսուն-քառասուն աղօթաւոր է պարունակում իւր մէջ: Այդ զգալի պակասը լրացնելու համար 1903 թուականում հիմնարկուեց մի նոր եկեղեցի Բաղդասարեան եղբայրների նուիրաբերած տեղի վերայ: Այդ օրից սկսած՝ շարունակւում էր նրա շինութիւնը, այժմ բոլորովին պատրաստ լինելով՝ ամսիս 21-ին կատարուելու է օծման խորհրդաւոր կարգը: Նորակառոյց եկեղեցին իւր վայելուչ ձևով և քաղաքի կեդրոնում հարթավայր յարմարաւոր տեղում լինելով շինուած՝ անշուշտ հոգեկան մխիթարութիւն պարգևելու է հայ ժողովրդին և պատիւ է նրան, որ չխնայելով իւր վաստակը, միջոց տուեց այդ անհրաժեշտ և զգալի պակասը լրացնելու: Յոյս ունենք, որ քաղաքից բացակայող ժողովուրդը առանձին բերկրութեամբ շտապելու է այդ հոգևոր հանդիսին ներկայ լինելու՝ օծման օրը:

Մ[ինաս] ա[ւագ] ք[ահանայ] Տ[էր] Պ[ետրոսեան]

ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 23, թթ. 16-17, ինքնագիր:

№ - 271
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻճԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՕԾԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 6 *21 յունուարի 1915 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ Գերապատիւ
Տ. Խորէն եպիսկոպոսին
Ղարսի Փոխանորդից

Անցեալ տարուայ դեկտեմբեր ամսի 23-ին Թ. 400[526] *յայտարարու-*

[526] Խօսքը հետևեալ գրութեան մասին է. ‹‹Սորա հետ ներկայացնելով Ղարս քաղաքի

թեանս հետ ներկայացրել էի քաղաքիս ծխականների խնդիրը[527], որի պատասխանը մինչ ի այսօր չստանալով՝ կրկին բանաւոր դիմում են, որ եկեղեցին օծուի, ուստի վերստին ամենախոնարհաբար խնդրում եմ բարեհաճիք գալ օծելու կամ տնօրինէք, որ օծուի, յարակցելու եմ, որ յետաձգել այլևս չի կարելի, քանի որ տրտունջներ յայտնողներ ևս կան։ Մանաւանդ կնքահայրերից շատերը փողերը վճարել են։

Փոխանորդն Ղարսի Հայոց Վիճ. Երեմիա
վարդապետ Ստեփանեան

Մակագրութիւն 1: *Անցեալ յայտ[արարութիւնը] բերել, գրել, որ միւս շաբաթ գնալու եմ։*

Մակագրութիւն 2: *Հեռագրուած է, որ Ծաղկազարդին լինելու եմ։ Խ[որէն] Ե[պիսկոպոս]*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 137, թ. 7, ինքնագիր:

№ - 272
ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ԿԱՐՍԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

19 մարտի 1915 թ.
Կարս

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեանը
Նոյն քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ միաբան
խորէն քահանայ Ստամբօլցեանից
Յայտարարութիւն

Քաղաքիս Ս. Լուսաւորիչ անուն նոր եկեղեցւոյ հիմնարկութեան օրից՝ չգիտեմ ինչո՛ւ, սկսուեց հին եկեղեցին աստիճանաբար հիմնիվեր քանդուել, աւերուել ու անշքանալ։

Սկզբից՝ դեռ նախկին յաջորդ Ուխտանէս վարդապետի (այժմ աշխարհական) գիտութեամբ Արժ. Մինաս աւագ քահանան՝ առանց եկեղեցւոյ ծխականաց համաձայնութիւնն իսկ առնելու, եկեղեցւոյն կից դպրոցական հին շինութեան միջից դուրս արեց մի քանի աղքատ ըն-

ծխականների խնդիրը յանուն մեր ամենախոնարհաբար խնդրում եմ Ձերդ Սրբազնութեան շուտափոյթ տնօրինութիւնը: Օծման օրը նշանակած է Յունուարի 4-ին 1915 թ. մինչ այդ եթէ գրաւոր տնօրէնութիւն չստացուի, խնդրում եմ հեռագրով տնօրինել››: Գրութեան վրայ մակագրուած է. ‹‹Ծրարը ստացուեց միայն 4-ին. անհնարին էր ժամանակին պատասխանել›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 137, թ. 7):

527 ‹‹Որովհետև ս. Լուսաւորիչ եկեղեցին արդէն ըստ ամենայնի պատրաստ է, իսկ մենք հասարակութիւնս բոլորովին զրկուած ենք հոգեկան մխիթարութիւնից, ուստի ամենախոնարհաբար խնդրում ենք Ձեր Հայրութեան բարեհաճ կարևոր տնօրէնութիւնը Քրիստոսի ս. ծննդեան տօնից առաջ օծելու համար եկեղեցին›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 137, թ. 17):

տանիքներ, որոնք նոյն իսկ որոշ չափով վարձ էլ էին տալիս, քանդել տուեց թէ այդ և թէ հին յաջորդարանի ամրակառոյց շինութեանց վերի յարկերը, որով և պատճառ դարձաւ ուրիշների ձեռքով ևս ներքին յարկերը քանդելուն և աղբանոց դառնալուն։

Եկեղեցւոյ երկարատև ու հաւատարիմ ծառայողները չնչին պատճառներով հալածուեցին ու արտաքսուեցին և նոցա տեղը անբարեյոյս անձեռնքաշ ծառայողներ մտան եկեղեցին, և այս ամենի մասին իմ արած բանաւոր նկատողութիւնները և տուած յայտարարութիւնները արհամարհուեցին ու իսպառ անհետևանք թողնուեցին։

Երբ արդէն պատրաստ էր նոր եկեղեցին և օր աւուր սպասւում էր օծուելու, հին եկեղեցին սկսուեց իւր ներքին բարեզարդութիւնից ևս զրկուելը որքան խաչեր ու քշոցներ, Աւետարան ու գրքակալ, աչքի ընկնող շուրջառներ և շապիկներ կային՝ տարուեցին նոր եկեղեցին, մնացած շուրջառների վերայ եղած արծաթէ ճարմանդներն անգամ պոկուեցին ու նոր եկեղեցւոյ շուրջառների վերայ կարուեցին, և մինչև իսկ հին եկեղեցւոյ չափաբերական սևագիր մատեանը դեռ տարուայ սկզբից նոր եկեղեցւոյ անունով գրուեցան։

Ինձ յայտնի է, որ հին եկեղեցին իսպառ փակման չի կարող ենթարկուել, քանի որ քաղաքիս հայ-եկեղեցական բոլոր կալուածների (խանութներ և տներ) հաստատութեան թղթերը նորա անունով են կազմուած, որոյ առթիւ ծխական Հոգաբարձութեան մի քանի անդամների և ոմանք քահանայից հետ ևս խօսակցութիւն ունեցել եմ դեռ եկեղեցին օծուելուց առաջ, բայց կարծում էի թէ՝ Հոգևոր իշխանութիւնը երևի որևէ կարգադրութիւն արած կը լինի հին եկեղեցին փակելու մասին «էքսպլանատի» մէջ լինելու պատճառով, որոյ առթիւ Տէր Մինաս Հայրը նոյն իսկ ատորագրութիւն ևս տուած է բերդի կոմենդատին։ Իսկ երբ նոր եկեղեցւոյ օծման համար եկաւ Երևանի Փոխթեմակալ Նորին Բարձր Սրբազնութիւն Տ.Խորէն եպիսկոպոսը առաջին իսկ օրը ասաց քահանաներիս, որ «հին եկեղեցին չի կարող փակուել և այնտեղ մնացող ու նոր եկեղեցին փոխուող քահանաների մասին Հոգևոր իշխանութիւնը և ծխական Հոգաբարձութիւնը որպիսի կարգադրութիւն ևս անելու լինի, քահանաներիս կողմից ոչ մի տրտունջ ու բողոք չպիտի յայտնուի ...»։

Եկեղեցին օծուեց ամսոյս 15-ին, հին եկեղեցւոյ քահանաներիս յայտնուեց Նորին Բարձրապատիւ Սրբազնութեան և ծխական Հոգաբարձութեան որոշումը, որ իբր թէ մենք բոլորս էլ փոխադրուում ենք նոր եկեղեցին և հերթով ժամերգութիւն պիտի կատարենք հին եկեղեցիում, մենք էլ այդ որոշման համաձայն յաճախում էինք նոր եկեղեցին, որոշելով առ այժմս շաբաթ և կիրակի օրերը միայն ժամերգութիւն կատարել հին եկեղեցում։ Բայց այսօր, ամսոյս 19-ն ճաշուայ պատարագից յետոյ՝ Վիճակիս Փոխանորդ Գեր. Երեմիա վարդապետը

ասաց, որ իբր թէ մենք հին եկեղեցւոյ քահանաներս, բացի Տէր Միհնասից, ինքնագլուխ թափուել ենք նոր եկեղեցին և պարտաւոր ենք, մասնաւորապէս Տէր Յակովբ, Տէր Խորէն և Տէր Համազասպ քահանաներս, այսօր իսկ գնալ հին եկեղեցին և շարունակել ժամերգութիւնը, որը և կատարեցինք։

Ինչպէս վերևում յայտնել էի, մեր եկեղեցին բոլորովին զրկուել է իւր ներքին բարեզարդութիւնից ևս և անհրաժեշտ ծառայողներից, հետևապէս և անհնար է այդ եկեղեցում օրինաւոր ժամերգութիւն կատարելը։ Ուստի այս ամենի մասին խոնարհաբար յայտնելով Հոգևոր Ատենիդ, խնդրում եմ, որ եթէ ճիշտ է Նորին Սրբազնութեան և ծխական Հոգաբարձութեան բանաւոր կերպով մեզ յայտնուած որոշումը, ըստ այդմ պաշտօնական տնօրինութիւն անել և յայտնել մեզ, հակառակ դէպքում անմիջապէս կարգադրել հին եկեղեցուց տարուած բոլոր արդուզարդերը վերադարձնել որպէսզի այս հրաշալի օրերին չխանգարուի ժամերգութիւնը, երկու տիրացու և գէթ մի ժամակոչ ունենալու, նորանց ռոճիկը հոգալու և որ գլխաւորն է նոր երեսփոխ ընտրելու (հնի ժամանակը մի տարուց աւել անցած պիտի լինի) մասին կարգադրութիւն անել, որպէսզի եկեղեցւոյ խանգարուած տնտեսութիւնը վերականգնուի ի մխիթարութիւն պաշտօնէիցս և մեր ծխական ժողովրդոց։ Աւելորդ չեմ համարում խնդրել նաև, որ այս ամենի մասին յայտնուի ծխական Հոգաբարձութեան ևս, և եթէ Հոգևոր Ատեանը որևէ պատճառով անկարող է տնօրինութիւն անել վերոգրեալների մասին, այս յայտարարութիւնը ուղարկել Նորին Բարձր Սրբազնութեան Փոխթեմակալի բարեհաճ տնօրինութեանը, որին սպասելով մնամ քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյ միաբան՝

Խորէն քահանայ Ստամբօլցեան

Մակագրութիւն. *Իսկոյն ուղարկել Գերապատիւ Փոխ-թեմակալին խնդրելով նորա բարեհաճ տնօրէնութիւնը։*

Փոխ. Երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 909, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 273

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼԻ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՂԶՈՒԱՆԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՎԻՐԱՒՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԳՈՒՄԱՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 639 *23 ապրիլի 1915 թ.*

Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Հոգևոր Կառավարութեան մէջ լսեցին զեկուցումն Վիճակիս Բարձրապատիւ Տ. Փոխանորդը մակագրութեամբ յանձնած է Ատենիս Կաղզուանի Հայոց եկեղեցական ծխական աւագ ուսուցչի 1914 թուի դեկտեմբերի 4-ի № 17 գրութիւնը և նրա հետ ներկայացրած տասն րուբլի երեսուն և երեք կոպէկ պատերազմում վիրաւորուածների օգտին ժողոված դրամը։

Յիշեալ դրամը արդէն մուծուած է մուտք 1914 թուի օտարային արդեանց տումարում 144 §-ի տակ և աւագ ուսուցչի գրութիւնն է ըստ այսմ.

«Բարձրապատիւ Փոխանորդ Կարուց Վիճակի Տ. Ե. վարդապետ Ստեփանեանին. Սորանով պատիւ ունեմ յայտնելու Ձերդ Բարձրապատուութեան, որ Կաղզուանի եկ.-ծխական դպրոցի մանկավարժական խորհուրդը ի հետևումն Թեմական տեսչի № 115 գրութեան, որով ցանկալի է համարւում դպրոցիս ուսուցչ-ուհիների ռոճիկներից որոշ տոկոս յատկացնել, սկսած սոյն թուի նոյեմբեր ամսից, պատերազմում վիրաւորուածների համար, թեմիս ուսուցչութեան անուամբ պահուելիք մի քանի մահճակալներին, որոշեց յատկացնել այդ նպատակին իւր ամսական ռոճիկի 4 %-ը գումարաւ 8 ր. 33 կոպ։ Նուիրատուները հետևեալներն են՝ 1) Աւագ ուսուցիչ Պ. Վ. Տէր-Մինասեանը – 2 ր. 33 կոպ., 2) Տիկին Ա. Տէր-Մինասեանը – 1 ր., 3) Ս. Թադէոսեանը – 1 ր., 4) Օր. Ա. Չիլինգարեանը – 1 րուբ., 5) Օր. Յ. Այվազեանը – 1 րուբ., 6) Տէր Ներսէս քահանայ Տէր Ներսէսեանը – 2 րուբ.։ Այլ և ժողովս սոյն նպատակով դիմեց դպրոցիս Հոգաբարձութեանը՝ որոնցից սիրալիր յանձն առան Հայր Նախագահ՝ Տէր Մ. Տէր-Գրիգորեանը և Ա. Մուրադեանը վճարել ամսական մէկական րուբլի մինչև պատերազմի վերջը։ Ուրեմն նոյեմբեր ամսի 1914 թ. ստացել ենք այդ նպատակով 10 ր. 33 կոպ., որը և սոյն փոստով ուղարկւում է Ձերդ Բարձրապատուութեանը ում հարկն է հասցնելու համար։

Աւելորդ չենք համարում յայտնել, որ սոյն նուիրատուութիւնները կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար, անհրաժեշտ են պատշաճ անդորրագրերի և ուղարկուած փողի ստացագրի շուտափոյթ ուղարկելը, որը և խնդրում ենք Ձեզանից»։

Սահմանեցին. *Յիշեալ տասը րուբլի երեսուն և երեք կոպէկ դրամը խոնարհաբար ներկայացնել Ձերդ Գերապատուութեան ի տնօրէնութիւն[528]։*

Նախագահ Կառավարութեան՝ Երեմիա վարդապետ Ստեփանեան

---

528 Անդորրագիրը տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 187, թ. 128 և շրջ.։

Անդամներ՝ Վաղինակ քահանայ Ֆրոյեանց
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Յ. Այվազեան

Մակագրութիւն 1. *Տեսցական ղրկել։*

Մակագրութիւն 2. *Ուղարկուած է Թ. 84 պատհովագիրը։ 1915 թ. մայիսի 15*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 187, թթ. 129-130, բնագիր, ձեռագիր:

№ - 274
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՈԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՆԻՈՒՄ ՅԻՒՐԱՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Թիւ 693 *8 մայիսի 1915 թ.*
Ս. Էջմիածին

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան ինքնակալի ամենայն Ռուսաց Ս. էջմիածնի Հայոց Սինոդից Երևանի Փոխ-թեմակալին.

Նորին Կայսերական Մեծութեան հրամանով Սինոդումս լսեցին զեկուցում Անիում, Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան ձեռքով, Մանթաշեանի[529] նուիրած 8000 ռուբլով, հիւրանոց շինելու մասին։ Հրամայեցին. պատուիրել Երևանի Տ. Փոխ-թեմակալին կարգադրել Հոռոմոսի վանքի բակում շինել հիւրանոց պայմանաւ, որ շէնքը կառուցուի այնպիսի տեղում, ուր հնութիւններ չկան և հնութիւններին ու քարերին չդիպչուի[530]։ 8 մայիսի 1915 թ. Ս. Էջմիածին

Անդամ Սինոդի՝ Բաբգէն եպիսկոպոս
Կ.պ. Ատենադպրի՝[531]
Կ.պ. Գործավարի՝ Գր. Եսայեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 550, թ. 2, բնագիր, ձեռագիր:

---

529 Մանթաշեանց Ալեքսանդր Յովհաննէսի (3 մարտ 1842, Թիֆլիս-19 ապրիլ 1911, Սանկտ Պետերբուրգ) – Նշանաւոր գործարար ու բարեգործ: Զբաղուել է նաւթարդիւնաբերութեամբ եւ ստացել ‹‹նաւթի արքա›› մականունը: Իր ապրած ժամանակում համարուել է ամենահարուստ մարդկանցից մէկը: Նրա նաւթի առեւտրական տներն ու նրանց մասնաճիւղերը տարածուած էին աշխարհով մէկ՝ Վարշաւա, Մադրիդ, Փարիզ, Օդեսա, Սարատով, Սուդան, Բէյրութ, Պաղեստին, Կալկաթա, Բոմբէյ, Կ. Պոլիս, Զմիւռնիա: Այդ շրջանում Մանթաշեանցի դրամագլուխը կանխիկ դրամով կազմում էր 30 միլիոն ռուբլի: Յայտնի է իր բազմաթիւ բարեգործութիւններով:

530 1915 թ. մարտի 10-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է ուղարկել Սինոդին. «Ի կատարումն Ս. Սինոդիդ 1915 թ. մայիսի 2-ի Թ. 657 հրամանի, պատիւ ունեմ սորա հետ ներկայացնելու ի տնօրէնութիւն Անի-Հոռոմոս վանքերի Հոգաբարձութեան տարւոյս փետրուարի 28-ի Թ. 24 յայտարարութիւնը, որ վերաբերում է Անիում դպրոց, հիւրատուն կառուցելու գործին» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 550, թ. 4):

531 Ստորագրութիւնն անընթեռնելի է:

№ - 275
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼԻ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՈՒԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՀԱՒԱՔՈՒԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 798 *19 մայիսի 1915 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Հոգևոր Կառավարութեանս մէջ լսեցին զեկուցումն. ներկայ 1915 թ.օտարային արդեանց գումարով ստացուած են պատերազմից վնասուածների օգտին.

1. Կարսի Գործակալի տարւոյս յունուարի 28-ի № 19 յայտարարութեան հետ – 2 րուբ.

2. Նոյն Գործակալի նոյն ամսի 29-ի № 31 յայտարարութեան հետ գանձանակադրամ, որ ստացուած է Ղանի գիւղի երեսփոխանից 2 ր. 50 կոպ.

3. Քաղաքիս Արժանապատիւ Տ. Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանի փետրուարի 1-ի № 6 յայտարարութեան հետ Ս. Աստուածածին եկեղեցում հանգանակուած գանձանակադրամ՝ 69 ր. 76 կոպ.

4. Արժանապատիւ Վաղինակ քահանայ Ֆրոյեանցի նոյն փետրուարի 3-ի № 2 յայտարարութան հետ Ս. Նշան եկեղեցում հանգանակուած գանձանակադրամ՝ 14 ր. 32 կոպ.

5. Բէնկլի-Ահմէտի Գործակալի 3-ն փետրուարի № 6 յայտարարութեան հետ գործակալութեան եկեղեցիներում հանգանակուած գանձանակադրամ՝ 7 ր. 50 կոպ.

6. Կարսի շրջանի Աբատ-Սէօկիւտլի գիւղի բնակիչ Յակովբ Բաղդասարեանից իւր ձեռքով գիւղում հանգանակուած նպաստ՝ 25 ր. 60 կոպ.

7. Կարսի Գործակալի մարտի 28-ի № 91 յայտարարութեան հետ՝ 5 ր. 50 կոպ.

8. Քաղաքիս Արժանապատիւ Տ. Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանի 2-ն ապրիլի № 14 յայտարարութեան հետ գանձանակադրամ՝ 34 ր. 50 կոպ.

9. Կարսի Գործակալի 29-ն ապրիլի № 101 յայտարարութեան հետ Օրթաքիլիսայի ժողովրդեան մէջ հանգանակուած գանձանակադրամ՝ 5 ր. 50 կոպ.

10. Քաղաքիս Արժանապատիւ Տ. Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանի 4-ն մայիսի № 17 յայտարարութեան հետ Ս. Լուսաւորիչ եկեղեցում հանգանակուած գանձանակադրամ՝ 36 ր. 15 կոպ.

գումարը՝ 203 ր. 33 կոպ.

Սահմանեցին. յիշեալ երկու հարիւր երեք րուբլի 33 կոպ. գումարը խոնարհաբար ներկայացնել Ձերդ Գերապատուութեան ի տնօրէնութիւն, դուրս գալով սոյն գումարից փոստի ծախքը[532]*։*

Նախագահ Կառավարութեան՝ Երեմիա վարդապետ
Անդամներ՝ Վաղինակ քահանայ Ֆրոյեանց
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Յ. Այվազեան

Մակագրութիւն 1. *Դրամները ստանալու ստացական ուղարկել։*

Մակագրութիւն 2. *Ուղարկուած է Թ. 101 ստացականը, 15 յունիսի 1915 թ.*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 187, թ. 127 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 276
Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱԲԱՆ ԱՐՍԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻՆ՝ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱԲԱՆ ԿԱՐԳՈՒԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

10 յունիսի 1915 թ.
Կարս

Նորին Բարձրապատուութեան Տէր Փոխանորդի
Վիճակին Կարուց Ե. վ. Ստեփանեանց
Արսէն Քահանայ Տէր-Գրիգորեանից
Խոնարհ խնդիր

Նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու օծման օրից մինչև այսօր, իմ ծխականներից ո՛չ ոք չէ յաճախել Ս. Նշան եկեղեցին հեռաւորութեան պատճառով, ծխականներս այժմ համարւում են Լուսաւորիչ եկեղեցու ծխական, և այդ հիման վերայ էլ ժողով գումարելով ընտրեցին երեցփոխան, որ և ստորագրեցին արձանագրութեան տակ մինչ ի 30 ստորագրութեամբ։ Բարձրապատիւ Հա՛յր, այժմ ես ինչո՞վ կարող եմ մխիթարուիլ, երբ աքսորուածի նման տանս մօտ գտնուած եկեղեցուց անցնելով գնում եմ քաղաքի միւս ծայրում գտնուած եկեղեցին աղօթելու, որտեղ սեփական ժողովուրդ չունեմ և զրկուած եմ ամեն տեսակ մանր եկամուտներից, մանաւանդ ննջեցեալների թաղման և եօթի օրերը պատարագ մատուցանելուց, երբ միաբան չեմ Լուսաւորչին, ինձ չեն թոյլ տայ պատարագ անելու։

Ուստի խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Բարձրապատուութիւնից, կարգադրել ինձ տեղափոխելու Ս. Նշան եկեղեցուց Ս. Լուսաւորիչ եկեղեցին որպէս միաբան, որով ազատած կլինիք ինձ յուսահատ դրութիւնից։
Արսէն քահանայ Տէր-Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 909, թ. 5, բնագիր, ձեռագիր:

[532] Անդորրագիրը տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 187, թ. 126:

№ - 277
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՒ ՏԷՐ ՄԻՆԱՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

18 նոյեմբերի 1915 թ.

Տարւոյս մարտի 15-ին օծեցի Ղարսի նորակառոյց Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որի մասին հեռագրով Ղարսից պատիւ եմ ունեցել յայտնելու Ձերդ Ս. Օծութեանը։

Ձերդ Վեհափառութեանը յայտնի է, որ երկար տարիներ շարունակւում էր եկեղեցու կառուցման գործը և դեռ երկար էլ կը շարունակուէր եթէ չը լինէր հանգուցեալ Զալթիկեանի այրու խոշոր նուիրաբերութիւնը։ Դեռ երկու տարի առաջ վախճանուեց Ղարսում Սէյլանեան եղբայրներից մէկը, որի ազգականները խնդրեցին հանգուցեալին թաղել եկեղեցու գաւթում։ Որովհետև հանգուցեալը իր կենդանութեան ժամանակ ազգային-հասարակական գործերով աչքի չէր ընկել, ուստի ես խնդրեցի 25000 ր. տալ եկեղեցու շինութիւնը վերջացնելու համար և որովհետև առաջարկս մերժուեց ուստի և աւելորդ համարեցի խնդրել Ձերդ Ս. Օծութեան թոյլտուութիւնը։ Մի քանի ամիս յետոյ վախճանուեց Զալթիկեանը և այս անգամ հանգուցեալի այրին ինքնաբերաբար նուիրաբերեց 25000 ր. եկեղեցու շինութիւնը վերջացնելու համար։ Այդ գումարը ստացուած է ամբողջովին և եկեղեցու շինութեան գործը աւարտուած է։ Վեհափառ Տէ՛ր, թէև այդ գումարը եկաւ զարկ տուաւ գործին բայց մինչ այդ ժողովրդական նուէրներով ահագին գործ էր կատարուած և պէտք է խոստովանել որ եկեղեցու շինութեան ոգին եղել է Տէր Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեանը, որը շինութեան Հոգաբարձութեան նախագահ լինելով շարունակ նուէրներ է հաւաքել և թէև դանդաղ բայց առաջ է տարել շինութեան գործը։ Ձը կայ մի Ղարսեցի, որ չը խոստովանուի այդ, չասի որ եկեղեցին կառուցուել է Տէր Մինասի ջանքերով։ Վերոգրեալը ուշադրութեան առնելով ամենախոնարհաբար խնդրում եմ արժանացնել նրան Հայրապետական օրհնութեան։ Նա ունի բոլոր պարգևները և եթէ նրան շնորհէիք վարդապետական ականակուռ խաչ, նա այդ պարգևին ևս արժանի է։ Գալով միաբանութեան խնդրին շատ պարզ է որ թէ՛ Ս. Աստուածածին և թէ՛ Ս. Նշան եկեղեցու միաբանները ցանկանում էին Ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան լինել։ Սկզբում, թախանձելով ժողովրդեան և ծխական Հոգաբարձութեան խնդրին ես թոյլ տուի բոլոր քահանաներին յաճախել Ս. Լուսաւորիչ եկեղեցին այն պայմանով, որ երկու երկու հերթապահութիւն անեն Ս. Աստուածածին և Ս. Նշան եկեղեցիներում։ Այժմ նկատելով հերթապահութեան աննպատակ լի-

նելը՝ ամեն մի եկեղեցու համար նշանակել եմ որոշ միաբանութիւն, որպիսի կարգադրութեան համաձայն Ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբաններ են՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան ...

Վերոգրեալը պատիւ ունեմ ամենախոնարհաբար զեկուցանել Ձերդ Ս. Օծութեանը։

[Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեան]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 909, թթ. 16-17, թողօն, ձեռագիր:

№ - 278
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԻՆ ԹԻՔՆԻՉ ԳԻՒՂԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԳԻՒՂԻ Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԸՆԾՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 նոյեմբեր 1915 թ.

Արձանագրութիւն

Մեք՝ սորա տակին ստորագրողներս կարսի նահանգի Շիրակու մասի Հին Հայ Թիքնիզ գիւղի հասարակութիւնքս, այսօր հաւաքուելով մեր հասարակական ժողովում նախագահութեամբ կարսի փոխանորդ երեմիա Հայր Սուրբի, ընտրեցինք մեր հասարակութեան անդամներից որպէս հոգաբարձու մեր Սուրբ Մինաս եկեղեցուն հետևեալները՝ Համբոյ Խաչատրեանցին, Յովհաննէս Գէորգեանցին, Մելքիսեդ Մելոյեանցին, Սահակ Տէր-Սահակեանցին, որոնց լիազօր իրաւունք ենք տալիս սուրբ Մինաս եկեղեցու ունեցած թէ՛ մուտքերին և թէ՛ ելքերին հսկելու և պաշտպանելու ունեցածներին, որի համար ստորագրում ենք[533]*.*

Մարտիրոս Մինասեան
Հայրապետ Պօղոսով, Մկրտիչ Սահակեան[534]
Նախագահ՝ երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 22, բնագիր, ձեռագիր:

№ - 279
ԱՐԴԱՀԱՆԻ ՎԻՃԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՒ ԾԽԱՏԷՐ ՆՇԱՆ ՔԱՀԱՆԱՅԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ԱՐԴԱՀԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԳԱՂԹԻ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՎԻՐԱՒՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՀԱՆԳԱՆԱԿԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 դեկտեմբերի 1915 թ.
Արդահան

Բարձրապատիւ Տէր երեմիա Հայր Սուրբ

Համաձայն Ձեր № *293 որ ի 27-ն նոյեմբերի տարւոյս, որով պա-*

533 Հոգաբարձական կազմը հաստատուել է 1916 թ. փետրուարի 29-ին:

534 Հետևում է ևս 14 անձի ստորագրութիւն:

տուիրում էք տեղեկութիւններ ներկայացնել Սրբազան Փոխ-Թեմակալի №837 շրջաբերականի հիման վրայ։ Եթէ գաղթած չըլլային ինչպէս ուրիշ թեմի հայերը, նոյնպէս այս տեղի հայերը իրանց կարողութեան համեմատ կը հասցնէին դրամ կամ իրեղէն յօգուտ վիրաւոր զինուորների բժշկութեան և նրանց ընտանիքի պահպանութեան։ Բայց որ գաղթեցին և ցրուեցին զանազան վայրեր, ամեն բան խափան մնաց։

Միայն Ձեր այդ վերոգրեալ շրջաբերականի համաձայն հանգանակեցի վիրաւոր զինուորների բժշկութեան և նրանց ընտանիքի համար եօթն (7) ռուբլի ու եօթանասուն (70) կոպէկ, զորս բարեհաճեցէք ստանալ փոստի միջոցաւ, և խնդրում եմ ինչ որ պէտքն է կատարեցէք[535]։

Արդահանի Գործ[ակալ] և ծխատէր Նշան քահանայ Յովհաննէսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 188, թ. 12 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 280
ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ՈՐԲԱՆՈՑ ԲԱՑԵԼՈՒ ԵՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 330 *18 դեկտեմբերի 1915 թ.*
Կարս

Նորին Ս. Օծութեան Վեհափառ Կաթուղիկոս Ամենայն Հայոց
Տ. Տ. Գէորգայ Ե.-ի
Ղարսի Փոխանորդից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Ի պատասխան Ձերդ Վեհափառութեան Բարձր հրամանի 24-ն նոյեմբերի ն[որ]/տ[ոմարով] Թ. 2118-ը (ստացուած 3-ն դեկտեմբերի) սորա հետ ամենախոնարհաբար ներկայացնում եմ պահանջուած հարցերի պատասխանները, իսկական գրութեամբ, որպիսին պաշտօնապէս ստացայ իմ գրութեան համաձայն տեղիս գաղթականներին հոգացող մարմնից՝ իր անդամ Տ. Համազասպ քահանայ Ղարագէօզեանի ձեռամբ։

Տուած վիճակագրական պատասխանների մէջ կան աննշան թերի կէտեր, որոնք պէտք է վերագրել այն բանին, որ սկզբից գաղթականների վիճակագրական տեղեկութիւնները լաւ չուսումնասիրուեց, դրա պատճառն էլ այն էր, որ գաղթականները կամ յօժար կամքով կամ կառավարութեան կողմից յաճախակի այս ու այն կողմերը տեղափոխուեցան. այդ երևոյթը այժմս էլ երևում է։

---

[535] 1915 թ. դեկտեմբերի 21-ին Երեմիա վարդապետը Նշան քահանայի գրութիւնն ու գումարը ուղարկել է Երևանի Փոխթեմակալ Խորէն եպիսկոպոսին (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 188, թ. 16):

Ապագային կաշխատեմ, ամեն ամիս՝ որքան հնարաւոր է ճիշտ տեղեկութիւններ տալ. որպիսին խոստացել էր և այժմս էլ խոստանում է հաւաքել նոյն մարմինը, այն է տեղիս Բ[արեգործական] Ընկ[երութեան] տեղային վարչութիւնը՝ միացած Հ[այկական] կ[ենտրոնական] կոմիտէի[536] *հետ և ուղարկել պարբերաբար Ս. էջմիածին։*

Նորաբաց որբանոցի պաշտօնական բացումը կը լինի ամսիս 25-ին կամ 28-ին, որբանոցը գտնւում է նոյն կազմի հովանաւորութեան տակ։ Ղարսի այդ որբանոցի 22 որբերից 15-ը տղաներ են, իսկ 17-ը աղջիկներ, սկսած 5-12 տարեկան հասակի։

Այս օրերին յանձնեցինք իմ, Արժ. Տէր Մինաս հօր, Տ. Համազասպ քահանայ Ղարակեօզեանի և վաճառական Պ. Գրիգոր Ասոյեանի ձեռամբ խանութէ խանութ ընկած և հանգանակուած 4108 ր. 18 կ. նոյն նորաբաց որբանոցի խնամողներին։

Մնամ Ձերդ Ս. Օծութեան խոնարհ որդի՝
Փոխանորդ Երեմիա վարդապետ Ստեփանեանց

ՀԱԱ. ֆ. 52, ց. 1, գ. 1287, թ. 12 և շրջ., ինքնագիր:

№ - 281
ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՎԻճԱԿԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՈՒ ԳԻՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՎԻճԱԿԻ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 26 *14 յունուարի 1916 թ*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմին Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Ղարսի Փոխանորդից

---

[536] 1914 թ. սեպտեմբերի 14-ին Կովկասի Փոխարքայ Վորոնցով-Դաշկովի թոյլտուութեամբ և Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան նախաձեռնութեամբ Թիֆլիսում հրաւիրուեց հայոց բարեգործական, մշակութային ու լուսաւորչական տարբեր կազմակերպութիւնների պատգամաւորների համագումար՝ նպատակ ունենալով ընտրել կենտրոնական կոմիտէ, որը պէտք է զբաղուէր բացառապէս ռուսական բանակի վիրաւոր ու հիւանդ զինուորների խնամատարութեան հարցերով՝ առանց ազգային խտրականութեան (ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 58 շրջ.): Նոյն օրը համագումարի պատուաւոր նախագահ Մեսրոպ եպիսկոպոսը և նախագահ Միքայէլ Պապաջանեանը համագումարի որոշման մասին հեռագրով տեղեկացրին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ խնդրելով նրան այս նախաձեռնութիւնը վերցնել իր Բարձր հովանավորութեան ներքոյ: Վեհափառը մեծ գոհունակութեամբ ընդունեց համագումարի մարդասիրական նախաձեռնութիւնը և յատկապէս այդ կապակցութեամբ հայ ժողովրդի ուժերը միաւորելու փորձը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 73, թթ. 25-26): Հայկական կենտրոնական կոմիտէի պատուաւոր նախագահ ընտրուեց Մեսրոպ եպիսկոպոսը, նախագահ՝ Սամսոն Յարութիւնեանը: Ռուսական իշխանութիւնների կողմից պաշտօնապէս ճանաչուել է 1915 թ. օգոստոսի 30-ին:

Ջեկուցում

Պատերազմի առթիւ 1915 թուի ընթացքում վիճակիս ընդհանուր գործերը շատ ու շատ անմխիթար վիճակի մէջ էին, մանաւանդ մի քանի գործակալները՝ Կաղզուանի, Արդահանի, Օլթին չունի։

Ա) Եկեղեցական ծխական դպրոցները հակառակ շրջաբերականների յորդորներին, փակ մնացին, բացի մի 4-5-ից, որոնք նոյնչափ անօգուտ են։ Գալով այն եկեղեցական դպրոցների կիսատ մնացածներին Բէրնայի, Աբատ-Սոգիւտլի, Յոբերանի, Թազաքանդի, չկարողացանք աւարտել, մնացել են ծածկերը. չկարողացանք և վճարել Բէնկլի Ահմէտի պարտքը։

Բ) 1915-ի ընթացքում գործերով շրջագայել եմ Օրթակալա, ուր մի երեք օր մնալով կարողացել եմ տասնեակ տարիներից ի վեր մնացած եկեղեցական պարտքերը հաւաքել և այսօր այդ գիւղի եկեղեցին Ղարսի Մանր Վարկի Ընկերութեան գանձարանում ունի 500 ր.։ Օրթաքիլիսա հաւաքեցի 1108 ր. հակառակ իրանց խոստումի դեռ բանկը չեն բերել, ուզում են ալիւր գնել և բաժանել իրար մէջ։ Գերմալիում հաւաքեցի 370 ր., արդէն մոցրած է բանկ։ Բոլորովին մաքրել եմ Հին Թիքնիզի հաշիւները, եկեղեցին ունի կանխիկ 1500 ր. Պ. Սահակ Տէր-Սահակեանի մօտն է. ապահով մարդ է, եթէ դպրոց բացուի պարտաւորւում է տարեկան %-ները վճարել մօտ 200 ր.։ Փիրուալի, Քիւրակդարա ... Ուրեմն այս տարի ինձ յաջողուեց հաւաքել մօտ 2000 ր.։

Այս բոլոր գիւղերում ժողովներ եմ կազմել, նոր երեսփոխաններ և հոգաբարձուներ ընտրել, որոնցից մի քանիսը դեռ պէտք է ուղարկուի ի հաստատութիւն։

Գ) Թէ քաղաքի և թէ գիւղերի քահանաների նիւթական վիճակը վատ է, մանաւանդ գիւղական քահանաների, որոնցից շատերը կալ ու պտուղ չեն ստացել, իսկ դա դրանց միակ ապրուստի միջոցն է. այդ առթիւ էլ միշտ էլ ժողովրդի և ծխական քահանայի մէջ բողոքներ են տեղի ունեցել։ Շատ գիւղեր ծխատէր մշտական քահանաներ չունեն, եղածներից էլ մի քանիսը վախճանել են. օր[ինակ] Փերուալի, Քիւրակդարա, Օրթակալա, Ագրակ, Բայբուրդ, դոցա փոխարինել են գաղթական քահանաները։ Ընդհանրապէս դեռ 1880 թուականներից Ղարսի վիճակի քահանաները, նոյնիսկ քաղաքինն էլ, եկւորներ են համարւում, և սա ամեն կողմից օրինաւոր քահանաներ բառի բուն նշանակութեամբ չկան։ Ինչպէս ցուցակներից երևում է, գիւղ չկայ, որ գաղթական քահանաներ չլինեն։ Քաղաքումս էլ անգործ քահանաներ կան, իսկ թէ ինչեր են անում, Աստուած գիտէ, իսկ հսկել հնարաւոր չէ և երկրորդ՝ նոքա էլ են ապրելու։

Դ) Վիճակիս եկամուտը հակառակ իմ սպասածին 1915 թուին աւելի արդիւնաւէտ է եղել. իւղ, պանիր, ցորեն աւելի թանկ է վաճառուել։ Ինչպէս 1915 թ. վիճ. մատեանը ցոյց է տալիս. այս տարի միայն քաղո-

ւածներից 1600 ր. է գանձուել, իսկ 1913-1914 թթ. ոչ աւել քան 300-400 ր. նոյն աղբիւրից։ Գործակալները ճանապարհների պատճառով միշտ էլ պաշտօնական թղթերին ուշ են պատասխանում և նոյնիսկ չեն պատասխանում։

է) Հոգևոր Կառավարութեան գործերը գնալով 1915 թ. վատացան։ Հակառակ իմ ցանկութեան՝ գործերը միշտ էլ անկախ մնացին. ի հարկէ այդ ամենը նորութիւններ չեն, և թէ իր ժամանակին, թէ՛ Զեզ և թէ՛ Ատենիդ յայտնել եմ, ինչպէս էլ լինի պէտք է հիմնական փոփոխութեան ենթարկել։ Այդ մասին էլ վերջերս Զերդ Սրբազնութեանը յայտնած եմ և օրէ օր սպասում եմ վերջնական տնօրէնութեան։ Այսօր 4000 ր. օտարային և վիճակային փողերը մնացել են, Պ. քարտուղարը դեռ աղբիւրները պէտք է հաւաքէ։ 1914 թ.մատեանը դեռ մնում է ...ես իմ կողմից արդէն արել եմ այն՝ ինչ որ պէտքն էր, այժմս մնում է Զեր Բարձր կամքին։

Ճիշտն ասած, պատերազմը բոլորիս մոլորեցրել է. այս րոպէիս սիրտս պատերազմի դաշտումն է, բայց այդ չի արդարացնում և ոռճիկ ստանալ և ոչինչ չանել։

Զ) Գաղթականական գործերով զբաղուած են եղել թէ՛ շրջանիս գործակալները, թէ՛ քաղաքի քահանաները։ Յաւում եմ, որ մեր քահանաները իմ պահանջը չկատարեցին, ուստի ճիշտ տուեալներ չունեմ, բայց և այնպէս մեծ օգուտ են տուել.երեմիա վարդապետ մօտ 1000 ր. հաւաքել և ուղարկել [եմ]Ս. էջմիածին և զանազան տեղեր։

Տ. Մինաս ա. ք. Տէր-Պետրոսեանը՝ մօտ 800 ր.,

Տ. Կորիւն ք. Քոթանջեանը՝ նոյնչափ,

Տ. Արսէն ք. Տ. Գրիգորեանը՝ 130 ր. Զեզ է ուղարկել,

Տ. Համազասպ ք. Ղարագէօզեանը՝ ոչինչ մինչ այսօր, ձրի աշխատում է այդ գաղթականական սեկցիայի մէջ, և արժէր, որ բարեհաճէիք ծաղ. փիլոնով մխիթարել։

Մնացածների մասին պէտք է լռել։

Երբ որբանոց բանալու հարցը դրուեց, ես, Տէր Մինաս ա. ք. Տէր-Պետրոսեանը, Հ. ք. Ղարագէօզեանը և վաճառական Պ. Գրիգոր Աոյեանը խանութ-խանութ ընկած հանգանակութիւն անելով գանձեցինք 4118 ր., որպիսի գումարը յանձնուեց Հ. Կոմիտէին և Բարեգ. Ընկ. վարիչին։

Ժողովրդի մասին. քաղաքացիների մասին չարժէ խօսել։ Գիւղական ժողովուրդը ընկճուած է. անցեալ տարի բերքը 1914 թուի նման առատ չէր, հետզհետէ աշխատող ձեռքերից զրկուեցան, գիւղերը դատարկուեցան։ Գալով նոցա ցոյց ցոյց տուած օգնութեանը գաղթականներին՝ ամեն բանից բարձր է։ Զեն խնդրել և չեն խնդրում, արել են աւելի, քան կարելի էր սպասել։

Մեր այս համառօտ, բայց ամփոփ զեկուցումով պատկերացրի վիճակիս ընդհանուր պատկերը, որը նորա ճշգրիտ լուսանկարն է։

Փոխանորդ՝ Երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 882, թթ. 21-22 շրջ., ինքնագիր:

№ - 282
ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԳԵՕՏԱԼԻ ԳԻՒՂԻ ՀԱՍԱՐԱԿԱՒԹԵԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԳԻՒՂԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 յունուարի 1916 թ.
Գեօտալի

Արձանագրութիւն

Մենք՝ Կարսի նահանգի Գեօտալի գիւղի հասարակութիւնքս Բանկլիահմէտի Գործակալ Տէր Գրիգոր Հայր Մուսիկեանի նախագահութեամբ ժողով կազմեցինք և մեր համաբնակիչ Արսէն Տէր-Գրիգորեանին, Դանիէլ Գրիգորեանին և Աբգար Մխիթարեանին միաձայն հաւանութեամբ ընտրեցինք տեղոյս Սուրբ Աստուածածին եկեղեցւոյն հոգաբարձու և հաշուապահ երեք տարի ժամանակաւ առ որ ստորագրեմք համայն հասարակութիւնքս[537]։

Ասպատուր Վարդանեն, Գրիգոր Սարգիսեան
Մկրտիչ Խաչատուրեան[538]

Վաւերացնում եմ գործակալական կնիքովս.
Բէնկլի Ահմէդի Գործակալ Գրիգոր քահանայ Մուսիկեանց

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 20 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 283
ԱՐԴԱՀԱՆԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ՏԵՂԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 յունուարի 1916 թ.
Արդահան

Արձանագրութիւն
Արտահան, 1916 թ. 27-ն յունուարի

Այսօր, Արդահանի հայ հասարակութիւնը մեծամասնութիւնով բնակիչների և գաղթականների ժողով կազմեց ծխական ուսումնա-

[537] Հոգաբարձական կազմը հաստատուել է 1916 թ. փետրուարի 26-ին (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 19):

[538] Հետևում է ևս 37 անձի ստորագրութիւն:

րանի համար հոգաբարձուներ ընտրելու։ Միաձայն համաձայնութիւնով նախագահ ընտրուեց Պ. Արշակ Ատովմեանը, որից յետոյ բացարձակ ձայնով հոգաբարձութեան անդամներ ընտրուեցին Պ. Պ. Հրանտ Մինասեանը, Գրիգոր Արգակեանը, Վահան Քէօմիւրճեանը, Գարեգին Նազարէթեանը, Վահրամ Թէոսեանը։

Նախագահ ժողովի՝ Ա. Ատովմեան
Քարտուղար՝ Գ. Մխիթարեան
Համայեակ Զախոյեանց
Պետրոս Տէր-Յարութիւնեան
Գրիգոր Սաղաթէլեանց[539]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 18 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 284
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ԱՐԴԱՀԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԸՆՏՐՈՒԱԾ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՕՆՈՒՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 75 *9 փետրուարի 1916 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Փոխանորդից

Յայտարարութիւն

Սորա հետ ներկայացնելով Ձերդ Սրբազնութեանը Արդահանի ծխականների արձանագրութիւնը[540]*, որով նշանակած անձանց ընտրութիւնը կանոնաւոր է, ուստի խնդրում եմ հաստատել, մանաւանդ իրանց գրութեան մէջ յիշում են, որ շուտ հաստատուեն, որ դպրոցը բանան։ Ես իսկոյն պատասխանեցի, որ բացէք թող իրանց պաշտօնի մէջ մտնեն, թեմակալի կողմից հաստատման արգելք չի կարող լինել։*

Փոխանորդ՝ Երեմիա վարդապետ

Մակագրութիւն: *Հաստատել։ Հոգաբարձութիւնը հաստատուած է 1916 թ. փետրուարի 16-ի Թ. 312 գրութեամբ։*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 17, ինքնագիր:

---

539 Հետևում է ևս 45 անձի ստորագրութիւն:

540 Տե՛ս թիւ 283 փաստաթուղթը:

№ - 285
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՈՒԱԾՆԵՐԻ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 374 *27 փետրուարի 1916 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-Թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից

Յայտարարութիւն

Հոգևոր Կառավարութեանս մէջ լսեցին զեկուցումն, ըստ 1915 թուի օտարային արդեանց տումարի գանձուած և մնացորդ կայ պատերազմում վնասուածների օգտին 207 ր. 63 կ. և նորեկ գաղթականների օգտին 25 ր. 60 կ., ընդամենը՝ երկու հարիւր երեսուն և երեք րուբլի քսան և երեք կոպէկ (233 ր. 23 կ.)։

Սահմանեցին. *գրել ելք յիշեալ գումարը և փոխադրել Ձերդ Գերապատուութեանը։*

Նախագահ Կառավարութեան՝ Երեմիա վարդապետ

Մակագրութիւն 1. *Ուղարկել ստացական։*

Մակագրութիւն 2. *Ուղարկուած է 1916 թ. մարտի 9-ին Թ. 11 ապահովագիրը։*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 188, թ. 63, բնագիր, ձեռագիր:

№ - 286
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՊԱՀԵՍՏԻ ՁԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԳՈՒՄԱՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 577 *1 ապրիլի 1916 թ.*
Կարս

Երևանի Հայոց Փոխ-Թեմակալին
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից

Յայտարարութիւն

Հոգևոր Կառավարութեանս մէջ լսեցին զեկուցումն անցեալ մարտ ամսի ընթացքում յօգուտ պահեստի զինուորների և ընտանիքների գոյացել է քառասուն և երկու րուբլի 69 կ[ոպէկ]։

Սահմանեցին. *Գրել ելք յիշեալ գումարը և ուղարկել Ձերդ Գերապատուութեանը։*

Նախագահ Կառավարութեան՝ Երեմիա վարդապետ
Անդամներ՝ Համազասպ քահանայ Ղարագէօզեան
Արսէն քահանայ Տ. Գրիգորեան
Քարտուղար՝ Ա. Տ. Յակովբեան

Մակագրութիւն 1. *Դրամը ստանալ, ապահ. ուղարկել։*

Մակագրութիւն 2. *Ուղարկուած է Թ. 43 ապահովագիրը։ 1916 թ. մայիսի 18*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 188, թ. 48, բնագիր, ձեռագիր:

№ - 287
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՐԿՂ-ՓՕՆԴ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 148 *27 ապրիլի 1916 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Փոխանորդից
Յայտարարութիւն

Խոնարհաբար պատիւ ունեմ տեղեկացնելու Ձերդ Սրբազնութեան, թէ Ծաղկազարդի կիւրակին Ս. Լուսաւորիչ եկ. օծման I տարեդարձի առթիւ յորդորելով, պարզելով և այլն իմ բարի ցանկութիւնը ներկայ եղող հաւատացեալներին, հաւաքեցի մօտ 100 ր.։ Ես յայտարարել էի՝ որ պիտի ունենանք մի արկղ – ֆօնդ, որի օգուտը պէտք է յատկացուի խմբի աղքատ երգիչների համար՝ եկեղ. աւագ քահանայի, Պ. երեսփոխի, Պ. խմբապետի կառավարութեան ներքոյ և փոխանորդի գիտութեամբ։ Ջերմ ընդունուելուց յետոյ Պ. եղ. Ղօլթաղճեաններից էլ վերջերս Տ. Համազասպ քահանայ Ղարագէօզեանի ձեռամբ իրանց հօր յիշատակի համար ստացուել է արդէն 50 ր., այդ բանը կը դառնայ ծխականների համար օրինակ։ Բացի դրանից, կիւրակի օրերին եկեղեցու գանձանակը կը միացուի դրան և այլն։ Ուստի եթէ համամիտ էք, որ այդ լինի և շարունակուի, խնդրում եմ բարեհաճէք Ձեր օրհնութիւնը Պ.Պ. երեսփոխ Կոստանեանի, Գ. էքսեղեանին և աւագ քահանայ Տ. Մինասին, որպէսզի այդ 150 ր. տէր դառնան և գործը շարունակեն[541]*։*

Փոխանորդ՝ Երեմիա վարդապետ

Մակագրութիւն. *Պահել ժողովուած դրամը իբրև ապագայ ֆօնդի հիմք – ցնոր տնօրէնութիւն։*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 10, ինքնագիր:

[541] Տես թիւ 289 փաստաթուղթը:

№ - 288
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՕճԱԽՂՈՒԼԻ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՏԵՂԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 ապրիլի 1916 թ.
Օճախ-ղուլի

Նորին Գերապատուութեան Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ
Կարսայ նահանգի Օճախ-ղուլի գիւղի եկ. ծխ. երկսեռ դպրոցի Հոգաբարձութիւնից
Յայտարարութիւն

Սրանով Հոգաբարձութիւնս պատիւ ունի յայտնելու նորին Սրբազնութեանդ, թէ ներկայ պատերազմի առթիւ գիւղիս աշխատող ձեռքերի սղութեան պատճառով, դպրոցիս սաների թիւը դեռ մարտի 18-ից զգալի կերպով պակասում էր, իսկ ապրիլի 25-ից միայն 3-4 աշակերտուհիներ էին յաճախում դպրոց, ուստի Հոգաբարձութիւնս կազմեց ծխական ժողով, որի մէջ քննուեց սոյն 1915/16 ուս[ումնական] տարւայ դպրոցիս նախահաշիւը և վաւերացուեց ժողովի ստորագրութեամբ, միևնոյն ժամանակ ժողովի և Հոգաբարձութեանս որոշման համաձայն փակուեց դպրոցը ապրիլի վերջին, որի մասին յայտնում ենք ի գիտութիւն:

Հոգաբարձուք՝
1. Նախագահ Սուքիաս Մահտեսի Մելիքեան
2. Մկրտիչ Խաչատուրեան
3. Խաչատուր Փանոսեանց
Երեցփոխան՝ Արմենակ Սաֆարեան[542]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 882, թ. 89, բնագիր, ձեռագիր:

№ - 289
ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ՀԱՆԳԱՆԱԿՈՒՈՂ ՈՒ ՆՈՒԻՐՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՐԳՉԱԽՄԲԻՆ ՅԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1018 *23 մայիսի 1916 թ.*
Երևան

Ի հետևումն Բարձրապատուութեանդ ապրիլի 27-ի Թ. 148 յայտարարութեան[543] *յայտնում եմ իմ գոհունակութիւնս Ս. Լուսաւորիչ եկե-*

[542] Փաստաթուղթը կնքուած է Երեսփոխանի կնիքով:

[543] Տե՛ս թիւ 287 փաստաթուղթը:

ղեցու Տ. Մինաս աւագ քահանային և երեսփոխան Պ. Կոստանեանին, որ եկեղեցու օծման տարեդարձին հարիւր րուբլու չափ գումար են հաւաքել նաև եղբ. Ղոլթախչեաններին, որ նուիրել են հիսուն րուբլի։ Միանգամայն համակիր լինելով Ձեր առաջարկին ցանկալի եմ համարում, որ վերոյիշեալ գումարը երգչական խմբի ֆօնդ լինի, որպէսզի Ղարսի Ս. Լուսաւորիչ եկեղեցին օրինակելի քառաձայն խումբ ունենայ յուրախութիւն ծխականների։ Ես յոյս ունեմ, որ Ղարսի հայ հասարակութիւնը ամեն կերպ կաշխատի սկսուած գործին օժանդակել նուէրներով։ Դրամի գործադրութիւնը և գործի յաջող շարունակութիւնը խնդրում եմ վերցնէք Ձեզ վրայ Տէր Մինաս աւագ քահանայի և Պ. Կոստանեանի աջակցութեամբ կազմելով յանձնաժողով, որի նիստերին կը հրաւիրուի նաև եկեղեցու խմբապետը։

[Փոխ-թեմակալ՝ Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 10 շրջ., թողօն, ձեռագիր:

№ - 290
ԿԱՂՁՈՒԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ՝ ԿԱՄԱՒՈՐԻ ԴԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 յունիսի 1916 թ.
Կաղզուան

Բարձրապատիւ Տէր Փոխանորդի Երեմիա վարդապետի Ստեփանեան

Ի պատասխան Ձեր N *174 գրութեան կամաւորի դին դպրոցի սեռնեակներից մէկում դնելու Հոգաբարձութեան կողմից եղած արգելքին և գրգռուած ժողովրդի՝ այդ առթիւ պահանջած ժողովին, որը ես չեմ կայացրել, պատիւ ունեմ յայտնելու հետևեալը։*

1. *Ժողովը արգելելով, ես՝ ըստ իս, առաջ եմ առել գրգռուող կողմերի հաւանականաբար ծագելիք դժբաղդ պատահարների և այդ բանին իբրև պատճառ գրել եմ, որ ծխական ժողովների թոյլտուութեան իրաւունքը ընդհանրապէս պատկանում է Հոգևոր Կառավարութեանը։*
2. *Կամաւորի դին դպրոցի դասարաններից մէկում մի օրով դնելու արգելքը եղել է ոչ թէ Հոգաբարձական ամբողջ կազմի կողմից, այլ սկիզբը միայն մի անդամի, և ապա վերջինի հետ միացել է և երկրորդ անդամը։*
3. *Հանգուցեալի եղբայրը դիակը դեռ Կաղզուան չբերած՝ ամենից առաջ ինձ է դիմել, ոչ թէ դիակը որևէ տեղ տեղաւորելու, այլ ցինգից մի դագաղ պատրաստելու, որը դժբախտաբար հակառակ իմ ջանքերին, խանութներից ոչ մէկում ցինկ չճարուեց։*

4. *Շատ ուշ արդէն ինձ իմաց տուին, որ դիակը բերել են դպրոցը, դրել են դատարկ դասարաններից մէկում, բայց Հոգաբարձութեան յիշեալ անդամը դասարանից դուրս է հանել տուել և դրել դպրոցի հայաթը, այդ իմանալով, ես գնացել, նախ առաջարկել եմ դնել եկեղեցի և որովհետև ճրագալոյցի երեկոյեան էր, պատարագ անել, առաւօտ հանդէսով ճանապարհ դնել, բայց երբ իմ առաջարկութիւնը մերժուեց այն բանի համար, որ 8 օր ճանապարհ է եկել, այդ երեկոյեան բազմութեան մէջ տաքութիւնից դիակը կարող է փչանալ, ես իմ պատասխանատուութեամբ վերցնել եմ տուել դիակը և դրել դպրոցի դասարաններից մէկում, որտեղից երեք ժամից յետոյ տարել են։ Ահա այս բանը առիթ է տուել ժողովրդի մեծագոյն մասին զայրոյթին, որը յետոյ հասկացաւ միայն, որ Հոգաբարձութեան կողմից այդպիսի բան չի եղել, և կազմի մեծ մասը աշխատել է արժանավայել պատիւներով յուղարկաւորել կաղզուանից դուրս, ինչպէս այդ պատահել է ուրիշ երկու կամաւորների տեղիս զինուորական հիւանդանոցից հասարակական հաշւով փառաւոր թաղման ժամանակ։*

Ժամանակաւոր Գործ[ակալ] Կաղզւանի՝
[Ներսէս քահանայ] Տէր-Ներսէսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 77 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 291
ՀԱՄԱԶԱՍՊ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՐԱԳԷՕԶԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՅ ՎԿԱՆԵՐԻՆ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒՈՎ ԵՐԴՈՒԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 58 *3 յունիսի 1916 թ.*
Կարս

Կարսի Հայոց Հոգևոր Կոավարութեանը
Համազասպ Քահանայ Ղարագէօզեանց
Յայտարարութիւն

Հոգևոր Ատենիդ մայիս 28-ի N985 յանձնարարութեան համաձայն գնացի զինուորական դատարանը հայ վկաներին երդուեցնելու համար, և չնայած, որ մի քանի զինուորական ատեաններ ինչպիսին է զինուորական գաւառապետը, զինուորական քննիչը 1910 թուականից սկսած հին օրէնքը արդէն փոխել են, թէ՛ զինուորներին և թէ՛ վկաներին երդուեցնում եմ հայ լեզուով։ Բայց այսօր նորից ինձ առա-

չարկեցին երդուեցնել ռուսաց լեզուով, և երբ ես հրաժարուեցի, ինձ առաջարկեցին հեռանալ, և ես դեռ դահլիճից չհեռացած՝ վկաններին նախագահը երդուեցրեց ռուսաց լեզուով, որի մասին յայտնում եմ ի գիտութիւն՝ Հոգևոր Ատենիդ, վերադարձնելով և գրութիւնը։

Համազասպ քահանայ Ղարագէօզեան

Մակագրութիւն. *Ուղարկել թեմական Գեր. Տ. Փոխ-թեմակալին՝ հրահանգութիւն խնդրելով թէ այդպիսի դէպքերում ինչպէս պէտք է վարուեն քահանաները։*

Նախագահ՝ Երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 882, թ. 167 և շրջ., ինքնագիր։

№ - 292
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ՀԱՅ ՎԿԱՆԵՐԻՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՈՎ ԵՐԴՈՒԵՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 1022 *8 յունիսի 1916 թ.*
Կարս

Երեւանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալին
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Ներկայացնելով սրա հետ քաղաքիս Համազասպ քահանայ Ղարագէօզեանի ամսիս 3-ի N 58 յայտարարութիւնը՝ հայ զինուորներին և վկաներին երդուեցնելու վերաբերմամբ[544], Հոգևոր կառավարութիւնս խնդրում է Ձերդ Սրբազնութեան բարեհաճ տնօրէնութիւնը այս խնդրի վերաբերմամբ։

Նախագահ կառավարութեան՝ Երեմիա վարդապետ
Անդամներ՝ Համազասպ քահանայ Ղարագէօզեան
Արսէն քահանայ Տ. Գրիգորեան
Քարտուղար՝ Ա. Տ. Յակովբեան

Մակագրութիւն 1. *Գրել որ այդպէս էլ պէտք է վարուի – միայն հայ լեզուով կարելի է երդուեցնել։*

Մակագրութիւն 2. *Ի հետևումն ամսոյս 8-ի Թ. 1022 յայտարարութեան, յայտնում եմ կառավարութեանդ, որ հայ վկաներին բոլոր պետական հիմնարկութիւնների մէջ էլ պէտք է երդուեցնել հայ լեզուով։ Այս դէպքում Տ. Համազասպ քահանայ Ղարագէօզեանի վարմունքը*

[544] Տես թիւ 291 փաստաթուղթը։

տեղին է և օրինաւոր։ Ի դէպ, առաջադրում եմ կառավարութեանը հրահանգել քահանաներին, որ հայ վկաներին երդուեցնեն միայն հայ լեզուով, հակառակ դէպքում նրանք կենթարկուեն խիստ պատասխանատուութեան։

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 882, թ. 165, բնագիր, ձեռագիր:

№ - 293
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԵՍՓՈԽԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 189 *17 յունիսի 1916 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Փոխանորդից
Յայտարարութիւն

Սորանով պատիւ ունեմ խոնարհաբար զեկուցելու Ձերդ Սրբազնութեանը, որ անցեալ կիւրակի գնացել էի Ս. Աստուածածին եկեղեցի, որի նախկին բոլորովին քանդուած զանգակատունը, թէ՛ իր ներքին և թէ՛ վերին սենեակները, ինչպէս և կաթուղիկէն – զանգակատունը տեսայ բոլորովին նորոգուած, որի ծախքը հոգացել է կամաւոր նուէրներ հաւաքելով այժմեան երեսփոխ Պ. Պետրոս Մալաւերեանը և ցանկալի է այդ աշխատանքը ի պայծառութեան Ս. եկեղեցւոյ անտես չթողնիք – ուստի խնդրում եմ Ձերդ Սրբազնութեանը նրան արժանացնէք Ձեր օրհնութեանը, որպէս խրախուսանք ապագայի համար[545]*։*

Փոխանորդ՝ Երեմիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 11, ինքնագիր:

---

[545] 1916 թ. յունիսի 24-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ օրհնագիրն է յղել Պետրոս Մալաւերեանին. «Ղարսի վիճակի Բարձրապատիւ Տ. Փոխանորդը ամսոյս 17-ի Թ. 189 յայտարարութեամբ զեկուցանել է ինձ, որ Ձեր ձեռներէցութեամբ և ժողոված գումար նուէրներով նորոգուած է եկեղեցու զանգակատունը և գաւիթի սենեակները: Յայտնելով Ձեր եկեղեցուն մատուցած ծառայութեան համար իմ գոհունակութիւնս և շնորհակալութիւնս, ցանկանում եմ Ձեզ երկար կեանք և առողջութիւն և եռանդ աւելի ևս օգտակար կերպով աշխատելու եկեղեցւոյ բարեզարդութեան և պայծառութեան համար» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 11 շրջ.):

№ - 294
ԿԱՐՍԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՍՓՈԽԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԻՐ ԿՈՂՄԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԱՆԳԱԿԱՑՈՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՒ ԱՅԼ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 յուլիսի 1916 թ.
Կարս

Նորին Գերապատուութեան Տ. Փոխ-թեմակալին Հայրապետական թեմին Երևանայ Տ. Խորէն Սրբազան եպիսկոպոսին

Խոնարհաբար համբուրելով Ձերդ Սրբազնութեան Ս. Աջը.

Ստացայ անհուն երախտագիտութեամբ Ձերդ Սրբազնութեան տարւոյս յունիս 24 N 1163 օրհնութեան գիրը[546] *Ձերդ Հայրական Սրբութեան սուրբ սրտից բղխած անմահական ջրի ակունքներից խմացնելով ինձ, ինչպէս ամարանի ցօղ ի վերայ դալար խոտոյ, որ չորացած և անձրևի կարօտ բուսականութիւն կենդանութեան շունչ կը ներշնչէ:*

Սրբազան Հայր, ես ինձ շատ բաղդաւոր եմ համարում, որ արժանացայ կրկին Ձեր Սրբութեան օրհնութիւնը վայելելու, որ եղաւ ինձ համար ցնծութիւն սրտի, կրկնութիւն կենաց, ծերութեանս հասակում, որ ի նորոյ նորոգեցաւ:

Սրբազան Հայր, երեսփոխանական պաշտօնը կրկին յանձն առնելը ինձ համար շատ դժուար էր, քանի որ 1883, և 88-ից մինչև 1890 թիւը կատարել էի և, ո՛չ մի աղբիւրից օգնութիւն չլինելով, միայն եկեղեցւոյն փոքր եկամուտից յաջողեցայ վերջապէս շինել Ս. Աստուածածին եկեղեցւոյ անունով երեք շքեղաշէն կրպակները 1889 թուին, և ապա շատ դժուարութիւնների հանդիպելով կամաւս թողի այդ պաշտօնը և դուրս եկայ: Սակայն նկատելով շարունակ եկեղեցւոյ կարծես լքուելուց առաջ եկած աւերմունքը սիրտս չդիմացաւ և նորից օգտակար լինելու ցանկութիւնից, ու եկեղեցւոյ շինութեան նուիրուած լինելու զգացումից մղուած, յարգեցի ժողովրդի կամքը, որ գործում էր Տիրոջ աներևոյթ ձեռքի շարժումով, իւր Ս. Եկեղեցւոյն ծառայելու համար:

Պաշտօնի գլուխն անցնելուց յետոյ նկատեցի թէ որքան պակաս և նորոգութեան կարօտ բաներ կային, օրինակ.

1. 26 տարի առաջ թողած շուրջառների միայն արծուաձև չարփաստներն էին մնացել, իսկ շուրջառները ոչ միայն հանդիսաւոր, այլ հասարակ օրերն իսկ դուրս չգալու, ամօթանք պատճառող բաներ էին դարձել: Դրանց տեղը շինեցի 3 հատ նոր շուրջառ թանկագին կտորից, իսկ արծաթեայ արծուաձև չափրաստները ոսկեզօծել տուի, որոնք դարձեալ իմ ձեռքով են շինուել անցեալում:

2. Անհրաժեշտ էր մի ատենի ժամագիրք, որ բերել տուի Ս. Էջմիածնից Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի ձեռքով:

---

[546] Տես թիւ 545 ծանօթագրութիւնը:

3. 12 հատ լաւ գոյնով շապիկներ շինեցի ամենատեսակ չափերով։

4. Մեծ պասին վարագոյրից դուրս փոքր աստիճանաւոր խաչելութեան պատկերի վերայ գեղեցիկ գոյնով, լաւ կտորից մի ուրիշ վարագոյր։

5. Բաւական թուով խաչեր ոսկեզօծել և արծաթազօծել տուի ու մաքուր ձեռքով գործադրութեան դրի։

6. Մի թագ և վակաս, որոնք այնքան էին քայքայուել, որ չէին կարող գործածուել, քանդել տուի և նոր ի նորոյ շինեցի։ Սրանց վրայի պատկերները ու կամարները, որոնք արծաթից էին մաքրելուց յետոյ մի մասը, ըստ արժանւոյն, ոսկեզօծել տուի և դրի գործածութեան։

7. Եւ ապա թէ ձեռնամուխ եղայ տասնեակ տարիներից ի վեր քայքայուած զանգակատան և նրա սենեակի վերաշինութեան գործին, որը գլուխ եկաւ, ըստ ամենայն տեսողաց և վկայութեանց աւելի ճաշակաւոր և գեղեցիկ քան զառաջինն, և այն էլ այսպիսի ժամանակ, երբ պատերազմի առթիւ ամենայն ինչ, մթերք ու նիւթ, աստղձ ու վարպետ քառապատիկ և հնգապատիկ թանգացել են, իսկ եկեղեցւոյ արդիւնքը պակասելով պակասել, ու գնացել այլուր։ Հետևաբար ամենայն ծանրութիւն և պատասխանատուութիւն բարդուած ծերութեանս տակար ոյժերի վրայ, որը ըստ իմ կարողութեան յառաջ եմ տանում յուսալով և ապաւինելով յողորմութիւնն և յօգնականութիւնն Աստուծոյ և ի զօրաւոր աղօթս և յօրհնութիւնս Ձերդ Սրբազնութեան։

Տացէ Աստուած քաջ հովուիդ երկար կեանք և առողջութիւն պահպանելու և խնամելու իւր բարձր խնամքին յանձնուած բանաւոր հօտը և նրա Ս. եկեղեցւոյ սրբազան վայրերն ու աւանդութիւնները ըստ օրինաց սրբոց առաքելոց և աշակերտաց նոցին և հայրապետաց եկեղեցւոյս։

Մնամ խոնարհ ծառայ Սրբազնութեան Ձերում, երեցփոխ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կարուց՝

Պետրոս Մալաւերեանց

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թթ. 12-13, բնագիր, ձեռագիր:

№ - 295

ՄԻՆԱՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՈՂ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔԻՑ ՄԻ ՄԱՍ ՆՈՅՆԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

14 սեպտեմբերի 1916 թ.
Կարս

Սրբազան Հայր.

Հաւատացած եմ որ, Ձեր ձեռքով սրբագործուած տաճարի պայ-

ծառութիւնը Ձեր հայրական սրտին շատ մօտ է և նրա բարեկարգութիւնը Ձեզ ուրախութիւն պէտք է պատճառէ. ուստի՝ որդիական ամենախոնարհ ակնածութեամբ վստահանում եմ գրել նամակս։ Ս. Լուսաւորիչ եկեղեցին այժմ զարդերի և անօթեղէնաց կողմից, ըստ ամենայնի լրիւ է. բոլորն էլ յիշատակ դրուած այս կամ այն բարեպաշտի կողմից։ Շատ և շատ ցանկանում եմ ունենալ նաև Ս. Սահակի և Մեսրոպի պատկերները, միայն նշանաւոր նկարչի գործ։ Եկեղեցու ձախակողմեան խորանում դնելու համար արդէն յանձնարարել եմ նկարիչ Պ. Վարդգէս Սուրէնեանցին[547] *Գր. Լուսաւորչի պատկերը նկարել ընտիր պաստառի վրայ։ Նա նկարում է Պետրոգրադում և իւր խոստմանը համաձայն պատրաստ է լինելու ամսիս վերջին (յիշատակ մի բարեպաշտի)։ Աջը գեղեցիկ ճաշակով տուի շինել լաւ արծաթագործի և այժմ արդէն պատրաստ է մաքուր արծաթից և ոսկեզօծ, նոյնպէս յիշատակ մի բարեպաշտի։ Սրբազան Հայր, եկեղեցու օծման ժամանակ խոստացաք շինութեան և ծխական Հոգաբարձութեանը ժամանակին միջնորդ լինել Նորին Վեհափառութեանը Ս. Լուսաւորչի մասունքից մի մաս շնորհելու նրա անունով կառուցուած տաճարի համար։ Այժմ եկել է ժամանակը, ուստի՝ որդիական վստահութեամբ ամենախոնարհաբար խնդրում եմ Ձեր Սրբազնութեան խորհուրդը այդ առթիւ։ Երբ արժանանամ ստանալ Ձեր հայրական խորհուրդը, ինքս Աջը առած կը գամ Ձեր Սրբազնութեան մօտ*[548]*։ Կարևոր եմ համարում յայտնել, կիւրակէ և նշանաւոր տօն օրերում բաւական աչքի ընկնող մի երգեցիկ խումբ տղաներից և օրիորդներից կազմուած ներդաշնակ քառաձայն երգում է ի մխիթարութիւն հայ ժողովրդի։ Դա գրաւում է և օտարներին կիւրակէ օրուայ պատարագին յաճախել մեր եկեղեցին։ Գուցէ աւելորդ, բայց գիտեմ որ Ձեզ հետաքրքիր կը լինի և հետևեալը հաղորդել։ Թէ՛ Ս. Լուսաւորչի և թէ՛ Ս. Աստուածածնի երեսփոխան Պարոն Մկրտիչ Կոստանեանցը և Պ. Պետրոս Մալաւիրեանցը շատ սրտով կատարում են իրանց ստանձնած պաշտօնը։ Վերջինը, չնայելով իւր պաշտօնավարութեան կարճ ժամանակին, վերանորոգել տուեց քայքայուած փայտեայ զանգակատունը, նրա ներքևը գտնուած վերնայարկ սենեակի առաջին շինել տուեց մի բալկոն-պատշգամբ և ներկել տուեց, նոր զգեստներ պատրաստել տուեց վայելուչ կերպով։ Մի խօսքով, երկու երեսփոխաններին էլ արժանի են իրանց կոչմանը։ Սպասելով Ձեր Սրբազնութեան խորհրդատու նամակին՝ մնամ ամենախոնարհ որդի Ձերդ Սրբազնութեան՝*

Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 8 և շրջ., ինքնագիր:

---

[547] Սուրէնեանց Վարդգէս Յակոբի (27 փետրուար/10 մարտ 1860, Ախալցխա-6 ապրիլ 1921, Եալթա) – ականաւոր նկարիչ, հայ ազգային պատմանկարչութեան հիմնադիր:

[548] Խնդրի մասին տե՛ս թիւ 296 փաստաթուղթը:

№ - 296
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Ե.ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔԻՑ ՄԻ ՄԱՍ ԿԱՐՍԻ ՆՈՅՆԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 2054 *30 սեպտեմբերի 1916 թ.*
Երևան

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգայ Ե.
Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարքի
Ս. էջմիածնի
Երևանի Փոխթեմակալից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Ձերդ Վեհափառութեանը իր ժամանակին պատիւ եմ ունեցել զեկուցանելու Ղարսի Ս. Լուսաւորիչ եկեղեցու շինութեան աւարտման և օծման մասին։ Յուրախութիւն Ձերդ Ս. Օծութեան պատիւ ունեմ ամենախոնարհաբար յայտնելու, որ ծխականները լիովին զարդարել են եկեղեցին բոլոր անհրաժեշտ զարդերով ու անօթներով և աչքի ընկնող նկարիչների ձեռքով պատրաստած սրբոց պատկերներով։ Ի միջի այլ սրբազան անօթների, պատրաստուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի արծաթեայ աջը, որի մէջ հարկաւոր է ամփոփել ս[ուրբ]մասունքը։

Ուշադրութեան առնելով ժողովրդի թախանձանքը, ամենախոնարհաբար խնդրում եմ Ձերդ Վեհափառութիւնից՝ հրաման տալ Միածնէջ տաճարում եղած Ս. Գրիգորի մասունքներից մասն հանել Ղարսի Ս. Լուսաւորչի տաճարի համար։ Ձերդ Վեհափառութեան հաճութիւնն ու թոյլտուութիւնն ստանալուց՝ անմիջապէս կպատուիրեմ Տ. Մինաս Աւագ Քահանային արծաթեայ աջը առնել և գալ էջմիածին։

Խորին ակնածութեամբ, Ձերդ Վեհափառութեան
ամենախոնարհ որդի՝ Խորէն եպիսկոպոս

Մակագրութիւն. *Լուսաւորչի տեղը եզակի է, որ պահւում է Մայր Աթոռում։ Մերժել*[549]։

Գէորգ Ե. կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 426, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր։

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 9 և շրջ., թողօն, ձեռագիր։

549 Դիւանի պատասխանը Խորէն եպիսկոպոսին տես թիւ 298 փաստաթուղթը։

№ - 297
ՍԱՐԻՂԱՄԻՇ ԱԻԱՆԻ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

5 հոկտեմբերի 1916 թ.
Սարիղամիշ

Առնանագրութիւն

1916 թ. հոկտեմբերի 5-ին Սարիղամիշի ծխատէր Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանի հրաւէրով տեղի ունեցաւ ծխական Գ.-րդ ժողովը, որը համարուեց և վերջին: Ժողովականները միաձայն ընտրեցին նախագահ Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանին և քարտուղար Պ. Բարսեղ Յովհաննիսեանին:

Օրակարգ

1. *Ծխական դպրոցի բացման խնդիրը*
2. *Հոգաբարձական կազմի ընտրութիւնը*

Որոշումներ.

1. *Ծխական դպրոցի բացման խնդիրը*

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ երեք տարի շարունակ փակ է եղել տեղիս ծխական դպրոցը, և այդ ժամանակամիջոցում մանուկ սերունդը զուրկ է եղել դպրոցական կեանքից, միաձայն վճռուեց ամեն միջոց ձեռք առնել դատարկելու դպրոցական շէնքը ու բաց անել դպրոցը: Շէնքի դատարկման համար նորընտիր հոգաբարձութիւնը պարտաւորւում է դիմումներ կատարել ուր հարկն է և այդ առթիւ նրանք լիազօրուած են ժողովականներից:

2. *Հոգաբարձական կազմի ընտրութիւնը*

Հոգաբարձական կազմը ընտրուեց բաց քուէով ժողովականների համաձայնութեամբ, որոնք են Պ.Պ. 1) Արամ Սանոյեան, 2) Մանկասար Մահտեսի Յակովբեան, 3) Սեդրակ Մանկասարեան, 4) Սարգիս Կիւրեղեան և 5) Սրապիոն Քիւրքչեան, որը և անդամ Հոգաբարձութեան և երեցփոխան:

Հոգաբարձութեան փոխանդամներ ընտրուեցին Պ.Պ. Աղէքսանդր Շամցեան և Ղուրշուտ Պօղոսեան:

Ժողովականներ՝ Ա. Դիատեան
Եղիա Մնջոյեանց
Յարութիւն Տէր-Պօղոսեան
Նախագահ ժողովի՝ Տաճատ քահանայ Տէր-Վարդանեան
Քարտուղար՝ Բ. Յովհաննիսեան[550]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 435, թ. 188 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[550] Հետևում է ևս 15 անձի ստորագրութիւն:

№ - 298
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՒԱՆԱՊԵՏ ՏԻՐԱՅՐ Ծ.ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔԻՑ ՄԱՍ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 2209 *8 հոկտեմբերի 1916 թ.*
Ս. Էջմիածին

Երևանի Փոխ-թեմակալ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին

Հայրապետական դիւանս, ի պատասխան Ձեր անցած սեպտեմբեր 30-ի Թ. 2054 յայտարարութեան[551], յայտնում է , որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց մերժել Ձեր խնդիրը, ի նկատի ունելով Ս. Լուսաւորչի Աջի պատմական անցեալի մեծ կարևորութիւնը Մ. Աթոռի գահակալների համար և որ նոցա հովուական իշխանութեան վաւերականութեան նշանակն է, հետևաբար նոր Ս. Լուսաւորչի աջերի յառաջացման խնդիրը ապագայի նկատմամբ անհեռատես և անխոհեմ ոտնձգութիւնների և թիւրիմացութիւնների տեղիք կարող է տալ Մայր Աթոռի պատմական արժէքի նսեմացման նպաստել, այլ և Հայոց Հայրապետների իշխանութեան պառակտման առիթ ընձեռել, ինչպէս պատմական անցեալում:

Դիւանապետ՝ Տիրայր ծ. վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 4, բնագիր, ձեռագիր:

№ - 299
ԿԱՐՍԻ ՎԻճԱԿԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԱՍՈՒՆՔԻՑ ՄԱՍ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 296 *20 հոկտեմբերի 1916 թ.*
Կարս

Երևանի Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ Գերապատիւ
Տ. Խորէն եպիսկոպոսին
Խնդիր

Հայ ժողովուրդն ու Հայաստանեայց Ս. Եկեղեցին անբաժան կապուած լինելով Ս. Լուսաւորչի անմոռաց անուան հետ, անդադար յիշատակւում է, նրա Սուրբ անունը հայ ժողովրդի սրտի և հոգւոյ մէջ: Նոյն հոգեկան սէրն ու ցանկութիւնը ստիպեց տեղիս ժողովրդին հիմնելի եկեղեցին անուանել տալ Լուսաւորիչ անունով: Այժմ, Սրբազան Հա՛յր, ժողովրդի բուռն ցանկութիւնն է ունենալ Ս. Լուսաւորչի նշխար-

[551] Տե՛ս թիւ 296 փաստաթուղթը:

ներից մի մասը այդ տաճարում, որպէսզի կարողանայ վայելել նրա շնորհիւ իր հոգեկան մխիթարութիւնը: Ինչպէս Ձեր Սրբազնած ձեռքով նուիրագործուեց նոյն տաճարը յանուն Ս. Լուսաւորչի, որով տեղիս հայ ժողովրդի սիրտն ու հոգին լցուեց լի բերկրութեամբ, այնպէս էլ այժմ այն ամենախոնարհ խնդրով դիմում ենք Ձեր Սրբազնութեանը ընդհանուր ժողովրդի կողմից, միջնորդս հանդիսանալ Նորին Ս. Օծութեան Ամենայն Հայոց Հայրապետի առաջ, շնորհելու մեզ նրա նշխարներից մի մաս ի կատարեալ մխիթարութիւն ժողովրդեան:

Փոխանորդ Ղարսի Հայոց Վիճակի՝ Երեմիա վարդապետ
Աւագ երէց Ս. Լուսաւորչի՝ Մինաս աւագ քահանայ Տէր-Պետրոսեան
Ի դիմաց ժողովրդին՝ նոյն եկեղեցու երեսփոխ Մկրտիչ Կոստանեանց

Մակագրութիւն. *Յայտնել Վեհի մերժումը:*

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 567, թ. 7, բնագիր, ձեռագիր:

№ - 300
ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ԾՊՆԻ ԳԻՒՂԻ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻՆ՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԿՐՏՉԵԱՆԻՆ ԻՐԵՆՑ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 նոյեմբերի 1916 թ.
Երևան

Երևանի Հայոց Թեմական Կոնսիստորիային
Կարսի վիճակի Ծպնի գիւղի եկեղեցու ծխականների կողմից խնդիր

Ընդ գրոյս ներկայացնելով մեր Ծպնի գիւղի Հայ Լուսաւորչական ծխականների կողմից կազմուած համախոսական թերթը[552], որով Պ. Յարութիւն Մկրտչեանը գիւղիս համար իբրև քահանայացու ներկայացուելով, խնդրուած է հարկ եղած կարգադրութիւնը անել նորա ձեռնադրութեան համար[553]: Խնդրում ենք ժամանակաւորապէս կարգադրութիւն անել նրան զինուորութիւնից զերծ կացուցանելու, մինչև որ նրա ձեռնադրութեան համար պէտք եղած տնօրինութիւնը լինի, որովհետև գիւղս քահանայ չունենալով, երկար ժամանակից վեր նա է կատարում մեր գիւղի ժողովրդեան հոգևոր պէտքերը[554]:

Ի դիմաց Ծպնի գիւղի 100-ի մօտ ծխականների՝
Համբարձում Նահապետեան

---

552 Ծպնի գիւղի հասարակութեան համախօսականը կազմուել է 1916 թ. սեպտեմբերի 25-ին. այն ստորագրել են 97 ծխականներ (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 932, թթ. 3-4):

553 Ծպնի գիւղի նախկին ծխատէրը Սարգիս քահանայ Արիստակէսեանն էր, որը 1912 թ. դրութեամբ 85 տարեկան էր (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1922, թթ. 14 շրջ. - 15):

554 1916 թ. դեկտեմբերի 20-ին Կարսի փոխանորդ Իսահակ վարդապետը հետևեալ գրութիւնն է առաքել Երևանի Փոխթեմակալին. «Ի կատարումն Սրբազնութեանդ ամսոյս

Երեցփոխան Սբ. Աստուածածնայ եկեղեցւոյ՝ Աւետիս Մարգարեան

Յ.Գ. Ընդ գրոյս ներկայացնում ենք քահանայացուի զինուորակոչութեան վկայականը։

Նոյնք

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 932, թ. 2, բնագիր, ձեռագիր:

№ - 301
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Թիւ 51 *21 յունուարի 1917 թ.*
Կարս

Երևանի Հայոց Հայրապետական թեմի Փոխ-թեմակալ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսին
Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութիւնից
Յայտարարութիւն

Կառավարութիւնս խոնարհաբար խնդրում է Ձերդ Սրբազնութիւնից եթէ կարելի է, տեղեկացնել, թէ արդեօ՞ք եկեղեցիների սպասաւորների համար միջնորդութիւն յարուցուած է և ի՞նչ հետևանք է ունեցել[555]։

Նախագահ՝ Իսահակ վարդապետ
Անդամներ՝ Համազասպ քահանայ Ղարագէօզեան
Արսէն քահանայ Տէր-Գրիգորեան
Քարտուղար՝ Ա. Տէր-Յակովբեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 932, թ. 17, բնագիր, ձեռագիր:

№ - 302
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԼՈՑԹՆԵՐԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 20 *11 փետրուարի 1917 թ.*
Կարս

Նորին Վեհափառութեան Տ.Տ. Գէորգ Ե.-րդ
Սրբազնագոյն Հայրապետին Ամենայն Հայոց

19-ի Թ. 2416 առաջադրութեան, սորա հետ դարձնելով Ծպնի գիւղի ծխականների խնդիրը և յարակից թղթերը, պատիւ ունեմ զեկուցանելու, որ հնարաւոր է Յարութիւն Մկրտչեանին տալ տիրացուի վկայական, որովհետև նա կամենում է պատրաստուել սահմանուած քննութեան քահանայ ձեռնադրուելու համար» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 932, թ. 1):

555 Պատասխանը տես թիւ 304 փաստաթուղթը:

Յայտարարութիւն

Ամսոյս 5-ին հոգեհանգիստ էր նշանակուած քաղաքիս Ս. Լուսաւորիչ եկեղեցում եկեղ.-ծխական ուսումնարանի երախտաւոր բժիշկներ Աղէքսանդր Ղազազեանի, Աղէքսանդր Տէր-Յարութիւնեանի և Գէորգ Կաճկաճեանի յիշատակին, որ և կատարեցի պատշաճ հանդիսաւորութեամբ ու դամբանականով դրուատեցի նոցա լուսաւոր գործունէութիւնը, սակայն ինձանից յետոյ անակնկալ հանդէս եկաւ հոգաբարձու Պ. Համազասպ Նոհրատեանը և ճառախօսեց, որ հարկաւ հարկադրուած էի լռութեամբ տանել: Նոյն օրը մտայ եկեղեցի պատարագին և աթոռից նկատեցի դիւսեղանին ինչ որ պատկեր, կանչելով Կորիւն քահանայ Քէօթանջեանին տեղեկացայ, որ պատկերը երեք հանգուցեալ բժիշկներինն է. պատուիրեցի իսկոյն վերցնել պատկերը՝ որովհետև եկեղեցին անկարող է հանդէս բերել ոչ օծեալ պատկերներ, սակայն դժկամակելուց յետոյ հեռացրին եկեղեցեաց պատկերը: Առարկութիւն եղաւ այդ առթիւ, սակայն քահանային ազդարարեցի, որ թողնելը անհնարին է և հակառակելու դէպքում անհրաժեշտօրէն պէտք է եկեղեցին թողնեմ: Սորանից յետոյ պատկերը վերցրին, որ ոչ ոք իրաւունք ունէր եկեղեցի ներածելու:

Ամսոյս 9-ին, Ս. Վարդանանց տօնին պատարագել էի և ընդարձակ քարոզով ի վեր հանեցի Վարդանանց մեծ գործը՝ բնաբան ունենալով՝ «Հաստատուն կացէք և հայեցարուք յանշուշտ զօրագլուխն մեր ի Յիսուս Քրիստոս, զի երկիւղ անհաւատութեան է նշանակ» և բազմակողմանի ապացոյցներով հաստատեցի, որ Վարդանանք քրիստոնէութեան դատը պաշտպանեցին ջերմաջերմ ու Հայաստանեայց երախտագէտ եկեղեցին սրբադրեց նոցա:

Պատարագից յետոյ համօրէն ննջեցելոց յիշատակին հոգեհանգիստ կատարելու ժամանակ հանդէս եկաւ դարձեալ Պ. Նոհրատեանը ճառ խօսելու, որ հարկաւ թոյլ չըտուի ինձ յայտնող քահանայի միջոցով:

Երէկ ինձ յայտնեցին, որ հոգաբարձական և ուսուցչական ժողովը որոշել էր Վարդանանց յիշատակին խօսելու Պ. Նոհրատեանին ու մի վարժուհու:

Պատարագն արձակելուց յետոյ Պ. Նոհրատեանը ազդարարել է հարցնողներին.- «Հայր Սուրբը արգելեց եկեղեցում խօսել», որից հարկաւ չեմ խորշում, բայց գիտէ Ջերդ Վեհափառութիւնը, որ անհաճոյ է նման երևոյթի կրկնուելը, մանաւանդ Կորիւն քահանան էլ յայտնել է թէ աշխարհականների ճառախօսութիւնը եկեղեցում արգելուած չէ և այդ բղխում է իմ կամքից:

Այս մասին զեկուցանելով՝ խնդրում եմ Ջերդ Վեհափառութեանը մի վերջին անգամ էլ հրամանագրել, որ եկեղեցու հանդէսներին ոչ

օծեալ պատկերներ հանդէս գալ անկարող են և աշխարհականների ճառախօսութիւնը եկեղեցում անհնարին է, որովհետև եկեղեցին հանդիսասրահ չէ ճառախօսների համար և եկեղեցականների կոչումը նուաստանում է, երբ եկեղեցում կանգնում են աշխարհական ճառախօսների առաջ, ուրեմն հոգևորականներից կոչման էականը՝ քարոզը, խլուում է և տրուում աշխարհականներին։

Այս տեսակէտը ունենալով՝ ամեն տեղ աշխարհականներին արգելել եմ եկեղեցում հոգևորականի դերը – քարոզիչ լինելը, բացի Մոսկուայի եկեղեցուց՝ ուր տարաբախտաբար իրաւունք չունէի, և հոգևորականների քարոզը պարտադիր դարձրել եկեղեցիներում, ինչպէս նաև արել եմ Կարսում և ժողովուրդը շարունակ քարոզ է լսում եկեղեցում[556]*։*

Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ որդի՝
Փոխանորդ Կարսի Վիճակի՝ Իսահակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 449, թթ. 1-2, ինքնագիր:

№ - 303
ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵՍՈՒՉ ԹԱԴԷՈՍ ԽԱՄԱԼԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԻ ԴԱՒԱՐԼԻ ԵՒ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 199 *13 մարտի 1917 թ.*
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Փոխ-թեմակալիս Երևանի թեմի

Սոյն թուի մարտի 3-ից մինչև մարտի 11-ը այցելեցի Ալէքսանդրապօլի և Կարսի շրջանների հետևեալ գիւղական եկ. ծխական դպրոցները.

1.Դահարլի գիւղի (Ալէքս. շրջ.) դպրոցը չորսամեայ է, երկսեռ։ Շէնքը սեպհական է, բաղկացած է 2 սենեակից։ Դպրոցը չունի գրադարան, կահ-կարասիքը բաւարար է։

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց.

1.Օր. Սիրանուշ Տիրատրեան – աւագ վարժուհի, աւարտել է Արղութեան դպրոցը, ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին

---

556 1917 թ. փետրուարի 17-ին Կաթողիկոսական դիւանը հետևեալ գրութիւնն է յղել բոլոր թեմական առաջնորդներին. «Ն. Ս. Օծութեան հրամանով Դիւանս խնդրում է Ձերդ Գերապատուութեան տնօրինել միանգամայն արգելել աշխարհական անձանց եկեղեցիներում խօսել, ինչ առթիւ էլ որ լինի, ի նկատի ունենալով, որ եկեղեցին ճառախօսութեան վայր չէ, այլ և հոգեհանգիստների ժամանակ որ և է լուսանկար պատկերներ չբազմեցնել եկեղեցում դիասեղանների վերայ և կամ այլուր» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 449, թ. 3):

սոյն դպրոցում, աւանդում է 29 դաս, ստանում է 530 ռ. և յարմարութիւններ։

2. Օր. Շուշանիկ Աստուածատրեան – Արղութեանի IV դաս, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 25 դաս, ստանում է 370 ռ. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 86, որից 20-ը օրիորդներ են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Զիթողցեանից 200 ռ., 2. Աշակերտ. թոշակներից 300 ռ., 3. Եկեղեցուց 234 ռ., 4. Եկեղ. կալուածներից 100 ռ., 5. Պատահական եկամուտ. 125 ռ. - ընդամենը 959 ռ.։

Ուսուցումը գտայ գոհացուցիչ։

Գիւղը ունի 130 տուն։

Նոյն գիւղում կայ գաղթականական դպրոց, որը գտնւում է մեր դպրոցական շէնքում և յանձնուած է մեր դաստատուներին։ Գաղթականական դպրոցը ունի I և II բաժիններ։ Սանների թիւն է 30, որից 10-ը օրիորդներ են։

2. Բաշ-Շիրակ գիւղի (Կարսի շրջ.) եկ. ծխ. դպրոցը չորսամեայ է, երկսեռ» Շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 4 սենեակից։ Կահ-կարասիքը միջակ է։ Գրադարանն ունի 550 կտոր հայերէն և ռուսերէն գրքեր։ Մեր և գաղթականական դպրոցները խառն են։

Ուսուցչական խումբը բաղկացած է 3 հոգուց։

1.Վարոս Սարգսեան – աւագ ուսուցիչ, Թիֆլ. նկարչական կուրս, ունի 11 տարուայ փորձառութիւն. առաջին տարին սոյն դպրոցում։։ Աւանդում է 24 դաս, ստանում է 450 ռ. և յարմարութիւններ։

2. Արևահատ Հազրոյեան – Արղութեան դպր. IV դաս., առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 24 դաս, ստանում է 400 ռ. և յարմարութիւններ։

3. Տիգրան Հազրոյեան – Բիթլիսի Ամերիկ. դպրոց, ունի 4 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 25 դաս, ստանում է Թիֆլ. կեդր. կոմիտէից ամսական 50 ռուբ.։

Աշակերտութեան թիւն է 136, որից 76-ը օրիորդներ են։ Այս թուի մէջ մտնում է և գաղթական սաների թիւը – 35, որից 15-ը օրիորդներ են, դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Բարեգ. Ընկերութ. 250 ռ., 2. Աշակ. թոշակներից 100 ռ., 3. Եկեղեց. կալուածներից 400 ռ, 4. Պատահական եկամտ. 130 ռ. – ընդամենը 880 ռուբ.։

Ուսուցումը գտայ գոհացուցիչ։ Համոզեցի գիւղացիներին այս տարուանից 500 ռ. ծխական տուրք վճարել յօգուտ դպրոցի։

Գիւղն ունի 230 տուն։

Փիրուալի գիւղի (Կարսի շրջ.) Վռամշապուհեան դպրոցը երեքամեայ է, երկսեռ։ Շէնքը սեպհական է, բաղկացած է 2 սենեակից։ Կահաւորութիւնը միջակ է։ Գրադարանն ունի 120 կտոր գիրք։

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց։

1. Օր. Տիրուհի Մուրադեան – արդուբեան IV դաս, աւագ վարժուհի, ունի 4 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 24 դաս, ստանում է 560 ռ. և յարմարութիւններ:

2. Տիկ. Սաթենիկ Նիկողոսեան – Արդուբեան IV դաս., առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 28 դաս, ստանում է 325 ռ. և յարմարութիւններ:

Աշակերտութեան թիւն է 130, որից 38-ը օրիորդներ են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Բարեգործական Ընկեր. 220 ռ., 2. Ծխական տուրք 200 ռ., 3. Աշակերտ. թոշակ. 130 ռ., 4. Եկեղեցական կալուած. 200 ռ., 5. Պատահական եկամուտ 100 ռ.– ընդամենը 850 ռ.: Ուսուցումը գտայ գոհացուցիչ: Դասատուները շատ եռանդով են կատարում իրենց պարտականութիւնները:

Գիւղն ունի 220 տուն:

4. Մաւրակ գիւղի (Կարսի շրջ.) եկ. ծխական դպրոցը յամեայ է, երկսեռ: Շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 2 սենեակից: Կահաւորութիւնը և ուսումնական պիտոյքները բաւարար են: Գրադարանն ունի մօտ 200 կտոր ընտիր գրքեր:

Վարժուհին է Տիկ. Շուշանիկ Աւետիսեանը – Արդուբեան IV դաս., ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 24 դաս, ստանում է 500 ռ. և յարմարութիւններ:

Աշակերտութեան թիւն է 45, որից 4-ը օրիորդներ են:

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Բարեգործական Ընկերութիւնից 287 ռ., 2. Աշակերտական թոշակներից 213 ռ, 3. Եկեղեց. կալուածներից 60 ռ.- ընդամենը 560 ռուբ:

Վարժուհին անբարեխիղճներից չէ, բայց շատ է բացակայել հիւանդութեան պատճառով, ուսուցումը չի գտնւում նախանձելի վիճակի մէջ:

Համոզեցի գիւղացիներին այս տարուանից տարեկան 300 ռ. ծխական տուրք վճարել յօգուտ դպրոցի:

Գիւղն ունի 85 տուն:

Բայրախտար գիւղի (Կարսի շրջ.) դպրոցը 4ամեայ է, երկսեռ: Շէնքը սեպհական է, յարմար, բաղկացած է 2 սենեակից, կահ-կարասիքը և ուսումնական պիտոյքները բաւարար են: Գրադարանն ունի 230 կտոր գրքեր:

Ուսուցչական խումբը բաղկացած է 2 հոգուց.

1.Թէոս Սուքիասեան – Երևանի Թեմական դպր. V դաս., աւագ-ուսուցիչ, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 24 դաս, ստանում է 400 ռ. և յարմարութիւններ:

2. Երուանդ Գրիգորեան – Քաղ. դպր. IV դաս., առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 24 դաս, ստանում է 300 ռ. և յարմարութիւններ:

Աշակերտութեան թիւն է 74, որից 22-ը օրիորդներ են։ Այս թուի մէջ մտնում են նաև գաղթական սաների թիւը – 29, որից 9-ը օրիորդներ են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Բարեգործական Ընկերութիւնից 250 ռ., 2. Աշակերտական թոշակներից 500 ռ.– ընդամենը 750 ռուբ.։

Ուսուցումը գտայ գոհացուցիչ, խումբը գործում է եռանդով և համերաշխութեամբ։

Գիւղն ունի 73 տուն։

Մեր և գաղթականական դպրոցները խառն են։ Գաղթական սաների համար առանձին դասատուներ չը կան։

Այս գիւղն ևս միւս տարուանից կունենայ ծխական տուրք։ Գիւղացիք շատ լաւ են տրամադրուած դէպի մեր դպրոցը։

6. Օրթաքատիկլարի (Կարսի շրջ.) եկ. ծխական դպրոցը 3ամեայ է, երկսեռ։ Շէնքը սեպհական է, բաղկացած է 2 սենեակից։ Կահաւորութիւնը և ուսումնական պիտոյքներն անբաւարար են։ Դպրոցը չունի գրադարան։

Ուսուցիչն է Բենիամին Թոսունեանը, որը աւարտել է Փրկչի դպրոցը, ունի 6 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում։ Աւանդում է 24 դաս, ստանում է 500 ռուբ.։

Աշակերտութեան թիւն է 53, որից 13-ը օրիորդներ են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Աշակ. 300 ռ., 2. Եկեղեցուց 25 ռ.- ընդամենը 325 ռ.։ Ուսուցչի ռոճիկի պակասը հոգացւում է գաղթական սաների հաշուին, որոնց թիւը 20 է։

Ուսուցումը գտայ գոհացուցիչ։

Գիւղն ունի 75 տուն։ Այս դպրոցն արժանի է նպաստի։ Երկար տարիներ գիւղացիք իրանց միջոցներով են պահպանել դպրոցը և սրտովհոգով կապուած են նրա հետ։

7. Բաշ-Քադիկլար գիւղի (Կարսի շրջ.) եկ. ծխական դպրոցը 4ամեայ է, երկսեռ։ Շէնքը սեպհական է, ոչ այնքան յարմար, բաղկացած է 3 սենեակից։ Կահաւորութիւնը և ուսումնական պիտոյքներն անբաւարար են։ Դպրոցը չունի գրադարան։ Մեր և գաղթական սաները խառն են սովորում մեր դպրոցի շէնքում։ Ուսուցիչներից աւագ-ուսուցիչ Գալուստ Աւետիսեանը և ծխական քահանայ Արիստակէս Տէր-Յարութիւնեանը իրանց ռոճիկները ստանում են Կարսի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից։

Ուսուցչական խումբը բաղկացած է 4 հոգուց.

1.Գալուստ Աւետիսեան – աւագ ուսուցիչ, աւարտել է Գէորգ ճեմարանի IV դաս., ունի 15 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 14 դաս, ստանում է 500 ռուբ.։

2. Արիստակէս քահանայ Տէր-Յարութիւնեան – աւարտել է Թեմ.

դպրոցի II դաս, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 12 դաս, ստանում է 200 ռուբ.։

3. Օր. Արաքսէ Կարճիկեան – Արղութեան դպր. ունի 2 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 22 դաս, ստանում է 400 ռ. և յարմարութիւններ։

4. Օր. Արուսեակ Կարճիկեան – Արղութեան դպրոց, առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 19 դաս, ստանում է 400 ռ. և յարմարութիւններ։

Աշակերտութեան թիւն է 110-ը, որից 30-ը օրիորդներին։ Այս թուի մէջ մտնում են նաև գաղթական սաները – 52, որից 20-ը օրիորդներ են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Աշակ. թոշակներից 500 ռ., 2. Եկեղեցական կալուածներից 200 ռ., 3. Պատահական եկամուտ. 200 ռ.– ընդամենը 900 ռ.։

Ուսուցումը չի գտնւում իր բարձրութեան վրայ. Պ. Գալուստ Աւետիսեանը և Արիստակէս քահանայ Տէր-Յարութիւնեանը յաճախակի բացակայում են դասերից, ծանրութիւնը ընկնում է գլխաւորապէս երկու օրիորդների վրայ։

Գիւղն ունի 285 տուն։

8. Ուղուզլի գիւղի (Կարսի շրջ.) եկ. ծխական դպրոցը 2 ամեայ է, երկսեռ։ Շէնքերը ջոկ-ջոկ են, վարձու և անյարմար։ Կահաւորութիւնը լաւ է։ Դպրոցը չունի գրադարան։ Մեր և գաղթական սաները խառն են սովորում։ Դասատուներից երկուսը տաճկահայեր են և իրանց ռոճիկն ստանում են Կարսի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովից։

Ուսուցչական խումբը բաղկացած է 3 հոգուց։

1. Ենովք (Տիգրան) Աւոյեան – աւագ ուսուցիչ, Քաղ. դպրոցի II դաս., առաջին տարին է պաշտօնավարում, աւանդում է 24 դաս, ստանում է 200 ռ. (դեկտեմբերից սկսած)։

2. Մանուկ Մուրադեան – Կոփի երկդասեան ծխական դպրոցը, ունի 11 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 18 դաս, ստանում է ամսական 50 ռուբ.։

3. Յովհաննէս Տէր-Գասպարեան – Մշոյ վանական դպրոցը, ունի 7 տարուայ փորձառութիւն, առաջին տարին սոյն դպրոցում, աւանդում է 18 դաս, ստանում է ամսական 50 ռուբլի։

Աշակերտութեան թիւն է 140, որից 34-ը օրիորդներ են։ Այս թուի մէջ մտնում են նաև գաղթական սաները – 80 հոգի, որից 20-ը օրիորդներ են։

Դպրոցի տնտեսական դրութիւնը. 1. Աշակ. թոշակներից 200 ռ., 2. Պատահական եկամուտ. 50 ռ.– ընդամենը 250 ռուբլի։

Դասատուներն անփորձ են և անպատրաստ, թէպէտ շատ բարեխիղճ են վերաբերում դէպի իրանց գործը, որը սակայն չի գտնւում իր բարձրութեան վրայ։

Գիւղն ունի 180 տուն։

Այցելեցի նաև Քիւրակդարա գիւղը, որն այս տարի չունի ծխական դպրոց։ Գաղթական սաների ուսուցումը յանձնուած է պետական դպրոցի վարժուհիներից մէկին – օրիորդ Գէորգեանին։

Փորձնական դասեր.մարտի 4-ին Բաշ-Շիրակ գիւղի դպրոցում տեղի ունեցաւ 2 փորձնական դաս.

1. Հայ լեզու I բաժնում – Տիգրան Հազրոյեան

2. Թուաբանութիւն III բաժնում – Վարոս Սարգսեան։

Ներկայ էին իրանց և Դահարլիի ուսուցչական կազմերը և հոգաբարձուները – ընդամենը 10 հոգի։

Մարտի 5-ին Փիրուալի գիւղի դպրոցում տեղի ունեցաւ 2 փորձնական դաս.

1.Հայ լեզու III բաժնում - Պ. Տիրուհի Մուրադեան

2. Թուաբանութիւն III բաժնում – Վարոս Սարգսեան։

Ներկայ էին Դահարլիի և Բաշ-Շիրակի ուսուցչական կազմերը և կողմնակի անձինք, ընդամենը 11 հոգի։

Դասերն ունեցան միջակ յաջողութիւն։

Վաղը մեկնում եմ Աղէքսանդրապօլի շրջանի մնացած դպրոցները այցելելու համար։ Ջատկական տօներին կը գամ Երևան և կանցնեմ միւս շրջանները։

Թեմական Տեսուչ Երևանի թեմի՝ Թադէոս Խզմալեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 455, թթ. 31-34 շրջ., ինքնագիր։

№ - 304
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ՉԻՆՈՒՈՐԱԿՈՉԱԿԱՆ ԱՏԵԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՄԷԿ ՏԻՐԱՑՈՒԻ ԳՈՐԾ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 286 *18 ապրիլի 1917 թ.*
Երևան

Ի հետեւումն տարւոյս յունուար 21-ի և 27-ի Թ. 51[557] *և Թ. 90*[558] *յայտարարութեանց, յայտնում եմ, որ Հոգևոր Կառավարութիւնդ կարող է ներկայացնել իւրաքանչիւր եկեղեցու համար մի տիրացուի զինուորակոչի վերաբերեալ գործ։ Կառավարութիւնդ պարտաւոր է ստուգել, որ տիրացուն ծառայած լինի եկեղեցուն առ նուազն հինգ տարի։ Ու-*

557 Տես թիւ 301 փաստաթուղթը:

558 Խօսքը հետևեալ գրութեան մասին է. «Կառավարութիւնս սրա հետ ներկայացնում է Սրբազնութեանդ վիճակիս եկեղեցիների առ այժմ մի քանի սպասաւորների ցուցակը՝ ի տնօրէնութիւն, ըստ այսմ՝ Կարսի Ս. Լուսաւորիչ եկեղեցու համար երեք տիրացու, Օլթու և Խաս-չիֆթլիկ գիւղերի համար՝ մի-մի տիրացու» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 932, թ. 18):

րաքանչիւր տիրացուի համար պէտք է կազմուի համախօսական որով վկայելու է նրա իսկական տիրացու լինելը և եկեղեցուն քանի տարի ծառայելը: Այդ համախօսականները շրջանների գործակալները ներկայացնելու են կառավարութեանդ իրենց վկայութեամբ, որ չիրաւի ցոյց տուած անձնաւորութիւնը տիրացու է: Կառավարութիւնդ ներկայացնելու է այդ համախօսականներից նրանք միայն, որոնց մէջ չիշատակուած անձնաւորութեանց մասին կառավարութիւնդ կյայտնի որ նա իսկապէս տիրացու է առանց հիմնուելու համախօսականներում եղած և գործակալների վկայութիւնների վրայ:

Միաժամանակ յայտնում եմ, որ կարելի է ներկայացնել ինձ տիրացուների գործերը, որոնք նոր պէտք է կանչուին: Գործին պէտք է կցել զինուորակոչման վկայականը կամ նրա վաւերացուած պատճէնը:

Վերոգրեալ պահանջները անթերի կատարումից յետոյ միայն կտրուեն իմ կողմից պատշաճ վկայագրեր Զինուորակոչական Ատեանին ներկայացնելու համար:

[Փոխ-թեմակալ Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 932, թ. 17 և շրջ., թողօն, ձեռագիր:

№ - 305
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՆԻԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՁԵԿՈՒՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԵՀԱՓԱՌԻ ՄՕՏ ԳՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՊԱՐՉԱԲԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 1535 *10 նոյեմբերի 1917 թ.*
Ալեքսանդրապոլ

Նորին Սրբազնութեան Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի
Աղէքսանդրապօլի Փոխանորդից
Յայտարարութիւն

Գերապատուութեանդ հոկտ. 31-ի Թ. 2228 առաջադրութեանը խոնարհաբար պատասխանում եմ, որ ինչպէս անձամբ ևս յայտնել եմ Ձերդ Սրբազնութեան, Նորին Վեհափառութեան մօտ գնալս Անիի հնութեանց խնդրի մասին զեկուցանելու՝ կատարուել է իմ կամքիս հակառակ: Ես ցանկանում էի գրաւոր գրել, բայց Գերասիմ Պետրովիչը[559] *կարծելով թէ Պ. Մառը մի քանի օրից յետոյ գալու է Աղէքսանդրապօլ և ժողով կազմել, կամենում էր օր առաջ Նորին Սրբութեան կամքն իմանալ՝ ըստ այնմ պատասխանելու համար: Վախենալով, որ գրա-*

[559] ԿամսարականԿարապետ (Գերասիմ) Պետրոսի (1858-1919), Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ 1910 թ. մինչև 1917 թ. սեպտեմբերի 6-ը: 1918 թ. Երևանի գանձապետարանի կառավարիչ:

ւոր գրելը կուշացնի պատասխանը, ժողովը որոշեց մարդ ուղարկել անպատճառ, ուստի Գերասիմ Պետրովիչը ինձ խնդրեց, որ անձամբ գնամ էջմիածին և զեկուցանեմ Նորին Վեհափառութեան ու հարկաւոր պատասխանը տանեմ։ Ահա իրողութիւնը։

Փոխանորդ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 550, թ. 22, բնագիր, ձեռագիր:

№ - 306
ԿԱՐՍԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՏԱՄՆԵԱԿ ՀԱՋԱՐԱՒՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՒՈՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

4 մայիսի 1918 թ.
Մեծ Ղարաքիլիսա

Նորին Վեհափառութեան Տ.Տ. Գէորգ Ե.
Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց
Կարս նահանգի գաղթական համայն հայ ժողովրդից
Ամենախոնարհ խնդիր

Վեհափառ Տէ՛ր, մենք Կարս նահանգի տասնեակ հազարաւոր փախստական հայերս, հաւաքելով Ալեքսանդրապոլ գաւառի Մեծ Ղարաքիլիսա գիւղի վակզալում 1918 թւի մայիսի 4-ին (ն. տ.) կաղզուանի և երասխաձորի գործակալ Ներսէս քահանայ Տէր-Ներսիսեանի նախագահութեամբ և Կարսի վերաբնակիչ Յակովբ Բարսեղեանի քարտուղարութեամբ ժողով կազմելով՝ որոշեցինք. 1) Ի նկատի ունենալով որ քրդական և թրքական հորդաների հրից ու սրից ազատուած մեր ընտանիքները սովից և զանազան վարակիչ հիւանդութիւններից պիտի կոտորուեն, որոնց ազատելու համար զրկուեցինք մեր ինչք ու կարողութիւնից, 2) Ի նկատի ունենալով, որ մեր զանազան մարմիններն ու կուսակցութիւնները շնորհիւ իրենց քաղաքական չհասութեան և անգործ ու անկազմակերպ վիճակի միշտ մեզ խաբեցին և ծայր աստիճան թշուառութեան հասցրին, 3) Ի նկատի ունենալով որ այլևս յիշեալ մարմինների գործունէութեան վրայ յոյս դնելը և նրանց խոստումներին հաւատալը անմտութիւն է.– մենք, տանջուող ժողովուրդս, այսօրուանից կտրում ենք որևէ կապ յիշեալ մարմինների հետ և իբրև համայն հայ ազգի պաշտօնական պետի ու ներկայացուցչի դիմում ենք Ձեզ, Վեհափառ Տէ՛ր, հետևեալ աղերսագին խնդիրքով. 1) Կամ միջնորդել ուր հարկն է, մեր ընտանիքների կեանքը՝ ապահովելու համար ժամանակաւորապէս մի հացառատ տեղ տեղաւորելու, 2) Կամ եւրոպական կռուող կամ չէզոք պետութիւններից որևէ մէկի հովանաւորութեան տակ մեր ընտանիքների կեանքի և կայքի ապահովութեան խոստումով վերադարձնել մեզ մեր հայրենիքը աշխատելու և

շէնացնելու։ Վեհափառ Տէ՛ր, որովհետև ցարդ մեզ լսող և մեր խօսքը կատարողը չի եղել, եթէ մեր այս վերջին յոյսը յանձին իր ընտրած Հովուապետի չիրականանայ շուտով, այն ժամանակ յուսահատուած և անտէր ժողովուրդը ինքը իր գլխի ճարը կը գտնի։

Ժամանակի և հանգամանքի դժբախտ բերմամբ՝ անհնարին եղաւ մի քանի տասնեակ հազարաւոր ժողովրդի ստորագրութիւնը հաւաքել, ստորագրում են միայն ժողովի նախագահը և քարտուղարը, յանձնարարելով սոյն խնդիրը անձամբ Վեհիդ ներկայացնելու իր ներկայացուցիչների միջոցով, որոնք ընտրուած են հետևեալ տեղերից, հետևեալ անձերը. Կարս քաղաքից՝ Ալեքսան Բաղդասարեանց և Գասպար Յովհաննիսեանց, Կաղզուանից և շրջանից՝ Մեսրոպ Ղազարեան, Սարիղամիշից և Բասենից՝ Միսակ Շամինեանց[560]*։*

Նախագահ ժողովի Ներսէս քահանայ Տէր-Ներսիսեանց
Քարտուղար՝ Յակոբ Բարսեղեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 307
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԿԱՐՍԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՏԵՂԱՒՈՐՄԱՆ ՈՒ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 353 *15 մայիսի 1918 թ.*
Ս. Էջմիածին

Տփխիսի Ազգային Խորհուրդին

Կարսից գաղթող հայ ժողովրդի ներկայացուցիչները դիմելով Ն. Ս. Օծութեան առանձին խնդրագրով Վեհ. Հայրապետի ուշադրութիւնը հրաւիրելով իրենց այժմեան ծանր վիճակի վերայ խնդրում էին կարգադրութիւն իրենց շրջանի գաղթականների մասին։

Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով որ Ազգային ժողովի կողմից առանձին Արտակարգ Յանձնաժողով է կազմակերպուած գաղթականական գործերի կարգաւորման, հոգածութեան պարենաւորման և առժամանակեայ տեղաւորման համար, որի անդամները ելել են Ղարաքիլիսայ, բարեհաճեց պատուիրել Դիւանիս գրել Մեծ. Խորհրդիդ հոգածութիւն ունենալ Կարսի շրջանի գաղթականների վիճակի մասին ևս և հետևանքի մասին տեղեկութիւն հաղորդել Դիւանիս Ն. Սրբութեան զեկուցանելու համար[561]*։*

---

[560] 1918 թ. մայիսի 5-ին նման բովանդակութեամբ խնդրագիր է յղուել Վեհափառին նաև Ալեքսանդրապոլում ապաստանած կարսեցի գաղթականների կողմից (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ.2 և շրջ.)։

[561] 1918 թ. օգոստոսի 8-ին Հայ Փախստականական Կազմակերպութիւնների Գլխաւոր

Մակագրութիւն. *Կատարել։*

Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 5, թողօն, ձեռագիր:

№ - 308
ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ ԵՒ ԱՅԼ ՎԱՅՐԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

21 մայիսի 1918 թ.
Մեծ Ղարաքիլիսա

Նորին Սրբութեան Տէր Տէր Գէորգ Ե. Կաթողիկոսի Ամենայն Հայոց
Յայտարարութիւն

Ինչպէս հեռագրով Տփխիսից յայտնել եմ Գաղթականական Մարմնի և Ազգային Խորհրդի կողմից նշանակուեցի անդամ և նախագահ Գաղթականական Արտակարգ Յանձնաժողովի։ Այս մարմինը կազմուեց ի նկատի ունենալով գաղթականութեան արտակարգ կարիքները, որպէս զի այլևս առանց Տփխիսի կարգադրութիւններին և ցուցմունքներին սպասելու տեղումը արագ կերպով անել, ինչ որ բոպէի պահանջն էր. Տփխիսը պէտք է հայթայթէ դրամ։

Յանձնաժողովը եկաւ Ղարաքիլիս, մշակեցինք մի շարք հարցեր, ցանկանալով Ղարսի շրջանի եկած գաղթականներին տեղաւորելու լեռնային ազատ պետական և կալուածատիրական հողերում, հնարաւոր չափով մնայուն կերպով։ Ալեքսանդրապոլի գրաւումը տաճիկներից[562] նոր աղէտի դուռ բացեց և յանձնաժողովս այլ ևս ծրագրային գործ կատարելու մասին մտածել անգամ չի կարողանում։ Աննկարագրելի է գաղթականների վիճակը, մահացութեան դէպքեր սկսել են ծայր առնել, կերակրել և տեղաւորել նոցա մարդկային հնարաւորութիւնից հեռու է։ Մի մասը նոցա գնում էր դէպի Տփխիս, երրորդ օրն է ճանապարհը Սանդարի մօտ ընդհատուած է տեղական թուրքերի կողմից և Տփխիսից դէպի ֆրօնտ եկող 3 հայկական էշէլոնները կռո-

Խորհուրդը հետևեալ գրութիւնն է յղել Կաթողիկոսական Դիւանին. «Ի հետևումն Ձեր 15 մայիս N353 գրութեան՝ ուղղած Հայոց Ազգային Խորհրդին Ղարսի շրջանի գաղթականներին օգնութիւն ցոյց տալու մասին, Գաղթականական Գլխաւոր Խորհրդի Դիւանը այսու պատիւ ունի յայտնելու Ձեզ ի գիտութիւն, որ Ղարսի շրջանի բոլոր գաղթականներին, որոնք ապաստան են գտել Բակուրիանի և այլ շրջաններում, Խորհուրդս հայթայթում է նրանց միւս բոլոր գաղթականների հետ համահաւասար կերպով պարէն՝ հոգ տանելով միաժամանակ և նրանց բժշկական օգնութեան մասին» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 14):

562 Թուրքերը մայիսի 14-ի լոյս 15-ի գիշերը վերջնագիր ներկայացրին Ալեքսանդրապոլի զինուորական ղեկավարութեանը՝ պահանջելով մայիսի 15-ի առաւօտեան ժամը 7-ին Ալեքսանդրապոլը յանձնել իրենց:

ւի բռնուելով՝ վերադարձել են, անկարող լինելով բացել ճանապարհը. ընդհատուած է և հեռագրային հաղորդակցութիւնը։ Բաւական ստոյգ տեղեկութեանց հիման վրայ տաճիկները երկաթուղու, Ապարանի և Ախալքալաքի շոսսէի գծերով դանդաղ առաջ են խաղում։ Այստեղի գաղթականութիւնը կտրուած է թէ՛ Տփխիսի և թէ՛ Ախալքալաքի կողմից։ Մթերքներ ամենևին չկան, տեղափոխութեան միջոցներ ամենևին պակասում են։ Անասունները կոտորւում են կերի պակասութեան պատճառով, և ժողովուրդը ծախում է ոչխարները՝ 3 րուբ. սկսած, իսկ կովեր և եզներ՝ 10-ից սկսած։

Գալիս է Արտակ վարդապետը, որ կը պատմի բոլոր մանրամասնութիւնները, եթէ հեռագրական հաղորդակցութիւնը չընդհատուեց ես այսուհետև ևս պարտք կը համարեմ ուղղակի գծով միշտ իրազեկ պահել Ձերդ Սրբութեան, խնդրելով այդտեղից ևս մեզ տեղեկութիւններ հաղորդել։ Այստեղի բոլոր շրջանների միաձայն կարծիքն է, որ եթէ երևանի կողմերից ևս ժողովուրդը շարժուելու լինի դա կը լինի ազգային սոսկալի աղէտ, միակ փրկութիւնը նկատւում է որ ժողովուրդը իւր տեղում մնայ, որով գուցէ ապահով սովամահից կարողանայ ազատուել։

Վրացական թերթերը հայերի դէպի Տփխիսի նահանգը գաղթելու առթիւ ահագին աղմուկ են բարձրացրել և, թէև որոշ փաստ չը կայ, բայց ենթադրում են շատերը, որ Սանդարի գծի ընդհատումը առնուազը նոցա շատ հաճելի է։ Խաղաղարար բանակցութիւնների մասին ստացուած հատ ու կտոր տեղեկութիւնները աննպաստ են։

Երկաթուղու գիծը ընդհատուելուց յետոյ գաղթականութեան այն մասը, որ տեղափոխութեան սեպհական միջոցներ ունի, ուղղւում է դէպի Դիլիջան և Ելենովկայ, մօտաւորական հաշուով այս օրերս գնացել են ոչ պակաս 800 սայլեր, որոնց պարէնաւորման համար յանձնաժողովս միջոցներ է ձեռք արել։

Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 6 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 309
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ԿԱՐՍ ՄԵԿՆԵԼՈՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիւ 280 *24 ապրիլի 1919 թ.*
Ալեքսանդրապոլ

Նորին Սրբազնութեան Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի
Աղէքսանդրապօլի Փոխանորդից

Յայտարարութիւն

Երէկ ստացայ Գերապատուութեանդ հեռագիրը, որով առաջարկում էիք կարս գնալ: Ես կամենում էի Զատկից յետոյ անմիջապէս կարս գնալ: Գեներալ Յովսէփեանն[563] ասաց, որ սպասեմ և Զատկից մի շաբաթ յետոյ գնամ, երբ զօրամասերը տեղ հասած կլինեն: Երկրորդ շաբթին էլ գնալս չյաջողուեց հետևեալ պատճառով: 1918 թուի ապրիլից սկսած Հառիճայի[564], Արղութեան[565] և Խրիմեան դպրոցների հոգաբարձութեանց և Ս. Աստուածածնի խորանի արդեանց ու մոմի հաշիւները չէր տեսնուած, խառնուել էր ամեն բան ու խճճուել: Հոգաբարձուները հաւաքուել էին և պէտք է նորից թիֆլիզ վերադառնային: Այդ երկրորդ շաբաթուայ ընթացքում հազիւ հնար եղաւ հին հաշիւները վերանորոգել, ճշտել ու արձանագրութիւններով վաւերացնել: Երբ Ձեր հեռագիրն ստացայ, ես արդէն պատրաստութիւն էի տեսնում կարս գնալու, սակայն կանոնաւոր գնացքներ չկան, պէտք է մարդ գնայ կայարան և քանդուած կայարանում ժամերով սպասի: Անձրևների շրջանը սկսուել է և հնար չկայ ոտքով գնալու, իսկ կառք էլ ձեռք չի ընկնում: Երէկ այնուամենայնիւ որոշեցի գնալ, փնտրեցի կառք, չգտայ, մշակներ վարձեցի, որ եկեղեցիների համար սպասներ վերցնեն, Սրբազնութեանդ էլ հեռագրեցի, բայց անձրևն այնպէս սաստկացաւ, որ տեղիցս շարժուել չկարողացայ: Այսօր մարդ ուղարկեցի կայարան, ոչ ոք չէր կարողացել ասել թէ գնացք կա՞յ արդեօք և երբ կերթայ: Ժամը 3-ին տեղեկացայ, որ գնացք կայ: Անձրևի տակ գնացի, բայց ասացին թէ 10 րոպէ առաջ գնացել է: Առաւօտեան ժամը 7-ին գնացք կայ, և ժամի 6-ին անպատճառ կերթամ կայարան:

Վերոգրեալի մասին յայտնում եմ Սրբազնութեանդ ի գիտութիւն:

Փոխանորդ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 256, թ. 3 և շրջ., բնագիր, ձեռագիր:

---

563 Յովսէփեան Յարութիւն (Արտեմ) Գրիգորի (02.01.1872-28.07.1921, Լոռի) – Ցարական բանակի սպայ, ՀՀ բանակի գեներալ-մայոր: Կարսի ռազմաճակատի գլխաւոր՝ կենտրոնական հատուածի հրամանատար: Աչքի է ընկել իր ապիկարութեամբ: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ ծառայութեան է անցել Կարմիր բանակում, եղել Վրաստան ներխուժած ու երկիրը խորհրդային դարձրած Կարմիր բանակի հրամանատարներից: Կեանքի վերջում եղել է Լոռու գաւառի զինուորական կոմիսարը:

564 Հառիճը, որպես ուսումնակրթական կենտրոն, յայտնի էր դեռևս 7-րդ դարից: Հառիճի դպրոցը լայն գործունէութիւն է ծաւալել 10-14-րդ դարերում: Եղել է գրչութեան և մանրանկարչութեան կենտրոն: Վանքի դպրոցը իր երկրորդ ծնունդն ունեցավ 19-րդ դարի կէսերին: 1850 թ. ստեղծւում է Հառիճավանական ընկերութիւնը, որի նպատակն էր պահպանել վանքի շինութիւնները և բացել դպրոց: 1857 թ. այստեղ բացւում է դպրոց՝ 21 աշակերտով, հիմնւում է մատենադարան, իսկ 1881 թ. բացւում է նաև օրիորդաց դպրոց:

565 Խօսքը 1871 թ. Ալեքսանդրապոլում հիմնուած Արղութեան իգական դպրոցի մասին է, որը 1919-ին վերանուանուեց ‹‹Արղութեան›› միջնակարգ դպրոցի: Լուծարուել է 1921-ին:

№ - 310
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

21 մայիսի 1919 թ.
Կարս

Առձանագրութիւն 1

*Կարսի Հոգևոր կառավարութեան մէջ լսեցին՝ վիճակիս Տ. Փոխանորդի մայիսի 1-ի №383 առաջադրութիւնը, որով կառավարութեան անդամ գանձապահ է կարգում Տ. Կորիւն քահ. Քոթանջեանին, և քարտուղարի պաշտօնակատար՝ Տ. Գրիգոր քահ. Նժդեհեանին, իսկ ամսոյս 21-ի Թ. 384 առաջադրութեամբ կառավարութեան անդամ է նշանակւում Տ. Խորէն քահ. Ստամբօլցեանին և գրագիր է նշանակում Տ. Յովսէփ քահ. Յարութիւնեանին: **Սահմանեցին.** ճանաչել Կարսի Հայոց Հոգևոր կառավարութեան կազմը վերահաստատուած և բացուած, ոի մասին յայտնել Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիային, և հանել հրաման պաշտօնեաներին ու հրաւիրել պաշտօնի:*

Նախագահ Հոգևոր կառավարութեան՝ Արտակ վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Քոթանջեան
Կ. պ. քարտուղարի՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 1, բնագիր, ձեռագիր:

№ - 311
ԿԱՂՁՈՒԱՆԻ ԳԱՒԱՌԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆԵԱՆԻՆ՝ ԿԱՂՁՈՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԱԼԱՆՈՒԱԾ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՆՈՐՈՈԳԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 113 *5 յունիսի 1919 թ.*
Կաղզուան

Կարսի Պ. Նահանգապետին
Ձեկուցում

Այսօր, տեղիս քահանայի հետ այցելեցի հայոց եկեղեցին և գտայ վերին աստիճանի աւերուած և անմխիթար վիճակում: Բեմի խաչկալը քանդուած և տարուած, դասի ճաղերը նոյնպէս, պատուհանների ապակիները կոտրուած և կիսով չափ աղիւսով շարուած, աւազանի գլխին և զանազան տեղեր կար փորուածքներ, որոնք, ըստ երևոյթին, գանձ գտնելու նպատակով են փորել: Եկեղեցական գրքերից, սպասներից, զարդերից և անօթներից և ոչ մի հատ չկայ, բոլորը թալանուած են և տարուած:

Ի նկատի ունենալով, որ ժողովուրդը դառնում է իր նորմալ կեանքին, և քաղցից մեռնող ժողովուրդը ի վիճակի չէ զոհաբերելու եկեղե-

ցուն նիւթական որևէ օժանդակութիւն, տեղիս քահանայի, մի քանի աչքի ընկնող քաղաքացիների և վարպետի հետ միասին նշանակեցի մի կամիսիա[566] որոշելու համար արուելիք ծախսը։ Կամիսիայի մանրազննին քննութիւնից դուրս եկաւ, որ ներկայ պայմաններում առ նուազ հարկաւոր է քսան հազար րուբլի (20000 ր.) եկեղեցին իր նախկին վիճակին հասցնելու համար։

Յանուն նիւթապէս մեռնող՝ բայց հոգեպէս դեռ ապրող ու յուսացող ժողովրդի, նրա կողմից ու անունից դիմում եմ Ձերդ Գերազանցութեան և խոնարհաբար խնդրում միջնորդել ուր հարկն է, յիշեալ գումարը հայթայթելու։

Կաղզուանի գաւառապետ՝ Ռ. Պ.
Քարտուղար՝ Վ. Մելիքեան

Մակագրութիւն. *Երևանի Առաջնորդին. ուղղելով այս գրութիւնը Ձերդ Սրբազնութեան ի կարգադրութիւն՝ խնդրում եմ իրազեկ անել ինձ հետևանքի մասին։ 11 յունիսի 1919 թ., կարս,* N *1144*

Նահանգապետ Ղորղանեան[567]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 8 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 312
ԿԱՐՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿԱՐՍՈՒՄ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀՈՒՈՂ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ ՈՐԲԵՐԻ ԹՈՒԻ ԵՒ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 36 *12/25 յունիսի 1919 թ.*
Կարս

Նորին Սուրբ Օծութեան
Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Ե.
Կարսի ժամ. Փոխանորդ Արտակ վարդապետից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Պարտք եմ համարում ամենախոնարհաբար զեկուցանել Ձերդ Սուրբ Օծութեան, որ Ամերիկական Կոմիտէն[568] *Կարսում պահում է*

566 Կամիսիա (комиссия) – յանձնաժողով:

567 Ղորղանեան Ստեփան Ալեքսանդրի (1865, Իգդիր – 1925, Թիֆլիս) – պետական գործիչ: 1885-1888 թթ. եղել է Սուրմալուի, 1888-1895 թթ.՝ Նախիջևանի գաւառապետի օգնական, 1895-1910 թթ. Նոր Բայազէտի, 1910-1915 թթ.՝ Քութայիսի գաւառապետ, 1919 թ. ապրիլի վերջից 1920 թ. հոկտեմբերի 30-ը՝ Կարսի նահանգապետ: Եղել է Ալեքսանդրապոլի բանակցութիւնները վարած ՀՀ պատուիրակութեան կազմի մէջ:

568 Խօսքը Մերձաւոր Արևելքի Նպաստամատոյց Կոմիտէի (Near East Relief) մասին է : Հայկական և Սիրիական Նպաստամատոյց կոմիտէները հիմնուել են 1915 թ. Ջէյմս Բարտոնի կողմից: 1918 թ. նրանց միաւորմամբ ստեղծուեց ‹‹Մերձաւոր Արևելքի Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէն››:

հայ որբերի համար մի որբանոց, ուր որբերը զետեղուած են երկու շէնքում: Նոքա նպաստ են տալիս նաև մուսուլման որբերի համար գոյութիւն ունեցող կոմիտէներին: Հայոց որբանոցի մի մասը տեղաւորուած է հայոց եկեղեցապատկան շէնքում (նախկին յաջորդարան), որտեղ կան 266 որբեր: Միւս մասը տեղաւորուած է քաղաքային դպրոցի շէնքում, որտեղ կան 240 որբեր, ի միասին 506 որբեր, որոնց մէջ կան տաճկաստանցի, կարսեցի և շրջակայ գիւղերից բերուած որբեր: Ծրագրուած էր մինչև 2000 որբ հաւաքելու, սակայն վերջերս կարգադրութիւն եղաւ Երևանից դադարեցնել որբերին ընդունելը, մինչև նոր կարգադրութիւն:

Եղել եմ որբանոցներում և դիտել: Հայոց եկեղեցու շէնքում խնամուող որբերն արդէն կարգին են բերուած, մաքուր հագնուած: Այստեղ որբանոցը բռնում է 16 սենեակ, որից 4-ը յատկացրած է հիւանդանոցի՝ զանազան տեսակ հիւանդութիւնների համար: Բարեբախտաբար հիւանդութիւններ չկան, մահացութեան դէպքեր քիչ են եղել, իսկ ներկայիս մի քանի թուլակազմ հիւանդներն էլ կազդուրւում են: Հիւանդանոցը և որբանոցը շատ լաւ կահաւորուած են և մաքուր են անկողինները, սպիտակեղէնը, թէև դեռ ևս կարիք շատ ունեն սպիտակեղէնի: Շաբաթը մէկ անգամ երեխաներին բաղանիք են տանում: Երեխաներն ամենայն օր առաւօտեան խմում են կաթով թէյ, ստանում են օրական մէկ ֆունտ[569] հաց, շաբաթուայ մէջ երկու անգամ հաւկիթ, ճաշին ստանում են շաբաթուայ մէջ 4 անգամ մսով կերակուր, իսկ 3 անգամ թանապուր և փլաւ՝ չրով: Թանապուրի հետ տալիս են խաշած լոբի և կամ կարտոֆիլ: Երեկոյեան ստանում են պանիր կամ մածուն: Ինչպէս կառավարիչներից ոմանք ասացին սնունդն անբաւարար է, թանապուրը առանց համեմունքի է լինում կամ այլ կերակուրներ հում են տալիս: Երեխաների հետ ամենայն օր թեթև պարապմունք ևս լինում է. կրօնա-բարոյախօսական դասերի համար ես նշանակեցի Տ. Կորիւն քահանայ Քոթանջեանին: Երէկ ինձ մօտ էր որբանոցի լիազօր պ. Մակքէյ, որ 22 տարի Ամերիկայում քարոզիչ է եղել: Երկար խօսակցութիւն տեղի ունեցաւ որբանոցների շուրջը, իմիջիայլոց նա ասաց թէ. «Թող ոչ ոք չկարծէ թէ իրենք եկել են հայոց կրօնական զգացմունքներին դիպչելու: Իրենք եկել են հայերին սովից ազատելու համար» և ուրախութիւն յայտնեց, որ քահանայ եմ նշանակել բարոյական դասեր տալու որբերին:

Որբանոցի երկրորդ բաժանմունքը, որ քաղաքային դպրոցի շէնքում է գտնւում, դեռ նոր է կազմակերպուած, ուստի և զուրկ է ամեն յարմարութիւններից: Երեխաները թւով 240 հոգի, չունեն նոր շորեր,

[569] Ֆունտ – ծանրութեան չափ, որ զանազան երկրներում տարբեր մեծութիւն ունի: Ռուսական ֆունտը հաւասար էր 409,5 գրամի:

չունեն վերմակ, դօշակ, քնում են յատակի վերայ խոտէ դօշակների վերայ հէնց իրենց շորերի մէջ, բաց - բաց։ Կերակուրը միևնոյնն է, ինչ որ առաջին բաժանմունքինն է։

Ինչպէս ասացի,ն մինչև մէկ շաբաթը բոլոր որբերը պէտք է տեղափոխուեն Բերդի ձորում գտնուած զօրանոցները, որտեղ արդէն պատրաստութիւն են տեսնում ամերիկացիները որբերին միատեղ խնամելու համար։

Վերոգրեալի մասին ամենախոնարհաբար զեկուցանում եմ Ձերդ Վեհափառութեան ի գիտութիւն[570]*։*

Մատչելով ի համբոյր օծեալ Աջոյն

Ձերդ Սուրբ Օծութեան
խոնարհ ծառայ և որդի՝
Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1342, թթ. 1-2, ինքնագիր:

№ - 313
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՒ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԻ ԵՒ ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԹԱԼԱՆՈՒԱԾ ՎԻՃԱԿԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

13/26 յունիսի 1919 թ.
Կարս

Նորին Սրբազնութեան Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի
Աղէքսանդրապօլի Փոխանորդից
Յայտարարութիւն

Աղէքսանդրապօլի և Կարսի եկեղեցիները միանգամայն թալանուած են։ Ձունեն ո՛չ եկեղեցական գրքեր և ո՛չ շապիկներ, շուրջառներ, անօթներ և այլն։ Գիւղացիք ծայր աղքատութեան մէջ են գտնւում, և յուսալ թէ նրանք եկեղեցու կարիքները կը հոգան, մեծ ինքնախաբէութիւն կլինի։ Ոչ մի եկեղեցի վարագոյր չունի, շուրջառ չունի։ Բացառութիւնները շատ քիչ են։ Քահանաները շարունակ դիմում են ինձ և օգնութիւն խնդրում։ Տեսնում եմ եկեղեցիների աւերակ լինելը, մեծ կարիքը և օգնութեան հասնել չեմ կարողանում։

Զեկուցանելով վերոգրեալի մասին, խոնարհաբար խնդրում եմ,

[570] 1919 թ. 25/8 յուլիսին Կաթողիկոսական դիւանը հետևեալ գրութիւնն է ուղարկել Արտակ վարդապետին. ‹‹Ն. Ս. Օծութեան հրամանով դիւանս, ի պատասխան Ձեր այս տարուայ յունիսի 12/25-ի Թ. 36 յայտարարութեան, յանձնարարում է Ձեզ ուշադրութիւն դարձնել Կարսում բացուած կամ բացուելիք որբանոցների կրօնական-բարոյական դաստիարակութեան վերայ›› (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1342, թ. 3):

այս հարցը յարուցանել Ս. Սինոդի առաջ որևէ միջոց գտնելու արժան գներով կամ արժան տեսակի չիթերից վարագոյրներ և այլ զգեստներ պատրաստելու համար ու իւր գնովը եկեղեցիներին բաժանելու։ Հակառակ դէպքում մենք եկեղեցի չենք ունենայ, իսկ ժողովուրդը ևս առաւել կհեռանայ ու կսառչի եկեղեցուց։ Այժմ ոչ մի տեղ պատարագ չի կատարւում։

Փոխանորդ Աղէքսանդրապօլի և կարուց՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 9, ինքնագիր:

№ - 314
ԿԱՐՍԻ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԱՆԻԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔՐԴԵՐԻ ՈՒ ԹՈՒՐՔԵՐԻ ԱՒԵՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թիւ 511 *30 յունիսի 1919 թ.*
Ալեքսանդրապոլ

Նորին Սրբազնութեան Փոխ-թեմակալին Հայոց Երևանայ
Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի
Կարսի և Աղէքսանդրապօլի Փոխանորդից
Յայտարարութիւն

Այսօր ինձ մօտ եկաւ ճարտարապետ Պ. Թորամանեանը և յայտնեց որ ինքը եղել է Անիում։ Քրդերն ու թուրքերը տարել են եղած շէնքերի փայտեղէնը, այժմ էլ քանդւում են և տանում Պրոֆ. Մարրի շինած շէնքերի պատերի տաշած քարերը։ Հնութիւնները միանգամայն ոչնչացուած են, և մնացածն էլ՝ քրդերը կոտրտում ու ջարդում են այժմ։ Ես այսօր հեռագրեցի Կարսի Նահանգապետին, որ անմիջապէս արգելք դնի աւերածութեան և պատասխանատուութեան ենթարկի յանցաւորներին։

Յայտնելով վերոգրեալի մասին՝ խնդրում եմ դիմէք Հանրապետութեան և խնդիր դնէք, որ Անիին մօտիկ քրդական և թուրքական գիւղերը տեղափոխեն բոլորովին հեռու, որով միայն հնարաւոր կլինի Անիի հնութիւնները ազատել աւերածութիւններից[571]*։*

Փոխանորդ Կարսի և Աղէքսանդրապօլի՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 581, թ. 1, բնագիր, ձեռագիր:

[571] Խնդրի առթիւ Խորէն եպիսկոպոսը Հայաստանի Հանրապետութեան վարչապետին յղած գրութեամբ մասնաւորապէս գրում էր. «Խնդրում եմ կարգադրել, որ Անիում հնութիւնները պահպանելու համար մի պահակախումբ կարգուի, որից յետոյ հնարաւոր կը լինի մի պահապան ուղարկել Անի և հնութիւնները ազատել աւերածութիւններից» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 581, թ. 2):

№ - 315
ԿԱՐՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԱՆԻԻ ԵՒ ԽԾԿՈՆԻՑ ՎԱՆՔԵՐԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 481 *22 յունիսի/5 յուլիսի 1919 թ.*
Երևան

Նորին Սրբազնութեան Փոխ-Թեմակալին Հայոց Երևանայ Գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի Կարսի ժամանակաւոր փոխանորդից Յայտարարութիւն

Կարսի վիճակում գտնուում են Անիի և Խծկոնից վանքերը, որոնք կալուածքներ ունեն և հարկաւոր է մարդ կառավարելու, որ վանքերը կորուստներ չունենան: Անին ունի ջրաղաց, Ծաղկոցաձորում ունի մի շատ լաւ պարտէզ-ագարակ, այժմ, հաւանական է, թուրքերի ձեռքին է: Խծկոնից վանքերն ունեն խոտատեղ, ջրաղաց, որոնք ևս երեսի վերայ են մնացել:

Յայտնելով վերոգրեալի մասին, խնդրում եմ Սրբազնութեանդ աչքի առաջ ունենալ և այդ վանական կալուածներն ի մօտոյ կառավարելու համար յատուկ մարդ նշանակել, մանաւանդ Անիում, որ հնութիւնների վերայ ևս հսկելու պահպանել կարողանայ:

Փոխանորդ Կարսի և Աղէքսանդրապօլի՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 575, թ. 12, ինքնագիր:

№- 316
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԻՐԵՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹԱԼԱՆՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17/30 օգոստոսի 1919 թ.
Կարս

Արձանագրութիւն 2

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան մէջ, նոր նշանակուած փոխանորդ Բարձր. Կորիւն վարդապետի ներկայութեամբ կազմուեց սոյն արձանագրութիւնը, առ այն, որ Կարսի Հայոց Փոխանորդարանի և Հոգևոր Կառավարութեան մէջ եղած բոլոր իրերը տաճկաց տիրապետութեան ժամանակ թալանուած են եղել, ու գործերն էլ ցաք ու ցրիւ, պատառոտուած ու պակասաւոր:

Նախկին ժամանակաւոր Փոխանորդ Բարձր. Տ. Արտակ վարդապետի ժամանակ, ապրիլ և մայիս ամիսներում գնուել են Փոխանորդարա-

նի համար 1 հատ թախտ (փայտեայ) առանց երեսի և բարձերի (գուշէտկա), 1 հատ կէսից բացուող սեղան՝ կանաչ մահուդով, 1 հատ կլոր սեղան, 7 հատ աթոռներ ծաղկենկար երեսներով ու թիկունքներով, 1 հատ փոքր բոյ դարակ, գրքերի համար, և մի հատ լամպ։ Իսկ նախապէս տաճկաց տիրապետութիւնից մնացել էր Փոխանորդարանում միայն ամանեղէնների 1 հատ պահարան, առանց դռների և դարակների։

Հոգևոր Կառավարութեան արխիւից գտնուած բաւականաչափ թղթերը դեռ կարգի չեն բերուած, ու յայտնի չեն, թէ ի՞նչ կարևոր գործերի են վերաբերում։

Հսդ այսմ յանձնեցինք Տ. Փոխանորդին

Անդամներ՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան

Հսդ այսմ ստացայ իրեղէնները

Պատ. Փոխանորդ Կարսի Կորիւն վարդապետ
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 1 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 317
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ՝ ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ՏԱՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՀԿԱՐԱՍԻՔԸ ՏԵՂՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Թիւ 919 *20/3 սեպտեմբերի 1919 թ.*
Երևան

Կարսի վիճակի փոխանորդին

Ընդունելով, որ փոխանորդական տունը և հոգևոր կառավարութիւնը անհրաժեշտ կահկարասիքի կարիք են զգում, այնուամենայնիւ ես հնարաւոր չեմ համարում, այժմ այս սոսկալի թանգութեան ժամանակ մեր միջոցներով հարկաւորը ձեռք բերելու, որովհետև միջոցներ չկան։

Ես յոյս ունեմ, որ Դուք Ձեր դիրքով հնարաւոր համարէք հարկաւոր կահկարասիքը ստանալ Նահանգապետի և Բերդապետի միջոցով կարսում եղած պահեստներից։

Կարող են հարկաւոր աջակցութիւնը ցոյց տալ Ձեզ և Ձեր վաղածանօթ ընկեր Պ. Քաղաքագլուխը[572] *և բարեկեցիկ քաղաքացիները։*

Վերոգրեալը ասելով՝ այնուամենայնիւ ես գտնում եմ, որ որոշ անհրաժեշտ իրեր եթէ առաջարկածս ճանապարհով անկարելի եղաւ ձեռք բերել պէտք է գնել։

[Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 875, թ. 10 և շրջ., թողօն, ձեռագիր:

572 Տե՛ս թիւ 470 ծանօթագրութիւնը:

№- 318
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՈՒԹԻՒՆԻՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԻԲՐԵՒ ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27/9 սեպտեմբերի 1919 թ.
Կարս

Արձանագրութիւն 3

Կարսում նոր նշանակուած Փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն վարդապետի նախագահութեամբ, և Երևանի Կոնսիստորիայի տարւոյս յունիսի 30-ի, Թ. 1983 հրամանով հաստատուած անդամներ Տ.Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանի և Կորիւն քահանայ Քոթանջեանի, ու Քարտուղար Գրիգոր քահանայ Նժդեհեանի մասնակցութեամբ, կազմուած ժողովում Բարձր. Տ. Փոխանորդը յայտնեց, որ Հայկական Հանրապետութիւնը որոշել է յետ այսու վճարել փոխանորդի, քարտուղարի, գրագրի և ծառայի ռոճիկներ, իբրև փոխանորդի դիւանատան ծախսը միայն, և ո՛չ Հոգևոր Կառավարութեան, տալով իւրաքանչիւր ամիսը 5400 ռուբլի ռոճիկ: Սակայն ի նկատի ունենալով, որ Հոգևոր Կառավարութիւնները՝ իբրև ենթակայ ատեաններ թեմական կոնսիստորիաներին և Ս. Սինոդին դեռ գոյութիւն ունեն, և որովհետև Հոգևոր Կառավարութիւնից բարձր ատեաններում մասնակցող հոգևորականները ստանում են ռոճիկներ թէ՛ Մայր Աթոռի գանձարանից և թէ՛ թեմական ատեաններից, միայն Հոգևոր Կառավարութեան անդամներն են, որ զրկուած են այդպիսի վարձատրութիւնից: Ի նկատի ունենալով նոյնպէս մինչև այժմ Կարսի ժողովրդոց յաջող վիճակը թէ՛ գիւղերում և թէ՛ քաղաքում, որ ըստ կարեաց գոհացում տալիս էին շրջանի հոգևորականաց, սակայն անցեալ տարւոյ տաճկաց տիրապետութեան քայքայիչ և կործանիչ աղէտից յետոյ մինչև այժմ, քանի որ թէ՛ քաղաքում և թէ՛ գիւղերում քար քարի վրայ չէ մնացել և ժողովրդեան միայն կէսն է ողջ վերադարձել կիսաքաղց և իսպառ աղքատացած, որի հետևանքով նախկին քահանայական հասոյթների մի երրորդ մասն էլ չի ստացւում, ուստի Հոգևոր Կառավարութեան անդամներ որոշել են Տ. Փոխանորդի միջոցաւ դիմել Երևան Գերապատիւ Փոխ-թեմակալ Տ. Խորէն Ս. եպիսկոպոսին և խնդրել, թոյլ տալ պետութիւնից նշանակուած յուլիս և օգոստոս ամիսների համար ստացուած ռոճկից օգտուել ըստ հնարաւորութեան, և ներկայ սեպտեմբեր ամսի մէկից իրենց անունն ևս մտցնել փոխանորդարանի ծառայողների թւում իբրև Հոգևոր Կառավարութեան անդամներ միայն պետութիւնից նշանակուած ռոճկի սահմաններում և ո՛չ աւելի:

Նախագահ Կառավարութեան և Փոխանորդ Կարսի Վիճակի՝
Կորիւն վարդապետ

Անդամներ՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 2 շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 319
ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԿԱՐՍԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՕԾԵԼՈՒ ԵՒ ՆՐԱ ՆԵՐՔԻՆ ՅԱՐԴԱՐԱՆՔԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թիւ 2 *12 սեպտեմբերի 1919 թ.*
Երևան

Նորին Սրբազնութեան Գեր. Տ. Խորէն Ս. եպիսկոպոսին
Փոխթեմակալին Հայոց Երևանի
Կարսի Փոխանորդից
Յայտարարութիւն

Աստուծոյ ամենակարող ողորմութեամբ և Ս. Հոգւոյ ամենաբաւական շնորհօք օծելով Կարուց Ս. Առաքելոց տաճարը նա այսօր յայտարարուած է մեր քաջարի զօրաց Տաճար և Հայ հաւատացեալ ժողովրդի նուիրական և ըղձալի սրբավայր, ուր ամեն օր կատարւում է հանապազօրեայ ժամակարգութիւն։

Սակայն նախկին տիրապետող ռուսաց ժամանակ ներսից ամեն ինչ փոխուած է օրթոդոքս եկեղեցւոյ ծէսից և պաշտամանց չարմար։ Մեր բարձր բեմի փոխարէն տաճարի յատակից միայն երեք ցածրիկ աստիճաններով է բարձրացած պատարագի բեմ-սեղանը, մեր խաչկալի փոխարէն այդ բեմի վերայ և աջուձախ դասերի մէջ և առաջը մարմարիոնեայ ռուսաց իկոնոստաս նուրբ և գեղեցիկ շինուածքով։

Հարկ անհրաժեշտ է իսկոյն ձեռնարկել յատուկ ճարտարապետի հսկողութեամբ մէկ առ մի կտորներով վերցնել աւագ սեղանի առաջից և դասերի միջից այդ իկոնոստասը և պահել մարմարիոնները մեր ապագայ խաչկալի գործածութեան և սկսել վերականգնել մեր եկեղեցւոյ դասերը և սեղանները իւր հիւսիսային և հարաւային աստիճաններով։ Որովհետև այժմեան ձևով պահել ոչ մի տպաւորութիւն չի թողնիլ մեր եկեղեցւոյ ներքին վայելչութեան և միանգամայն արգելք է լինում հաւատացեալ աղօթաւորաց ազատօրէն տեսնել Ս. Պատարագի մատուցումը և աղօթել հանդէպ Աստուածային խորհրդին։

Մեծ օժանդակութիւն և բարիք արած կլինիք, Ձերդ Սրբազնութիւն, Կարուց բազմատանջ և թշուառ քաղաքացիներին, եթէ մի գումար յատկացնէիք այժմէն իսկ ձեռնարկելու վերացնել յիշեալ իկոնոստա-

սը և հաստատելու հիւսիսային դրան տեղում մկրտութեան աւազան՝ իսպառ փակելով քարուկրով հիւսիսային դուռը, որ միանգամայն անգործադրելի է և աւելի ցրտութեան պատճառ մեծ տաճարին։

Փոխանորդ կարուց՝ Կորիւն վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 26 և շրջ., բնագիր, ձեռագիր:

№ - 320
ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆԻՆ ԿԱՐՍԻ ԲԵՐԴԱՊԱՀ ԳՆԴԻ ՀՈՎԻՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 5 *12 սեպտեմբերի 1919 թ.*
Երևան

Նորին Սրբազնութեան Գեր. Տ. Խորէն Ս. եպիսկոպոսին
Փոխթեմակալին Հայոց Երևանի
Կարսի Փոխանորդից
Յայտարարութիւն

Տեղեկանալով անձամբ որ Կարսի Բերդապահ գունդը զուրկ է Հոգևոր մխիթարութիւնից և քաջալերիչ հովուի կենդանի ձայնը լսելուց, ես սորանով կը խնդրէի խոնարհաբար Ձերդ Սրբազնութիւնից նշանակել Առաքելոց եկեղեցւոյ աւագ միաբան Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանին Կարսի բերդապահ գնդի հոգևոր պաշտօնեայ, որի բարոյական արժանեաց և քաջալերիչ բանից և խրատուց ընդունակ լինելուն ի մօտոյ ծանօթ լինելով՝ Ձերդ Սրբազնութեան կը հաւաստիացնեմ։ Աւելացնելով, որ արդէն այդ գնդի հրամանատարի առաջարկութեամբ Տ. Խորէն քահանան ամսոյս սկզբից Ա. գնդի հրամանատարից լսելով ուրիշ քահանայի նշանակուելը, ինքը խնդրամատոյց է եղել Բերդապահ զօրաց հրամանատարին այդ պաշտօնի համար և կատարում է նոցա հոգևոր պէտքերը[573]*։*

Փոխանորդ կարուց՝ Կորիւն վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 875, թ. 12 և շրջ., ինքնագիր:

573 1919 թ. սեպտեմբերի 13-ին Խորէն եպիսկոպոսը հետևեալ գրութիւնն է յղել Կորիւն վարդապետին. ‹‹Ի հետևումն Ձեր ամսոյս 12-ի Թ. 5 յայտարարութեան յայտնում եմ, որ իմ կողմից արգելք չի լինիլ Տ. Խորէն քահանային Բերդապահ գնդի քահանայ նշանակելու համար, եթէ այդ ուղղութեամբ բերդի հրամանատարը հարկաւոր դիմումը կանէ զինուորական նախարարին›› (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 875, թ. 11):

№ - 321
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ Ս. ԱՌԱՔԵԼՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒԸ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Թիւ 924 *13/26 սեպտեմբերի 1919 թ.*
Երևան

Կարսի վիճակի Փոխանորդ Բարձրապատիւ Տ. Կորիւն վարդապետին

Ի հետևումն Ձեր ամսոյս 12-ի Թ. 2 յայտարարութեան յայտնելով, որ Առաքելոց վանքի նորոգութեան ծախքերի համար դիմել եմ մեր յայտնի ազգայիններից Պ. Խաչատուր Աֆրիկեանին[574], որը և խոստացել է հարկաւոր գումարը տալ: Խնդրում եմ Թորամանեանի և այլ ձեռնհաս ճարտարապետի միջոցով կազմել տալ նորոգութեանց մանրամասն նախահաշիւը և ուղարկել ինձ, որպիսին ուղարկելով Պ. Աֆրիկեանին կը կարգադրուի դրամը փոխադրել Ձեզ:

[Երևանի Փոխ-թեմակալ՝ Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 25, թողօն, ձեռագիր:

№ - 322
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՕՆՈՒՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 925 *13/26 սեպտեմբերի 1919 թ.*
Երևան

Կարսի վիճակի Փոխանորդ Բարձրապատիւ
Տ. Կորիւն վարդապետին

Ձերդ Բարձրապատուութեան առաջարկութեան համաձայն Կարսի Հոգևոր Կառավարութեան անդամների պաշտօնում հաստատում եմ Բարձ. Տ.Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանին և Կորիւն քահանայ Քոթանջեանին: Միաժամանակ՝ ցանկալի եմ համարում որ գանձապահի պաշտօնը կատարէ Տ. Խորէն քահանան իսկ գործակալի պաշտօնը Տ. Կորիւն քահանան[575]:

[Երևանի Փոխ-թեմակալ՝ Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 24, թողօն, ձեռագիր:

---

574 Աֆրիկեան Խաչատուր (Քրիստափոր) Տիգրանի, Թիֆլիսի Վաճառականների Միութեան նախագահ:

575 Յիշեալ որոշման մասին նոյն օրը տեղեկացուել է Երևանի Թեմական Կոնսիստորիային:

№ - 323
ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼՈՒ ԵՒ ԳԱՆՁԱՐԿՂԸ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Թիւ 924
13/26 սեպտեմբերի 1919 թ.
Երևան

Կարսի վիճակի Փոխառնող Բարձրապատիւ
Տ. Կորիւն վարդապետին

Անցեալներում մի քանի անգամ իմ և իմ կողմից նշանակուած քննիչների քննութեանց ժամանակ միշտ աչքի է ընկել Կարսի Հոգևոր կառավարութիւնը դրամական հաշիւների թերութիւններով։ Բացի դրանից, զեղծումներ երևացին նաև ծննդեան վկայականների տուչութեան գործում։ Յանկալի համարելով, որ Ձեր ժամանակ այդ թերութիւնները վերանան, ես խնդրում եմ Ձեզ առանձին հսկողութիւն ունենալ գործավարութեան վրայ և, որ գլխաւորն է, գանձարկղը առնէք Ձեր հսկողութեան տակ։

[Երևանի Փոխ-թեմակալ՝ Խորէն եպիսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 688, թ. 23 և շրջ., թողօն, ձեռագիր:

№ - 324
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԿԱՐՍԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԿԱՐԳԵԼՈՒ,ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՒ ԱՅԴՈՒՀԵՏ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՆԻՍՏԵՐ ՀՐԱՒԻՐԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

18/1 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Առնանագրութիւն 4

Կարսի Հայոց Հոգևոր կառավարութեան մէջ, ամսիս 1-ին (ն[որ] տ[ոմարով]) տեղի ունեցաւ առաջին անգամ Ատեանի բացումը, նոր նշանակուած Փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն վարդապետի նախագահութեամբ, անդամներ՝ Տ.Տ. Խորէն Ստամբօլցեան, Կորիւն Քոթանջեան և քարտուղար Գրիգոր Նժդեհեան քահանաների մասնակցութեամբ։ Ատեանում լսեցին Նորին Բարձրապատուութեան Տ. Փոխանորդի նոյեմբերի 14/27, Թ. 57 առաջադրութիւնն՝ կառավարութեանս անունով, որով յայտնում է թէ ինքը նշանակուած է Կարսի Վիճակի «Հոգևոր Տեսուչ և Փոխանորդ»՝ Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Հայրապետի տարուոյս յունիսի 7/20, Թ. 330 մակագրական պատուէրով՝ յանուն Ս. Սինոդի. այլև Ս. Սինոդի 30 օգոստոսի / 12 սեպտեմբերի Թ.

546 հրամանով, նոյնպէս և Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Հայրապետի 17/30 սեպտեմբերի, Թ. 605 Սրբազան կոնդակով յանուն Կարսի համայն ժողովրդեան։

Յետ ամենայնի՝ Նորին Բարձրապատուութիւնն առաջադրում է կազմել այդ առթիւ օրագիր, և նշանակել շաբաթ երեք անգամ – երկուշաբթի, Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը, ժամի 10-12-ը կանոնաւոր նիստեր ունենալ, վիճակի գործերով զբաղուելու համար։

Սահմանեցին. *կարդալ բարձրաձայն՝ Նորին Բարձրապատուութեան վերոյիշեալ առաջադրութիւնը, Ս. Սինոդի յիշեալ հրամանը և Նորին Ս. Օծութեան՝ Վեհ. Հայրապետի սրբատառ կոնդակը, նշանակել շաբաթական երեք նիստերի ժամանակը – երկուշաբթի, Չորեքշաբթի և Ուրբաթ, ցերեկուայ ժամի 10-12-ը և սրանց մասին կազմելով արձանագրութիւն պատշաճ ստորագրութեամբ պահել գործերում, որի մի օրինակն էլ ուղարկել Երևանի Կոնսիստորիային։ Յետ այսորիկ Ատեանը անցաւ հերթական խնդիրների քննութեան։*

Նախագահ Կառավարութեան և Փոխանորդ Կարսի՝
Կորիւն վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 3, բնագիր, ձեռագիր:

№- 325
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԻՍՆԵՐՈՎ ԿՈՒՏԱԿՈՒԱԾ ԳՈՐԾԵՐԻՑ ԿԱՐԵՒՈՐՆԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18/1 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Արձանագրութիւն Ե.

1919 թ. 18 նոյ./1 դեկտեմբերի, Երկուշաբթի. Կարս

*Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան մէջ, ամսիս 1-ին (ն[որ] տ[ոմարով]) Երկուշաբթի տեղի ունեցաւ Կառավարութեանս անդրանիկ նիստը, Նախագահութեամբ Նորին Բարձրապատուութիւն Տ. Փոխանորդի, և մասնակցութեամբ անդամներ Տ.Տ. Խորէն Ստամբօլցեան, ու Կորիւն Քոթանջեան և Քարտուղար Գրիգոր Նժդեհեան քահանաների, լսեցին նորա Քարտուղար Հայր Նժդեհեանի բանաւոր զեկուցումը ամիսներից ի վեր կուտակուած գործերին ընթացք տալու վերաբերմամբ։ Հայր Քարտուղարի կազմած ցուցակի համաձայն կարդացուեցին բարձրաձայն բոլոր հարկաւոր գործերը, և մի առ մի քննելուց յետոյ՝ **Յրամայեցին.** տալ որոշումներ հետևեալների մասին՝ այսպէս.*

1. Երևանի Կոնսիստորիայի 29/11 մարտի, Թ. 820 առաջադրութիւնը՝ վերաբերեալ Վիճակիս քահանաների վիճակագրական տեղեկութիւններին, ինչպէս նաև նրանց նիւթական օգնութիւն հասցնելու գործը՝ Նորին Բարձրապատուութիւնը իրեն վերապահեց։

2. Նորին Բարձրապատուութիւն իրեն վերապահեց նոյնպէս Վիճակի եկեղեցիների անհրաժեշտ կարիքները հոգալու մասին մտածելը, և կատարել հնարաւորը, քահանաների և ժողովրդեան գրաւոր և բանաւոր դիմումների համաձայն։

3. Գիւղերից ստացուած այն խնդիրների մասին, որոնք վերաբերում էին աթոռահասի չառնուելուն, որպէսզի ապօրինի կենակցողները հնարաւորութիւն ունենան պսակուել, որոշուեց շրջաբերականով պատուիրել գործակալներին՝ նախ կազմել գիւղերում այդպիսիների անուանական ցուցակը, նրանց պատճառաբանութիւններով, ապա կարգադրել այդ հարցը։

4. Կոնսիստորիայի 16 սեպտեմբերի, Թ. 2932 առաջադրութեամբ պահանջուած չափաբերականների մասին որոշուեց պատասխանել որ արդէն ձեռնարկուած է արխիւի կարգաւորման, որի աւարտուելուց յետոյ կը զեկուցուի հետևանքի մասին։

5. Որոշուեց Կաղզուանի Գործակալի սեպտեմբերի 19 թուով գրած հրաժարականը՝ գործակալական պաշտօնից՝ չընդունել, և պարտաւորեցնել շարունակելու այն, որի համար Բարձրապատիւ Տ. Փոխանորդն էլ յայտնեց, որ ինքը առանձնապէս նրան կանչել է իր մօտ։ Որոշուեց նաև Ատեանս հրաւիրել Բրուտ Սէրգիւտլու գիւղի Զաքարիա քահանայ Մուրադեանցին, Բէգլի Ահմէտի Գործակալութեան պաշտօնը նորան յանձնելու համար։

6. Կոնսիստորիայի 8 հոկտեմբերի, Թ. 3304 հրամանի նկատմամբ ի մասին ամուսնական ճիւղահամարութեան նոր կարգադրութիւններին, որոշուեց շրջաբերականով յայտնել Վիճակիս քահանաներին ի գիտութիւն և ի գործադրութիւն, գործակալների միջոցաւ։

7. Յարգուեց քաղաքիս բնակիչ Մատթէոս Մակարեանի խնդիրը, և որոշուեց գրել նրա ծխատէր Արսէն քահանայ Տ. Գրիգորեանցին, որ յիշեալը արձակուած է համարւում նրա ծխականութիւնից, և ըստ նրա ցանկութեան՝ յանձնարարւում է Գրիգոր քահանայ Նժդեհեանին՝ նրան հովուելու։

8. Որոշուեց նոյնպէս պաշտօնական թղթով պահանջել Արսէն քահանայ Տ. Գրիգորեանից ապացուցանելու իր մեղադրանքները՝ Կորիւն քահանայ Քոթանջեանի դէմ, որպէս զեղծարար, ինչպէս ցոյց էր տուել իւր 18 հոկտեմբերին Կոնսիստորիային ուղղած խնդրագրում որբոց և այրիաց նպաստադրամ իւրացնելու մասին։

9. Թուով հինգ ամուսնալուծական խնդիրներին որոշուեց ընթացք տալ, առ այդ անհրաժեշտ քննութիւններ կատարել տալով, ինչպէս

պահանջում է խնդրագրերի միտքը, նախապէս ստանալով, ինչպէս դրանցից, նոյնպէս և ամեն այդպիսի խնդիրներից իւրաքանչիւրից 100-ական ռուբլի դիւանական ծախք։

10. Կոնսիստորիայի 3 նոյեմբերի, Թ. 3669 առաջադրութեան պատասխանը առ այժմ յետաձգել, վիճակային արդիւնքը յատկացնելով կառավարութեան անհրաժեշտ կարիքներին, և առ այդ ներկայացնելով տարւոյս ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը եղած մտից և ծախուց հաշիւը։

Փոխանորդ կարսի և Նախագահ կառավարութեան՝
Կորիւն վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թթ. 3 շրջ. -4, բնագիր, ձեռագիր:

№ - 326
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՐԴԱՒԱՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԸ ՀՈՎՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիւ 72 *22/5 դեկտեմբերի 1919 թ.*
Կարս

Նորին Ս. Օծութեան Տ. Տ. Գէորգայ Ե. Վեհափառ և
Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Կարսի Վիճակի Փոխանորդից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Որդիական պարտք եմ համարում յայտնել Ձերդ Սրբութեան որ այսօր նշանակեցի և ուղարկեցի Արդահան և շրջակայքը հովուելու Յովհաննէս քահանայ Սարգսեանին երիտասարդ և ժիր։ Քահանան ստանալու է ռոճիկ տեղական հայ համայնքից մի հազար (1000) ռուբլի ամսական բացի օրինակատարութեանց արդիւնքից։ Նորան տրուեց եկեղեցական գրքեր, Ս. Միւռոն, եկեղեցւոյ հաշուեմատեան և չափաբերական մատեան։ Պատուիրեցի կազմել մանրամասն ցուցակ Արդահանի և շրջակայքի հայ ծխականներին և ուղարկել Կարսի Հոգևոր Կառավարութիւն։ Առ այժմ այն տեղ կան 70 տուն բնակիչ մօտաւորապէս 600 շունչ[576]*, որի մասին պարտք եմ համարում խոնարհաբար զեկուցանել։*

Ձերդ Ս. Օծութեան ամենախոնարհ որդի և ծառայ
Փոխանորդ Վիճակին Կարուց՝ Կորիւն վարդապետ

[576] Ըստ Նահանգապետի տեղեկութեան 1400 հոգի (ծանօթագրութիւնը փաստաթղթինն է):

№- 327
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՌՈՃԻԿՆԵՐԻ, ՄԻ ՇԱՐՔ ԱՆՁԱՆՑ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

22/5 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Արձանագրութիւն Ջ.
1919 թ. 22/5 դեկտեմբերի, Ուրբաթ, Կարս

Կարսի Հայոց հոգևոր կառավարութեան մէջ տեղի ունեցաւ կառավարութեան Նախագահ և Փոխանորդ Բարձրապատիւ Տ. Կորիւն վարդապետի նախագահութեամբ և անդամներ Տ.Տ. Խորէն Ստամբօլցեան և Կորիւն Քոթանջեան, և քարտուղար Գրիգոր Նժդեհեան քահանաների մասնակցութեամբ՝ երկրորդ նիստը, որ տեղի պիտի ունենար նախորդ Ջորեքշաբթի, դեկտեմբերի 3-ին (ն[որ] տ[ոմարով])։ Յիշեալ օրում նիստ չլինելու պատճառը Հ.Հ. անդամների բացակայութիւնն էր, օրինակատարութեամբ զբաղուած լինելու համար։

Այս նիստում կարդացուեցին առաջին նիստի երկու արձանագրութիւնները և ստորագրեցին։ Ընթերցման ժամանակ նկատելի եղաւ որ Հ. Քարտուղարը մոռացմամբ բաց էր թողել այն, որ Տ. Փոխանորդի նշանակուելու մասին պէտք էր յիշել, որ շրջաբերականներով պիտի ծանուցուի գործակալների միջոցաւ Վիճակի բոլոր քահանաներին և ժողովրդին։

Արձանագրութիւնների ընթերցումից և վաւերացումից յետոյ՝ Հ. Քարտուղարը զեկուցեց 10-ից աւելի զանազան ընթացք տալու գործերի մասին, որոնք մի առ մի կարդացուելուց յետոյ հրամայեցին. տալ նրանց հետևեալ որոշումները.

1. Բարձրապատիւ Տ. Փոխանորդի ամսիս 4-ին (ն[որ] տ[ոմարով]) թ. 67 առաջադրութիւնը՝ ի մասին անցեալում տեղի ունեցած դրամական հաշիւների թերութիւններին, ի նկատի ունենալ, զգոյշ ու աչալուրջ լինել, չկրկնելու համար նմանօրինակ պակասութիւններ առաջիկայում։

2. Նորին Բարձր. նոյն թիւ, № 65 առաջադրութեան համաձայն որոշուեց Կառավարութեան Գանձապահի պաշտօնը յանձնել անդամ Տ. Խորէն քահանային, իսկ գործակալականը թողնել Տ. Կորիւն քահանայի վրայ։ Այս դէպքում Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանը պահանջ դրեց ռոճկի, այդ պաշտօնակատարութեան համար, սակայն Նորին Բարձրապատուութիւնը յորդորեց նրան անվարձ կատարել Գանձապահի պաշտօնը։

3. Նորին Բարձրապատուութեան նոյն թիւ № 66 առաջադրութեամբ նշանակուած ռոճիկների մասին որոշուեց երկու անդամ քա-

հանանների գրագրութիւն աշխատանքի համար յատկացուած 300 ռուբլին թողնել Հ. Քարտուղարին գրագրութեան բոլոր պարտականութիւններով և բաւականանալ միայն 450 ռուբլի անդամական ռոճիկով, որը պիտի գործադրուի սեպտեմբերի 1-ից: Իսկ արտակարգ նպաստներից (պետութեան կողմից) գրագրութեան բաժինը բաժանել երեք քահանաների մէջ հաւասար քանակութեամբ (երկու անդամ և Քարտուղար)[577]*:*

4. Նորին Բարձրապատուութեան նոյն թիւ № 64 առաջադրութեան վերաբերմամբ, ի մասին կառավարութեանս խառնիխուռն արխիւի կարգաւորման, յայտնի եղաւ, որ անդամ Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանը վաղուց է սկսել և բաւական գործ էլ արել է, ու շարունակում է կարգաւորումը: Իսկ Հ. Քարտուղարը իւր գործերը թեթևացնելուց յետոյ պարտաւորութիւն է յանձն առել միանալու և օգնելու նրան: Այս հարցի քննութեան ժամանակ որոշուեց Բարձր. Տ. Փոխանորդի Երևանից բերած 50-ական օրինական չափաբերական և հաշուեմատեանների համար տալ պատշաճ ստորագրութեամբ ստացագիր Նորին Բարձրապատուութեան:

5. Ուղուզլի գիւղի բնակչուհի Աշխէն Պետրոսեան և Օրթաքեադիկլար գիւղացի Լևոն Արսէնեան Ղազարեանց ամուսինների պսակալուծութեան գործի համար որոշուեց Շիրակի (Ղզլչախչախ) Գաւառապետի միջոցաւ կանչել յիշեալ կնոջ ամուսին Լևոն Ղազարեանցին և ենթարկել բժշկական քննութեան:

6. Քաղաքիս բնակիչ Համբարձում Մարտիրոսեանցի և կին Հռոմսիմ Մելքոնեանի պսակալուծութեան գործը որոշուեց յանձնել Գրիգոր քահանայ Ստամբօլցեանին քննելու երդմնական կարգով:

7. Բէնգլի-Ահմէտցի Հայրապետ Մինասեանի և կին Գրաբիոն Միքայէլեանի ամուսնական անհամաձայնութեան գործը որոշուեց յանձնել Բրուտ-Սէօգետլու գիւղի ծխատէր Զաքարիա քահանայ Մուրադեանին քննելու և համաբնակութեան բերելու:

8. Ալեքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեան 18 նոյեմբերի, Թ. 7238 հաղորդագրութեամբ խնդրուած քննութիւնը որոշուեց յետաձ-

---

577 Հոգևոր Կառավարութեան 1919 թ. դեկտեմբերի 17-ի լսեցին Քարտուղար Գրիգոր քահանայ Նժդեհեանի ամսի 14-ի յայտարարութիւնը. «որով ուզում էր բացատրել թէ ամսիս 5-ի նիստի արձանագրութեան (Զ.) 3-րդ յօդուածի որոշման, արտակարգ նպաստների բաշխման մասին, իւր համոզմամբ չէր համապատասխանում նոր ստացուած պետական արտակարգ նպաստի բաշխումը, և խնդրում էր ի նկատի ունենալով այդ՝ իրեն բաւարարել քանի որ դրանով, ըստ իւր համոզման, պակաս էր ստանում մի հազար ռուբլի»: Երկար քննարկումից յետոյ որոշուեց. «Լսուեց Տ. Գրիգորի յայտարարութիւն բաժանուած արտակարգ նպաստների մասին, և որոշուեց՝ յետ այսու անդամներ պէտք է ստանան միմիայն իրենց ռոճիկներ, իսկ եկած արտակարգ նպաստներ՝ պետութեան կողմից թէ քարտուղարի և թէ գրագրի բաժին յատկացնել միմիայն քարտուղարին, որ վարում է նաև գրագրի պաշտօն» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 7 և շրջ.):

գել մինչև խնդրատու Սիրանուշ Տ. Ղազարեանցի ամուսին Աբիսողոմ Տիգրանեան Տ. Ղազարեանցի տեղն ու հասցէն իմացուիլը։

9. Գեադուկ-Սաթլմիշ գիւղացի Սիրական Մանուկեան Ղազարեանցի և կին Շուշանիկ Եփրեմեանի ամուսնական անհամաձայնութեան համար որոշուեց երկուսին ևս կանչել կարս և բժշկական քննութեան ենթարկել։

10. Ղարամահմատ գիւղացի տիրացու Արշակ Սարգսեան Գալօյեանցի ձեռնադրութեան գործին որոշուեց ընթացք տալ, պահանջելով նախապէս նրա ծննդեան, ուսման, զինուորական ծառայութիւնից ազատուած լինելու և բժշկական վկայականները։

Փոխանորդ կարսի և Նախագահ կառավարութեան՝
Կորիւն վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան (ունեմ առանձին բացատրութիւն[578]), Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թթ. 4 շրջ.-5, բնագիր, ձեռագիր:

№- 328
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

8 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Արձանագրութիւն է.

8 դեկտեմբերի, 1919 թ., երկուշաբթի

Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան մէջ տեղի ունեցաւ այսօր պաշտօնական նիստը՝ նախագահութեամբ Վիճակիս Փոխանորդ Բարձրապատիւ Տ. Կորիւն վարդապետի, և մասնակցութեամբ անդամներ Տ.Տ. Խորէն Ստամբօլցեան և Կորիւն Քոթանջեան քահանաների, և քարտուղարութեամբ Գրիգոր քահանայ Նժդեհեանի։ Հ. Քարտուղարը կարդաց նախորդ նիստի արձանագրութիւնը որի ժամանակ և լսուեց անդամ-գանձապահ Տ. Խորէն քահանայի գրաւոր բացատրութիւնը, որի լուսանցքներում Տ. Նախագահը արել էր կարդալիս նկատողութիւններ, և որոշուեց մտցնել այս արձանագրութեան մէջ որ Տ. Խորէն Հայրը պահանջել էր ո՛չ թէ գանձապահութեան համար առանձին ռոճիկ և վարձատրութիւն, այլ թէ նա ասել էր, որ կառավարութեան պաշտօնեայ անդամների վարձատրութիւնը պէտք է հաւասար (արդարացի) լինի, և ո՛չ թէ մէկը կողմնակի եկամուտներով օգտուի, և միւսը՝ որ այդ պաշտօնից չունի՝ զրկուած մնայ։ Այնուհետև ատեանն անցաւ ընթացիկ հարցերի քննութեան։

578 Գործ Թ. 6, մտից 77 N (ծանօթութիւնը փաստաթղթինն է):

Սահմանեցին. 1. Գրել Երևանի Կոնսիստորիային Արդահան աւանի և շրջանից այժմեան հայերի քանակի և դրութեան, ինչպէս նաև նրանց հովուելու համար ուղարկուած քահանայի մասին։ 2. Կարդացուեց Երևանի Կոնսիստորիայի 29 նոյեմբերի Թ. 4182 շրջաբերականը, հանրօգուտ շինութիւնների ձեռնարկման մասին յայտնելու Հանրային Կրթութեան և Գեղարուեստի Նախարարութեան, և որոշուեց շրջաբերականով յայտնել այդ մասին գործակալներին, և բոլոր գիւղական քահանաներին ու ժողովրդին։

3. Որոշուեց գրել շրջաբերական գործակալներին և գիւղական քահանաներին, որ այսուհետև, համաձայն Երևանի Կոնսիստորիայի 8 հոկտեմբերի Թ. 3304 հրամանի, ազգակցական վեցերորդ աստիճանի պսակների համար պէտք է դիմել Կառավարութեանս միջոցաւ Երևանի Կոնսիստորիային։

4. Լսեցին Քարտուղար Գր. քահանայ Նժդեհեանի Դեկտ. 2 թուով յայտարարութիւնը կառավարութեանս անունով, որով խնդրել էր ատեանիս գործերի համար գունաւոր թուղթ, թել և ասեղ առնել։ Որոշուեց կատարել։

5. Խնուսի Գովանդուկ գիւղացի Դաւիթ Մանուկեանի խնդիրը կարդացուելուց յետոյ, որոշուեց քննել նրա և կին Վառվառէ Ղուկասեանի ամուսնական անհամաձայնութիւնը՝ քաղաքիս Արսէն քահանայ Տ. Գրիգորեանի ձեռքով։

6. Տ. Արսէն քահանայ Տ. Գրիգորեանի յայտարարութեան (11 դեկտեմբերի) ընթերցումից յետոյ, որով բացատրում էր Տ. Կորիւն քահանայ Քոթանջեանին զեղծարար անուանելու մեղադրանքը՝ Կոնսիստորիային գրած իր խնդրագրում, որոշուեց նրա այդ յայտարարութեան վրայ գրած Տ. Փոխանորդի մակագրութիւնը, և վերջինիս՝ ատեանում բանաւոր կերպով Տ. Կորիւնից պահանջած գրաւոր բացատրութիւնը՝ այդ մասին, գործի հետ վերադարձնել Երևանի Կոնսիստորիային։

7. Ի յաւելումն Ջ. արձանագրութեան I կէտի[579]՝ որոշուեց ստանալ նախկին գանձապահ Տ. Կորիւն քահանայից Վիճակային արդեանց բոլոր մոխ և ելից հաշիւները, փաստաթղթերով և դրամներով, որպէսզի յանձնուին նրանք նոր գանձապահ Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանին։

Նախագահ Կառավարութեան՝ Կորիւն վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 6 և շրջ., բնագիր, ձեռագիր։

579 Տես թիւ 328 փաստաթուղթը։

№ - 329
ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԹԵՄԱԿԱԼ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԷԿԵԱՆԻՆ՝ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒԱՅ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ Ս. ԱՌԱՔԵԼՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱՁԱՇՈՒԻ ՄԱՍԻՆ

13/26 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Սրբազան Տէր.

Գրում եմ նամակս Ձեզ, հաւատալով որ աւելի կանցնի քան պաշտօնական: Ամենից առաջ խորին շնորհակալութիւնս և երախտագիտութիւնս Ձեզ, Ձեր հոգածութեան համար որ և՛ ռոճիկներն ստացանք և՛ մի ժամանակ ազատ շունչ կը քաշեմ:

Այժմ թուեմ թէ ինչ եմ արել: Եկածս օրից սկսել են գալ և գալիս են վիճակի քահանաները, որոնցից մնացել են միայն մի քառորդը: Սարսափելի է ողորմելիների վիճակը: Գալիս են և գիւղացիք և իրենց ցաւերը պատմում, ցաւերը արժանի ողբերգութեան: Քաղց, մերկութիւն և սոսկալի ցուրտը. բնակարան չկայ որ մէջն ապրեն, դռներն ու պատուհանները տարած, սնունդ և շոր չկայ որ տաքանան, անասուններ չկան, որ նրանց հետ տաք գոմերում ապրին: Եթէ մինչև գարնան չկոտորուեցին դա Աստուածային հրաշք և փրկութիւն պէտք է համարել: Ողբում են իրենց եկեղեցիներն և զարդն ու անօթները, շատ քչեր կան որ ունեցածներն հետներն են տարել: Շատերը առանց փիլոնի են փախել. մի մասը Ալեքսանդրապոլի գիւղերումն են թալանուել քահանաներից և երեցփոխներից որոնք գողանալով խեղճերի եկեղ. զարդն ու անօթներն յայտարարել են որ գողացուել են: Մխիթարական է որ եկեղեցի ունենալու պահանջ կայ և շատ ուժեղ, յուսադրում եմ մինչև գարնան տաքերն սպասել: Բաժանում եմ Ձեր տուած 10000-ը, ոմանց 500 ռ, և ոմանց 300 ռ: Բասենի և Կաղզուանի շրջանից դեռ ոչ ոք չկայ, եթէ այդ երկու շրջանից էլ գան. կուղարկեմ եկեղեցիների և քահանաների ցուցակը մինչև լիակատար ինքս գնամ կազմեմ առ տեղեաւն: Բաժանում եմ Վեհ. Հայրապետից ստացած եկեղեցական գրքերը:

Հոգևոր Կառավարութիւնը պէտք է ասեմ, որ իմ բացակայութեանս ոչինչ չի արել, եկայ իսկոյն առաջադրութիւն տուի Ատենի օրերը սահմանեցի և աշխատում եմ գործերին շուտ ընթացք տալ, բայց դէ տէրտէրներ են, մէկը գալիս է, միւսը չի գալիս, ուշանում են, ամբողջ ինձ ու քարտուղարի վերայ է ծանրացել: Արխիւը մաքրել տուի իմ անմիջական հսկողութեամբ և վերջացրի, այժմ ջոկում եմ չափաբերականներ տարեթուերով և շուտով կուղարկեմ, թէ և ոչ լրիւ, իսկ մնացած գործերը դարձեալ տարեթուերով կը զատեմ, ցուցակագրել կը տամ և կը պահեմ:

Էջմիածնի կալուածներն բոլորն էլ վարձու տուի երկու տարով և

վեց ամսուան կանխիկ վարձքն ստանալով, մէկը միայն բացակայ է, նա էլ գայ պայման ստորագրէ կը զեկուցանեմ Վեհ. Հայրապետին։

Գալով իմ յարաբերութեանս քաղաքացիների հետ, լաւ է. «Ջօրքի օրը»[580] տօնին ինքս էլ հրաւիրուած էի պաշտօնապէս քաղաքագլխից խորհրդակցութեան և ընտրուեցի ֆինանսական սեկցիայի անդամ և ամսիս 6/19 5 ժամում մի գնդապետի և երկու քաղաքացիների ուղեկցութեամբ մեր աւերակ բազարից հաւաքեցի 45000 ռուբլի։ Ժողովում կային մօտ 30-35 հոգի բոլոր դասակարգից նոյնպէս և 10-12 սպաներ, ընդունեցի յարգանքով, ընտրուեցի միաձայն և ժողովից յետոյ մօտեցանք իրար և ծանօթացանք այնպէս ինչպէս հին ծանօթներ։ Այժմս էլ հրաւիրուած եմ գնալու ժողովի՝ ստուգելու հաշիւները, տեսնենք թէ մեր աւերակ կարսը որքան է տուել զօրքին, կարծում եմ որ 150.000-ից ոչ պակաս։

Ամսիս 21-ին հանդիսաւոր պատարագ մատուցի Առաքելոց եկեղեցում, ներկայ էին Պ. Նահանգապետ իւր ծառայողներով գեներալ Յովսէփեան ամբողջ սպայակոյտով (բացակայ էր Երևանից գեն. Փիրումեան[581]) զօրքը ամբողջ եկեղեցու գաւթում. ժողովուրդը լիքը ներս ու դուրսը։ Տօնից և բազմութիւնից օգտուելով հանդիսաւոր կարդացի Նորին Վեհափառութեան կարսի վիճակի ժողովրդեան ուղղած կոնդակը իմ նշանակելու առիթով։ Երգում էր երկսեռ երգեցիկ խումբը։ Երկու անգամ խօսեցի, մէկը կոնդակի առթիւ, միւսը զօրքին տօնի առթիւ՝ բնաբան վերցնելով «Չկայ աւելի մեծ սէր, քան այն, երբ մէկը իւր անձը կը զոհէ իւր բարեկամների համար» Յովհ. Աւետարանից։ Կատարեցի մաղթանքներ Հայրապետութեան և Հանրապետութեան և զօրքի յաջողութեան համար, որոտում էին բերդից թնդանօթներ։ Մի ժամ առաջ փոխնահանգապետ ուղարկեր էր ինձ կարդալու հեռագիրը։ «Մեր քաջերից Օլթին վերցուած է, Իսօ-բէգ, որ ինքզինքը դիկտատօր էր յայտարարել Օլթիի շրջանում գերի է ընկած. շայկան ջարդուած է, ժողովուրդը հնազանդութիւն է յայտնել և այլն» մոռցայ ասել,

---

580 Հայաստանի Պառլամենտի Նախագահութիւնը և Տօնական Օժանդակ Մարինը 1919 թ. դեկտեմբերի 19- 21-ը յայտարարել են «Բանակի օր», որի ընթացքում Հանրապետութեան տարածքում տեղի պիտի ունենային հանդէսներ, շքերթներ, համերգներ, դասախօսութիւններ և այլն: Տեղերում պէտք է ստեղծուէին օժանդակ մարմիններ և երեք օրուայ ընթացքում պիտի ժողովէին կամաւոր նուէրներ՝ իրերով ու դրամով յօգուտ բանակի (ՀԱԱ՝ ֆ. 198, ց. 1, գ. 40, թ. 9):

581 Փիրումեան Դանիէլ-բէկ Աբիսողոմի (22.11.1861, գիւղ Նախիջևանիկ, Արցախ – 15.10.1922) – Ցարական բանակի գնդապետ, ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտ: Մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին և Սարդարապատի 1918 թ. մայիսեան հերոսամարտին, եղել այդ ուղղութեան վրայ գործող հայկական զօրամիաւորումների դաշտային հրամանատարը: 1919 թ. վերջին նշանակուել է Կարսի բերդապահ: Կարսում գերի է ընկել թուրքական զօրքերի հրամանատար Քեազիմ Կարաբէքիրին: 1921 թ. աշնանը ազատուել է գերութիւնից և մահացել յաջորդ տարի: Թաղուած է Վաղարշապատի Ս. Գայիանէ վանքի գերեզմանատանը:

որ հոգեհանգիստ էլ կատարեցի ընկած սպաների և զօրքի համար։ Ժողովուրդի ոգևորութիւն և տրամադրութիւն բարձր էր։

Երկու օր առաջ հրաւիրուած էր միաժամանակ մի գնդապետի հարսանիքի և մի բժշկի որդու մկրտութեան հանդիսի. մի տեղ գտայ գեն. Յովսէփեանին ամբողջ գնդերի հրամանատարներով և սպաների բազմութեամբ, երկրորդ տեղ Պ. Նահանգապետին քաղաքի ինտիլիգենցիայի բազմութեամբ, լաւ է սկսուած տեսնենք, եթէ Ձեր կողմից մի փոքր քաջալերութիւն լինի եռանդս աւելի կը կրկնապատկի և ես սրանց կը հայացնեմ կապելով եկեղեցու և իրենց հովուի հետ ինչպէս ի հնումն։ Ժողովուրդն ասում է զօրքայ[582] վարդապետ է մեր առաջնորդ։ Երէկ ճարտարապետ Քօչարեան Արշակ Միխայիլովիչ բերեց Առաքելոց եկեղեցու նախահաշիւը, որին անձամբ տարել և ցոյց էի տուել, թէ ինչպիսի փոփոխութիւններ պիտի լինեն և ինչ ձևով պիտի շինուեն։ Եղած իկոնոստասը պէտք է վերացնէ և դասի, բեմի, խաչակալի և Աւազանի շինութեան համար ծախք է ցոյց տուել 120.000 ռուբլի, ասում է, որ ներկայ շէնքը մարմարիոն չէ, այլ ձուլուած բէտոն, որ քանդելիս մեծ մասը կը փշրուի և կը ոչնչանայ, հարկ կը լինի խաչկալը առանձին քարից շինել։ Վերադարձրի հաշիւը և ասացի, որ խաչկալի նկարը պէտք է հետը լինի, տարաւ, որ նկարէ և բերէ։

Զգիտեմ, որ տեղ Ձեզ հասցնեմ նախահաշիւ և նկարը, երևա՞ն, թէ Տփխիս և ինչ հասցէով։ Խնդրեմ յայտնել։

Էջմիածնից չստացայ միաբանութեան որոշած 2000-ը, ոչինչ պատիւը մեծ է քան դրամ։ Գնալիս հեռագրեցէք՝ գամ Ալեքսանդրապոլ Ձեզ տեսնեմ և բարի ճանապարհ ասեմ։

Ընդ միշտ յարգանօք առ Ձերդ Սրբազնութեան՝
Կորիւն վարդապետ

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 256, թթ. 268-296 շրջ., բնագիր, ձեռագիր:

№- 330
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ ԱՆԻԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՒ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻՆ ԿՐԿԻՆ ՓԻԼՈՆ ՈՒ ՇՈՒՐՋԱՌ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

26 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Առձանագրութիւն ժա.
1919 թ. դեկտեմբերի 26-ին, Ուրբաթ

Այսօր, ամսիս 26-ին տեղի ունեցաւ Կառավարութեանս Ատեանում ժա. հերթական նիստը, նախագահութեամբ Բարձրապատիւ Տ. Փո-

582 Զօռբա – ուժեղ, զօրաւոր, ձեռքին ոյժ ունեցող, բռնակալ:

խանորդի, մասնակցութեամբ անդամներ Տ.Տ. Խորէն Ստամբօլցեան և Կորիւն Քոթանջեան քահանաների, և քարտուղարութեամբ Գրիգոր քահանայ Նժդեհեանի: Նախկին Թ.[583] և արտակարգ Ժ.[584] արձանագութիւնների ընթերցումից և վաւերացումից յետոյ, Բարձրապատիւ Տէր Փոխանորդը բանաւոր կերպով յայտնեց, որ Անիի Գործակալ Բաշ-Քեադիկլարի Տ. Արիստակէս քահանայ Յարութիւնեանը, ինչպէս լսել է ինքը, այժմ բացակայում է գիւղից, թողնելով թափուր նաև գործակալական պաշտօնը, ու գտնւում է Ալեքսանդրապոլում, իսկ Կառավարութեանս ու գործակալական գործերը մնում են անկատար, ուստի առաջադրեց բանաւոր կերպով, նշանակել Անիի շրջանի համար գործակալ Բուլանխ գիւղի Տ. Աղէքսանդր քահանայ Յակոբեանին, որի կանխագոյն համաձայնութիւնը ստացել էր:

Սահմանեցին. *գրել Տ. Աղէքսանդր քահանայ Յակոբեանին առաջադրութիւն, որով մատնանշելով նրա պարտաւորութիւնները գործակալական պաշտօնի համար՝ նշանակել նրան Անիի գործակալ:*

2. Լսեցին Աբաթ-Սէօգիւտլու գիւղի Մեսրոպ քահանայ Յովհաննէսեանի մասին Բարձրապատիւ Տ. Փոխանորդի ամսխս 26-ի, Թ. 92 առաջադրութիւնը որով պատւիրում էր յայտնել Տ. Մեսրոպին, որ չի արձակուած իւր ծխից, Բ. թոյլատրում էր նորան իբրև աղօթաւոր յաճախել Ս. Առաքելոց եկեղեցին, կրելով փիլոն և շուրջառ, Գ. որ Տ. Փոխանորդ առ այժմ չի կարող տալ նրան ոչ ծուխ հովուելու իրաւունք և ոչ պաշտօն պետ. հաստատութեանց մէջ, որովհետև նրանից առաջ ուրիշ խնդրատու թեկնածուներ կան: Դ. Ապագայի համար ի նկատի ունի երբ արդէն զբաղուած կը լինին տեղական քահանաները, և ժողովուրդը կարիք կզգայ ուրիշ քահանայի, և Ե. կարդալ տալ նրան այս որոշումները և ստորագրութիւն առնելու նրանից՝ ներկայացնել իրան, Տ. Փոխանորդին:

Սահմանեցին. Տ. Փոխանորդի առաջադրութիւնը լրիւ կատարել, յայտնելով Տ. Մեսրոպ քահանայի ամբողջ բովանդակութիւնը և ստորագրութիւն առնելով ներկայացնել Տ. Փոխանորդին:

Նախագահ Կառավարութեան՝ Կորիւն վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ.978, թ. 9 և շրջ., բնագիր, ձեռագիր:

583 Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 8:

584 Տես ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 8 շրջ.:

№- 331
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԻՍԱԿԱՏՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԻ ԵՒ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐՏՉԵԱՆԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇԻՐԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 դեկտեմբերի 1919 թ.
Կարս

Առնանագրութիւն ժբ.
1919 թ. դեկտեմբերի 29, երկուշաբթի

Այսօր ամսիս 29-ին տեղի ունեցաւ Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան մէջ, հերթական ժբ. նիստը, նախագահութեամբ Բարձրապատիւ Տ. Փոխանորդի, և մասնակցութեամբ անդամներ Տ.Տ. Խորէն Ստամբօլցեան և Կորիւն Քոթանջեան քահանաների, և քարտուղարութեամբ Գր. քահանայ Նժդեհեանի:

Նախորդ ժա. նիստի արձանագրութեան ընթերցումից և վաւերացումից յետոյ, ատեանը զբաղուեց հերթական գործերի քննութեամբ, որի ընթացքում հրամայեցին տալ հետևեալ որոշումները.

1. Լսեցին Երևանի Կոնսիստորիայի տարւոյս 23 դեկտեմբերի Թ. 4535 շրջաբերական առաջադրութիւնը, որով պատուիրում էր այսուհետև ամեն մի պսակից ստանալ առնուազն 100 ռ. աթոռապատկան իրաւունք, և ամեն մի ննջեցեալ ժառանգներից 25-ական ռուբլի հոգեբաժին, հակառակ դէպքում պակասը պէտք է լրացնէ իւր գրպանից ծիսակատար քահանան: Որոշեցին գրել նոյն մտքով շրջաբերական թէ՛ քաղաքիս և թէ՛ վիճակի գործակալներին ի գիտութիւն և ի գործադրութիւն:

2. Լսեցին, որ Արևմտեան Շիրակի գործակալը Տ. Մելքիսեդեկ քահանայն վաղուց հիւանդ լինելով գործակալական և կառավարութեան գործերը անկատար են մնացել, որոշուեց նրա փոխարէն գործակալ նշանակել Ղզըլ-Չախչախ գիւղի ժամանակաւոր ծխատէր Աղէքսանդր քահանայ Մկրտչեանին, ու գրել նրան այդ մասին, անհրաժեշտ համարուած հրահանգներով, և կոչել նրան պաշտօնի, ուղարկելով ինչպէս նրան, նոյնպէս և Զարիշատի, Բէնգլի Ահմէտի և Արդահանի գործակալներին պսակի օրհնութեան հրամանների և հոգեբաժինների կտրոնաւոր մատեաններ:

Նախագահ Կառավարութեան՝ Կորիւն վարդապետ
Անդամք՝ Խորէն քահանայ Ստամբօլցեան
Կորիւն քահանայ Քոթանջեան
Քարտուղար՝ Գրիգոր քահանայ Նժդեհեան

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 978, թ. 10, բնագիր, ձեռագիր:

№ - 332
ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ՆԱԽՈՐԴ ՓՈԽԱՆՈՐԴ ԿՈՐԻՒՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶԱՐԵԱՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻՆ ԿԱՐՍԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱԲԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 հոկտեմբերի 1920 թ.
Ս. Էջմիածին

Նորին Սրբութեան Տ.Տ. Գէորգայ Ե.
Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց
Կարսի նախորդ Փոխանորդից
Ամենախոնարհ յայտարարութիւն

Այս տարուայ յունուարի սկիզբներին՝ նկատելով Կարսի Ս. Առաքելոց եկեղեցու աւագ միաբան Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանի ծերութիւնը և տկարութիւնը, ես իբրև Վիճակի Փոխանորդ առաջադրութեամբ յանուն Կարսի Հոգ.Կառավարութեան, ժամանակաւոր նորան օգնական նշանակեցի Ալեքսանդրապոլի Ղալթախչի գիւղի ծխատէր Տ. Գէորգ քահանայ Տ. Գաբրիէլեանին, որ երկար տարիներ վարել էր Մայր Տաճարի Լուսարարութեան պաշտօնը և որ վեց ամսւայ ընթացքում ցոյց տուեց իւր համեստութիւնը, անշահասիրութիւնը, արիութիւնը և Հոգևոր իշխանութեան հրամանների անթերի և շուտափոյթ կատարումը, որ կարճ միջոցից յետոյ հրաւիրեց իւր վերայ Կարսի Բայրամ-փաշա թաղի ծխականների ուշադրութիւնը, որոնք խնդրեցին համախօսականով ունենալ նորան իբրև ծխատէր քահանայ։

Իմ Կարսի մեկնելու օրերին նոյնը և գրաւոր խնդրեց ինձանից Տ. Խորէն քահանայ Ստամբօլցեանը, յայտարարութեամբ, 29 յունիսի 1920 N 43, նշանակել Տ. Գէորգին իբրև միաբան Ս. Առաքելոց եկեղեցուն, որպիսի յայտարարութիւնը սորա հետ ներկայացնելով Ձերդ Սրբութեան կը խնդրէի ամենախոնարհաբար հրամայել Հայրապետական Դիւանի միջոցաւ հաստատել յիշեալ Տ. Գէորգին մշտական միաբան Կարուց Ս. Առաքելոց եկեղեցուն և յանձնել նորան Բայրամ-փաշա թաղի զինքը խնդրող ծխականաց հովիւ և ծխատէր[585]։

Ձերդ Սրբութեան խոնարհ ծառայ և որդի՝
Կորիւն ծ.վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 620, թ.2, ինքնագիր:

[585] Գէորգ Ե. Կաթողիկոսը գրութեան վրայ մակագրել է. «Ժամանակաւորապէս կարգել, մինչև ցենզաւոր քահանայ գտնելն» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 620, թ.3):

№- 333
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՆԻՒ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ա/թ

Կանոնադրութիւն Հոգաբարձական Ընկերութեան աւերակաց և եկեղեցեաց Անւոյ

Նպատակ Հոգ. Ընկերութեան

1) *Նպատակ Հոգաբարձական Ընկերութեան Անւոյ է.*

Ա. Հսկել ընդհանրապէս ի վերայ մնացորդ հնութեանց քաղաքամօրն Անւոյ և շրջակայից նորին, զի մի՛ սպառցին ի կործանիչ ձեռաց:

Բ. Ըստ ներելոյ միջոցաց Ընկերութեան նորոգել զայնոսիկ հնութիւնս, զորս պատշաճ և հնարաւոր դատեսցի Ընկերութիւնն, մանաւանդ՝ զկաթուղիկէ եկեղեցին, իբրև նշմար ճարտարապետական ճաշակի ժամանակին:

Գ. Առնել զանազան շինութիւնս վասն բնակութեան այնոցիկ, որք մշտապէս մնալոց են յԱնի, կառուցանել բնակարանս յարմարաւորս վասն ճանապարհորդաց և հետախոյզ հնագէտ բանասիրաց. նաև ըստ կարելոյն յարդարել զդժուարագնաց ճանապարհս առ զանազան նշանաւոր մասունս քաղաքին:

Դ. Կազմել թանգարան հնութեանց առ ի զետեղել ի նմին զհնութիւնս ի յայտ եկեալս յաւերակացն Անւոյ և ի շրջակայից: Ի հնութեանց սակի համարեսցին խաչքարք, մահարձանք նշանաւոր անձանց, տնային կահկարասիք, երկրագործական զինուորական գործիք, գրանք և այլք: Ի թանգարանի ի յատկացեալ մասին ունել ժողովածու ձեռագիր և տպեալ մատենից, գլխաւորապէս վերաբերելոց պատմութեան և տեղեկութեան Անւոյ, թէ՛ հայերէն և թէ՛ օտար լեզուով:

Ե. Եթէ ներեսցեն դրամական միջոցաց հանգամանք, բանալ վանական դպրոց յԱնի, ի կրթութիւն հայ մանկանց շրջակայ գիւղորաց:

2) Հոգաբարձական Ընկերութիւն Անւոյ հաստատեալ ի Վեհ. Կաթուղիկոսէ ամենայն Հայոց գտանիցի ընդ ծայրագոյն իշխանութեամբ Նորին Վեհափառութեան և Սինոդին Սրբոյ Էջմիածնի:

3) Հոգ. Ընկերութիւն ի կիր արկցէ զկնիք ընդ վերտառութեամբ «Հոգաբարձական Ընկերութիւն Անւոյ»:

Անդամակցութիւն

4) Հոգ. Ընկերութիւնն բաղկանայ ի պատուաւոր, բարերար, անփոփոխ և ի տարեկան անդամաց:

5) Պատուաւոր անդամք ընտրեն այնոքիկ անձինք, որք հասարակական բարձր նշանակութեամբ և բարոյական ազդեցութեամբ օգնեն Հոգ. Ընկերութեան:

6) Բարերար կոչեսցին անդամք, որք նուիրեալ իցեն միանուագ գումար ինչ, ո՛չ պակաս քան զհինգ հարիւր րուբլիս և կամ նուիրեալ զանշարժ կալուած ինչ ի սեպհականութիւն հաստատութեանս, յատկապէս յանուն միոյ ի նորոգեալ եկեղեցեաց, որ բերեցէ ի տարին ո՛չ պակաս քան զյիսուն րուբլիս։

7) Անփոփոխ կոչեսցին անդամք, որք վճարեալ իցեն միանուագ զհարիւր րուբլիս կամ զանշարժ կալուած ինչ նոյն արժողութեամբ։

8) Տարեկան անդամք վճարեսցեն ամ ըստ ամէ զհինգ րուբլիս։

9) Պատուաւոր, բարերար և անփոփոխ անդամք կրեն զայս կոչումն ի կեանս իւրեանց, իսկ տարեկան անդամք, ցորքան ժամանակս շարունակեսցին տուրք նոցա։

10) Ամենայն հայ՝ այր թէ կին կարէ անդամակցել Հոգ. Ընկերութեան ըստ մտաց վերոյ գրեալ յօդուածոց։

11) Թիւ անդամաց անորոշ է։

12) Անդամական տուրք վճարելոց են յընթացս առաջին քառամսեկի ի հակառակ դէպս զրկին յիրաւանց անդամութեան։ Վերահաստատի ոք ի կոչմանն, եթէ միւս անգամ վճարեսցէ։

13) Յորում և իցէ ամսոջ տարւոյն, եթէ վճարիցէ ոք զանդամական տուրս, սկիզբն անդամակցութեան համարի յունուար ամիսն նոյն իսկ ամի։

14) Ամենայն անդամք հաւասար իրաւամբ ձայնի մասնակցին ընդհանուր ժողովոյ Հոգ. Ընկերութեանս։

Ընդհանուր ժողով

15) Ընդհանուր ժողովն Հոգ. Ընկերութեան կազմի յամենայն անդամոց նորին հրաւիրանօք նախագահի Ընկերութեան, որ է Առաջնորդն Կարուց, իսկ ի բացակայութեան նորին՝ հրաւիրանօք գործադիր ժողովոյ, յորպիսի դէպս ընդհանուր ժողովն կարէ ընտրել զառժամանակեայ նախագահ ի միջոյ իւրմէ։

16) Ընդհանուր ժողովն կազմի ի տարւոջն մի անգամ, ի տօնի Վարդավառի յԱնի և կամ ո՛ւր պատշաճ դատեսցի գործադիր ժողովն խորհրդակցութեամբ նախագահի։ Ի պահանջեալ հարկին կազմի և արտակարգ ժողով, եթէ կարևոր համարի գործ. ժողովն, կամ եթէ տասն անձինք յանդամոց Հոգ. Ընկերութեան ներկայացուսցին զգրաւոր առաջարկութիւն ինչ առ այդ։

17) Ընդհանուր ժողովն վաւերական համարի, եթէ յանդամոց ներկայ գտանիցին տասն և հինգ անձինք։

18) Գործառնութիւնք ընդհանուր ժողովոյ լիցին.

Ա.) Ընտրել զանդամս բացորոշ թուով ի վարել զգործս Ընկերութեան և զանձնափոխանորդս, որք և կազմեսցին զգործադիր ժողով։

Բ) Վերաստուգել զամենատեսակ հաշիւս Հոգ. Ընկերութեան, կամ անմիջապէս և կամ ընդ ձեռն ընտրեալ մասնաժողովոյ իրիք։

Գ) Ջննել և հաստատել զնախահաշիւ յետագայ տարոյն։

Դ) Ընտրել զպատւաւոր անդամս տալով նոցա վկայագիրս վաւերացեալս պատշաճաւոր ստորագրութեամբ և կնքով Հոգ. Ընկերութեան։

Ե) Գնել զոր և իցէ կալուած ինչ ի սեպհականութիւն յանուն որ և իցէ եկեղեցւոյ Անւոյ։

Զ) Զրկել ի պաշտամանէ զանդամս գործ. ժողովոյ, նախ քան զլրումն որոշեալ ժամանակի պաշտօնավարութեանն, եթէ նկատիցէ զեղծումն ի գործառնութիւն նոցին։

19) Ամենայն հարցք վճռին առաւելութեամբ ձայնից, և ի պահանջեալ հարկին ծածուկ քուէարկութեամբ, իսկ ի դէպս հաւասարութեան ձայնից, ձայն նախագահի գերակշիռ է։

20) Ի կայանալ ընդհանուր ժողովոյ մին յանդամոց արձանագրէ զամենայն որոշմունս նորին։

21) Վճիռք և որոշմունք արձանագրին ի նոյն ժողովի և վաւերանան ստորագրութեամբ նախագահի և անդամոց։

22) Ի կայանալն ժողովոյ նախապէս քննադատին նախ որոշեալ հարցք և ապա առաջարկեն ոչք ցանկանայցեն, զոր և իցէ հարց ինչ ի քննադատութիւն։

Գործադիր ժողով

23) Գործադիր ժողովն ընտրի եռամեայ ժամանակաւ յընդհանուր ժողովոյ առ ի վարել զամենայն գործս Ընկերութեան և բաղկանայ ի հնգից անդամոց բնակելոց յԱղէքսանդրապօլ։

24) Բացի հնգից անդամոց ընտրին և երեք անձնափոխանորդ, որք ի բացակայութիւն ոմանց անդամոց գործ. ժողովոյ՝ կոչեսցին ի տեղի նոցա։

25) Անդամք գործ. ժողովոյ ընտրեսցին զմի նախագահ ի միջոյ իւրեանց, ի դէպս բացակայութեան որոյ ընտրեսցին առ ժամանակեայ կերպիւ զայլ ոք յանդամոց՝ ի վարել զպաշտօն նախագահի։

26) Մինն անդամոց գործ. ժողովոյ ընտրութեամբ և երաշխաւորութեամբ նորին վարէ զպաշտօն գանձապահութեան։

27) Որոշման և տնօրէնութեան գործ. ժողովոյ մնայ ընտրութիւն քարտուղարի, որ եթէ չէ յանդամոց ժողովոյ, ի վճիռս չունի զձայն։

28) Ժողովն վաւերական համարի, եթէ նախագահն և երեքն յանդամոց ներկայ գտանիցեն ի խորհրդի։

29) Գործ. ժողովն չան ի գործ դիցէ.

Ա) Ի կատար ածել զամենայն որոշմունս գծագրեալս ի նախահաշուի, որ հաստատեալ իցէ յընդհանուր ժողովոյ։

Բ) Պատրաստել զնախահաշիւ վասն յառաջիկայ տարւոյն ի հաստատութիւն ընդհանուր ժողովոյ։

Գ) Պահանջել ճշմարտութեամբ զամենայն գոյս և զսեպհականութիւնս, զդրամական հաշիւս, զոր պարտի ստուգել ի վախճան իւրաքանչիւր քառամսեկի։

